



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**Հ. Բ. ԱՐԱՀԱՄՅԱՆ**

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ  
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ  
(1988 - 1990 թթ.)**

ԵՐԵՎԱՆ – 2019

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ИСТОРИИ

**Г. Б. АБРАМЯН**

**СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ  
ОБЩЕНАЦИОНАЛЬНОЙ БОРЬБЫ  
(1988 – 1990 гг.)**

**Н. В. АВРАХАМЯН**

**SOVIET ARMENIA DURING THE YEARS  
OF THE NATION-WIDE STRUGGLE  
(1988 – 1990)**

ЕРЕВАН YEREVAN

2019

ՀՏԴ 94 (479.25)

ԳՄԴ 63.3 (5Հ)

Ա 161

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր Գ. Գ. Մախմուրյան

### **Աբրահամյան Հրանտ Բարսեղի**

**Ա 161** Խորհրդային Հայաստանը համազգային պայքարի տարիներին  
(1988-1990 թթ.)/Պատ. խմբ.՝ Գ. Գ. Մախմուրյան.- Եր.:  
Հայաստանի ԳԱԱ Պատմության ին-տ, 2019.- 384 էջ:

Վերակառուցման ժամանակաշրջանում Արցախում՝ հանուն Հայրենիքին միանալու բարձրացած ազատագրական շարժումը, մեծ սատարում ու համազգային բնույթ ստացավ Խորհրդային Հայաստանում: Սույն ուսումնասիրությունը նվիրված է այդ իրադարձությունների նկարագրությանն ու վերլուծությանը:

Աշխատանքն ընդգրկում է Հայոց համազգային պայքարի սկզբից մինչև հանրապետությունում անկախության մասին Հռչակագրի ընդունումը: Այն գրվել է արխիվային նյութերի, տպագիր մամուլի, հրապարակված ուսումնասիրությունների և հուշերի հիման վրա:

Գիրքը հասցեագրված է բոլոր նրանց, ում հետաքրքրում է 1988-1990 թթ. հանրապետության կյանքի հետ առնչվող հարցերը:

ՀՏԴ 94 (479.25)

ԳՄԴ 63.3 (5Հ)

ISBN 978-9939-860-79-4

© ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2019

© Հ. Բ. Աբրահամյան, 2019

© Գ. Գ. Մախմուրյան, 2019

## Ընթերցողին

Մ. Գորբաչովի նախաձեռնած վերակառուցման ժամանակաշրջանում, երբ սկսեց վեր բարձրանալ հասարակության պայքարը ժողովրդավարության, ազգային հավասարության և մրցունակ տնտեսությունը ստեղծելու համար, երկրում արմատական փոփոխությունները դարձան հրատապ: Այնինչ միութենական իշխանությունները հետ էին մնում ժամանակի պահանջներից, հստակ և գործուն լուծումներ չէին տալիս ամենասուր խնդիրներին: Վերակառուցման բուռն և խոստումնալից պայմաններում հայ ժողովուրդը առաջ քաշեց իր օրինական և կենսական նշանակություն ունեցող՝ Արցախը մայր Հայաստանին վերամիավորելու հարցը:

Ընդ որում, Խորհրդային Հայաստանը Միությունից անջատվելու հարց չի դրել ու նման նպատակ չի հետապնդել, մինչդեռ խորհրդային համակարգը՝ ի դեմս կենտրոնական իշխանությանը, անտարբեր մնալով օրինականության ամենակուպիտ խախտումների նկատմամբ և հանդուրժելով մարդկանց վրա օրը ցերեկով զանգվածային հարձակումները, իրականում հրաժարվել էր Հայաստանի և հայ ազգի իր քաղաքացիների նկատմամբ տարրական պարտականություններից:

Հարևան Ադրբեջանի հանրապետությունում հայության նկատմամբ տեղի ունեցած բռնարարքներն ու ազգային ճնշման երկարատև քաղաքականությունը սրեց իրավիճակն ու հանգեց «սումգայիթի», «կիրովաբադի», «բաքվի», շրջափակման և 260 հազար հայերի խայտառակ ու աղետալի բռնազաղթի:

Խորհրդային Հայաստանը և նրա կոչին արձագանք տված աշխարհասփյուռ ողջ հայությունը սատար կանգնեց Արցախի հայրենակիցներին՝ նրանց օրինական իրավունքները պաշտպանելու համար: Բոլորը մեկ մարդու նման պատրաստ էին իրենց ունեցած կտոր հացը կիսել ազգակից արցախցու հետ և նրա պաշտպանության համար կյանքը չխնայել: Այս աշխատության տողերի հեղինակը՝ մեր ամբողջ հասարակության նման լինելով ծավալվող իրադարձությունների եռանդուն ու սրտացավ մասնա-

կից, վկայում է. ոտքի ելած հայ ժողովուրդը պահանջում էր իրավադատություն, որը նշանակում էր խաթարված մի ամբողջ ժամանակաշրջան շուտ տալ և վերականգնել արդարությունը:

Երկարատև ջանքերի արդյունքում ստեղծված այս մենագրության գնահատականը կտա ընթերցողը:

## **I. Հայաստանը սատարում է արցախահայությանը**

### **1.1. 1988 թ. փետրվարի 20-ի ԼՂԻՄ մարզխորհրդի որոշման արձագանքները Հայաստանում: Համաժողովրդական շարժման ծավալումը**

Սկսենք դրանից, թե ինչ արձագանք գտավ գորբաչովյան վերակառուցումը Խորհրդային Հայաստանում:

Հայտնի է, որ 1985 թ. մարտին ԽՄԿԿ կենտկոմի պլենումը Մ. Ս. Գորբաչովին ընտրեց կուսակցության գլխավոր քարտուղար: Մեկ ամիս հետո, հաջորդ պլենումում, ընդունվեց երկրի հասարակության արմատական վերակառուցման կուրս, որն ամրապնդվեց 1986 թ. տեղի ունեցած ԽՄԿԿ 27-րդ համագումարի որոշումներով: Դա բարեփոխումների կարգավորման ծրագիր էր, որը պետք է իրագործվեր «կուսակցության խիստ վերահսկողության ներքո»<sup>1</sup>:

Վերակառուցման առաջին շրջանում (1985-1986 թթ.) շեշտը դրվեց գիտատեխնիկական առաջընթացի և երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Սակայն, այստեղ հաջողության չհասնելով, 1987 թ. առաջ քաշվեց տնտեսական բարեփոխումների իրագործման ծրագիր, որը ևս մատնվեց անհաջողության:

1988 թվականին առաջ քաշվեց քաղաքական բարենորոգումների հարցը, որը շուտով փակուղի մտավ: Երկրում իրավիճակը ծանրանում էր. աղքատանում էր սպառողական շուկան, ազգամիջյան առճակատումները զանգվածային բնույթ էին ընդու-

---

<sup>1</sup> Ռ. Լ. Ազիզբեկյան, Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, Երևան, 1992, էջ 7:

նում, խորացնում Միության փլուզումը, երկրում բռնապետական սկզբունքներով գործող սոցիալիստական մոդելի տեսական ու գործնական սնանկությունը անխուսափելի էր դարձնում կոմունիստական վարչակարգի տապալումը<sup>2</sup>:

Հայաստանում հանրային արտադրությունը հետզհետե նահանջում էր: Օրինակ, 1987 թ. արդյունաբերական 74 միավորում և ձեռնարկություն, 96 շինարարական կազմակերպություն, 170 կուտնտեսություն և սովխոզ, ինչպես նաև այլ ձեռնարկություններ, տարին փակել էին վնասով<sup>3</sup>: Առանձնապես չէին նվազում մթնոլորտի աղտոտումը, պետական մարմինների գլուխ կանգնած աստիճանավորների արտոնությունները, կաշառակերությունը և այլն<sup>4</sup>: Նույն երևույթը լայնորեն էր տարածվում Միության մյուս հանրապետություններում, հատկապես հարևան հանրապետությունում: Տեղերից եկող ահազանգերը խլացվում էին, ձևական ու անարդյունավետ էին այն միջոցառումներն, որ ձեռնարկվում էին հանրապետությունում առկա անօրեն գործողությունների դեմ:

Հրապարակված նյութերից ակնհայտ է, որ համայնավարությունը՝ իր կենտրոնացված կառավարմամբ, բացառում էր արտադրողի շահագրգռվածությունը տնտեսության ոլորտում: Վաղուց էր հայտնի, որ համայնական սկզբունքներով վարվող տնտեսությունը գրկված էր շատ հնարավորություններից: Թեկուզ հետևյալ օրինակը. 1981-1990 թվականների ընթացքում ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության ֆոնդահատուցման ցուցանիշը յուրաքանչյուր տարի իջել էր միջինը 3,4%-ով<sup>5</sup>: Իսկ Հայաստանում 1986 թվականից արդյունաբերության բնագավառում միջին տարեկան անկումը կազմել է 0,1%: 1987 թվականին նախորդ տարվա համե-

---

<sup>2</sup> Ռ. Լ. Ազիզբեկյան, նշվ. աշխ., էջ 8:

<sup>3</sup> Սովետական Հայաստան, թ. 219, 17. 09. 1988:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Содружество независимых государств: десять лет спустя, Минск, 2001, с. 10.

մատությամբ ազգային եկամուտը նվազել էր 0,6%-ով, իսկ բնակչության մեկ շնչի հաշվով՝ երկու տոկոսով<sup>6</sup>:

1987 թ. հունիսի 25-ին տեղի ունեցած ԽՄԿԿ կենտկոմի պլենումում գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովը քննադատական խոսք հնչեցրեց նաև Հայկոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի հասցեին<sup>7</sup>: Հինգ ամիս անց տեղի ունեցած Հայկոմկուսի կենտկոմի պլենումում Հրազդանի կուսըջկոմի առաջին քարտուղար Հայկ Քոթանջյանը իր ելույթում նշեց, որ հանրապետության էկոնոմիկայի և հատկապես գաղափարաբարոյական ոլորտի իրավիճակի առիթով ԽՄԿԿ կենտկոմի հունիսյան պլենումում արտահայտված տազնապի կապակցությամբ Հայկոմկուսի կենտկոմի անդամները չպետք է բավարարվեն միայն թերությունների թվարկումով<sup>8</sup>: Նա ընդգծեց. «Նորմա են դարձել ղեկավարության ազգականներին և մտերիմներին կարևոր դիրքեր առաջ քաշելը, ինչպես նաև հովանավորման էջելոնացված իրականացումը կուսակցական, պետական և տնտեսական ապարատի բոլոր մակարդակներում»: «Պարտք եմ համարում,– շարունակեց նա,– պլենումի ուշադրությունը հրավիրել Հայաստանում կաշառակերության և հովանավորչության դեմ մղվող պայքարի անբավարարության վրա... Հանրապետությունում տիրող վիճակի համար կենտկոմի, նրա բյուրոյի մյուս անդամների հետ մեկտեղ առաջին հերթին պատասխանատվություն են կրում կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը և նրա հետ 11 տարի որպես կենտկոմի կազմակերպչական–կուսակցական աշխատանքի և

---

<sup>6</sup> Սովետական Հայաստան, թ. 290, 17. 12. 1987:

<sup>7</sup> G. Gill, *The Collapse of a Single-Party System: The Disintegration of the Communist Party of the Soviet Union*, Cambridge-NY-Melbourne, 1994, pp. 52-53.

<sup>8</sup> R. G. Suny, *Looking Toward Ararat: Armenia in Modern History*, Bloomington-Indianapolis, 1993, p. 196.



իրավապահականության գծով քարտուղար ընկ. Հ. Մ. Ոսկան-  
յանը»<sup>9</sup>:

Հայկ Քոթանջյանի ելույթը դահլիճի համար խորթ էր: Սա  
եզակի երևույթ էր, երբ քննադատական խոսք է հնչում կուսակցա-  
կան ղեկավար մարմինների հասցեին: Հ. Քոթանջյանը նշել է, որ  
հանրապետության արդյունաբերական և գյուղատնտեսական ար-  
տադրությունը, շուկան մի շարք տարիներ լիովին գտնվում են  
ստվերային վիճակում և արտադրության շոայլումը, սեփականա-  
ցումը, հավելագրումը հասել են մեծ չափերի: Առաջարկում է առա-  
ջիկա պլենումում վերանայել բյուրոյի կազմը, ընթացիկ տարում  
հրավիրել արտահերթ հանրապետական կուսկոնֆերանս, որի  
օրակարգում մտցնել և արտակարգ վերընտրել Հայկոմկուսի կենտ-  
կոմի նոր կազմ:

Հայկոմկուսի կենտկոմի ղեկավարության և կուսակցական  
կազմակերպության հասցեին ուղղված այդ քննադատությունը  
ալեկոծեց դահլիճում նստածներին: Ամբիոն բարձրանալով Հա-  
յաստանի գրողների միության կուսակցական կազմակերպության  
քարտուղար Ժ. Հարությունյանը, ապա Երևանի քաղկոմի երկրորդ  
քարտուղար Աիդա Թոփուզյանը և Իջևանի կուսշրջկոմի առաջին  
քարտուղար Ջեմմա Անանյանը «խարազանում» են Հայկ Քոթանջ-  
յանին, որը համարձակվել էր Կարեն Դեմիրճյանի հասցեին ոչ  
հաճելի խոսքեր հնչեցնել<sup>10</sup>:

Հայկոմկուսի կենտկոմի պլենումում հանրապետության  
տնտեսության, մշակույթի, շինարարության և կուսակցական աշ-  
խատանքում տեղ գտած թերությունների մասին սկզբունքային  
խոսակցություններ տեղի ունեցան կոմունիստների ժողովներում,  
քաղկոմների և շրջկոմների պլենումներում:

1987 թ. հուլիսյան պլենումից հետո ընկած ժամանակաշրջա-  
նում կուսակցական, խորհրդային, տնտեսական ու հասարակա-  
կան կազմակերպությունների հասցեներով դիտողությունների և

---

<sup>9</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1, ց. 81, գ. 7, թ.  
145-152, նաև՝ Սովետական Հայաստան, թ. 178, 26. 07. 1987:

<sup>10</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 81, գ. 7, թ. 194-195:

առաջարկությունների թիվը անցել էր 16 հազարից<sup>11</sup>: Կենտրոնի ու հասարակության քննադատության հետևանքն եղել է այն, որ ԽՄԿԿ կենտկոմի 1985 թ. ապրիլյան պլենումից հետո Խորհրդրդային Հայաստանում փոխվել են շրջկոմի 29 առաջին քարտուղար, ժողովրդական դեպուտատների քաղաքային և շրջանային խորհուրդների 38 նախագահ, 32 մինիստր, պետական կոմիտեի նախագահներ և գլխավոր վարչությունների պետեր, արհմիությունների հանրապետական կոմիտեների 11 նախագահ, կոմերիտմիության քաղաքային և շրջանային կոմիտեների 43 առաջին քարտուղար: Փոխվել են կենտկոմի 4 քարտուղար, բյուրոյի 10 անդամ և անդամության թեկնածու, կենտկոմի բաժինների 6 վարիչ, հանրապետության մինիստրների խորհրդի նախագահի հինգ տեղակալ: Դեկավար աշխատողները նկատելիորեն երիտասարդացվել էին<sup>12</sup>: Սակայն, պիտի ասել, որ պաշտոնից ազատվածներից ոչ մեկը պատասխանատվության չենթարկվեց, ընդհակառակը, նրանցից շատերը տեղափոխվեց ավելի շահավետ պաշտոնի: Այս երևույթը հատուկ էր խորհրդային կարգերին, որը բնակչության շրջանում առաջ էր բերում խիստ դժգոհություն:

Գորբաչովյան վերակառուցման կուրսի առաջին արձագանքողների շարքում կանգնել են Արցախի հայերը: Այն ժամանակ, երբ Հայաստանում ծավալվում էր բնապահպանության հարցին նվիրված ժողովրդական ելույթներ, Արցախում տեղի էր ունենում ստորագրահավաք մարզը մայր Հայաստանի հետ վերամիավորելու պահանջով, որն իրականացվել է 1986-1987 թթ<sup>13</sup>: Հատկապես 1987 թ. օգոստոսից ծավալված այդ նախաձեռնության կազմակերպիչները՝ հաղորդցի նկարիչ Էմիլ Աբրահամյանն ու թանգարանի տնօրեն Արթուր Մկրտչյանը, Վիգեն ու Վաչագան Գրիգորյանները, նրանց հետ Մարտունուց Վլադիմիր Պողոսյանը, Գրիգոր Ուլուբաբյանը, Կամո Սաֆարյանը, Լորենց Հարությունյանը՝ Մարտակեր-

---

<sup>11</sup> Սովետական Հայաստան, թ. 298, 29. 12. 1987:

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> В. Б. Арутюнян, События в Нагорном Карабахе, Хроника, в 4-х частях, отв. ред. К. С. Худавердян, ч. I, Ер., 1990, с. 32:

տում, Վիգեն Շիրինյանը, Սլավիկ Առուշանյանը, Սլավիկ Միրզոյանը՝ Ասկերանում, Արկադի Կարապետյանն ու Հենրիկ Պողոսյանը Ստեփանակերտում, որոնք սերտ կապեր էին պահպանում հայաստանաբնակ Իգոր Մուրադյանի և Մանվել Սարգսյանի հետ<sup>14</sup>, 80 հազար անձանց ցուցակներ են ապահովել: Նրանց նախաձեռնությանը իր եռանդուն մասնակցություն է բերել Հայկական ԽՍՀ Գիտությունների Ակադեմիան՝ Վ. Համբարձումյանի գլխավորությամբ<sup>15</sup>: Բոլորի ակնկալիքն էր, թե Մոսկվային ուղղված այդ դիմումները կարող էին դրական արդյունքներ բերել:

Արցախյան ազատագրական միջոցառումներին նոր թափ է հաղորդել Ֆրանսիայի կոմկուսի օրգան «Յումանիտե» թերթում 1987 թ. նոյեմբերի 18-ին տպագրված Խորհրդային Միության բարձրագույն տնտեսագետ, ակադեմիկոս Աբել Աղանբեկյանի հարցազրույցը, որտեղ անվանի գիտնականը իր պատասխանում շեշտել է, որ Լեռնային Ղարաբաղը տնտեսապես ավելի կապված է Հայաստանի հետ, քան Ադրբեյջանի: Դրանից առաջ, 1986 թ. փետրվարին տեղի ունեցած ԽՄԿԿ 27-րդ համագումարի նախօրյակին, ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին ներկայացվել էր Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ մի խումբ ակադեմիկոսների, գեներալների և դերասանների ստորագրությամբ նամակ, որտեղ հարց էր դրվել մարզը դուրս բերել ստեղծված ծանր վիճակից: Համանման բողոք ԽՄԿԿ կենտկոմ ուղարկվել է նաև 1980 թ. օգոստոսին՝ ԽՄԿԿ 26-րդ համագումարի նախօրյակին<sup>16</sup>:

---

<sup>14</sup> Հանդիպման վայրը՝ Օփերա 2008 թ. Փետրուարին Լրանում է Արցախեան Շարժման 20րդ Տարեդարձը, Asbarez, Los Angeles, 22. 02. 2008; Թ. Հակոբյան, Կանաչ ու սև. Արցախյան օրագիր. Civilnet օրաթերթը, Երևան, 14. 02. 2018, այդ ստորագրությունները Մոսկվա հասնելու մասին՝ Լ. Chorbajian, P. Donabedian, C. Mutafian, The Caucasian Knot: The History & Conflicts of Nagorno-Karabagh, Lnd., 1994, p. 148:

<sup>15</sup> Վ. Ե. Խոջամիրյան, Արցախը փորձության ժամին, Եր., 1991, էջ 26:

<sup>16</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 373, թ. 1-2:

Մինչդեռ, 1986–1987 թթ. Միությունում բարեփոխումների գործընթացը դյուրին չէր արմատավորվում, չնայած Մ. Ս. Գորբաչովը 1987 թ. Հոկտեմբերյան հեղափոխության 70-ամյակի առթիվ իր զեկուցման մեջ փորձել է համոզել, թե «Սովետական ժողովուրդը ակտիվորեն պաշտպանում է վերակառուցումը, որը մեր առաջ բացում է պատմական նոր հեռանկարներ»<sup>17</sup>: Այդ պաշտպանության հունով 1987թ. հոկտեմբերի 18-ին Երևանում՝ Կենտկոմի շենքի մոտ, կայացել է մեկ ցույց. ի բողոք Չարդախլու գյուղում ադրբեջանական իշխանության մեկ օր առաջ սանձարձակ ճնշումների<sup>18</sup>: Մեկ ամիս հետո՝ նոյեմբերի 16-ին Մ. Գորբաչովի խորհրդական հայտնի գիտնական Ա. Աղանբեկյանի հանդիպումը սփյուռքի ներկայացուցիչների հետ ու երկու օր հետո «Յումանիտե» թերթում հրապարակված նրա դրույթը՝ Ղարաբաղի և Նախիջևանի Հայաստանին միանալու վերաբերյալ<sup>19</sup>, նոր ազդակ էին արցախահայության համար:

Նման ֆոնի վրա 1987 թ. դեկտեմբերի 1-ին կայացել է իննը հոգուց բաղկացած պատվիրակության այցելությունը ԽՄԿԿ կենտկոմ, ուր նրանք իրենց մտահոգությունն են հայտնել ընդունարանի վարիչ Ա. Կոնինինին: 1988 թ. հունվարի 5–12-ին Մոսկվա է գալիս արցախցիների երկրորդ՝ 13-հոգանոց պատվիրակությունը: Այն կազմել էին Ա. Կարապետյանը, Ս. Առուշանյանը, Ա. Մկրտչյանը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Վազգեն Բալայանը, նկարիչ Սերգեյ Առուշանյանը, Քրիստափոր Խաչատրյանը, Ռադիկ Ասրյանը՝ Ասկերանից, Գուրգեն Շահրամանյանն ու Գևորգ Սաղյանը՝ Մարտունուց, Ռոբերտ Բալայանը՝ Տոլ գուղից, նորագյուղից

---

<sup>17</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 81, գ. 3, թ. 3–4:

<sup>18</sup> L. Chorbajian, P. Donabedian, C. Mutafian, op. cit., p. 148; R. G. Suny, op. cit., p. 197; T. de Waal, Black Garden: Armenia and Azerbaijan Through Peace and War. NY, 2003, p. 289. Ավելի մանրամասն ու 1987 թ. դեկտեմբերի 1–2-ին բռնությունները ընդգրկող լուսաբանումը տե՛ս A. A. Мелик-Шахназаров, Нагорный Карабах: факты против лжи, М., 2009, с. 240–243:

<sup>19</sup> T. de Waal, op. cit., p. 289.

ուսուցիչ Ջամիլ Մարտիրոսյանը, գիշեցիներ Արմո Առուստամյանը և Յուրի Գրիգորյանը: Այս անգամ Վ. Բալայանի և Ա. Մկրտչյանի հետ զրույցել էին Քաղբյուրոյի անդամության թեկնածու, Գերագույն խորհրդի Նախագահության նախագահի առաջին տեղակալ Պ. Դեմիրչևն ու ԽՄԿԿ ԿԿ ազգային հարաբերությունների ենթաբաժնի վարիչ Վ. Միխայլովը<sup>20</sup>: Այս հանդիպումը Ղարաբաղի հայության մոտ թողնում էր ընդհանուր գործընթացի մեկ հերթական քայլի դրական տպավորություն:

Նույն թվականի դեկտեմբերի 26-ին տեղի ունեցած Հայկոմկուսի կենտկոմի պլենումը մի անգամ ևս անդրադառնալով հանրապետությունը բարեփոխումների իրագործման ընթացքին, ընդգծեց, որ հուլիսյան պլենումից հետո հանրապետության ղեկավար պաշտոններում վերընտրվել են 500 մարդ<sup>21</sup>: Դրա իմաստը ո՞րն էր, բնակչության սոցիալ-տնտեսական կյանքում ի՞նչ փոփոխություններ էին տեղի ունեցել, ժողովրդավարության զարգացման ուղղությամբ ի՞նչ քայլեր էին ձեռնարկվել, կոռուպցիայի և անօրենությունների դեմ որևէ քայլ ձեռնարկվե՞լ էր: Այդ և այլ հարցեր մնացել էին ստվերում:

Դեկտեմբերյան պլենումում կուսակցության Վերահսկիչ հանձնաժողովի նախագահ Ս. Խաչատրյանի, այնուհետև Հայկ Քոթանջյանի նոր ելույթը ազդեցություն գործեց կուսակցական էլիտայի վրա<sup>22</sup>: Այն տեսակետն առաջ քաշվեց, թե ԽՄԿԿ հունիսյան պլենումում Մ. Գորբաչովի արած քննադատությունը ճիշտ չի հասկացել Հայկոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը, և անցած վեց ամսում փորձել է ժողովրդի և հանրապետության կուսակցական կազմակերպության առջև հանդես գալ նոր գիծ վարողի դերում: Շատ չէ՞ր չափազանցեցված: «Որքան էլ տխուր է դա նշել,– դեկտեմբերյան պլենումում արտասանած իր ելույթում շեշտել է Հայկ Քոթանջյանը,– նախորդ պլենումում իմ ունեցած ելույթին հաջորդած իրադարձությունները, ընկերներ,

<sup>20</sup> В. Б. Арутюнян, նշվ. աշխ., էջ 32:

<sup>21</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 81, գ. 3, թ. 7:

<sup>22</sup> R. G. Suny, op. cit., pp. 196–197.

ցավոք ավելի շատ նման են պրովոկացիայի և հալածանքների: Անսովոր է վերակառուցման ժամանակներում իր վրա զգալ կենտրոնի ապարատի աշխատանքի այդքան ոչ հնարամիտ ոճը: Ըստ էության, կեղծված փաստաթղթերով ու վկայություններով պիտակներ փակցնելով, այդ թվում հենց ինձ, որպես պրովոկատոր ներկայացնելու նպատակ հետապնդող գործողություններով ստեղծվել է Կենտրոնական կոմիտեի ապարատի կողմից իմ գործունեության ղեկավարման յուրօրինակ մեթոդ...»<sup>23</sup>:

Հ. Քոթանջյանի ելույթից հետո «Հայէլեկտրոնեքենա» արտադրական միավորման գործիքափականգործ Ս. Սաֆրազյանը, Երևանի Գայի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Բ. Ստեփանյանը, Օրջոնիկիձեի շրջկոմի առաջին քարտուղար Զ. Հասրաթյանը, Հայգլուխջրշինի տնօրեն Մ. Գևորգյանը, ՀԿԿ կենտրոնի քարտուղար Մ. Մուրադյանը, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Վ. Մովսիսյանը և ուրիշներ իրենց ելույթներում պիտակներ են կայցնում Հ. Քոթանջյանին: Այս անգամ նման ճառ արտասանողների թիվը հասավ 44-ի<sup>24</sup>:

Դահլիճը շիկացել էր: Ելույթ ունեցողները հազիվ էին զսպում իրենց: Հայաստանի կուսակցական վերնախավում տիրող այդ վիճակին անդրադարձել են «Պրավդա», «Իզվեստիա» և այլ կենտրոնական թերթեր: «Իզվեստիա»-յի հունվարի 6-ի համարում տպագրված Ս. Բաբլումյանի և Տ. Խուդյակովի «Քննադատություն հին դեղատոմսերով. Հայաստանի կոմկուսի կենտրոնի պլենումից» վերտառությամբ հողվածում նշվում է, որ 1987 թ. ԽՄԿԿ կենտրոնի հունիսյան պլենումում հանրապետության կուսկազմակերպությունը խիստ քննադատության ենթարկվեց Էկոնոմիկայի վիճակի և գաղափարախոսության ոլորտում անբարեհաջողության, կարերի նկատմամբ պատշաճ պահանջկոտության բացակայության համար, կաշառակերության, սպեկուլյացիայի, հովանավորչության փաստերի կապակցությամբ: Այն ժամանակ հանրապետության կոմկուսի կենտրոնին առաջարկվել է սկզբունքային դիր-

<sup>23</sup> Սովետական Հայաստան, թ. 4, ՕԵ. 01. 1988:

<sup>24</sup> Նույն տեղում:

քերից վերլուծել գործերի վիճակը կուսակցական կազմակերպությունում և ամբողջությամբ վերցրած հանրապետությունում:

Ըստ էության, հանրապետությունում ոչինչ չէր փոխվել. Կ. Դեմիրճյանը ընտրել էր «ոսկե» միջինը: Բանը հասել էր նրան, որ նույն Հայկոմկուսի դեկտեմբերյան պլենումում կուսակցական Վերահսկիչ հանձնաժողովի վերոնշյալ նախագահ Ս. Խաչատրյանին նույնիսկ չէին ուզում ձայն տալ: Երբ, այնուհանդերձ, նա ամբիոն բարձրացավ, աղմկում և խանգարում էին նրան: Նրանից հետո ելույթ ունեցած Հ. Քոթանջյանը Կ. Դեմիրճյանին առաջարկեց պաշտոնաթող լինել և մոտակա պլենումում քննարկել Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոյի կազմում փոփոխությունների հարցը: Հետո, հանդես եկած 24 հոետորները Քոթանջյանին բնորոշեցին «շիզոֆրենիկ»: Կ. Դեմիրճյանը այդ ամենը անվանեց «մաքրագործում»: Ելույթ ունեցողները նույնիսկ պահանջում էին Քոթանջյանին հեռացնել կուսակցության շարքերից, ազատել պաշտոնից և կենտկոմի կազմից: Ընդունված որոշման մեջ դատապարտվեց Քոթանջյանի վարմունքը և նրա ելույթը գնահատվեց սխալ: Այդ պլենումում «լիովին խեղաթյուրվել էր դեմոկրատիզմը և հրապարակայնությունը»<sup>25</sup>:

Իսկ 1988 թ. հունվարի 18-ին «Պրավդայում» տպագրված Յու. Առաքելյանի և Վ. Սոմովի «Խղճի դատը, կամ որոշ բաներ Հայաստանի կյանքից» հոդվածում հեղինակներն անդրադառնալով Հայկոմկուսի կենտկոմի դեկտեմբերյան պլենումին, պաշտպանում են Հ. Քոթանջյանի դիրքորոշումը և մերկացնում Հայաստանում տեղ գտած անօրինականությունն ու կաշառակերությունը<sup>26</sup>:

Կուսակցական-պետական մարմինները և լրատվամիջոցները փորձում էին բնակչությանը համոզել, որ իբր վերակառուցումը հանրապետությունում ընթանում է պլանավորված: Իմիջայլոց այդ ժամանակ հանրապետությունում սուր էր մնում բնակարանային հարցը: 1987 թ. դեկտեմբերի 2-14-ը տեղի ունեցավ Հայկոմկուսի կենտկոմի բյուրոն, նրա ընդունած որոշման մեջ

<sup>25</sup> Տե՛ս Սովետական Հայաստան, թ. 6, 08. 01. 1988:

<sup>26</sup> Նույն տեղում, թ. 15, 19. 01. 1988:

նշվում է, որ սփյուռքից վերջին տարիներին Հայաստան են եկել 250 հազար մարդ, որոնց համար տարեկան հատկացվում է բնակ-տարածություն, սակայն նրանց մի մասը դեռևս բնակարանի կարիք ունեն: Նրանց նմանները կային նաև Լեռնիականում, Էջմիածնում, Հրազդանում, Չարենցավանում, Մասիսում և այլ տեղե-րում: Որոշման մեջ նաև նշվում է, որ ելնելով վերակառուցման պահանջներից, հարկավոր է արտասահման գործուղել քաղաքա-կան, հասարակական և մշակույթի գործիչների՝ սփյուռքահայու-թյան շրջանում քարոզչական աշխատանք տանելու, նրանց հայրե-նիք հրավիրելու համար<sup>27</sup>:

1987 թ. նոյեմբերի 25-ին Լոս Անջելեսում տեղի ունեցավ հայ մտավորականության Խորհրդի հիմնադիր նիստը, որի կարևոր խնդիրներից է հանդիսացել Հայաստանի ամրացումը և Նախի-ջևանում ու Լեռնային Ղարաբաղում պանթուրքական հենակետի չեզոքացումը: Դրա համար միությունը անհրաժեշտ էր գտնում

1. Աշխատանքներ տանել Նախիջևանի մարզը Հայաստանի հետ վերամիավորելու համար,

2. Աջակցել Ղարաբաղի բնակչությանը, երբ նա ցանկություն կհայտնի վերամիավորվելու Հայաստանի հետ<sup>28</sup>:

Այդ ժամանակ է, որ Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակ-ցությունը ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գոր-բաչովին ուղարկած հուշագրում ընդգծել է, որ Խորհրդային կա-ռավարությունը ի վիճակի է վճռել հայ ժողովրդի ներքին տա-րածքային հարցերը: Փաստաթղթում ասվում է. «Ղարաբաղի ու

---

<sup>27</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 81, գ. 31, թ. 39–44:

<sup>28</sup> Նույն տեղում, ց. 87, գ. 9, թ. 10: Խորհուրդը ստեղծվել էր Հայաս-տանի տարածքային ամբողջականությունը վերականգնելու և նրա անվտանգությունը պանթուրքական հանցագործ ծրագրերից պաշտ-պանելու համար: Խորհուրդը միավորել էր աշխարհասփյուռ հայու-թյան մտավորականության ներկայացուցիչներին, որը հոգատարու-թյուն էր ցուցաբերում Հայաստանը ամրապնդելու համար: Խորհրդի գործադիր կոմիտեն բաղկացած էր 15 հոգուց, որի նախագահն էր դոկտոր Կարախ Տեր-Եղիայանը:



Նախիջևանի ինքնավար շրջանները, որոնք 1923 և 1924 թվականներին անցել են Ադրբեջանական Սովետական Սոցիալիստական Հանրապետության տակ, պատմականորեն հանդիսանում են Հայաստանի մի մասը: Արդարությունը պահանջում է, որպեսզի թույլատրված սխալներն ուղղվեն Ձեր ղեկավարության ժամանակաշրջանում:

Դրան մենք վերաբերվում ենք լավատեսությամբ, և վստահ ենք, որ շուտով Ղարաբաղն ու Նախիջևանը կմիավորվեն Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետությանը: Դա կվերականգնի արդարությունը և կամրապնդի ժողովուրդների միջև բարեկամությանը»<sup>29</sup>:

Այսպիսով, ինչպես երևում է շարադրվածից, վերակառուցման ժամանակաշրջանում Խորհրդային Հայաստանի հետ առնչվող բազմաթիվ հասարակական-քաղաքական հարցեր անհետաձգելիորեն վճռելու կարիք ունեին:

\*  
\* \* \*

Հիմա անդրադառնանք մեր հիմնահարցին:

Արցախ աշխարհը դարեր շարունակ հանդիսացել է մայր Հայաստանի անբաժան մասը, նրա հերոսական պայքարի մասնակիցը: Խորհրդային տարիներին, գտնվելով Ադրբեջանի բռնատիրության ճիրաններում, իշխող վարչակարգը փորձել է Արցախի և Հայաստանի միջև երկաթե վարագույր դնել: Սակայն շուրջ 70 տարի անց փշրվեց այդ պատնեշը և ծնվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Ղարաբաղյան հիմնախնդիրը գոյություն ունի վաղուց: Դեռևս 1918 թ., երբ Անդրկովկասյան սեյմը լուծարվեց, այն ժամանակ էլ նորաստեղծ Ադրբեջանի մուսավաթական իշխանությունը իր թաթը դրեց Գանձակի (Ելիզավետապոլի) նահանգի հայկական

---

<sup>29</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 9, թ. 12-13:

գավառների վրա: Լեռնային Ղարաբաղը (Արցախ) մայր հայրենիքից անօրեն անջատվեց և Ադրբեջանի ճիրաններում հայտնվեց 1921 թ.: Ադրբեջանի ազգայնամոլ քաղաքականության հետևանքով Արցախը աստիճանաբար զրկվում էր մայրենի լեզվից, ազգային մշակույթից և հետզհետե թուրքացվում: Նման վիճակում ի՞նչ պիտի աներ արցախահայությունը, որը միշտ էլ ձգտել է վերամիավորվել իր հայրենիքին: Ազգային այդ արդար ու կենսական նշանակություն ունեցող պահանջը արցախահայությանը մղեց ազատագրական պայքարի, որը արագ ու հզոր պաշտպանություն գտավ Խորհրդային Հայաստանի և աշխարհասփյուռ հայության կողմից:

Արցախահայությունը իր վճռականությունը արտահայտեց 1988 թ. փետրվարի 20-ին տեղի ունեցած ԼՂԻՄ մարզխորհրդի 20-րդ գումարման արտահերթ չորրորդ նստաշրջանում: Բոլոր 149 պատգամավորներից, նրան մասնակցել է երեկոյան ժամը 8-ին հավաքված 110 հոգի: Ելույթ ունեցողների թիվը հասել էր 44-ի: Կեսգիշերից հետո ընդունված որոշումը հայտնեց. «ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ-ի կազմ հանձնելու համար Ադրբեջանական ՍՍՀ և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետների առջև միջնորդելու մասին» որոշումը, որտեղ նշված է. խնդրել Ադրբեջանական և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդներին «լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ-ի կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ՍՍՀՄ Գերագույն սովետի առջև՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ-ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»<sup>30</sup>:

«Սովետական Ղարաբաղ» թերթը, որտեղ փետրվարի 21-ին տպագրվել էր այդ որոշումը, Երևանի Թատերական հրապարակ հասավ նույն օրվա իրիկնադեմին: Այն ձեռքից ձեռք էր անցնում: Մարդիկ մարզխորհրդի որոշումն ընթերցում էին հափշտակված:

---

<sup>30</sup> Սովետական Ղարաբաղ, թ. 43, 21. 02. 1988:

Արցախահայության պահանջը՝ Ադրբեջանի բռնաճնշումից ազատվելու և Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորվելու մասին, միանգամայն օրինաչափ էր: Հայտնի է, որ 1921 թ. հուլիսի 5-ին Անդրերկրկոմի ընդունած որոշումը՝ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանին հանձնելու վերաբերյալ, եղել է կամայական և դատապարտելի, որը երբեք էլ չի բխել հայ ժողովրդի շահերից: Ամբողջ 70 տարի այդ որոշումը շղթայի պես կախված է եղել արցախահայության վզից: Ամբողջ այդ ժամանակաշրջանում Ադրբեջանում բնակվող հայերի, ինչպես և մյուս ազգային փոքրամասնությունների նկատմամբ իրագործվել է ազգայնամոլ քաղաքականություն: Արդյունքում հանրապետությունից հեռացել է 70 հազար հայ, որից ավելի քան 40 հազարը Լեռնային Ղարաբաղից, նաև «անհետացել» է քուրդ ժողովուրդը, թաթերի, թալիշների և մյուսների նկատմամբ իրագործվել է ոչնչացման քաղաքականություն:

Ահա թե ինչու այդ հարցը պարբերաբար հրավիրում էր Միության բարձրագույն իշխանության ուշադրությունը: Դեռևս 1959 թ. հուլիսի 1-ին ԽՄԿԿ ԿԿ-ի նախագահությունը հատուկ քննարկման նյութ էր դարձրել Ադրբեջանում տիրող այդ վիճակը: Ձեկուցումով հանդես գալով գեներալ-գնդապետ Ի. Շ. Շիկինը, ներկայացրեց ադրբեջանական իշխանությունների ծայրահեղ ազգայնամոլական պատկերը: Հարցի քննարկման ժամանակ մի քանի անգամ արտահայտվել է Նիկիտա Խրուշչովը: Ահա հատվածներ նրա ելույթներից. «Դա, ընկերներ, Բաքվում, որտեղ 66 տոկոսը ոչ ադրբեջանցիներ են... Օրինակ՝ Ամերիկայում ևս կան լեհերով և ուկրաինացիներով բնակեցված մեծ շրջաններ: Ամերիկացիները դրա հետ հաշվի են նստում: Նույնիսկ բուրժուական գործիչները այնպես չեն վարվում, ինչպես դուք: Դա հիտլերական մոտեցում է, կենդանական մոտեցում է, եթե կոպիտ ասենք, իսկ բուրժուական դեմոկրատիան այդպես չի վարվում: Նա ազգերի համար սահմանում է ինչ-որ ինքնավարություն, անգամ եթե նրանք մեծաթիվ չեն, բայց ներկայացնում են խումբ, որին հարկավոր է հաշվի առնել, իսկ դուք բոլորովին շահարկվում եք, և դուք կոչվում եք կոմունիստ-

ներ: Դուք ի՞նչ կոմունիստներ եք, դուք կոմունիստներ չեք, այլ՝ նացիստներ, հիտլերականներ... Ինչպե՞ս չեք ամաչում, գլորվել եք բուրժուական նացիոնալիզմի ճահիճը: Կոմունիստներ՝ եք կոչվում: Ազատեք մեզ այդպիսի բարեկամներից: Թշնամիներից մենք ինքներս կազատվենք... Ես հարցրի՝ ինչո՞ւ ղեկավարության մեջ չկան ոչ հայեր, ոչ ռուսներ...»<sup>31</sup>:

Ադրբեջանում աստվածացրել են Նարիման Նարիմանովին, նրա թերությունների մասին թաքցնում են, մինչդեռ, ինչպես նշել է Նիկիտա Խրուշչևը, նա ունեցել է խոշոր թերություններ, հատկապես, ազգային քաղաքականության ոլորտում<sup>32</sup>: Ակնհայտ է, որ նա եղել է հայաստաց, մոլի նացիոնալիստ, արցախահայության նկատմամբ իրագործված բռնարարքների կազմակերպիչ:

Խորհրդային Միությունում նոր՝ վերակառուցման փուլում, ազգային պետականության ժողովրդավարացման և ավելի գործուն դարձնելու հարցը ամենուր դարձել էր հրատապ: Այդ ժամանակաշրջանում Խորհրդային Հայաստանի համար Արցախը դարձել էր ազգային ազատագրման ու միացման համար պայքարի կիզակետ<sup>33</sup>: Նույն այդ պայմաններում Հայաստանի կուսակցական-պետական և տնտեսական ղեկավար մարմինները դժկամությամբ էին ընդունում իրենց թերություններն ու նրանց հասցեին արված դիտողությունները:

ՀԽՍՀ-ում վիճակը բարոգ չէր բնապահպանության, դատաիրավական և այլ բնագավառներում: Օդի աղտոտման տեսակետից առանձնապես վտանգավոր վիճակ էր ստեղծվել Երևանում, Աբովյանում, Ալավերդիում, Վանաձորում: Համբարձում Գալստյանը իր հուշերում պատմում է, որ 1988 թ. փետրվարի 18-ի երեկոյան Երևանի Թատերական հրապարակում նշանակված էր հանրահավաք, որի կազմակերպիչները բնապահպանական շարժման ակտիվիստներն էին: Հանրահավաքի հիմնական նպատակը Աբովյանում կառուցվող լիզինի գործարանի սկսված շինարարության կասե-

---

<sup>31</sup> Зеркало, 19. 11. 2005.

<sup>32</sup> Նույն տեղում:

<sup>33</sup> ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 13, թ.1-3:

ցումն էր: Հետո հանրահավաքը տեղափոխվեց Երևանի Մարշալ Բաղրամյան պողոտա և առաջին անգամ կենտկոմի շենքի դիմաց փողոցն ու ամբողջ երթևեկությունը փակվեց: Արվյանցիները շատ ուշ հասան միտինգին, որոնք բարձրացնում էին ոչ թե գոյապահպանման, այլ Ղարաբաղի հարցը<sup>34</sup>: Թեև ճշգրտենք, որ Բաղրամյանի վրա՝ Գիտությունների Ակադեմիայի հարթակից փետրվարի 22-ին անցկացրած առաջին ցույցը միանգամից սևեռվեց Արցախի միացման հարցի վրա:

1987 թ. ամռանից ի վեր խիստ անհանգիստ էր Երևանի ներքին կյանքը: Պատճառը «Նաիրիտի» Երևանի մթնոլորտը սուր հոտով քլորապրենախառն օդի արտանետումն էր, որից անհանգստացած էր բնակչությունը: Այդ նույն թվականի հոկտեմբերի 18-ին Թատերական հրապարակում տեղի ունեցած գոյապահպանման հանրահավաքում հռետորները շոշափում էին նաև «Նաիրիտի» հարցը<sup>35</sup>: Նման հանրահավաքներ մինչ այդ տեղի էին ունեցել Մարտիրոս Սարյանի անվան այգում, ուսումնական հանրակացարաններում, արդյունաբերական մի շարք ձեռնարկություններում, մշակույթի օջախներում և այլ տեղեր: Այդ հավաքներում ելույթ էին ունենում Զորի Բալայանը, Սիլվա Կապուտիկյանը, Իգոր Մուրադյանը, Սոս Սարգսյանը, լրագրողներ, գիտնականներ, արտադրության ներկայացուցիչներ:

Այդ ժամանակ հավաքներում անդրադառնում էին ինչպես բնապահպանությանը, այնպես էլ սոցիալական ու ազգային հարցերին: Հանրապետությունում սկսված շարժումը աստիճանաբար խորանում էր, հետզհետե դառնում ավելի համարձակ, իսկ առաջ քաշված հարցերը՝ որոշակի և հստակ<sup>36</sup>: Այդ հարցերով զբաղվում էին տասնյակ մանր խմբեր և կազմակերպություններ, որոնք հան-

---

<sup>34</sup> Հ. Գալստյան, Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ, Եր., 2002, էջ 329:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 314–325:

<sup>36</sup> Հ. Աբրահամյան, Մարտնչող Արցախը, գիրք Գ, Ստեփանակերտ, 2007, էջ 55:

դես էին գալիս քարոզչությամբ, մարդկանց հավաքում էին իրենց շուրջը, անցկացնում ժողովներ, կազմակերպում դրամահավաք<sup>37</sup>:

Հանրապետությունում օրեց օր վեր էր բարձրանում ժողովրդական շարժման ընդհանուր ալիքը: Այսպես, 1988 թ. փետրվարի 12-ին Հաղորդից (Է. Աբրահամյանի ջանքերով) ու Մարտակերտից հետո, փետրվարի 13-ին Ստեփանակերտում ժամը 11-ից 12:37-ը անցկացվեց առաջին կազմակերպված հանրահավաքը, որտեղ հասարակությանը իրենց անդրանիկ խոսքերն են ուղղել Գրիգորի Աֆանասյանը, Արկադի Կարապետյանը և ուրիշներ: Իսկ երիտասարդ Արմեն Սաղյանը առաջին անգամ պարզել էր հայկական դրոշը<sup>38</sup>: Լեոնային Ղարաբաղի աշխատավորների, գրողների, նկարիչների, մյուս ստեղծագործող մտավորականների անունից երկրի բարձրագույն իշխանություններին ուղարկված դիմումում նշվել է, որ 1920 թ. դեկտեմբերի 1-ի Նախիջևանի և Լեոնային Ղարաբաղի վերաբերյալ Խորհրդային Ադրբեջանի ընդունած հռչակագիրը խափանվել է և ազգային հարցը ողբերգական ավարտ է ունեցել:

Փաստորեն, ցեղասպանության ենթարկվող հայ ժողովուրդը Նախիջևանում ստիպված էր ամբողջությամբ թողնել իր օջախը, որը ամենուր պղծվում և ավերվում էր թուրքի կողմից: Տեղի էր ունենում անկարգություն, սպանություններ, ազգային հողի վրա ուժի կիրառում, դատարկվում էին հայկական բնակավայրերը և տեղը լցվում էին թուրքերով: Այսպես, 1987 թ. դրությամբ Նախիջևանում մնացել էր հայկական մեկ բնակավայր՝ մի քանի հարյուր բնակիչներով: Նման ճակատագիր սպասում էր նաև Արցախին ու Գարդմանին:

Հանրահավաքի՝ Խորհրդային Միության ղեկավարությանը հասցեագրած նամակում նաև ասված է, որ վերակառուցումը,

---

<sup>37</sup> Հ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 55:

<sup>38</sup> Արմեն Բենիկի Սաղյանը (19. 08. 1967 – 19. 11. 1992-ից հետո) ծնվել է Մարտակերտի շրջանի Չափար գյուղում: Մասնակցել է հայրենի տան ու Վանքի պաշտպանությանը: Ծանր վիրավորվել է 1992 թ. նոյեմբերի 19-ին ու մահացել է հոսպիտալում:

հրապարակայնությունը և ժողովրդավարությունը ներկայումս հնարավորություն է բացել անցյալի սխալներն ուղղելու համար: Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը Խորհրդային Հայաստանի հետ միշտ էլ եղել է հայ հասարակության ուշադրության կենտրոնում: Ավելի քան հիսուն հազարանոց ստորագրությամբ վավերացրած կոչը՝ ԽՄԿԿ կենտկոմին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդին ուղղված, հանդիսանում էր ամբողջ հայ ժողովրդի կամքի միասնական արտահայտությունը ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելու համար: Դիմումն ավարտվում է հետևյալ խնդրանքով. «Ի նկատի ունենալով, որ մարզում վիճակը մնում է ծայրահեղ լարված, մենք կրկին թախանձագին խնդրում ենք Ձեզ ստեղծել կառավարական հանձնաժողով որոշելու հայկական շրջանները Սովետական Հայաստանի հետ վերամիավորելու հարցը»<sup>39</sup>:



---

<sup>39</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 3, գ. 143, թ. 100-101: Տե՛ս նաև՝ Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (փաստաթղթեր և նյութեր), Եր., 2011, էջ 128-130:

Այդ դիմումը Մոսկվա ուղարկված այն բազմաթիվ նամակ-բողոքներից մեկն էր, որը վկայում է հայ ժողովրդի պատրաստակամության մասին: Մոսկվայի, Երևանի և Ստեփանակերտի արխիվներում պահպանվող նմանատիպ բողոքները կազմում են մի քանի տասնյակ հատորներ, որոնք գրվել են կոլեկտիվների, կուսակցական, պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և առանձին քաղաքացիների կողմից: Առանձնապես արժանի է հիշատակել Սուրեն Այվազյանի անունը: Մոսկվայի և Երևանի արխիվներում պահվում են մի քանի հատորներ կազմող նրա նամակներն ու Արցախի ի մի բերված բողոքները<sup>40</sup>:

1988 թ. փետրվարի 13-ին Սուրեն Այվազյանը Մ. Գորբաչովին հեռագրել է, թե արդեն երրորդ օրն է Լեռնային Ղարաբաղում է գտնվում Ադրբեջանի կոմկուսի ԿԿ երկրորդ քարտուղար Վ. Կոնովալովը, որը փորձում է մարզի կոմունիստների կամքին հակառակ նրանց անունից բանաձև ընդունել, թե իրենք հարց չեն դնում Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու մասին: Մարզի շրջկենտրոններում տեղի ունեցող բազմահազարանոց ցույցերը դատապարտել են Կոնովալովի և Բաղիրովի դիրքորոշումները: Ներկայումս Կոնովալովը փորձում է մարզկոմի բյուրոյի անդամներին համոզել ընդունել Ղարաբաղի բնակչության համար անընդունելի որոշում: Ս. Այվազյանը Մ. Գորբաչովին խնդրում է պարզել, թե Կոնովալովը ում հանձնարարությամբ է գործում Ղարաբաղում<sup>41</sup>: Նա փետրվարի 19-ին Մոսկվա, ԽՍՀՄ Պետական

---

<sup>40</sup> Մասնագիտությամբ երկրաբան Սուրեն Այվազյանի մասին 1986 թ. նոյեմբերի 3-ին Զորի Բալայանը գրել է. «Կգա ժամանակ Սուրենի անունը հայտնի կլինի ոչ միայն մարտիկներին, այլև հողագործին, սերմնացանին»: Իսկ նրա մահվան կապակցությամբ ստացված բազմաթիվ հեռագրերից մեկի հեղինակը գրել է, որ ինքը Սուրեն Այվազյանին ճանաչում է «որպես մեր ժողովրդի... պատմության խոր գիտակ և ինքնատիպ հետազոտող, որին հատուկ էին բացառիկ բարեխղճությունը և գիտական լայն մտահորիզոնը» (Мецамор, № 16, сентябрь, 2009):

<sup>41</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 11, գ. 15, թ. 6:



անվտանգության կոմիտեի (ՊԱԿ) նախագահ Վ. Չերրիկովին ուղարկած հեռագրում հաղորդել է, որ Ստեփանակերտից ստացված տվյալի համաձայն Շուշիից Ստեփանակերտ է ուղարկվել ադրբեջանական ծայրահեղականների խումբ բնակչությանը ջարդելու և ահաբեկելու համար: Խնդրում է վերջ տալ այդ սադրանքներին<sup>42</sup>:

Գորբաշովյան վերակառուցման տարիներին ակտիվ էր գործում մասնագիտությամբ տնտեսագետ Իգոր Մուրադյանը, որն աշխատում էր Հայկական ԽՍՀ Պետպլանի տնտեսագիտության ինստիտուտում: Նրա անտիպ նամակները, որոնք կազմում են երկու հաստափոր թղթապանակ, ձեռքից ձեռք էին անցնում<sup>43</sup>:

Իգոր Մուրադյանը ավարտել էր Մոսկվայի Պլեխանովի անվան ժողովրդական տնտեսության ինստիտուտը, տնտեսագիտության թեկնածու էր: Նա 1988 թ. փետրվարի 15-ին Հայկոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանին, երկրորդ քարտուղար Յու. Կոչետկովին և հանրապետության Պետական անվտանգության կոմիտեի նախագահ Մարիոս Յուզբաշյանին ուղարկած նամակում Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ հանրապետության իշխանությունների դրսևորած անտարբերությունից խիստ անհանգստացած, պահանջում է «լուծել Ղարաբաղի հարցը»<sup>44</sup>:

1988 թ. փետրվարի 15-ին ԼՂԻՄ մարզկոմի բյուրոն քննարկել է մարզը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: Բյուրոյի նիստին մասնակցած 10 հոգուց, վերամիավորման օգտին քվեարկել են Հենրիկ Պողոսյանը (Ագրոպոմի նախագահ), Զավեն Մովսիսյանը (Ստեփանակերտի քաղկոմի առաջին քարտուղար), Եղիշե Սարգսյանը («Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագիր), Աիդա Օրբեյանը (ջուլիակուհի), Շմավոն Սաղաթեյանը (Գիշի գյուղի մեխանիզատորների բրիգադիր): Վերամիավորմանը դեմ են

---

<sup>42</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 11, գ. 15, թ. 8:

<sup>43</sup> Տե՛ս Հ. Գալստյան, նշվ. աշխ., էջ 324:

<sup>44</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 677, թ. 151: Տե՛ս նաև՝ Հայության կոչերն ու դիմումները ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար 1988–1989, Եր., 2014, էջ 13–14:

քվեարկել Բորիս Կևրկովը (մարզկոմի առաջին քարտուղար), Ջուլիետա Միրզոյանը (մարզկոմի քարտուղար), Բոգուսլավսկին (մարզկոմի երկրորդ քարտուղար), Գաջիևը (Շուշիի շրջկոմի առաջին քարտուղար), Հուսեյնովը (մարզխորհրդի նախագահի տեղակալ): Այսպիսով, հինգը հինգի դեմ: Այդ դեմքերից, ինչպես տեսնում ենք, երեքը մարզկոմի քարտուղարներ էին, երկուսը՝ ազգությամբ թուրք<sup>45</sup>:

1988 թ. փետրվարի առաջին իսկ օրերից Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու համար սկսած շարժումը ներգրավել էր բազմաթիվ քաղաքացիների: Այսպես, փետրվարի 1-ին Ս. Առուշանյանը կազմել է «Վերամիավորման հռչակագիրը»՝ մարզում համընդհանուր քննարկման և հավանության համար: Ամսի 22-ին Երևանում անցկացրած հանրահավաքի ժամանակ Հայաստանում հայտարարվել է համընդհանուր գործադուլ, իսկ փետրվարի 25-ին Երևանյան հանրահավաքին մասնակցել է 1 միլիոն մարդ: Ու եթե փետրվարի վերջին ՀԽՍՀ-ում հասարակության զանգվածային մասնակցությունը եղել է քիչ կազմակերպված և ինքնաբուխ, ապա մարտ ամսին միացման համար ծավալված շարժումը ընդունել էր համաժողովրդական բնույթ: Նույն մարտ ամսի վիճակով Մ. Գորբաչովին ուղարկված «Վերամիավորման հռչակագրի» տակ ստորագրել էին Լեռնային Ղարաբաղի 50–52 հազար հոգի<sup>46</sup>:

Մարզի հիմնարկ-ձեռնարկություններում տեղի էին ունենում ժողովներ և հանրահավաքներ, որտեղ ընդունվում էին Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորվելու բանաձևեր: Գրեթե ամեն ամիս Մոսկվա էր մեկնում պատվիրակություն, որոնց կազմում էին սոցիալիստական աշխատանքի հերոսներ, պատերազմի և աշխատանքի վետերաններ, կուսակցական և կոմերիտական աշխատողներ: Թե՛ Իգոր Մուրադյանը և թե՛ շարժման մյուս առաջնորդները խիստ դժգոհ էին Լեռնային Ղարաբաղի ճակատագրի հարցում

---

<sup>45</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 11, գ. 15, թ. 7:

<sup>46</sup> Մինչև հիմա շրջանառության մեջ դրված թվերի մեջ 51–52 հազարը ամենահավանականն է:

Հայկոմկուսի կենտկոմի, Գերագույն խորհրդի նախագահության և կառավարության անտարբերության համար: Հայկոմկուսի այդ վարմունքը որակում է քաղաքական վախկոտություն: Ի. Մուրադյանը հայտարարում է, որ եթե Հայկոմկուսի կենտկոմը ամենամոտիկ ժամանակներում Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի վերաբերյալ կոնկրետ առաջարկություններ չմտցնի ԽՄԿԿ կենտկոմ, ապա Երևանում փողոց դուրս կգան տասնյակ հազարավոր ղարաբաղցիներ: Այդ նույնը տեղի կունենա նաև Հրազդանում, Չարենցավանում, Աբովյանում<sup>47</sup>

Արցախահայության ազատագրական պայքարը փոթորկել էր նաև աշխարհասփյուռ հայությանը: Մարզի բնակչությունը սպասում էր բաղձալի լուրի, սակայն Մոսկվան համառորեն լուում էր: 1988 թ. փետրվարի 7-ին Մոսկվա մեկնած Արցախի մտավորականների պատվիրակությունը փետրվարի 17-ին վերադառնալով՝ ինչ որ հույսեր ուներ: Այնտեղ նրանք հանդիպումներ են ունեցել ԽՄԿԿ-ում՝ Վ. Միխայլովի, ԽՍՀՄ արտգործնախարար Ա. Գրոմիկոյի հետ: Պատվիրակությանը հասկացրել էին, որ պետք է «նախ դիմել մարզային խորհրդին և կարողանալ որոշում ընդունել տալ ԼՂԻՄ-ը Հայաստանին միավորելու մասին և այն ուղարկել ըստ ատյանների...»<sup>48</sup>:

Նրա անդամները Մոսկվայից վերադառնալուց առաջ, փորձել են հանդիպել այդ օրը այնտեղ գտնվող Կ. Դեմիրճյանի հետ, սակայն վերջինս հրաժարվել է<sup>49</sup>:

---

<sup>47</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 677, թ. 151:

<sup>48</sup> Նույն տեղում, ց. 87, գ. 11, թ. 83, նաև՝ ԼՂ Հանրապետություն, 14. 02. 1998:

<sup>49</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 11, թ. 83: Իմիջիայլոց Կ. Դեմիրճյանի կինը՝ Ռիմա Դեմիրճյանը ամուսնուն նվիրված «Հիշատակ» գրքում նշել է, որ փետրվարի 17-ի երեկոյան Դեմիրճյանին և Բաղիրովին իր մոտ է կանչել ԽՄԿԿ կենտկոմի քարտուղար Ե. Կ. Լիգաչովը և նրանց հաղորդել քաղբյուրոյի որոշումը՝ ոչ մի ադմինիստրատիվ տարածքային փոփոխություններ չեն լինելու, ԼՂԻՄ-ի կարգավիճակը կմնա նույնը (Ռիմա Դեմիրճյան, Հիշատակ, Եր., 2013, էջ 456):

Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը հետազայում իր հուշերում գրել է, որ տեղի ունեցող միտինգների իմաստը վերններում չհասկացան, որ դա եղել է ազգային-ազատագրական շարժման սկիզբը, որն ընթանում էր դեմոկրատիայի և վերակառուցման ոգով: Ս. Համբարձումյանը նշել է, որ Մ. Գորբաչովը երբեք էլ չհասկացավ, որ հայ ժողովրդի շարժումը՝ ամբողջովին, և մասնավորապես ԼՂԻՄ-ում, ուղղված է եղել Ադրբեջանական ԽՍՀ շահագործող գաղութային քաղաքականության դեմ, որը յոթ տասնյակ տարիներ իրագործել է ԼՂԻՄ-ի և Նախիջևանի հայությանը ստորացնելուն, հայ ժողովրդի պատմության կեղծմանը, պատմական հուշարձանների և հոգևոր հարստության ոչնչացմանը<sup>50</sup>:

Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի հետագա, փետրվարի 20-ին ընդունած պատմական որոշումը խառնել էր Մոսկվայի և Բաքվի քաղաքական քարտերը: Այն ցույց տվեց կենտրոնի քաղաքական ուժերի ներքին հակասությունները: Ղարաբաղյան հիմնախնդրին առաջին հարվածը հասցրեց հենց նույն Մոսկվան, երբ փետրվարի 21-ին հապշտապ ընդունեց «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին» ԽՄԿԿ կենտկոնմի քաղբյուրոյի որոշումը, որտեղ ԼՂԻՄ մարզխորհրդի որոշումը բնութագրվեց որպես մի խումբ «անջատողականների» գործողությունների արդյունք: Որոշման մեջ եզրակացվում է, թե իբր ԼՂԻՄ-ը Ադրբեջանական

---

Ըստ որոշ աղբյուրների, այդ նույն օրերին Սերո Խանզադյանը և Սիլվա Կապուտիկյանը հեռագրել են Կ. Դեմիրճյանին և հայ ժողովրդի անունից պահանջել Ղարաբաղի ճակատագրի մասին հայտնել ԽՄԿԿ կենտկոմ ու ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ և իրազեկ դարձնել, որ Խորհրդային Հայաստանը պատրաստ է ԼՂԻՄ-ը ընդունել Հայկական ԽՍՀ կազմում: Դա չկատարելը հավասարագոր է հայ ժողովրդի նկատմամբ անվստահության դրսևորման (ՀԱԱ, ֆ. 1159, ց. 11, գ. 15, թ. 7-8):

<sup>50</sup> С. Амбарцумян, Три года на пределе любви и смерти, 3-е изд., Ер., 2005, с. 17.

ԽՍՀ-ից անջատելը «հակասում է հայ և ադրբեջանական ժողովուրդների շահերին ու ցանկություններին»<sup>51</sup>:

Դա չհիմնավորված տեսակետ է, որն առաջ էին քաշել Միության իշխող չինովնիկները, որից իրենք էլ չկարողացան գլուխ հանել, թե ինչու Լեոնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորումը պիտի հակասի երկու ժողովուրդների շահերին ու ցանկություններին, մանավանդ, որ երկու հանրապետություններն էլ շարունակում էին մնալ Միության հավասարազոր անդամներ և չէր հակասում ԽՍՀՄ Սահմանադրության պահանջներին:

Քաղքյուրոյի այդ որոշումը բնակչությանը հասցնելու համար Բաքու և Ստեփանակերտ ուղարկվեցին ԽՄԿԿ կենտկոմի քարտուղար Գ. Ռազումովսկին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ Պ. Դեմիչևը<sup>52</sup>, իսկ Երևան՝ ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարներ Վ. Դուզիխը և Ա. Լուկյանովը: Մոսկվայի այդ էմիսարները թե՛ Բաքվում և թե՛ Երևանում գործադրում էին կոմունիստական վարչակարգի գաղափարախոսական փորձն ու գործելաճոճը: Եթե Ադրբեջանում դա տարվում էր ի պաշտպանություն ազերիների պահանջի, ապա Հայաստանում նրանց գործունեությունը ուղղված էր հայ ժողովրդի արդար պահանջը կասեցնելուն: Ի՞նչ էր պահանջում հայ ժողովուրդը: Ուղղել թույլ տված պատմական սխալը և Արցախը վերամիավորել մայր Հայաստանի հետ, որից անօրեն անջատել էին և նվիրաբերել Ադրբեջանին: Արցախահայությունը պայքարում էր լինել մայր ժողովրդի հետ: Ուրիշ ոչինչ: Սակայն այդ արդար պահանջը թշնամաբար էր ընդունել Կրեմլում ծվարած էլիտան:

Ակնհայտ է, որ մարզը որևէ առնչություն չի ունեցել Ադրբեջանի տարածքային ամբողջականության հետ, և երբեք չի հանդիսացել անկախ Ադրբեջանի մաս: Հետևապես՝ արցախահայության պայքարը նախևառաջ քաղաքական էր, որը Մոսկվան չէր

---

<sup>51</sup> Правда, 22. 02. 1988.

<sup>52</sup> В. Б. Арутюнян, Генрих Погосян: лидер Арцаха 1988, Эчмиадзин, 2000, с. 16–17.

ընդունել և փորձել էր այդ ամենը փաթաթել «տնտեսական» և «տարածքային» լաթով: Հենց այդ օրերին, երբ մոսկվացի էմիսարները աջ ու ձախ էին ընկել արցախահայության պահանջով, փետրվարի 23-ին պաշտոնից ազատվեց մարզկոմի առաջին քարտուղար Բորիս Կևորքովը և մարզկոմի առաջին քարտուղար ընտրվեց Արցախի ազատագրական պայքարի նվիրյալներից Հենրիկ Պողոսյանը:

Մարզի ողջ բնակչությունը դարձել էր մի բռունցք: Շարժման առաջամարտիկներ Արկաղի Մանուչարյանը (Մանուչարով), Համլետ Գրիգորյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Վարդան Հակոբյանը, Ռոլես Աղաջանյանը, Ժաննա Գալստյանը, Էռնեստ Հայրապետյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչիկ Բեգլարյանը, Արմո Ծատուրյանը, Էդվարդ Ղուկասյանը և ուրիշներ ստեղծել էին նախաձեռնող խումբ (շարժման շտաբ), որը նման էր ժիր մեղվափեթակի: Շտաբի նախաձեռնությամբ մարտի 2-ին ստեղծվում է «Կռունկ» կոմիտեն, որը գլխավորում էր արցախահայության ազատագրական պայքարը<sup>53</sup>:

Նույն այդ ժամանակ՝ 1988 թ. փետրվարի 21-ին ժամը 14-ին, Թատերական հրապարակում մի քանի տասնյակ հազար մարդ էր հավաքվել հանրահավաքի: Տեղի ունեցան բազմաթիվ ելույթներ: Արտահայտվողները հիմնականում անդրադառնում էին դարաբաղյան հարցին և առաջարկություններ մտցնում: Հրապարակում հավաքվածներից շատերը դեռևս լավ չէին պատկերացնում արցախյան հիմնախնդիրը: Օրվա վերջին, երբ հրապարակ հասցվեց «Սովետական Ղարաբաղ» թերթը, այն ձեռքից ձեռք էր անցնում: Համբարձում Գալստյանը նշում է, որ փետրվարի 20-ին տեղի ունեցած միտինգի ժամանակ ընտրվել է կազմկոմիտե, որն անվանվել է «Ղարաբաղ» կոմիտե: Այս նշում է, որ «ներկաների հիացական բացականչությունների ու սուլոցների ներքո» նախագահ է ընտրվել Իգոր Մուրադյանը, անդամներ՝ Ալեքսան Հակոբյան, Սամսոն Ղազարյան, Մանվել Սարգսյան և Գագիկ Սաֆարյան:

---

<sup>53</sup> Մանրամասն տե՛ս Հրանտ Աբրահամյան, «Կռունկ», Ստեփանակերտ, 2013:

Մեր կողմից հարկավոր է ճշգրտել. այդ օրերին, իրոք, հաճախակի էր խոսվում շարժումն ընթացքի մեջ դնելու համար որևէ ղեկավար մարմին ստեղծելու մասին: Նույնիսկ փորձ է արվել կապ հաստատել Հայկոմկուսի կենտկոմի հետ, սակայն չի ստացվել<sup>54</sup>: Ղեկավար մարմին ստեղծելու մասին խոսակցությունը գնացել է նաև փետրվարի 21-ին տեղի ունեցած հանրահավաքում: Նույն գիշերն էլ Օպերայի սենյակներից մեկում տեղի է ունեցել շարժման ակտիվիստների նիստ, որտեղ որոշվել է ստեղծել շարժումը ղեկավարող կոմիտե, որն անվանվել է «Ղարաբաղ»: Ըստ որոշ տվյալների՝ կոմիտեի կազմում ընտրվել են Ալեքսան Հակոբյանը, Սամսոն Ղազարյանը, Մանվել Սարգսյանը, Գագիկ Սաֆարյանը, Իգոր Մուրադյանը և Համբարձում Գալստյանը: Նախագահ է ընտրվել Իգոր Մուրադյանը: Հաջորդ երեք օրերում կոմիտեի կազմը լրացրել են Սամվել Գևորգյանը, Վանո Սիրադեղյանը, Արմեն Հովհաննիսյանն ու Վազգեն Մանուկյանը: Վաչե Սարուխանյանը հրաժարվել է և կոմիտեի մեջ չի մտել: Այդ մասին նա պատմում է հետագայում գրած «Կրածախ» հուշերում<sup>55</sup>:

Փետրվարի 22-ի հանրահավաքի ժամանակ, երբ հայտարարվում է կոմիտեի ստեղծման և Իգոր Մուրադյանի՝ նախագահ ընտրվելու մասին, հրապարակը թնդում է ուռաներով ու ծափահարություններով: Այդ օրերին՝ ամսի 24-ին, ստեղծվել է նաև ավագանու խորհուրդ, որը մեծ գործ է տարել Մոսկվայի ներկայացուցիչների հետ՝ համազգային պահանջը ճիշտ լուսաբանելու և կեղծիքներից պաշտպանելու համար: Ավագանու խորհրդի կազմի մեջ էին Զորի Բալայանը, Վիկտոր Համբարձումյանը, Վլադիմիր

---

<sup>54</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 11, գ. 15, թ. 10–11:

<sup>55</sup> Նույն տեղում, գ. 13 և 14: Վաչե Սարուխանյանը ծնունդով Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղից է: Մասնագիտությամբ դերասան էր, աշխատում էր էջմիածնի թատրոնում: Ճառ արտասանելու մեծ ընդունակություն ուներ: Կարող էր ժամերով խոսել և կենտրոնացած պահել լսողների ուշադրությունը: Այդ օրերին շատերը Թատերական հրապարակ էին շտապում՝ Վաչե Սարուխանյանի ճառը լսելու համար:

Բարխուդարյանը, Հովհաննես Չեքիջյանը, Սոս Սարգսյանը, Սիլվա Կապուտիկյանը, Հենրիկ Իգիթյանը:

Ավագանու խորհուրդը նաև անվանվել է պատվավոր նախագահություն: Ազգային արխիվի բաժնի վարիչ Սոս Մարուքյանի գրպանի գրքույկում փետրվարի 24-ին կատարված գրառման համաձայն «Ղարաբաղ» կոմիտեի և ավագների խորհրդի կազմը բաղկացած է եղել՝ Ի. Մուրադյան, Հ. Գալստյան, Ս. Ղազարյան, Գ. Սաֆարյան, Մ. Սարգսյան, Վ. Սիրադեղյան, Ա. Հովհաննիսյան, Ս. Գևորգյան, Վ. Մանուկյան, Ա. Հակոբյան, Հ. Իգիթյան, Վ. Համբարձումյան, Ռ. Ղազարյան, Վ. Բարխուդարյան և Հ. Չեքիջյան: Այդ ցուցակից սխալմամբ բացակայել է Զ. Բալայանի, Ս. Կապուտիկյանի և Ս. Սարգսյանի անունները: Խորհրդի կողմից Արմեն Հովհաննիսյանը ինքնահեռացել է:

Այսպես, մեր ունեցած տվյալներով, փետրվարի 24-ի դրությամբ, «Ղարաբաղ» կոմիտեի և ավագանու խորհրդի անդամների թիվը կազմել է 17 հոգի: Մինչդեռ հայոց Համազգային շարժման պատմության լավ տեղյակ Աշոտ Սարգսյանը այդ թիվը ցույց է տալիս 21<sup>56</sup>:

\*  
\*   \*  
\*

Փետրվարի 22-ին Խորհրդային Հայաստանում հայտարարվեց համընդհանուր գործադուլ, որոնց մասնակիցների թիվը հասնում էր մի քանի հարյուր հազարի: Թատերական հրապարակում հավաքված մարդիկ պահանջում էին հրավիրել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան և քննարկել արցախցիների խնդրանքը: Այդ օրը հանրահավաքն ավարտվեց դեպի Հայկոմկուսի կենտկոմի շենք երթով: Փետրվարի 24-ին կայացած հանրահավաքում Ի. Մուրադյանը հայտարարեց, թե նորաստեղծ

---

<sup>56</sup> Ա. Սարգսյան, Հայաստանի նորագույն պատմության ուրացումն ու կեղծումը (1988–1998 թթ.), Եր., 2015, էջ 41: «Ղարաբաղ» կոմիտեի նիստերի արձանագրությունները չի գրվել:



«Ղարաբաղ» կոմիտեն իր վրա է վերցնում հանրապետությունում շարժման հետ առնչվող բոլոր գործողությունների պատասխանատվությունը: Այդ հանրահավաքում Վազգեն Մանուկյանը հայտարարում է, թե պետք է արագացնել և բոլոր հիմնարկ-ձեռնարկություններում ստեղծել «Ղարաբաղ» կոմիտեի սկզբնական բջիջներ, միևնույն ժամանակ պահանջել հրավիրել Գերագույն խորհրդի նստաշրջան և քննարկել Արցախի հիմնահարցը: Ալեքսան Հակոբյանը նպատակահարմար է գտնում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի բոլոր պատգամավորներին և ԽՄԿԿ կենտկոմի բոլոր անդամներին ուղարկել Ղարաբաղի մասին տեղեկանքներ, գրքույկներ և գրքեր<sup>57</sup>:

Հանրահավաքում նաև առաջարկվում է տեղերում ընդունված բոլոր որոշումները բերել հրապարակ և հանձնել կոմիտեին<sup>58</sup>: Վ. Սիրադեղյանը հայտարարում է, թե Չարենցավանից մարդկանց մի մեծ խումբ շարժվում է դեպի Երևան, շուտով այստեղ կլինի, Հ. Գալստյանը նշում է, որ մեզ բոլորիս շատ անհանգստացնում է ղարաբաղցիների անվտանգությունը, իսկ Վ. Սարուխանյանը կոչ է անում գործել առանց միջադեպերի: Վ. Մանուկյանը կրկին մոտենալով լսավողին՝ առաջարկում է դեպուտատներին նստաշրջան հրավիրել, իսկ ովքեր հրաժարվում են, ետ կանչել նրանց մանդատները<sup>59</sup>: Քանի որ քաղխորհուրդը մերժել էր «Ղարաբաղ» կոմիտեին լսավող տրամադրել, փետրվարի 25-ին տեղի ունեցած հանրահավաքում Վ. Սիրադեղյանը առաջարկում է գնալ շրջափակել քաղխորհուրդը և լսավող պահանջել<sup>60</sup>:

«Ղարաբաղ» կոմիտեի հեղինակությունը բարձրանում էր ժամ առ ժամ: Փետրվարի 25–26-ին Երևանում ցուցարարների թիվը հասել էր մեկ միլիոնի: Դա ԽՍՀՄ պատմության մեջ ամենախոշոր

---

<sup>57</sup> ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 1, թ. 8–16: Այդ օրերին և հետագայում բոլոր հանրահավաքներն ու միտինգները զաղտնի սղագրվել են անվտանգության կոմիտեի և ներքին գործերի նախարարության կողմից:

<sup>58</sup> Նույն տեղում, թ. 11:

<sup>59</sup> Նույն տեղում, թ. 13–16:

<sup>60</sup> Նույն տեղում, թ. 20:

ցույցն էր, որը երբևիցե տեղի է ունեցել: Այդ ցույցերը ուղղված չէին Միության որևէ ժողովրդի, այդ թվում ադրբեջանցիների դեմ: Ելույթներում ընդգծվել է, որ ադրբեջանցի ժողովուրդը մեղավոր չէ ստալինյան ռեժիմի թույլ տված սխալների և բռնությունների համար: Այդ շրջանում «Ղարաբաղ» կոմիտեն այն կարծիքին էր, թե երկրի ղեկավարությունը միայն հանգիստ պայմաններում կարող է որոշում ընդունել Ղարաբաղի հիմնահարցի վերաբերյալ: Ի. Մուրադյանը միտինգներին ներկայացնելով «Ղարաբաղ» կոմիտեի մոտակա անելիքների և խնդիրների մասին ծրագիր, միևնույն ժամանակ իշխանությունները պահանջում է Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակի մասին բնակչությանը ստույգ տեղեկություններ հաղորդել<sup>61</sup>:

Փետրվարի 26-ի հանրահավաքում Ի. Մուրադյանը իր ելույթում նշեց, որ Ադրբեջանում մնացել են մեր եղբայրները՝ հարյուր հազարավոր հայեր, ռուսներ, վրացիներ, հրեաներ, ուկրաինացիներ, դաղստանցիներ: Մենք պետք է նրանց բոլորի մասին մտահոգ լինենք: Հիմա երկարատև ճառեր արտասանելու ժամանակը չէ: Մենք համոզված ենք, որ Ղարաբաղի հարցը ԽՄԿԿ կենտկոմը կլուծի խաղաղ պայմաններում: Ի. Մուրադյանի արտահայտած այդ մտքից հրապարակում հավաքված ամբոխը դժգոհ էր: Ի պատասխան Ի. Մուրադյանի հայտարարությանը, տարբեր կողմերից գոչում են՝ «գործադուլ»<sup>62</sup>:

Իր ելույթում Աշոտ Մանուչարյանը բացատրում է գործադուլի քաղաքական նշանակությունը: Փետրվարի 27-ին և 28-ին տեղի ունեցած հանրահավաքներում Ի. Մուրադյանի ելույթներում լսվում է հակագործադուլային առաջարկություններ: Նա պնդում է, թե կոմիտեն իրավունք չունի գործադուլի կոչեր հնչեցնել, այդ իրավունքը ունի ժողովուրդը: Հրապարակում կրկին լսվում է դժգոհություն և շվկոցներ: Վ. Մանուկյանը հայտարարում է, թե չեն կարող մեր ընկերոջ կարծիքը կիսել: Նա առաջարկում է ստեղծել

---

<sup>61</sup> ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 1, թ. 18–19:

<sup>62</sup> Նույն տեղում, թ. 21:

նոր կոմիտե, որը պիտի անվանվի «Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու կոմիտե»<sup>63</sup>: Ինչպես տեսնում ենք, առաջին իսկ օրերից «Ղարաբաղ» կոմիտեի անդամների միջև որոշ հարցերի շուրջ գոյություն ունեւր անհամաձայնություն, հայացքների և համոզմունքների տարբերություն: Իսկ դա թեև բնական էր, բայց, անկասկած, դժվարացնում էր կոմիտեի աշխատանքը: Ըստ էության, կոմիտեի անդամների մի մասը ի սկզբանե դժգոհ էր Ի. Մուրադյանի դիրքորոշումից:

1988 թ. փետրվարյան այդ օրերին հանրապետությունում տեղի ունեցող հանրահավաքների և ցույցերի ժամանակ առաջ քաշված պահանջները չէին կարող չանհանգստացնել ոչ միայն Մոսկվային, այլև հանրապետության ղեկավարությանը:

Մոսկվան հետզհետե ուժեղացնում էր իր ճնշումը: Փետրվարի 21-ի երեկոյան հրավիրված Հայկոմկուսի կենտկոմի բյուրոյի նիստում քննարկվեց քաղբյուրոյի ընդունած որոշումը: Ելույթ ունեցած 18 հոգին միաբերան պաշտպանեցին այդ որոշումը և այն գնահատեցին որպես «գործողության ուղեցույց», իսկ հանրապետությունում ստեղծված իրավիճակը գնահատվեց «քաղաքական լուրջ իրադարձություն»: Հայկոմկուսի կենտկոմի բյուրոն գտնում էր, որ գոյություն ունեցող ազգային տարածքային կառուցվածքի վերանայման նպատակին ուղղված գործողություններն ու պահանջները հակասում են Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Հայաստանի շահերին, վնաս հասցնում ազգամիջյան հարաբերություններին, հետևապես՝ «եթե... անհրաժեշտ միջոցառումներ չձեռնարկվեն, ապա այն կհասցնի անկանխատեսելի ու դժվարաուղղելի հետևանքների»: ՀԿԿ ղեկավարության կարծիքով իբրև այդ բոլորը հնարավոր է դարձել «առանձին ծայրահեղական տրամադրություններով անձանց անպատասխանատու կոչերի և գործողությունների» հետևանքով:

Կենտկոմի բյուրոն անհրաժեշտ է գտնում իրագործել ԽՄԿԿ կենտկոմի որոշումը՝ ելնելով այն բանից, որ «ազգային հարցը պահանջում է սևեռուն և մշտական ուշադրություն», ի նկատի ունե-

<sup>63</sup> ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 1, թ. 32:

նալով «ազգային առանձնահատկությունները, հոգեբանությունը, աշխատավորների շահերը»: Բյուրոն քաղկոմներին և շրջկոմներին հանձնարարում է լայն աշխատանք ծավալել ու կոնկրետ միջոցառումներ ձեռնարկել «չեզոքացնելու Հայաստանի և Ադրբեջանի աշխատավորների շահերին դիպչող բոլոր գործողությունները»: Որոշվում է հրավիրել հանրապետական ակտիվի նիստ և քննարկել Լեռնային Ղարաբաղի շուրջ բարդացող վիճակը: Հանրապետության Մինիստրների խորհրդին հանձնարարվում է Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ սոցիալ-տնտեսական բնույթի առաջարկություններ նախապատրաստել և անհրաժեշտության դեպքում այն ներկայացնել ԽՍՀՄ Նախարարների խորհուրդ: Հաստատվում է ընդունված որոշման իրագործման միջոցառումների պլան<sup>64</sup>:

Ելնելով ընդունված որոշման պահանջներից, հանրապետության կուսակցական և պետական մարմինները ամեն ինչ անում էին բնակչությանը մոլորացնելու, նրանց ազգային-ազատագրական պայքարից հեռացնելու և շարժումը կասեցնելու համար: Ակնհայտ է, որ Հայկոմկուսի կենտկոմի բյուրոն փորձում էր լինել հանրապետությունում ստեղծված իրավիճակը կարգավորելու պատասխանատու: Բյուրոյի հանձնարարությամբ Հայկոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանը փերվարի 22-ին երեկոյան հանդես գալով հանրապետության հեռուստատեսությամբ, աշխատում էր հանգստացնել բնակչությանը: Նա կրկնելով Միության ղեկավարության տեսակետը, հայտարարում է, թե Լեռնային Ղարաբաղում կիրագործվեն սոցիալ-տնտեսական բնույթի միջոցառումներ: Ըստ էության, Կ. Դեմիրճյանը դրսևորում է պասիվություն և չի ներկայացնում սեփական տեսակետը: Մինչդեռ հայ ժողովրդին ամենից առաջ հետաքրքրում էր ազգային հարցի քաղաքական լուծումը, ասել է թե Արցախը Հայաստանի հետ վերամիավորման պահանջը:

Այդ օրերին ավելի էին խառնվել ու խճճվել Ադրբեջանի պարագլուխները: Այնտեղի լրատվական միջոցները աղաղակում էին և հնչեցնում հակաղարաբաղյան, հակահայկական կոչեր,

<sup>64</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 21, թ. 23:

ղարաբաղյան հիմնախնդիրը բարձրացնողներին որակավորում «դաշնակցականներ», խստորեն մեղադրում Հայաստանի կառավարող ուժերին և հայ սփյուռքին: Մինչդեռ Կ. Դեմիրճյանը շարունակում էր կապույտ էկրանից բարեկամության մասին ճառ կարդալ. «Մեր անգնահատելի նվաճումը հանդիսացող ժողովուրդների բարեկամությունը հանդիսանում է հայ ժողովրդի հետագա բարգավաճման երաշխիք... և պետք է այն աչքի լույսի պես պահպանենք»<sup>65</sup>: Հազիվ թե նրա այդ հայտարարությունը արժանացած լինի ունկնդիրների հավանությանը:

1988 թ. փետրվարի 23-ին տեղի ունեցավ հանրապետության ակտիվի հավաք, որին մասնակցեցին Հայաստանում գտնվող ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարներ Վ. Դուզիխը, Ա. Լուկյանովը և ԽՍՀՄ ներքին գործերի նախարարի տեղակալ Վ. Տրուշինը: Հավաքում քննարկվեց Լեոնային Ղարաբաղի հիմնախնդրի հետ կապված Երևանում տեղի ունեցող իրադարձությունները կարգավորելու և դրա հետ առնչվող փետրվարի 21-ի քաղբյուրոյի ընդունած որոշման կատարման անհետաձգելի միջոցառումները: Այդ որոշման դեմ են քվեարկել ակադեմիկոսներ Վիկտոր ու Սերգեյ Համբարձումյանները, իսկ հուսահատության մեջ գտնվող Կ. Դեմիրճյանը ասել է. «Ես չգիտեմ ինչպես որոշել այս (Ղարաբաղի – Հ. Ա.) հարցը: Եթե դահլիճում որևէ մեկը գիտի, թող զբաղեցնի իմ տեղը»<sup>66</sup>:

Մոսկվայի էմիսարները իրենց ելույթներում փորձում էին հայ ժողովրդին համոզել «հավատարիմ մնալ խորհրդային սկզբունքներին»: Ելնելով դրանից, հավաքը արձանագրում է, որ Լեոնային Ղարաբաղում գոյություն ունեցող ազգային-տարածքային կառուցվածքի վերանայմանն ուղղված գործողություններն ու պահանջները, որոնք իբրև հակասում են Ադրբեջանական ԽՍՀ-ի և Հայկական ԽՍՀ-ի աշխատավորների շահերին, վնաս են հասցնում ազգամիջյան հարաբերություններին, կարող են, եթե այժմ պատասխանատու միջոցներ չձեռնարկվեն, հանգեցնել անկախատե-

<sup>65</sup> Սովետական Հայաստան, թ. 44, 23. 02. 1988:

<sup>66</sup> Вл. Григорян, Армения. 1988–1989, Ер., 1999, с. 55.

սելի հետևանքների: Եվ դրա պատճառը համարում են «անպատասխանատու անձանց» կոչերը, ինչպես նաև «ինքնավար մարզի կուսակցական և սովետական մարմինների պասսիվ դիրքորոշումը»:

Ի վերջո, հավաքի ընդունած բանաձևը հավանություն է տվել ԽՄԿԿ քաղբյուրոյի 1988 թ. փետրվարի 21-ի ընդունած որոշմանը, որն իբր «ստեղծված պայմաններում միակ ճիշտ» որոշումն է և հանձնարարում է քաղկոմներին, շրջկոմներին, սկզբնական կուսակցական կազմակերպություններին վճռական միջոցներ ձեռնարկել «գլխավորելու իրադրության կարգավորումը», աշխատավորական կոլեկտիվներին պարզաբանել, թե իբրև ազգային քաղաքականության պրոբլեմներին նվիրված ԽՄԿԿ կենտկոմի պլենումում բազմակողմանիորեն քննության կառնվի Լեոնային Ղարաբաղի հարցը<sup>67</sup>: Դա, անկասկած, կուսակցության հերթական աչքակապությունն էր, թեև Մոսկվայի հետ երկխոսությունը շարունակելու, Երևանը ԽՍՀՄ ներքին գործերի լայնածավալ գործողություններից պահելու համար ուրիշ ճանապարհ չկար:

Հավաքը համոզմունք է հայտնել, որ ազգային հարցը պահանջում է «սևեռուն և մշտական ուշադրություն հանդես բերել ազգային առանձնահատկությունների, հոգեբանության նկատմամբ, հաշվի առնել աշխատավորների կենսական շահերը»<sup>68</sup>:

1988 թ. փետրվարի 24-ի երեկոյան Վ. Դուգիխը հանդես գալով Հայաստանի հեռուստատեսությամբ, հայտարարում է, թե իբրև «ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոն լրջորեն մտահոգված է ներկայումս Ղարաբաղի հարցի շուրջը կրքերի, հույզերի անթույլատրելի բորբոքումից», և որ «միտինգների անցկացումը ձեռնարկություններում աշխատանքային ռիթմի, ինչպես նաև ուսումնական հաստատություններում պարապմունքների խախտումը միանգամայն անընդունելի են նման հարցերի ուսումնասիրման և լուծման համար»: Մոսկվայի սուրհանդակը փորձում էր արդարացնել ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի փետրվարի 21-ին ընդունած

<sup>67</sup> Սովետական Հայաստան, թ. 46, 25. 02. 1988:

<sup>68</sup> Նույն տեղում:

որոշումը: Նա դժգոհում է, որ Երևանում «շարունակվում են բազմամարդ միտինգները, որոնց մասնակցում են բնակչության տարբեր խավերի ներկայացուցիչներ, ինչը բարդացնում է քաղաքացիների կյանքը և առաջ բերում նրանց օրինական բողոքները»:

Նաև ասում է, որ Հայաստանում խրախուսվում են «հասարակական կարգուկանոնի խախտումների, սոցիալիզմի շահերին չհամապատասխանող» գործողությունները: Գոհունակությամբ հայտարարում է, թե փետրվարի 23-ին կայացած հավաքը պաշտպանել է ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի որոշումը և «այն ընդունել որպես գործողության ուղեցույց»: Նա պարզապես մոլորեցնում է հեռուստալսողներին, թե ժամանակ է պետք «ուսումնասիրել և քննարկել Ղարաբաղի պրոբլեմը»: Իբրև «Երևանում ստեղծված վիճակը կարող է ոչ թե հեշտացնել, այլ դժվարացնել այդ ուսումնասիրումն ու քննարկումը»: Պարոն Վ. Դոլգիխը կոչ է անում «դրսևորել հասունություն, վերահաստատել Երևանի ու հանրապետության կյանքի ու աշխատանքի կանոնավոր դիրքը»<sup>69</sup>:

«Սովետական Հայաստան» թերթի փետրվարի 25-ին հրապարակած ՏԱՍՍ-ի հաղորդումից իմանում ենք, որ վերադաս կուսակցական և պետական իշխանությունները, քննարկելով Լեոնային Ղարաբաղին առնչվող հարցը, հանգել են այն համոզման, որ գոյություն ունեցող ազգային և տարածքային կառուցվածքի վերանայմանն ուղղված գործողություններն ու պահանջները իբրև «հակասում են Ադրբեջանական և Հայկական ԽՍՀ-ների աշխատավորների շահերին, վնաս հասցնում ազգամիջյան հարաբերություններին»: ՏԱՍՍ-ի հաղորդման մեջ նաև ասվում է, որ ելնելով այդ ամենից, ՍՄԿԿ կենտկոմը դիմել է «հայ և ադրբեջանցի բնակչության հայրենասիրական և ինտերնացիոնալիստական զգացմունքներին, կոչ անելով չենթարկվել ազգայնական տարրերի պրովոկացիաներին»:

Փետրվարի 24-ին «Իզվեստիա» և փետրվարի 25-ին «Պրավդա» թերթերը «Լեոնային Ղարաբաղի իրադարձությունների շուրջը» հարցի վերաբերյալ հաղորդումներ հրապարակելով, հանգել

<sup>69</sup> Սովետական Հայաստան, թ. 46, 25. 02. 1988:

էին նրան, որ ծայրահեղական տրամադրություններով առանձին մարդիկ կոչերով ու կանխամտածված սադրանքներով խանգարում են հասարակական կարգը: Ապա ասված է, որ ԽՄԿԿ կենտրոնը մտադիր չէ վերանայել ազգային-տարածքային կառուցվածք, իբրև այն կվնասի երկու հանրապետությունների աշխատավորների շահերին և ազգամիջյան հարաբերություններին: Կոչ է արվում ամրապնդել խորհրդային ժողովուրդների բարեկամությունը, երկու հանրապետությունների բոլոր քաղաքական և գաղափարական ուժերը կենտրոնացնել՝ ելնելով նրանից, որ ազգային հարցը պահանջում է հաշվի առնել նրա առանձնահատկությունները:

Երևանում գտնվող ԽՍՀՄ ՆԳ նախարարի տեղակալ Վ. Պ. Տրուշինը և հանրապետության ՆԳ նախարար Հ. Ս. Շահումյանը հանդիպելով զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ, պատմեցին այդ վերջին օրերին Երևանում, Լենինականում, Աբովյանում, Կիրովականում և հանրապետության մյուս բնակավայրերում տեղի ունեցող բազմահազարանոց ցույցերի մասին՝ կապված ԼՂԻՄ իրադարձությունների հետ: Նրանք հանրապետության միլիցիայի առաջ խնդիր են դնում ստեղծված պայմաններում «պաշտպանել կարգ ու կանոնը մայրաքաղաքում և հրապարակներում»: Շեշտվեց, որ Երևանում կանոնավոր գործում են խանութները, հասարակական սննդի ու կենցաղային սպասարկման ձեռնարկությունները, և որ հանրապետությունում անձի և գույքի նկատմամբ դեմ որևէ անօրենություն չի կատարվել: Հայաստանի այդ վիճակը զարմացրել էր Միության մյուս տարածքների վարչական և իրավապահ աշխատողներին:

«Սովետական Հայաստան» թերթի փետրվարի 26-ի համարում հրապարակված «Մեր ուժը ժողովուրդների բարեկամության մեջ է» առաջնորդողը կրկնելով կենտրոնական մամուլի լաիրշ հրապարակումները, գովք է հնչեցնում կեղծ «բարեկամության, ինտերնացիոնալիզմի, համագործակցության, միասնության, փոխօգնության» և այլնի մասին: Կոչ է արվում՝ «ազգային հարցը մեր հասարակության ամենասկզբունքային, կենսական հարցն է», սակայն չի ժխտում, որ դեռևս կան «բազմաթիվ չլուծված պրոբլեմ-



ներ, պատմական շերտանստվածքներ, որոնց հանգուցալուծմանը պետք է ձեռնամուխ լինել զգույշ ու սթափ, ողջախոհ ու շրջահայաց»։ Այդ «բարոյական» խրատները ներկայացվելուց հետո, հորդորվում է՝ աշխատավորական և «ամեն հայրենասեր» քաղաքացու պարտքն է «աչքի լույսի պես պահպանել ժողովուրդների բարեկամությունը» և «նպաստել դրա հետագա ամրապնդմանը»։

Արձանագրենք, որ հայ ժողովուրդը խորապես վրդովված էր ու հիասթափված կենտրոնական մամուլի սուտ ու վիրավորական մեկնաբանություններից։ Բազմաթիվ հիմնարկների ժողովներում և անհատապես կազմվում և Միությանը մեկ ուղարկվում էր մի ծով նամակներ, որոնք պատմում էին իսկությունը։ Ժողովրդական դիվանագիտությունը ծայր աստիճանի արդյունավետ էր տեղեկատվական գրպարտանքը քողագերծելու գործում։

Այդ ֆոնի վրա 1988 թ. փետրվարի 26-ին ԽՄԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովը Մոսկվա է կանչում Ջորի Բալայանին և Սիլվա Կապուտիկյանին։ Վերջինիս հաղորդումից իմանում ենք, որ պարոն Գորբաչովը նրանց համոզում էր նպաստել Հայաստանում գործադուլների ու հանրահավաքների կանխման և հետևել ընդհանուր կարգ ու կանոնին։ Ռաֆայել Ղազարյանը հետագայում լույս ընծայած «Հաշվետու եմ...» հուշագրքում նշել է (նրան Սիլվա Կապուտիկյանի հաղորդմամբ), որ Մոսկվա-Երևան ճանապարհին Ջորին Սիլվային համոզել է՝ ժողովրդի թափը չկտրելու համար պետք է վիճակը ներկայացվի լավատեսորեն<sup>70</sup>։ Փետրվարի 27-ին Ջորի Բալայանը Թատերական հրապարակում, իսկ Սիլվա Կապուտիկյանը հայկական հեռուստատեսությամբ ունեցած իրենց ելույթով կարողացան ցրել հանրահավաքը։ Այդ օրը ով եղել է Թատերական հրապարակում կամ հեռուստատեսությամբ լսել է Ջորի Բալայանի ու Սիլվա Կապուտիկյանի ելույթը, անպայման նկատած կլինի, որ նրանց խոսքը ճապաղ էր և մի քիչ շփոտված։

Հետո Ջորի Բալայանը կխոստովանա՝ «Մեկ միլիոն չորս հարյուր հազար աչքեր ինձ էին նայում։ Մարդիկ հավատում էին գրողին, որը նախորդ օրը եղել էր հենց Գորբաչովի մոտ։ Ես

<sup>70</sup> Ռաֆայել Ղազարյան, նշվ. աշխ., էջ 144։

համոզվեցի, որ հարկավոր է գնալ տները: Ես տեսա, թե ինչպես է դանդաղորեն ժողովուրդը թողնում հրապարակը: Բայց ինձ համար այդ օրը դարձավ ամենասև օրը, իմ կյանքի ամենասև ժամը<sup>71</sup>: Զորի Բալայանի կարծիքը՝ եթե «չդադարեցնեին հանրահավաքները, չէին լինի սումգայիթյան ջարդերը»<sup>72</sup>, հավաստի չէ: Զորի Բալայանը իզուր է մեղանշում: Սումգայիթի ցեղասպանությունը այդ օրը չէր նախապատրաստվել: Այս պարագայում Երևանում տեղի ունեցած հանրահավաքի և գործադուլի կասեցումը ոչ մի կապ չունենր Սումգայիթում տեղի ունեցածի հետ: Ադրբեջանի իշխանությունները նախօրոք էին նախապատրաստվել «սումգայիթին», որը և տեղի ունեցավ:

2. Բալայանի և Ս. Կապուտիկյանի Կրեմլ այցելելու զուգահեռ՝ նույն փետրվարի 26-ի օրը, տեղի է ունենում Հայկոմկուսի կենտկոմի 8-րդ պլենումը, որի աշխատանքներին մասնակցում են դեռևս Երևանում գտնվող Մոսկվայի էմիսարները: Ելույթ ունեցած 29 հոգին էլ միաբերան պաշտպանում են թե՛ վերադաս և թե՛ տեղական մարմինների բռնած ոչ ժողովրդավարական գիծը: Առաջինը ամբիոնին է մոտենում ԽՄԿԿ կենտկոմի քարտուղար Վ. Դուլգիխը: Նա հրապարակում է Մ. Գորբաչովի դիմումը: Պլենումը հլու կերպով հավանություն է տալիս Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին ուղղված գլխավոր քարտուղարի դիմումին և ընդունում այն կատարելու վերաբերյալ որոշում:

Ապա ճառ է արտասանում Հայկոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանը, որը սկսեց այսպես. «Ընկերներ: Այն, ինչ ես կասեմ, դա մտածված է վերջին ծանր օրերին և գիշերներին, իմ կողմից խորը մտածված քաղաքացու համոզմունք, որպես կուսակցության անդամ, որպես հայ: Դա ընդհանուր զգացմունքների պտուղ չէ, այլ իմ, որպես մասսայի ղեկավարի, հասկացություն, ժողովրդի ճակատագրի համար պատասխանատու, իր ժողովրդին սիրող և ամեն ինչում նրան պարտական»<sup>73</sup>:

<sup>71</sup> Ավանգարդ, թ. 16, 11. 02. 1990:

<sup>72</sup> Աշոտ Սարգսյան, նշվ. աշխ., էջ 35:

<sup>73</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 1, թ. 4:

Իր ժողովրդի մասին մտածող Հայկունկուսի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանը այդ հոգեբանական նախապատրաստությունից հետո գովասանքի խոսք է ուղղում Մ. Գորբաչովին, անվերապահ հավանություն տալով նրա դիմումին: Ապա նշում է, որ վերջերս Երևանում և Լենինականում տեղի են ունենում հասարակական կյանքի խախտումներ, որոնք ապացուցում են, որ «պրովոկատորները, օգտվելով ստեղծված իրավիճակից, ցանկացած բռնություն կարող են առաջ բերել այնպիսի ավերածություն, որը կարող է թողնել աղետալի հետևանքներ: Ոչ մի դեպքում դա մենք չենք կարող թույլատրել»: Իսկ ի՞նչ պիտի արվի: Հայկական ԽՍՀ առաջին դեմքը, առանց վարանելու, կոչ է անում առկա բոլոր քաղաքական և գաղափարախոսական միջոցներով ու հնարավորություններով ազդել և հասնել նրան, որպեսզի կյանքը մտնի նորմալ հունի մեջ:

Նա առաջարկում է հանրապետության բոլոր օբյեկտները վերցնել պաշտպանության տակ, մանավանդ ղեկավարության նստավայրեր հանդիսացող շինությունները: Այնուհետև Կ. Դեմիրճյանը պահանջել է. «Այս ժամից սկսած մեր խնդիրը հասցնել հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու: Իսկ ինչ մնում է Ղարաբաղի հարցին՝ դա լուրջ հարց է, որի վճռումը պահանջում է բացառապես հանգիստ ժամանակ՝ բազմակողմանիորեն վերլուծելու համար»<sup>74</sup>: Կ. Դեմիրճյանը կրկնելով Մ. Գորբաչովին, հայտարարում է, որ Լեոնային Ղարաբաղի հիմնախնդիրը կուսումնասիրվի և կքննարկվի այլ հարցերի հետ համատեղ, որը կլինի ԽՄԿԿ կենտկոմի պլենումի ազգային քաղաքականության քննարկման առարկա<sup>75</sup>:

Կարդալով պլենումի նյութերը, ստիպված ես արձանագրել, որ ելույթ ունեցողների մեջ միայն եզակի մարդիկ փորձում էին արտահայտել իրենց մտահոգությունը սեփական ժողովրդի մասին: Այնինչ, շատ ելույթներ չէին բխում ժողովրդի շահերից: Օրինակ, Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն Ֆ. Ա.

<sup>74</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 1, թ. 5:

<sup>75</sup> Նույն տեղում, թ. 6:

Պետրոսյանը հայտարարում է, որ իրենց 17 ազգություններից բաղկացած կոլեկտիվը չի պաշտպանում Երևանում և հանրապետությունում տեղի ունեցող գործողությունները<sup>76</sup>: Հայաստանի ԼԿԵՄ կենտկոմի քարտուղար Հրանուշ Հակոբյանը խոսք հնչեցնելով սոցիալիստական ինտերնացիոնալիզմի մասին, կոչ է անում հանրապետությունում տեղի ունեցող իրադարձություններին ակտիվորեն մասնակցող երիտասարդությանը ետ կանգնել<sup>77</sup>:

Մեկ ուրիշ ելույթ ունեցող՝ Աբովյանի շրջանի Կոտայք գյուղի կոլտնտեսության նախագահ Զ. Զախարյանը մտավորականությունից պահանջում է իրենց ելույթներով բնակչությանը ետ պահել կատարվող գործողություններից, իսկ Երևանի քաղկոմի քարտուղար Լ. Սահակյանը դաս է տալիս «ուղղել թույլ տրված սխալները, վերադարձնել մարդկանց վստահությունը և նրանց տանել մեր ետևից»<sup>78</sup>: Հայկոմկուսի կենտկոմի քարտուղար Յու. Կոչետկովը հայտարարում է, թե իբր սադրիչները բնակչությանը կոչ են անում դիմել զենքի<sup>79</sup>: Դրա պատասխանը դահլիճի բուռն աղմուկն էր ու դժգոհությունը:

Հայաստանի հեռուստատեսության և ռադիոհաղորդումների նախագահ Ս. Պողոսյանը թերևս միակն էր ելույթ ունեցողներից, ով համակրանք էր դրսևորում ոտքի ելած ժողովրդի զանգվածների նկատմամբ: «Մենք,– նշեց նա,– ավելի վատ կարծիք ունենք ժողովրդի մասին... Կան մարդկանց փոքր խմբեր, որոնք գտնում են, որ պետք է գնալ մինչև վերջ, քանի դեռ չի վճռվել Ղարաբաղյան հիմնախնդիրը»: Ապա Մոսկվայի ներկայացուցիչներին խնդրում է ԽՄԿԿ կենտկոմին հաղորդել, որ «հարկավոր է ստեղծել հանձնաժողով զբաղվելու այդ հարցով»<sup>80</sup>: Նա իր ելույթի վերջում, այնուամենայնիվ, պաշտպանելով Կ. Դեմիրճյանի առաջարկու-

---

<sup>76</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 1, թ. 11:

<sup>77</sup> Նույն տեղում, թ. 14:

<sup>78</sup> Նույն տեղում, թ. 8:

<sup>79</sup> Նույն տեղում, թ. 9:

<sup>80</sup> Նույն տեղում, թ. 17:

յունը, նույնպես պահանջում է պայքարել «երկերեսանիների» դեմ<sup>81</sup>: Երևանի Օրջոնիկիձեի շրջկոմի առաջին քարտուղար Զեմմա Հասրայանը տրտնջում է, որ իրենք ոչինչ չեն կարող անել, ժողովուրդը աշխատանքը թողած հրապարակ է վազում:

Պահանջում է նրանց ելույթներին ազատություն չտալ, չպետք է թույլատրել, որ ով ինչ ուզենա, այն էլ անի: Այդ նշանակում է, որ «պետք է լինել շատ առնական, շատ պահանջկոտ յուրաքանչյուրս իր նկատմամբ, պետք է անզիջում պայքարենք երկերեսանիների դեմ...»<sup>82</sup>: Ամբիոն բարձրացած Երևանի Մաշտոցի շրջկոմի առաջին քարտուղար Արտաշես Գեղամյանը պահանջում է պահպանել և բարձրացնել «կուսակցական աշխատողների հեղինակությունը», իսկ նրան հաջորդած Երևանի պետական համալսարանի ռեկտոր Ս. Համբարձումյանը չի հավատում Կ. Դեմիրճյանի այն հայտարարությանը, թե իբր կրակել են բանակի շտաբի վրա: Նա հնարավոր չի համարում, որ դա արված լինի որևէ հայի կողմից: Սակայն, ինքը ևս պաշտպանում է Մ. Գորբաչովի դիմումում առաջ քաշված անհեթեթությունները<sup>83</sup>:

Պակաս հուզված չէր որոշման նախագիծը ներկայացնող Հրանտ Ոսկանյանը, որը առաջարկում է հավանություն տալ Մ. Գորբաչովի դիմումին և բնակչությունից պահանջել աջակցել այդ կոչի իրագործմանը, հույս հայտնելով, որ Ղարաբաղի հարցը կքննարկվի ԽՄԿԿ կենտկոմի առաջիկա պլենումներից մեկում: Նաև առաջարկվում է տեղերում հրավիրել հավաքներ նվիրված ԽՄԿԿ ղեկավարի դիմումում առաջ քաշված հարցերի քննարկմանը, հանձնարարվում է հասարակական-քաղաքական, արհմիութենական կազմակերպություններին քննարկել Հայկոմկուսի կենտկոմի պլենումի նյութերը, համոզված լինելով, որ կուսակցական ակտիվը կանի ամեն ինչ ՀԽՍՀ-ում իրավիճակը կարգավորելու համար<sup>84</sup>:

---

<sup>81</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 1, թ. 19:

<sup>82</sup> Նույն տեղում, թ. 21:

<sup>83</sup> Նույն տեղում, թ. 38:

<sup>84</sup> Նույն տեղում, թ. 68–70:

Արդյունքում, կուսակցության գաղափարախոսությանը համահունչ հայ կոմունիստները պլենումի ընդունած որոշումը քննարկելով 1255 սկզբնական կուսակցական կազմակերպություններում, ընդունում են կուսակցության կուրսը պաշտպանող որոշումներ<sup>85</sup>: Հանրապետությունում չկար որևէ կուսկազմակերպություն, որը չպաշտպաներ կուսակցության դիրքորոշումը:

Բազմիցս ճիշտ էր Սիլվա Կապուտիկյանը, որը 1990 թ. Հունվարին Հայկոմկուսի կենտկոմի հրավիրած խորհրդակցությունում ունեցած ելույթում շեշտել է, որ «հայ ժողովրդի սխալներից մեկն էլ այն է, որ հավատաց գորբաչովյան վերակառուցմանը: Իսկ այդ կույր հիվանդությամբ ամենից առաջ տառապում էր հայ ժողովրդի ուղեցույց Հայկոմկուսը»<sup>86</sup>:

1988 թ. փետրվարյան այդ պլենումում երևաց հայկոմկուսի «ժողովրդավար» դիրքորոշումը, որը ճշտապահ կերպով կատարեց Մ. Գորբաչովի պահանջը: Իսկ գլխավոր քարտուղարը իր դիմումում վերջապես խոստովացավ, թե «Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզում քիչ թերություններ ու դժվարություններ չեն կատարվել»: Նա կոչ էր անում պաշտպանել «ինտերնացիոնալիզմը» և խոստանում էր որ իբր «ժողովուրդների համերաշխ ընտանիքում մենք կարող ենք ապահովել մեր հասարակության առաջադիմությունը, նրա բոլոր քաղաքացիների բարօրությունը»<sup>87</sup>:

Հետագա իրադարձությունները համոզում են, որ Մ. Գորբաչովը բացահայտորեն ստում էր, խաբում, ժողովրդին մոլորեցնում: Աշխարհը տեսավ, թե Խորհրդային Միությունը ինչպիսի՜ «ժողովուրդների համերաշխ ընտանիք» է և ինչպիսի «սթափ վճիռներ» էր կայացնում: Ժամանակի մամուլում, կուսակցական, կոմերիտական և արհմիութենական ժողովներում արտահայտված այն միտքը, թե 1988 թ. փետրվարի 26-ի երեկոյան Մ. Գորբաչովի Դիմումը ազդել է գործադուլն ու հանրահավաքները դադարեցնելու վրա, իրական է: Մարդիկ հասկանում էին, որ քաղաքական երկխոսությունը

---

<sup>85</sup> ՀԱԱ, ց. 127, գ. 554, թ. 29:

<sup>86</sup> Նույն տեղում, ց. 82, գ. 1, թ. 80:

<sup>87</sup> Սովետական Հայաստան, թ. 48, 27. 02. 1988:

շարունակելու համար հարկավոր է ընդառաջել ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարի դիմումին:

4. Դեմիրճյանը փետրվարի 29-ին երկրորդ անգամ հեռուստատեսությամբ հանդես գալով, հայտարարում է, թե երրորդ օրն է, ինչ իրադրությունը հանրապետությունում նորմալացել է, բոլոր տեղերում վերականգնվել է աշխատանքային ոլիթմը և բնակչությունը հավանություն է տալիս Մ. Գորբաչովի դիմումին: Նա միևնույն ժամանակ հանրապետության բնակչությանը հայտնում է Սունգայիթում տեղի ունեցածի մասին, այն որակավորելով որպես «բռնություն»: Եվ այդքանից հետո ելույթն ավարտում է պաշտոնական կոչով՝ «ամենուրեք հաստատել բարեկամության, փոխըմբռնման, հայերի և ադրբեջանցիների միջև իսկական եղբայրական մթնոլորտ»<sup>88</sup>:

Այսպիսով, Հայաստանում արձագանք գտած գորբաչովյան վերակառուցումը մեծ խթան հանդիսացավ արցախյան շարժմանը, որն ընդգրկեց ողջ հայ ժողովրդին և իր աննախադեպ լայն թափով, գործելաձևերով ու նախաձեռնությամբ խճճեց ինչպես ՀԽՍՀ, այնպես էլ ԽՍՀՄ ղեկավար վերնախավին:

## 1.2. Սումգայիթյան ցեղասպանությունը և ժողովրդական պայքարի նոր վերելքը

1988 թ. փետրվարի 27–29-ին Սումգայիթում տեղի ունեցած ցեղասպանության մասին հանրապետության բնակչությունը, ինչպես նշվել է, առաջինը իմացել է փետրվարի 29-ին Կարեն Դեմիրճյանի հեռուստաելույթից: Նա ասել է. «Մեր ունեցած տեղեկությունների համաձայն բախումներ են եղել: Մասնավորապես փետրվարի 28-ին Սումգայիթում մի խումբ խուլիգանական տարրեր անկարգություն են հրահրել: Տեղ են գտել սանձարձակության և բռնության դեպքեր: Ներկայումս այնտեղ իրադրությունը վերահրսկվում է: Միջոցներ են ձեռնարկված քաղաքական կյանքը նորմալացնելու, կարգապահությունն ու հասարակական կարգը ա-

<sup>88</sup> Սովետական Հայաստան, թ. 51, 01. 03. 1988:

պահովելու համար: Քննչական մարմինները կատարում են հետաքննություն»<sup>89</sup>:

Եվ, այսպես, Կ. Դեմիրճյանը հանրապետության բնակչությանը տեղեկացնում է, որ Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում տեղի է ունեցել «բախումներ»: Ասենք նաև, որ Երևանում մարդիկ կային, որոնք այդ մասին իմացել էին Սումգայիթի կամ Բաքվի իրենց բարեկամների հեռախոսային գանգերից: Սակայն նրանք լայն պատկերացում չունեին տեղի ունեցածի մասին: Թատերական հրապարակում մարդիկ այդ մասին իրար հարց ու փորձ էին անում:

Սումգայիթ քաղաքը, որի շինարարությանը ակտիվ մասնակցություն են ունեցել հայերը, գտնվում է Բաքվից 25 կմ հեռավորության վրա: Այն խոշոր արդյունաբերական կենտրոն է՝ 220.000 բնակչությամբ, որից 18 հազարը հայեր էին: Քաղաքը կառուցվել է հետպատերազմյան տարիներին: Հայ շինարարների մեջ մեծ տեղ էին զբաղում ծագումով դարաբաղցիներ: Հետպատերազմյան տարիներին դարաբաղցիների տնտեսական վիճակը խիստ ծանր էր, որի պատճառով էլ շատ ընտանիքներ տեղափոխվում էին Բաքու, Սումգայիթ, Մինգեչաուր, Միջին Ասիա:

Աշխատանքով ապահովելու և բանվորական հանրակացարաններում տեղավորելու համար Սումգայիթն ուներ որոշ առավելություններ: Այստեղ համեմատաբար հեշտ էր բնակարան ստանալը: Սումգայիթում կային նաև քրեածին տարրեր, ցածր վարձատրվող աշխատողներից շատերը բնակարանագուրկ էին: Ղարաբաղյան շարժումը սկսվելուց առաջ Հայաստանից ազերի մի քանի հարյուր ընտանիքներ տեղափոխվել էին Բաքու, Սումգայիթ և այլ տեղեր: Նրանք Հայաստանից էին հեռանում ոչ թե տնտեսապես վատ ապրելու պատճառով, այլ Բաքվի քարոզչության հետևանքով: Բաքու հասած այդ ընտանիքներին ուղղում էին Սումգայիթ և այդ կողմում գտնվող բանվորական ավաններ:

1989 թ. սեպտեմբերի 23-ին Երևանում Հայաստանի ճարտարապետների տանը տեղի է ունենում լրատվության միջոցների աշխատողների կոնֆերանս, որը կազմակերպել էր Հայաստանի

<sup>89</sup> Սովետական Հայաստան, թ. 51, 01. 03. 1988:



պատմալուսավորչական «Հուշամատյան» ընկերությունը հանրապետության ժողովրդային միության հետ միասին: Դահլիճում ներկա էին ավելի քան 300 մարդ, այդ թվում արտասահմանյան լրագրողներ: Կոնֆերանսի նպատակն է եղել սումգայիթյան վայրագություններին տալ քաղաքական գնահատական, որի վերաբերյալ կենտրոնական իշխանությունները լռել էին և դրանով ավելի ուժեղացրել հայ ժողովրդի ցավն ու ցասումը<sup>90</sup>: Այդ կոնֆերանսում ցուցադրվել են տեսանյութեր, տուժածների վկայություններ, պաշտպանների, ինչպես և հասարակության ներկայացուցիչների ելույթներ, որոնք իրենց վրա են վերցրել այդ սարսափելի ողբերգության հետագոտման ծանր բեռը, որպեսզի մարդկությանը ներկայացվի 1988 թ. փետրվարյան զոհերի վերաբերյալ ամբողջ ճշմարտությունը: Պրես-կոնֆերանսում նշվեց, որ Սումգայիթից հեռացածներից 595 ընտանիք՝ 2364 շնչով, պատսպարվել են Երևանում, որոնց տեղավորելու և նրանց կյանքը կարգավորելու համար ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ<sup>91</sup>:

Ըստ երևույթին, Բաքվից և այլ տեղերից քրեական հանցախմբեր Սումգայիթ ուղարկվելուց բացի, Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների և կոռուպցիայի պարագլուխների կողմից երաշխավորված ու այնտեղ ուղարկված որոշ ուժեր ակտիվ գործունեություն էին ծավալել քաղաքի հայության դեմ<sup>92</sup>, իբրև Ղարաբաղյան շարժման հետ կապ ունեցողների: Փետրվարի 27-ին Սումգայիթի քաղկոմի երկրորդ քարտուղար Մ. Բայրամովի առաջնոր-

---

<sup>90</sup> Сумгаит...Геноцид...Гласность? Сост. Г. Б. Улубабян, С. Т. Золян, А. А. Аршакян, Ер., 1990, с. 3. Այդ գրքի հրատարակման գործում մեծ աշխատանք են կատարել Հ. Ուլուբաբյանը, Ա. Զոլյանը և Ա. Արշակյանը: Իսկ Սումգայիթից բռնագաղթածների վկայությունների հավաքման գործում նվիրական ջանք են թափել պատմաբան Կ. Խուդավերդյանն ու հրապարակախոս Սամվել Շահմուրադյանը, որը զոհվել է 1991 թ. սեպտեմբերին Մարտակերտի շրջանում:

<sup>91</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 21, թ. 24:

<sup>92</sup> Richard Sakwa, Gorbachev and His Reforms, 1985-1990, NY, 1990, p. 244, Վ. Ե. Խոջաբեկյան, նշվ. աշխ., էջ 98-99:

դոյթամբ «Մահ հայերին», «Բնաջնջել հայերին» և նման կոչերով 30-ից հարյուր ավազակի հասնող խմբերը ջարդում էին հայերի տները, նրանց տանջամահ անում և ամենասարսափելի վայրագություններ իրագործում:

Այդ արյունարբու հորդան անգամ ներս է խուժում ծննդատուն ու գլխատում նորածին հայ երեխաների: Հետագայում հաղորդվել է, թե իբր այդ վայրագությունների ժամանակ սպանվել է 27 հայ: Այնինչ, նշյալ իրադարձություններին տեղյակներից մեկը ցույց է տալիս 400 սպանված, իսկ տուժվածների և խեղվածների թիվը՝ մոտ 1000, որոնց շարքում կանայք, երեխաներ, ծերեր: Հոկվածների դիակները տարվել են Բաքվի և հանրապետության այլ քաղաքների դիասրահներ<sup>93</sup>:

Սումգայիթի ցեղասպանության վերաբերյալ Հայկոմկուսի կենտկոմ ուղարկված նյութերում վկայություններ կան այն մասին, որ այդ արյունալի ոճիրը նախօրոք մտածված և նախապատրաստված է եղել Ադրբեջանի իշխանությունների կողմից: Նրանք նախօրոք Սումգայիթ են ուղղել «փախստականներին», քաղաքի ազերի բնակիչներին զգուշացվել է այդ գիշեր լույսերը չվառել, որպեսզի հայերին հայտնաբերեն վառված լույսերով, կազմվել է հայերի ցուցակը և նրանց ստույգ հասցեները, իմացել են հեռախոսահամարները և դրանք անջատել: Կան տվյալներ, որ քաղաքում բնակվող հայերի ցուցակները կազմել էին դեռևս հունվարին:

Մարդկանց խոցելու համար խողովակաձուլական գործարանում նախօրոք պատրաստել էին 200 երկաթյա սուր ծայրերով ձողեր: Քաղաքի հայերը թողնվել էին բացարձակապես անպաշտպան: Խորհրդային բանակը ջարդերի միայն երրորդ օրն է մտել քաղաք: Երկու ու կես տասնյակ կիլոմետր հեռավորության վրա գտնվող Ադրբեջանի կոմկուսի կենտկոմն ու մյուս իշխանությունները որևէ քայլ չեն ձեռնարկել: Միևնույն ժամանակ հայերի ջարդեր են կազմակերպվել Աղդամում, Շամխորում, Կիրովաբադում և այլ տեղերում:

---

<sup>93</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 18, թ. 10:

Դեռևս հունվարի 15-ին Ադրբեջանի «Литература и искусство» հանդեսում տպագրվել էր պանթյուրքիստ և մոլի հայատյաց Ջիա Բունիաթովի ստոր հոդվածը, որտեղ նսեմացվում է հայ ժողովուրդը և նրա պատմությունն ու մշակույթը: Այդ ժամանակաշրջանում Հայաստանի գրողների միության հասցեով Բաքվից ստացվում էր թուրքական կիսալուսին զինանիշով և «ադրբեջանական թուրքեր» մակագրությամբ բազմաթիվ նամակներ, որոնց հեղինակները հայերին սպառնում էին կազմակերպել նոր 1915 թիվ: Ասենք նաև, որ դեռևս 1987 թ. Ադրբեջանի ներքին գործերի նախարարության տեղական մարմինների կողմից հավաքել էին հայերի որսորդական բոլոր զենքերը՝ իբրև դրանց վիճակը ստուգելու համար: Թեև այդ միջոցառումը ադրբեջանցիներին չէր վերաբերվում<sup>94</sup>:



Հակահայկական քարոզչությունը դարձել էր Ադրբեջանի իշխող ուժերի քաղաքական գործելակերպ: Հակահայկական՝ մանավանդ հակաղարաբաղյան քարոզչությունը, եղել է նրանց մտածողության

<sup>94</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 18, թ. 11:

պարզ արտացոլում և ուղղակի հետևանք: Ադրբեջանի Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը բացահայտորեն վեր էր ածվել պանթուրքիստական և հակահայկական գաղափարախոսական կենտրոնի: Բնակչությանը համոզում էին, թե ադրբեջանցիները իսկական թուրքեր են, Ադրբեջանը երկրորդ Թուրքիան է Խորհրդային Միությունում: Այդ ինստիտուտի աշխատակիցները զանգվածաբար քարոզում էին, թե Ադրբեջանի տարածքում ապրող հայերը իբրև թե հանդիսանում են նախկին աղվանների հետնորդներ, որոնք արաբների օգնությամբ հայացվել են 8-րդ դարում<sup>95</sup> և Ղարաբաղում բնակություն հաստատել 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո:

Թե արաբները ինչու պիտի աղվաններին հայացնեին, այդ գաղափարի հեղինակները համառորեն հրաժարվում են նման հարցին պատասխանել: Խորհրդային տարիներին ավելի քան 700 հազար հայեր ապրելով Կուր գետի ձախափնյա՝ հին Աղվանքի տարածքում, ինչպես և Մեծ Հայքի մաս կազմող Փայտակարանում, հնամենի Արցախ<sup>96</sup> և Ուտիք նահանգներում, ճնշվում էին թուրք-ազերների կողմից: Դպրոցներում չէին անցնում հայ ժողովրդի պատմություն: Օրըստօրե նվազում էր հայերի թիվը և ոչնչանում նրանց մշակույթը: 1932 թ. տվյալներով Լեռնային Ղարաբաղում հայերի թիվը կազմել է 160, 1939-ին՝ 132, 1959-ին՝ 110,1, 1970-ին՝ 121,1 հազար<sup>97</sup>:

---

<sup>95</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 18, Նույն տեղում, թ. 12:

<sup>96</sup> Արցախի հին պատմության մասին տե՛ս Страбон, География, М., 1994, кн. XI, гл. III, § 2, гл. XIV, § 5, У. С. Երեմյան, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի (VII դարի Հայաստանի աշխարհագրության), Եր., 1963, էջ 105, Բ. Ա. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X–XVI դարերում, Եր., 1975, նույնի, Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության V–VII դդ.), Եր., 1981, История древнего мира, в 3-х т., кн. 3 Упадок древних обществ, М., 1983, с. 212, У. Գ. Կարապետյան, Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանի բռնակցված շրջաններում. Եր., 1999, էջ 14, S. Karapetian, Armenian Cultural Monuments in the Region of Karabakh, Yerevan, 2001, Վ. Բալայան, Լեռնային Ղարաբաղ, Եր., 2009, էջ 5–7:

<sup>97</sup> Достижения Нагорного Карабах в девятой пятилетке, Степанакерт, 1976 г., с. 8.

1987 թ. դեկտեմբերի 24-ին «Сельская жизнь» թերթը գրել է Շամխորի շրջանի շրջկոմի առաջին քարտուղար Ասադովի կողմից շրջանում իրագործվող հակահայ գործողությունների մասին, հատկապես Խորհրդային Միության երկու մարշալներ՝ կրկնակի հերոս Հ. Բաղդամյանի և Հ. Բաբաջանյանի, մեկ գեներալ-գնդապետի ու յոթ գեներալ-մայորների ծննդավայր, 1975 թ. չորս հազար բնակիչ ունեցած Չարդախլու գյուղում: Կուսակցական այդ անպատկառ ղեկավարի դեմ գրած բողոքների նկատմամբ Մոսկվան գտնվեց անտարբեր: Հիշենք նաև «Известия» թերթում տպագրված հոդվածը, որտեղ պատմվում է Մարտակերտից անմեղ հաշվապահին մահապարտների խցում 21 ամիս պահելու մասին: Ադրբեջանում հայերի նկատմամբ իրագործված հանցագործությունների թիվը չափազանց մեծ է: Ահա թե ինչու, ինչպես նշվել է, 1988 թ. փետրվարի 20-ին տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի մարզային խորհուրդը հարկադրված էր ընդունել պատմական որոշում, որը կատաղության է հասցրել ոչ միայն Բաքվի, այլև Մոսկվայի պարագլուխներին:

Սումգայիթում իրագործված սադիզմը վեր էր բոլոր տեսակի վայրագություններից: Սա բացահայտ ցեղասպանություն էր, որը չցանկացան ճանաչել Միության քաղաքական և պետական պարագլուխները: Նրանք նույնիսկ ցավակցություն չհայտնեցին հայ ժողովրդին: Հրապարակախոս Սամվել Շահմուրադյանը գրի առնելով սումգայիթից փախածների ցուցումները, առաջին գիրքը հրատարակել է 1989 թ., որի առաջաբանում ասված է, որ Միության գլխավոր դատախազ Ա. Յ. Սուխարևը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանում, պատասխանելով Հայաստանից պատգամավորի հարցին, հայտարարել է, թե Սումգայիթի գործի կապակցությամբ դատի առաջ կկանգնի 94 մարդ: Այդ թիվը կեղծ է այնքանով, որ շատերը չեն կանգնել դատարանի առաջ:

Օրինակ, վկաները պատմում են, որ միայն փետրվարի 29-ին 41ա թաղամասի վրա հարձակվել են առնվազն 400 հոգի: Ինչպե՞ս կարող էին ցեղասպանություն իրագործող հանցագործներից միայն 94 հոգի դատվեին: Ականատեսի վկայությամբ, երբ մի քանի դահիճ երիտասարդներ 16-ամյա հայուհուն դեմ են առնում պատին և դանակով մարմինը ծակոտում, տարեց մի ադրբեջանցի մոտենալով նրան, խմում է արյունը: Կամ, դահիճները ներխուժելով խողովակաձուլական

գործարանի առաջավոր բանվորներից մեկի՝ Արտո Արամյանի տունը, կացնով սպանում են նրան, մարմինը մասերի բաժանում և բակում վառում կրակի վրա: Դժբախտ մայրը միայն ոտքից է ճանաչում որդուն: Վայրենացած ամբոխը փողոցում վառում է «ժիգուլի» ավտոմեքենան տիրոջ հետ միասին...<sup>98</sup>:

Եվ նման պարագայում Ադրբեջանի հանցավոր ու կոռուպացված պարագլուխները բոլոր ջանքերը գործադրում էին թաքցնելու Սումգայիթի ցեղասպանության իսկական կազմակերպիչներին և մարդկանց գլուխները մտցնել, թե իբր այդ ոճրագործությունը կատարել են մի խումբ «ծայրահեղականներ» ու Հայաստանից փոխադրված ադրբեջանցիներ: Նրանց ակադեմիկոս Զիա Բունիաթովը 1989 թ. Ադրբեջանի ԳԱ «Хабарлари» («Известия») հանդեսի թիվ 2-ում տպագրված «Почему Сумгаит?» հոդվածում ճգնում է Սումգայիթի ամբողջ մեղքը բարդել հայ ժողովրդի վրա<sup>99</sup>:

Ադրբեջանի կեղծարարները ցինիկաբար հայտարարում են, որ հայերը իրենք են իրենց նկատմամբ ցեղասպանություն կազմակերպել: Նրանք լուտանքներ են թափում Հայաստանի մտավորականության, Զորի Բալայանի, Սիլվա Կապուտիկյանի, «Ղարաբաղ» կոմիտեի անդամների, «Կռունկի» ակտիվիստների, Արցախի և Հայաստանի ժողովրդական պատգամավորների, Վազգեն I կաթողիկոսի, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի, երկրի մի շարք կարկառուն անձանց, այդ թվում իրավապաշտպան Ա. Սախարովի, Գ. Ստարովոյտովայի և ուրիշների հասցեին: Թուրք ազերի գաղափարախոսները հայ ժողովրդին մեղադրում են նրա համար, որ նա սատար է կանգնել արցախահայության ազգային-ազատագրական ձգտմանը: Այնինչ, նրանք Սումգայիթի դահիճներին հռչակել են ազգային հերոսներ, ինչպես դա արեցին հետագայում քնած հայ սպային կացնահարած Սաֆարովի նկատմամբ: Սումգայիթյան օրերից սկսած, ամենուր հնչում էին Ադրբեջանը բոլոր այլաձիններից մաքրելու և Լեռնային Ղարաբաղի ինքնավարությունը վերացնելու կոչեր:

---

<sup>98</sup> Сумгаит... Геноцид, с. 16, 21; Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев, кн. 1-я, сост. С. Шахмурадян, Ер., 1989, с. 11, 31, 54.

<sup>99</sup> Известия, Баку, № 2, 1989, с. 115–121.

Խորհրդային Միության իշխանավորները փորձում էին համաշխարհային հանրությունից թաքցնել սումգայիթյան ցեղասպանությունը: Տեղական և միութենական լրատվամիջոցները զերծ էին մնում Սումգայիթի մասին նյութեր հրապարակելուց: 1988 թ. մարտի 5-ին հանրապետության հեռուստատեսությամբ հանդես գալով, ԽՍՀՄ ներքին գործերի նախարարի առաջին տեղակալ Վ. Տրուշինը խոսում է Սումգայիթի «խուլիգանական» տարրերի մասին և նշում, թե իբր հետաքննվում է յուրաքանչյուր մանրուք<sup>100</sup>: Մարտի 19-ին Ադրբեջանի կոմկուսի կենտկոմը սումգայիթյան ցեղասպանության հետ կապված հարցը քննարկելով, դատապարտում է այնտեղ տեղի ունեցածը և հիմնական մեղքը բարդում Սումգայիթի քաղկոմի առաջին քարտուղար Դ. Մ. Մուսլիմ-զադեի, նրա տեղակալ Մ. Ա. Բայրամովի և քաղխորհրդի նախագահ Խ. Խ. Ջաֆարովի վրա: Զբաղեցրած պաշտոնից ազատվում է Դ. Մուսլիմ-զադեն<sup>101</sup>: Սակայն թե ինչու անպատիժ մնացին հանրապետության բարձրագույն պաշտոնյաները, մնում է անհայտ:

Այդ օրերին Հայաստանից և Լեռնային Ղարաբաղից հարյուրավոր դիմում-բողոքներ են ուղարկվել Միության վերադաս մարմիններին, որոնցում դատապարտել են «սումգայիթ» կազմակերպողներին և պահանջել պատժել նրանց բոլորին: Սուրեն Այվազյանը մարտի 7-ին ԽՍՀՄ դատախազություն՝ Ա. Ռեկունովին ուղարկած հեռագրում հաղորդում է, որ մուսուլման ավազակները դանակներով և այլ միջոցներով զինված Սումգայիթում հարձակվելով խաղաղ բնակչության վրա՝ կրկնել են 1915 թ. ցեղասպանությունը: Ադրբեջանում հայերի ցեղասպանության ամբողջ պատասխանատվությունը ընկնում է Ադրկոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ք. Բաղիրովի և նրա կոռումպացված շրջապատի վրա: Նա պետք է հեռացվեր պաշտոնից և կանգներ դատարանի առաջ<sup>102</sup>:

«Московские новости» թերթի սեփական թղթակից Վիկտոր Լոշակը թերթի ապրիլի 14-ի համարում «Սումգայիթ. մեկ ամիս անց» հոդվածում գրել է, որ փետրվարի վերջին խուլիգանների խմբի կողմից

---

<sup>100</sup> Коммунист, № 57, 08. 03. 1988.

<sup>101</sup> Նույն տեղում, № 67, 20. 03. 1988:

<sup>102</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 3, գ. 139, թ. 150:

Սումգայիթում տեղի է ունեցել անկարգություններ, որի հետևանքով զոհվել են 32 մարդ, որից 26-ը հայ, 6-ը՝ ադրբեջանցի: Ապա նշում է, որ Սումգայիթում հավաքվել են 100 քննիչ և քրեագետներ: Քաղաքի դատախազ Իսմետ Գարիբովը վավերացրել է ավելի քան 60 ձերբակալություն: Քաղկոմի քարտուղար Մ. Բայրամովը հայտարարել է, թե բռնկված հրդեհի համար կայծ է հանդիսացել իբրև Կապան քաղաքից եկած փախստականները, իսկ դատախազ Գարիբովը նշում է, որ ինքը չի հավատում, թե այդ տականքներին ադրբեջանցի մայր է ծնել, մարդկային այդ վառողը որտեղի՞ց է առաջացել Սումգայիթում և մի քանի օր անց սանձարձակություններ կատարել<sup>103</sup>:

Այդ նույն հեղինակը մեկ ամիս անց կրկին անդրադառնալով Սումգայիթի թեմային՝ հաղորդում է, որ ձերբակալվածների թիվը հասել է 80-ի և Ադրբեջանի գերագույն դատարանը 15 տարվա ազատազրկման է դատապարտել Թալի Իսմայիլովին<sup>104</sup>: Ահա այսպիսի անտարբերությամբ էր «սումգայիթը» մեկնաբանվում կենտրոնական մամուլի էջերում:

Սումգայիթի գործը բաժան-բաժան արվեց և քննվեց 12 տարբեր դատարաններում: Դատական այդ գործերից հայ ընթերցողը ծանոթ է միայն 1988 թ. նոյեմբերին Մոսկվայում, Գերագույն դատարանում տեղի ունեցած դատավարության մասին, որտեղ դատվել են հանցագործներ Ա. Ախմեդովը, Իսմայիլ Իսմայիլովը և Յ. Ջաֆարովը, որոնք մասնակցել են Սումգայիթում յոթ հոգու սպանությանը: Դատում էր դատավոր Ռայմոնդ Բրիգեն: Դահիճները հրաժարվում էին խոստովանել իրենց կատարած հանցագործությունները, պնդելով, թե նախաքննության ժամանակ իրենց նկատմամբ իբրև կիրառվել է բռնություն, և որ իրենց ձեռքերը մաքուր են:

Հայաստանի ազգային արխիվի 1159-րդ ֆոնդում բավականին նյութեր կան Սումգայիթի ցեղասպանության վերաբերյալ: Կենտրոնական և հանրապետական իշխանություններին ուղղված 49 հոգու ստորագրությամբ մի նամակում նշված է, որ իրենցից շատերը երկար տարիներ ապրել են Սումգայիթում, մասնակցել են այդ քաղաքի առաջին բնակարանների և գործարանների հիմնադրմանը: Իսկ հիմա

---

<sup>103</sup> Московские новости, № 16, 17. 04. 1988.

<sup>104</sup> Նույն տեղում, թ. 21, 22. 05. 1988:



դարձել են փախստականներ, ադրբեջանցի բարբարոսների և վայրագությունների զոհեր: Նրանց հարձակումը, ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, նախօրոք նախապատրաստված է եղել և մանրամասն պլանավորած կոռումպացված վերնախավի կողմից<sup>105</sup>:

1988 թ. մարտի 15-ին 11 հոգու ստորագրությամբ՝ ավագ գիտաշխատող Ա. Կ. Օհանյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պետական մրցանակի դափնեկիր, պատերազմի վետերան, հաշմանդամ Ս. Մանուկյանը և ուրիշներ, նկարագրելով Սումգայիթում տեղի ունեցած ցեղասպանության մասին, նշում են, որ այդ արյունալի վայրագությունը եղել է մտածված և Ադրբեջանի կոռուպցիոն ուժերի կողմից նախօրոք ծրագրված ու նախապատրաստված: Սումգայիթի ադրբեջանցիները կանխապես գիտեին և զգուշացվել էին, երեկոները իրենց լույսերը չէին վառում, հայերի հեռախոսները անջատել էին: Այդ հանցագործները ումի՞ց էին իմացել հայերի հասցեները: Իշխանությունները նախապես ամեն ինչ պատրաստել էին ոչ միայն Սումգայիթում, այլև Բաքվում, Կիրովաբադում և հանրապետության մյուս բնակավայրերում: Նման բարբարոսություն թուրք-մուսուլմանները կատարել են նաև 1920 թվականի մարտի 23-ին Շուշիում, որտեղ բնակվող 20 հազար հայերի նկատմամբ նույնպես իրագործվել է ցեղասպանություն ու սպանել 8-ից 9 հազար մարդ<sup>106</sup>:

Ա. Կ. Օհանյանը, Ս. Մանուկյանը և նրանց համահեղինակները ահազանգում էին, թե Ադրբեջանի Գիտությունների ակադեմիայի ինստիտուտները վեր էին ածվել պանթուրքական գաղափարախոսության խոշոր կենտրոնի: Նրանք զգուշացնում էին, որ տարիներ

---

<sup>105</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 1, գ. 1, թ. 1-2:

<sup>106</sup> Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 516, թ. 5, Нагорный Карабах в 1918–1923 гг., Сборник документов и материалов, ред. В. Микаелян, Ер., 1992, с. 416, Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր., 2007, էջ 178–179, Г. Г. Махмуриян, Шуши 1919-1920 гг. в документах Госдепартамента США и Национального архива Армении, Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ, Միջազգային գիտագործնական կոնֆերանսի զեկուցումներ, Շուշի, 2010, էջ 67-68:

շարունակ Թուրքիայից Նախիջևանի վրայով զենք է տեղափոխվել և պահեստավորվել, որը հիմա օգտագործվում էր հայերի դեմ: Ադրբեջանը դարձել է երկրորդ Թուրքիա, որտեղի դպրոցներում և դասագրքերում իշխում է կեղծիքը: Ադրբեջանում ապրող 700.000 հայերը դժոխքի մեջ են, – անհանգստանում էին ստորագրյալները<sup>107</sup>:

Արխիվում կա նաև Սումգայիթից 55 փախստականների կողմից Մ. Գորբաչովին ուղարկված նամակ, որի հեղինակները պահանջում են ստեղծել հանձնաժողով և քննել Սումգայիթում իրագործված հանցագործությունները: Նրանք Գորբաչովին հաղորդում են իրենց ծննդով արցախցիներ լինելու մասին և արդարություն են պահանջում<sup>108</sup>: Իսկ 57 հոգու ստորագրությամբ «Սովետական Հայաստանի» խմբագրություն ուղարկված բողոք-նամակի հեղինակները, ինչպես նաև նմանատիպ մի շարք այլ փաստաթղթերի հեղինակներ, հնչեցնում են հայ ժողովրդի բողոքը վերադաս իշխանությունների կողմից թույլատրվող անարդարությունները:

Խորհրդային իշխանությունների անտարբերությունը մերկացված է հայ ժողովրդի բազմաթիվ բողոքներում<sup>109</sup>: Բուժաշխատող Վ. Ավագյանը 1988 թ. նոյեմբերի 16-ին Մ. Գորբաչովին, Ս. Հարությունյանին և Ա. Վեգիրովին ուղարկած նամակում, որպես սումգայիթյան բարբարոսությունների ականատես պատմում է, որ ինքը այդ քաղաքում աշխատելով որպես բուժակ, 40 տարի շարունակ ուսումնասիրել է հայ և ադրբեջանցի ժողովուրդների պատմությունը և եկել այն համոզման, որ ներկայումս Սումգայիթը դարձել է ադրբեջանական ժողովրդի ամոթը: Այդ արյունոտ իրադարձությունները հազիվ թե սրբվի պատմության էջերից: Դահիճները չէին խնայում ոչ ոքի: Բոլորը թալանում էին և բոլորին սպանում: Փետրվարյան այդ ցեղասպանության օրերին Բաքվից հայ երգիչների երգեր էին հաղորդում, գրողներ Անարը, Վազիֆ-գադեն, Սուլեյման Ռուստամը կենտրոնական հեռուստատեսությամբ բարեկամության մասին էին բարբաջում:

Վ. Ավագյանը խարազանում էր Ադրբեջանի ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն Ս. Գ. Ալիևին, ինչպես և Զ. Մ. Բունի-

---

<sup>107</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 1, գ. 1, թ. 4–8:

<sup>108</sup> Նույն տեղում, թ. 9–11:

<sup>109</sup> Նույն տեղում, գ. 9, թ. 2–11:

աթովին, Ռ. Բ. Գեուշովին որպես կեղծարար-պատմաշինարարների: Սումգայիթի դահիճները զինված էին դանակներով, կացիներով, հրաձիգ զենքերով, երկաթե ձողերով, շշերով և վառվող նյութերով: Վ. Ավագյանը մեջ է բերում նաև Ռուսաստանի դեսպանի տասնյակ տարիներ առաջ թղթին հանձնած վկայությունը. «Թուրքական տարբեր թաղամասերից ուղարկել են դանակներով և ձողաձև ամրակներով զինված բաշխիչներ, որոնք սկսել են հարձակվել բոլոր նրանց վրա, ում ընդունել են հայի տեղ, և սկսվել է ամենաբարբարոս կերպով խփել անպաշտպան և ոչ մի մեղք չունեցող քրիստոնյաներին»<sup>110</sup>:

Փաստերը հաստատում են, որ Սումգայիթի միլիցիան այդ օրերին դարձել էր ոչ միայն լռակյաց դիտող, այլ «բազմաթիվ դեպքերում սպանություններին և թալանին մասնակից»<sup>111</sup>: Սումգայիթյան այդ սարսափելի օրերին իրագործվում էր վերոնշյալ 1915 թ. Եղեռնի ժամանակ կատարված վանդալիզմը: Հեղինակ Ա. Նելիդովը իր ուսումնասիրության մեջ պատմել է, որ 1915 թ. «...նշանավոր խոջա Բենան ցուցաբերել է հրեշավոր դաժանություն, նա ստիպել է մի կնոջ չորս մասի բաժանել և նրա մարմնի մասերը կախել սյունից որպես ի ցույց: Այդ մարդասպանի հրամանով մի այլ կին մերկացվել է և մերկ վիճակում տարվել է գյուղով...»<sup>112</sup>: Նման դաժանություններ կատարվել են նաև Սումգայիթում:

45 թաղամասի տուն 10/13, բնակարան 37-ում բնակվող Լալա Ավագյանի վրա դահիճները հարձակվել են փետրվարի 29-ին, ժամը 16.30-ին, իր տան մոտ: Նրան մերկացրել են, տարել փողոց, ստիպել պարել, ապա դանակով մարմինը ծակոտել են, կտրել կուրծքը, մարմինը վառել ծխախոտով և բռնաբարել: Սպանելուց հետո մարմինը այլանդակել են, ճանաչել հնարավոր չի եղել, միայն ձեռքի վրա գտնվող ճկույթի միջոցով են ճանաչել<sup>113</sup>:

Վկայող հեղինակը բերում է օրինակ, որ Բրազիլիայում հինգ բանդիտ սպանել են երեք հոգու և դա բնորոշվել է ցեղասպա-

---

<sup>110</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 657, թ. 98–104:

<sup>111</sup> Նույն տեղում, ֆ. 1159, ց. 6, գ. 25, թ. 1:

<sup>112</sup> Նույն տեղում, թ. 106:

<sup>113</sup> Նույն տեղում, ֆ. 1159, ց. 6, գ. 25, թ. 106:

նություն, իսկ Սումգայիթում, ասենք 41ա թաղամասում բնակվող Էդուարդ Սողոմոնյանին, նրա ծնողներին, եղբայրներին և քրոջը վայրենաբար սպանել են, սակայն մոսկովյան տականքները «սումգայիթը» չեն որակել ցեղասպանություն<sup>114</sup>: 1988 թ. հունիսի 8-ին մի քանի հոգու ստորագրությամբ նամակ է ուղարկվել Ս. Հարությունյանին: Հեղինակները պահանջել են հարց բարձրացնել, որպեսզի Սումգայիթի բոլոր ոճրագործներին դատեն Մոսկվայում և 1948 թ. Միջազգային կոնվենցիայի պահանջի համաձայն նրանց ճանաչեն ցեղասպանություն գործած: Նույն պահանջով նամակ է ուղարկվել ԽՄԿԿ 19-րդ կոնֆերանսին<sup>115</sup>, սակայն Մ. Գորբաչովից մինչև Ս. Հարությունյան ցուցաբերվել է մեռածին լռություն:

Մենք ուսումնասիրել ենք նաև 54 թերթից բաղկացած Սումգայիթում տեղի ունեցած ցեղասպանության վերաբերյալ քրեական գործի մեղադրական եզրակացությունը, որտեղ նշված է, թե 1988 թ. մարտի 1-ի տվյալներով Սումգայիթում զոհվել են 32 հոգի և ավելի քան 400-ը ստացել են տարբեր չափերի մարմնական վնասներ, 200 բնակարան ենթարկվել են հարձակման և թալանի, վնասվել են մոտ 50 կուլտուր-կենցաղային օբյեկտներ, ավելի քան 40 ավտոտրանսպորտ, որոնց մի մասը վառվել են: Պետությանը հասցվել է 7 մլն ռուբլու վնաս: Իրագործված հանցագործությանը մասնակցել են ազգությամբ ադրբեջանցի քաղաքացիներ: «Բնակարանների թալանը,– կարդում ենք փաստաթղթում,– վառելը, ջարդելը, բռնաբարելը, սպանությունը կատարվել են անկարգություն անող խուլիգանների խմբի կողմից: Նրանցից մի մասը քննությամբ հաստատվել է, ձերբակալվել և ենթարկվում են քրեական պատասխանատվության»<sup>116</sup>:

Իբրև գործը մեծ լինելու պատճառով այն բաժանվել է մասերի: Այս եզրակացությունը համոզիչ չէ, պարզապես գործը սվաղվել է: Գործ է ածվում «խուլիգաններ», «խուլիգանություն» և համանման արտահայտություններ, և երբեք չի էլ ակնարկվում, որ դա

---

<sup>114</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 6, գ. 25, թ. 108:

<sup>115</sup> Նույն տեղում, գ. 658, հատ. 9, թ. 42–45, 46–66:

<sup>116</sup> Նույն տեղում, գ. 25, թ. 1:

եղել է ցեղասպանություն, կոռումպացված ուժերի կողմից նախօրոք կազմակերպված, ինչպես վկայում են բազմաթիվ ականատեսներ: Մարդկանց դաժանորեն սպանում էին, բռնաբարում, ամենասուկալի տանջանքների ենթարկում: Թուրք-ավազակները բացահայտորեն իրագործում էին սադիզմ: Անասնական ձայնով, վայրենաբար գոռում էին՝ «Կեցցե Ադրբեջանը», «Մուսուլմաններ, ցույց տվեք հայերի բնակարանները», «Մահ հայերին, հայերը այստեղ չպետք է ապրեն, նրանք այստեղ տեղ չունեն», «Պետք է սպանել հայերին, նրանց թաքցնողները ևս պետք է սպանվեն», «Տեսեք մենք ինչպես ենք սպանում հայերին, նրանց բոլորին պիտի սպանել»<sup>117</sup>: Տղամարդկանց շավարները հանում էին, տեսնելու հայ է, թե ոչ, եթե հայ է, ուրեմն՝ սպանել:

Քաղաքի 41ա թաղամասում կատարված գազանությունների մասին պատմում են իրենք՝ դահիճները: Այդ փաստաթղթում բերված են զարհուրելի օրինակներ, թե թուրք-ազերիները ինչպես են տանջել հայերին և նրանց կենդանի վառել<sup>118</sup>: Փաստաթուղթը կազմող իրավաբանության ավագ խորհրդատու Վ. Ս. Գալկինը ազնիվ չէր իր ենթադրություններում և ներկայացրած մեղադրանքներում: Որ տասնյակ հանցագործներ պետք է գնդակահարվեին, դա անկասկած է: Ըստ էության, արդարությունը ոտնատակ է տրվել վերադաս իշխանությունների հրահանգով:

\*  
\* \*

Պատմական նշանակություն պարունակող այդ իրադարձություններից բավականին ժամանակ է անցել: Սակայն մինչև հիմա էլ շարունակվում է հորինվել նոր վարկածներ, կեղծիքներ և խեղաթյուրումներ: Իսկ դրանք ավելի քան վրդովեցուցիչ են հայ ժողովրդի համար: Օրինակ. 2006 թվականի նոյեմբերի 24-ին Երևանում տեղի է ունեցել ծագումով հոլանդացի, ներկայումս ԱՄՆ-ում բնակ-

<sup>117</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 6, գ. 25, թ. 5–11:

<sup>118</sup> Նույն տեղում, թ. 29:

վող Թոմաս դե Վաալի «Սև այգի» աղմուկ բարձրացրած գրքի շնորհանդես: Այդ հատորի լրամշակված երկրորդ հրատարակության շնորհանդեսը Երևանում կազմակերպվել է նաև 2014 թ. Աշնանը: Նպատակ չունեմ այդ գրքի մասին խոսել հանգամանորեն, այլ կանդիդատանում նրանում տեղ գտած մի խեղաթյուրման, որը առնչվում է սումգայիթյան ցեղասպանության հետ: Հարցը հետևյալն է. «Սև այգի» աշխատության մեջ ծնվել է Կապան-Սումգայիթ թնջուկ կոչված մի հորինվածք, որի հեղինակը վերոնշյալ Թոմաս դե Վաալն է: Ո՞րն է այդ հորինվածքի նպատակը:

Ադրբեջանի լրատվամիջոցներում և բազմաթիվ գրոտումներում շեշտվում է՝ ինչպես դա արվել է Սումգայիթում, ջարդի նախօրյակ, որ Հայաստանից հեռացած ադրբեջանցիները իբրև թե ենթարկվել են բռնարարքների, տանջել են փոխադրվող կանանց, երեխաներին, խլել նրանց ունեցվածքը և այլն անարգական կեղծություններ: Այդ նույն սադրիչ ստի տարածողներից է նաև Թոմաս դե Վաալը: Նա, իրեն ներկայացնելով որպես «արդարախոս» մի հեղինակ, հայերին ներկայացնում է որպես հեռացող ադրբեջանցիների նկատմամբ դաժան վարքագիծ ունեցողների:

Ո՞վ է Թոմաս դե Վաալը: Նա տնօրինել է բրիտանական «Պատերազմի և խաղաղության հաղորդումներ» ինստիտուտի կովկասյան բաժանմունքը, այժմ Ռուսաստանի ու Եվրասիայի գծով Քարնեգի Եվրոպա հիմնադրամի ավագ հետազոտող է: Նրա գրքի շնորհանդեսից հետո, որտեղ խոսք կար Կապանից ազերիների հեռանալու մասին, Հայաստանի Հանրապետության առաջին նախագահի մամուլի քարտուղարը հաղորդել է, որ հոլանդացին եղել է Կապանում և որոնել է 1987 թ. վերջին «բռնաճնշումների» հետևանքով հանրապետությունից հեռացած ադրբեջանցիների վերաբերյալ վկայություններ, սակայն որևէ փաստ չի հայտնաբերել: դե Վաալի այցելության ժամանակ հնչել է, թե իբր Հայաստանից ադրբեջանցի փախստականների թիվը 1988 թ. հունվարին հասել էր 200 հազարի: Այնուհետև նրա հորինված «հայտնությունը» բրիտանական ինստիտուտը վավերացրել է «Բաքվի համագործակիցների», այն է՝ ազերի քարոզիչների օգնությամբ: «Սև այգու» հեղինակը պնդում է,

թե նրա նկարագրած պատկերը «ճշմարիտ և օբյեկտիվ» է և իբրև «լրիվ պատկերացում է տալիս իրավիճակը ընկալելու համար»<sup>119</sup>:

Նշանակում է Կապան-Սումգայիթ թնջուկի շուրջ խոսակցություն տեղի է ունեցել նաև Թոմաս դե Վաալի գրքի առաջին շնորհանդեսի ժամանակ: Իսկ, ի՞նչ է գրել պարոն դե Վաալը նրա հրապարակած առաջին տարբերակում, որը նույնությամբ կրկնել է գրքի երկրորդ հրատարակության մեջ և գրեթե չի փոխել անցած տասը տարում: Նա գրել է. «Որպես Հայաստանի և Ադրբեջանի միջև ներկայիս «Ղարաբաղյան հարցի» սկիզբ սովորաբար նշվում է 1988 թվականի փետրվարը: Բայց *առաջին բռնությունը* (ընդգրծումը մերն է- Հ. Ա.), որոնց մասին անգամ տարածաշրջանում քչերը գիտեն, տեղի է ունեցել դրանից մի քանի ամիս առաջ Հայաստանի և Ադրբեջանի այլ վայրերում:

Ապա՝ այդ ժամանակ, 1987 թ. աշնանը, ներհամայնքային հարաբերությունները լարվել էին կապված Ադրբեջանի Շամխորի շրջանի Չարդախլու գյուղում ծագած տարածայնությունների հետ, որից շատ չանցած որոշ բարդություններ են առաջացել Մեղրիում և Կապանում: Իբրև 1987 թվականի նոյեմբերին Բաքվի երկաթուղային կայարան ժամանած «գնացքի երկու բեռնատար վագոններով եկած ադրբեջանցիները եկել էին Կապանից՝ ազգամիջյան բռնությունների արդյունքում: Այս միջադեպի մասին շատ քիչ բան է հայտնի, իսկ լրատվամիջոցներում առհասարակ որևէ բան չի հաղորդվել: Այնուհանդերձ կան ականատեսներ»:

Եվ որպես «ականատես» վկայակոչում է բաքվեցի հայ այրի Սվետա Փաշակային, որն իբրև պատմել է, թե ինչպես են «փախստական» ադրբեջանցիները եկել Բաքու մերկ երեխաներով, կեղտակորոյս գյուղացիներ՝ երկարամազ ու մորուքավոր, տարեցներ, երեխաներով: Եվ որ ինքը, Սվետան, հագուստ և սնունդ է տարել նրանց համար<sup>120</sup>: «Հոգատար» հայուհուն պարոն դե Վաալի կողմից ներկայացնելը բավականին միամիտ է և ծիծաղելի: Նախ՝ այդ հայուհու անուն-ազգանունը ինչու՞ է մնում անհայտ:

<sup>119</sup> Голос Армении, № 128, 24. 11. 2007.

<sup>120</sup> Թոմաս դե Վաալ, Սև այգի, Եր., 2014, էջ 43–44:

Հետո՝ 1987 թ. նոյեմբերին անհավանական է «դռները բաց... մեխված երկու երկար տախտակներով, որ մարդիկ ցած չընկնեն» ապրանքատար վագոնները թույլտվություն ունենային անցնել Բիլյաջար կայարանը և հայտնվեին քաղաքի կենտրոնում, որտեղ գտնվում է վերջին կայարանը:

Հարց է առաջանում. մի՞թե քաղաք հասած վագոնները միայն հայուհի Սվետան է տեսել և օգնություն ցույց տվել այդ «դժբախտներին»: Իսկ որտե՞ղ էր միլիոնանոց Բաքուն, իր ոստիկանությամբ, լրագրողներով, շտապ օգնության մեքենաններով ու դատաբժիշկական փորձագետներով: Ի՞նչու է այն պապանձվել, լուսանկարներ անելու և արձանագրություններ կազմելու, մամուլում մեծ աղաղակ բարձրացնելու փոխարեն: Չէ որ հատկապես 1988 թ. փետրվարից ի վեր ծայր աստիճան անբարյացակամ Մոսկվան միայն պատրվակ էր ման գալիս Երևանը բոլոր մեղքերում ամբաստանելու և Հայաստանի շարժումը ջախջախելու համար:

Պարոն դե Վաալը, առաջ մղելով իր հորինած պատմությունը, ավելացնում է, որ իբրև 1988 թ. հունվարի 25-ին ադրբեջանցի պատմաբան հայատյաց Արիֆ Յունուսովը աշխատանքի գնալիս ականատես է եղել ադրբեջանցիների՝ «Կապանից փախչելու նոր վկայության: Կառավարության շենքի մոտ կանգնած էին չորս կարմիր «Իկարուս» ավտոբուսներ, որոնք իբրև գտնվում էին սոսկալի վիճակում: Ուղևորները «հիմնականում կանայք էին: Նրանցից շատերը ծեծված էին: Նրանք գոռում էին»<sup>121</sup>: Ինչպիսի՞ ստահող անբարոյականություն: Այդ ինչպես է, որ երկու դեպքում էլ «փախստականները» հիմնականում կանայք էին, երեխաներ և տարեցներ: Իսկ այդ ժամանակ որտե՞ղ էին գտնվում Կապանի շրջանում բնակվող շուրջ հինգ հազար ազերի-տղամարդիկ, որոնց կանանց, երեխաներին և ծնողներին այդպիսի զարհուրելի վիճակում հասցրել էին Բաքու:

Պարոն դե Վաալը նշում է, որ «փախստականների այս վաղ հոսքի ամբողջական պատմությունը պատմված չէ, մեծ մասամբ

---

<sup>121</sup> Թոմաս դե Վաալ, նշվ. աշխ., էջ 44:



այն պատճառով, որ Ադրբեջանի իշխանությունները արել էին հնարավոր ամեն բան այդ տեղեկությունը կոծկելու համար»: Այդ դեպքում, ինչու՞ այդ նույն իշխանությունները թույլատրեցին «ջարդված» մարդկանցով լեցուն երկու ապրանքատար վագոններն ու չորս «Իկարուսները» երևան Բաքվի կենտրոնում: Պարոն դե Վաալը գրում է, որ Կապանի շրջկոմի երկրորդ քարտուղար Արամայիս Բաբայանը պնդում է, որ 1988 թ. փետրվարից առաջ իրենց շրջանից ադրբեջանցիներ չէին հեռացել, սակայն տողատակում նշում է, որ «մինչև 1988 փետրվարի 20-ը Կապանից ադրբեջանցիների փախուստի հարցը հայ-ադրբեջանական հակամարտության ամենավիճահարույց հարցերից մեկն է: Հայերը կտրականապես հերքում են, թե Հայաստանից ադրբեջանցիներ են մեկնել մինչև Ղարաբաղի ոտքի ելնելը»<sup>122</sup>:

Ինքն էլ, պարոն դե Վաալը Կապանի իրադարձությունների վերաբերյալ «որևէ փաստաթղթի հաստատում չի տեսել»: Չի տեսել, որովհետև նրա հորինվածքը երբևիցե չի եղել: Հասկանալի է, որ ի տարբերություն մեծածավալ վկայություններով հաստատված Սումգայիթի, այնտեղ ջարդարարների կազմակերպվածության, ինչպես և Կրեմլի լռության, այնուհետև նրա կեղծավոր ու փարիսեցիական վերաբերմունքի<sup>123</sup>, Կապանի հորինվածքը զուրկ է ապացույցներից ու նրա իսկ բնակչության վրա բարդում է բոլորովին անհիմն մեղադրանքներ: Այդ հեղույրանքը հարկավոր է ազերի ջարդարարներին «արդարացնելու», իսկ հայերի կազմակերպված և օրինական Սահմանադրական, այն է՝ իսկապես քաղաքական շարժումը Սումգայիթի ելուզակներին «նմանեցնելու» համար: Այդպես հերքվում է գոհի և հանցավոր կողմի, իր Հայրենիքում ճնշված ու ազգայնամոլ կեղեքիչի, արդար պահանջի և բռնության, վերջապես վերակառուցման սկզբունքներ ի գործ դրած ու սանձարձակ

---

<sup>122</sup> Թոմաս դե Վաալ, նշվ. աշխ., էջ 44:

<sup>123</sup> Այս բառացի որակավորումները տե՛ս М. А. Жирохов, Семена распада: войны и конфликты на территории бывшего СССР, СПб., 2012, с. 234–235:

կոռուպցիայի միջև առկա տարբերությունը, իսկ քրեական դատն ու մեղավորի պատիժը դառնում են անհասցե և ավելորդ:

Այո, Հայաստանում իրոք հավատում էին բարեփոխումների, պետության մարմինների միջոցով կարևոր հարցերի լուծման հնարավորությանը: «Էքստրեմիստ» և քաղաքական այլ նման պիտակներով վրդովված մեր հասարակությունը խիստ հետևում էր կարգ ու կանոնի, ԽՍՀՄ ներքին զորքերի և այլ ուժային կառույցների գործողությունները բացառելու համար: Որպես այն ժամանակի հայերի մտահոգության մի վառ օրինակ մեջբերենք ՀԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի 1988 թ. մարտի 1-ի դռնբաց ժողովում հնչեցրած պ.գ.դ. Էմմա Կոստանյանի կարծիքը մեկ շաբաթից ավել Երևանում ընթացող զանգվածային ցույցերի մասին. «Ես հպարտ եմ, որ պատկանում եմ այն ժողովրդին որը նույնիսկ ամենաճգնաժամային պահերին բարձր է պահում մարդու վեհ կոչումը: Այս ցույցերը ցույց տվեցին մեր ժողովրդի... բարձր կազմակերպվածությունը: ...Դրա հետ մեկտեղ վճռականորեն դատապարտում եմ կենտրոնական մամուլի, կենտրոնական հեռուստատեսության, ՏԱՍՍ-ի դիրքորոշումները և նրանց սխալ ինֆորմացիաները, որոնք ծուռ հայելու մեջ են ներկայացնում կատարվող ողջ դեպքերը:

Ամեն օր կենտրոնական հեռուստատեսության «Ժամանակ» հաղորդումը զրպարտություններ է հերյուրում մեր ժողովրդի մասին, ...իրենց կողմից մեզ վերագրում հատկանիշներ, որոնք անհարիր են մեր ժողովրդին: Մենք էքստրեմիստներ ու նացիոնալիստ չենք, ավելին, քան պետք է մենք ինտերնացիոնալիստներ ենք և այդ ֆոնի վրա շատ տգեղ է դիտվում դեսանտային զորքի առկայությունը Երևանում: Ու՛մ համար է բերված այդ զորքը: Մի կարգապահ ու կազմակերպված ժողովրդի դե՛մ: Երբ տեսնում ենք իրադարձությունների այդ աստիճանի խեղաթյուրումը մեր կենտրոնական մամուլում, կորցնում ենք հավատը<sup>124</sup>» մեկ ընդհանուր ու հումանիստ պետության հանդեպ: Այո, մարտի 1-ի իրադրությամբ՝

---

<sup>124</sup> Հայության պայքարը ԼՂԻՄ-ը հորհրդային Հայաստանի հետ միավորելու համար, Եր., 2011, էջ 143:

Սումգայիթը աչքի արաջ, ԽՍՀՄ ղեկավարությունը ոչ թե Ադրբեջան, այլ խաղաղ ու կազմակերպ Երևան էր ուղարկում դեսանտային զորքերը:

Դե Վաալն էլ՝ իր հերթին, մեջ բերելով 1995 թ. Մոսկվայում Մ. Գորբաչովի հիմնադրամի հրատարակած «Միությունը հնարավոր է պահպանել» (“Союз можно сохранить”) փաստաթղթերի ժողովածուից մեկ՝ քաղաքականապես նպատակադրված պնդումը<sup>125</sup>, հետո վկայակոչելով ԽՄԿԿ կենտկոմի նախկին պաշտոնյա Վ. Միխայլովի ասածը, իբր Հայաստանից ադրբեջանցիների փախուստը սկսվել է մինչև Սումգայիթի ողբերգությունը, նրանց հետևից կրկնում է, թե ադրբեջանցիները Կապանից հեռացել են ավելի շուտ<sup>126</sup>, և իբր «Աղանբեկյանի միջամտությամբ էր, որ ադրբեջանցիներն առաջին անգամ տեղեկացան իրենց դեմ ուղղված հայկական շարժման մասին»<sup>127</sup>:

Պարոն դե Վաալի այդ եզրակացությունը լիովին զուրկ է ճշմարիտ լինելուց: Արցախցիների 1986-1987 թթ. կատարած ստորագրահավաքը, որի արդյունքում ավելի քան 50 հազար ստորագրությամբ փաթեթը Մոսկվա է տարվել և ԽՄԿԿ կենտկոմի ընդունարան հանձնվել 1987 թվականի նոյեմբերի վերջին: Այդ մասին շատ լավ գիտեին Բաքվում, մանավանդ Ադրբեջանի ՊԱԿ-ը: Աղանբեկյանի ֆրանսիական հարցազրույցն էլ անցկացվեց 1987 թ. նոյեմբերի 18-ին, այն է՝ «Կապանից» երկուս ու կես ամիս առաջ: Այնպես, որ պարոն դե Վաալը իզուր է պաշտպանում ազերի կոռումպացված և ջարդարար ղեկավարության վավերացումներից զուրկ այն հայտարարությունը, թե ադրբեջանցիները Կապանից հեռացել են «վիրակապներով»:

---

<sup>125</sup> Թ. դե Վաալ, նշվ. աշխ., էջ 45:

<sup>126</sup> Նույն տեղում:

<sup>127</sup> Նույն տեղում, էջ 46: Պարոն դե Վաալը մինչև հիմա չի հասկացել, որ ղարաբաղյան շարժումը ոչ մի դեպքում ուղղված չէ ադրբեջանցիների դեմ: Այդ շարժումը պաշտպանում է արցախցիների ազատության իրավունքը:

Պարոն դե Վաալի մեկնաբանությամբ, Բաքվում տիրող մթնոլորտը իբր թե ավելի վատթարացրեց «ադրբեջանցիների ներհուքը Հայաստանի հարավում գտնվող Կապան քաղաքից: Նրանցից շատերը իջևանում էին Բաքվում ապրող ազգականների մոտ: Զոհերի մասին տեղեկություններ թեև չկային, բայց փախստականներից շատերի վիրակապերը վկայում էին տեղ գտած բախումների մասին»<sup>128</sup>: Այնուհետև նա պատմում է, որ այդ ժամանակ Բաքվի կուսակցական կազմակերպության ղեկավար Ֆուադ Մուսաևը հանգստանում էր Կիսլովոդսկում: Փետրվարի 20-ին Մուսաևը շտապ հետ է կանչվում Բաքու, և նրա նախագահությամբ քաղկոմը նույն երեկոյան որոշում է ընդունում փակել փախստականների մուտքը Բաքու: Մինևնույն ժամանակ ուժեղացվում է հսկողությունը Արմենիքենդ թաղամասի նկատմամբ: Նրա շարադրածից ենք իմանում, որ այդ ժամանակ ադրբեջանցի «փախստականներին» տեղավորել էին Սումգայիթ քաղաքի մերձակայքում գտնվող Ֆաթմայ և Սարայ կոչված գյուղերում<sup>129</sup>:

Ըստ Թ. դե Վաալի վարկածի, 1987 թ. նոյեմբերից մինչև 1988 թ. փետրվարի վերջը իբր թե հայերի «բռնարարքների» հետևանքով Կապանի շրջանից ադրբեջանցիները գալիս էին Բաքու, այնտեղից ուղղվում են Սումգայիթ: Եվ մի ամբողջ ամիս այդ անձանց բռնության ենթարկելը որևէ կերպ չի վավերացվել ու համապատասխան փաստաթղթերը կենտրոնական իշխանությանը կամ լրատվական միջոցներին՝ հրապարակելու համար, չեն տրամադրել: Հասկանալի է, որ նման վարկածը լիովին կեղծ է և հեռու ճշմարիտ լինելուց: Ինչու՞. Կապանը հանրապետական ենթակայության քաղաք է, որը 1988 թ. հունվարի մեկի դրությամբ ուներ 39,1 հազար բնակիչ<sup>130</sup>: Կապանի շրջանն ուներ 50 բնակավայր, որտեղ բնակվում էին 61,5 հազար մարդ, նրանցից հայեր՝ 49,9 հազար, ադրբեջանցիներ՝ 10,7, ռուսներ՝ 0,6 հազար: Շրջանի

<sup>128</sup> Թ. դե Վաալ, նշվ. աշխ., էջ 60:

<sup>129</sup> Նույն տեղում, էջ 60–61:

<sup>130</sup> Հայկական ՍՍՀ վարչա-տերիտորիալ բաժանումը, Եր., 1988, էջ 9, 39–40:

արդյունաբերությունը տարեկան թողարկում էր 170 մլն ռուբլու արտադրանք<sup>131</sup>:

Արդյունաբերական ձեռնարկություններում աշխատում էին ավելի քան 20 ազգության քաղաքացիներ: Նրանք ապրում էին համերաշխ ու տարածքում ազգամիջյան որևէ բախում չի եղել: Բոլորն ապրում էին իրենց առօրյայով: Շրջանը անցյալում տուժել է խորհրդային իշխանության կողմից. ծննդով Կապանի շրջանի Շիկահող գյուղից պ.գ.դ. Կլիմենտ Հարությունյանը 1992 թ. հուլիսի 1-ին «Երկիր» օրաթերթին տված հարցազրույցում տեղեկացրել է, որ 1929 թ. Անդրֆեդերացիայի կենտրոնական Խորհրդային Հայաստանի 34.539 քառ. կմ տարածքից 4.739 քառ. կմ-ը նվիրաբերել է «եղբայրական» Ադրբեջանին: ...

Հավելեմ, որ խորհրդային տարիներին համատեղությամբ աշխատում էի հանրապետության թեթև արդյունաբերության նախարարության մասնագետների որակավորման դասընթացներում, որպես տեսուչ: Նախարարությունը Կապանում ուներ երկու ձեռնարկություն՝ տրիկոտաժի միավորում և կոշիկի ֆաբրիկա: Հաճախակի էի գործուղվում այնտեղ: Հերթական գործուղման գնացի 1988 հունվարի վերջին:

Երբ մտա տրիկոտաժի միավորում, տեսա տնօրեն Ամասիա Հարությունյանին անտրամադիր: Բացատրեց, որ միավորման մի շարք աշխատողներ դիմել և ուզում են տեղափոխվել Բաքու: Իսկ դա բացասական կազդի միավորման պլանների կատարման վրա: Իմիջիպայոց՝ միավորումը իր ամսական պլանները միշտ գերակատարում էր առնվազը 20 տոկոսով: Քիչ հետո, երբ շրջում էինք արտադրամասերում, կանգ առանք հաստոցների մեկի մոտ, որի վրա աշխատում էին մայր և դուստր ադրբեջանուհիներ: Շաֆիգա խանումին հարցնում եմ, թե դու՞ք էլ եք մեկնում Բաքու, նա պատասխանում է, որ Բաքվի իրենց բարեկամները կանչել են, ամուսինս խոսել է Իսլամ մուալլիմի հետ, նա խոստացել է մեզ գումար

---

<sup>131</sup> ՀԱԱ , ֆ. 16, ց. 38, գ. 17, թ. 109:

տալ<sup>132</sup>: Հարցնում են, թե կարո՞ղ է այստեղ ձեզ նեղում են: Նա թե՛ մուպլիմ, ինչ ես ասում, այստեղ հայերի հետ քույր ու եղբայր ենք, նույնիսկ հերթագրվել ենք և շուտով բնակարան կստանանք:

Որ Կապանի շրջանից ևս ադրբեջանցի ընտանիքներ էին հեռանում, դա փաստ էր: Մոտ մեկ տարի անց, 1988 թ. դեկտեմբերի 24-ին տեղի ունեցած Կապանի կուսացության շրջկոմի 44-րդ կոնֆերանսի հաշվետվության մեջ ասված է, որ վերջին երեք տարում Կապան և Քաջարան քաղաքներից ու շրջանի մյուս բնակավայրերից իրենց բնակարանները վաճառել կամ փոխանակել են 585 ադրբեջանցի ընտանիք և ընդհանուր թվով շրջանից հեռացել են 2250 մարդ<sup>133</sup>: Նաև նշված է, որ ներկայումս շրջանում մնում է 175 ադրբեջանցի, իսկ Ադրբեջանից շրջան են գաղթել բռնաճնշման ենթարկված 4000 հայ քաղաքացիներ<sup>134</sup>: Կոնֆերանսի ընդունած որոշման մեջ շեշտված է, որ պետք է ամրապնդել բնակչության և երիտասարդության ինտերնացիոնալ ու հայրենասիրական դաստիարակությունը<sup>135</sup>:

Այդպես որ 1988 թ. հունվար-փետրվար ամիսներին Կապանի շրջանից կարող էին հեռանալ ադրբեջանցի ընտանիքներ: Սակայն մինչև սումգայիթյան ցեղասպանությունը այդ մասին թե՛ Ադրբեջանում և թե՛ Հայաստանում լրատվամիջոցները ոչինչ չեն հաղորդել: Հետո՝ Ադրբեջանի լրատվամիջոցների և կոռումպացված ղեկավարության սուտ լուրերի հետևանքով բնակչությունը

---

<sup>132</sup> Հետո իմացա, որ Իսլամ Մամեդովը եղել է Կապանի բացահայտ կոռումպացված ազգայնամոլներից մեկը, որը խիստ բացասական դեր է խաղացել Կապանում հայ-ադրբեջանական հարաբերությունները խճճելու գործում: Որոշ տեղեկությունների համաձայն նա ավելի ուշ ավտոբուսներ է վարձել և գնացքի տոմսեր գնել ու հայրենակիցներին ուղարկել Բաքու: Կան տվյալներ, որ նա այդ հրահանգը ստացել էր Բաքվից: Հետո, Բաքու տեղափոխվելուց 10 տարի անց, նա սպանվել է այնտեղ, իսկ տղան էլ սպանվել է Մոսկվայում:

<sup>133</sup> ՀԱԱ, ֆ. 16, ց. 38, գ. 17, թ. 29:

<sup>134</sup> Նույն տեղում:

<sup>135</sup> Նույն տեղում, էջ 35:

խուճապի մեջ ընկավ: Կապանի շրջանային «Ղափան» թերթի 1988 թ. մարտի 1-ի համարում ընթերցում ենք, որ վերջերս Լեռնային Ղարաբաղի շուրջ իրադարձությունների առթիվ շրջանում եղել են արտադրության ուղիքի խախտում, հասարակական կարգ ու կանոնի խանգարում, շրջանից առանձին քաղաքացիների ու ընտանիքների մեկնելու դեպքեր: Այդ մասին ժողովրդական պատգամավորների Կապանի շրջխորհրդի նախագահ Ն. Մկրտչյանը տվել է հետևյալ բացատրությունը. «Այդ օրերին բոլոր հիմնարկ ձեռնարկությունները, տրանսպորտային, շինարարական և մյուս կազմակերպություններն աշխատել են արտադրական նորմալ ուղիով»:

Ամենուրեք հանդես են բերվել բարձր կազմակերպվածություն, որը պահպանվում էր նույնիսկ մարդկային առօրյա փոխհարաբերություններում»<sup>136</sup>: Շրջխորհրդի նախագահը նաև հաղորդել է, որ «Ադրբեջանցի առանձին բնակիչներ, առանց որևէ հիմնավոր պատճառի, այդ օրերին մեկնել են քաղաքից և գյուղերից: Ինչպես մեր, այնպես էլ հարևան ադրբեջանական շրջանների կուսակցական, սովետական մարմինների բացատրական աշխատանքներից հետո նրանք արդեն հետ են վերադառնում: Այս անցանկալի իրադրանքման պատճառը, հնարավոր է, եղել են առանձին անձանց անպատասխանատու, անբարոյական արտահայտություններ»<sup>137</sup>: Որոնք չեն վերածվել բռնությանը՝ անձանց ազգային պատկանելիության հողի վրա:

Վերջերս հանդիպելով այդ իրադարձությունների ականատես, «Ղափան» թերթի լրագրող Վահրամ Օրբելյանի հետ, նրան խնդրեցի պատմել, թե այն ժամանակ Կապանի շրջանում ինչ է տեղի ունեցել: Նա պատասխանեց. «Աշխատանքի բերումով ամեն օր հանդիպում էի շրջանի բնակչության հետ: Այո՛, այդ օրերին մի շարք ադրբեջանցիներ հեռացել են Կապանից հանգիստ ու խաղաղ, առանց որևէ միջադեպի: Նրանք իրենց բնակարանները փոխանակում կամ վաճառում էին և տանում ամբողջ ունեցվածքը: Գնում էին այն հույսով, որ *Բաքվում բնակելու տեղ կունենան*:

<sup>136</sup> Ղափան (Կապան), թ. 26, 01. 03. 1988:

<sup>137</sup> Նույն տեղում:

Մինչև սումգայիթյան օրերը և նրանից հետո չեմ հիշում ընդհարման որևէ դեպք: Նման բան, պարզապես, չի եղել, շատ բան հորինվել է Բաքվում: Անշուշտ, կային և դժգոհ անձնավորություններ՝ կապված Ղարաբաղի հիմնախնդրի հետ... Սակայն նրանց ազգակիցները այնպիսի կեղծիքներ էին հորինում, որից զարմանում ու զայրանում էինք»<sup>138</sup>: Այսպես, իրենց տները փոխարինող Կապանի ադրբեջանցիները սպասում էին, որ շուտով իրենց մայրաքաղաք Բաքվում հայերի բնակարանները կդատարկվեն:

Կապանի կուշրջկոմի առաջին քարտուղար Ռուլանդ Ղոնյանը 1988 թ. մայիսի 3-ին ՀԿԿ կենտկոմ ուղարկած զեկուցագրում ահա թե ինչպես է բացատրել իր մոտ ընթացած իրադարձությունները. ընթացիկ տարվա փետրվարի 26–27-ին տեղի են ունեցել շրջանի աշխատավորական կոլեկտիվների ժողովներ, որոնց մասնակցել են ՀԿԿ Կապանի շրջանի բյուրոյի և շրջկոմի անդամներ ու անդամության թեկնածուներ, կուսակցական, խորհրդային, տնտեսական աշխատողներ... Կապանում, այսպես կոչված, ինքնաստեղծ կոմիտեներ չկային, տեղի ունեցած միտինգները ծնվել են ինքնաբերաբար, կրել են «հուզական պոռթկումի բնույթ»: Այդ միտինգներին մասնակցել են նաև ադրբեջանցիներ, ռուսներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ, ժողովուրդների բարեկամությանը սասանող կոչեր, լոզունգներ, արտահայտություններ չեն եղել<sup>139</sup>: Շրջկոմի առաջին քարտուղարի զեկուցագրում ասված է, որ այդ ժողովների մասնակիցները պատրաստակամություն են հայտնել բոլոր աշխատատեղերում ապահովել պատշաճ կարգ ու կանոն, ամեն կերպ նպաստել երկու հարևան ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը<sup>140</sup>:

Այդ կապակցությամբ Վերին Գյոդաքլու գյուղի տնտեսության կթվորուհի Քուբուրա Գադիրովան պատմել է. «Ես հիմա միայն համոզվեցի, թե ինչ ծանր հետևանքներ կարող է թողնել սուտ լուրը: Մի քանի օր անընդհատ մեզ մոտ՝ Վերին Գյոդաքլու, մեկը մյուսից

---

<sup>138</sup> Հեղինակի անձնական արխիվ:

<sup>139</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 599, թ. 64–67:

<sup>140</sup> Նույն տեղում:



սարսափելի լուրեր էին հասնում. այսինչ գյուղում հայերը այսպես են արել, այստեղ այսպես են արել և տարօրինակն այն էր (հիմա եմ միայն այդ մասին մտածում), որ այդ «լրաբերների» մեջ չկար գոնե մեկը, այն իր աչքով տեսած կամ ականջով լսած լիներ կատարվածի մասին: Միայն մի գլուխ կրկնում էին. ասում են, տեսել են, պատմում են...»: Հետո պատմում է, թե ինչպես ինքն էլ հավատարիվ այդ սուտ լուրերին, թողել է տղաներին, տուն ու տեղը, և աղջիկների, հարսների ու թոռների հետ, չգիտի ինչու, հասել են Կուբաթլու և երեք օր մնացել են այնտեղ, մինչև շրջանի ղեկավարությունը հավաքել է փախստականներին ու հորդորել վերադառնալ իրենց տեղերը:

Քուբուրա խանումը հայտարարել է, որ հայերից ոչ մեկը իրենց «ոչ մի վատ բան չի արել...»<sup>141</sup>: Վերջինիս լրացրել է Չանգելանի շրջանի 30-րդ կիլոմետր կայարանի բնակչուհի Ռոզա Մամեդովան: Նա իր «Ստի ոտքերը կարճ են» նամակում պատմում է իրենց բնակավայրի բնակչության մեկ ոտքը այստեղ է, մյուսը՝ Կապանում լինելու մասին: Բացի այդ, մեր գյուղացիների մեծ մասը աշխատում են, սովորում քաղաքի տարբեր ձեռնարկություններում և ուսումնական հաստատություններում: Մի քանի օր շարունակ մեր գյուղը դարձել էր հայերից «հալածվածների» (դժվար էլ է ասել) հավաքատեղ: Կարգին և հավաստի բան չիմացանք, թե ինչն է այդ խուճապի պատճառը: Մի օր լուր հասավ, թե մի տղայի սպանել են և ինչքան մեծ եղավ բոլորիս ուրախությունը, երբ հաջորդ օրը մերձքաղաքային գնացքում այդ տղայի մորը տեսանք ու նա վրդովված «լրաբերին» անիծելով, հերքեց ամեն ինչ: Ռոզա խանումը նաև պատմում է, որ մեկնողներից մեկն էլ «երեք օր մնացել է իրենց տանը: Հետո համոզվելով, որ իրեն գլուխը լցվածը սուտ է, վերադարձավ: Մեզ մոտ էլ ժողով անցկացվեց և ասվեց, որ այդ ամենը սուտ է: Փորձում էին ինձ էլ համոզել, որ ես էլ գործի չգնամ: Աշխատում էի մաքրման կայանում, բայց ես չլսեցի»<sup>142</sup>:

---

<sup>141</sup> Ղափան, թ. 28, 05. 03. 1988:

<sup>142</sup> Նույն տեղում, թ. 30, 10. 03. 1988:

Վատ չէր լինի, եթե պարոն Թ. դե Վաալը ծանոթանար նաև այս նյութերին ու նոր կատարեր նրա մեկնաբանությունը: Չէ՞ որ, իրոք, ոչ ոք չհաստատեց այդ քաղաքական հեռահար սուտն ու կեղծիքը, որը այդքան նման էր 1918–1920 թթ. կիրառված միջոցներին ու 1988-ին էլ փոթորիկի պես իր հետ բերեց ավերածություններ: Իրադարձությունների ազդեցության տակ այդ օրերին Բագրատ Ուլուբաբյանը գրել է, որ Սումգայիթ էին հասցվել մեծ թվով «փախստականներ», որոնք գոչում էին Հայաստանում իբր տեղի ունեցող ադրբեջանցիների կոտորածի մասին: Վերջինի տեղ էին մատնանշում Կապանը: Այդ «փախստականները ինչպես հանկարծակի երևացին, այնպես էլ հանկարծակի անհետացան Սումգայիթից, որոնցից ոչ մեկն էլ հետագայում չենթարկվեց պատասխանատվության: Ի դեպ, Սումգայիթի գործի հետ կապված Կապանում գործել է հանձնաժողով՝ գեներալ Վ. Ի. Դրեևի նախագահությամբ, որի «հաշվետվության մեջ միանշանակ ժխտվում է Կապանում ազգային հողի վրա տեղի ունեցած որևէ դեպք»<sup>143</sup>:

Բ. Ուլուբաբյանի տեսակետը լրացնում է Վլադիմիր Գրիգորյանը, իր «Հայաստան 1988–1989» ուսումնասիրության մեջ: Նա գրում է, որ Ադրբեջանի սահմաններում սկսվել էր տարածվել խոսակցություն Կապանից եկած «փախստականների» մասին: Այնտեղ բամբասանք էին սփռում ու հակահայկական պրովոկացիաներ կազմակերպում: Խուճապ և անվստահություն ստեղծելը ձեռընտու էր կոռումպացված վերնախավին: Նրանց ասեկոսեները հասել էին Սումգայիթի հրապարակ: Ամբոխը բորբոքելու համար այնտեղ ինչ-որ մեկը գոռում էր, թե «հայ մարդասպանները» չգիտես ինչ են արել իր ընտանիքի հետ: Իսկ երբ իրավասու մարմինները զբաղվել են «տուժվածով», պարզվեց, որ նա երբեք էլ Կապանի խաղաղ բնակիչ չէ, այլ եղել է դատված կրկնահանցագործ, պորտաբույծ, առանց մշտական բնակավայրի և ընտանիքի<sup>144</sup>:

1988 թ. այդ օրերին Ադրբեջանի պարագլուխները նման հանցավոր արարքներ կազմակերպում էին նաև այլ տեղեր ու զարհու-

<sup>143</sup> Բ. Ուլուբաբյան, Արցախյան պայքարի տարեգրություն, Եր., 1997, էջ 35:

<sup>144</sup> Владимир Григорян, Армения 1988–1989, Ер., 1999, с. 86.

րելի բամբասանքներ հասցնում Բաքու, այլ քաղաքներ: Ահա ինչ է գրում հեղինակներից մեկը. «Սիսիանի շրջանից... հայ ժողովրդի նկատմամբ թշնամաբար տրամադրված ադրբեջանցի երիտասարդները թռչում էին Բաքու, այլ քաղաքներ և ահաբեկիչ լուրեր տարածում, թե իբր Հայաստանում հայերը բռնաբարում են ադրբեջանցի կանանց ու աղջիկներին և գլխիվայր կախում ծառերից»<sup>145</sup>:

Այսպիսով՝ ի՞նչ է տեղի ունեցել Կապանում 1987 թվականի վերջին և 1988 թ. սկզբին, և դա որևէ կապ ունեցե՞լ է Սումգայիթի ցեղասպանության հետ: Այն ժամանակ Կապանի շրջկոմի առաջին քարտուղար վերոհիշյալ Ռ. Ղոնյանը 1990 թվականի հունվարի սկզբին, պատասխանելով «Коммунист» թերթի նույն այն հարցին, տվել է հետևյալ բացատրություն. վերոնշյալ ժամանակ Կապանից սկսել են հեռանալ որոշ ադրբեջանցիներ: Նրանց տեղաշարժի հիմնական պատճառը հետևյալն էր. 1987 թ. դեկտեմբերին Ադրբեջանի ղեկավարության մի մասի մոտ հասունացել էր Ապշերոնի շրջանի չօգտագործված հողատարածություններն, որոնք ընկած են Բաքվի և Սումգայիթի միջև, բաժանել և դրանք օգտագործել արդյունաբերական ձեռնարկություններ ու բանջարաբուծական ընկերություններ հիմնելու համար: Այդ հարցը քննարկվել է հանրապետության կուստնտեսավարների ակտիվում և չնայած այդ մասին վերջնական որոշում չէր ընդունվել, սակայն Ապշերոնի շրջկոմի առաջին քարտուղար Զ. Մամեդովը անցավ գործի՝ ձգտելով շրջանը փրկել լուծարումից:

Հրաման է արձակվում չօգտագործված այդ հողերի վրա ստեղծել պետտնտեսություններ և կառուցել անհատական տներ: Այդ մասին 1988 թ. հունվարին թերթում հայտարարություն է հրապարակվել, որտեղ նշված էր, թե այդ հողերի վրա բնակվողները կստանան արտոնություններ և անհատական բնակարան կառուցելու համար մինչև 40 հազար ռուբլի վարկ: Այդ լուրը հասել էր նաև Հայաստանում ապրող ադրբեջանցիներին: Որպես հետևանք՝ Հայաստանից բավականին ադրբեջանցիներ ցանկություն են հա-

---

<sup>145</sup> Սմբատ Հովսեփյան, ՀՀԵ-ն և հայ ժողովրդի մեծ ողբերգությունը, Եր., 2002, էջ 32:

յտնել մեկնել Ադրբեջան, այնտեղ հողամասեր ստանալ և բնակարան կառուցել: Այդ նպատակով էլ 1988 թ. հունվարի 12-ից մինչև 15-ը, երեք օրում Կապանի շրջանից մեկնել են 100 հոգի: Մինչև փետրվարի վերջը գնացողների թիվը հասել էր 500-ի: Իսկ միաժամանակ տեղի ունեցող միտինգներում հորինվում էր ինչ-որ ցանկանաս: Կապանի շրջանում ոչ մի բռնաճնշում չի եղել, թե ով էր դա հորինում և հրահրում, մնաց չբացահայտված:

1988 թ. մարտի 3–4-ին, տեղի ունեցած Կապանի շրջկոմի բյուրոն քննարկելով «Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ ստեղծված իրադարձությունների կապակցությամբ ադրբեջանական ազգության մարդկանց հանրապետության սահմաններից դուրս տեղափոխելու փաստերի մասին» ՀԿԿ կենտկոմի բյուրոյի 1988 թ. փետրվարի 28-ի որոշման կատարման միջոցառումների մասին» հարցը նշվեց, որ շրջանից ադրբեջանական բնակչության տեղափոխման համար հիմքեր չկային և չի արձանագրվել առանձին մարդկանց ահաբեկելու, կարգուկանոնի խախտման, խուլիգանական որևէ դեպք: Թեև նույն այդ ժամանակ որոշ մարդիկ տարածում էին կեղծ լուրեր, որոնց հավատալով բնակիչները ստիպված տեղափոխվում են շրջանից<sup>146</sup>: Շրջկոմի բյուրոն դատապարտեց «տեղի ունեցածը և [վճռեց] անհրաժեշտ աշխատանքներ տանել նման երևույթները կանխելու համար»<sup>147</sup>:

Ըստ էության, այդ օրերին Հայաստանից, մանավանդ Կապանի շրջանից հեռացած ադրբեջանցիները քիչ կապ ունեին Սումգայիթի ցեղասպանության հետ, թեև նրանց հեռանալու փաստը օգտագործվե՞ծ հակահայ քարոզչության համար: Նույնիսկ ԽՍՀՄ գլխավոր դատախազի տեղակալ Ալեքսանդր Կատուսեվը նշել է, որ ինքը ոչ մի կապ չի տեսնում Կապան-Սումգայիթ թնջուկի մեջ<sup>148</sup>:

Այսպիսով,

---

<sup>146</sup> ՀԱԱ, ֆ. 16, ց. 38, գ. 21, թ. 68–69:

<sup>147</sup> Նույն տեղում, թ. 68–69:

<sup>148</sup> Бакинский рабочий, 1988, № 60 (12. 03. 1988) և № 195 (19. 08. 1988).

1. Մինչև 1988 թ. փետրվարի վերջը Հայաստանից հեռացած ադրբեջանցիների նկատմամբ հայերի կողմից ուժ և բռնություն չի գործադրվել: Նրանք Հայաստանից հեռացել են իրենց ցանկությամբ: Հակառակ որևէ ապացույց գոյություն չունի: Հետևաբար, հակահայ քարոզչության առարկա դառնալուց բացի, նրանք որևէ կապ չունենին «սումգայիթի» հետ:

2. Խորհրդային Միության ղեկավարության անտարբեր և հանցագործ քաղաքականության հետևանքով չի բացահայտվել ամբողջ ճշմարտությունը և դաժանորեն իրագործված բռնությունների շատ մասնակիցներ մնացել են անպատիժ:

### 1.3. Ադրբեջանի հայության բռնագաղթը և դրա հետեվանքները

Ըստ վավերացված տվյալների, 1988–1990 թվականներին Խորհրդային Միությունում առկա գաղթականների և փախստականների թիվը անցել էր 600 հազարից, որից 300 հազարը հայեր էին, իսկ 160 հազարը՝ թուրք-ազերիներ: Նրանք իրենց բնակավայրերից հեռանալը կապում են Արցախի իրադարձությունների հետ, որը հերյուրանք է: Մինչև իսկ Ղարաբաղյան հարցի բորբոքվելը, Ադրբեջանի կոռուպացված վերնախավի դրդմամբ Հայաստանից Ադրբեջան էին տեղադրվում ազերիներ, ինչի մասին արդեն խոսվել է: Ադրբեջանում հակահայ հերյուրանքներ էին տարածվում 1918-1920 թվականներից ի վեր, այդ թվում նաև խորհրդային տարիներին: Թուրք-ազերիները կեղծելով հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը, իրենց էին վերագրում ամեն հնարավորն ու անհնարինը:

Արցախ-Ղարաբաղը թուրքական համարելուց բացի, թուրքական են հայտարարում նաև Նախիջևանը, Սյունիքը, Սևան լճի շրջակայքը, Երևանի նահանգը և Հայաստանին պատկանող գրեթե բոլոր տարածքները: Այդ պատմաշինարարները հազարամյակների պատմություն ունեցող և աշխարհում առաջինը քրիստոնեությունը պետական կրոն ընդունած հայ ժողովրդին կպցնում են բազում

պիտակներ: Թուրքերի այդ վարմունքը քաղաքական նվաճողական նպատակ ունի, որի հեղինակները թուրքական կոռումպացված ղեկավար օղակն է և նրանց սպասարկող կեղծարարները:

Ազատագրական պայքարի տարիներին թուրքի այդ մուլուցքը ավելի էր սաստկացել: Ադրբեջանի իշխանությունների հակահայ քարոզչությունը, մանավանդ ադրբեջանահայության նկատմամբ, ժողովուրդ, որը դարեր շարունակ ապրել է իր բնօրրանում, սահման չուներ: Այդ կեղծարարները հայերի նկատմամբ բացահայտորեն իրագործում էին բռնարարքներ և կոչեր հնչեցնում՝ նրանց դուրս քշել Ադրբեջանի հողից:

Հարևան հանրապետության կոռուպցիայի վառ մարմնավորողները աշխարհով մեկ աղաղակում են, թե մեկ միլիոն փախստական ունեն, որից 300 հազարը հայերի ճնշումների հետևանքով հեռացել են Հայաստանից: Մինչդեռ, 1980-ական թվականների սկզբին ՀՍԽՀ-ում ապրում էին ընդամենը 160 հազար ադրբեջանցի, ԼՂԻՄ-ում ևս 40,7 հազարը: Այդ նույն ժամանակ Ադրբեջանում կար 500 հազար հայ: Այնտեղից ՀԽՍՀ բռնագաղթել է 360 հազար հայ, որից 280 հազարը տեղակայվել են Հայրենիքում, իսկ մնացածը անցել են Միության այլ վայրեր կամ արտասահման: Հայաստանում երկրաշարժից անօթևան մնացած 500 հազարի հետ միասին մեր հանրապետության սահմաններում անօթևանների թիվը կազմել է շուրջ 800 հազար:

Ըստ տվյալների՝ Ադրբեջանից բռնագաղթել են 83 հազար հայ ընտանիք, իսկ Հայաստանից հեռացել են 26 հազար թուրք ընտանիք, նշանակում է. Ադրբեջանից բռնագաղթած երեք հայ ընտանիքի դիմաց Հայաստանից հեռացել է մեկ ազերի ընտանիք: Միայն Բաքվից բռնագաղթած երկու հայ ընտանիքների բնակարանի տեր կարող էր դառնալ մեկ թուրք ընտանիք: Էլ չենք խոսում մյուս քաղաքներից և 170 գյուղերից հեռացածների թողած բնակարանների և ողջ ունեցվածքի մասին: Ընդ որում, Երևանում անցկացվող հանրահավաքներում, մամուլում կամ հեռուստատեսությամբ, պաշտոնյաններից կամ մտավորականներից երբևիցե չի

հնչել ազգային ատելության քարոզ կամ ադրբեջանցիներին հետապնդելու կոչ:

Հայաստանից հեռացած թուրք-ազերիները իրենց 1-2 սենյականոց բնակարանները փոխանակել են Ադրբեջանից բռնագաղթած հայերի 3-4 սենյականոց բնակարանների հետ: Հայաստանից հեռացած թուրք ընտանիքները ՀՄԽՀ կառավարությունից ստացել են 200 մլն ռ. փոխհատուցում, մինչդեռ Ադրբեջանից հեռացած հայ ընտանիքները ոչ մի կոպեկ փոխհատուցում չեն ստացել: Հայաստանից հեռացած 160 հազար թուրքերը տարել են իրենց ամբողջ ունեցվածքը, իսկ Ադրբեջանից բռնագաղթած 360 հազար հայերը հեռացել են իրենց ունեցվածքից զրկված, ջարդված ու տանջված<sup>149</sup>: Կույր և մտատկար պետք է լինել, որ այդ ամենը չտեսնել:

Թուրք-ազերիների այդ վայրագությունները նոր չէ: Օրինակ. 1918-1920 թթ. նրանք ոչնչացրել, մասամբ էլ դուրս են մղել Արեշի և Նուխիի մոտ 60 հազար հայերի, հիմնահատակ են քանդել նրանց եկեղեցին ու թալանել նրանց ամբողջ ունեցվածքը: Այդ տարիներին թուրքերը ցեղասպանություն են իրագործել Բաքվում, Նախիջևանում, Գանձակում, Շուշիում և այլ տեղեր: Միայն 1918 թ. սեպտեմբերին երեք օրում Բաքվում սպանել են 30 հազար հայ<sup>150</sup>: Կամ ուրիշ օրինակ. 1979 թ. մարդահամարի տվյալներով Ադրբեջանի 18 գյուղական շրջաններում ապրում էին 64.675 հայ, իսկ 1992 թ. աշնանը այդ շրջաններում այլևս ոչ մի հայ չկար<sup>151</sup>:

Ադրբեջանում, սումգայիթյան ցեղասպանությունից հետո նոր թափ է առնում հակահայ հիստերիան: Ամեն տեղ հայերը ենթարկվում էին ծեծի, այլ բռնարարքների, կանայք և աղջիկները

---

<sup>149</sup> Տվյալները քաղված են. Վլադիմիր Խոջաբեկյան, Արցախը փորձության ժամին, Եր., 1991, Григор Авакян, Нагорний Карабах. Ответ фальсификаторам Ер., 1991, Хикар Барсегян, Истина дороже... К проблеме Нагорного Карабаха – Арцаха, Ер., 1992, М. А. Жирохов, ук. соч., с. 236 աշխատություններից:

<sup>150</sup> Բ. Իշխանյան, Բագուի մեծ սարսափները, Թիֆլիս, 1920, էջ 187:

<sup>151</sup> Օհանջանյան Փաշա, Ղարաբաղի ազատագրական պատերազմը, Եր., 2000, էջ 21:

բռնաբարվում էին, մարդիկ զրկվում իրենց ունեցվածքից: Թուրքերը սանձազերծորեն հայերից պահանջում էին հեռանալ Ադրբեջանից: Բայց չէ՞ որ հայերը հազարամյակներ ապրելով այդ հողի վրա թուրքերից առավել երկրի տերն էին, նրա պատասխանատուն: Թուրքերի այդ պահանջը ազգայնամոլության ամենասարսափելի ձևերից է: Ովքեր չէին ցանկանում կատարել նրանց պահանջը, ենթարկվում էին դաժան տանջանքների կամ սպանվում էին:

1988–1989 թթ. Հայաստանում բնակվող ազերի թուրքերից 147.974-ը հեռացել էին, մնացած 8.788-ը մինչև 1989-ի վերջը բնակվում էին իրենց տներում<sup>152</sup>: Թուրք պատմաշինարարները իրենց հրապարակումներում Հայաստանում ապրող թուրքերի թիվը ուռճացրել են մինչև 200 և նույնիսկ 300 հազարի: Նրանց քարոզիչներն ու պարագլուխները սովոր են անտեղի աղմուկ-աղաղակ բարձրացնել, հող ու տարածություն պահանջել: Օրինակ. ՊԱԿ-ի նախագահ Մ. Յուզբաշյանը 1988 թվականի ապրիլին Հայկոմկուսի կենտրոնում հաղորդել է, որ ամսի 9-ին, ժամը 12-ին բեռնատար ավտոմեքենաներով Լաչին, Գաղժիվար և Սադաբար գյուղերից 20 բնակիչ ժամանել են Գորիսի Խոզնավար գյուղի տարածք և փորձել յուրացնել 28-30 հա ցանքատարածություն հայտարարելով, թե իբր պետական տնտեսության այդ հողերը պատկանում են իրենց: Սակայն խոզնավարցիները նրանց քշել են<sup>153</sup>:

ՊԱԿ-ի նախագահի հաղորդումից իմանում ենք, որ Մասիսի շրջանի Կալինինո, Ռանչպար և Սարվանլար գյուղերից 1988 թ. ապրիլին պատվիրակություն է մեկնել Բաքու՝ այնտեղից Մոսկվա գնալու և բողոք ներկայացնելու, թե իբր Հայաստանում նրանց ճնշում են: Այդ անձանց գլխավորում էր Կալինինոյից թոշակառու Իսմայիլով Ալի Մահրամ օղլին: Նա նման մի արարք սարքել էր նաև 1987 թ.<sup>154</sup>: ՊԱԿ-ը նաև տեղեկացրել է, որ 1988 թ. փետրվարի 20-ից 27-ը ընկած ժանակահատվածում Հայաստանի 8 շրջաններ-

---

<sup>152</sup> Վ. Խոջաբեկյան, Արցախը փորձության ժամին, Եր., 1991, էջ 105:

<sup>153</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 13, թ. 23:

<sup>154</sup> Նույն տեղում, թ. 48:



րից հեռացել են 3.635 ընտանիք<sup>155</sup>: Անկասկած՝ Հայաստանում բնակվող ազերիների անհանգստությունը գալիս էր Ադրբեջանի կոռումպացված իշխանություններից, այնտեղ ծավալված քարոզչությունից և նրանց ղեկավարության անհիմն պահանջներից:

Այսպես, 1988 թ. օգոստոսի 24-ին Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Աբուլֆազ Վեզիրովը Հայկոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանին ուղարկած գրության մեջ պնդում է, թե Ադրբեջանական ԽՍՀ-ում իրավիճակը կապված է ԼՂԻՄ-ի և նրա շուրջ իրադարձությունների հետ: Այնուհետև Ա. Վեզիրովը նշում է, որ նույն օրվա տվյալներով հանրապետությունում են գտնվում Հայաստանից տեղափոխված 2.956 ադրբեջանցի ընտանիք՝ բոլորը միասին 13.286 հոգի, որոնք հիմնականում հեռացել են Արարատի, Մասիսի, Ազիզբեկովի, Եղեգնաձորի և Ամասիայի շրջաններից: Նրանց հետ աշխատանքներ են տարվում Հայաստան վերադառնալու համար: Նա զրպարտում է, թե իբր Հայկական ԽՍՀ մի շարք հանրապետական և տեղական մարմիններ չեն ընդունում գործնական միջոցառումներ «խուլիգանական տարրերի դեմ», որոնք ահաբեկում են ազերի բնակիչներին, վիրավորում մարդկանց արժանապատվությունը<sup>156</sup>:

Վերադաս մարմիններում շարունակում էին երկու կողմերից էլ բողոք-նամակներ ստանալ: Սակայն, իրականում Հայաստանում այսպիսի անօրեն արարքներ տեղի չեն ունեցել, ինչպես Ադրբեջանում: 1988 թ. աշնանը և 1989 թ. սկզբներին Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարության միջև պայմանավորվածություն էր ձեռք բերվել վերականգնել հեռացածների վառված բնակարանները: Փաստերը վկայում են, որ հայկական կողմը բարեխղճորեն կատարել է այդ պայմանավորվածությունը, սակայն ադրբեջանական կողմը նույն ուղղությամբ որևէ քայլ չի ձեռնարկել: Վեզիրովը չի էլ ցանկանում հիշատակել, որ մեծ թվով հայեր իրենց կյանքը փրկելու համար ստիպված էին դիմել փախուստի: Որոշ ղեկաքերում մարդիկ Հայաստան էին հասնում լեռնային կաճաններով, երեխաներին

<sup>155</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 20, թ. 63:

<sup>156</sup> Նույն տեղում, ց. 127, գ. 564, թ. 81:

կամ ծեր ծնողներին շալակած: Մինչդեռ ազերիները հանգիստ փոխանակում էին իրենց բնակարաններն ու հեռանում գնացքներով կամ ավտոմեքենաներով, տանելով իրենց ամբողջ գույքը և ունեցվածքը:

Բնակարանների փոխանակումը 1988 թ. գարնանից դարձել էր զանգվածային: Մինչդեռ, ինչպես երևում է Ա. Վեզիրովի գրությունից, ազերիները աշխարհով մեկ զոհին անվանում էին մեղավոր և աղաղակում էին, թե իբրև հայերը Ադրբեջանից հեռանում են իրենց ցանկությամբ, իսկ նրանք Հայաստանից տեղափոխվում են զոռով, ջարդված ու թալանված:

Բռնագաղթած հայ ընտանիքների համար Հայաստանում պետք է տանելի պայմաններ ստեղծվեր և հոգալ նրանց կարիքները: Այդ հարցով մտահոգված էին թե պետական իշխանությունները և թե քաղաքական ու հասարակական ուժերը: Իսկ Հայաստանից հեռացած ադրբեջանցիներին կազմակերպված խմբերով կուտակում էին Շուշիում, Մարտունու և Ասկերանի շրջաններում: Այդ երևույթը հեռու գնացող նպատակ էր հետապնդում: Ադրբեջանի իշխանությունները Հայաստանից գնացած ազերիների համար բնակարաններ էին կառուցում Շուշիում, Խոջալուում և Մալիբեյլուում: Միևնույն ժամանակ Խոջալուում արագորեն կառուցվում էր մետաքսի ֆաբրիկա:

Հանրապետության առևտրի նախարար Յ. Կարախանովը հայտարարել է, թե իբրև այդ ամենը արվում է Հայաստանից փախածներին աշխատանքի տեղավորելու համար: Խոջալուում և Մալիբեյլուում ամեն օր մի քանի տներ էին տեղադրվում: Առողջապահության նախարար Տ. Կասումովը և ջրշինարարության պետ Ն. Գաջիևը հաղորդել են, որ Խոջալուում 400 տեղանոց միջնակարգ դպրոց է կառուցվում<sup>157</sup>: Նույն «Բակինսկի ռաբոչի» թերթը ղեկտեմբերի 1-ին հաղորդել է, որ Հայաստանից Ադրբեջան է եկել 55 հազար փախստական, որից 10 հազարը միայն վերջին 10 օրում<sup>158</sup>:

---

<sup>157</sup> Бакинский рабочий, № 266, 16. 11. 1988.

<sup>158</sup> Նույն տեղում, թ. 279, 01. 12. 1988:

Ադրբեջանը բոլոր ճիգեր էր գործադրում Հայաստանից հեռացած թուրքերի հաշվին փոխել մարզի ժողովրդագրությունը<sup>159</sup>: Բաքվի իշխանությունները նրանց խոստանում էին բնակարան, հողատարածք, աշխատանք և այլն: Ռուս հեղինակներ Վ. Շալիկովն ու Ի. Ջարամենսկին հաղորդում են, որ 1988 թ. դեկտեմբերի 17-ի դրությամբ Հայաստանից հարևան հանրապետություն էին փոխադրվել 28 հազար ընտանիք՝ 129 հազար մարդ: Ակնհայտ է, որ դրան մեծապես նպաստել է Սպիտակի երկրաշարժը, մինչդեռ վերոհիշյալ հեղինակները անբարո պնդում են, թե իբր դա տեղի է ունեցել Հայաստանի իշխանությունների և հասարակական ու քաղաքական կազմակերպությունների ճնշման հետևանքով<sup>160</sup>:

Հայկումկուսի կենտկոմի առևտրի և կենցաղային ծառայության բաժնի վարիչ Ա. Արզումանյանի 1988 թ. դեկտեմբերի 21-ին կազմած տեղեկանքում հանգամանորեն շարադրված է Արարատի շրջանի Խալիսա և մյուս բնակավայրերից ադրբեջանցիների հեռանալու հանգամանքները: Ըստ այդ փաստաթղթի՝ նրանք հեռացել են իրենց կամքով ու տարել իրենց ամբողջ ունեցվածքը<sup>161</sup>:

Բաքուն դեռ վաղուց հանդիսանում է ստի և կեղծիքի, քաղաքական անբարոյականության մոլուցք հրահրող կենտրոն: Հենց Բաքվի հրահանգով բազմաթիվ ադրբեջանցիներ կենտրոնական իշխանություններ ուղարկած իրենց նամակ-բողոքներում նպատակասլաց տանում էին իրենց քարոզչությունը: Կեղծելով ճշմարտությունը, նրանք ձգտում էին ամեն կերպ վարկաբեկել հայ ժողովրդին: Բերենք մի բնորոշ օրինակ, որը կոռուպցիայի ծնունդ է: Երևանի 9-րդ դպրոցի ուսուցչուհի Սուկա Կադիրովան 1988 թ. հուլիսի 14-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ ուղարկած նամակում նշում է, որ իբր թե Հայաստանում բնակվող ադրբեջանցիների վիճակը միշտ էլ եղել է սարսափելի, իսկ վերջերս, կապված Լեռնային Ղարաբաղի միավորման դիմումի հետ, այն դարձել է անտանելի: Իբրև այս

---

<sup>159</sup> Հ. Աբրահամյան, Մարտնչող Արցախը, գիրք Գ, Ստեփանակերտ, 2007, էջ 536:

<sup>160</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 564, թ. 133-139:

<sup>161</sup> Նույն տեղում, թ. 142-148:

վերջին տասնամյակում ադրբեջանցիները հեռացվել են Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքին մասնակցելուց: Պետական հիմնարկներում չես հանդիպի աշխատող ադրբեջանցիների: Նրանք զրկված են աշխատել կենտրոնի պատասխանատու բաժիններում, մինիստրների խորհրդում, դատախազություններում, նախարարություններում, վարչություններում:

Սոկա խանումը նշում է, որ Ամասիայի շրջանում միայն շրջկոմի առաջին քարտուղարն է ազերի, մնացած բոլոր պաշտոնները զբաղեցնում են հայերը: Իջևանի շրջանի 17 գյուղերից 6-ը ադրբեջանական է, սակայն շրջանի ղեկավար պաշտոններում ոչ մի ադրբեջանցի չի աշխատում, մանկավարժական ինստիտուտի ադրբեջանական բաժնում սովորում է 17 ուսանող, որը 200.000 հազար ադրբեջանցիների համար շատ քիչ է: Սանձարձակ խանումը վրդովվում է, թե Հայաստանի Գերագույն խորհրդի որոշումով 500 քաղաք, գյուղ, լիճ, լեռ, գետ և այլն ադրբեջաներեն անվանումից վերափոխվել են հայերեն<sup>162</sup>:

Այդ խանումի լկտիությունը հասել էր նրան, որ նույնիսկ հայտարարում է, թե 1915 թ. եղեռնը չի եղել, Օսմանյան կայսրությունում տեղի ունեցածին պարզապես դրամատիկ որակավորում է տրվել և անվանվել ցեղասպանություն, ինչը հասցվել է մոլեռանգ վերաբերմունքի: Ամեն տարի տեղի է ունենում սգո միտինգներ, հոբելյանական հանրահավաքներ են նվիրվում Անդրանիկ Օզանյանին, որը եղել է Անտանտայի գործակալ և հակախորհրդային դաշնակցություն կուսակցության գործիչ, իսկ դա չի նպաստում երկու ժողովուրդների համերաշխության ամրապլնդմանը: Իբրև այդ ամենի մասին ինքը մանրամասը խոսել է Գ. Բորովիկի հետ, սակայն նրա «մտահոգությունը» տեղ չի գտել «Позиция» նրա հաղորդման մեջ: Խանումը բացահայտ գրպարտում է, որ այս վերջերը ազգայնամոլական շարժում է սկսվել Հայաստանում բնակվող ադրբեջանցիների դեմ: Հայերը, որպեսզի

---

<sup>162</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 670, թ. 13-14:

ստեղծեն մեծ Հայաստան, ամեն ինչի դիմում են, հալածում ադրբեջանցիներին և հարձակվում նրանց վրա<sup>163</sup>:

Սուկա խանումի այս գրպարտագիրը կազմվել է Բաքվում ու հանդիսանում է նրա կոռումպացված վերնախավի մեկ հերթական հերյուրանք: Նրանից մեջբերումներ ենք կատարել, որպեսզի ընթերցողը տեսնի, թե ինչ էր բարբաջում թրքուհին, որը՝ նրա ասելով, «իր երեխաներին մի կերպ փախցրել է Երևանից» այն ժամանակ, երբ գործում էր Երևան-Բաքու գնացքը և երևանաբնակ թուրքերը հանգիստ թողնում էին ՀՍԽՀ և նրանով հեռանում:

Այնինչ, Սումգայիթում կազմակերպված ջարդը նույն այդ հանրապետությունում և ԽՍՀՄ-ով մեկ ծնել է ցեղասպանության տասնյակ օջախներ՝ Ֆերգանա, Նոր Ուզեն, Աբխազիա, Դուշանբե, Կոկանդ, Անդիջան, Օշ և այլն: Ազգամիջյան լարվածությունը բարձրացավ Մերձբալթիկայում, Մոլդովայում, Հյուսիսային Կովկասում, Թբիլիսիում, Անդրկովկասի այլ վայրերում: 1990 թ. հուլիսի 10-ին ք.գ.դ. Մ. Ամիրխանյանը Մ. Գորբաչովին և այլ պաշտոնյաների ուղարկած նամակում խոսելով վերակառուցման, ապա Ադրբեջանում կոռուպցիայի պարագլուխ և իշխանությունից հեռացող Հ. Ալիևի հանցագործ արարքների մասին, նրա անպատիժ մնալը համարում էր սխալ:

«Պարոն Գորբաչով,– գրում է նամակի հեղինակը,– դուք աշխատել եք հետը և եթե չեք ցանկանում նրան պատժել, ապա այդ դեպքում ձեզ պետք է պատասխանատվության ենթարկել»: Այնուհետև հեղինակը հարցնում է, թե ինչու Կրեմլը չի ցանկանում իրագործել ազգերի ինքնորոշման իրավունքը: Չէ որ ներկայումս երկրում 600 հազար փախստական կա: Երկիրը դրանից որքա՞ն վնաս է կրել: Ինչու՞ եք ԼՂԻՄ-ը զրկել իշխանություններից: Չէ՞ որ դա անօրեն է: Հեղինակը բազմաթիվ հարցերում մեղադրում է Մ. Գորբաչովին, որը իրեն «սպառել էր բոլոր առումներով»<sup>164</sup>: Արդյո՞ք հնարավոր է չհամաձայնվել նրա հետ:

<sup>163</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 670, թ. 13–17:

<sup>164</sup> Նույն տեղում, գ. 812, թ. 31–37:

Տեսնենք. Հայաստանում ազգային հողի վրա Գուգարքի, Ստեփանավանի, Գորիսի, Կալինինոյի, Մասիսի, Արտաշատի, Վարդենիսի, Ազիզբեկովի և այլ շրջաններում, որտեղ հայերի կողքին ապրում էին նաև թուրքեր, տեղի էին ունենում ազգամիջյան բախումներ: Այդ ամենը պետք է կանխվեր: Եվ, իրոք, 1988 թ. դեկտեմբերի 6-ին կայացած ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նիստում՝ Հրանտ Ոսկանյանի ղեկավարության ներքո, քննադատական խոսք է հնչել տեղական խորհուրդների հասցեին, որոնք ազգային հատկանիշով մարդկանց աշխատանքից ազատելու քայլեր են կատարել: Այդ նիստում նշվել է, որ վիճակն ավելի ծանրացել է հանրապետությունից զանգվածային տեղաշարժի և ներհոսքի ժամանակ<sup>165</sup>:

Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում է. 1) Լայնորեն ներգրավել խորհրդային ակտիվին, գիտության և մշակույթի գործիչներին, ամբողջ հասարակայնությանը համախմբել ինտերնացիոնալիզմի, հեղափոխական վերակառուցման շուրջ, 2) Միջոցառումներ ձեռնարկել խառը բնակչություն ունեցող շրջաններում իրավիճակը նորմալացնելու, 3) Օգնություն ցույց տալ Ադրբեջանական ԽՍՀ-ից եկած հայ ազգաբնակչությանը աշխատանքի տեղավորման, բնակարանային, կենցաղային, նյութական պայմանների ստեղծման, բուժսպասարկման ապահովման հարցերում:

4) ...Բարձր կազմակերպվածությամբ, խոր գիտակցությամբ նպաստել ԽՍՀՄ և հանրապետության ժողովրդական տնտեսության ամրապնդմանը, դեմոկրատացման ու նորացման ընթացքներին, 5) Իրավապահ մարմիններին հանձնարարվում է «խստագույն պատասխանատվության ենթարկել բոլոր նրանց, ովքեր հրահրում են անկարգություններ, ասեկոսներ տարածում, ազգամիջյան թշնամանք բորբոքում, վիրավորում մարդկանց ազգային արժանապատվությունը, 7) Դիմել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը՝ անհետաձգելի և վճռական միջոցներ ձեռնարկել Ադրբեջանական ԽՍՀ-ում բնակվող հայ ազգաբնակ-

---

<sup>165</sup> ՀԱԱ, ֆ. 207, ց. 32, գ. 309, թ. 4, նաև՝ Տեղեկագիր, 1988, հ. 23, էջ 327:

չության կյանքի անվտանգությունն ապահովելու, նրա համար աշխատանքի, ուսման և կենցաղի նորմալ պայմաններ ստեղծելու ուղղությամբ»<sup>166</sup>:

1988 թ. դեկտեմբերի սկզբին վիճակը խիստ լարված էր նաև Բաքվում: Դեկտեմբերի 6-ին ժամը 8-ին, երբ զորքը փորձեց իրագործել պարետային ժամի պահանջները և արգելել միտինգ հրավիրել, որոշ խմբեր դիմադրել են: Քաղաքի փողոցներով պտտվող ավտոմեքենաների և մոտոհրոսախմբերի կողմից ջարդուփշուր են արվել խանութների ցուցափեղկերը, կրպակները և վարկաբեկիչ կոչեր արտահայտել հայերի դեմ: Տեղի հայ բնակչությունը չունենալով կյանքի և գույքի ապահովություն, ձգտում էր օր առաջ մեկնել քաղաքից: Հայերը ամեն կերպ փորձում էին խուսափել ընդհարումներից ու խառնամբոխի հարձակումներից: Նրանք դուրս չէին գալիս տներից: Խանութներում նրանց մթերքներ չէին վաճառում:

Տասնյակ հազար հայեր լքել էին քաղաքը: Դեկտեմբերի 5-ի երեկոյան հեռուստատեսությամբ ելույթ ունենալով Ա. Վեզիրովը հույս հայտնեց, որ շուտով պարետային ժամը կվերանա Կիրովաբադում, Նախիջևանում և Շաքիում: Սա, ըստ էության, սպառնալիք էր հայերին: Այդ նույն օրը, դեկտեմբերի 5-ին Հայաստանի 16 շրջաններում մտցվեց պարետային ժամ, իսկ Հայկական բարեգործական ընկերությունը հայտարարեց, թե Մեղրիի շրջանում վերաբնակվողները կստանան 5000 ռ. գումար: Մինչդեռ հանրապետության ծայրամասերում բնակիչների տեղավորման գործը իր վրա պետք է վերցներ պետությունը, որը ավելի մեծ հնարավորություններ ուներ<sup>167</sup>:

1988 թ. դեկտեմբերի 8-ին՝ Սպիտակի աղետալի երկրաշարժի հաջորդ օրը, Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի տարածած հայտարարության մեջ առաջարկվում է բեկանել պարետային ժամը, փակել ատոմակայանը, Ադրբեջանից եկող փախստականների մի մասը տեղավորել Արցախում, երբեք փորձ չանել

---

<sup>166</sup> Տեղեկագիր, 1988, հ. 23, էջ 327–329:

<sup>167</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 3, գ. 55, թ. 1:

փոխելու հանրապետության էթնիկ կազմը և այլն<sup>168</sup>: Ինչպես տեսնում ենք, երկրի համար ողբերգական ժամանակաշրջանում «Ղարաբաղ» կոմիտեի ուշադրությունից չի վրիպել հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող հարցերը:

Ողջ ժողովրդի համար այդ ծանր օրերին թուրք-ազերիները Բաքվի կոռումպացված վերնախավի պահանջով խմբերով թողնում էին իրենց բնակավայրերը, հետո կեղծում թե հեռացել են հայերի ճնշման հետևանքով: Արխիվային նյութերի ուսումնասիրությունը վկայում է դրա լսկիրությունը: Վերոնշյալ Ա. Արզումանյանի 1988 թ. դեկտեմբերի 21-ին կենտրոն ներկայացրած զեկուցագրում նշված է, որ նույն թվականի փետրվարի 1-ի դրությամբ Արարատի շրջանում ապրել են 1.819 ադրբեջանական ընտանիք՝ 8.469 բնակիչով: Ընթացիկ տարվա նոյեմբերի 29-ի դրությամբ նրանցից 1.300 ընտանիք (6.203 բնակիչ) բնակարանները փոխանակելով հեռացել են<sup>169</sup>:

Կենտրոնի աշխատակիցը հաղորդում է, որ Նախիջևանում տեղակայված գորամասերի մարտական մեքենաների ուղեկցությամբ դեկտեմբերի 1-ին Արարատի շրջանի Շիդլու գյուղ են եկել 49 բեռնատար: Ներքին գործերի նախարարության Կիևի բարձրագույն ռազմական ուսումնարանի ծառայող մայրո Օսիպովը հայտնում է, որ եկել են ադրբեջանցի ընտանիքներին տեղափոխելու համար: Այդ օրը նրանք Շիդլուից տարել են 850 ադրբեջանցի: Գյուղի տնտեսությունը մնացել է անտեր: Դեկտեմբերի 3-ին գյուղ են եկել 85, 5-ին՝ 214, 6-ին՝ 50, 7-ին և 9-ին՝ մոտ 100 բեռնատարներ՝ զինվորների ուղեկցությամբ, որոնք առանց շրջանային իշխանություններին տեղեկացնելու, դեկտեմբերի 10-ին և 11-ին տեղափոխել են հեռացող ազերիների ամբողջ սեփականությունը:

Միաժամանակ՝ 1988 թ. փետրվարից մինչև դեկտեմբերի 10-ը, Արարատի շրջան են եկել 2.227 հայ ընտանիքներ՝ բոլորը միասին 10.094 հոգի, որոնցից 41 ընտանիք (166 մարդ) գնել են բնակարան, 461-ը (1807 մարդ)՝ փոխանակել են տները, 1.725

<sup>168</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 3, գ. 55, թ. 3:

<sup>169</sup> Նույն տեղում, ֆ. 1, ց. 127, գ. 564, թ. 142:



ընտանիք դեռևս չեն տեղավորվել, որոնցից 519-ը ունի բնակարանը փոխանակելու փաստաթուղթ, իսկ 1.206-ը (*Կուժածների կեսից ավելին*) իրենց բնակարանները թողել են Ադրբեջանում ու փախել<sup>170</sup>: Բացի դրանից, 1988 թ. փետրվարից մինչև նոյեմբերի 22-ը շրջանում 13 քրեական գործ է հարուցվել, երեք հոգի դատապարտվել են<sup>171</sup>: Ինչպես տեսնում ենք, Հայաստանի պետական մարմինները ուշադիր հետևում էին իրադարձություններին և ջանքեր չէին խնայում կանխելու ազերիների նկատմամբ ցուցաբերվող ճնշումները, որի համար առանձին անձնավորություններ դատապարտվել են: Նման երևույթներ տեղի են ունեցել ոչ միայն Արարատի շրջանում, այլև ՀԽՍՀ հայ և ազերի բնակչություն ունեցած այլ վայրերում:

Ըստ վիճակագրական տվյալների, մինչև 1988 թ. դեկտեմբերի 1-ը Ադրբեջանից բռնագաղթել էր 120 հազար հայ, որոնցից շուրջ 50 հազարը ապաստան են գտել Հայաստանում, մյուսները՝ Հյուսիսային Կովկասում, Մոսկվայում, Միջին Ասիայում և այլուր: Երկու հանրապետությունների իշխանություններից էլ պաշտոնական կոչեր էին հնչում խուսափել ազգամիջյան բախումներից, սակայն նրանցից յուրաքանչյուրի վերաբերմունքը այդ երևույթի հանդեպ տարբեր էր:

ՀԽՍՀ պետական, կուսակցական մարմիններն ու հասարակական կազմակերպությունները հենց սկզբից ուշադրությամբ հետևում էին բռնագաղթածների հարցին, չնայած դրանում եղան ոչ քիչ բացթողումների: Դեռևս 1988 թ. փետրվարի 28-ին Հայկոմկուսի կենտկոմի բյուրոն անդրադառնալով այդ հարցին, արձանագրել է, որ հանրապետության Ազիզբեկովի, Գուգարքի, Կապանի և այլն շրջաններից ադրբեջանցիներ են հեռանում: Բյուրոն բացասական գնահատական է տվել այդ երևույթին և հանձնարարել տեղական մարմիններին միջոցառումներ ձեռնարկել արտագաղթը կանխելու համար, նաև պահանջել է ուժեղացնել հսկողությունը հիմ-

---

<sup>170</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 564, թ. 146:

<sup>171</sup> Նույն տեղում, թ. 148:

նարկների և ձեռնարկությունների նկատմամբ<sup>172</sup>: Բյուրոն որոշում է ստեղծել հանրապետական հանձնաժողով Ադրբեջանից հեռացած հայ ընտանիքներին ընդունելու համար<sup>173</sup>:

Ավելի ուշ, 1988 թ. հոկտեմբերի 5-ին, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանը եկավ Թատերական հրապարակ ու Երևանի բնակչությանը պատմեց այն աշխատանքների մասին, որ հանրապետության ղեկավարությունը կատարում է ծագած պրոբլեմները հաղթահարելու, քաղաքներում և շրջաններում իրադրությունը կարգավորելու համար: Պատասխանելով ներկաների մի շարք հարցերի, նա խոստացավ կատարել նրանց արտահայտված ցանկությունները: Այդ նույն օրը կառավարությունը ստեղծում է գաղթականների հարցերի մշտապես գործող հանձնաժողով՝ Վլադիմիր Մովսիսյանի նախագահությամբ<sup>174</sup>:

---

<sup>172</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 21, թ. 21–22:

<sup>173</sup> Նույն տեղում, թ. 23:

<sup>174</sup> Երկու տարի հետո Մոսկվայի ադրբեջանական «Ազերի» հասարակական կազմակերպության նախագահ Է. Թալըշևը «հումանիստ և դեմոկրատ Վ. Մովսիսյանին» ուղարկած նամակում նրան միաժամանակ մեղադրում է որպես «գլխավոր հանցագործներից մեկը», որոնք իբր թե 1988 թ. հանցանք են իրագործել Հայաստանում բնակվող 200 հազար «ստրուկ ադրբեջանցիների» նկատմամբ: «Այդ գործողություններով,– գրում է նա– Դուք Ադրբեջանում ստեղծել եք հակահայկական տրամադրություն, որը նախկինում չի եղել»: Է. Թալըշևի պնդմամբ. «Այս վերջին 40 տարում Դուք Ադրբեջան եք քշել շուրջ 500 հազար մարդ, որոնք հիմա Ձեզ, հայերիդ արդարացիորեն հաշվում են մեղավոր և իրենց թշնամիներ: Դուք հիմա վախեցնում եք Գորբաչովին: Ձեզ դեռևս 1988-ին պետք էր դատել Հայաստանում ապրող ադրբեջանցիների նկատմամբ իրագործված ցեղասպանության համար: ...Ես լիազորված եմ Ադրբեջանից արտաքսված հայերի և Մոսկվայում ապրող ադրբեջանցիների անունից հայտարարել. Ձեր պատճառով հայերի և ադրբեջանցիների վրա նույնիսկ ծիծաղում են չուլիչիները» (ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 770, թ. 111–112): Նման այլանդակ հերյուրանքը բիրտ վայրագության դրսևորում է, որը հատուկ է թուրքի կոռուսպացված ղեկավարությանը: Զոհին իր փորձանքների մեջ մեղա-

ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանը իր «Կյանքի դասերը» հուշագրության մեջ մատնանշել է, որ Սումգայիթի ջարդը, որն իր բնույթով և դաժանությամբ նախադեպը չի ունեցել խորհրդային տարիներին, սարսափելի էր<sup>175</sup>: Ստեղծված հանձնաժողովը, անմիջապես անցնելով գործի, զբաղվում է այդ քաղաքի փախստականներով: Հանձնաժողովը մտահոգված էր բոլոր ընտանիքներին բնակարանով և աշխատանքով ապահովելու հարցով: Այդ ժամանակ առաջ է գալիս համանման մեկ հարց ևս. Սումգայիթից հետո Ադրբեջանի բուհերում սովորող հայ ուսանողները մեկնում են Հայաստան: Դրանց թիվը հասել էր 194-ի, որոնց նկատմամբ պետք է ցուցաբերվեր պետական և հասարակական մոտեցում<sup>176</sup>: Այդ հարցը ևս դառնում է հանձնաժողովի կարևոր խնդիրներից մեկը, որը լուծվում է դրականորեն:

Օր օրի ավելանում էին Ադրբեջանից ժամանող փախստականները: Հայկումկուսի բյուրոն 1988 թ. դեկտեմբերի 4-ին քննարկելով «Հանրապետությունում ազգամիջյան ընդհարումները կանխելու մի քանի միջոցառումների մասին» հարցը, նշում է, որ այդ տեսակետից հանրապետությունը ծայրահեղ վտանգված է: Բյուրոն ընդգծել է, որ միայն վերջին 10 օրում Ադրբեջանից Հայաստան են բռնագաղթել 54 հազար հայ, իսկ Հայաստանից հեռացել են 42 հազար ադրբեջանցի: Ասվեց, որ վիճակը առանձնապես ծանր էր Գուգարքի, Ստեփանավանի, Գորիսի, Կալինինոյի, Արարատի, Վարդենիսի, Ամասիայի, Մասիսի շրջաններում: Ստեղծված պայմաններում ամուր դիրքերում չէին պետական-կուսակցական մարմինները: Ոմանք զիջում էին նախաձեռնությունը և հանձնում իրենց ղեկավար դիրքերը: Բացի դրանից, նշվել է, որ տեղերում ՆԳՆ

---

դրելն ու ջարդարարի կողմից տուժածին տնազ անելը ազերիների և նրանց ավագ եղբայրների վաղեմի սովորություն է:

<sup>175</sup> Ֆադեյ Սարգսյան, Կյանքի դասերը (Հուշեր), Եր., 2000, էջ 167–168: 1988 թ. մարտի 20-ին տեղի ունեցած ՀԽՍՀ ԿԿ բյուրոյում նշվել է, որ Սումգայիթից եկել են 595 ընտանիք՝ 2.364 մարդ (ՀԱԱ, ֆ. 1159, ց. 3, գ. 1, թ. 18):

<sup>176</sup> Նույն տեղում, ֆ. 1, ց. 82, գ. 5, թ. 31:

որոշ աշխատակիցներն իրենց չէին արդարացնում: Վճռական միջոցների չէին դիմում նաև դատախազության աշխատողները<sup>177</sup>:

Բյուրոն այդ նիստում քննարկել է նաև Գուգարքի շրջանում տեղի ունեցած իրադարձությունների հարցը: Քննադատական խոսք է հնչում կուսըջկոմի առաջին քարտուղար Լավրենտի Բաղդասարյանի և շրջխորհրդի նախագահ Ս. Ղազարյանի հասցեին, որոնց վրա՝ ներկաների գնահատմամբ, մեծ ազդեցություն է ունեցել «Ղարաբաղ» կոմիտեն: Եվ իբր թե այդ ազդեցության հետևանքով է, որ փետրվարի 20-ից մինչև դեկտեմբերի 3-ը շրջանից հեռացել են 2.301 ազերի: Կենտկոմի բյուրոն խիստ նկատողություն է տվել Լ. Բաղդասարյանին<sup>178</sup>: Սրա հետ միասին շրջանային կոմիտեին հանձնարարվել է քարոզչական լայն աշխատանք ծավալել և ամեն կերպ հակազդել «Ղարաբաղ» կոմիտեի կողմից ձեռնարկվող քայլերին<sup>179</sup>:

Բյուրոյի հաջորդ՝ դեկտեմբերի 22-ի նիստում, քննարկում են Եղեգնաձորի շրջանից աղբբեջանցիների զանգվածային տեղափոխման հարցը, քանի որ դեկտեմբերի ընթացքում ամբողջ ՀԽՍՀ-ից գնացել էին 15 հազար ազերի: Ընդ որում, նրանք ամբողջությամբ հեռացել էին Արարատ քաղաքից, Ջերմուկից, Արտաշատի, Բաղրամյանի, Եղեգնաձորի, Նոյեմբերյանի, Հրազդանի, Ստեփանավանի և Թումանյանի շրջաններից: Նիստի մասնակիցների մեկնաբանությամբ, դրա հիմնական պատճառը «Ղարաբաղ» կոմիտեի գործունեությունն էր: ՀԽՍՀ ԿԿ ղեկավար մարմինը ընդունել էր որոշում լայն աշխատանք ծավալել ազգամիջյան թշնամանքը և հանրապետությունում անկայունության վիճակը վերացնելու, ՆԳՆ-ն և հանրապետության դատախազության մարմինների գործունեությունը խթանելու, քաղաքացիների իրավունքները պաշտպանելու, ծայրահեղ քայլերը բացառելու, ինչպես և

---

<sup>177</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 105, թ. 14-15:

<sup>178</sup> Նույն տեղում, թ. 16:

<sup>179</sup> Նույն տեղում, թ. 17:

ազգամիջյան հարաբերությունների սրման հետ կապված քրեական գործերի քննությունը արագացնելու համար<sup>180</sup>:

Իրականում, որքան էլ կենտրոնական և հանրապետական իշխանությունները կշտամբում էին նրանց քաղաքական մրցակից հանդիսացող «Ղարաբաղ» կոմիտեին՝ իր աճող ուժի և հեղինակության համար, Հայաստանում ազգամիջյան ընդհարումների և հանրապետությունից թուրքերի զանգվածաբար տեղափոխվելու իսկական կազմակերպիչը հանդիսացել է Բաքուն: Այստեղ քիչ դեր ուներ վերոհիշյալ Լ. Բաղդասարյանը, երբ նրան տույժի էին ենթարկում և այդ մասին զեկուցում Մոսկվա, թե ինչպես ենք պատժում նրանց, ովքեր մտահոգ չեն թուրքերի անվտանգությամբ:

Այս պարագայում ազերիները շարունակում էին բողոքնամակներ ուղարկել Մոսկվա և Երևան՝ կուսակցական ու պետական մարմիններին՝ ներկայացնելով իրենց պահանջները: Այսպես, 1988 թ. նոյեմբերի 16-ին պատերազմի և աշխատանքի 125 վետերանների ստորագրությամբ Հայկոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարին ուղարկված նամակում նրանք հարցնում էին, թե ինչո՞ւ եք թույլ տալիս, որ տասնյակ հազարավոր ազերի դուրս մղվեն իրենց օջախներից, որտեղ ոչ ավել ոչ պակաս՝ դարեր շարունակ ապրել են նրանց նախնիները: Ե՞րբ կլինի դրա վերջը<sup>181</sup>: Միթե՞ նրանք չէին տեսնում, որ իրենց հանրապետությունից բռնազաղթի՝ վնասվածքներով ու կողոպտված, ենթարկվում էին հարյուր հազարավոր հայեր՝ թողնելով իրենց բնօրրանը, իրենց ձեռքերով կառուցած Բաքուն և ամբողջ ունեցվածքը:

Տեսնում էին, բայց իրենց անգիտակի տեղ էին դնում: Միգուցե նրանք չէին իմանում, թե Հայաստանում բնակվող իրենց ազգակիցները ինչ քայլեր էին կատարում, որոնց մասին Ադրբեջանի լրատվամիջոցները անընդհատ հաղորդումներ էին սփռում: Մի օրինակ. Վարդենիսի կուսշրջկոմի առաջին քարտուղար Ռ. Ենգոյանը 1988 թ. օգոստոսի 30-ին ՀԽՍՀ ԿԿ ուղարկած հաղորդման մեջ տեղեկացնում է, որ նրա շրջանի Սովետակերտ

<sup>180</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 106, թ. 63–68:

<sup>181</sup> Նույն տեղում, ց. 127, գ. 650, թ. 26:

գյուղի թուրք բնակիչներ Ն. Օրուջովը և Ֆ. Հասանովը Մ. Խաչատրյանի կոմբայնից մարտկոցները ինքնագլուխ վերցրել և դրել են իրենց կողմից շահագործվող «Կամազ» ավտոմեքենայի վրա: Սա առաջ է բերել խիստ վիճաբանություն:

Հաջորդ օրը, հուլիսի 24-ին, թուրքերը հրաժարվել են աշխատել: Այս վիճաբանությանը խառնվում է Քելբաջարի կուսշրջկոմը, որտեղից հեռագիր է ուղարկվում Ա. Վեզիրովին և Ս. Հարությունյանին: Վարդենիսից իրար հետևից հեռագրեր էին հասնում նաև Մոսկվա, Երևան և Բաքու: Մի խոսքով, Վարդենիսի Սովետակերտի պետական տնտեսությունում տեղի ունեցած վերոհիշյալ դեպքը շատ նման է մի կաթիլ մեղրի պատմությանը, որը կարելի էր արագորեն լուծել: Բայց չարվեց:

Համանման մի պատմություն մոգոնվել է այդ շրջանի Մեծ Մագրա խառն բնակչությանը գյուղում: 1988 թ. նոյեմբերի 17-ին այդ գյուղից 114 հոգու ստորագրությամբ մի նամակ է ուղարկվում վերադաս իշխանություններ, թե գյուղի մի խումբ հայ երիտասարդներ դեռ մայիսին գյուղական խորհրդի նախագահ Իսմայիլովից հողատարածք էին խնդրել՝ տուն կառուցելու համար, սակայն նախագահը լպիրշ պատասխանել է, որ դուք այստեղ բնակվելու իրավունք չունեք, դուք այստեղ հող չունեք, ձեր հողը Արաքսի այն կողմում է: Այդ մասին տեղեկացրել են շրջանի ղեկավարությանը:

Կամ՝ նույն թվականի նոյեմբերի սկզբին Շամխորի շրջանից մի քանի հայ ընտանիք բնակարանները փոխանակելու համար դիմել էին այդ նույն սանձարձակ նախագահին, որը դարձյալ լկտիաբար մերժում է: Այս ամենը առաջ է բերում գյուղի հայերի ընդվզում, որոնք պահանջում են պատասխանատվության կանչել վերոնշյալ անձին: Նախագահի կինը, որը գյուղի մանկապարտեզի վարիչն էր, անչափ կոպիտ էր վարվում հայ երեխաների հետ, միշտ ծեծում էր նրանց<sup>182</sup>: Գյուղի հայ բնակչությունը պահանջում էր աշխատանքից հեռացնել նախագահի բիրտ կնոջը:

---

<sup>182</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 650, թ. 151-154:

Թուրքերի բարոյագուրկ և վարկաբեկիչ բողոքները անպակաս էին: Օրինակ. Բաքվում տաքուկ տեղ զբաղեցրած ակադեմիկոս Աբդուլալի Բուդաղովը Ա. Վեզիրովին գրել է, թե իբր Մասիսի շրջանի ադրբեջանական գյուղերը 12 օր շարունակ առաջին անհրաժեշտության ապրանքներ չեն ստացել, որը լիովին սուտ էր<sup>183</sup>:

Այդ բողոքին պատասխանել է Սուրեն Հարությունյանը և ցույց տվել ազերի սուտասանի լրբությունը: Կամ նոյեմբերի 16-ին Կիրովաբադից Մ. Գորբաշովին, Ս. Հարությունյանին և Ա. Վեզիրովին ուղարկված մի հեռագրում գրպարտվել է, թե Վարդենիսի շրջանի Ներքին Շորժա գյուղում բնակվող 84 թուրքեր ենթարկվում են անմարդկային ճնշումների. նրանք ապրում են առանց գազի, էլեկտրականության, միանգամայն ցուրտ պայմաններում, զրկված են աշխատանքից, բժշկական օգնությունից, երեխաներին վախեցնում են, նրանց ծեծում մահու չափ, չեն կարող դպրոց գնալ, մարդիկ չեն կարող օգտվել խանութից: Այդ հերյուրանքին ավելացրել են՝ շրջանային բոլոր ղեկավարները հայեր են, որոնք մեզնից պահանջում են «Հայաստանից հեռանալ մեր բարի կամքով»<sup>184</sup>:

Այս հերյուրանքը ասես լրացնելու նպատակով շրջանից 11 հոգու ստորագրությամբ նոյեմբերի 26-ին Մ. Գորբաշովին, «Պրավդայի» խմբագրությանը և Ադրբեջանի կոմկուսի կենտրոնում ուղարկված գրպատագրում կարդում ենք. «Չիհշատակվող ժամանակներից ադրբեջանցիներն ապրում են Հայկական ԽՍՀ-ում, մասնավորապես Սևանա լճի ափերին: ...Դարեր շարունակ այստեղ ապրել են մեր և նրանց պապերը: Այստեղ թաղված է ադրբեջանական մեծ աշուղ Ալեսկերը»: Շարունակելով իրենց բարբաջանքը, գրում են, որ «շրջանի բնակչության 70 տոկոսը ադրբեջանցիներ են: ... Հայերը մեզ դուրս են մղում մեր բնակավայրերից: Առանձնապես ակտիվ է գործում «Ղարաբաղ» կոմիտեն, որը կոչ է անում մեզ դուրս քշել ուժով: Ամեն կողմից գալիս են մեզ վախեցնելու»<sup>185</sup>:

---

<sup>183</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 661, թ. 112-113:

<sup>184</sup> Նույն տեղում, թ. 157:

<sup>185</sup> Նույն տեղում, թ. 175:

Ինչո՞ւ էր Վարդենիսից այդքան բողոք-նամակներ հասնում վերադաս իշխանություններ: Որովհետև թուրքը փորձում էր զորունակ մարմիններին ու բանից անտեղյակ հասարակությանը համոզել, թե իբր Սևանը և Վարդենիսի շրջանը անհայտ ժամանակներին պատկանել են իրենց: Հետևապես դրանք և մոտակա շրջանները պետք է հանձնվեն Ադրբեջանին: Այդ պահանջը այսօր էլ մնում է թուրքի կոռումպացված ղեկավարության մտահոգության առարկա: Շատ ամբիոններից Հեյդար, այնուհետև Իլիամ Ալիևները հայտարարել են, թե Երևանի նահանգը իբր անցայլում պատկանել է ոչ թե Պարսկաստանին, այլ իրենց՝ ընդամենը 1918 թ. ստեղծած, նույն այդ թվականին «Ադրբեջան» անունը հարևանից գողացած ու միջազգային իրավական ճանաչում չստացած պետությանը: Դա անամոթ ու տգետ հայտարարություն է: Այո, թուրքը կարող է հորինել ցանկացած կեղծիքներ, իր զավթողական ձգտումները բավարարելու համար:

\*  
\* \* \*

1989 թ. հունվարի 4-ին և 6-ին ՀՍԽՀ և ԱդրՍԽՀ կուսակցական և պետական մարմինները դիմելով իրենց մշտական բնակավայրերից հեռացած քաղաքացիներին, նշել են, որ երկու ժողովուրդները ապրելով կողք կողքի, կիսել են աղ ու հացը, միասին հաղթահարել դժվարությունները: Չնայած ազգային ատելության քարոզը տարել են միայն Ադրբեջանում, դիմումը երկու կողմերին էլ «հավասարապես» կշտամբել է, թե Սպիտակի կործանիչ երկրաշարժի պայմաններում անգամ գտնվում էին ծայրահեղականներ ու հրահրիչներ որոնք ազգային երկպառակտման և թշնամության կոչեր են հնչեցնում: Իսկ ՀԽՍՀ մեկ երրորդը ավերակին վերածվելու պայմաններում հասարակությունը հազիվ էր ուժեր հավաքում այդ աղետալի դրությունը մեղմելու համար:

Անտեսելով երկու հանրապետություններում առկա իրադրության տարբերություններն ու հարևանների կողմից օգնության



բեռների ոչնչացումն կամ երկրաշարժի հետ կապված շնորհավորանքները, փաստաթուղթը հիշեցնում էր, որ «ընտանիքները ստիպված են հեռանալ իրենց բնակության վայրերից: Գաղթը երկու կողմերից էլ հսկայական չափերի է հասել: Առաջացել են չնախատեսված դժվարություններ. պետք է հազարավոր մարդկանց կերակրել, տեղավորել, երեխաներին պետք է դպրոց, չափահասներին՝ աշխատանք, ամենքին՝ խաղաղություն»: Կոչ էր արվում կասեցնել «անկարգություններ, առաջ բերելու ազգամիջյան երկպառակտում սերմանելու, խուճապային լուրեր տարածելու, կրքեր բորբոքելու անպատասխանատու անձանց փորձերը: Բոլոր մեղավորները կպատժվեն օրենքի ամենայն խստությամբ»<sup>186</sup>:

Այդ դիմումը «Բակինսի ռաբոչի» թերթը հրապարակելով<sup>187</sup>, ավելացնում է, թե իբր Հայաստանից ադրբեջանցիների փախուստը կատարվում է ոչ թե երկրաշարժի և ԱդրԽՍՀ-ում հայերի հալածանքների հետևանքով, այլ ՀԽՍՀ-ում գործող «ծայրահեղականների» ճնշման արդյունքում, և ի հակառակ տեղի ունեցածի, անբարո կեցվածքով հայտարարում է «Ադրբեջանում հայերի սահմանադրական իրավունքները պահպանելու» մասին: Խմբագրությունը հույս է հայտնել, որ հայերը կցուցաբերեն «բանականություն, զսպվածություն և քաղաքացիական բարձր պատասխանատվություն, կընդունեն վստահություն ներշնչող որոշում և պայմաններ» կստեղծեն հեռացող ադրբեջանցիների «իրենց բնակարանը, իրենց օջախը, իրենց աշխատանքային կոլեկտիվը խաղաղ և մաքուր, բաց սրտով»<sup>188</sup> վերադառնալու համար: Այնինչ, հիշատակվող թերթը, որը հանդիսանում է Ադրբեջանի կոռուպացված իշխանությունների օրգանը, չնկատելու տեղ էր դնում իրենց երկրում բռնաճնշումների ենթարկվող հարյուր հազարավոր հայերին:

Հիշենք 1988 թ. նոյեմբերի 21–27-ին Գանձակում (խորհրդային Կիրովաբադում) կազմակերպված ջարդի մասին: Այն ուղեկցվում էր «ազատություն Սումգայիթի հերոսներին», «հայեր դուրս

<sup>186</sup> Սովետական Հայաստան, թ. 3, 04. 01. 1989:

<sup>187</sup> Бакинский рабочий, № 3, 06. 01. 1989.

<sup>188</sup> Երկրի տեղում:

Ադրբեջանից» կարգախոսներով: Միաժամանակ, համանման ու բացարձակապես անպատիժ հարձակումները բռնկվել են Նախիջևանում, Շամխորում, Մինգեչաուրում, Խանլարում, Շեմախիում, Իմիշլիում, Իսմայիլյան շրջանում, Շեքիում և հարյուրավոր այլ վայրերում: Հատկապես մեծ մարդկային զոհերը տվեց Խանլարի, Շամխորի, Վարդաշենի, Մինգեչաուրի հայությունը:

Նոյեմբերի 22-ին խառնամբոխը Բաքվի կենտրոնում բռնկվում էր՝ «մահ հայերին»: Իսկ երկու օր հետո Մոսկվայի ներկայացուցիչները հայտարարել են ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում, որ ուժեր չունեն ԱդրԽՍՀ-ում հայերին պաշտպանելու և այնտեղից տարհանելու համար: Դեկտեմբերի 1-ին ԽՄԿԿ ԿԿ-ն հատուկ հանդիպում է անցկացրել երեք շահագրգիռ կողմերի հետ: ԼՂԻՄ-ից՝ այդ կողմերի Մ. Գորբաչովի հետ հանդիպմանը մասնակցեցին մարզային գործկոմի նախագահ Ս. Բաբայանն ու Ս. Մամունցը: Միջոցառմանը հետևեց դեկտեմբերի 5-ի և 6-ի միութենական Կենտկոմի և Մինիստրների խորհրդի համատեղ երկու որոշում: Առաջինը հաստատում էր պետական և կուսակցական պաշտոնյաների կողմից քաղաքացիներին ազգային հատկանիշով աշխատանքից հեռացումներին նպաստելու բազմաթիվ փաստեր: Երկրորդը սևեռվում էր իրավապահ մարմինների անգործության ու զանգվածային բնույթ կրող արտագաղթի վրա<sup>189</sup>: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը՝ Հ. Ոսկանյանի ղեկավարությամբ,

---

<sup>189</sup> Постановление ЦК КПСС и Совета Министров СССР от 5 декабря 1988 года О грубейших нарушениях конституционных прав граждан в Азербайджанской ССР и Армянской ССР. Известия, № 342, 7. 12. 1988; Постановление ЦК КПСС и Совета Министров СССР от 6 декабря 1988 года О недопустимых действиях отдельных должностных лиц местных органов Азербайджанской ССР и Армянской ССР, вынуждающих граждан покидать постоянные места проживания. Известия, № 343, 8. 12. 1988: Տե՛ս նաև R. O. Krikorian, J. R. Masih, Armenia: at the Crossroads, Lnd. and NY, 1999, p. 15.

նույն ամսի 6-ին անցկացրեց հատուկ նիստ<sup>190</sup>, որտեղ քննարկեց հայ փախստականներին անհրաժեշտ օգնության հարցը:

Որպես ամփոփում՝ 1989 թ. հունվարի 14-ին ՀԿԿ ԿԿ բյուրոն քննարկելով միութենական դեկտեմբերյան որոշումների կատարման ընթացքը, նշել է, որ ներկա դրությամբ 145 հազար ադրբեջանցիներ են հեռացել հանրապետությունից, որից 94 հազարը նոյեմբերի 22-ից մինչև դեկտեմբերի 8-ը ընկած ժամանակաշրջանում: Արձանագրվել է, թե տեղի ունեցած ազգամիջյան ընդհարումների հարցի հետ առնչվող 154 քրեական գործ է հարուցվել<sup>191</sup>:

Կես ամիս անց՝ 1989 թ. հունվարի 31-ին, Հայկոմկուսի ղեկավար Ս. Հարությունյանը իրազեկ է պահում ԽՄԿԿ կենտկոմին, որ միայն դեկտեմբեր ամսին կազմակերպության շարքերից հեռացվել են 13 պատասխանատու աշխատող, իսկ զբաղեցրած պաշտոններից՝ 36 անձ<sup>192</sup>: Պատժվել են ներքին գործերի նախարար Հ. Հարությունյանը, նրա տեղակալ Գ. Գրիգորյանը, նկատողություն է հայտարարվել ՀԽՍՀ դատախազի տեղակալ Գ. Ղուկասյանին, պաշտոնից ազատվել են հինգ դատախազ (Երևան, Գուգարք, Սևան, Կալինինո, Աբովյան): Կուսակցական տույժի են ենթարկվել Ստեփանավանի, Մասիսի, Արարատի, Գորիսի շրջանային դատախազները, ներքին գործերի բաժինների յոթ շրջանների պետերն ու նրանց տեղակալները, ինչպես և Գուգարքի, Ստեփանավանի, Կալինինոյի, Սևանի, Արարատի, Մեղրիի և Աբովյանի ներքին բաժինների ղեկավարները<sup>193</sup>: Ինչպես երևում է, հանրապետական կուսակցական վերադաս մարմինը եռանդազին կատարում էր Մոսկվայի կարգադրությունը, ցույց տալու համար իր նվիրվածությունը: Բայց թե դա ո՞ւմ էր օգուտ, երբ երկու հանրապետությունում հազիվ մի քանի հազար հայ կամ ազգերի էր մնացել, որոնք էլ պատրաստվում էին հեռանալ:

---

<sup>190</sup> ՀԱԱ, ֆ. 207, ց. 32, գ. 309, թ. 4:

<sup>191</sup> Նույն տեղում, ֆ. 1, ց. 83, գ. 6, թ. 25: Աղբյուրներում փախստականների քանակի վերաբերյալ բերված տվյալները հակասական են:

<sup>192</sup> Նույն տեղում, ց. 87, գ. 9, թ. 33:

<sup>193</sup> Նույն տեղում, թ. 36:

Քիչ հետո, նույն թվականի ապրիլի տվյալներով Հայաստանից Ադրբեջան է տեղափոխվել 29 հազար ընտանիք՝ 135 հազար բնակիչով, որոնք տեղավորվել են հարևան հանրապետության 51 շրջաններում և 7 քաղաքներում, որոնցից 4 հազար ընտանիք ստացել է հողամաս<sup>194</sup>: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Պ. Ազիզբեկովը հանդես գալով «Բակինսկի ռաբոչի» թերթում հաղորդում է, որ երկու հանրապետություններից կան 300 հազար փախստականներ և որ իբր Ադրբեջանից գնացած հայերից 50 հազարը վերադարձել են: Դա կեղծիք է: Կենտրոնական իշխանության և երկու հանրապետությունների իշխանությունների ձեռնարկած քայլերի հետևանքով մի քանի հարյուր հայ ընտանիք իսկապես նորից եկել էին, սակայն ոչ 50 հազար, որոնք էլ ստիպված էին շուտով հետ վերադառնալ: Հեղինակը ցանկություն է հայտնում որ «Հայաստանից եկած 165 հազար ադրբեջանցիները» հետ գնան<sup>195</sup>:

Մինչդեռ թուրքի կոռումպացված վերնախավը շարունակելով իր հակահայ մոլուցքը, աղաղակում է. հայերը խլել են Ադրբեջանի ամենագեղեցիկ անկյուններից մեկը՝ Ղարաբաղը, որի յուրաքանչյուր քար հիշեցնում է նրանց իբր «հազարամյակների պատմությունը», և որը կես տարի է կորցվել է<sup>196</sup>: Նրանք գնում են ավելի հեռուն. բողոքելով թե հայ ազգայնամուլները ձգտում են «Մեծ Հայաստան» ստեղծել ու խախտում են Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Հետո էլ սպառնում էին, որ ադրբեջանական ժողովրդին փորձում են դուրս բերել համբերությունից, նրան զրկել հեղինակությունից: Կոչ են անում բոլորը դառնան Ղարաբաղի պաշտպաններ և այնտեղի իրենց ազգականներին ցույց տան բարոյական և նյութական օգնություն<sup>197</sup>:

Ներկայացվող ժամանակահատվածում վիճակը բավականին ծանրացել էր Գուգարքում<sup>198</sup>, ինչի մասին նրա շրջկոմը 1989 թ.

---

<sup>194</sup> Бакинский рабочий, № 87, 13. 04. 1989.

<sup>195</sup> Նույն տեղում, թ. 131, 06. 06. 1989:

<sup>196</sup> Նույն տեղում, թ. 159, 09. 07. 1989:

<sup>197</sup> Նույն տեղում, թ. 190, 17. 08. 1989:

<sup>198</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 84, գ. 116, թ. 8–9:

հունիսի 9-ին զեկուցել է ՀԿԿ կենտկոմ<sup>199</sup>: Ձեկուցագրում ասված է, որ դեռևս փետրվարի 9-ին տեղի ունեցած շրջկոմի պլենումը, քննարկելով ազգամիջյան հարաբերությունների հարցը, որոշում է ընդունել ազերի ընտանիքների կրած վնասների համար վճարել 14 մլն 782 հազար ռուբլի<sup>200</sup>: Նույն թվականի հունիսի 14-ի տվյալներով շրջանի Լերմոնտովո, Ֆիոլոտովո, Շահումյան, Գյուզուլարա, Արգուտ, Գուգարք և Հալավար գյուղերի 1845 ազերի ընտանիքներից 308-ը իրենց բնակարանները փոխանակել են, ևս 444-ը վաճառվել են, գրանցվել են 201 հայ ընտանիք: Այդ զեկուցագրից իմանում ենք, որ Գուգարքի և Ադրբեջանի Շամախու շրջանի ղեկավար մարմինների միջև համաձայնություն էր ձեռք բերվել փախստականներին հետ վերադարձնելու մասին: Ձեկուցագրում ասված է, որ Ադրբեջանից Գուգարքի շրջան տեղափոխված հայերը՝ անվտանգության իսպառ բացակայության պատճառով, կտրականապես հրաժարվել են վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը<sup>201</sup>:

Ազերի թուրքերը շարունակում էին հեռանալ նաև Երևան քաղաքից: Մաշտոցի շրջկոմի առաջին քարտուղար Ա. Գեղամյանը 1989 թ. հունվարի 3-ին ՀԿԿ կենտկոմ ուղարկած զեկուցագրում տեղեկացնում է, որ 1988 թ. մարտից մինչև այժմ շրջանից հեռացել են 29 ընտանիք, իսկ մնացած 21-ի հետ աշխատանքներ են տարվում նրանց հեռանալը կանխելու համար<sup>202</sup>: Մայրաքաղաքի Սովետականի շրջանից 1989 թ. հունվարի 13-ի դրությամբ նմանապես հեռացել է 145 ազերի ընտանիք: Նաև հաղորդվել է, որ շրջան են եկել 1490 հայ ընտանիքներ, որոնցից 24-ը հետ են վերադարձել: Գնացած ազերիներից հետ են վերադարձել «Սովետ էրմենիստան» թերթի խմբագիրն ու Ջաբար Ջաբարլիի անվան թատրոնի 4 դերասան: Շրջանում մնացած 35 ազերի ընտանիքի բնակարանները գտնվում էին հսկողության տակ<sup>203</sup>:

---

<sup>199</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 84, գ. 116, թ. 9-10:

<sup>200</sup> Նույն տեղում, թ. 10-11:

<sup>201</sup> Նույն տեղում, թ. 12:

<sup>202</sup> Նույն տեղում, ց. 127, գ. 706, թ. 7:

<sup>203</sup> Նույն տեղում, թ. 26:

Ստացված զեկուցումներից երևում է, որ ազերիները հեռանում էին ինքնակամ, ընդ որում, կային նաև վերադարձողներ, իսկ գանգվածաբար ժամանող հայերից հետ էին վերադառնում չնչին մասը: Նման բնույթի զեկուցումներ ստացվում էին հանրապետության բոլոր վարչական շրջաններից: Այսպես, Վարդենիսի շրջկոմի առաջին քարտուղար Ռ. Ենգոյանի 1989 թ. փետրվարի 14-ին ուղարկած զեկուցագրից իմանում ենք, որ չնայած նրա և Ադրբեջանի Շամախիի շրջանի ղեկավարության միջև ձեռք բերած համաձայնությանը, եկածներից և ոչ մեկը հետ չի վերադարձել<sup>204</sup>:

1989 թ. փետրվարի սկզբին ՀԿԿ կենտկոմում ստացած ԽՄԿԿ կենտկոմի պաշտոնյա Ե. Վորոնցովի ստորագրությունը կրող նամակում նշված է, որ Բաքվից Մոսկվա են գաղթել 1.264 ընտանիքներ, որոնք կտրուկ հրաժարվում են վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը<sup>205</sup>: Երկու ամիս է նրանք գտնվում են Մոսկվայի հանրակացարաններում և հյուրանոցներում: Նրանցից շատերը ապրելու միջոցներ չունեն<sup>206</sup>:

Հայաստանի իշխանություններն ու հատկապես հասարակական և քաղաքական կազմակերպությունները մեծ եռանդով էին մասնակցում փախստականներին օգնելու գործին, վրդովմունք ու ցավ ապրելով նրանց ողբալի վիճակի համար: Նրանց ծանր պայմանները նկատի ունենալով՝ Հայաստանի դատախազ Վ. Նազարյանը 1989 թ. հունիսի 17-ին ԽՍՀՄ Գլխավոր դատախազություն ուղարկած նամակում խստորեն բողոքում է Ադրբեջանում թույլ տրված անօրենությունների դեմ: Նա օրինակ է բերում Շամխորի շրջանի Չարդախլու և Նոյեմբերյանի շրջանի Վերին Քերալու գյուղերի բնակարանների փոխանակման հարցը: Նշում է, որ երկու հանրապետություններից ջանքեր են գործադրվել այդ գյուղերի փախստականներին հետ վերադարձնելու համար, բայց ապարդյուն: Ընթացիկ տարվա մարտի 20-ից մինչև ապրիլի 5-ը երկու հանրապետությունների հանձնաժողովները՝ ուսումնասիրելով վի-

---

<sup>204</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 706, թ. 12:

<sup>205</sup> Նույն տեղում, թ. 50:

<sup>206</sup> Նույն տեղում, թ. 52:

ճակը, դրական եզրակացության չեն հանգել: Չարդախլուից և նրա հարևան հայկական գյուղերից Նոյեմբերյանի Վերին Քերպլու և նրա շրջակայքում տեղավորված 112 ընտանիքից (4.325 մարդ) մեկն անգամ չցանկացավ հետ վերադառնալ<sup>207</sup>:

Ադրկոմկուսի առաջին դեմք Ա. Վեզիրովը 1989 թ. մարտի 11-ին ՀԿԿ ղեկավար Ս. Հարությունյանին ուղարկած գրության մեջ<sup>208</sup> հիշեցնում է, որ երկու ամսից ավելի է, ինչ ընդունվել է փախստականներին իրենց նախկին բնակավայրերը վերադարձնելու մասին որոշումը, որտեղ առաջարկվում էր համատեղ միջոցառումներ ձեռնարկել: Մինչդեռ այդ ամենը սուտ է և նրանց վերադարձնելը անհնարին է:

Քիչ հետո՝ հունիսի 20-ին, ՀԽՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում է կայացրել հետ վերադարձող ազերիների ապրելապայմանները կարգավորելու վերաբերյալ<sup>209</sup>: Հաջորդ օրը ՀԿԿ ԿԿ բյուրոն, ելնելով ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1989 թ. ապրիլի 15-ի որոշումից<sup>210</sup>, վճռեց իրենց բնակավայրերից ստիպված հեռացածներին ցույց տալ անհրաժեշտ օգնություն և ապահովել նրանց անվտանգությունը: Առաջարկվում է ստեղծել միջհանրապետական հանձնաժողով իրենց բնակավայրերից հեռացած քաղաքացիների կրած վնասները փոխհատուցելու համար: Առաջարկվում է մանրամասն քննարկել այդ հարցը պետական, քաղաքական և հասարակական մարմիններում ու ձեռնարկել միջոցառումներ<sup>211</sup>:

Այնինչ, հանրապետությունների սահմանամերձ գոտիներում, մասնավորապես Մեղրիի շրջանում տիրում էր ծայրահեղ լարվածություն: 1989 թ. փետրվարի 16-ի դրությամբ այտեղից մեկնել էին 2.200 ազերի, թեև Նյուվադի բնակավայրում դեռ մնում էին 1.300

---

<sup>207</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 706, թ. 63:

<sup>208</sup> Նույն տեղում, թ. 81-82:

<sup>209</sup> Նույն տեղում, գ. 722, թ. 26-34:

<sup>210</sup> Հայ և ադրբեջանցի փախստականներին իրենց բնակավայրերը վերադառնալու և նրանց համար պայմաններ ստեղծելու մասին. Նույն տեղում, գ. 83, գ. 50, թ. 46-47:

<sup>211</sup> Նույն տեղում, թ. 47:

հոգի<sup>212</sup>: Երկու ամիս է, այդ կոլտնտեսությունը չէր կատարում իր պարտականություններն ու նրա արտադրանքը իրացվում էր Ադրբեջանում: Տեղի կուսակցական և պետական մարմինները չէին ենթարկվում շրջանի ղեկավարությանը: Գյուղում թրև էին գալիս Ադրբեջանի ազգային ճակատի զինված ավազակախմբեր, որոնց թիվը երբեմն հասնում էր 3.000-ի: Նման ավազակային ջոկատներ հայտնվել էին նաև հարևան Շվանաձոր գյուղի տարածքում, որոնք ձգտում էին հայերին ներքաշել կոնֆլիկտի մեջ:

Փաստորեն՝ Մեղրիի շրջանից 14 հազար հեկտար տարածություն գտնվում էր ազերի ազգայնամուլների հսկողության տակ: Մեղրիի իշխանությունների խնդրանքով ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը ստիպված էր Նյուվադի գյուղում և նրա շրջապատող տարածքում հաստատել հատուկ դրություն<sup>213</sup>: Բաքվից և այլ տեղերից հեռագրեր էին հասնում Մոսկվա և Երևան՝ իբրև Մեղրիի շրջանում ազերիները ենթարկվել են ճնշումների: Իսկ Վարդենիսի շրջկոմի առաջին քարտուղար Ռ. Ենգոյանը 1989 թ. փետրվարի 23-ին Հայկոմկուսի կենտկոմ հաղորդել է, որ նոյեմբեր-դեկտեմբերին շրջանից հեռացած 31 հազար ազերիները իրենց հետ տարել են գյուղերի ողջ ունեցվածքը: Այդ նույն ժամանակ շրջան են եկել հինգ հազար հայ: Եվ հենց ազերիների մեղքով Մեծ Մագրա գյուղում տեղի է ունեցել ազգամիջյան ընդհարում<sup>214</sup>:

Եղեգնաձորի կուսշրջկոմի ղեկավար Ս. Թարվերդյանը 1989 թ. փետրվարի 3-ին Հայկոմկուսի կենտկոմ ուղարկած հաղորդագրությամբ տեղեկացրեց, որ 1988 թ. նոյեմբերի 3-ին ազերի Մուստաֆա և Սաբի Սաֆարովների դիմումի համաձայն Նախիջևանից գյուղ են եկել ինքնաթափ մեքենաներ և բնակչությանը ստիպել հեռանալ: Նրանք թողնելով 30 հազար ռուբլու արժողությամբ գույք, պահանջել են դրա համար հատուցել: Մուստաֆան եղել է իրենց՝ Գյուլիդուզ գյուղի պետտնտեսության կուսկազմակերպության ազատված քարտուղար, որն պաշտոնանկ է արվել ազգայնա-

<sup>212</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 35, թ. 88:

<sup>213</sup> Նույն տեղում, գ. 43, թ. 8:

<sup>214</sup> Նույն տեղում, ց. 127, գ. 650, թ. 136-141:



մոլ քաղաքականություն վարելու համար: Այդ գյուղի բնակիչները նոյեմբերի 30-ին ավտոմեքենաներով շարժվել են դեպի Ղափուշուղ գյուղ, որտեղ գտնվում էր զինվորների ուղեկցությամբ Նախիջևանից եկած ավտոշարասյունը<sup>215</sup>: Դեկտեմբերի 3-ին և 4-ին նորից երկու շարասյուն է եկել շրջան հեռացած ազերիների մնացած սեփականությունը տանելու համար<sup>216</sup>:

Չնայած փախստականների նկատմամբ դրսևորված հոգատարությանը, այնուհանդերձ, շատ հարցեր մնում էին չլուծված: Վլադիմիր Խոջաբեկյանը գրում է, որ 1989 թ. դեկտեմբերի տվյալներով աշխատանքային տարիքի շուրջ 50 հազար հայ փախստականներ ներգրավված չէին հանրօգուտ աշխատանքում: Նրանցից 100 հազար մարդ տեղավորված չէր, իսկ 52 հազարը գրանցում չունեին: Այդ ամենին ավելացան 1990 թ. Բաքվից բռնագաղթածները և Միջին Ասիայից եկածները<sup>217</sup>: Ոչ թե հանրապետության ղեկավարությունը չէր ցանկանում բավարարել փախստականների հոգսերը, այլ հանրապետությունը դիմադրելով շրջափակման ու երկրաշարժի դժվարություններին, ի վիճակի չէր այդ հարցերը լուծել: Դրան ավելանում էր Արցախի հիմնախնդիրը, սահմանամերձ տարածքներում տեղի ունեցող ազգամիջյան ընդհարումները, կրկնվող գործադուլները... Մի խոսքով՝ 1988 թ. դեկտեմբերից ի վեր հանրապետության վիճակը շատ էր ծանր: Միայն անօթևանների թիվը հասնում էր 700 հազարի, որից 500 հազարը երկրաշարժի, 200 հազարը բռնագաղթի հետևանքով:

\*  
\* \* \*

Բռնագաղթի հաջորդ փուլը սկսվել է 1990 թվականի հունվարին Բաքու քաղաքից: Այս քաղաքի հայերի մի մասը հասցրել էր կանխապես հեռանալ այդ դժոխքից և հասնել Հայաստան, Ռու-

---

<sup>215</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 651, թ. 135:

<sup>216</sup> Նույն տեղում, թ. 136:

<sup>217</sup> Վ. Խոջաբեկյան, նշվ. աշխ., էջ 157:

սաստան և այլուր: Նրանց ծանր վիճակի մասին հանգամանորեն խոսվում է Իրինա Մոսետովայի և Աիդա Հովնանյանի 1992 թ. Երևանում հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակած «Բաքվի ջարդերը» ինչպես և առաջին հեղինակի 1998 թ. լույս տեսած «Բաքվի հայերը. կյանքն ու ելքը: Փաստաթղթեր: Ականատեսների վկայություններ» ուսումնասիրությունների մեջ<sup>218</sup>:

Մեծ ջարդից առաջ, 1989 թ. դեկտեմբերի 31-ին Ադրբեջանի ազգային ճակատի նախաձեռնությամբ քանդվել էր 164 կիլոմետր երկարությամբ խորհրդա-իրանական սահմանագիծը Նախիջևանում, որտեղ անմիջապես սկսել են Ջուղայի միջնադարյան գերեզմանատան ոչնչացումը: Վեց շաբաթ հետո ավիրեցին նաև թուրք-խորհրդային 8-կիլոմետրանոց հատվածը: Ի տարբերություն պաշտպանական դիրքերը բռնած իրանական սահմանապահների, թուրքական կողմից անմիջապես ուղարկվել էր զինամթերք: Եվ այդ վայրագությունների համար ոչ մի ազերի պատասխանատվության չենթարկվեց: Նման իրադարձությունները ուժեղացրել են 215 հազարի հասնող Բաքվի հայության արտահոսքը քաղաքից: Ինչպես նշվել է, 1988-1989 թթ. նրա մի մասը հասցրել էր հեռանալ: Քաղաքում մնացած հայ ընտանիքները 1990 թ. հունվարի 13-19-ը Ադրբեջանի իշխանությունների և ազգային ճակատի համաձայնությամբ ենթարկվում են իսկական ցեղասպանությանը: Միաժամանակ՝ հունվարի 15-ին, Նախիջևանի մեջլիսը հայտարարեց իր անկախության մասին ԽՍՀՄ-ից:

Ձմեռվա այդ սև օրերին Բաքվի հայերը ինչպիսի՛ տանջանքների չեն ենթարկվել: Այդ ամենի մասին Հայաստանի իշխանությունները կանխազգում էին և տեղեկացրել էին Մոսկվային: Բայց միայն այն ժամանակ, երբ Ադրբեջանում խորհրդային իշխանության գոյությունը հարցականի տակ դրվեց, Մոսկվան սթափվեց և հունվարի 17-ին ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդն ընդունեց համա-

---

<sup>218</sup> Տե՛ս Ի. Մոսետովա, Ա. Հովնանյան, Բաքվի ջարդերը, Եր., 1992, Ի. Մ. Мосесова, Армяне Баку: бытие и исход. Документы. Свидетельства очевидцев. Газетные и журнальные публикации. Факты и комментарии к ним. Ер., 1998.

պատասխան որոշում: Նրա առաջին կետով առաջարկվեց հայերին հեռացնել քաղաքից և ապահովել նրանց կյանքի ու գույքի պաշտպանությունը<sup>219</sup>: Նույն թվականի մարտի 5-ին Մ. Գորբաչովը որոշում է ստորագրում՝ «Ադրբեջանական ԽՍՀ-ում և Հայկական ԽՍՀ-ում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին»<sup>220</sup>, որտեղ նշված է, որ նախորդ բոլոր ճիգերը դրական արդյունք չեն տվել: Եվ որոշման մեջ փոխանակ դատապարտելու Բաքվում տեղի ունեցած վայրագությունները, դարձյալ երկու հանրապետություններին հաղորդում էին միապաղաղ նկարագիր և աշխատում էին ամեն ինչում հավասարության նշան դնել նրանց և նրանց անելիքների միջև: Սա Միության քաղաքական և պետական իշխանության մշտական պահվածք էր:



<sup>219</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 794, թ. 2:

<sup>220</sup> Նույն տեղում, թ. 3-4, նաև՝ Սովետական Հայաստան, թ. 54, 07. 03. 1990:

Այսպես, բերված տվյալները վկայում են, որ 1988-1990 թթ. Ադրբեջանում բնակվող շուրջ 500 հազար հայերից 360 հազարը ենթարկվելով ջարդերին ու բռնագաղթի, հեռացան հայրենի բնօրրանից թողնելով ավելի քան 80 հազար բնակարան, միլիարդների հասնող դրամական և նյութական հարստություն: Ենթակա լինելով զանգվածային բռնության ու կենտրոնական իշխանությունների անզորությանը, նրանք կրեցին ֆիզիկական և հոգեկան անասելի տառապանքներ:

\*  
\*   \*  
\*

Հանրապետության բնակչությունը սումգայիթյան ցեղասպանության մասին հստակ պատկերացումը կազմել էր նրա ականատեսների հրատարակված վկայություններից ու հանրահավաքներում բացահայտվաց տվյալներից: Մյուս իրադարձությունների մասին մարդիկ նմանապես իմանում էին հանրահավաքներում հնչեցրած տեղեկություններից կամ լրատվամիջոցներից:

Իշխող պաշտոնական ուժը՝ ՀԿԿ-ն շարունակում էր նախկին ռազմավարությունը: Նա ամեն պահին սպասում էր Մոսկվայի հրահանգներին: Ուստի 1988 թվականին այդ կուսակցության խոսքերը հիմնական նյութը ԽՄԿԿ քաղաքացիական փետրվարի 21-ի որոշումն էր: Եթե Ադրբեջանում այն ընդունվեց ծափահարություններով, ապա Հայաստանում արժանացավ վրդովմունքի: 1988 թ. մարտի 3-ին ՀԿԿ կենտկոմի բյուրոն քննության առնելով «Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձությունների հետ կապված հանրապետությունում վիճակը կայունացնելու ուղղությամբ աշխատանքներն ուժեղացնելու» հարցը, ընդգծեց, որ ներկա պահին ամենակարևորը հանրապետությունում աշխատանքային ուժի և հասարակական կյանքի կայունացումն էր:

Բյուրոն գտնում էր, որ պետք էր թույլ չտալ կոլեկտիվներում Միացման շարժման խմբեր ստեղծել՝ ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի միավորման հետ կապված, բացատրելով «ԼՂԻՄ-ի շուրջ վիճակը

բարելավվելու գործում դրանց կործանարար լինելով»<sup>221</sup>: Իսկ մարտի 7-ին տեղի ունեցած բյուրոն տնօրեններին և կուսկազմակերպությունների քարտուղարներին մի անգամ ևս հանձնարարեց բնակչությանը բացատրել Մ. Գորբաչովի դիմումի էությունը, ապահովել կոլեկտիվների սովորական կյանքն ու աշխատանքը, պատվախնդրորեն կատարել իրենց վրա դրած պարտականությունները, ամեն կերպ կանխել ազգամիջյան ընդհարումները և թույլ չտալ ինտերնացիոնալիզմի խախտման որևէ դեպք<sup>222</sup>:

Հայ ժողովուրդը չէր կարող հաշտվել կամայականությունների և հայրենիքը կորցնելու վտանգի հետ: Նա միահամուռ սատարեց արցախցիներին, ցուցաբերեց քաղաքական բարձր մտածողություն, կազմակերպչական նախաձեռնություն ու եռանդ, լավ գիտակցելով, որ առանց ողջ Խորհրդային Հայաստանի վճռական մասնակցությանը Ղարաբաղի բնակիչները՝ հաշված օրերում, կենթարկվեն անկասելի ջախջախմանը: Իրականացնելով խաղաղ, այն է՝ իսկապես քաղաքական երկխոսությունը կենտրոնի հետ, «Ղարաբաղ» կոմիտեի կոչով մեկ ամսով դադարեցվել են հանրահավաքները: Միաժամանակ հասարակությունը պահանջում էր հրավիրել Գերագույն խորհրդի նստաշրջան, քննարկել ԼՂԻՄ-ի մարզ-խորհրդի խնդրանքը և բանվորներին կոչ անել չխախտել ձեռնարկությունների աշխատանքային ռիթմը: Այդ օրերին աճում էր Միացման շարժման տեղական կազմակերպությունների («ենթակոմիտեների») թիվը և հետզհետե նրանք դառնում էին լայնատարած:

1988 թ. փետրվարի 29-ին Պետական անվտանգության կոմիտեի նախագահ Մ. Յուզբաշյանի Կ. Դեմիրճյանին ուղարկած հաղորդման մեջ նշված է, որ փետրվարի 28-ին Հայաստանի գրողների միության շենքում տեղի է ունեցել «Ղարաբաղ» կոմիտեի նիստ, որին ներկա են եղել շուրջ 300 «ենթակոմիտեների» ներկայացուցիչներ<sup>223</sup>: Այդ հաղորդման մեջ ասված է, որ կոմիտեն որոշում է ընդունել բոլոր ձեռնարկություններում, հիմնարկներում, կազմա-

<sup>221</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 21, թ. 25:

<sup>222</sup> Նույն տեղում, թ. 20–21:

<sup>223</sup> Նույն տեղում, գ. 11, թ. 135:

կերպություններում և բուհերում ամեն ուրբաթ, ժամը 18-ին, առանց վնաս հասցնելու արտադրությանն և ուսմանը, ղարաբաղյան հարցով անցկացնել կոլեկտիվների ընդհանուր ժողովներ:

Առաջարկվում է կուսակցական ժողովներում ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորելու վերաբերյալ որոշում ընդունել և պատճենը ուղարկել ԽՄԿԿ կենտկոմ ու «Ղարաբաղ» կոմիտե: Կոմիտեի նիստում որոշվում է Լեռնային Ղարաբաղի բնակչության հետ համագործակցելու օրը նախօրոք որոշված մարտի 23-ից տեղափոխել 26-ը, որպեսզի չազդի արտադրության և ուսման վրա: Նիստի ժամանակ Իգոր Մուրադյանը հաղորդել է, որ ԽՄԿԿ կենտկոմը Արցախ է ուղարկել Մոսկվայի 9 հայ մտավորականների՝ ԽՄԿԿ կենտկոմի բաժնի վարիչի տեղակալ Կ. Բրուտենցի գլխավորությամբ: Նա նաև հաղորդել է, որ այդ օրերին ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելու վերաբերյալ միտինգներ են տեղի ունենալու Մոսկվայում, Լենինգրադում, Տաշքենդում, Օդեսայում, Ռոստովում և Խորհրդային Միության այլ քաղաքներում<sup>224</sup>:

1988 թ. փետրվարի 25-ին ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին ուղարկած հեռագրում իր մտահոգությունն է հայտնել Ղարաբաղի հարցի շուրջ ստեղծված «տագնապալի կացության առթիվ, մանավանդ, որ Ղարաբաղում եղել են մարդկային զոհեր ու վնասվել են հայկական պատմական եկեղեցական հուշարձաններ... Խնդրում ենք Ձեր վճռական նպաստը բերել արդարացի որոշում տալու խնդրին»<sup>225</sup>: Այդ նույն օրը վեհափառ հայրապետը նաև խոսք է ուղղել հայ ժողովրդին, որտեղ ասված է. «Ծանորրեն մտահոգված եմ նաև ես և բաժանում եմ մեր ժողովրդի հուզումը Լեռնային Ղարաբաղի մարզը Սովետական Հայաստանին միացնելու հարցի կապակցությամբ:

Ես գտնում եմ այդ առաջադրանքը բնական, օրինական ու սահմանադրական, որով հավատում եմ, թե մեր օրերի վերակառուցման ու դեմոկրատիայի ոգով. Սովետական Միության բարձր

<sup>224</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 11, թ. 135:

<sup>225</sup> Նույն տեղում, ֆ. 1159, ց. 1, գ. 39, թ. 1:

իշխանությունները ամենայն կարևորությամբ կհանգեն մի արդար և անկողմնակալ որոշման»: Ապա՝ «Մեր հայրենիքի և ազգի առաջ պատասխանատվության խոր զգացումով իբրև Հայրապետ Ամենայն հայոց, ես կոչ եմ անում ձեզ բոլորիդ Սուրբ Ավետարանի պատգամով՝ խաղաղություն հեռավորաց, խաղաղություն մերձավորաց, խաղաղություն ամենաց ամեն»<sup>226</sup>: Իսկ մարտի 4-ին «Ղարաբաղ» կոմիտեի անունից Մ. Գորբաչովին հղած կոչում նշված է, որ հայ ժողովուրդը իր պատմության մեջ երկու անգամ ենթարկվել է ցեղասպանության, որում մեծ մեղք է ունեցել Ադրբեջանի իշխանությունը: Արցախը անջատելով մայր հայրենիքից, բռնակցվել է Ադրբեջանին՝ պանթուրքական ռեակցիոն ուժերի ճնշմամբ, որը մինչև հիմա էլ իշխում է Ադրբեջանում: Այն հիմնվում է Թուրքիայի պաշտպանության վրա: Հայ ժողովրդի ցեղասպանությունը իրագործվում է Ադրբեջանում ապրող բոլոր հայերի նկատմամբ:

Արցախահայությունը աշխարհին տվել է անվանի զորավարներ և գիտնականներ, բայց խորհրդային տարիներին այդ երկրամասը միշտ ենթարկվել է ճնշման, նրա քրիստոնեական մշակույթի հուշարձանները բարբարոսաբար ոչնչացվել են, անվերջ կեղծվել է պատմությունը և այն գրեթե մեկուսացվել է մայր հայրենիքից: Օգտվելով վերակառուցման գաղափարներից և սահմանադրական իրավունքից, մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանում ընդունվել է պատմական որոշում՝ վերամիավորվել մայր Հայաստանին: Ադրբեջանի պանթուրքական իշխանությունները փորձում են ուժի և բռնության միջոցով ստիպել մարզի բնակչությանը հրաժարվել իր պատմական որոշումից: «Ղարաբաղ» կոմիտեն համոզունք է հայտնել, որ երկրի բարձրագույն իշխանությունները կպաշտպանեն արցախահայության պահանջը<sup>227</sup>:

ՊԱԿ-ի նախագահ Մ. Յուզբաշյանի մարտի 4-ին ՀԿԿ կենտրոնում ուղարկած հաղորդումից իմանում ենք, որ Արցախյան զարգացումների առնչությամբ Եվրոպայի և ԱՄՆ-ի լրատվամիջոցները

<sup>226</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 1, գ. 43, թ. 2:

<sup>227</sup> Մ. Գորբաչովին ուղարկած «Ղարաբաղ» կոմիտեի կոչը տե՛ս հեղինակի անձնական արխիվ:

խստորեն քննադատության են ենթարկում Խորհրդային Միությունում մարդու իրավունքների ոտնահարման քաղաքականությունը<sup>228</sup>, իսկ մարտի 5-ին ուղարկած հաղորդման մեջ խոսվում է փետրվարի 20-27-ը ընկած ժամանակաշրջանում Երևանում տեղի ունեցած հանրահավաքներում քուրդ մտավորականների հնչեցրած ելույթների մասին: Վերջինները մերկացնում էին Ադրբեջանական ԽՍՀ-ի կողմից ոչ միայն ԼՂԻՄ-ի նկատմամբ իրագործվող գաղութային քաղաքականությունը, այլև այդ հանրապետության մյուս փոքր ազգությունների, այդ թվում քրդերի նկատմամբ ցուցաբերվող ազգայնամոլությունը: Նրանք կենտրոնական իշխանությունից պահանջում էին վերականգնել քուրդ ժողովրդի իրավունքները<sup>229</sup>:

«Ղարաբաղ» կոմիտեի իշխանությունների վրա քաղաքական ճնշում գործադրելու համար ընդլայնվում էին գործադուլները: 1988 թ. փետրվարի 28-ի դրությամբ գործադուլի մեջ գտնվող ձեռնարկությունների թիվը հասել էր 28-ի<sup>230</sup>: Ենթակոմիտեների գործունեության վերաբերյալ «Ղարաբաղ» կոմիտեի կազմած ծրագրային պահանջներում ասված է, որ ազգամիջյան հարաբերությունները բորբոքելու համար լրատվության կենտրոնական միջոցները դիմում են կեղծարարությունների: Կոմիտեն նրա ենթակոմիտեներին հրահանգում է իրենց բողոքը ներկայացնել Նախարարների խորհուրդ և պահանջել արագացնել կոմիտեի ճանաչումը: Կոմիտեի ծրագրային պահանջներից է հանձնաժողով ստեղծել ու հանգամանորեն ստուգել Սումգայիթում, Կիրովաբադում<sup>231</sup>, Ասկերանում, Շամխու-

---

<sup>228</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 11, թ. 135:

<sup>229</sup> Նույն տեղում, գ. 12, թ. 76-77:

<sup>230</sup> Նույն տեղում, գ. 127, գ. 553, թ. 1-2:

<sup>231</sup> Կիրովաբադում 1988 թ. նոյեմբերի 21-27-ին ծավալված ջարդերի ու հայելիի կազմակերպավ ինքնապաշտպանության մասին տե՛ս այդ պաշտպանության կազմակերպիչներից մեկի՝ Գրիշա Օգանեզովի և ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետազոտող Հրանուշ Խառատյանի կազմած հատորը. Самооборона армян Кировабада в 1988-1989 гг. глазами очевидцев, сост. Григорий Оганезов, Грануш Харатян, Ереван, 2014; Joseph Harrison King, The (Un)mak-



րում, Չարդախվում տեղի ունեցած բարբարոսությունների մասին առկա տեղեկությունները: Ծրագիրը նաև պահանջեց դիմել հանրապետության Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտին՝ հանրամատչելի աշխատանքներ պատրաստել Արցախի պատմության վերաբերյալ և բողոք-նամակների հետ միասին ուղարկել Միության բոլոր հանրապետությունները<sup>232</sup>:

1988 թ. փետրվարին և մարտի սկզբներին հանրապետությունից բյուրավոր նամակ-բողոքներ, առաջարկություններ, բացատրություններ էին ուղարկվում գործընկեր կազմակերպություններին, կենտրոնական և հանրապետական իշխանություններին, ինչպես և այլ երկրների կառավարություններին: Ուղերձներում պահանջվում էր պարզություն մտցնել Արցախի հիմնահարցում: ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի Նախագահությունը մարտի սկզբներին հանդես գալով «Լեռնային Ղարաբաղի մասին» կոչով, նշել է, որ «Լեռնային Ղարաբաղի անջատումը Հայկական ԽՍՀ-ից Անդրկովկասի հայության կողմից ճանաչվել է որպես լեռնյան ազգային քաղաքականության ուղղակի խախտում»<sup>233</sup>:

Այնուհետև հաղորդվում է, թե մարզը ինչպիսի ճնշումների է ենթարկվել դահիճ Մ. Բագիրովի և նրա հաջորդների ժամանակ: ՀԽՍՀ ԳԱ Նախագահությունը դիմելով ԽՄԿԿ կենտկոմին, առաջարկեց պաշտպանել արցախահայության սահմանադրական իրավունքները և երկրամասը միավորել մայր հայրենիքի հետ: Այդ կոչին կցվել է Արցախի վերաբերյալ պատմական տեղեկանք<sup>234</sup>:

Տեսնենք, թե այդ օրերին քննարկվող հարցի օգտին ինչ քայլեր են ձեռնարկել Հայաստանի իշխանությունները: Արխիվային և հրապարակային նյութերը քիչ են պատմում այդ մասին: Այնուհանդերձ կարելի է հիշել այն, որ մարտի 1-ին տեղի ունեցած

---

ing of Soviet Kirovabad: Pogroms and the End of the “Friendship of Peoples” in Azerbaijan, Thesis for the degree of Master of Arts, Budapest, Central European University, Department of History, 2015:

<sup>232</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 553, թ. 3–4:

<sup>233</sup> Նույն տեղում, գ. 672, թ. 112:

<sup>234</sup> Նույն տեղում, թ. 117:

Երևանի քաղկոմի բյուրոն Երևան քաղաքում հասարակական կարգի պաշտպանության վերաբերյալ ընդունած որոշումով հանձնարարել է քաղաքի շրջկոմներին և շրջխորհուրդներին միջոցներ ձեռնարկել բարձրացնելու և ամրապնդելու կարգապահությունն ու թույլ չտալ ազգամիջյան ընդհարումներ<sup>235</sup>:

Տեղերից իշխանություններից ուղարկված բողոքները մնում էին անհետևանք կամ էլ մարդկանց մոլորեցնելու պատասխաններ էին տալիս: Օրինակ, մարտի 5-ին Հայաստանի հեռուստատեսությամբ հանդես գալով ԽՍՀՄ ներքին գործերի նախարարի տեղակալ Վ. Տրուշինը և ՀԽՍՀ ներքին գործերի նախարար Հ. Շահինյանը, ճշմարտությունից խուսափելով, հայտարարեցին, թե բոլոր ձեռնարկություններն և ուսումնական հաստատությունները աշխատում են<sup>236</sup>, մինչդեռ, իրականում տասնյակ աշխատանքային կոլեկիվները գործադուլի մեջ էին, իսկ բավականին ուսանողներ՝ դասադուլի, որոնք պահանջում էին լիովին բացահայտել Սումգայիթի ցեղասպանությունը: Պարզապես՝ հանրապետության ու կենտրոնական իշխանությունները վճռական ոչինչ չէին անում «սումգայիթը» բացահայտելու և լիարժեք դատապարտելու համար:

Ընդհակառակը, իրավիճակը կոծկելու նպատակով մարտի 9-ին ԽՄԿԿ կենտկոմը հրավիրեց խորհրդակցություն, որը լսեց Ադրկոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ք. Բաղիրովի և Հայկոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանի հաղորդումները իրենց հանրապետությունում Լեռնային Ղարաբաղին առնչվող իրադարձությունների մասին: Ըստ նրանց՝ երկու հանրապետություններում վիճակը նորմալացել էր. գործում էին բոլոր ձեռնարկություններն և ուսումնական հաստատությունները, գործադուլների հետևանքով կրած վնասները վերականգնվում էին, հսկվում էր հասարակական կարգը: Նաև տեղեկացվել է, թե սումգայիթյան ոճրագործությունների հետաքննությունը շարունակվում է: Եվ իբր երկու հանրապետություններում լայն արձագանք է գտել Մ. Գորբաչովի Դիմումը:

<sup>235</sup> ՀԱԱ, ֆ. 157, ց. 67, գ. 52, թ. 102–103:

<sup>236</sup> Սովետական Հայաստան, թ. 57, 06. 03. 1988:

Խորհրդակցությունում ելույթ ունեցան կուսակցական և պետական բարձրաստիճան պաշտոնյաներ՝ Ե. Լիզաշովը, Ն. Ռիժկովը, Հ. Ոսկանյանը, Գ. Սեյիդովը, Ֆ. Սարգսյանը: Սակայն նրանցից ոչ մեկն էլ չփորձեց «սումգայիթին» տալ քաղաքական գնահատական<sup>237</sup>: Խորհրդակցությունում առաջարկվեց համապատասխան միջոցառումներ ձեռնարկել՝ երկու հանրապետությունում ստեղծված քաղաքական վիճակը կարգավորելու համար<sup>238</sup>:

Կուսակցական վերնախավը իր քաղաքական նպատակները իրագործելու համար օգտագործում էր նաև երիտասարդությանը, մանավանդ կոմերիտականներին: Օրինակ. Հայաստանի ԼԿԵՄ կենտկոմի բյուրոն 1988 թ. մարտի 7-ին լսելով Լեոնային Ղարաբաղի իրադարձությունների առթիվ Թալինի, Էջմիածնի, Աշտարակի, Երևանի պետական համալսարանի, «Էլեկտրաապարատ» գործարանի, իսկ հետագայում նաև մյուս կազմակերպությունների կատարած աշխատանքների մասին, որոշում է երիտասարդներին հեռու պահել գործադուլներից ու ժողովրդական պայքարից<sup>239</sup>: Մինչդեռ հանրապետության երիտասարդության զգալի մասը քայլում էր պայքարի առաջին շարքերում:

\*  
\* \* \*

Շարունակելով պաշտոնական ղեկավարման կարգը, ՀԿԿ կենտկոմի բյուրոն 1988 թ. մարտի 11-ին հրավիրվեց կուսակցական ակտիվի խորհրդակցություն, որի ժամանակ հանրապետության ամբողջ վերնախավը քննարկեց մարտի 9-ին Մոսկվայում տեղի ունեցած վերոհիշյալ խորհրդակցության առաջարկությունները: Զեկուցող Կարեն Դեմիրճյանը նշեց, որ Խորհրդային Հայաստանում մեծ ոգևորությամբ է ընդունվել ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոյի տված հանձնարարությունը՝ ապահովել Լեոնային Ղարաբաղի ինք-

<sup>237</sup> Известия, № 71, 11. 03. 1988.

<sup>238</sup> Правда, 10. 03. 1988.

<sup>239</sup> ՀԱԱ, ֆ. 488, ց. 57, գ. 77, թ. 46, 49, 52:

նավար մարզում կուտակված պրոբլեմների, մարզի շուրջ ազգամիջյան հարաբերությունների սրման պատճառների խոր ու համակողմանի բացահայտումը, համապատասխան առաջարկությունների մշակում և դրանց պատրաստ լինելուն պես ներկայացնել ԽՄԿԿ կենտկոմի և ԽՍՀՄ կառավարության քննարկմանը: Կ. Դեմիրճյանը առաջարկեց կուսակցական աշխատանքը կազմակերպել Մ. Գորբաչովի դիմումի ու ԽՄԿԿ կենտկոմի խորհրդակցության նյութերի պահանջներով և միջոցներ ձեռնարկել հանրապետության վիճակի բարելավման համար: Նա համոզմունք հայտնեց, որ հայ ժողովուրդը քաղաքական բարձր գիտակցություն կդրսևորի<sup>240</sup>:

Մեկ շաբաթ հետո՝ մարտի 17-ին, Լեռնային Ղարաբաղի կուսակցության մարզկոմը որոշում կայացրեց պաշտպանել մարզխորհրդի փետրվարի 20-ին ընդունած որոշում: Արձագանքելով այդ խիզախ քայլին, ամսի 19-ին Կինոյի տանը տեղի է ունենում «Ղարաբաղ» կոմիտեի նիստը, որին մասնակցում են 700 հոգի, 3000 հոգի էլ դրսում լսում էին բարձրախոսով: Այդ ժողովի վերաբերյալ ՊԱԿ-ի նախագահ Մ. Յուզբաշյանի Հայկոմկուսի կենտկոմ ուղարկած հաղորդման մեջ նշված է, որ միջոցառումը բացել է Ի. Մուրադյանը: Ապա ելույթի համար խոսքը տրվել է «Ղարաբաղից եկած ընկերոջը», որն առանց ներկայանալու հայտարարել է. «Եթե մենք Ղարաբաղում այսպես աշխատանք կատարենք, ինչպես դուք այստեղ, մենք ոչնչի չենք հասնի»<sup>241</sup>: Հետո ելույթ է ունենում Իգոր Մուրադյանը, որը բարձր է գնահատում մարտի 17-ին ԼՂԻՄ կուսակցության մարզկոմի ընդունած որոշումը, սակայն ցավում է, որ այն արձագանք չի գտել Մոսկվայի կողմից:

Նա սխալ է համարում մարտի 9-ի ԽՄԿԿ կենտկոմի որոշումը և առաջարկում է Արցախի հիմնահարցի վերաբերյալ մշակել կոնկրետ ծրագիր: Նաև արտահայտում է այն միտքը, թե Մոսկվան, անկասկած, պլանավորել է Հայաստանում և Արցախում մեր շարժումը ոչնչացնել: Արցախահայերը չեն հավատում ոչ Մոսկվային, ոչ կենտկոմին, ոչ էլ ռուս ժողովրդին: Նա իր ելույթի վերջում

<sup>240</sup> Սովետական Հայաստան, թ. 61, 13. 03. 1988:

<sup>241</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 12, թ. 156:

ներկայացրել է 10 կետից բաղկացած «Ղարաբաղ» կոմիտեի ծրագիրն ու ԽՄԿԿ կենտկոմից պահանջել դադարեցնել հերյուրանքները հայ ժողովրդի և ղարաբաղյան շարժման հասցեին, վստահ հայտարարելով, որ Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելը ո՛չ ծայրահեղական է և ո՛չ էլ ազգայնամոլական: Նա առաջարկեց սուվագայիթյան ջարդերը հանգամանորեն պարզաբանելու համար ստեղծել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողով, պահանջել «Պրավդայում» և «Իզվեստիայում» հրապարակել ԼՂԻՄ մարզկոմի պլենումի որոշումը, նպատակահարմար գտնել, որ Հայկական ԽՍՀ-ն պաշտոնապես արտահայտի իր վերաբերմունքը ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելու հարցին:

Հարկավոր էր պաշտոնապես ճանաչել ղարաբաղյան շարժումն և հատուկ ծրագիր ընդունել՝ փախստական հայերին ԼՂԻՄ-ում, իսկ սուվագայիթից փրկվածներին իրենց ցանկացած տեղում վերաբնակեցնելու համար, ինչպես և մշակել ԼՂԻՄ-Հայաստան մշակութային կապերի ծրագիր, բողոք ներկայացնել Ադրբեջանի կողմից հայկական որոշ տարածքների նկատմամբ ունեցած նկրտումների առթիվ: Իգոր Մուրադյանը առաջարկեց Արցախի հարցին անդրադառնալ կոչով ու դիմել աշխարհի բոլոր երկրներին, կառավարություններին, խորհրդարաններին և հասարակական կազմակերպություններին: Նրա այդ ծրագրի օգտին ժողովականները քվեարկել են միաձայն<sup>242</sup>:

Ի պատասխան, թե՛ կենտրոնական և թե՛ հանրապետական լրատվամիջոցները շարունակում էին վարկաբեկել հայ ժողովրդի շարժումը: Առանձնապես ակտիվ էր կուսակցական մամուլը: Մարտի 20-ին տեղի ունեցած ՀԿԿ կենտկոմի բյուրոն քննարկելով

---

<sup>242</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 12, էջ 157: Նիստում ելույթ են ունեցել Գ. Սաֆարյանը, Ս. Սարգսյանը, Ա. Հովհաննիսյանը, Հ. Իգիթյանը, Ռ. Ղազարյանը, Վ. Ենգիբարյանը, Հ. Հակոբյանը, Վ. Բարխուդարյանը, Վ. Սարուխանյանը, Մ. Սարգսյանը, Կ. Նահապետյանը, Լ. Աղալովյանը, Ս. Կապուտիկյանը և Զ. Բալայանը, որոնք պաշտպանել են Իգոր Մուրադյանի առաջ քաշած ծրագրային պահանջները: (նույն տեղում, թ. 158–160):

«Հանրապետությունում իրավիճակը նորմալացնելու անհետաձգելի միջոցառումները», նշում է, թե իբր «Ղարաբաղ» կոմիտեն «դիմում է սպառնալիքների ու շանտաժի, հարձակումներ է թույլ տալիս կուսակցական ու սովետական մարմինների հասցեին»<sup>243</sup>, որը բոլորովին չէր համապատասխանում իրականությանը: Դա միայն առիթ էր նյութեր դալել «Ղարաբաղ» կոմիտեի դեմ:

Հաջորդ օրն էլ «Պրավդայում» տպագրվեց Յու. Առաքելյանի, Զ. Կադիմբեկովի և Գ. Օվչարենկոյի «Հույզեր և բանականություն. Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձությունների մասին» սադրիչ հոդվածը, որը հայերեն հրապարակվեց «Սովետական Հայաստան» թերթի մարտի 23-ի համարում: Մարտի 21-ին Հայաստանի գրողների միությունը անմիջապես քննարկելով այդ հոդվածը, այն բնորոշեց որպես քաղաքական կեղծիք և ղարաբաղյան հիմնահարցը աղավաղող փաստաթուղթ:

Նշվեց, որ հոդվածի հեղինակները թաքցնում էին Սումգայիթի ջարդը նախապատրաստված լինելը, «դատապարտում» էին Երևանում տեղի ունեցող խաղաղ հանրահավաքներն ու շփոթության մեջ գցում խորհրդային ողջ ժողովրդին: Գրողների միությունը պահանջում է հոդվածի հեղինակներին ոչ միայն կուսակցական խիստ պատասխանատվության ենթարկել, այլև քրեական գործ հարուցել նրանց նկատմամբ: Գրողները Հայկոմկուսի կենտրոնից պահանջել են մերժել մեղադրանքը ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ հանրապետության կուսակցական և պետական ղեկավարության նկատմամբ: Գրականության գործիչները միանգամայն դրական և արդարացի են գնահատել ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվար-մարտյան որոշումները<sup>244</sup>:

Այդ՝ «Պրավդայում» հրատարակված հոդվածը, իհարկե պատրաստվել է կենտրոնական իշխանությունների պատվերով: Հոդվածի հեղինակները, իբրև պարզաբանում էին, թե ինչ էր կատարվում Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ ու հանգել նրան, որ

---

<sup>243</sup> Բյուրոն այդպես էլ չորակեց սումգայիթյան ջարդերը որպես ցեղասպանություն:

<sup>244</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 663, թ. 2-4:

արցախյան պայքարի մասնակիցների մոտ «տեղական շահերը գերադասվել են պետականից»: Հոդվածի հեղինակներն խորհում էին, թե քննարկվող հարցը «ամենաբարդն է Անդրկովկասի ժողովուրդների ազգամիջյան հարաբերություններում»: Երկու հանրապետությունների միջև վեճերը հասել էին նրան, որ մոռացության էին տրվել կոմունիստների ազգային քաղաքականության պաշտոնական սկզբունքները:

Հեղինակները փորձելով ստվեր նետել ղարաբայյան ազատագրական պայքարի վրա՝ պնդում են, թե Արցախում իրադարձությունները գերաճել են «ազգամիջյան թշնամանքի դրսևորումների»: Ոչ օբյեկտիվ գնահատական է տրվել նաև սումգայիթյան ցեղասպանությանը: Հեղինակների մեկնաբանությամբ, այդ քաղաքում իբր թե «քրեական տարրերը [պարզապես] կողոպուտի նպատակով ներխուժել են որոշ բնակարաններ, ուր հայեր էին ապրում»: Հետո եզրակացվում էր, թե այդ ամենը իբր չէր կարող «սասանել ազերի և հայ ժողովուրդների բարեկամությանը»: Սա, իրոք, ծիծաղելի է հենց «Պրավդայի» համար, մի թերթ, որը պարտավոր էր լինել ճշմարտախոս և արդարամիտ: Հայաստանում այդ հոդվածն ընդունվեց ցասումով: Բազմաթիվ դիմումներ ուղարկվեցին խմբագրություն, որոնց հեղինակները պահանջում էին պատասխանատվության ենթարկել հոդվածի հեղինակներին:

1988 թ. մարտի 22-ին Կարեն Դեմիրճյանը ելույթ ունենալով հեռուստատեսությամբ, փորձեց մեղմել հայ ժողովրդի վրդովմունքը: Այդ նույն օրը մամուլում հրապարակվեց Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի որոշումը հանրապետության քաղաքներում և շրջաններում քաղաքացիների նախաձեռնությամբ կազմակերպվող ժողովների և այլ զանգվածային միջոցառումների անցկացման ժամանակավոր կանոնները<sup>245</sup>, որն ուղղված էր ժողովրդական շարժման դեմ: Իշխանությունները փորձում էին այդ որոշումով իրենց հսկողության տակ առնել հանրահավաքներն ու փողոցային երթերը: Դրան հաջորդեց մարտի 23-ին տեղի ունեցած ՀԿԿ կենտրոնի բյուրոյի նիստը, որը քննարկելով «Ղարաբաղ» կոմիտեն անօ-

<sup>245</sup> Սովետական Հայաստան, թ. 70-71, 24. 03. 1988:

րեն ճանաչելու մասին հարցը, հայտարարեց, որ այդ կազմակերպությունը չի համապատասխանում Հայկական ԽՍՀ Սահմանադրությանը և գործող օրենսդրությանը, կանգնած է սխալ ուղու վրա և հակասում է ժողովրդի շահերին: Բյուրոն որոշել է.

1. «Ղարաբաղ» կոմիտեն ճանաչել անօրեն և դադարեցնել նրա գործունեությունը

2. Հավանություն տալ այդ հարցի վերաբերյալ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի որոշման նախագծին<sup>246</sup>:

Հասկանալի է, որ 1988 թ. մարտի 23-ին ու 24-ին Երևանում և Բաքվում ձևակերպված երկու վճիռները՝ «Ղարաբաղ» և «Կռունկ» կոմիտեները արգելելու մասին, ընդունվել են Մոսկվայի պահանջով: Չէ որ, երբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը հատկապես մարտի 23-ին քննարկեց «Լեռնային Ղարաբաղի, Ադրբեջանական և Հայկական ԽՍՀ-ների իրադարձությունների առթիվ միութենական հանրապետությունների դիմումներին առնչվող միջոցառումների մասին» հարցը, ընդունված որոշման մեջ նշվեց, որ ներկա զարգացումները բացասաբար են ազդում երկրի կյանքի վրա: Անթույլատրելի է անվանվել, երբ ազգային-տարածքային կարևոր հարցերը փորձում են լուծել պետական իշխանության մարմինների վրա ճնշում գործադրելով, հույզերի և կրքերի բորբոքման, ինքնազուլի կազմավորումների ստեղծման մթնոլորտում:

Այդ որոշումը Հայաստանի և Ադրբեջանի Գերագույն խորհուրդներին առաջարկեց «արմատապես բարելավել բնակչության շրջանում տարվող մասսայական-քաղաքական և դաստիարակչական աշխատանքը՝ լենինյան ազգային քաղաքականության իրագործման և բարեկամության ամրապնդման ուղղությամբ»: ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը թելադրեց պատրաստել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տնտեսական և սոցիալ-մշակութային

---

<sup>246</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 21, թ. 47: 1988 թ. մարտի 24-ին Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի որոշումով արգելվում է «Կռունկը»: Մոսկվայից թելադրված նույն սցենարով արգելվեցին ինչպես «Ղարաբաղ» կոմիտեն, այնպես էլ «Կռունկը», որը լայն բողոք առաջ բերեց որջ Հայաստանում՝ Արցախով հանդեժ, և սփյուռքի շրջանում:



բազմաթիվ հարցերի լուծմանն ուղղված միջոցառումներ: Միևնույն ժամանակ ԽՍՀՄ ՆԳՆ-ը պահանջեց կարգ ու կանոն հաստատել երկու հանրապետություններում<sup>247</sup>: ՀԿԿ կենտկոմը կուսակցական կազմակերպություններից պահանջում էին դատապարտել ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշումը՝ այն գնահատելով որպես հակախորհրդային, հակաժողովրդական և ազգայնամուլ:

Եվ նույն կենտրոնը՝ մարտի 24-ին ԽՄԿԿ ԿԿ և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի կայացած «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման 1988-1995 թթ. միջոցառումների մասին» որոշմամբ 400 մլն ռուբլի հատկացրեց Ադրբեջանին՝ ԼՂԻՄի տնտեսությանը իբր թե զարկ տալու համար: Նույն ժամանակ ձերբակալվեց ու հայրենիքից արտաքսվեց Պարոյր Հայրիկյանը: Որպես հետևանք, իր բողոքը և մարտի 17-ի որոշումը ներկայացնելու համար Արցախից Մոսկվա մեկնեց նոր պատմիրակությունը: Կենտրոնական մամուլն էլ ավելի կատաղի և կողմնակալ վերաբերմունք դրսևորեց արցախյան զարգացումների նկատմամբ:

Անկասկած, արցախահայությունը չընդունեց Ադրբեջանին միլիոններ տրամադրելու կենտրոնական իշխանության այդ որոշումը: Երբ քննարկվում էր նրա նախագիծը, մարզային իշխանությունները և մասնագետները պնդեցին, որ Արցախի բարձրացրած հարցը քաղաքական է և ոչ թե տնտեսական: Ներկա գտնվող Ադրբեջանի Նախարարների խորհրդի նախագահ Այազ Մութալիբովին ուղղակի ասացին, որ մերժում են, որովհետև այդ դրամը պետք է տրվի Արցախին, այլ ոչ թե Բաքվին<sup>248</sup>:

Արցախի համար առաջարկված այդ ծրագրում տեղ էր հատկացված նաև Հայկական ԽՍՀ-ին, որը համագործակցելով Ադրբեջանական ԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի հետ, պետք է մասնակցեր Արցախի զանազան ոլորտներում կուտակված խնդիրների լուծմանը: Այդ որոշումն ընդունվելուց հինգ ամիս անց, Հայաստանի Նախարարների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանը Արմենպրեսի թղթակցի

<sup>247</sup> Սովետական Հայաստան, թ. 70–71. 24. 03. 1988:

<sup>248</sup> ԼՂ Հանրապետություն, 28. 03. 1998:

հետ ունեցած զրույցում նշել է, որ Շուշիում, Հաղորություն և Մարտունիում Հայաստանի կողմից երեք վերահեռարձակող կայանների տեղադրման շնորհիվ այժմ Հայաստանի հեռուստատեսության առաջին ծրագրի հաղորդումները ընդունվում են ԼՂԻՄ-ի գրեթե բոլոր շրջաններում, որից օգտվում են բնակչության ավելի քան 80 տոկոսը: Ստեփանակերտի ռադիոհեռարձակիչ ցանցը սկսեց ընդունել Հայաստանի ռադիոհաղորդումները, կազմակերպվում է Երևան-Գորիս-Ստեփանակերտ նոր փոստուղի, ավելի քան երեք անգամ մեծացել է Երևանի և Արցախի շրջանների միջև ուղղակի միջքաղաքային հեռախոսականչերի կապերը: Նախատեսված էր լայն թափ հաղորդել բնակարանաշինությանը, մեծ աշխատանքներ կատարել Արցախի պատմության ուսումնասիրման և մշակույթի հուշարձանների վերականգնման ուղղությամբ և այլն<sup>249</sup>:

\*  
\* \*

Մինչ վերոնշյալ որոշումների ընդունումը, վերակառուցման գլխավոր գաղափարախոսներից Ա. Յակովլևը մարտի 21-ին հանդիպելով Անդրեյ Սախարովի հետ, ասել է, թե «չի կարելի որևէ բան փոխել ազգային-տարածքային կառուցվածքում, որովհետև դա, ընդհանրապես, անսովոր և վտանգավոր նախադեպ է»: Նա ավելացրել է, որ ԽՍՀՄ-ում շատ «տաք կետեր» կան, որտեղ ցանկացած պահի կարող են բորբոքվել ազգային կրքեր<sup>250</sup>: Հետևաբար՝ ԼՂԻՄ-ի մարտի 17-ի կուսակցական վճիռը սատարել մարզխորհրդրդի դիրքորոշմանը չի պիտի աջակցվեր կենտրոնի կողմից:

Ինչպես երևում է, կենտրոնի բարձրագույն պաշտոնյաները սարսափում էին «տաք կետերից»: 1988 թ. մարտի 22-ին նրանք բանակ են ուղարկել Երևան՝ Թատերական հրապարակը շրջափակելու և մարտի 26-ի հավաքը արգելելու համար: Կենտրոնի հունով ընթացող ՀԿԿ կենտկոմի բյուրոն նմանապես բնորոշեց

<sup>249</sup> ԼՂ Հանրապետություն, 17. 09. 1988:

<sup>250</sup> Правда, 25. 03. 1988.

«Ղարաբաղ» կոմիտեի գործունեությունը որպես անօրեն և ԳԽ նախագահության որոշումով դադարեցվեց նրա գործունեությունը: Մինևույն ժամանակ արգելվեց մարտի 26-ին նշանակված հանրահավաքը, իսկ մարտի 25-ին քրեական գործ է հարուցվել Պարույր Հայրիկյանի դեմ, նրան ձերբակալում և մեղադրանք են ներկայացնում արտաքսելով Խորհրդային Միությունից<sup>251</sup>: Որպես պատասխան՝ նույն մարտի 26-ին Երևանում իրագործվեց «մեռյալ քաղաք» բոյկոտի ձևը:

«Ղարաբաղ» և «Կռունկ» կոմիտեների արգելումը լայն բողոք առաջացրեց Հայկական ԽՍՀ-ում, Լեռնային Ղարաբաղում և սփյուռքում: Այդ նույն օրերին հեռուստալրագրող Հ. Բորովիկի հետ մարտի 28-ին Երևանում տեղի ունեցած հանդիպման ժամանակ Սիլվա Կապուտիկյանը հայ ժողովրդի անունից խիստ անհանգըստություն է հայտնում «Ղարաբաղ» և «Կռունկի» կոմիտեների գործունեությունը արգելելու առթիվ: «Վերջերս,– իր խոսքը նրան ուղղեց հայ բանաստեղծուհին,– վերացվեց Ղարաբաղի հարցը տնօրինող մեր հանրապետական կոմիտեն, և պարզ է, որ կոմիտեականները դեռ հնարավորություն կունենան ազատ ու հանգիստ շարունակելու իրենց առօրյա գործն ու կյանքը: Իսկ ի՞նչ պիտի կատարվի Ղարաբաղի այդ նույն կոմիտեի անդամների հետ: Մենք չենք մոռացել այնտեղ տասնամյակների մոլեգնած շովինիզմի և բռնությունների դեպքերը: Ուրեմն, մենք պարտավոր ենք սատար կանգնել

---

<sup>251</sup> Պ. Հայրիկյանը ծնվել է 1949 թ. Երևանում, ունի միջնակարգ կրթություն, չորս անգամ դատվել է, որից 1970 և 1976 թթ. հակախորհրդային գործունեության համար: 1988 թ. մայիսի 22-ին Հոկտեմբերյանի շրջանում տեղի է ունեցել հանրահավաք Սարդարապատի հաղթանակի 70-ամյակին նվիրված, որին ներկա էին շուրջ 250.000 մարդ: Այստեղ ելույթ ունեցողները պահանջել են ազատել Պարույր Հայրիկյանին (ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 14, թ. 78): Մինչ այդ, մայիսի 17-ին, Մատենադարանի մոտ տեղի ունեցած հանրահավաքում Աշոտ Մանուչարյանը իր ելույթում նշել է, որ Պարույր Հայրիկյանին ձերբակալելը դեմոկրատիայի կոպիտ խախտում է և պահանջել է ազատել նրան (նույն տեղում, թ. 60–61):

մեր արյունակիցներին և վերին ղեկավարության միջամտությունն ապահովել, որպեսզի Ղարաբաղն այս անգամ ևս չդառնա դաժան հաշվեհարդարի ասպարեզ»<sup>252</sup>:

Խիստ անհանգստացած աշխարհասփյուռ հայությունը հավասարապես բողոքներ էր ուղարկում Միության իշխանություններին որից պահանջում էր հրաժարվել հակաժողովրդական քայլերից ու սատար կանգնել արցախյան պայքարին: 1988 թ. մարտի 31-ին Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Կառլեն Դալլաքյանը ընդունեց Երևանի բուհերում սովորող սփյուռքի մի խումբ ուսանողներին: Այդ հանդիպման առանցքային հարցը եղել է Արցախի խնդրի շուրջ ծավալված իրադարձությունները: Դրանից մի քանի օր առաջ այդ ուսանողները հանդիպել էին կրթության և գիտության նախարար Լ. Ղարիբջանյանի հետ և այնժ բարձր տրամադրությամբ եկել էին Կ. Դալլաքյանի մոտ: Ըստ ուսանողների բացատրության, վերջինը դժգոհությամբ է ընդունել իրենց և ուղղակի նշել է, որ Արցախի հարցը ներկայումս բարձրացնելը «ժամանակավրեպ է» և վնասում է խնդրի լուծմանը, որով հետև կառավարությունը «պատրաստ չէ դրան»:

Ուսանողները պնդում էին, որ նման «ժամանակավրեպությունը» հորինված է և փորձ է հանդիսանում սփյուռքը հայրենիքից տարանջատելու համար: Ըստ էության Կ. Դալլաքյանը սփյուռքահայ ուսանողների հետ զրույցի ժամանակ անաչառ չի գնահատել սուլճայիթյան ցեղասպանությունը: Չէ՞ որ Սումգայիթում իրագործվել էր հրեշավոր ոճրագործություն, ինչի մասին լռելը կամ դրան ճիշտ գնահատական չտալը նշանակում է «լռելյայն դուռը բացել սուլճայիթների առաջ»: Ուսանողները սխալ էին համարում հանրահավաքներում Վազգեն Ա-ի, Ս. Կապուտիկյանի, Ս. Սարգսյանի և մյուսների ելույթները «Հայրենիքի ձայն» թերթում չտպագրելը: Կ. Դալլաքյանին մեղադրում էին նաև նրանում, որ նա ուսանողներին հարցրել է. «Ինչու՞ եք կարծում, որ անպատճառ մեր սերնդի կամ ձեր սերնդի առջև է դրված Արցախի հարցի լուծումը»: Ուսանող-

---

<sup>252</sup> Տե՛ս Բ. Ուլուբաբյան, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Եր., 1997, էջ 61:

ները գնահատել են դա որպես սխալ մտածողություն: Սկիյուքի ուսանողները համոզված էին, որ «թե արտասահմանում, թե մեր վերածնված հայրենիքում, դժբախտաբար, կան կյանքի նոր ընթացքին հակասող անհատներ և ուժեր, որոնք այլ կերպ են մեկնաբանում արցախյան իրադարձությունները»<sup>253</sup>:

Այդ նույն օրերին, ապրիլի 3-ին, Երևանի պետական համալսարանի աշխատողներն և ուսանողները դիմում հղեցին հայրենակիցներին, որտեղ նշել են կոմիտեի արգելման մասին: Ուրեմն այսօրվանից համայն հայ ժողովուրդը պիտի լինի կոմիտե: Արդեն տասը օր է Արցախը գտնվում է գործադուլի մեջ: Համալսարանը կոչ էր անում ապրիլի 5-ից սկսել համազգային գործադուլը<sup>254</sup>:

Ինչպես տեսնում ենք, 1988 թ. մարտի վերջից Ղարաբաղյան շարժումը թևակոխել էր մի նոր փուլ: Համաժողովրդական բնույթ ընդունած շարժումը պնդում էր, որ երկրի բարձրագույն իշխանությունները պետք է լուծեն Արցախի խնդիրը ժողովրդական պահանջներին համապատասխան: Սակայն հանրապետության վերադաս մարմինները այդ պահանջի նկատմամբ մնացին անտարբեր:

\*  
\* \*

Հանրահավաքներն ու միտիզները սկսեցին նոր թափ առնել: Երևանի Թատերական հրապարակում ծավալվող իրադարձություններից խիստ զարմացել էին մոսկվացի լրագրողները: «Պրավդայի» ապրիլի 2-ի համարում տպագրված «Իսկ ինչ էր դա» հոդվածի հեղինակ Ա. Չերնենկոն ապշել էր այդ կիզակետում տեղի ունեցող բազմահազարանոց հանրահավաքներից, բուռն բանավեճերից, տարածվող թռուցիկներից, դիմումներից, կուսակցական և պետական մարմիններին ուղարկված բաց նամակներից:

Մոսկվայի լրագրողը գուցե առաջին անգամ էր բախվում նման երևույթի հետ, որոնք աննախադեպ էին ԽՍՀՄ հասարա-

<sup>253</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 1, գ. 39, թ. 3–4:

<sup>254</sup> Նույն տեղում, ֆ. 1, ց. 57, գ. 13, թ. 7:

կական կյանքի համար: Հանդիպելով ակադեմիկոս Գևորգ Ղարիբջանյանին, վերջինս նրան բացատրում է, թե ինչպես են մեկ մղումով պարուրված հազարավոր մարդիկ կանգնում կողք կողքի և պայքարում միևնույն նպատակի համար: Մանրամասն բացատրում է ԼՂԻՄ-ի պրոբլեմը: Ակադեմիկոսն ընդգծում է, որ հրապարակայնությունն ու դեմոկրատացումը շատ հզոր զենք են, որոնք ուշադիր և զգույշ վերաբերմունք են պահանջում: Նա հավելում է, որ հայ մտավորականը, իսկապես, թերագնահատել է իր վիթխարի հոգևոր դերը վերակառուցման մեջ<sup>255</sup>:

Իրոք, հանրապետությունում մարդիկ ապրում էին հեղափոխական կյանքով, նրանք դառնում էին ավելի գործնական և վճռական: «Պրավլայի» ապրիլի 4-ի համարում հրապարակված Ա. Վասիլկովի և Գ. Օվչարենկոյի «Սադրիչները. մեկ անգամ ևս Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ ծավալված իրադարձությունների մասին» հոդվածը հերթական անգամ կրակի վրա յուղ լցրեց: Հոդվածի հեղինակները չէին վրդովվում Սումգայիթի ելուզակների հարձակումներից ու տեղի հայերի անպաշտպան թողած վիճակից: Նրանց չէին վրդովվում, որ խորհրդային հզոր պետությունը որևէ կերպ չկասեցրեց հրոսակախմբերի սանձարձակ սպանություններ ու կողոպուտը:

Փոխարենը նրանք պնդում էին, թե Հայաստանում որոշ մարդիկ փորձում էին թերություններից օգտվել և իրենց համար քաղաքական կապիտալ ստեղծել, բորբոքել ազգայնական կրքեր, արատավորել երկրում վերակառուցման ընթացքը: Առանձնապես մեղադրում էին արդեն իսկ կալանավորված Պարույր Հայրիկյանին և Իգոր Մուրադյանին<sup>256</sup>, որոնք իբր սադրանքներ էին հորինում: Նման պնդումներն, ու շատ իրավացիորեն, դիպչում էր հայ ժողովրդի զգացմունքներին: Այդ հոդվածն ավարտվում է «Պարույր Հայրիկյանի իսկական դեմքն այսօր պարզ է ամենքին» դատարկախոսությամբ<sup>257</sup>:

---

<sup>255</sup> Տե՛ս Սովետական Հայաստան, թ. 80, 03. 04. 1988:

<sup>256</sup> Նույն տեղում, թ. 81, 05. 04. 1988:

<sup>257</sup> Նույն տեղում, թ. 83, 07. 04. 1988:

Ա. Վասիլկովի և Գ. Օվչարենկոյի այցն ու դատողությունները բացատրվում էին մեկ այլ հանգամանքով: Նրանց հոդվածից մեկ օր առաջ՝ 1988 թ. ապրիլի 3-ին, Երևանի Պետական համալսարանի դասախոսական կազմն և ուսանողները դիմեցին հասարակությանը՝ ապրիլի 5-ից համազգային գործադուլ սկսելու կոչով: Այդպես որ նույն ամսի 7-ին տեղի ունեցած հանրապետության կուսակցական-տնտեսական ակտիվի ժողովում թե՛ զեկուցող Կ. Դեմիրճյանը և թե՛ մյուս հռետորները ամեն կերպ ձգտում էին աշխատավորներին համոզել և նրանց հեռու պահել ժողովրդական շարժումից: Բանը հասել էր նրան, որ հայոց ցեղասպանության 73-ամյակի կապակցությամբ հանրապետության լրատվամիջոցները ամոթաբար որևէ հոդվածներ չհրապարակեցին:

ԽՍՀՄ-ում ազգային հարցի գիտակները խոսում էին Լենինի և կոմկուսի անունից, ցիտատներ ընտրում Լենինի երկերից: Սակայն երկրի տարբեր անկյուններում մշտապես տեղի էին ունենում ազգային բախումներ: Օրինակ, Խորհրդային Ադրբեջանի ճիրաններում ճզմվող Արցախում, Անդրեյ Սախարովի բնորոշմամբ, «տեղ են գտել ազգային խտրականության թելադրանքի, հայկական մշակույթի սահմանափակման բազմաթիվ փաստեր»<sup>258</sup>: Մեծ գիտնականը բացահայտեց խորհրդային բարձրագույն իշխանությունների կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հակասահմանադրական և վարկաբեկիչ գործողությունները: «Խորհրդային իշխանությունը,– գրել է նա,– մարմնի միջնորդության նորմալ, սահմանադրորեն քննարկման փոխարեն սկսեցին գերազանցապես հայերին ուղղված խուսանավումներն ու հորդորները, միաժամանակ մամուլում և հեռուստատեսությամբ երևան եկան հաղորդումներ, որոնցում իրադարձությունները շարադրվում էին ոչ լրիվ ու միակողմանի, իսկ հայ բնակչության օրինական խնդրանքները սկսեցին անվանել ծայրահեղական, և կարծես թե նախօրոք կանխորոշվում էր բացասական պատասխանը»<sup>259</sup>:

---

<sup>258</sup> Андрей Сахаров о Нагорном Карабахе, Ер., 1996, с. 5.

<sup>259</sup> Նույն տեղում:

Հայտնի իրավապաշտպանը հույս ուներ, որ «երկրի ղեկավարությունը, քաղբյուրոն, ԽՄԿԿ կենտկոմն ու Գերագույն խորհուրդը կգտնեն իրադրությանը համապատասխան վճռական, ժողովրդավարական և սահմանադրական միջոց»<sup>260</sup>: Ցավոք, երկրի ղեկավարությունը չգտնվեց այդ պահանջվող բարձրության վրա: Ընդհակառակը, Միությանը տարան դեպի կործանում:

Իր հերթին, երբ 1988 թ. մարտի 26-ին նշանակված հանրահավաքը՝ հաշվի առնելով Թատերական հրապարակը խորհրդային բանակի զինվորներով շրջափակելու հանգամանքը չեղյալ հայտարարվեց, «Ղարաբաղ» կոմիտեն ընդունեց նոր ռազմավարություն: Նա առժամանակ հրաժարվեց գործադուլից, հանրահավաքներից ու երթերից, բայց անցկացրեց «մեռյալ քաղաք» ցույցը:

ՊԱԿ-ի հաղորդումից իմանում ենք, որ ԼՂԻՄ-ի մարզկոմը՝ իր խորհրդին սատար կանգնելուց հետո, Արցախից նոր պատվիրակություններ էին ուղևորվում Մոսկվա, իսկ Հայաստանից հիմնավոր գրություններ ուղարկվում, որոնցում փաստարկվում էր մարզը Հայաստանի հետ վերամիավորվելու անհրաժեշտությունը<sup>261</sup>: Այդ իրադարձություններում առաջ է քաշվում քաղաքական հնարավոր լուծումների երեք տարբերակ. 1. ԼՂԻՄ-ը վերամիավորել Հայկական ԽՍՀ-ի հետ, 2. ԼՂԻՄ-ը միավորել ՌԽՖՍՀ-ի հետ, 3. ԼՂԻՄ կարգավիճակը փոխել և այն վերածել ինքնավար հանրապետության Ադրբեջանական ԽՍՀ կազմում: Սակայն մտավորականներն, ուսանողները, աշխատավորական կոլեկտիվները համոզված էին և պնդում, որ իրագործվի առաջին տարբերակը<sup>262</sup>, որը պաշտպանում էր նաև ողջ սփյուռքը:

1988 թ. ապրիլի 14-ին Երևանում անցկացրած ՀԿԿ քաղկոմի պլենումը նշել է, որ մայրաքաղաքի կյանքի վրա բացասական է ազդել վերջին երկու ամսվա քաղաքական իրադարձությունները: Ընդգծվել է, որ գործը բավականին հեռու է գնացել և վիճակը դարձել է որոշ չափով անկառավարելի: Կուսակցական ղեկավար-

<sup>260</sup> Андрей Сахаров о Нагорном Карабахе, с. 6.

<sup>261</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 13, թ. 58-60:

<sup>262</sup> Նույն տեղում, թ. 58:



ները չէին կարող կարգավորել իրավիճակը: Քաղկոմի առաջին քարտուղար Լ. Սահակյանը հայտարարել էր. «Մենք կարող ենք ներկա պայմաններում աշխատել միայն թույլ տրված սխալներն ուղղելու դեպքում: Փորձը ցույց է տալիս, որ ազգային հարցը կարելի է լուծել, եթե ժողովուրդները միավորված լինեն: Բոլոր աշխատողները պետք է հակված լինեն դեպի աշխատանքը և ուղղված լինեն դեպի ԽՄԿԿ 19-րդ կոնֆերանսը»<sup>263</sup>:

Ելույթ ունեցած բոլոր կոմունիստներն էլ պահանջում էին վերականգնել կուսակցական կարգապահությունը, իսկ թե ինչ էր տեղի ունենում մայրաքաղաքի հասարակական կյանքում, դա երկրորդական էր: Մինչդեռ, մայիսյան իրադարձությունները ցույց տվեցին, որ ժողովրդական շարժումը մեծ ազդեցություն ուներ հանրապետության քաղաքական ոլորտի վրա. «Ղարաբաղ» և «Կռունկ» կոմիտեներին լուծարելու պաշտոնական որոշումները հասարակության համար հավասար էին գրոյի: Արցախում «Կռունկը» մայիսի 8-ին միավորվել էր 1980-ական թթ. սկզբին ձևավորված Տնօրենների խորհրդի հետ, իսկ «Ղարաբաղ» կոմիտեն սկսել էր թափով գործել մայիսի կեսերից: Ինչ վերաբերում է իշխող կառավարական ուժերին, ապա նրանք չկարողացան հետամուտ լինել իրենց ընդունած որոշման կատարմանը:

1988 թ. ապրիլի 26-ին կենտրոնական հեռուստատեսությամբ ցուցադրվեց Հենրիխ Բորովիկի «Լեռնային Ղարաբաղ. Բարձրաձայն խորհում» հաղորդումը՝ նվիրված արցախահայության ազատագրական պայքարին: Հեռուստադիտողների ցանկությամբ այն կրկնվեց մայիսի 12-ին: Ղարաբաղյան հիմնահարցի մասին այդ հաղորդումը, թերևս, Միությունում առաջին ճշմարիտ խոսքն էր, որը թե՛ Լեռնային Ղարաբաղի և թե՛ Խորհրդային Հայաստանի բնակչությունը ընդունեց գոհունակությամբ: Արցախից ու Հայաստանից Մոսկվա ուղարկված բազմաթիվ նամակներում և հեռագրերում շնորհակալություն էր հայտնվում Հ. Բորովիկին՝ Լեռնային

---

<sup>263</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 13, թ. 27:

Ղարաբաղի և Սումգայիթի ողբերգական իրադարձությունների մասին ճշմարիտը ասելու համար:

Մինչդեռ Ադրբեջանում կազմակերպվեց հակաբորովիկյան ցույցեր և հեռուստահաղորդումներ, եղան աղաղակներ և պնդումներ, թե իբր Հ. Բորովիկի հաղորդման մեջ սկզբունքային հարցը գնահատվել է սխալ դիրքերից: Այս ամենի արդյունքում, Ադրբեջանում, մանավանդ Շուշի քաղաքում, Կիրովաբադում, Մինգեչաուրում, Բաքվում տեղի ունեցող հանրահավաքները կրում էին բացահայտ հակահայկական բնույթ և ընթանում էին պանթուրքական լոզունգներով: Շուշիում թուրքերը սպառնում էին հաշվեհարդար տեսնել քաղաքի հայ բնակչության հետ:

1988 թ. մայիսի 16-ից սկսած երեք օրվա ընթացքում քաղաքի հայերի մեծամասնությունը վտարվում է քաղաքից, նրանց բնակարաններն և ունեցվածքը ամբողջովին թալանվում են: Շուշիում մնացած փոքրաթիվ ընտանիքները արտաքսվում են նույն թվականի սեպտեմբերի 18-ին: Լկտիացած լրատվամիջոցները փորձում էին հասարակությանը հավատացնել, թե հայերը իրենց քաղաքը լքել են ինքնակամ և որևէ բռնության չեն ենթարկվել<sup>264</sup>: Մինչդեռ հայերը Շուշիից հեռացել են թալանված, ջարդված, արնաշաղախ և խորապես ճնշված: Մայիսի 17-19-ին Բաքվում տեղի ունեցած բազմահազարանոց հավաքներում կոչեր էին հնչում պաշտպանել Շուշիում տեղի ունեցած հակահայկական գործողությունները: Միևնույն ժամանակ կոչեր էին հնչում հետևել այնտեղի ջարդարարների օրինակին և իրենց քաղաքներից արտաքսել բոլոր հայերին:

Որպես այդ նոդկալի իրավիճակին արձագանք, մայիսի սկզբին սոցիալիստական աշխատանքի հերոս Գառնիկ Մանասյանը կոչով դիմելով Միության սոցիալիստական աշխատանքի բոլոր հերոսներին, նշել է, որ Սումգայիթում տեղի է ունեցել ցեղասպանություն և այնտեղ ոչ մի հայ չի մնացել: Կոչ է անում Միության բոլոր հերոսներին բարոյապես և գործնականորեն աջակցել

---

<sup>264</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 3, գ. 49, թ. 50-60:

հայ ժողովրդին ու այդ մասին բողոքներ ուղարկել ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ<sup>265</sup>:

Ադրբեջանում սկիզբ առած հիստերիայի այդ նոր ալիքը չէր կարող անտեսվել հայ ժողովրդի կողմից: Հանրապետության բոլոր խոշոր բնակավայրերում տեղի էին ունենում ցույցեր և միտինգներ, որտեղ իշխանություններից պահանջում էին վերջ տալ նման բարբարոս քաղաքականությանը: Միաժամանակ հանրապետության անվտանգության և մյուս վարչական մարմիններից վիրավորանքներ էին հնչում հայ մտավորականության հասցեին: Ի պատասխան դրան՝ բանաստեղծ Արամայիս Սահակյանը բողոքի ձայն է բարձրացնում նման պահվածքի դեմ: Նա պահանջում է անաչառ մոտենալ կնճռոտ հարցերին<sup>266</sup>:

Եվ հայ ժողովրդի շարժումը աննկուն պաշտպանություն է գտնում աշխարհով մեկ տարածված մեր սփյուռքի կողմից: Հայաստանի ՊԱԿ-ի նախագահ Մ. Յուզբաշյանը 1988 թ. ապրիլի 28-ին ՀԿԿ կենտկոմին հաղորդել է, որ վերջերս Աթենքում հրավիրված Դաշնակցություն կուսակցության բյուրոն՝ անդրադառնալով ԼՂԻՄ հարցին, պաշտպանել է Երևանում տեղի ունեցած հանրահավաքներն ու հայտարարել, թե հայ ժողովուրդը ապրում է ազգային զարթոնք ու լիովին պաշտպանում է վերակառուցման դեմոկրատացման քաղաքականությունը<sup>267</sup>: Իսկ մայիսի 7-ին Իգոր Մուրադյանի և Վազգեն Մանուկյանի ստորագրությամբ հայերեն և ռուսերեն լեզուներով հայ ժողովրդին ուղղված թռուցիկում նշված է, որ նոր-նոր ենք համոզվում, թե ինչի է ընդունակ հայ ժողովուրդը: Մեր թշնամիները միշտ էլ ձգտել են մեր ազգից խլել նրա լեզուն: Այս պայքարում պետք է գնանք մինչև վերջ, երեխաներին տալ հայկական դպրոց և բոլոր ջանքերը գործադրել հայոց լեզուն պահպանելու համար<sup>268</sup>:

---

<sup>265</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 3, գ. 49, թ. 202:

<sup>266</sup> Նույն տեղում, ֆ. 1, ց. 87, գ. 14, թ. 34:

<sup>267</sup> Նույն տեղում, գ. 13, թ. 119:

<sup>268</sup> Տե՛ս հեղինակի արխիվ:

1988 թ. մայիսի 7-ին ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի Նախագահության դիմացը տեղի ունեցած հանրահավաքը քննարկելով Հայաստան եկող ազիտացիոն գնացքի հարցը<sup>269</sup>, ելույթ ունեցողները պահանջում են վերջ տալ միության իշխանությունների կազմակերպված այդ խեղկատակությանը: Սուս Սարգսյանը հայտարարում է, որ Հայաստան նման մի գնացք չի մտնելու, իսկ Համբարձում Գալստյանը ասում է, թե «իշխանությունները միշտ էլ խաբել են ժողովրդին, նույնիսկ չեն կատարել «Ղարաբաղ» կոմիտեի գրանցման վերաբերյալ իրենց խոստումը: Ընդհակառակը, հետո որոշում ընդունեցին այն լուծարելու մասին:

Վիկտոր Համբարձումյանը, խիստ հուզված, իր ելույթում հայտարարում է. մեր «Ակադեմիան միշտ էլ եղել է ժողովրդի հետ և ժողովրդի սպասումը շատ լավ ենք հասկանում, դրա համար էլ իմ աշխատանքային ընկերները խնդրել են, որպեսզի հանդես գամ հետևյալի մասին: Այդ տուրիստական գնացքը, որը, ըստ ենթադրության, պիտի ժամանի Երևան, չի գա այստեղ: Այն Թիֆլիսից հետ է շրջվել Բաքու»<sup>270</sup>: Հանրահավաքում Արցախում տեղի ունեցող իրադարձությունների մասին հանգամանորեն հաղորդում է Իգոր Մուրադյանը<sup>271</sup>: Քանի որ մայիսի 1-ին Երևանում ձերբակալվել էր Ց հոգի, Համբարձում Գալստյանը՝ իր երկրորդ ելույթով, հասարակության անունից պահանջում է ազատել նրանց<sup>272</sup>:

---

<sup>269</sup> Այդ ժամանակ խորհրդային պաշտոնյաները մտադրվել էին Բաքուն, Թիֆլիսն և Երևանը ուղարկել տուրիստական մի գնացք: Նրանում երթևեկող հրապարակախոսները, լրագրողները, դերասանները պետք է հանդես գային բնակչության առաջ, լինեին ձեռնարկություններում, հանդիպեին մարդկանց հետ և նրանց համոզեին հետ կանգնել իրենց պայքարից ու այսպիսով ամրապնդեին բարեկամական կապերը: Հայ մտավորականները դեմ էին այդ գնացքը Հայաստան մտնելուն:

<sup>270</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 18, թ. 71–74:

<sup>271</sup> Նույն տեղում, թ. 79:

<sup>272</sup> Նույն տեղում, թ. 79–80:

Օր օրի Թատերական հրապարակն ավելի մարդաշատ էր դառնում: Նրանք գոչում էին՝ «Ամո՛թ իշխանություններին», «Կեցցե՛ «Ղարաբաղ» կոմիտեն»: Նրանք բռնած ունեին հետևյալ լրզունգները. Ժողովրդավարության թշնամին՝ ժողովրդի թշնամին է, Հայ ժողովուրդը դեմոկրատիայի համար, Ավելի շատ ժողովրդավարություն, Ավելի շատ հրապարակայնություն, Արցախ-Ղարաբաղը ժողովրդավարության դրոշակակիրն է, Հրապարակայնությունն ու ժողովրդավարությունը վերակառուցման հարազատներն են, Սուվգայիթից փախստականներին Հայաստանում ապահովել բնակարանով ու աշխատանքով և այլն:

Իգոր Մուրադյանը իր ելույթում հայտարարում է «Այսօր մենք հասել ենք նրան, որ Լեռնային Ղարաբաղում արդեն դիտվում են Հայաստանից տրվող հեռուստահաղորդումները: Բայց, տեսեք, Լեռնային Ղարաբաղում պատմական հուշարձանների վերականգնումը պիտի իրագործեն ադրբեջանցիները, որը ծիծաղելի է: Ադրբեջանցիների համար նույնիսկ ընդունելի չէ Սուվգայիթից փախածներին տեղավորել Ղարաբաղում: Մինչդեռ բոլոր ջանքերը պետք է գործադրվեն նրանց բնակեցնել հենց Լեռնային Ղարաբաղում: Արցախցիների համար հաջորդ քայլը կլինի գենքի դիմելը: Ներկայումս մենք մի կարևոր խնդիր ունենք՝ պաշտպանել այն ժողովրդավարությունը, որը տրված է մեզ: Այսօր աշխարհը նայում է Հայաստանին և Լեռնային Ղարաբաղին: Ղարաբաղի հարցը պետք է լուծվի արդարացիորեն»<sup>273</sup>:

Այնուհետև ելույթ է ունենում արցախցի բանաստեղծ Գուրգեն Գաբրիելյանը, որը կոչ է անում բոլոր ուժերը կենտրոնացնել արցախահայության ազատագրական պայքարին աջակցելու համար:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող բ.գ.դ. Լևոն Տեր-Պետրոսյանը մայիսի 17-ին իր հարազատ հիմնարկի հարթակից առաջին անգամ հանդես գալով հանրահավաքում, իր վրա հրավիրեց բնակչության ուշադրությունը: Նա ավելի վճռական խոսեց մայիսի 20-ին տեղի ունեցած հանրահավաքում: Վերջինին նախապատրաստվել էին նաև իշխանությունները:

<sup>273</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 18, թ. 82-87:

Ներկա էին կուսակցական և պետական մարմինների աշխատողներ, հիմնարկ-ձեռնարկությունների տնօրեններ: Նախկինում հանրահավաքներից, ցույցերից, միտինգներից խուսափող պաշտոնյաները հիմա հրապարակում կանգնած էին ժողովրդի կողքին:

Նախօրեին, մայիսի 19-ին, Թատերական հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում Իգոր Մուրադյանը հայտարարել էր, թե Բաքվում տեղի ունեցող հանրահավաքներում պահանջում են լուծարել ԼՂԻՄ-ը, հայերին արտաքսել Ադրբեջանից, ազատել Սումգայիթի հանցագործներին: Նա բնակչությանը կոչ է անում պատրաստ լինել անհրաժեշտության դեպքում օգնության հասնել արցախցիներին: Նրանք անհանգստացած են, որ Երևանում տեղի ունեցող ցույցերը կարող է առաջ բերել Մոսկվայի հակազդեցությունը: Արցախցիները վստահ են, որ իրենք կարող են հաղթահարել բոլոր դժվարությունները: Այդ հպարտ ժողովուրդը որևէ մեկից կտոր հաց չի խնդրում:

Մենք իրավունք չունենք նրանց թողնել բախտի քմահաճույթին: Մենք պահանջում ենք հանրապետության լրատվամիջոցներից ամեն օր հաղորդումներ տալ Արցախում, Կիրովաբադում, Ադրբեջանի հայաշատ այլ վայրերում տիրող իրադարձությունների մասին: Ի. Մուրադյանը հայտարարում է՝ քանի որ հանրապետությունում սկսվել է զանգվածային գործադուլ, անհրաժեշտ է հանձնաժողով ուղարկել կուսակցության կենտկոմ և մի քանի պահանջներ ներկայացնել<sup>274</sup>:

Հետո լսափողին մոտեցած Աշոտ Մանուչարյանը հայտարարում է. Հանրապետության ղեկավարությունը չի պաշտպանում Արցախի պահանջները, դրանում կասկած չկա: Նման ղեկավարությունը Հայաստանին բացարձակապես հարկավոր չէ: Այսօր օրակարգի հարց է դարձել Ղարաբաղը, թե՞ Դեմիրճյանի պաշտոնը: Չպետք է մոռանալ. Արցախի փրկությունը բոլորիս համար սրբություն է<sup>275</sup>: Իսկ Վաչե Սարուխանյանը հայտարարում է, թե պետք է խուսափել գործադուլից և դասադուլներից, սակայն դրա

<sup>274</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 19, թ. 5-7:

<sup>275</sup> Նույն տեղում, թ. 7-8:

փոխարեն պետք է Մոսկվան հեղեղել բողոք-նամակներով: Աշխարհի հայությունը խիստ անհանգիստ է Ադրբեջանում պատանդ հանդիսացող հարյուր հազարավոր հայրենակիցների համար: Պետք է կենտրոնական իշխանություններին համոզել և հավաստիացնել, որ հայերը լինելով ինտերնացիոնալիստ ժողովուրդ, վճռական գործողությունների է դիմում հենց Մոսկվայի մեղքով: Բոլորին կոչ է անում գնալ աշխատանքի և Թատերական հրապարակում հավաքվել ամեն օր աշխատանքից հետո: Հրապարակը աղմուկով է դիմավորում Վ. Սարուխանյանի այդ կոչը<sup>276</sup>:

Այնուհետև ելույթներ ունեցան Սամսոն Ղազարյանը, Կարեն Սիմոնյանը, Վանո Սիրադեղյանը, դարձյալ Իգոր Մուրադյանը և ուրիշներ: Վանո Սիրադեղյանի խոսքը ուղղված էր Իգոր Մուրադյանի դեմ<sup>277</sup>, քանի որ կոմիտեն չէր հասկանում Ի. Մուրադյանի դիրքորոշումը: Հայտարարում է, թե կոմիտեի մեծամասնությունը կթողնի հրապարակը և կհեռանա: Այդ դեպքում ամբողջ պատասխանատվությունը կընկնի Իգոր Մուրադյանի վրա: Հրապարակում բարձրանում է աղմուկ և դժգոհություն<sup>278</sup>: Քանի որ Իգոր Մուրադյանը այդ ժամանակ հանձնաժողովի կազմում գնացել էր կենտկոմ, Վանո Սիրադեղյանը անկաշկանդ խոսում էր նրա դեմ և պահանջում հեռացնել կոմիտեից: Ապա մեկ ուրիշ ելույթ ունեցող գտնում է, որ Կ. Դեմիրճյանը պաշտոնից պետք է հեռանա իր ջրախմբով: Իսկ գուսան Համազասպը մոտենալով լսափողին, հայտարարում է, որ մենք այստեղ ենք հավաքվել ոչ թե Դեմիրճյանի հարցով, այլ Ղարաբաղի<sup>279</sup>:

Կենտկոմից վերադարձած Իգոր Մուրադյանը կրկին մոտենալով բարձրախոսին, հայտարարում է, թե Բաքվի «Վըշկա» թեր-

---

<sup>276</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 19, թ. 9:

<sup>277</sup> Նույն տեղում, թ. 14: Իգոր Մուրադյանին մեղադրում էին հայերեն լեզվին չտիրապետելու, գործադուլներին դեմ արտահայտվելու, կուսակցական ղեկավարությանը պաշտպանելու և «ինքնագլուխ» գործելու համար:

<sup>278</sup> Նույն տեղում, թ. 14:

<sup>279</sup> Նույն տեղում:

թում տպագրված է Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի և Ադրբեջանի Գերագույն խորհրդի կոչը՝ «Մահ հայերին, մահ Բորովիկին»։ Դա բացահայտ ու լայիրշ մարտականչ էր ոչ միայն մեզ, այլև Արցախին և Բաքվի հայությանը։ Մեզ համոզում են, իբր թե այդ բոլոր հարցերը լուծվում են Մոսկվայում։ Սակայն դա բլեֆ է։ Հիշեցեք. ոչ մի Մոսկվա հայերի պաշտպանության մասին չի մտածում։ Արցախի շուրջ՝ Աղղամում, Միրբաշիրում, Ֆիզուլիում և այլ բնակավայրերում տեղի ունեցող միտինգները ուղղված են Արցախի դեմ։ Թող Մոսկվան այդ մասին մտածի։ Առաջարկում է հանրահավաքի անունից կենտրոնական իշխանություններին հեռագիր ուղարկել և պահանջել կենտրոնական թերթերը միայն ճշմարիտ նյութեր հրապարակեն արցախյան իրադարձությունների մասին<sup>280</sup>։

\*  
\*   \*  
\*

1988 թ. մայիսի 21-ին տեղի ունեցած ԱդրԿԿ կենտկոմի պլենումը՝ «տկար առողջության» պատճառաբանությամբ, զբաղեցրած պաշտոնից ազատում է Բ. Բաղիրովին և առաջին քարտուղար ընտրում Ա. Վեզիրովին։ Այդ նույն օրը Հայկոմկուսի ԿԿ պլենումը նույն ձևակերպմամբ զբաղեցրած պաշտոնից ազատում է Կ. Դեմիրճյանին և կենտկոմի առաջին քարտուղար ընտրում Ս. Հարությունյանին։

Կարեն Դեմիրճյանը իր ղեկավարման 14 տարում (1974-1988 թթ.) քիչ աշխատանք չի կատարել հանրապետության համար։ Նա հանդիսացել է քաղաքական, տնտեսական և պետական խոշոր գործիչ։ Այդ մասին իրենց հուշերում ընդգծել են Կ. Դեմիրճյանի աշխատանքային ընկերները<sup>281</sup>։ Արձանագրենք. նրա ղեկավարության ժամանակաշրջանում հանրապետության տնտեսությունը, մշա-

---

<sup>280</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 19, թ. 15-17։

<sup>281</sup> Կաթիլներ մեծ ծովից։ Կ. Դեմիրճյանը երախտապարտ ժամանակակիցների հուշերում, Եր., 2002, Գ. Հարությունյան, Կարեն Դեմիրճյան. Հիշատակի խոսք, Եր., 2006 և այլն։



կույթն ու քաղաքական կյանքը զգալի առաջընթաց է ապրել: Եվ այնուհանդերձ, իչպես ամբողջ Միությունում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում տեղ են գտել բազմաթիվ թերություններ, որի կողքով անտարբեր չենք կարող անցնել: Հայաստանի ազգային արխիվում այդ մասին բազմաթիվ նյութեր կան: Անդրադառնանք դրանցից մի երկուսին:

1981 թ. ապրիլի 24-ին Սիլվա Կապուտիկյանը մի նամակ է հղել Կարեն Դեմիրճյանին, որը բաղկացած է 19 մեքենագիր էջից: Հեղինակը իր խոսքը սկսում է 1981 թ. ՀԿԿ կենտկոմի պլենումում Կարեն Դեմիրճյանի ունեցած ելույթից: Շեշտված է, որ նա «չկարողացավ իր ձեռքի տակ եղած բոլոր հնարավորությունները օգտագործել» ու «Հանրապետությունում առանձնակի ջանքեր չթափվեցին ստեղծելու անհրաժեշտ շիկացած մթնոլորտ՝ ընդդեմ նեգատիվ երևույթների»: «Գործի մեջ համարյա չներգրավվեցին երկրի քարոզչական և մշակութային օրգանները՝ մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը, կինոն, թատրոնը, գրականությունը, ստեղծագործական միությունները...

Այնինչ, Դուք դեռ շատ չանցած, կենտկոմում տեղի ունեցած ընդունելության ժամանակ շտապեցիք սաստել գրողներին, հիշեցնելով, որ «ամեն ինչ որոշվում է այս պատերի մեջ»<sup>282</sup>: «Խնդիրը,– շարունակում է բանաստեղծուհին,– միայն բանտերը բանտարկյալներով լցնելը չէ: Ընդհակառակը: Բանտերը չափից շատ լցվեցին ու լցվում են մանր–մունր զեղծարարներով: Չափազանց մանրացանց մաղից հասարակական ու քրեական դատապարտության սինիի վրա թափվեցին անճարպիկ թերակշռողները և մանրը չվերադարձնողները, մի երկու կտոր փայտ ու սալիկ գողացողները, մանրիկ խախտումների անճարակ հեղինակները: Իսկ խոշորները մնացին մաղի երեսին»<sup>283</sup>:

Հայ բանաստեղծուհին այնուհետև խոսում է Երևանի, Կիրովականի, Ալավերդու և այլ բնակավայրերի մասին, որտեղ օդի թունավորման աստիճանով բազմակի անգամ ավելի է թույլատրե-

<sup>282</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 355, թ. 2–3:

<sup>283</sup> Նույն տեղում, թ. 3:

լի նորմաներից, իսկ «կաշառակերությունը բազմաեղանակ հիդրայի նման, խոլերայի համաճարակի պես մեր շուրջը տարածվում է, իր թունավոր մանրէներով օդին է խառնվում ամսեսամիս, օրեցօր, ժամառժամ, քայքայելով ամեն ինչ՝ հոգեկան առողջություն, հասարակության, մարդկային հարաբերություններ: Երիցս ճշմարիտ էր Վ. Ի. Լենինը, երբ ասում էր, թե՛ որտեղ «գոյություն ունի կաշառք, այնտեղ քաղաքականության մասին խոսելը ավելորդ է...»<sup>284</sup>:

Նամակի հեղինակը համոզված էր, որ «մեր հանրապետության վարչական մարմինները՝ միլիցիան, հսկողական ու քննչական օղակները, դատարանը՝ բարքերի անկման «առաջնության» մեջ մրցում են իրար հետ»: Օրինակ, ՆԳ նախարարը հրաման էր արձակել լրատվամիջոցներին որևէ քննադատական ծպտուն չհանել միլիցիայի հասցեին: «400–500 ռ. կաշառքի գործը մեղմելու համար դատարանը վերցնում է 40–50 հազար ռուբլի, 8000 ռ. ու նույնիսկ ավելի քիչ պակասորդը ծածկելու համար ՕԲԽՍ-ի բրիգադը վերցնում է 80 000 ռ. ու նույնիսկ ավելի շատ...»<sup>285</sup>: Ս. Կապուտիկյանը դառնացած տրտնջում էր. «Ժողովուրդը ճիշտ է ասում, որ Հայաստանում օրենքներ չկան, դատաստան չկա, կա միայն փող և վերևից եկած զանգ»: Նա բերելով մի շարք օրինակներ՝ Կ. Դեմիրճյանին մեղադրում է. «Դուք չտեսնելու եք տալիս Ձեզ ուղղված նամակների ու բողոքների բովանդակությունը»<sup>286</sup>:

Մյուսը ՀԽՍՀ ՆԽ առընթեր Պատմության և հուշարձանների պահպանության ու օգտագործման գլխավոր վարչության աշխատակազմի կուսկազմակերպության 1988 թ. մայիսի 31-ին կայացած դռնբաց ժողովի արձանագրությունն է: Կուսակցության անդամ Վ. Սաղումյանը քննադատելով ԿԿ արդեն նախկին առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանին, նշում է, որ Հայաստանում վերակառուցման քաղաքականությանը և հրապարակայնությանը գիտակցաբար և նպատակային ձևով դիմադրություն է ցույց տրվում, «հատկապես բյուրոկրատական սաբոտաժի ձևով»: Հան-

---

<sup>284</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 355, թ. 4–5:

<sup>285</sup> Նույն տեղում, թ. 6:

<sup>286</sup> Նույն տեղում, թ. 17:

րապետությունում ասես փականք է դրված մամուլի վրա, որն գտնվում է «առանձին մարդկանց կրնկի տակ»: Գրեթե 14 տարի շարունակ մեզ մոտ հաստատված էր «աղա տղաների» իսկական դիկտատուրա: ՀԽՍՀ-ում տիրում է պրոֆեսիոնալ պետերի բազմանդամ, ինքնապարփակ և ինքնավերարտադրությամբ զբաղված մի կաստա: Կաշառքը... գողությունները... յուրացումները: ...Վերակառուցման շահերը պահանջում են, որպեսզի կենտկոմի նախկին առաջին քարտուղարի և նրա «շքախմբի» գործունեության նեգատիվ կողմերը հրապարակայնության տրվեն»<sup>287</sup>:

Այդ նույն ժողովում կոլեկտիվի անդամ Վլադիմիր Սևյանը հայտարարեց, որ Կ. Դեմիրճյանի ղեկավարման տարիներին Հայաստանում խիտ արմատներ են գցել կաշառակերությունը, սպեկուլյացիան, հովանավորչությունը, զարգացել են ստախոսությունը, կեղծ ու շինծու ցուցանիշները, կադրային քաղաքականության աղավաղումները, որոնք լուրջ խոչընդոտներ են վերակառուցման ճանապարհին: Ապա նշում է, որ լճացման տարիների արդյունք են Լեոնիդ Ներսիսյանը, Մուրադ Մուրադյանը, Քրիստ Մանդալյանը, Ռոբերտ Արզումանյանը, Մավրիկ Դավթյանը, Նինա Եսայանը և էլի ուրիշներ:<sup>288</sup>:

Արխիվում նման փաստաթղթեր քիչ չեն: Սակայն արդարությունը պահանջում է նաև ասել, որ այդ տարիներին վեր էր բարձրանում նաև հանրապետության կենսամակարդակը, տնտեսությունը, առանձնապես արդյունաբերությունը, բժշկությունը, կրթությունը, մշակույթը, գիտությունը, որոնք ԽՍՀՄ մյուս հանրապետություններից բոլորովին էլ հետ չէր մնում: Այդ ամենի և հետագա գործունեության արդյունքում է, որ Կարեն Դեմիրճյանը ընտրվեց Ազգային ժողովի նախագահ ու հետմահու արժանացավ Ազգային հերոսի կոչման:

Իսկ ՀԿԿ կենտկոմի մայիսյան պլենումից հետո նշմարվում էր ուժերի կենտրոնացում: Այստեղ պլենումին մասնակցած ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարներ՝ Վ. Դոլգիլին ու քաղբյուրոյի անդամ Ա.

<sup>287</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 676, թ. 174:

<sup>288</sup> Նույն տեղում, թ. 182-183:

Յակրովկը հույս էին հայտնել, որ նոր հունի վրա կդրվեն կուսակցական և պետական աշխատանքները: Նման հույսերի մասին հայտարարվել է նաև Բաքվում: Այնտեղ պլենումին մասնակցած հակահայ դիրքորոշում ունեցող ԽՄԿԿ կենտկոմի քարտուղար Եգոր Լիզաչովը ասեց թե ԼՂԻՄ-ը Հայաստանին վերադարձնելու հարցը ԽՄԿԿ կենտկոմը չի քննարկելու, քանի որ նա մտադրություն չունի երկրում տարածքային փոփոխություններ կատարել: Ե. Լիզաչովի այդ ելույթը դրդեց արցախցիներին դիմել գործադուլի, որը ընթացավ երկու ամիս՝ մայիսի 23-ից մինչև հուլիսի 24-ը:

Մինչև դա՝ մայիսի 17-ից, ի պաշտպան Շուշիից վտարված հայերի և պահանջելով միջոցներ ձեռք առնել Բաքվի հայատյաց հավակոյթների դեմ, գործադուլն արդեն պարփակել էր ամբողջ Ստեփանակերտը: Շարունակելով իր պայքարն և ի բողոք Ե. Լիզաչովի հայտարարության, ԼՂԻՄ մարզկոմի բյուրոյի անդամների և մարզի մի շարք պաշտոնյաների ստորագրությամբ մայիսի 27-ին ընդարձակ նամակ ուղարկվեց ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրո, որում շարադրված է ադրբեջանահայության դեմ Խորհրդային Ադրբեջանի ղեկավարության գործադրած հանցագործությունները և պահանջվում էր մինչև մարզի հիմնախնդրի վերջնական լուծումն այն դուրս բերել Ադրբեջանի կազմից<sup>289</sup>:

Այդ օրերին Բաքվում և ԱդրիսՍՀ այլ քաղաքներում տեղի ունեցած խառնաժողովներում թուրք ազգայնամոլները պահանջում էին հանրապետությունից արտաքսել բոլոր հայերին: Այդ մասին հանգամանորեն խոսվեց մայիսի 25-ին Երևանում տեղի ունեցած հանրահավաքում: Այն ավանդաբար սկսվել է շեփորահար Աշոտ Միրզոյանի նվագի ներքո: Այնուհետև Մանվել Սարգսյանը հայտարարեց տարբեր տեղերից Արցախում կուտակված երեք հազար փախստականների մասին: Իսկ մայիսի կեսերին այնտեղից Մոսկվա մեկնած և մայիսի 25-ին վերադարձած պատվիրակության ղեկավար Համլետ Գրիգորյանը պատմում է իրենց հանդիպումների մասին, խստորեն քննադատում կենտրոնական մամուլի և մյուս լրատվամիջոցների անտարբեր լինելը Արցախի ճակատագրի

<sup>289</sup> В. Б. Арутюнян, նշվ. աշխ., էջ 91–101:

նկատմամբ: Արցախցի դերասանուհի Ժաննա Գալստյանը իր ելույթում արցախցիներին բնորոշում է որպես վերակառուցման «առաջին ծիծեռնակներ»: Այսպիսի պայմաններում, շարունակում է նա, Ղարաբաղի հայությունը չի հավատում ոչ մեկի: Նա քննադատական սուր խոսք է հնչեցնում Ադրբեջանի գրողների միության նախագահ Անարի հասցեին, որը կենտրոնական հեռուստատեսությամբ հայտարարել է, թե իբրև ԼՂԻՄ-ում և Հայաստանում ապրող ադրբեջանցիները գտնվում են ծանր վիճակում<sup>290</sup>:

Տեղական և կենտրոնական մամուլի նկատմամբ դժգոհություն է հայտնում Վաչե Սարուխանյանը, ապա գովասանքի խոսք հնչեցնում Ա. Յակովլևի հասցեին, որը ծաղկեպսակ էր դրել հայոց ցեղասպանության հուշարձանին, խստորեն քննադատում Ե. Լիզաչովին, որը Բաքվում հայտարարել է, թե ուժի մեջ է մնում քաղբյուրոյի փետրվարի 21-ի որոշումը, որով ղարաբաղցիներին պիտակավորել են որպես «ազգայնամոլներ» ու «ծայրահեղականներ»: Շեշտում է, որ Բաքվի արարքները Հայաստանում չի կրկնվի: Հայտարարում է, որ հանրապետության ստեղծագործական մտավորականությունը՝ 4755 հոգու ստորագրությամբ, հեռագիր են ուղարկել կենտրոնական իշխանությանը՝ պահանջելով դրականորեն լուծել Արցախի հիմնախնդիրը: Վերջում կոչ է անում հրավիրել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջան և քննարկել արցախցիների դիմումը<sup>291</sup>:

Ապա բարձրախոսին մոտեցավ Սիլվա Կապուտիկյանը: Նա ողջունելով հրապարակում հավաքված տասնյակ հազարավոր միտինգավորներին, նախ՝ դատապարտում է «սումգայիթը», ապա նշում է, որ այսօր հավաքվել ենք այստեղ իրավիճակը կրկին բարդանալու կապակցությամբ: Ինչ որ ձեռքեր են գործում, թշնամու ձեռքեր, որոնք 3–4 ամիս անընդհատ փորձում են մեզ հանել հավասարակշռությունից: Նա համոզված էր, որ կգա ժամանակ, երբ կբացահայտվի այդ դավադրության արմատները, որոնք հետևողա-

---

<sup>290</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 19, թ. 103:

<sup>291</sup> Նույն տեղում, թ. 104–107, նաև՝ Kagarlirsky B., Farewell Perestorika: A Soviet Chronicle, Lnd. and NY, 1990, p. 69:

կանորեն ուղղված էին մեր ժողովրդի դեմ: Նա համոզված էր, որ մեր ժողովուրդը կդրսևորի իր ամրությունը: Բուլրիդ կոչ էր անում համերաշխություն ցուցաբերել արցախահայության հետ: Համոզված էր, որ մենք կհաղթենք վերակառուցման դեմ գործող բյուրոկրատիային: Վերակառուցումը խիստ կարևոր էր փոքր ժողովուրդների համար: Թե՛ կենտրոնական մամուլը և թե՛ «Ժամանակ» ծրագիրը հակահայկական հաղորդումներ էին սփռում: Նաև նշեց, որ ՀԽՍՀ նախկին ղեկավարները լճացման հետևանքով վերջին տարիներին հեռացել են հայ ժողովրդից: Մեր ժողովուրդը մեծ հույսեր էր կապում նոր ղեկավարության հետ<sup>292</sup>:

Այնուհետև արտահայտվում էին Ռաֆայել Ղազարյանը, Վլադիմիր Գրիգորյանը, Շահեն Թաթևկյանը, Ջորի Բալայանը: Վերջինս հայտարարեց, որ արցախցիներին չենք թողնի մենակ: Գիտենք, որ ԱդրԽՍՀ-ի հայկական բոլոր բնակավայրերում իրագործվում են փոքր «սումգայիթներ»<sup>293</sup>: Հանրահավաքում ընդունվեց հետևյալ առաջարկությունները.

- բոլոր ձեռնարկություններում և հիմնարկներում հրավիրել ժողովներ և դատապարտել Սումգայիթի ջարդերը.

- շարունակել դրամահավաքը սումգայիթցիների օգտին.

- հանրապետության բուհերում կազմակերպել շինարարական ջոկատներ և ամառվա ընթացքում ուղարկել ԼՂԻՄ.

- կուսակցական և խորհրդային կազմակերպություններին զուգահեռ ստեղծել նորերը.

- պահանջել վերադաս իշխանություններից ապահովել Ադրբեջանում բնակվող հայերի անվտանգությունը.

- պահանջել երկրի լրատվամիջոցներից ճշմարտորեն լուսաբանել ԼՂԻՄ-ում և Խորհրդային Ադրբեջանում տեղի ունեցող իրադարձությունները<sup>294</sup>:

1988 թ. մայիսի երկրորդ կեսին ժողովրդական շարժումը ավելի էր ընդլայնվել: Հանրահավաքներում, ցույցերի ժամանակ,

---

<sup>292</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 19, թ. 107–109:

<sup>293</sup> Նույն տեղում, թ. 110–111:

<sup>294</sup> Նույն տեղում, թ. 98–100:

ժողովներում քննարկվում էին Արցախին և հանրապետության ներքին կյանքին առնչվող հարցեր: Ամսի 26-ից սկսած 400 ուսանողներ Օպերայի մոտ նախաձեռնեցին ԽՍՀՄ հասարակական կյանքի համար աննախադեպ նստացույցը: Իսկ մայիսի 31-ին տեղի ունեցած ՀԿԿ կենտկոմի պլենումին մասնակցելու համար հրավիրվել էին 248 պետական և հասարակական կազմակերպությունների լրացուցիչ աշխատողներ: Դա ՀԿԿ կենտկոմի նորընտիր քարտուղար Ս. Հարությունյանի առաջին հանդիպումն էր հանրապետության ընտրախավի հետ: Այդ պլենումում ընտրվեց 51 պատգամավոր ԽՄԿԿ 19-րդ կոնֆերանսին մասնակցելու համար<sup>295</sup>: Ժողովրդական շարժման ակտիվիստները դժգոհ էին, որ կոնֆերանսի պատգամավորներ էին ընտրվել հիմնականում կուսակցական պաշտոնյաներ: Մինչ այդ, հանրահավաքներում ու բազմաթիվ հիմնարկ-ձեռնարկությունների ժողովներում պահանջվել էր կոնֆերանսի պատգամավորներ ընտրել ժողովրդական շարժման ակտիվ կոմունիստներին:

Մայիսի 20-ին Հայկոմկուսի ԿԿ ուղարկած ՊԱԿ-ի հաղորդագրության մեջ նշված է, որ «Ղարաբաղ» կոմիտեի կազմի մեջ նկատվում են անհամաձայնություններ և դժգոհություններ: Դրանք հիմնականում ուղղված էին Իգոր Մուրադյանի դեմ: Այդ դժգոհությունը մեծացել էր այն բանից հետո, երբ մայիսի 19-ին տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ նա բնակչությանը գցել է մոլորության մեջ՝ հայտարարելով, թե պետք է հանրապետության ղեկավարության հետ գնալ համաձայնության: Նա նույնիսկ գտնում էր, որ պետք է Արցախը ժամանակավորապես հանձնել Մոսկվայի իշխանություններին<sup>296</sup>: Իգոր Մուրադյանի այդ հայտարարությունից հրապարակը ընթուստացել էր նրա դեմ:

Իգոր Մուրադյանը, որն այնքան աշխատանք էր կատարել Շարժման համար, ամսի 19-ին դժգոհ հեռացավ Թատերական հրապարակից: Նրա այդ քայլը չէր ընդունել «Ղարաբաղ» կոմիտեականների մի մասը, որ ձգտում էր չեզոքացնել նրան ու հեռա-

<sup>295</sup> Սովետական Հայաստան, թ. 129, 01. 06. 1988:

<sup>296</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 19, թ. 7:

ցնել կոմիտեի կազմից: Նման վերաբերմունքի պատճառը գործի ընթացքում առաջացող և անխուսափելի տարակարծությունների շուրջ ծագած վիճաբանություններն էին: Մարտի կեսերից սկսած Իգոր Մուրադյանի առաջ քաշած խնդիրները երբեմն չէին պաշտպանվում կոմիտեի որոշ անդամների կողմից: Կոմիտեականների միջև տարածայնությունները ավելի մեծացան Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահության՝ նրանց գոյությունը ապօրինի որակելու մասին 1988 թ. մարտի 24-ի որոշումից հետո: Այդպես որ մայիսի երկրորդ կեսին հրավիրված հանրահավաքներում հետզհետե բորբոքվում էին զգացմունքները: Դժգոհ կոմիտեականները գտնում էին, որ Ի. Մուրադյանը կատարել է իր պատմական դերը, մանավանդ Շարժմանը կազմակերպված բնույթ տալու գործում: Նոր խնդիրները պահանջում էին ավելի «լայն քաղաքական մտահորիզոն ունեցող ղեկավարների»<sup>297</sup>:

Իսկ դա նշանակում էր՝ վերակառուցել կոմիտեն և ընդունել ղեկավարման նոր մարտավարություն: Այդ գործընթացը արագ էր ընթանում:

Ինչպես արդեն նշվել է, 1988 թ. մայիսի 26-ից սկսած մոտ 400 ուսանող դիմել էին նստացույցի, իսկ հրապարակում հավաքված մոտ 7000 մարդիկ, խմբերով քննարկում էին Արցախում ծավալվող իրադարձությունները, իրենց աջակցությունը հայտնում նստացույցի մասնակիցներին և առաջիկայում հրավիրվելիք Գերագույն խորհրդի նստաշրջանի հետ կապված տարբեր հարցեր վերլուծում: Նաև մտքեր էին արտահայտում Պարոյր Հայրիկյանին պաշտպանելու և Հայաստանի առաջին հանրապետության 70-ամյակը նշելու թեմաների շուրջ<sup>298</sup>: Պ. Հայրիկյանի կողմնակիցներից Մ. Գորգիսյանը և Մ. Գաբրիելյանը մայիսի 28-ին 50-60 մարդու հետ գոչերով հասնում են Թատերական հրապարակ և կոչ անում ստեղծել ազատ ու անկախ Հայաստան:

«Մեռնել կանգնած,- ասում են նրանք,- քան ապրել ծնկերի վրա, որպեսզի ազատվենք դարավոր ճնշումից: Դրան կարելի է

<sup>297</sup> В. Григорян, նշվ. աշխ., էջ 132:

<sup>298</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 14, թ. 116:



հասնել գործադուլի միջոցով»<sup>299</sup>: Այդ օրը հրապարակում բոցաշունչ ճառ է արտասանում բ.գ.դ., պրոֆեսոր Վ. Առաքելյանը: Նա նշեց, որ «մենք Հայաստանի պետականությունը ստեղծել ենք ուժով, պատերազմով, մեր մեծ հերոսներով, 1915 թվականի երկու միլիոն զոհերով, իսկ վճռական ռոպեին ռուսները մեզ դավաճանել են և թողել գերակշռող թուրքական ուժերի դեմ»<sup>300</sup>: Միտինգում ելույթ են ունեցել պրոֆեսոր Ռ. Իշխանյանը, Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Լ. Սահակյանը և ուրիշներ:

Այդ օրերին միտինգներ էին տեղի ունենում նաև Ապարանում, Լենինականում, Աբովյանում և այլ տեղեր, որոնց մասնակցում են մեծ թվով մարդիկ: Օրինակ. Ապարանի հանրահավաքին եկել են ավելի քան 30 հազար մարդ: Մայիսի 29-ին Թատերական հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում Իգոր Մուրադյանը հայտարարեց, թե ժողովուրդը պահանջում է գործադուլ: Սակայն մենք դրան պատրաստ չենք: Նա առաջարկեց անընդմեջ միտինգներ անցկացնել ու չհեռանալ հրապարակից<sup>301</sup>: Հաջորդ օրը, մայիսի 30-ին տեղի ունեցած հանրահավաքում, նա հայտարարեց, թե ինքը առաջ կողմնակից է եղել գործադուլին, բայց հիմա դեմ է, որովհետև այն մեծ վնաս է բերում մեր հանրապետությանը: Մենք մեր պայքարը պետք է շարունակենք սահմանադրական եղանակով: Միայն այդ ձևով կարող ենք պաշտպանել Արցախը: Եթե գործադուլ սկսենք և Միութենական ուժերը ճնշեն Արցախին, ինչո՞վ կարող ենք նրանց օգնել<sup>302</sup>:

Այդ հանրահավաքում Իգոր Մուրադյանը առաջարկեց հանրահավաքներ կազմակերպել ամեն օր, ժամը 18-ին, ապա ընթերցեց մասնակիցների անունից Մ. Գորբաչովին և ԱՄՆ-ի նախագահ Ռ. Ռեյգանին ուղղված հեռագիր, որում խնդրվում էր նպաստել ԼՂԻՄ հիմնախնդրի դրական լուծմանը<sup>303</sup>:

---

<sup>299</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 14, թ. 117:

<sup>300</sup> Նույն տեղում, թ. 117–118:

<sup>301</sup> Նույն տեղում, ֆ. 1678, ց. 1, գ. 2, թ. 31–37:

<sup>302</sup> Նույն տեղում, թ. 43–45:

<sup>303</sup> Նույն տեղում, թ. 138:

Մայիսի 30-ին նստացույցին միացան պետական համալսարանի և մյուս բուհերի դասախոսներ: Ուսանողների հետ միասին նրանք պահանջում էին վճռել Սումգայիթի փախստականների և Արարատի շրջանում ըմբոստացած ազերիների հարցը: Իգոր Մուրադյանի թիմը վճռել էր մայիսի 31-ին զանգվածային երթ անել Երևանում, ապա հավաքվել Լենինի անվան հրապարակում:

Ուստի նա և Ջորի Բալայանը հրավիրվել են ՀԿԿ կենտրոն: Ի. Մուրադյանի վերջերս արտահայտած իրարամերժ մտքերը լայնորեն քննարկվում էին հավաքներում: Նա ստիպված էր հրապարակայնորեն հրաժարվել իր խոսքից: Սակայն շատերը իմանալով նրա չհավասարակշռված բնավորության մասին, հավատացած էին, որ որոշ ժամանակ անց նա կրկին կվերադառնա Շարժում<sup>304</sup>:

Այդ օրը, մայիսի 30-ին, մինչև հանրահավաքի սկիզբը, Ի. Մուրադյանը ընդհարվեց Աշոտ Մանուչարյանի հետ: Վերջինս ստիպված էր հրապարակից հեռանալ, որովհետև նրան մեղադրում էին, որ նա ճգնում էր շահագործել ղարաբաղյան շարժումը: Հանրահավաքում առաջինը ելույթ է ունեցել Հայաստանի ԳԱ թղթակից անդամ Վլադիմիր Բարխուդարյանը, որն առաջարկեց հրաժարվել գործադուլներից, պաշտպանել վերակառուցման գաղափարները, պահանջել Սումգայիթում ընթացող դատավարությունը կազմակերպել օրենքի սահմաններում: Վ. Բարխուդարյանը սումգայիթյան խժոժությունը բնորոշում է որպես ցեղասպանություն, որը վարկաբեկել է Խորհրդային Միությանը: Նա իր խոսքը ավարտեց հետևյալ հայտարարությամբ. «Մենք պաշտպանում ենք ղարաբաղցիների պահանջը... Սակայն ես անձամբ դեմ եմ համազգային գործադուլին»<sup>305</sup>:

Այդ առաջարկությունը պաշտպանեցին ՀԽՍՀ ԳԱ Մեխանիկայի ինստիտուտի տնօրեն Լենսեր Աղալովյանը, Ակադեմիայի թղթակից անդամ Ռ. Ղազարյանը և ուրիշներ: Իգոր Մուրադյանը փակելով հանրահավաքը, մի անգամ ևս կոչ է անում հրաժարվել գործադուլի գաղափարից: Հանրահավաքը գտավ, որ կարելի է

<sup>304</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 24, թ. 144:

<sup>305</sup> Նույն տեղում, թ. 144-145:

համազգային գործադուլի դիմել միայն այն ժամանակ, երբ սահմանադրական պայքարի ձևը հաջողություն չունենա:

ՊԱԿ-ի նախագահ Մ. Յուզբաշյանի հունիսի 1-ին ՀԿԿ կենտրոնում ուղարկած հաղորդագրության մեջ շեշտվեց, որ հանրապետության վիճակը հետզհետե ավելի էր բարդանում, մանավանդ կապված առաջիկա Գերագույն խորհրդի նստաշրջանի հետ: Այդ հաղորդման մեջ տվյալներ կան, որ «Ղարաբաղ» կոմիտեի առանձին անդամներ, օրինակ Աշոտ Մանուչարյանը, հրավիրում են միտինգներ և իրենց հայացքները շարադրում<sup>306</sup>:

Այն որ մայիսի 27-ին՝ ԼՂԻՄ-ի մարզկոմի և նրա պաշտոնատար ակտիվի պահանջով Արցախը դուրս էր եկել Ադրբեջանի կազմից, այդ մասին հանրահավաքներում բազմիցս հայտարարել է Իգոր Մուրադյանը<sup>307</sup>: Միաժամանակ նա հորդորում էր «հանրապետության ղեկավարության նկատմամբ չցուցաբերել նիհիլիզմ... Կանցնի որոշ ժամանակ, և մենք ձեզ հետ կհասկանանք, որ այս վճռական պահին մեր ղեկավարները մեր ժողովրդին բառացիորեն փրկել են գնդակից: Քաղաք մտած տասնյակ հազարավոր զինվորներ եկել են հայ ժողովրդի համար բաղնիք սարքելու: Սակայն այն կանխվել է ամենից առաջ ի շնորհիվ... Կ. Դեմիրճյանի»<sup>308</sup>: Անկասկած՝ Իգոր Մուրադյանի այդ հայտարարությունը պահի բավականին սթափ գնահատականն էր, որը ճիշտ ընկալվեց ունկնդիրների կողմից, իսկ կոմիտեականների մի մասը այն օգտագործեցին նրա դեմ:

Ասվել է, որ մայիսի 18-ի հանրահավաքին մասնակցում էին նաև Երևանի բոլոր կուսակցական, պետական և հասարակական մարմինների պաշտոնյաները: Ըստ էության՝ ՀԽՍՀ ղեկավարությունը բավականին ուշացումով է որոշել շարժման նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը: Սակայն դա նրանց չհաջողվեց: Ուրիշ հարց է, եթե այդ քայլին գնային փետրվարյան օրերին: Մայիսի 20-ի հանրահավաքի ժամանակ տարածվեց Համբարձում Գալստյանի,

<sup>306</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 14, թ. 156:

<sup>307</sup> Նույն տեղում, գ. 18, թ. 176:

<sup>308</sup> Նույն տեղում, թ. 186–187:

Վազգեն Մանուկյանի, Ալեքսան Հակոբյանի, Սամվել Գևորգյանի, Սամսոն Ղազարյանի, Վանո Սիրադեղյանի և Աշոտ Մանուչարյանի ստորագրությամբ հայտարարություն, որում Իգոր Մուրադյանը մեղադրվում էր «ինքնազլովի» գործունեության մեջ և նրանից պահանջվում է վերջ տալ «միանձնյա կարգադրություններին»<sup>309</sup>:

Առաջ եկած հակասությունների հիմնական պատճառը, ըստ ժամանակակիցների կարծիքի, հանդիսացել է այն, որ կոմիտեականների մի մասը ձգտում էր արցախյան շարժումը վերագրել իրենց և այդ ճանապարհով բարձրացնել իրենց հեղինակությունը, որպեսզի կարողանային հասնել իշխանության: Դրա մեջ, անշուշտ, ճշմարտություն կա:

Արխիվային նյութերից հստակ երևում է, որ «Ղարաբաղ» կոմիտեն պառակտելու և նրա ղեկավարներին հետին պլան մղելու գործում պակաս դեր չի խաղացել նաև Խորհրդային Հայաստանի իշխանությունները՝ ի դեմս ՊԱԿ-ի: Նրա նախագահ Մ. Յուզբաշյանի 1988 թ. հուլիսի 14-ին ՀԿԿ կենտկոմ ուղարկած գաղտնի հաղորդման մեջ ասված է, թե ներկայումս գործ ունենք կոմիտեի երկրորդ սերնդի հետ: Առաջին սերնդի մեջ էին ակադեմիկոս Վ. Համբարձումյանը, բանաստեղծ Ս. Կապուտիկյանը, լրագրող Զ. Բալայանը, տնտեսագետ Ի. Մուրադյանը և ուրիշներ: Չնայած սկզբնական շրջանում հակաօրինական գործողությունների կոչեր էին հնչում, սակայն նրանք հանրապետությունում հիմք են դրել զուգահեռ կառուցվածքի: Երկրորդ սերունդը՝ բախվելով կենտրոնի մշտական անբարյացակամությանը, ծայրահեղ կոչերով հեղինակության է հասել բնակչության շրջանում:

ՊԱԿ-ի նախագահը նշում էր երկու սերունդների սկզբում միասին գործելու հանգամանքը: Ուստի «հանրապետության ՊԱԿ-ը ջանքեր է գործադրել նրանց մեջ սեպ խրել և կոմիտեն քայքայել»: Կոմիտեի նախագահը նաև հաղորդում է, որ իրենց մտահղացումը իրականացվել է: Իգոր Մուրադյանը թույլ է տվել որոշ կոպտություններ ու իր համագործակիցների նկատմամբ գործադրել ուժ, որի

---

<sup>309</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 14, թ. 100:

պատճառով «նա տառացիորեն շարտվել է բեմահարթակից»: Ըստ Յուզբաշյանի, «առաջին սերունդը» հասկանում էր «երկրորդ սերնդի» վտանգավոր նպատակներն և սեփական «պատասխանատվությունը նրանց առաջ քաշելու գործում»: Մ. Յուզբաշյանը այն մտքին էր, որ երկրորդ սերունդը ավելի վտանգավոր էր, քան առաջինը: Ըստ նրա, առաջին սերունդը հակված էր «չեզոքացնել երկրորդ սերնդին»: Եվ երբ երկրորդ սերնդի հետ տեղի է ունեցել խիստ նախազգուշական զրույց, երիտասարդներն հայտարարել են, որ եթե ուզենան, կստիպեն ավագներին դադարեցնել իրենց գործունեությունն ու հեռանալ ասպարեզից: Այդ դեպքում վեր կբարձրանա երկրորդ սերունդը, որին ժողովուրդը կարող է հրել ծայրահեղ գործունեության: Ավագ սերունդը չի երաշխավորել գործադուլն ու չէր էլ ուզում այդ մասին բացահայտել<sup>310</sup>:

Եվ, այսպես, «Ղարաբաղ» կոմիտեից դուրս մղվեց «առաջին սերունդը», այսինքն՝ Իգոր Մուրադյանը և նրա կողմնակիցները, ովքեր առաջնորդում էին այս շարժումը հենց սկզբից: Ըստ Յուզբաշյանի, նրանք հակաօրինական գործողություններ չեն կատարել ու վտանգավոր չէին: ՀԿԿ կենտկոմի շենքի դիմաց մայիսի 31-ին տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ հայտարարվեց «Ղարաբաղ» կոմիտեի նոր կազմը՝ Վազգեն Մանուկյան, Համբարձում Գալստյան, Աշոտ Մանուչարյան, Սամսոն Ղազարյան, Սամվել Գևորգյան և Վանո Սիրադեղյան: Նաև ասվել է, որ Իգոր Մուրադյանը կոմիտեի մեջ չի մտնում, իբր նա իր «չմտածված գործողություններով պառակտում է առաջ բերել Շարժման շարքերում»<sup>311</sup>:

Կոմիտեի նոր կազմը չէր հաստատվել որևէ հանրահավաքում: Այդ ցուցակը կազմել են իրենք և ընթերցել միտինգում, նույնիսկ մասնակիցներին չէին էլ հարցրել նրանց համաձայնությունը: Պարզապես ներկաներն աղմկել են: Իրականում, մեկ օր առաջ հրավիրված հանրահավաքում Ալբերտ Բաղդասարյանը հայտարարել է, թե Շարժման ղեկավարների միջև «տակտիկական տարակարծության» հետևանքով տեղի է ունեցել պառակտում:

<sup>310</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 15, թ. 36–37:

<sup>311</sup> Նույն տեղում:

Որից հետո Վանո Սիրադեղյանը ընթերցում է վերոնշյալ վեց կոմիտեականների անունները:

Այսպիսով, հունիսի սկզբին ստեղծվել էր վիճակ, երբ արցախյան շարժումը և նրա կոմիտեն ունեցել էր մասնակիցների նոր կազմ, դեռևս առանց բացահայտ առաջնորդի: Դա բացատրվում է նրանով, որ հունիսի 1-ին դատախազությունը ճնշում է գործադրել կոմիտեի ակտիվ անդամներից մեկի՝ Աշոտ Մանուչարյանի նկատմամբ, իսկ Իգոր Մուրադյանը՝ ինքնահեռացման պատճառով, բացակայում էր դրա կազմից: Հունիսի 1-ին տեղի ունեցած հանրահավաքը այդ պատճառով էլ կրում էր տարերային բնույթ: Այդ օրվա հանրահավաքը կարգավորում էին մարդիկ, որոնք քիչ կապ ունեին կոմիտեի հետ՝ Ռուբեն Սեդրակյանը, Մելիք Ստեփանյանը, գուսան Համազասպը<sup>312</sup>: Տարբեր տեղերից կոչեր էին հնչում դիմել երկօրյա գործադուլի: Վիճակը թեժացել էր: ՊԱԿ-ը դա բացատրում էր «Ղարաբաղ» կոմիտեի պառակտումով: Հունիսի 2–3-ին մայրաքաղաքի մի շարք ձեռնարկություններում գործադուլներ էին տեղի ունենում, որը, դեռևս, չընդլայնվեց:

\*  
\* \*

Եվ արդեն հունիսի 6-ին ՊԱԿ-ը հաղորդել է, որ Ղարաբաղյան շարժման ակտիվիստները միջոցառումներ են ձեռնարկում՝ մոտ օրերին Գերագույն խորհրդի նստաշրջան հրավիրելու և նրա օրակարգի մեջ որպես առաջին կետ դնել Արցախի հարցը: Հունիսի 4-ից ի վեր կոմիտեականները սկսել էին դրա համար ստորագրություններ հավաքել: Միաժամանակ Շանթ Հարությունյանը նախաձեռնեց հացադուլը, որին՝ Ա. Սպենդիարյանի հուշարձանի մոտ, մասնակցել են չորս ուսանողներ և ուսանողիներ, քիչ հետո նրանց միացան Սոցիալիստական աշխանքի երկու հերոս<sup>313</sup>: Թա-

<sup>312</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 15, թ. 162:

<sup>313</sup> M. Malkasian, Gha-ra-bagh!: The Emergence of the National Democratic Movement in Armenia, Detroit, 1996, p. 85.

տերական հրապարակը նորից ծառայում էր որպես հասարակական կյանքի կենտրոն և աշխատանքների կազմակերպման գլխավոր վայրը:

Այն ժամանակ քաղաքը բաղկացած էր ութ շրջանից: Թատերական հրապարակի տարբեր տեղերում դրվել էր ութ սեղան և Գերագույն խորհրդի նստաշրջան անցկացնելու համար առանձին-առանձին ստորագրություններ էին հավաքվում ութ շրջանների բնակիչներից: Բացի այդ, 500 հոգի բաժանվել էին խմբերի և ուղարկվել շրջխորհուրդներ, պատգամավորների հասցեներն իմանալու, նրանց այցելելու և պատվիրելու նստաշրջանում պաշտպանել ԼՂԽՄ հարցը: Հունիսի 4-5-ի դրությամբ արդեն 100 պատգամավոր համաձայնություն էին տվել<sup>314</sup>: Շարժման ակտիվիստների այդ աշխատանքը շարունակվեց մինչև հունիսի 13-ը: Հանրահավաքում քննարկվել է նստաշրջանում Արցախի հարցը չպաշտպանող պատգամավորներին հետ կանչելու հարցը: Հանրահավաքում անդրադարձ է եղել նաև հետևյալ հարցերին. պահանջել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդից խնդրել Ադրբեյջանի ԳԽ-ին քննարկել ԼՂԽՄ մարզխորհրդի որոշումը և տալ դրական պատասխան, «սումգայիթը» որակավորել որպես ցեղասպանություն և հրապարակել սումգայիթյան ցեղասպանության զոհերի ստույգ թիվը:

Հունիսի 7-ին Թատերական հրապարակի ցուցարարները, բաժանվելով խմբերի, գնում են քաղաքի շրջխորհուրդներ ու պահանջում հրավիրել Գերագույն խորհրդի պատգամավորներին և նրանց ներկայացնել ընդհանուր պահանջը: Համանման միջոցներ են ձեռնարկվել նաև արդյունաբերական խոշոր ձեռնարկություններում: Օրինակ. «Մասիս», «Նաիրիտ» արտադրական միավորումներ, Ֆիզիկայի ինստիտուտ և այլն: Վերջինում հանդիպելով ՀԽՍՀ արհմիության քարտուղար պատգամավոր Վ. Հարությունյանի հետ՝ նկատում են նրա անտարբերությունը ԼՂԽՄ հարցի նկատմամբ: Չնայած նա խոստացավ ակտիվորեն մասնակցել Արցախի խնդրում, այնուամենայնիվ, որոշվեց նրան հետ կանչել պատգամա-

---

<sup>314</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 15, թ. 178:

վորությունից: Երբ նրա լիազորությունների պահպանումը քննարկվեց ինստիտուտի աշխատողների ընդհանուր ժողովում, 411 ներկայներից 399-ը քվեարկել է այդ որոշման օգտին<sup>315</sup>:

ՀԿԿ առաջին քարտուղարը պատմում է, որ այդ օրը, երբ գնացել էր աշխատանքի, նրան հաղորդել են Երևանից և հանրապետության բոլոր շրջաններից դեպի Թատերական հրապարակ շարժվող բազմամարդ խմբերի մասին: Հեռավոր վայրերից մարդիկ գալիս էին մեքենաներով, ավտոբուսներով: Ժամը 11-ի մոտ 800 հազար մարդ էր հավաքվել, իսկ կեսօրին միտինգի մասնակիցների թիվը հասել էր մոտ մեկ միլիոնի: Դա ամենախոշոր հանրահավաքն էր 1988-1990 թվականների ընթացքում: Ու երբ Լիզաչովն ինձ հարցրեց, թե ինչ եմ անելու, պատասխանեցի, որ գնալու եմ հավաքի: Չնայած Եգոր Կուզմիչը դեմ էր, սակայն Ս. Հարությունյանը, նրա կինն ու դուստրը եկել էին հանրահավաքի:

Ամսի 11-ին ՀԿԿ նոր ղեկավարը խոսեց Արցախի մասին<sup>316</sup>: Նա պատմեց Թատերական հրապարակից երկու օր առաջ կայացած Ե. Լիզաչովի հետ հանդիպման մասին: Վերջինը ինքնավար հանրապետության կարգավիճակ առաջարկեց Ղարաբաղին, նրա սահմանների մեջ մտցնելով արդրբեջանաբնակ վայրերը: Ս. Հարությունյանը ԼՂԻՄ ԿԿ քարտուղար Հ. Պողոսյանի հետ միասին մերժել են նման հեռանկարը: ՀԿԿ ղեկավարը անհանգստացած էր Սումգայիթից փախած մարդկանց կենցաղային պայմաններով ու պատրաստակամություն հայտնեց միանալ հացադուլին: Այդ առաջարկի արդյունքում յոթ մասնակիցներից երեքը վերջացրին իրենց հացադուլը և անցան պայքարի մյուս ձևերին<sup>317</sup>: Նույն այդ օրը Մ. Գորբաչովը հանձնարարեց երեք կուսակցական պաշտոնյաներին իրենց հանրապետությունների և մարզի Խորհուրդներում քննարկել ԼՂԻՄ մարզխորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի որոշումը:

Հունիսի 12-ին ԼՂԻՄ Մարզային Խորհուրդը անմիջապես և միաձայն որոշում էր կայացրել դիմել ՀԽՍՀ և Ադրբեյջանի Գերագույն

---

<sup>315</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 15, թ. 188:

<sup>316</sup> Ս. Հարությունյան, Անցյալի ու ներկայի մասին, Եր., 2011, էջ 174-175:

<sup>317</sup> M. Malkasian, op. cit., p. 91.



խորհրդներին՝ նրա Հայաստանին վարչական ենթակայությունը հաստատելու համար: Միաժամանակ պատգամավորները վերահաստատել են նրանց երկրամասի դասական՝ Արցախ անունը:

Սակայն Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունը 1988 թ. հունիսի 13-ին քննարկելով վերամիավորման հարցը, հայտնում է, որ ԼՂԻՄ մարզխորհրդի որոշումը հակասում է «հայ և ադրբեջանցի ժողովուրդների շահերին» և չի համապատասխանում «մեր երկրի բոլոր ժողովուրդների բարեկամության ամրապլնդմանը, վերակառուցման խնդիրներին»<sup>318</sup>:

Իր հերթին, Երևանի հունիսյան հացադուլը, նստացույցի և ստորագրահավաքի հետ համատեղ՝ բոլորը ուղված էին Գերագույն խորհրդի նստաշրջանը հրավիրելու նպատակին: Ըստ ՊԱԿ-ի հաղորդման, հունիսի 14-ին և 15-ին Գերագույն խորհրդի դիմաց հավաքվել էին մինչև 700 հազար մարդ «ազատության լուսաբացը» դիմավորել միասին և քաղաքական ու նյութական օգնություն ցույց տալ արցախահայությանը, որը քաղաքացիական անհնազանդության ակցիա է կատարել Խորհրդային Ադրբեջանի նկատմամբ: Հստակ էր, որ Արցախի հարցի նկատմամբ դրական որոշում չընդունելու դեպքում, հունիսի 15-ին հայտարարվելու է համազգային գործադուլ: Այդ պայքարը գլխավորում էր «Ղարաբաղ» կոմիտեն:

1988 թ. հունիսի 14-ին ՀԿԿ կենտկոմ ուղարկած ՊԱԿ-ի հաղորդման մեջ նշված է, որ Գերագույն խորհրդի պատգամավորների վրա ճնշումն ուժեղացնելու համար կոչ է արվել հունիսի 13-ից սկսել ընդհանուր գործադուլ: Այդ օրը Թատերական հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում ելույթ են ունենում Լևոն Տեր-Պետրոսյանը, Աշոտ Մանուչարյանը, Սուրեն Հարությունյանը, Սիլվա Կապուտիկյանը, Իգոր Մուրադյանը և ուրիշներ: Վերջինս կոչ է անում Արցախի բնակչության նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների կողմից կիրառվող ճնշումներին, որպես պատասխան, դիմել համազգային գործադուլի: Վերջապես նա ստիպված էր ընդունել համազգային գործադուլը որպես պայքարի ձև:

---

<sup>318</sup> Бакинский рабочий, 14. 06. 1988.

Այդ նույն օրը Երևանում և հանրապետության այլ բնակավայրերում սկսվում է լայնատարած գործադուլ: Քանի որ Երևանում գործադուլին մասնակցում էին նաև տրանսպորտի աշխատողները, ուստի խափանվել էր մայրաքաղաքի առօրյա կյանքը<sup>319</sup>: Նրանք, ովքեր չէին գնացել աշխատանքի, հավաքվել էին Թատերական հրապարակում, ուր բազմության թիվը գերազանցում էր 500 հազարի: Հանրապետության տարբեր տեղերից Երևան էին եկել մեծ թվով մարդիկ: Նստացույցեր էին տեղի ունենում նաև Կիրովականում ու Լենինականում: Հանրապետության բնակչությունը խաղաղվում է, երբ հունիսի 14-ին հրապարակվում է Գերագույն խորհրդի որոշման նախագիծը: Այն ընդունվելու դեպքում կբավարարվի թե ԼՂԻՄ-ի, թե Խորհրդային Հայաստանի և սփյուռքահայության պահանջը:



<sup>319</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 14, թ. 205:

Միևնույն օրը շրջանառության մեջ է դրվում Ի. Մուրադյանի «ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի հետ ինտեգրման» ծրագիրը: Դա ԼՂԻՄ-ի և Հայկական ԽՍՀ-ի քաղաքական, տնտեսական և մշակութային միաձուլումն իրականացնելու ուղին էր: Դրա համար նախատեսվում էր ԼՂԻՄ-ում ստեղծել հանրապետության խոշոր ձեռնարկությունների մասնաճյուղեր և բարելավել ԼՂԻՄ ու Հայկական ԽՍՀ ճանապարհները: Ըստ ներկայացված ծրագրի, նախատեսվում էր մարզի բոլոր ձեռնարկությունների միաձուլումը Հայկական ԽՍՀ-ի ձեռնարկությունների հետ: Այդ գործելաճը արժանացավ միտինգավորների հավանությանը<sup>320</sup>: Իսկ նրանք այդ հունիսի 14-ին ներկայացնում էին հանրապետության գործադրովոր տասնյակ ձեռնարկությունները՝ «Նեյրոնը», «Օրբիտան», «Աստրոն», «Էլեկտրոպրիբորն» և այլն<sup>321</sup>:

Հաջորդ օրը՝ 1988 թ. հունիսի 15-ին, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի արտակարգ նստաշրջանը՝ Հրանտ Ոսկանյանի ղեկավարությամբ ու Ն. Ստեփանյանի քարտուղարությամբ, միաժամուռ համաձայնություն տվեց ԼՂԻՄ-ը ընդունել Հայաստանի կազմի մեջ: Այս որոշման նախագիծը քվեարկելուց առաջ ՀԿԿ առաջնորդ Ս. Հարությունյանը նշեց, որ կոմունիստական կուսակցությունը միանգամայն սատարում է վերամիավորումը:

Ընդունված որոշումը ասում է.

1. Համակողմանիորեն ուսումնասիրելով Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների մարզային սովետի 1988 թվականի փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանի որոշումը և հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ ստեղծված լարված վիճակը, ինչպես նաև ԼՂԻՄ-ի և Հայկական ՍՍՀ հայ բնակչության կամքի արտահայտությունը, ղեկավարվելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի մասին ՍՍՀՄ սահմանադրության 70 հոդվածով, համաձայնություն տալ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ՍՍՀ կազմի մեջ մտնելուն:

<sup>320</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 14, թ. 220:

<sup>321</sup> Նույն տեղում, թ. 221:

2. Խնդրել ՍՍՀՄ Գերագույն սովետին՝ քննարկել և դրակա-նորեն լուծել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջա-նական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ կազմի մեջ անցնելու հարցը:

3. Հայկական ՍՍՀ Գերագույն սովետը, դիմելով Ադրբեջա-նական ՍՍՀ Գերագույն սովետին, հույս է հայտնում, որ այդպիսի որոշումը չի խախտի երկու հանրապետությունների միջև եղած ավանդական, բարիդրացիական հարաբերությունները և այն ըմբռնումով կընկալվի ադրբեջանական ժողովրդի կողմից»<sup>322</sup>:

Մյուս կարևոր որոշումը դատապարտեց Սումգայիթում հայե-րի դեմ կատարված Եղեռնը ու խորը ցավակցություն հայտնեց բոլոր տուժածներին և անմեղ զոհվածների հարազատներին:

Հայաստանի ԽՍՀ Գերագույն խորհրդի ցավակցությունը խորը կարեկցանք շարժեց բոլորի սրտերում, իսկ վերամիավոր-մանն վերաբերող որոշումը ցնծությամբ է ընդունվել ամբողջ հայ ժողովրդի և նրա ծոցից ելաց իսկապես ժողովրդական ուժի՝ Հայոց համազգային շարժման մասնակիցների հոծ զանգվածի կողմից:

\*  
\* \*

Հայաստանի Գերագույն խորհրդի վերամիավորման վերա-բերյալ որոշումը բավարարեց բնակչության պահանջը: Սակայն ասել, թե դրանով պատմությունը մտավ ցանկալի հունի մեջ, միա-միտ կլիներ: Առջևում ԽՄԿԿ 19-րդ կոնֆերանսն էր, որի ամբիոնից ՀԿԿ առաջին քարտուղարը հերթական անգամ սխալ համարեց հայ-ադրբեջանական հարաբերությունների մեղքը բարդել միայն «ծայրահեղական խմբերի» վրա: Նա պահանջեց ճշտորեն լուծել ազգամիջյան հարաբերությունների հարցը<sup>323</sup>:

Կուսակցական կոնֆերանսի սկսվելուց առաջ՝ 1988 թ. հունի-սի 28-ի առավոտվա ժամը 8-ին, Գերագույն խորհրդի Նախագա-

<sup>322</sup> Սովետական Հայաստան, թ. 142, 16. 06. 1988:

<sup>323</sup> Նույն տեղում, թ. 154, 30. 06. 1988:

հուօյան ղեկավար Ա. Գրոմիկոն Կրեմլում մեկուկես ժամվա զրոյց է ունեցել ԼՂԻՄ պատվիրակոյթյան հետ: Այն կազմել էին քարտուղարներ Հ. Պողոսյանը և Բ. Մալկովը, Կ. Մարքսի անվան կուլտրնտեսոյթյան նախագահ Ռ. Բալայանը, Ղարմետաքս կոմբինատի ջուլիակուիի Ա. Աղաջանյանն ու Հաղթանակ կուլտնտեսոյթյան ֆերմայի վարիչ Ա. Գրիգորյանը: Ա. Գրոմիկոն խոստացավ ԼՂԻՄ հարցը հանգամանորեն ուսումնասիրել և առաջիկա ԳԻՆ նախագահոյթյան նիստում քննարկել<sup>324</sup>: Քիչ ավելի ուշ, հուլիսի 2-ին և 4-ին Արցախի կոմունիստների առաջնորդ Հ. Պողոսյանին ընդունել էին ԽՄԿԿ ԿԿ քարտուղար Ա. Յակովլևն ու գլխավոր քարտուղարը: Երկու զրոյցները երկարել էին մեկ ժամից ավելի ու եղել շահագրգիռ<sup>325</sup>: Այնուհանդերձ, համամիութենական կուսակցական հավաքի մոտեցումը չարդարացրեց հայ ժողովրդի ակնկալիքը: Մնում էր սպասել Գերագոյն խորհրդի նստաշրջանին:

Հետևաբար, 1988 թ. հուլիսի սկզբներին վեր է խոյացել ազգային-ազատագրական պայքարի նոր ալիքը: Ինչպես տեղեկացրեց ՊԱԿ-ի հաղորդագրոյթուններից մեկը, 118 ինքնաթիռով Երևան է տեղափոխվել լրացուցիչ զորամասեր: Դա նշանակում էր, որ օդանավակայանը որոշ ժամանակով փակվելու էր քաղաքացիական ուղևորների համար: Հուլիսի 5-ին անհանգստացած հարյուրավոր մարդիկ Թատերական հրապարակից ավտոբուսներով մեկնում են «Զվարթնոց» օդանավակայան՝ իմանալու, թե առաջիկա օրերին արդյո՞ք այն փակ է լինելու: Նրանք, երբ պատրաստվում էին օդանավակայանից վերադառնալ, ենթարկվել են զինվորականների գրոհին, որի արդյունքում զոհվում են երկու հոգի, որից մեկը՝ լուսանկարներ անող Խաչիկ Զաքարյանը, զինվորների

---

<sup>324</sup> В. Б. Арутюнян, նշվ. աշխ., էջ 110: С. А. Амбарцумян, նշվ. աշխ., էջ 42-ում նշում է այդ հանդիպմանը Մ. Գորբաշչովի մասնակցոյթյան մասին:

<sup>325</sup> В. Б. Арутюнян, նշվ. աշխ., էջ 111–112, он же, Генрих Погосян: лидер Арцаха, 24–25:

գնդակից<sup>326</sup>: Տասնյակ մարդիկ վիրավորվում են: Դեպքերին ակա- նատեսներից մեկը, պատմելով զինվորների անխղճության մասին, կարծիք է հայտնել, թե ՆԳՆ-ի ու նրա զորքերի դաժանությամբ հանդերձ, ՊԱԿ-ն էլ պետք է ունենար իր դերակատարությունը<sup>327</sup>:

Ինչպես հայտնի է, Մոսկվայից հրամայել են ապաշրջափա- կել օդանավակայանը: Այդ մասին բողոքը ստանալուց հետո Ա. Լուկյանովն, որը տնօրինում էր վարչական մարմինները, պատաս- խանել է, թե օդանավակայանը պաշտպանական նշանակություն ունեցող համամիութենական օբյեկտ է, ուստի միութենական մար- մինները չեն կարող հաշտվել ստեղծված իրադրության հետ: ՀԿԿ ղեկավարը պահանջեց գերծ մնալ ուժային գործողություններից: Այնուհետև նա զանգահարել է գեներալ Ա. Մակաշովին և հաղոր- դել, որ ուժ կիրառելու բոլոր հետևանքների համար պատասխան կտա գլխով: Սակայն օդանավակայանը արդեն ապաշրջափակվել էր՝ զինվորների ի գործ դրած բռնություններով և ձեռքի բահերով: «Զվարթնոցում» տեղի ունեցածը առաջ բերեց հասարակության վրդովմունք և քաղաքով մեկ տարածված սգո ցույցեր, որոնց հատ- կապես մեծ մասնակցություն է բերել Խ. Զաքարյանի լուսանկար- ները ձեռքին երիտասարդությունը: Նրա պատասխաններում առաջին անգամ գրվեցին հակախորհրդային դրոյթներ<sup>328</sup>:

1989 թ. հունվարի 7-ին հարցաքննության ժամանակ Լևոն Տեր-Պետրոսյանը քննչի հարցին՝ թե ի՞նչ կապ եք ունեցել ներքին

---

<sup>326</sup> Տե՛ս նաև Stuart J. Kaufman, *Modern Hatreds: The Symbolic Politics of Ethnic War*, Ithaca and Lnd., 2001, p. 65.

<sup>327</sup> Հեղինակի ձեռքի տակ է գտնվում Հայաստանի «Ղարաբաղ» կոմի- տեի 1988 թ. կազմած 30 էջից բաղկացած մեքենագիր գրքույկը, որը պարունակում է փաստաթղթեր, ականատեսների վկայություններ, քննչական նյութեր: Գրքույկի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Զվարթնոց»-ը եղել է կազմակերպված հակահայկական գործողու- թյուն: Նրա նպատակն էր հայ ժողովրդին ներքաշել նոր սադրանքի մեջ:

<sup>328</sup> Ավելի մանրամասն. Claire Mouradian, *The Mountainous Karabagh Question: Inter-Ethnic Conflict or Decolonization Crisis?* – “Armenian Review,” Watertown, Mass., 1990, vol. 43, № 2–3, p. 22:

գորքի «Զվարթնոցում» մարդկանց վրա հարձակման հետ, պատասխանել է. օդանավակայանում իրականացված գործողությունների հետ ոչ կոմիտեն, ոչ էլ ինքն անձամբ որևէ կապ չեն ունեղել: Երբ հուլիսի 3-ին և 4-ին խոսք բացվեց «Զվարթնոցի» աշխատակազմի գործադուլի մասին, Ղարաբաղ կոմիտեի բոլոր անդամները դրան դեմ են եղել: Նույնիսկ երբ հարձակման օրը՝ հուլիսի 5-ի հանրահավաքում իմացել ենք, որ օդանավակայանում գտնվել են շատ մարդիկ, ձգտել ենք նրանց հանել այնտեղից: Մի երիտասարդը միկրոֆոնով գոռաց. «Հիմա գնում ենք օդանավակայան», ես մոտեցել եմ նրան ու ասել, որ կոմիտեն դեմ է այնտեղ էքսցես առաջացնելու, իզուր եք աղմուկ բարձրացնում: Հուլիսի 3-ից 5-ը մասնակցել եմ բոլոր միտինգներին և նույնիսկ ելույթ եմ ունեցել:

Հուլիսի 5-ին, երբ մարդիկ եղել են օդանավակայանում, քաղկոմի մոտ հանդիպել եմ առաջին քարտուղար Լ. Սահակյանի և քաղխորհրդի նախագահ Է. Ավագյանի հետ: Նրանք ինձ ասել են, որ օդանավակայանում գտնվում են մեծ թվով մարդիկ, որոնք այն շրջափակել են և ինձ խնդրել, որպեսզի մեր կոմիտեի միջոցով համագործակցենք կուսակցական-խորհրդային մարմինների հետ, որպեսզի մարդկանց դուրս բերենք այնտեղից: Ես գնացել եմ Վազգեն Մանուկյանի բնակարանը ու նրան պատմել բոլորը: Որից հետո օդանավակայան է գնացել Ռաֆայել Ղազարյանը: Հետո եմ իմացել, որ Թատերական հրապարակից մարդկանց օդանավակայան են տարել ավտոբուսներով: Ինչպես ես, այնպես էլ կոմիտեն ոչ մի կապ չենք ունեցել օդանավակայանում տեղի ունեցածի հետ, իսկ թե ով է այդ հարցում նախաձեռնություն ունեցել, չեմ կարող ասել»<sup>329</sup>:

Բացի դրանից, «Զվարթնոց»ի նույն օրը Մասիսում թունավորվել էին «Գարուն» կարի արտադրական միավորման 51 աշխատող: Ինչպես հետո պարզվել է, այդ թունավորումը մարդկանց գործոնի հետևանք չի եղել: Սակայն ոմանք փորձում էին դա բարդել մասնաճյուղում աշխատող ադրբեջանուհիների վրա: Այնու-

---

<sup>329</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 1, գ. 161, թ. 2:

հանդերձ, այդ երկու հանգամանքը ազդեցիկ խթաններ դարձան հուլիսի 4-ից հանրապետությունում սկսած համազգային գործադուլի: Հուլիսի 5-ին Թատերական հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում Լևոն Տեր-Պետրոսյանը մայրաքաղաքի բնակչությանը կոչ էր անում հուլիսի 6-ից դուրս չգալ տներից և Երևանը հայտարարել «մեռյալ քաղաք»<sup>330</sup>, իսկ հուլիսի 6-ին տեղի ունեցած հանրահավաքում հայտարարվեց, թե հանրապետությունում գործադուլն ու ապստամբությունը ընդունել են համազգային բնույթ, որոնց «օգնությամբ կարելի է հասնել նրան, որ բանակը դուրս բերվի քաղաքից և կատարվի մեր պահանջները»<sup>331</sup>:

Այդ հանրահավաքում Վազգեն Մանուկյանը իր ելույթում շեշտեց, որ վերջին իրադարձությունները ցույց են տալիս՝ բանակը սոսկ առիթ է որոնում ընդհարվել բնակչության հետ: Կոմիտեն քաղկոմից պահանջել է զինվորներին դուրս բերել քաղաքից և պատասխանատվության ենթարկել օդանավակայանում մարդ սպանած սպային<sup>332</sup>:

1988 թ. հուլիսի 5-ի դրությամբ հանրապետության գործադուլների, ֆաբրիկաների, հիմնարկ-ձեռնարկությունների մեծամասնությունը գործադուլի մեջ էին: Կուսակցական և պետական մարմինները իրար էին խառնվել: Հանրահավաքները չէին դադարում և ելույթ ունեցողներն իրար հերթ չէին տալիս: Շատ ակտիվ էին Ղարաբաղ կոմիտեի անդամները: Հուլիսի 7-ին հանրապետության հեռուստատեսությամբ հանդես եկավ Վազգեն Առաջին կաթողիկոսը: Նա, ցավակցելով «Զվարթնոց» օդանավակայանում տեղի ունեցածի հարձակման համար, անդրադառնում է ղարաբաղյան հարցին, հայտարարում, թե ժողովրդի այդ օրինական պահանջին պատասխան է տվել հունիսի 15-ին գումարված Գերագույն խորհրդի նստաշրջանը:

«Ես,– նշել է Վազգեն վեհափառը,– հպարտ էի վերջին ափսոսանքներին մեր ժողովրդի հայրենասիրական կարգապահ կեցված-

---

<sup>330</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 21, թ. 69:

<sup>331</sup> Նույն տեղում, թ. 89:

<sup>332</sup> Նույն տեղում:



քով ու ցույցերով Օպերայի հրապարակում, որով աշխարհով մեկ՝ բարձրացավ հայաստանցիների բարոյական վարկը, սակայն օդանավակայանի բռնագրավումով և այդ օրերին Երևանում տեղի ունեցած անկարգություններով հնարավոր չէ ոչ մի տեղ հասնել, ոչ մի հարց լուծել»<sup>333</sup>: Կաթողիկոսը կոչ էր անում խնայել Հայաստանը և համոզված էր, որ ժողովուրդը նրան ու բովանդակ աշխարհը հուսախաբ չի անի<sup>334</sup>:

Ս. Համբարձումյանը հետո գրել է, որ «Զվարթնոցը» առաջին լուրջ ընդհարումն է եղել բանակի և ժողովրդի միջև: Երկուերեք օր անց կենտրոնական հեռուստացույցը «կեղծել է ամեն ինչ և շուտ տվել հայ ժողովրդի դեմ»<sup>335</sup>: Արձագանքելով կաթողիկոսի հեռուստատելույթին, հուլիսի 10-ին անցկացրած հանրահավաքում հրապարակվել էր բաց նամակ, որտեղ գնահատական էր տրվել գործադուլների նպատակահարմարությանը: Ուղերձում մասնավորապես ասված է. «Անսպով Ձեր հայրական կոչին, մենք ջանք չենք խնայի զսպել ավելորդ հույզերը, կանխել առանձին անձանց անխուհեմ գործողությունները և մեր արդար ու օրինական պայքարը կշարունակենք քաղաքակիրթ ժողովրդին վայել բարձր կազմակերպվածությամբ: Այս խոստման խոսուն երաշխիքն է անցած հինգ ամիսների իրողությունը: Սակայն, վեհափառ տեր, ներողամիտ եղեք, որ չենք կարող լծվել ստեղծագործ աշխատանքի, քանզի ստեղծված իրավիճակում գործադուլը մեր միակ խաղաղ զենքն է... Գործադուլի ճանապարհը խաղաղ է և ընդունված ողջ քաղաքակիրթ ու քրիստոնյա աշխարհում, որպես արդար պահանջների վերջին զենք, մի հորդորեք մեզ հրաժարվել այդ զենքից, քանզի մեր մնացյալ գործողությունները ցայսօր հնչեցին որպես «ձայն բարբառոյ յանապատի...»<sup>336</sup>:

---

<sup>333</sup> Սովետական Հայաստան, թ. 161, 08. 07. 1988: Հավելենք, որ օդանավակայան բացարձակապես չի գրավվել ու Երևանում միայն խաղաղ հանրահավաքներ էին անցնում:

<sup>334</sup> Նույն տեղում:

<sup>335</sup> С. А. Амбарцумян, նշվ. աշխ., էջ 32–33:

<sup>336</sup> Տե՛ս Ռաֆայել Ղազարյան, նշվ. աշխ., էջ 194:

1988 թ. հուլիսի 9-ին հեռուստատեսությամբ հանդես գալով ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարը հայտարարեց, որ անդադար միտինգները, գործադուլները, սպառնալիքները ջլատում են հանրապետության նորմալ կյանքը, մարդկանց հոգում ծնում անհանգստություն և խռովք: Անպատասխանատու որոշ անձինք ձեռնարկում են կենսականորեն կարևորության օբյեկտները կանգնեցնելու, փոխադրամիջոցների երթեվեքը դադարեցնելու, աշխատավորների վրա բռնություն գործադրելու, Երևանը «մեռյալ քաղաք» հայտարարելու փորձերը: ՀԿԿ ղեկավարը աղերսում էր օգնել նրա կուսակցությանը իրադրությունը կայունացնելու գործում, վերադառնալ հիմնարկ-ձեռնարկություններն ու... հակահարված հասցնել նրանց, ովքեր... մարդկանց հրահրում էին անխոհեմ ու վտանգավոր գործողությունների»<sup>337</sup>:

Նկատենք, որ հուլիսյան այդ օրերին հանրապետության վիճակը շատ էր թեժացել: «Ղարաբաղ» կոմիտեի տեղերում ստեղծված ենթակոմիտեները սկսում էին իրենց կամքը թելադրել հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին: Գործարաններում, հետազոտական և ուսումնական հաստատություններում անցնում էին ընդհանուր ժողովներ, որտեղ պահանջվում էր ճիշտ գնահատական տալ «սումգայիթի» վայրագությանը, դատապարտել նրա բոլոր հանցագործներին ԽՍՀՄ Գերագույն դատարանի կողմից, «Զվարթնոց»-ում խորհրդային զորքերի խաղաղ բնակչության վրա սանձազերծ հարձակումն ու սպանություններն որակել բանդիտիզմ և դատապարտել մեղավորներին, զորքը դուրս բերել Երևանից, ապահովել ԽՍՀՄ տարածքում հայ ժողովրդի անվտանգությունը, անհապաղ վերացնել Արցախի շրջափակումն և այլն: Իսկ երևանյան հանրահավաքների մասնակիցները պահանջում էին զբաղեցրած պաշտոններից հեռացնել Ռ. Արզումանյանին, Ֆ. Սարգսյանին, Հ. Ոսկանյանին<sup>338</sup>:

Հուլիսի 11-ին Մատենադարանի մոտ ընթացող հանրահավաքում Լևոն Տեր-Պետրոսյանը խստորեն քննադատեց կենտրո-

<sup>337</sup> Սովետական Հայաստան, թ. 163, 10. 07. 1988:

<sup>338</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 21, թ. 147:

նական հեռուստատեսությամբ երկրորդ անգամ սփռված Վ. Բեկետովի «Չորս օր Ղարաբաղում» հաղորդումը: Դրա անպատկառ հեղինակը ստում էր, թե հայերն իրենց կամքով էին գնացել Շուշի-ից, տրտնջում, որ Ստեփանակերտի գործադուր ադրբեջանցիներին զրկում էր լրացուցիչ պարզկներից, իսկ վերջինները ԽՍՀՄ-ով մեկ վայրահաշում էին թե իբր նրանց ու հայերի բնակչության քանակը հավասարվել է, ուրեմն հարկավոր է լուծարել մարզի ինքնավարությունը<sup>339</sup>:

Կշտամբելով կենտրոնի հերթական կեղծիքը Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ Մոսկվայի առաջ երկու ուղի կա. Արցախի հարցը լուծել դրականորեն, կամ էլ ժողովրդին ճնշել տանկերով: Եթե Արցախ-Հայաստանում ուժ գործադրվի, ապա դա կլինի վերակառուցման վերջը: Իսկ որպեսզի դա տեղի չունենա, Արցախը պետք է միացվի Հայաստանին: Դրա համար պետք է շարունակվի համազգային գործադուր<sup>340</sup>: Այդ հանրահավաքում Լևոն Տեր-Պետրոսյանը հաղորդել էր, որ հունիսի 28-ին տեղի է ունեցել ԼՂԻՄ մարզային խորհրդի արտահերթ նստաշրջան, որը փորձել են ճնշել Ադրբեջանի և բանակի ուժերով, սակայն ի շնորհիվ Հայաստանում համընդհանուր գործադուր սկսելու կոչին, այն կանխվել է<sup>341</sup>:

1988 թ. հուլիսի 12-ին հրավիրվել էր ԼՂԻՄ ժողովրդական դեպուտատների 20-րդ գումարման Սովետի ութերորդ նստաշրջանը, որն ընդունեց «Ադրբեջանական ՍՍՌ-ի կազմից Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի դուրս գալու հռչակման մասին» որոշումը՝ գործկոմի նախագահի պաշտոնակատար Շ. Պետրոսյանի և քարտուղար Ռ. Խաչիյանի ստորագրությամբ: Խորհուրդը անհրաժեշտ է համարում «Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի 1988 թ. հունիսի 15-ի նստաշրջանի որոշման իրագործումը», հույս ունենալով, որ «Լեռնային Ղարաբաղի միացումը Հայկական ՍՍՌ-ին ըմբռնումով

<sup>339</sup> Տե՛ս Арсен Мелик-Шахназаров, նշվ. աշխ., էջ 342–343:

<sup>340</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 21, թ. 149:

<sup>341</sup> Նույն տեղում, թ. 167:

կընկալվի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության աշխատավորների և ժողովուրդների կողմից»<sup>342</sup>: Այդ որոշումը հուլիսի 18-ին սպասվող ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստի նախօրյակին, որտեղ պետք է քննարկվեր Լեոնային Ղարաբաղի մարզի հարցը, պատմական մեծ նշանակության իրադարձություն էր:

Ադրբեջանական կողմն էլ պատրաստվում էր հանդիպմանն ու արդեն ամսի 13-ին նրա Գերագույն խորհրդի նախագահությունը վճռեց բացասական պատասխան տալ հուլիս 12-ին կայացած ԼՂԻՄ խորհրդի որոշմանը: Նկատենք, որ այդ ժամանակահատվածի երևանյան հանրահավաքները առանձնանում էին նոր հռետորների բազմությամբ: Ելույթներ էին ունենում տարբեր մասնագիտության մարդիկ, նրանց թվում կանայք, թռչակառուներ և նույնիսկ դպրոցականներ: Օրինակ հուլիսի 13-ի միջոցառմանը ելույթով հանդես գալու ժամանակ ՀԽՍՀ ԳԱ Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի աշխատակից Ա. Մանասյանը ունկնդիրներին կոչ ուղղեց շարունակել գործադուլը<sup>343</sup>:

Հուլիսի 16-ին կայացած հանրահավաքում Սիլվա Կապուտիկյանը մերկացրեց երկրի իշխանությունների հակահայ գործունեությունը: Մեծ բանաստեղծուհին իր ճառը ավարտեց հետևյալ կոչով՝ «Մեր դատը արդար է, և մենք հաղթելու ենք անպայման»<sup>344</sup>: Հուլիսի 18-ին հրավիրված հանրահավաքում Վանո Սիրադեղյանը ներկայացրեց «Ղարաբաղ» կոմիտեի նոր, լրացված կազմը. Ռաֆայել Ղազարյան, Բաբկեն Արարքցյան, Դավիթ Վարդանյան, Վազգեն Մանուկյան, Համբարձում Գալստյան, Ալեքսան Հակոբյան, Աշոտ Մանուչարյան, Սամսոն Ղազարյան, Սամվել Գևորգյան, Լևոն Տեր-Պետրոսյան և Վանո Սիրադեղյան՝ ամբողջը 11 հոգի<sup>345</sup>:

Այսպիսով, վերակառուցման ճանապարհին տեղի էին ունենում իրադարձություններ՝ շարժման ժողովրդականացում, «Ղարա-

<sup>342</sup> Սովետական Ղարաբաղ, թ. 163, 12. 07. 1988:

<sup>343</sup> Նույն տեղում, թ. 164, 13. 07. 1988:

<sup>344</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 22, թ. 13:

<sup>345</sup> Նույն տեղում, թ. 23-24:

բաղ» կոմիտեի ծնունդ, ամրապնդում և ընդլայնում, Սումգայիթի ցեղասպանություն և դրա դատապարտումը Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից, համաժողովրդական գործադուլներ և այլն, որոնք ընդգրկել էին ամբողջ հանրապետությունը և մերժում էին տիրող վարչակարգին բնորոշ՝ անհաղորդ, կարծրացած, հասարակության կենսական պահանջները բավարարելու անընդունակ լինելը: Ամենակարևորը՝ վեր բարձրացավ Արցախի հիմնախնդիրը արդարացի լուծելու պահանջը:

## **II. Հայ ժողովրդի ջանքերը ԼՂԻՄ-ի հիմնահարցը խաղաղ ճանապարհով հանգուցալուծելու ուղղությամբ**

### **2.1. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության 1988 թ. հուլիսի 18-ի որոշման արձագանքները Հայաստանում**

ԽՄԿԿ 19-րդ կոնֆերանսի աշխատանքներն ավարտվելուց հետո Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ա. Գրոմիկոն սկսեց նախապատրաստել հուլիսի 18-ին տեղի ունենալիք Գերագույն խորհրդի Նախագահության նիստը: Հանդիպումներ տեղի ունեցան երկու հանրապետությունների ներկայացուցիչների հետ, որոնց ժամանակ հայկական կողմը՝ Հ. Ոսկանյանը, Հ. Պողոսյանն ու Ս. Մամունցը, Ս. Հարությունյանը, Վ. և Ս. Համբարձումյանները, Ս. Կապուտիկյանը, Վ. Պետրոսյանը, պաշտպանում էր ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշումները: Նրանք բոլորը, ինչպես և մեր ամբողջ հասարակությունը որոշակի հույսեր էին տաձում, թե Կրեմլը ինչ-որ ձևով բավարարի հայության արդարացի պահանջը:

Սակայն իրենց բոլոր ջանքերն ապարդյուն էին: Գերագույն խորհուրդը նպատակ չուներ փոփոխություն մտցնել երկրի Սահմանադրության մեջ կամ դիմել քաղաքական համարձակությանը: Դրանում Մ. Գորբաչովը, Ա. Գրոմիկոն կամ մյուս վարչարարները որևէ ողբերգություն չէին տեսնում: Հայկական պատվիրակությունը Ա. Գրոմիկոյին առաջարկեց, որպես փոխզիջում, ԼՂԻՄ-ը միացնել

Ռուսաստանի դաշնության հետ կամ այնտեղ հաստատել նախագահական կառավարում: Գրոմիկոն հայտարարեց, որ ինքը չգիտի այդպիսի պետական կառավարման ձև: Իսկ երբ նրան նկատել տվեցին, որ հակառակ որոշումը առաջ կբերի ժողովրդական լայն շարժում, նա հարցրեց, թե այդ մասին նախօրոք պլանավորվել է: Նրան հիշեցրին, որ նման կանխատեսումը անելու համար պետք է իմանալ արդի պետությունների պատմությունը: Այդ դեպքում դժվար չի լինի գալ նման մտահանգման<sup>346</sup>:

Նախագահության նիստը մարդաշատ էր և սփռվում էր միութենական հեռուստատեսությամբ: Բացի Գերագույն խորհրդի անդամներից, հրավիրված էին մի շարք պաշտոնյաներ, գիտության ու մշակույթի ներկայացուցիչներ: Հայաստանի պատվիրակության հետ գնացել էին նաև խորհրդատուներ: Նիստը սկսվել է առավոտվա ժամը 10-ին ու տևել ութ ժամ, երկու ընդմիջումով և այդ «ներկայացմանը» Մոսկվայում շատ լուրջ էին պատրաստվել: Ողջ աշխարհը պիտի տեսներ, թե Միությունում ինչպիսի ժողովրդավարական ճանապարհով է «լուծվում ազգային հարցը»<sup>347</sup>: Նաև պիտի տեսնեին, թե որքան վատն են հայերը: Իսկ նրանք պիտի դրսևորեին քաղաքական արդի մտածողությունը, իրենց բանիմաց լինելն և ազգային արժանապատվությունը, որպեսզի աշխարհին ցույց տային, թե որքան հրամայական էին իրենց պահանջները, արդարացի ու ժամանակի ոգուն համապատասխան<sup>348</sup>:

Նիստը Ա. Գրոմիկոյի բացումից հետո ղեկավարությունը իսկույն «բռնազավթում է Մ. Գորբաչովը» և Ա. Գրոմիկոյի ձայնը

---

<sup>346</sup> Հուլիսի 18-ի նիստը մանրամասն նկարագրել է նրա եռանդուն մասնակից ակադեմիկոս Ս. Համբարձումյանը: Տե՛ս Ս. Ա. Амбарцумян, նշվ. աշխ., էջ 33–53, նաև՝ Սուրեն Վասիլյան, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. հուլիսի 18-ի նիստի որոշումը, Կանթեղ, Եր., 2015, հ. 3 (64), էջ 103–113:

<sup>347</sup> Տե՛ս նաև Michael P. Croissant, *the Armenia–Azerbaijan Conflict: Causes and Implications*, Westport CT, 1998, p. 30; Stuart J. Kaufman, նշվ. աշխ., p. 65.

<sup>348</sup> Ս. Ա. Амбарцумян, նշվ. աշխ., էջ 46:

լավում էր միայն այն ժամանակ, երբ նախօրոք պատրաստված ցուցակով խոսք էր տալիս հաջորդին<sup>349</sup>: Այդ սցենարը ընթացել է մինչև նիստի վերջ: Ասենք, որ նախօրոք բաժանվել էր որոշման նախագիծը: Ելույթ ունեցողները խոսում էին որոշման նախագծի ոգով և առանց որևէ բան ապացուցելու: Նրանք միաբերան հայտարարում էին, թե որքանով էր ղարաբաղյան հարցը «խանգարում» վերակառուցմանը: Հայ պատգամավորները զարմացած ու զայրացած էին վերացական, անիմաստ, սահմանադրության պահանջին հակառակ ճառ ասողների վարքագծից: Ցուցակով ելույթ ունեցողների այդ շարքը միայն մի միտում ուներ՝ ցանկացած գնով պաշտպանել որոշման նախագիծը: Կային նաև տեղին առաջարկություններ, որոնք մերժվում էին Մ. Գորբաչովի կողմից:

Հայ մասնակիցներից առաջինը խոսեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահության նախագահ Հ. Մ. Ոսկանյանը: Նա հանգամանալից ներկայացրեց Ադրբեջանի հեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 1-ի դեկրետն, որով Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրն ու Նախիջևանը ճանաչվեցին որպես Հայաստանի անբաժանելի մաս: Զեկուցողը նշեց նաև ՌԿ(Բ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոյի՝ 1921 թ. հուլիս 4-ի համանման որոշումը: Նույն այդ միտքը ընդգծեցին Հ. Պողոսյանը և ակադեմիկոս Ս. Համբարձումյանը: Ու թեև հայկական կողմը երիցս անդրադարձավ այդ փաստին, «դահլիճում ներկա Ադրբեջանի ներկայացուցիչներիից մեկն անգամ չփորձեց ընդդիմանալ դրան»,– տրտնջաց ազերի կողմը<sup>350</sup>:

Դա մասամբ արեց Մ. Գորբաչովը: Նա դժգոհություն հայտնեց Հ. Ոսկանյանին, թե իրար մեջ հարցերը կարգավորելու փոխարեն Հայաստանը Մոսկվային է ստիպում ազգային քաղաքականություն անել և որոշում կայացնել<sup>351</sup>: Մեղադրանքին միջնորդաբար պատասխանեց Հ. Պողոսյանը, հիշեցնելով որ իր մարզի

---

<sup>349</sup> Վ. Ե. Խոջաբեկյան, Արցախը փորձության ժամին, էջ 33, С. Амбарцумян, նշվ. աշխ., էջ 34:

<sup>350</sup> Т. Кочарли, К истории Карабахского вопроса (вымыслы и действительность), Баку, 2009, с. 38–39.

<sup>351</sup> Правда, 20. 07. 1988.

հողը՝ ինչպես և ԽՍՀՄ ցանկացած տարածքը, պատկանում է ամբողջ խորհրդային ժողովրդին, ուրեմն նրանք իրավացի են, երբ դիմում են կենտրոնական իշխանությանը: Նա նկարագրեց թե ինչպիսի հալածանքներ է կրել նրա մարզը Բաքվի ղեկավարության երեսին: Մասնավորապես Բաքու ուղարկվող Լեոնային Ղարաբաղի տարեկան մասհանումները կազմում էին 91 մլն ռուբլի, թեև ինքնավար մարզի ամբողջ բյուջեն հավասար էր 42 միլիոնի<sup>352</sup>: Դահլիճը ժամանակավորապես լռեց: Լեոնային Ղարաբաղը այլևս չի կարող մնալ Ադրբեջանի ենթակայության ներքո՝ ընգծեց մարզկոմի առաջին քարտուղարը:

Հայկական այդ դրույթը ամրապնդեց ակադեմիկոս Ս. Համբարձումյանը: Վերջինս ներկայացրեց Բաքվի խիստ խտրական քաղաքականությունն ու Հայաստանում տիրող նոր քաղաքական իրավիճակը: Նա պաշտպանում էր մարզի միացումը Հայրենիքին և որպես փոխզիջում ընդունում էր ինքնավար մարզի ժամանակավոր դուրսբերումը ԱդրԽՍՀ-ի կազմից և այնտեղ նախագահական կառավարման ձևի հաստատում: Մ. Գորբաչովը ընդմիջեց իր առաջարկով՝ բարձրացնել ԼՂԻՄ-ի կարգավիճակը մինչև ինքնավար հանրապետություն<sup>353</sup>: Մոռանալով Նախիջանի ԻՀ գոյության ու նրա դառը փորձի մասին, նա սպառնում էր Հայաստանում նոր ինքնավարություն ստեղծել Հայաստանում բնակվող ադրբեջանցիների համար: ԱդրԿԿ առաջնորդ Ա. Վեզիրովը անմիջապես հավելեց թե Ստեփանակերտի անհամաձայնության դեպքում կարելի է լուծարել ինքնավար մարզը: Այդ ուղղությամբ արդեն աշխատանք է կատարվում և ստորագրություններ են հավաքվում:

Բոլոր ելույթ ունեցած 29 անձանց շարքում միայն Տաջիկստանի ԳԽ Նախագահության նախագահ Գ. Պալլանն, ակադեմիկոս Գ. Բասովն ու պոետ Ռ. Գամգատովը նշում էին ազգային մշակույթը զարգացնելու, փոխզիջման ու միութենական ժամանակավոր կառավարման անհրաժեշտության մասին: Ի տարբերությամբ

---

<sup>352</sup> Правда, 20. 07. 1988. Հ. Պողոսյանի ամբողջ ելույթը տե՛ս նաև՝ Բ. Բ. Арутюнян, նշվ. աշխ., էջ 121–125:

<sup>353</sup> С. А. Амбарцумян, նշվ. աշխ., էջ 48:



յուն նրանց, ադրբեջանցիները պնդում էին ստատուս քվոյի վրա: Նրանց հռետորները խոսում էին երկրի ղեկավարության կողմից մշակված սխեմայով՝ երեսպաշտ ոճով, որոնք արժանանում էին ղեկավարության գովասանքին: Նրանց ելույթները կրկնում էին լճացման ժամանակաշրջանի բրեժնևյան բարբառանքները: ԱդրԽՍՀ ներկայացուցիչները արտահայտվում էին վստահ ու առանց ընդհատվելու: Պարզ նկատվում էր, որ նրանց և Մ. Գորբաչովի միջև կար փոխհասկացություն: Ի հակառակ դրան, հայերի ելույթները մշտապես ընդհատվում էր հարցերով և տեղերից առարկություններով: Հիմնականում սա կատարում էր Մ. Գորբաչովը, թեև նրան չհաջողվեց հասնել իր նպատակին: Նա չկարողացավ նսեմացնել հայ ներկայացուցիչների արդար խոսքը:

Օրինակ Վ. Համբարձումյանին բավականին կոպիտ ընդհատելու պարագային գլխավոր քարտուղարը հարց ստացավ, արդյոք նա գիտի թե ով է եղել երկրի թագավորը Կոպեռնիկոսի<sup>354</sup> ժամանակ: Ս. Համբարձումյանը՝ նրան ուղղված կասկածին, որքանով իրավասու է խոսել իր ազգի անունից, ստիպված էր հիշեցնել նրա ժողովրդի կողմից ընտրված լինելու հանգամանքը: Իսկ Վարդգես Պետրոսյանը՝ երբ հնչել էր, թե արդյոք հասկանում է ցեղասպանություն բառի իմաստը բացականչեց՝ մեր երկրում յուրաքանչյուր աշակերտը գիտի թե ինչ է նշանակում ցեղասպանությունը: Ամբողջությամբ վերցրած, հայ պատվիրակները մեծ նվիրվածությամբ պաշտպանեցին իրենց ժողովրդի և հատկապես արցախյան պահանջների արդար լինելը:

---

<sup>354</sup> Վ. Համբարձումյանի Կոպեռնիկոսի մասին հարցը ուներ ինչպես բարոյական, այնպես էլ քաղաքական բովանդակություն: XV-XVI դդ. այդ գիտնականի օրոք իշխել են չորս թավազոր ու մեկ կայսրը, ում անունները հայտնի են միայն մասնագետներին: Բայց Կոպեռնիկոսի տեսությունը Երկրագնդի փոխարեն, Արև է դարձրել տիեզերքի կենտրոնը: Եվ այժմ Կոպեռնիկոսին հավասար աստղագետը հասկացնում էր, որ հայ պատվիրակների քաղաքականության Արևը իրենց ժողովուրդն է, և ոչ թե սեփական պաշտոնը կամ բարեկեցությունը:

Գերագույն խորհրդի Նախագահության նիստի վերջում ելույթ ունեցած Մ. Գորբաչովն գոհունակ տեսքով արտասանեց նաև իր եզրափակիչ խոսքը: Բարեկամության մասին նրա բոլոր ճամարտակությունները բացարձակ կեղծիք էին: Ձևի համար խոստովանեց Լեոնային Ղարաբաղի նկատմամբ անարդարություններ կատարելու փաստը: Ատելությամբ ես կարդում «նոր քաղաքակա-նության» առաջնորդի բարբառանքը, թե «ժամանակ կպահանջվի, որպեսզի այդ [երկու] հանրապետությունները դառնան հիրավի եղբայրական», կամ որ՝ «Ղարաբաղի պրոբլեմները օգտագործում են վերակառուցման հակառակորդները, պահպանողական և կա-շառակեր տարրերը, որոնք իրենց քսակները լցրել են լճացման ժամանակաշրջանում»: Հետո առաջարկում էր Գերագույն խորհրդի որոշումը ընդունելուց հետո այն «անշեղորեն կատարել»<sup>355</sup>:

Իսկ վերոհիշյալ որոշումն ասում է. «ՍՍՌՄ Գերագույն սովե-տի Նախագահությունը ելնում է ՍՍՌՄ սահմանադրության այն դրույթից (Սահմանադրություն, հոդ. 78), որին համապատասխան միութենական հանրապետության տարածքը չի կարող փոփոխվել առանց նրա համաձայնության: Այդ որոշումը կհակառակեր երկու հանրապետությունների ժողովուրդների շահերին, լուրջ վնաս կհասցներ այդ ռեգիոնի ազգամիջյան հարաբերություններին»:

Այդուհանդերձ, «ինքնավար մարզում երկար ժամանակ չեն լուծվում հայ բնակչության ազգային շահերը շոշափող շատ հար-ցեր, հատկապես մշակույթի, կրթության ոլորտում, կադրային քա-ղաքականության մեջ: Իսախտվում էին ինքնավար մարզի սահմա-նադրական իրավունքները: Այդ բոլոր բացասական երևույթները ոչ միայն ժամանակին չէին վերացվում, այլև կուտակվում էին», ու նրանց չզիտես թե երբ խստագույնս դատապարտեց երկրի աշխա-տավորները: Նաև նշված է, որ ԼՂԻՄ դրությունը շտկելու համար ԽՍՀՄ ղեկավար մարմիններում «խոշոր միջոցառումներ են նա-խատեսված Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզի տնտեսուֆ-յան, մշակույթի հետագա զարգացումն ապահովելու, աշխատավոր-

---

<sup>355</sup> Սովետական Հայաստան, թ. 172–173, հուլիս, 1988:

ների բարեկեցությունը բարձրացնելու, սոցիալիստական օրինակա- նությունն ու հասարակական կարգն ամրապնդելու համար»<sup>356</sup>:

Հայաստանի պատվիրակությունը դահլիճից դուրս եկավ գլուխները բարձր: Նա տարել է քարոզչական մեծ հաղթանակ: 70 տարվա պատմության ընթացքում բազմազգ պետության կազմի մեջ մտնող ժողովուրդը՝ այն էլ ոչ մեծ ածու, առաջին անգամ ներ- կայացրեց ու համոզիչ կերպով պաշտպանեց իր ազգային շահերը: Եվ այդ փաստը ստացել էր միջազգային լայն արձագանք՝ որջ աշխարհի լրատվամիջոցները մի քանի օր խոսում էին ԽՍՀՄ Գե- րագույն խորհրդի Նախագահության այդ նիստի մասին:

Միանշանակ, երկրի շատ քաղաքացիներ չէին ներում ԽՄԿԿ ղեկավարի թույլ տված կոպիտ սխալը: Չէ որ այդ օրը պետք է որոշվեր ԼՂԻՄ կարգավիճակի բարձրացման հարցը և այնտեղ մտցվեր նախագահական կառավարում, միույթենական իշխանույ- լունը պետք է դատապարտեր «սումգայիթը», հայտարարվեր ինք- նավար բոլոր միավորների իրավունքների իրական և ընդլայնված լինելու, պետք է հայտարարվեր զանգվածային լրատվամիջոցների կեղծարարություններին վերջ տալու մասին<sup>357</sup>:

Հայությունը խիստ դժգոհ էր ԽՍՀՄ ԳԽ Նախագահության այդ որոշումից: Մարզում և հանրապետությունում տեղի էին ունե- նում ժողովներ, հանրահավաքներ, ընդունում դատապարտող որոշումներ և բողոք-նամակներ ուղարկում հանրապետական և միույթենական իշխանություններին: Երևանի Ֆիզիկայի ինստիտու- տի կուսկոմիտեի ընդլայնված նիստը արձանագրում է, որ միույթե- նական օրենսդրի հուլիսի 18-ին ընդունված որոշումը «չի պատաս- խանում մեր սպասումներին»: Կոմիտեն համոզմունք հայտնեց, որ պետք է ամրապնդել ԼՂԻՄ-ի և Հայկական ԽՍՀ բազմակողմանի կապերը, խոսքից անցնել գործի և հնարավոր բոլոր միջոցներով օգնել ու համագործակցել մարզի բնակչության հետ<sup>358</sup>:

---

<sup>356</sup> Սովետական Հայաստան, թ. 172–173, հուլիս, 1988:

<sup>357</sup> С. А. Амбарцумян, նշվ. աշխ., էջ 71–76:

<sup>358</sup> ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 16, թ. 18–21:

Այդ նույն օրը «Գարուն» կարի արտադրական միավորման տղամարդկանց վերնաշապիկների ֆաբրիկայի կոլեկտիվի ժողովը, որին ներկա էին շուրջ հազար հոգի, ընդունած բանաձևում նշել է, որ Մոսկվայի վերոնշյալ որոշումը «հակասում է լենինյան ազգային քաղաքականությանը և ոտնահարում» ԽՍՀՄ Սահմանադրության 70-րդ հոդվածում արտահայտված սկզբունքները: Ժողովականները հանրապետության իշխանություններից պահանջել են անմիջապես դուրս բերել խորհրդային զորքերը Երևանից, հրավիրել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան և ժողովրդի կարծիքն արտահայտել 1988 թ. հուլիսի 18-ի որոշման նկատմամբ: «Գարուն»-ի աշխատակիցները հուլիսի 21-22-ը հայտարարեցին երկօրյա քաղաքական գործադուլ՝ ընդդեմ ԽՍՀՄ ԳԽ Նախագահության դարաբաղյան հարցի առթիվ կայացրած որոշմանը<sup>359</sup>:

Հանրապետության գրեթե բոլոր ձեռնարկություններում և ուսումնական հաստատություններում ընդունվել են նույնանման որոշումներ, որոնցում խստորեն դատապարտվել է կենտրոնական օրենսդիրների վճիռը: Հուլիսի 20-ին Երևանում հրավիրված հանրահավաքում ելույթ է ունենում Սիլվա Կապուտիկյանը: Հարգարժան բանաստեղծուհին հույս է հայտնել և շեշտել, որ հայ ժողովուրդը հուսահատվելու իրավունք չունի, նա անպայման կհաղթի: Կոչ է անում դադարեցնել գործադուլները և կիրառել պայքարի սահմանադրական ձևեր: «Հիշենք,- հայտարարեց նա,- պետք է գործել այնպես, որպեսզի Ղարաբաղը հպարտանա մեզնով: Եկեք պայքարենք ժողովրդական ձևով, ԼՂԻՄ-ի հետ ամրապնդենք տնտեսական ու մշակութային կապերը»<sup>360</sup>: Հաջորդ օրը, հուլիսի 21-ին տեղի ունեցած հանրահավաքում Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարում է, թե հինգ ամիս Ադրբեջան կայսրապետությունից անկախ ապրող Ղարաբաղը այսօր կազմում է Հայաստանի մի մասը, ինչը պետք է ցույց տալ «ԼՂԻՄ-ի հետ տնտեսական և

---

<sup>359</sup> ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 16, թ. 32-33:

<sup>360</sup> Նույն տեղում, ֆ. 1, ց. 87, գ. 22, թ. 78:

մշակութային կապերն ամրապնդելու միջոցով, որպեսզի Մոսկվան կանգնի կատարված փաստի առջև»<sup>361</sup>:

Հայաստանի ՊԱԿ-ի նախագահ Մ. Յուզբաշյանի ՀԿԿ կենտկոմ ուղարկած հաղորդումից իմանում ենք, որ Իգոր Մուրադյանը, չնայած «Ղարաբաղ» կոմիտեից հեռացվել էր, շարունակում էր գործել իր ընկերների հետ միասին: Նա երկու թռուցիկ էր պատրաստել և հուլիսի 20–21-ին տարածել մայրաքաղաքում, որտեղ նշեց ԽՍՀՄ կառավարությանը ԼՂԻՄ հարցը օրակարգից հանելու նպատակի մասին: Իսկ Ադրբեյջանի իշխանությունները ձգտում են «խոչընդոտել մարզի հայ բնակչության զարգացմանը»: Ելնելով դրանից, Իգոր Մուրադյանը առաջարկում էր «թույլ չտալ ԼՂԻՄ հայ բնակչության իրավունքների ոտնահարում», նպաստել Հայկական ԽՍՀ-ին «մասնակցելու Լեռնային Ղարաբաղի տնտեսական և կուլտուրական զարգացմանը», որի «երաշխիք կարող է հանդիսանա ԼՂԻՄ-ում լայն հրապարակայնությունը»<sup>362</sup>:

Մ. Յուզբաշյանը հաղորդում էր, որ «Ղարաբաղ» կոմիտեի անդամները մեկնում են շրջաններ, որտեղ ելույթ են ունենում հանրահավաքներում և մասնակիցներին հրահրում տեղական իշխանություններում առաջ քաշել իրենց կողմնակիցներին: Օրինակ Մասիս մեկնած Լևոն Տեր-Պետրոսյանը, Լենինական և Կիրովական՝ Ս. Ղազարյանը, Նոյեմբերյան՝ Վ. Սիրադեղյանը լայն աշխատանք են ծավալել<sup>363</sup>: Բացի այդ, որպեսզի երեխաներին կտրեն ռուսական դպրոցից, կոմիտեականները որոշել են սեպտեմբերին ռուսական դպրոցների մոտ կազմակերպել ուղեկալներ: Մ. Յուզբաշյանը նաև հաղորդել էր, որ հանրապետության քաղաքներում և գյուղերում շարունակվում էին միտինգներ, որտեղ կոչեր էին հնչում ներկով ծածկել ռուսերեն բոլոր գրառումները<sup>364</sup>:

Ժողովրդական պայքարի մարտավարությունը հետզհետե ավելի սուր բնույթ էր ընդունում: Իշխող քաղաքական ուժը՝ Հայաս-

---

<sup>361</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 22, թ. 96:

<sup>362</sup> Նույն տեղում, գ. 15, թ. 45:

<sup>363</sup> Նույն տեղում, թ. 60:

<sup>364</sup> Նույն տեղում, թ. 92–94:

տանի կոմունիստական կուսակցությունը նահանջելու միտում կամ թույլտվություն չուներ: Ս. Հարությունյանի ղեկավարած կենտկոմը ձգտում էր մարտավարության մեջ նորություններ մտցնել: Իր հերթին, «Սովետական Հայաստան» թերթը ճգնում էր նոր գունավորում տալ ԽՍՀՄ ԳԽ Նախագահության չարաբաստիկ որոշմանը: Հուլիսի 23-ի «Նայենք ճշմարտության աչքերին» առաջնորդողում նրա խմբագիրը գրում է, թե «բարդ է ու ոչ միանշանակ մարդկանց վերաբերմունքը» Մոսկվայում կայացած վճիռի նկատմամբ:

Թերթը իր նետը ուղղելով ժողովրդականությունն ու հասարակության վստահությունը վայելող «Ղարաբաղ» կոմիտեի դեմ, ամեն կերպ փորձում էր խարազանել նրան՝ կոմիտեի ընտրած ուղին բնորոշելով «անսկզբունքային, զրպարտչական, բարձրագույն, անապացույց դեմագոգիայի և անսքող ուժային ճնշման ուղի»: Թերթի էջերից՝ բնակչության համընդհանուր կարծիքին հակառակ, հայտարարվում էր թե «Ղարաբաղ» կոմիտեն «էլ ավելի նպատակասլացությամբ, քան նախկինում», ամեն կերպ նպաստում էր «մարդկանց համար անելանելի վիճակ ստեղծելու»: Ամբարտավան ու քմահաճ կերպով հնչեցվում էր, թե Մատենադարանի մոտ վերջերս հրավիրված միտինգում «Ղարաբաղ» կոմիտեի անդամները բարձրագույն հայտարարություններ էին անում, որպեսզի «ինչ որ կերպ արատավորեին Լեռնյաին Ղարաբաղի մասին» կենտրոնի նորաթուխ որոշումը:

«Սովետական Հայաստան»-ի խմբագրությունը մեջ է բերել կոմիտեի անդամների ողջ հասարակության կարծիքի ճիշտ արտահայտությունները: Օրինակ. Վանո Սիրադեղյան՝ «Միտինգի անունից մենք [այդ] որոշումը անընդունելի և չեղյալ ենք հայտարարում», Լևոն Տեր-Պետրոսյան՝ «Հարցի քննարկումը Գերագույն սովետի Նախագահությունում զուտ դեմագոգիա է, որը կարող է հանգեցնել անկանխատեսելի հետևանքների», Վազգեն Մանուկյան՝ «Դատապարտում ենք ՍՍԽՄ Գերագույն սովետի Նախագահության միակողմանի որոշումը»: Թերթը շարունակում էր սնամիտ ճամարտակել. «Շատ ցավալի է, որ նրանց թվում, ովքեր չեն կարողացել տեսնել կոմիտեականների երկերեսանիությունը, ովքեր ենթարկվել

են նրանց դեմագոգիկ ֆրազներին, հայտնվել է մեր նշանավոր գրող, պատերազմի ակտիվ մասնակից, սոցիալիստական աշխատանքի հերոս, Հայկական ՍՍԻ Գերագույն սովետի դեպուտատ Սերո Խանզադյանը, մի մարդ, ով իրապես ապրում է հայ ժողովրդի շահերով, թանկ է գնահատում նրա պատիվը»:

Եվ առանց ամոթի ավելացնում է. «Այսպես կոչված «Ղարաբաղ» կոմիտեի նպատակները ավելի պարզ են՝ շարունակել իրավակարգի հիմքերի խարխուլումը, ճնշում գործադրել ընտրովի ակտիվի վրա, ապակայունացնել աշխատանքային կոլեկտիվների գործունեությունը, ...ամեն ինչ անել, որպեսզի առաջիկայում ևս երեք տասն մեր հանրապետության հեղինակությունն ու դիրքերը: Ժամանակն է, որպեսզի բոլորս միասին համարձակորեն և վճռականապես ամուր փակենք նրանց ճանապարհը»<sup>365</sup>:

Նույն համարում ՏԱՍՍ-ի «Ո՞ր էին տանում նրանք ժողովրդին» ծավալուն հրապարակման մեջ թվարկվում էր, որ գործադուլի են միացել Հայաստանի խոշոր ձեռնարկությունները. «Հայէլեկտրաշարժիչ» և «Ավտոգենմաշ» արտադրական միավորումները, Կիրովականի «Արդսարք», «Ավտոմատիկա», Լենինականի շատ ձեռնարկություններ: ՏԱՍՍ-ը «ձևական կրթված մտավորականներ է» անվանել «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին ու նենգամիտ զրպարտել, թե իրենց ժողովրդի վստահությունը վայելող մարդիկ «ազգային քաղքենիներ են, ...քաղաքական արկածախնդիրներ, որոնք հույս ունեն կարիերա ստեղծել սադրանքների և ահաբեկման հիման վրա»<sup>366</sup>: ՏԱՍՍ-ը անամոթաբար հայտարարեց, թե Ղարաբաղ» կոմիտեի կոչերը «հսկայական վնաս են հասցրել» իրենց սատարող աշխատավորներին:

«Գործադուլների ժամանակամիջոցում,- ստագիր կարեկցվում է հաղորդման մեջ,- Հայաստանում պակաս տրվեց մոտավորապես 70 միլիոն ռուբլու արտադրանք: Երևանի բնակչությունը չստացավ մոտ 400 բնակարան, 300 աշակերտական տեղ, մանկապարտեզի 200 տեղ և հիվանդանոցի 150 մահճակալ»: Այնուհետև՝ «Ղարա-

<sup>365</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 15, թ. 92-94:

<sup>366</sup> Նույն տեղում:

բաղ» կոմիտեի «ամբոխավարների այդ ոչ մեծ խումբը»՝ նրա «միամիտ» ժողովրդի աչքի առաջ, պարզապես «փորձում է լուծել իր եսամոլական խնդիրները»: Հայտարարվում էր, որ ի տարբերություն հայերի վիճակի մասին «անհանգստացած» ՏԱՍՍ-ի գործակալների, կոմիտեի անդամներին «քիչ է մտահոգում մարդկանց սոցիալ-տնտեսական բարօրությունը: Նրանց գլխավոր խնդիրն է Հայաստանի էկոնոմիկայի և հասարակական կյանքի ապակայունացման միջոցով զավթել իշխանությունը»<sup>367</sup>:

Ի պատասխան նման խարդախություններին, Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անունից գրած և հուլիսի 25-ին տարածված Լևոն Տեր-Պետրոսյանի «Ղարաբաղյան շարժման անցած ուղին և հեռանկարները» հինգամյա ամփոփ տեղեկատու-բացատրության մեջ նշված է, որ նույն ժամանակահատվածում հայ ժողովուրդը ենթարկվել էր հրեշային բռնությունների, որոնց հետևանքով եղան տասնյակ մարդկային զոհեր, հարյուրավոր վիրավորներ և հազարավոր քաղաքական գաղթականներ՝ զրկված կյանքի և գույքի ապահովության տարրական իրավունքից: Շեշտվեց, որ հայ ազգը դրսևորելով բարձր գիտակցություն և կարգապահություն, անցավ ժողովրդական պայքարի հիանալի դպրոց ու հաստատեց քաղաքական ազդեցիկ մի խաղակցի իր իրավունքը, որից զրկված էր շուրջ 70 տարի: Նա դարձավ մի ուժ, որի հետ այսօր ստիպված հաշվի են նստում և այսուհետ էլ պիտի նստեն: Հեղինակը շարունակում է, որ քաղաքական տեսակետից սա է Ղարաբաղյան շարժման առաջին փուլի խոշորագույն հաղթանակը, որը հիմք է տալիս լավատեսորեն գնահատել մեր պայքարի հետագա ընթացքը:

Լևոն Տեր-Պետրոսյանը ընդգծեց, որ հայ ժողովուրդը անցած հինգ ամսում դիմակայեց բոլոր փորձությունները և սահմանադրության շրջանակներում կիրառած իր վճռական գործողություններով հասավ այն բանին, որ Ղարաբաղի հարցը առաջին անգամ քննության արժանացավ ԽՍՀՄ գերագույն իշխանության ատյա-

---

<sup>367</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 15, թ. 92-94:



նում, որտեղ վերադաս իշխանությունը պնդեց, թե մտադիր չէ որևէ փոփոխություն կատարել երկրի վարչատարածքային կառուցվածքում՝ իբրև Ղարաբաղի հարցի լուծումը պատճառ կհանդիսանա բազմաթիվ նման հարցերի մի շղթայի առաջացման, իսկ սա երկիրը կհանգեցնի անելանելի վիճակի: Սակայն, հուլիսի 18-ից սկսած Ղարաբաղյան շարժումը մտավ զարգացման մի նոր փուլ, որն, ի տարբերություն նախորդ շրջանի, առաջիկա ամիսներին, հավանաբար, կկրի խրամատային պայքարի բնույթ: Ղարաբաղյան շարժումը, եզրափակում է հեղինակը, ամբողջ ԽՍՀՄ-ում առաջ բերեց ժողովրդավարական պայքարի մի նոր ալիք, և սա ինքնին միակ երաշխիքն է երկրում հայտարարված առաջադիմական զարգացումների արմատավորման ապահովման<sup>368</sup>:

1988 թ. հուլիսի 18-ի ԽՍՀՄ ԳԽ Նախագահության նիստից հետո զգալիորեն ակտիվացել էին հանրապետության ողջ բնակչությունը: Ամեն օր հարյուրավոր նամակ-բողոքներ էին ուղարկվում Մոսկվա և Հայաստանի իշխանություններին: Նրանց հեղինակները պահանջում էին բեկանել այդ որոշումը: Հասարակական-քաղաքական շատ կազմակերպություններ և գործիչներ մամուլում, ժողովներում, հեռուստատեսությամբ, հանրահավաքներում հանդես են գալիս իրենց մերժողությամբ: Օգոստոսի 28-ին հրավիրված հանրահավաքում Ռաֆայել Ղազարյանը, Լևոն Տեր-Պետրոսյանը, Իսաչիկ Սաֆարյանը, Համբարձում Գալստյանը և ուրիշներ իրենց ելույթներում դիմազերծել են իշխող ուժերին, որոնք փորձում էին պաշտպանել հուլիսի 18-ի որոշումը և մոլորեցնել հանրությանը:

1988 թ. հուլիսի 23-ին՝ ՏԱՍՍ-ի տխրահռչակ հայտարարյանը զուգընթաց, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը որոշում է ընդունել Արցախ ուղարկել որպես կենտրոնական իշխանությունների ներկայացուցիչ նրա պատգամավոր, ԽՄԿԿ ԿԿ բաժնի վարիչ Ա. Ի. Վոլսկուն: Նրա առաջ խնդիր է դրվել կազմակերպել ու համաձայնեցնել ԼՂԻՄ-ին վերաբերող Ադրբեյջանի, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի պետական և կուսակցական մարմինների

---

<sup>368</sup> Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 25–31:

աշխատանքները: ՀԿԿ կենտկոմի ղեկավարը հուլիսի 27-ին հեռու-տատեսությամբ հանդես գալով կենտրոնի դիրքերի պաշտպանութ-յամբ, միաժամանակ պնդում էր, թե Հայաստանում գործող առան-ձին անպատասխանատու անձինք՝ առաջին հերթին «Ղարաբաղ» կոմիտեն, փորձում էին շարունակել առճակատումը և բորբոքել կրքերը: Որպես ապացույց, Ս. Հարությունյանը հիշատակեց այդ վերջին օրերի հանրապետությունում հրավիրված հանրահավաք-ներն ու ցույցերը<sup>369</sup>:

Հայաստանի կուսակցական և պետական ատյանները ճգնում էին պաշտպանել Մոսկվայի հուլիսի 18-ի որոշումը: Օրինակ. օգոս-տոսի 2-ին Ստեփան Շահումյանի անվան մշակույթի պալատում տեղի ունեցած Երևանի կուսակցական և խորհրդային ակտիվի ժողովը քննարկելով վերոնշյալ փաստաթուղթը, լիովին պաշտպա-նել էր այն<sup>370</sup>: Օգոստոսի 9-ին «Սովետական Հայաստան» թերթը «Ում հետ են մեր ճանապարհները տարբեր» առաջնորդում նորից անդրադառնալով «Ղարաբաղ» կոմիտեի գործունեությանը, հայտարարել է, որ կոմիտեն «գորեղացող ռեալ հրապարակայնութ-յան, դեմոկրատացման մեջ տեսավ բացահայտ սպառնալիք իրենց ամբոխավարական արարքների և լոզունգների համար, ժողովրդի մտքերի և իղձերի միակ արտահայտիչը լինելու իրեն հավակնութ-յունների համար:

Նրանք հայտարարում են, որ Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ Գերագույն սովետի հետ համաձայն չեն» և կոչ են անում իրենց բողոքագրի տակ երկու միլիոն ստորագրություն հավաքել: Թերթը անթույլատրելի էր անվանել, երբ միտինգներում քաղաքականապես վտանգավոր, վնասակար արտահայտություն-ներ են հնչում, որոնք վնասակար էին ԽՍՀՄ ժողովուրդների բարե-կամությանը:

Ո՞վ է իրավունք տվել մի խումբ մարդկանց ազատորեն «խոսել հայ ժողովրդի անունից, որը միշտ, իր դարավոր պատմութ-յան և ամենաձանր ժամանակաշրջաններում ձգտել է դեպի ռուս

<sup>369</sup> Սովետական Հայաստան, թ. 180, 28. 07. 1988:

<sup>370</sup> Նույն տեղում թ. 187, 05. 08. 1988:

մեծ ժողովուրդը, նրա մեջ տեսնելով իր միակ փրկչին ու հուսալի պաշտպանին».- բացականչում էր խմբագիրը: Կոմիտեականները աշխատավորական կոլեկտիվներին մեծ հաջողությամբ հորդորում էին ընդունել իրենց տեսակետը: Ով դեմ է կոմիտեին, որակվում էր որպես դավաճան և թշնամի: Նրանք հրապարակում հանդես են գալիս ամբողջ հայ ժողովրդի անունից: Ապա թերթի առաջնորդողում վախ էր արտահայտվում ՀԿԿ հզոր մրցակիցների իշխանության գալու հեռանկարից:

Ուստի թերթը կեղծաբար զգուշացնում էր, թե իբր «Ղարաբաղ» կոմիտեի ցանկությունն է մարդկանց «դրդել չմտածված արարքների, որպեսզի անկարգության... նոր ալիքով ամրապնդեն իրենց սասանված հավակնությունները, թեկուզև ինչ-որ քաղաքական կապիտալ շահեն: Կոմիտեի... հիմնական խնդիրներն են առճակատումը օրենքի հետ, դիմակայությունը իշխանություններին, իրենց դիրքերի աստիճանական, քայլ առ քայլ ամրապնդումը փոփոխությունների դեմ մղվող պայքարում»<sup>371</sup>:

«Սովետական Հայաստան»-ի նման մոլագարությունը, թերևս, եզակի չէր: Մամուլում հաճախակի ենք հանդիպում այդպիսի բացահայտ ստագրեր այն անձանց մասին, որոնք մտահոգված էին հայրենիքի անվտանգության և այն անօրենություններից մաքրելու անհրաժեշտությամբ: ՀԽՍՀ մի շարք հայտնի մտավորականներ հանդես գալով զանգվածային լրատվամիջոցներով, պնդում էին ազգային պահանջները պաշտպանելու վրա: Չէ որ նրաք բխում էին ժողովրդի իրական պայմաններից ու կարիքներից: Օրինակ, գրող Պերճ Զեյթունցյանը «Մի վախեցեք ճշմարտությունից» հոդվածում գտնում էր, որ հարկավոր է ասել ճշմարտությունը, որից չպետք է հրաժարվել<sup>372</sup>: Շատ մտավորականներ պայքարի հենց սկզբից

---

<sup>371</sup> Սովետական Հայաստան, թ. 190, 09. 08. 1988:

<sup>372</sup> Պ. Զեյթունցյանը երեք հոդված էր ուղարկել «Սովետական Հայաստան» թերթին, սակայն հրաժարվել են տպագրել: Այդ օրերին խմբագիր Հ. Աղամիրյանը ազատվել է պաշտոնից, որի տեղ խմբագիր է նշանակվել Սիսիանի շրջկոմի նախկին քարտուղար Շչորս Դավթյանը:

իրենց հողվածներով և ելույթներով պաշտպանում էին ժողովրդական շարժումը և աննահանջ կանգնում ղարաբաղյան հիմնախնդիրն արդարացիորեն լուծելու դիրքերում:

Հայաստանի ազգային արխիվում պահվում են հարյուրավոր նամակ-բողոքներ, որոնք կազմվել են հուլիսի 18-ի որոշումից հետո: Ահա օգոստոսի 5-ին հանրապետության հայ մայրերի և կանանց ՀԽՍՀ Գերագույն խորհուրդ ուղարկած նամակը, որն ունի 3147 ստորագրություն: Այդ փաստաթղթում նշված է, որ Հայաստանի իշխանությունները ամոթալի քայլեր են ձեռնարկում մեր պատվարժան ու սկզբունքային հայրենակիցների նկատմամբ: Պատճառը՝ նրանց ճշմարտախոս լինելն է: Ապա նշված է, որ «Ղարաբաղ» կոմիտեի ակտիվիստներին «կպցնելով զանազան պիտակներ՝ ծայրահեղականներ, դեմագոգներ, կաշառակերներ և այլն, մեղադրում են նրանց, իբրև այդ անկոչ կոմիտեն է ժողովրդին մղում «անօրինական» գործողությունների...»<sup>373</sup>:

Բայց չէ որ, շարունակում են նամակի հեղինակները, «Ղարաբաղ» կոմիտեն «ժողովրդի կամքով և ժողովրդի միջից ընտրված այն կիրթ, ազնիվ ու հայրենասեր մտավորականության մի ջոկատն է, որն ազգի խնդրանքով յոթ ամսից ի վեր դեկավարում է մեր արցախյան արդար պայքարը, տալիս է ճիշտ ինֆորմացիա և շարժումը պահում է սահմանադրության շրջանակներում: Այս պայքարի ընթացքում մեր ազգը... դարձել է ավելի համախըմբված, ավելի կիրթ ու բարոյական մի ժողովուրդ, որով հիացած է ողջ աշխարհը»:

Նամակում խոսվում է նաև «Զվարթնոց» օդանավակայանում ցուցարարների վրա ներքին զորքերի հարձակման առթիվ «Ղարաբաղ» կոմիտեին մեղադրելու մասին: Կանայք բացատրում են, որ կոմիտեն որևէ մեղք չունի դրանում: Իսկ իշխանություններին մեղադրանք են ուղղում «սումգայիթին» քաղաքական գնահատական չտալու համար: «Եթե Հայաստանում, - կարդում ենք այդ նամա-

---

Նա իսկույն տպագրեց Պ. Զեյթունցյանի չորրորդ հողվածը (նույն տեղում, թ. 211, 02. 09. 1988):

<sup>373</sup> ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 46, թ. 2:

կում,- ղեկավարությունը ցանկանում է, իրոք, վերակառուցվել, այն մաքրել կաշառակերությունից, կոռուպցիայից, կեղծիքներից և այլ նեգատիվ երևույթներից, նա պետք է անհապաղ փոխի իր դիրքորոշումը՝ միանա իր ժողովրդին, վերջ տա «Ղարաբաղ» կոմիտեի և մյուս ակտիվիստների նկատմամբ տարվող ռեպրեսիաներին ու վիրավորանքներին, և հաշվի նիստի նրանց հետ, քանզի նրանք մեր հանրապետության վերակառուցման դրոշակակիրներն են: Նրանք լիազորված են ազգի կողմից և պաշտպանում են ազգի շահերը»<sup>374</sup>: Հայ կանայք ղեկավար աշխատողներից պահանջում էին «իրենց աթոռները չհակադրել հայ ժողովրդի շահերին և հանգիստ թողնել... հարգարժան ակտիվիստներին»<sup>375</sup>:

Որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության 1988 թ. հուլիսի 18-ի նիստը ժողովրդավարության և սահմանադրական պահանջների իրագործման ճանապարհին եղել է ամենակոպիտ խախտումը և արցախյան հիմնախնդրի խեղաթյուրում՝ սա աներկբա ճշմարտությունն է: Եվ այդ իրողությունը արժանացել է թե՛ Միության, և թե՛ աշխարհի մյուս ժողովուրդների մերկացմանը:

\*  
\*   \*  
\*

1988 թ. աշնանը հանրապետությունում կատարվող իրադարձությունները ավելի են բարդանում: Թե՛ իշխող մարմինները և թե՛ քաղաքական ուժերը փորձում էին հասարակությանը զերծ պահել պայքարից, թույլ չտալ ընդհարումներ և բռնարարքներ<sup>376</sup>:

---

<sup>374</sup> ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 46, թ. 3:

<sup>375</sup> Նույն տեղում, թ. 4:

<sup>376</sup> Սմբատ Հովսեփյանը իր ուսումնասիրության մեջ («ՀՀԾ-ն և հայ ժողովրդի ողբերգությունը», Եր., 2002) դարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեին դիտել է միայն բացասական դիրքից, իսկ լրագրող Վլադիմիր Գրիգորյանը, ընդհակառակը, բացառապես դրական: Մեր կարծիքով, «Ղարաբաղ» կոմիտեն իր գործունեության ընթացքում կատարել է թե՛ դրական և թե՛ բացասական քայլեր: Սակայն դա

Այնուհանդերձ՝ հետզհետե ավելի շատ մարդիկ էին թեքվում ու-  
ժային գործողությունների կողմ: Ազգային պայքարը դուրս էր գալիս  
սահմանադրական՝ զուտ քաղաքական զարգացումներից, և անց-  
նում զինված ինքնապաշտպանությանը, այն է՝ ռազմաքաղաքա-  
կան փուլ: Հասարակության մեջ աճում էր այն նվիրված և անձնու-  
րաց ներկայացուցիչների թիվը, որոնք պատրաստ էին զոհվել  
հանուն հայրենիքի և արդարության: Այդ նվիրյալները ցանկանում  
էին անմիջաբար մասնակել արցախահայության կյանքին և նրա  
անվտանգության ապահովմանը:

1988 թ. օգոստոսի վերջին կոմիտեական Ռաֆայել Ղազար-  
յանը, իսկ հոկտեմբերի սկզբին՝ Լևոն Տեր-Պետրոսյանը, Արցախը  
այցելելելուց հետո վերադառնում են Երևան իրենց ղեկավարած  
շարժման ավելի հստակեցրած ծրագրերով: Այդ առումով Ռաֆայել  
Ղազարյանը հատկապես կարևորել է օգոստոսի 19-ին «Ղարա-  
բաղ» կոմիտեի՝ ժողովրդին ուղղած դիմումը, այն շարադրել է Լևոն  
Տեր-Պետրոսյանը<sup>377</sup>: «Այսպես կոչված հակառուսական տրամա-  
դրությունների մասին, որոնք իբր բորբոքվում են Ղարաբաղյան  
շարժման միտինգներում» վերտառությամբ այդ դիմումի մեջ նշված  
է, որ վերջին ժամանակներս արցախյան շարժման դեմ ուղղված  
մեղադրանքներից մեկն դարձել էր այն, որ իբր երևանյան հանրա-  
հավաքներում հակառուսական տրամադրություններ էին բորբոք-  
վում: Հեղինակը շեշտեց, որ դա ստալինյան բռնապետության զի-  
նանոցից հանված հերթապահ մի հերյուրանք էր:

---

իրավունք չի տալիս մերժել կամ զրպարտել հասարակական մի ուժի,  
որի հետևից գնում էր հանրապետության բնակչության ճնշող մեծա-  
մասնությունը: Եվ միթե՞ կարելի է իշխանության ձգտող քաղաքական  
ուժին նայել միակողմանի կամ նրան մեղադրել այդ միտումի համար:  
Ղարաբաղյան շարժումը ղեկավարելիս, նրա առաջնորդները մրցում  
էին երկրի հին, կոմունիստական տերերի հետ: Հետևաբար նրանց,  
ինչպես և կոմունիստների քաղաքականությունը ունենում էր ների-  
մաստ ու միշտ չէ որ ազնիվ էր:

<sup>377</sup> Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 33–36:

Դիմումի հեղինակը մեջբերելով «Օգոնյոկ» ամսագրի 1988 թ. թիվ 29-ում տպագրված ԽՍՀՄ ֆինանսների նախարար Բ. Ի. Գոստևի հոդվածի հետևյալ միտքը, թե «այսօրվա առաջնահերթ հոգսը պետությանն առնչվող հոգսն է, մանավանդ մեր Սովետական պետության՝ ռուսական պետության ամրապնդման հոգսը», նկատեց, որ նման մոտեցման պարագայում պետական մարմինների որևէ քննադատություն կամ դժգոհության արտահայտում կարող է մեկնաբանվել որպես հակառուսական տրամադրություն: Նման մեղադրանք ներկայցնողները տարօրինակ ձևով մոռանում են, որ համամիութենական մամուլը մեկ տարուց ավելի զբաղվում է հայ ժողովրդին վերակառուցման թշնամի, էքստրեմիստ, ազգայնամոլ, ծրիակեր հռչակելով ու դրանով հակահայկական տրամադրություններ սերմանելու գործով<sup>378</sup>:

Այա խոսում է Ադրբեջանի մոլեռանդների կողմից Սումգայիթի հայերի նկատմամբ գործադրված բարբարոսության և խորհրդային բանակի կողմից «Զվարթնոց» օդանավակայանում կիրառված դաժան բռնության, հայ և ռուս ժողովուրդների 300-ամյա բարեկամության մասին, նաև այն, որ միանգամայն սահմանադրական է հայ մանուկներին հայկական դպրոց ուղարկելը, ատենախոսությունները հայերեն լեզվով գրելը: Սակայն, Հայաստանում հակառուսական տրամադրությունների իսկական հրահրողները հանդիսանում են հենց նրա պաշտոնավարները:

Ի դեպ, «համարյա բոլոր նոմենկլատուրային աշխատողների երեխաները ուսանում են ռուսական դպրոցներում, ղեկավար անձանցից շատերը չեն տիրապետում մայրենի լեզվին և գերադասում են ելոյթներ ունենալ ռուսերեն լեզվով, ռուսական դպրոցներն օգտվում են առանձնահատուկ շնորհներից, մինիստրություններում ու հիմնարկ-ձեռնարկություններում հայերենը հանվում է գործածությունից, պաշտոնյաների առանձնասենյակների մակագրություններն արվում են ռուսերեն լեզվով»: Այս ամենը, շարունակում է Լևոն Տեր-Պետրոսյանը, առաջ է բերում անհաշտ պայքար ազգային շահերի

---

<sup>378</sup> Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 33–34:

ոտնահարման, մեծապետական շովինիզմի և ռուսականացման քաղաքականության ցանկացած դրսևորման դեմ:

1988 թ. նույն օգոստոսի 19-ին «Ղարաբաղ» կոմիտեն հրապարակում է և Վազգեն Մանուկյանի խմբագրած ծրագրային փաստաթղթեր, որտեղ խոսվում է ՀՀԸ-ի գործելակերպի, գաղափարական սկզբունքների, մոտակա նպատակների, խմբային անդամության ու կազմակերպչական ձևերի մասին: Այդ գրերի հեղինակը առաջարկում է ՀՀԸ-ի շարքերը մտնելու համար դիմողը անցնի մշակված զրուցակարգով: Սակայն կոմիտեականները հավանություն են տալիս ՀՀԸ-ի շարքերն հախտուն կերպով ընդունելու մեկ այլ առաջարկի: Խոսքը խմբային դիմումով ՀՀԸ-ի շարքերն անցնելու սխալ եղանակի մասին է: Հանրապետության ձեռնարկություններում տեղի էին ունենում աշխատավորների ժողովներ, որտեղ որոշվում էր նրանց ամբողջ կազմով մտնել Հայոց Համազգային Շարժման մեջ: Օրինակ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի կոլեկտիվի 1988 թ. հոկտեմբերի 22-ի ընդհանուր ժողովը արձանագրել է, որ 1988 թ. փետրվարից թափ առած Ղարաբաղյան շարժումը բխում է մեր երկրում ծավալված հեղափոխական վերակառուցման ու ժողովրդավարության էությունից:

Արցախի պաշտպանությունն և ազատագրումը դարձել է նոր քաղաքականության առաջին լուրջ քայլերից մեկը, որը Շարժմանը տվեց համաժողովրդական բնույթ: Սկզբից ևեթ ինքնաբուխ և մաքուր, Ղարաբաղյան շարժումը ծնեց իր ղեկավարներին, ի հայտ բերեց վերակառուցման խիզախ առաջամարտիկներին, որոնք և ժողովրդի կամքով միավորվեցին «Ղարաբաղ» կոմիտեին: Նրա ծրագիրը գնահատվում է մարտական: Հին ձեռագրերի ինստիտուտի աշխատակազմը որոշում է Մատենադարանում ստեղծել ՀՀԸ-ի խումբ ու դառնալ այդ կազմակերպության կոլեկտիվ անդամ<sup>379</sup>: «Ղարաբաղ» կոմիտեի թույլ տված կազմակերպչական սխալը հետագայում զգալիորեն ազդել է ՀՀԸ-ի հեղինակության վրա: Ուստի ավելի ուշ կոմիտեն վերացրեց այդ բացթողումը:

---

<sup>379</sup> ՀԱԿ-ի ընթացիկ արխիվ, թղթ. 6, թ. 8:



1988 թ. օգոստոսից սկսած կոմիտեականները ընդունում էին պետական և կուսակցական մարմինների հետ համագործակցության անհրաժեշտությունը:

Այդ հարցը առաջինը բարձրացրեց Ռաֆայել Ղազարյանը: Օգոստոսի 20-ի հանրահավաքում նա ընթերցեց և կառավարությանը ուղարկեց մի դիմում, որն անվանվել է «Մեր դիրքորոշումը՝ պաշտոնական մարմինների հետ հնարավոր համագործակցության վերաբերյալ»: Վավերագրում անդրադարձ կա գործադուլների և իշխանությունների հետ համագործակցելու թեմաներին: Հարցը հետևյալ կերպ է դրվել. ինչո՞ւ կոմիտեն չի համագործակցել Կ. Դեմիրճյանի հետ, որը հենց պայքարի սկզբից ինքնամեկուսացվել էր: Ինչո՞ւ չի համագործակցում Ս. Հարությունյանի հետ, որը գտնվում է չափազանց դժվարին վիճակում: Եթե վերջինս իր պաշտոնավարման սկզբից շրջադարձ կատարեր և ղեկավարեր ազգային-ազատագրական պայքարը, եթե նա ցույց տար, որ կծառայի ժողովրդին ու կպայքարի նրա պահանջներն իրագործելու համար, ապա ժողովուրդը կսատարեր նրան:

Թեև նրա հնչեցրած հայտարարությունները հեռու էին գործնական լինելուց: Հայաստանի թե՛ քաղաքական և թե՛ պետական մարմինները հետևողականորեն չէին զբաղվում Արցախի հետ սոցիալ-տնտեսական և մշակութային կապերը զարգացնելու խնդրով: Կառավարությունը պարտավոր էր բողոքի ձայն բարձրացնել մամուլի և մյուս լրատվամիջոցների կեղծարարությունների դեմ: Չէ որ կենտրոնական մամուլը հավասարության նշան էր դնում Սումգայիթի և «Զվարթնոցի» միջև: Ս. Հարությունյանն ու Ֆադեյ Սարգսյանը պարտավոր էին վճռականություն դրսևորել այդ հարցում: Նման պարագայում ժողովուրդը ամեն կերպ կաջակցեր նրանց ու մեծ գոհունակությամբ կընդուներ նրանց գործունեությունը<sup>380</sup>: Սակայն, ելնելով նրանց դիրքից ու Մոսկվայի առջև ունեցած պարտականություններից նման բան տեղի չունեցավ:

Եվ, այսպես, Ղարաբաղյան շարժման Հայաստանյան կոմիտեն կարթը նետել էր: Անհրաժեշտ էր հարցն ամբողջականացնել և

<sup>380</sup> Ռաֆայել Ղազարյան, նշվ. աշխ., էջ 196–199:

մտածել հետագա քայլերի մասին: Մեր տրամադրության տակ է գտնվում Լևոն Տեր-Պետրոսյանի 1989 թ. հունվարի 7-ի հարցաքննության արձանագրությունը: Քննիչի այն հարցին, թե արդյո՞ք «Ղարաբաղ» առաջին և երկրորդ կոմիտեների գործունեությունը եղել են հակաօրինական, ինչո՞ւ Հայաստանի Ղարաբաղյան շարժումը շարունակել է գործել, չնայած նրա արգելված լինելուն, Լևոն Տեր-Պետրոսյանը պատասխանեց, որ երկու կոմիտեների նպատակը մեկն է եղել՝ Արցախը վերամիավորել Հայաստանի հետ: «Մենք մեր գործունեությամբ,– կարդում ենք այդ փաստաթղթում,– համագործակցել ենք հանրապետության կուսակցական և պետական կենտրոնական իշխանությունների, օրինապահ մարմիններ՝ ՊԱԿ-ի, ՆԳՆ-ի, դատախազության, պարետության և տեղական կուսակցական-սովետական մարմինների հետ:

Բոլորը կապ են պահպանել մեզ հետ, մենք համատեղ քննարկել ենք հանրապետությունում առաջ եկած խնդիրները, բազմիցս եղել ենք Հայաստանի կոմկուսի կենտկոմում, Գերագույն սովետի Նախագահությունում և այլն: Պաշտոնատար անձնավորություններից ոչ մեկը չի փորձել արգելակել մեր՝ ասել է թե «Հայաստանի Ղարաբաղյան Շարժման» գործունեությունը: Ընդհակառակը, մեզ հետ համագործակցել են, քանի որ մենք արտահայտել ենք ամբողջ հայ ժողովրդի ցանկությունն ու ձգտումը: Դրա համար էլ մենք չենք հաշվում, որ մեր կոմիտեի գործունեությունը եղել է հակաօրինական և քաղաքականապես սխալ»<sup>381</sup>:

Նույն թվականի մարտի 24-ին Հրանտ Ոսկանյանը ստացել է ԽՍՀՄ Գերագույն դատախազության քննիչ Վ. Տիտովի գրությունը: Նրանում նշված է, որ Լևոն Տեր-Պետրոսյանը հարցաքննության ժամանակ հայտարարել է, թե 1988 թ. սեպտեմբերին Հայկական ԽՍՀ-ում ստեղծվել է կառավարական հանձնաժողով «Ղարաբաղ» կոմիտեի հետ կապ պահպանելու համար, որի կազմի մեջ մտել են Երևանի քաղաքային Խորհրդի նախագահ Է. Ավագյանը, ՀԽՍՀ դատախազի տեղակալ Գ. Բաղդասարյանը, հանրապետության ներքին գործերի նախարար Հ. Հարությունյանը, ՀԽՍՀ ՊԱԿ-ի

<sup>381</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 1, գ. 161, թ. 8:

աշխատակից Ս. Չաքարյանը և առողջապահության նախարար Է. Գաբրիելյանը: Վերոնշյալ փաստաթուղթը տեղեկացնում է, որ հետագայում Հայաստանում հրավիրված բոլոր հանրահավաքները բանավոր հրահանգավորվել է այդ կոմիտեի կողմից: Մոսկվայի քննիչը ցանկանում էր Հ. Ոսկանյանից իմանալ դրա ճշմարիտ լինելու մասին<sup>382</sup>:

Արխիվում պահվում է նաև այդ գրության պատասխանը: 1989 թ. ապրիլի 14-ին ուղարկված Ն. Ստեփանյանի ստորագրությամբ փաստաթղթում, խուսափելով ուղիղ պատասխանից տեղեկացվում է, որ 1988 թ. հանրապետությունում առանձին անձանցից Գերագույն խորհուրդ որևէ միջնորդություն չի մտել «Ղարաբաղ» կոմիտեն գրանցելու վերաբերյալ: Այդուհանդերձ, 47 աշխատանքային կուլեկտիվները իրոք միջնորդել են Գերագույն խորհրդին վերոնշյալ հարցով: Բացի այդ, հաստատվում էր 1988 թ. մարտի 24-ին ՀԽՍՀ բարձրագույն օրենսդրի կարգադրությամբ «Ղարաբաղ» կոմիտեի գործունեությունը արգելելու հանգամանքը<sup>383</sup>:

Այս պատասխանով Հայաստանի իշխանությունները հասկացնում էին, որ «Ղարաբաղ» կոմիտեն արգելված է եղել, հետևապես՝ իշխանությունները զերծ էին մնում նրա հետ հարաբերություններից: Այդուամենայնիվ՝ հաստատենք, որ «Ղարաբաղ» կոմիտեի և նրանց միջև ամենօրյա համագործակցությունը եղել է, հանրահավաքներում հանրապետության իշխանություններին և ժողովրդական պայքարում նրանց ոչ վճռական դիրքորոշումը խստագույնս քննադատելու իրականության հետ միասին:

Իսկ 1988 թ. սեպտեմբերին միտինգները տեղի էին ունենում ամեն օր: Տասնյակ հազարավոր մարդիկ օր ու գիշեր չէին հեռանում Թատերական հրապարակից: Այդ ժամանակ Երևանում էին

---

<sup>382</sup> ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 138, թ. 3: Շատ ցավալի է, որ մեր բազմաթիվ դիմումներին՝ թույլատրել ծանոթանալ հանրապետության դատախազությունում պահվող «Ղարաբաղ» կոմիտեի հարցաքննության 20 հատորից բաղկացած նյութերի հետ, այն ժամանակ գլխավոր դատախազ Գ. Կոստանյանը մերժել է:

<sup>383</sup> Նույն տեղում, թ. 7:

ԽՍՀՄ ՊԱԿ-ի, ՆԳՆ-ի, Գերագույն դատախազության, Գերագույն դատարանի ղեկավարները: Նրանց մասնակցությամբ անցկացվեց ՀԿԿ կենտկոմի բյուրոյի նիստ ուր որոշում էր ընդունվում ազատել Թատերական հրապարակը, քանի որ վերջինիս երկար ժամանակ տիրել էին հանրահավաքի մասնակիցները: Նախատեսված էր հրապարակն ազատել առավոտյան ժամը 5-ին: Դրա համար Երևան էին բերվել ԽՍՀՄ ՆԳՆ-ն ստորաբաժանումներ:

Այդ խնդրի իրագործումը բարդանում էր նրանով, որ ամբողջ գիշեր հրապարակում մնում էին հազարավոր ցուցարարներ: Նախատեսված գործողությունը ղեկավարում էր ԽՍՀՄ ՆԳՆ փոխնախարար Ն. Դեմիրճյանը<sup>384</sup>: Ժամը 24.00-ին Ս. Հարությունյանի մոտ հրավիրվեց ԽՍՀՄ ներքին գործերի փոխնախարարը, նրան խնդրեցին անձամբ գնալ հրապարակ, ուսումնասիրել իրադրությունն ու զեկուցում անել: Փոխնախարարը հրապարակից վերադառնալով պատմեց, թե այնտեղ հիմնականում երիտասարդներ են, թվով մի քանի հազար մարդ, որոնք տխուր երգեր էին երգում ու մտադիր չէին հեռանալ հրապարակից: Նրան լսելով, ՀԿԿ ղեկավարը չեղյալ հայտարարեց բյուրոյի որոշումն ու նախատեսված գործողությունը<sup>385</sup>:

Այսպես 1988-1990 թթ. Հայաստանում հաջողվել էր խուսափել զոհերից, և Անդրկովկասում Հայաստանը միակն էր, որտեղ ճգնաժամն ավարտվեց առանց մարդկային կորուստների<sup>386</sup>:

\*  
\*   \*  
\*

Իրոք՝ 1988 թ. աշունը շատ ծանր էր ողջ Հայաստանում: Սեպտեմբերի սկզբին՝ Բաքվի ազգայնամոլ կոչերի ազդեցության տակ Ստեփանակերտից իրենց ամբողջ ունեցվածքով հեռանում են աղբրեջանցիները: Նույն ամսի 1-ին փակվել էր այդ քաղաքի ման-

---

<sup>384</sup> Ս. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 190:

<sup>385</sup> Նույն տեղում, էջ 190-191:

<sup>386</sup> Նույն տեղում, էջ 193:

կավարժական ինստիտուտի ադրբեջանական բաժինը: ՀԽՍՀ-ից Արցախ եկող ավտոմեքենաները Ադրամում և Խոջալուում ջարդվում և թալանվում էին, իսկ ուղևորները՝ ծեծվում: Սեպտեմբերի 18-ին Խոջալուում եղել է հայ-ադրբեջանական ընդհարում: Դրան զուգահեռ, Շուշիից վտարեցին վերջին հայ բնակչությանը: Այդ ժամանակ՝ ամսին 21-ին, Լեռնային Ղարաբաղում գործող կենտրոնական իշխանության ներկայացուցիչ Ա. Վոլսկու առաջարկությամբ մարզում և Ադրամի շրջանում մտցվել էր հատուկ դրություն: Այն իրականացնելու համար հաստատեցին պարետային ժամ<sup>387</sup>, ինչը խիստ դժգոհություն առաջ բերեց հանրապետությունում:

Նույն սեպտեմբերի 21-ին Ա. Վոլսկին դիմում է հղել Արցախի բնակչությանը, որտեղ ասված է, թե այդ վերջին օրերին մարզում շեշտակիորեն բարդացել էր իրադրությունը. նորից սկսվել էին գործադուլներ, դպրոցներում դադարեցվել էին պարապմունքները: Ստեփանակերտցիների կողմից սեպտեմբերի 18-ին նախաձեռնվել էր հարձակվողական գործողություն Խոջալուի վրա: Այդ ընդհարման ժամանակ 48 քաղաքացի վիրավորվել են, որոնցից 33 հայ, հրկիզվել է ավելի քան 30 տուն և շինություն: Որպես հետևանք՝ Ա. Վոլսկին հայտարարեց նման վիճակի անհանդուրժելի լինելու մասին: Նա՝ ԽՄՍՀ Սահմանադրությանը պահանջներին հակառակ, հրամայեց վերացնել խորհրդային իշխանության տեղական մարմիններն ու «սադրիչների նկատմամբ իրագործել վճռական քայլեր»: Զինվորական պարետի անունից հայտարարվել էր, որ արգելվում էր հանրահավաքների, փողոցային երթերի, գործադուլների անցկացումը, 16 տարեկանից բարձր քաղաքացիների առանց փաստաթղթի տնից դուրս գալը, բնակարաններում հրազեն ու պայթուցիկ նյութեր պահելը, ժամը 21.00-ից մինչև 6.00 առանց հատուկ անցագրի երթևեկությունն և այլն<sup>388</sup>:

Մոսկվան և Բաքուն շարունակ ուժեղացնում էին իրենց ճնշումը Հայաստանի նկատմամբ: Բաքվից Ստեփանակերտ եկած ութ

---

<sup>387</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 564, թ. 87–92:

<sup>388</sup> Սովետական Հայաստան, թ. 233, 25. 09. 1988:

հոգանոց քննչական խումբը փորձում էր ճնշել արցախահայությանը և նրանց զրկել հետագա պայքարի հնարավորությունից:

Ա. Վոլսկու հակասահմանադրական կարգադրությունից քիչ ավելի շուտ՝ 1988 թ. սեպտեմբերի 13-ին տեղի ունեցած ՀԿԿ ԿԿ պլենումը քննարկեց «էկոնոմիկայում, սոցիալական ոլորտում լճացման երևույթները հաղթահարելու և հանրապետությունում տիրող գաղափարական մթնոլորտն առողջացնելու ուղղությամբ կուսակցական կազմակերպությունների խնդիրները»: Վերջին տասը տարում դա միակ կուսակցական միջոցառում էր, որտեղ վերլուծում էին հանրապետության տնտեսական, քաղաքական և հասարակական կյանքը ամբողջությամբ: Այնուամենայնիվ, դրա աշխատանքը ցույց է տվել, որ շատ հարցերում ՀԿԿ ղեկավարությունը մնում էր միութենական կապանքների մեջ: Թեև սեպտեմբերի 9-ին հրավիրված երևանյան հանրահավաքում արդեն՝ և առաջին անգամ, հնչել էր պետական անկախությունը վերականգնելու կոչը:

Իր ելույթի ժամանակ ԿԿ առաջին քարտուղար Ս. Հարությունյանը ահագանգել էր հանրապետությունում իրադրությունը օրհասական դառնալու մասին: Կյանքի բոլոր ոլորտներում կուտակված թերությունները առանձնապես ծանր էին էկոնոմիկայի ասպարեզում: Զգալիորեն նվազում էր արտադրության արդյունավետությունը, ընկավ նրա որակը, շատ ձեռնարկություններ ֆինանսական ծանր կացության մեջ էին, չէր բարելավվում սննդամթերքի մատակարարումը բնակչությանը և չէր ապահովվում նրա պահանջարկը: Բոլորովին անհանդուրժելի վիճակ էր ստեղծվել բնակարանային հարցում, առևտրում, բնակչությանը խմելու ջուր մատակարարելու խնդիրներում: Խստագույնս հուզում էր նաև բնապահպանության վիճակը:

ՀԿԿ ղեկավարը քննադատում էր ժողովրդական սեփականության հափշտակումները, կաշառակերությունը, հովանավորչությունը, արդարության սկզբունքների խախտելու փաստերը: Ընդգրծվում էին ԿԿ քաղաքական կոպիտ սխալները: Նա հորդորում էր, որ հանրապետությունում վերակառուցման սոցիալ-տնտեսական հար-

ցերը պահանջում էին ուշադիր, գործնական վերաբերմունք<sup>389</sup>: Պլենումի մասնակիցները քննադատական խոսք էին ուղղում նաև ՀԿԿ ԿԿ նախկին առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանին:

Այդ միջոցառման հետևանքով և ԼՂԻՄ-ում խորհրդային իշխանությունը վերացնելու պահին ՀԿԿ ԿԿ-ն, Մինիստրների խորհուրդն ու Գերագույն խորհուրդը սեպտեմբերի 21-ին համապատասխան դիմում էին հղել հանրապետության բնակչությանը: Նրանք նշում էին, որ Արցախում վերջին իրադարձությունների հետ կապված հանրապետությունում վիճակը ավելի է լարվել: Երևանում, ի պաշտպանություն Լեռնային Ղարաբաղի, անընդհատ անցկացվում են չարտոնված հավաքներ, երթեր, հնչում գործադուլի կոչեր: Տուցարարները շրջապատել են ՀԿԿ կենտկոմի և Գերագույն խորհրդի շենքերը, փորձում կանգնեցնել քաղաքային տրանսպորտը, արդյունաբերական ձեռնարկությունները, ընդհատել ուսումնական հաստատությունների և դպրոցների աշխատանքը:

Պատգամավորների մի մասը պահանջում էր հրավիրել Գերագույն խորհրդի նստաշրջան ու միջոցառումներ ձեռնարկել իրավիճակը կայունացնելու համար: Իսկ հանրապետության իշխանությունները բնակչությանը կոչ էին անում կանգ առնել ու հիշել, որ բոլորս պատասխանատու ենք մեր ժողովրդի ճակատագրի և ԽՍՀՄ ապագայի, նրա ժողովրդավարացման ու մեծ երկրում հաստատվող հրապարակայնության համար<sup>390</sup>:

Այդ դիմումի հաջորդ օրը, Գիտությունների Ակադեմիայի աշխատակիցների խորհրդակցությունը քննարկելով «Լեռնային Ղարաբաղի վերջին իրադարձությունների հետևանքով հանրապետությունում ստեղծված ծանր իրավիճակը բարելավելու ուղղությամբ գիտնականների խնդիրները» մի անգամ ևս պաշտպանեց ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելու ողջ հայ ժողովրդի պահանջը: Պաշտպանելով իշխանությունների վերոնշյալ ուղերձը, խորհրդակցությունը նշեց, որ հուլիսի 18-ի որոշումից հետո հանրահավաքներում հնչեցին հակառուսական, հակախորհրդային

<sup>389</sup> Սովետական Հայաստան, թ. 222-229, 15. 09. 1988:

<sup>390</sup> Նույն տեղում, թ. 290, 22. 09. 1988:

կոչեր: Դրանք չպետք է անուշադրության մատնել, և Ակադեմիայի գիտնականները իրավունք չունեն անտարբեր դիտողի դերում մնալ: Նրանք պատասխանատու են ժողովրդի վիճակի և ապագայի համար ուստի և պարտավոր են վճռական միջոցների դիմել, որպեսզի մարդկանց հետ պահեն չմտածված քայլերից և հակաօրինական գործողություններից:

Միջոցառման մասնակիցները ընդգծել են, որ գիտնականների, հատկապես հասարակագետների խնդիրն է ուսումնասիրել երևույթների և իրադարձությունների պատճառները, վերլուծական հոդվածներով հանդես գալ լրատվամիջոցներով, լինել աշխատավորական կոլեկտիվներում, գրուցել մարդկանց հետ, բացատրություններ տալ ստեղծված իրավիճակի մասին, պատասխանել կենսահույզ հարցերին, ամեն ինչով օգնել հանրապետության հասարակական ու պետական աշխատանքներին: Խորհրդակցությունը ամփոփելով ԳԱ Նախագահ Վիկտոր Համբարձումյանը միանշանակ նեցուկ է լինում Միացման մեծ գործին և այլ հարցերի շարքում արտահայտում է նաև պաշտոնական կարծիքը՝ գործադուլների հայ ժողովրդի շահերին վնասակար լինելու մասին<sup>391</sup>:

Հանրագումարի բերելով խորհրդակցության մտահոգությունը, գիտական օջախի մի խումբ մասնագետներ Վ. Համբարձումյանի գլխավորությամբ հանդես եկան «Դրսևորել զսպվածություն և պատասխանատվություն» վերտառությամբ կոչով: Նրանք հասարակության են դիմել հետևյալ խնդրանքով. «Հայ ժողովրդի արմատական շահերն ու Արցախի պրոբլեմի արդար լուծման շահերը հրամայաբար պահանջում են առավելագույն զսպվածություն և մեզ համար բախտորոշ այս ժամանակաշրջանում մեր գործողությունների նկատմամբ պատասխանատու մոտեցում»<sup>392</sup>:

1988 թ. սեպտեմբերի 23-ին՝ ամփոփելով նախորդ զարգացումները, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահությունը քննարկեց «ԼՂԻՄ-ում տեղի ունեցած վերջին իրադարձությունների կապակցությամբ հանրապետությունում ստեղծված իրա-

<sup>391</sup> Սովետական Հայաստան, թ. 231, 23. 09. 1988:

<sup>392</sup> Նույն տեղում, թ. 233, 25. 09. 1988:



դրության նորմալացման միջոցառումների մասին» հարցն և ընդունեց հետևյալ որոշումը. ...2. Խնդրել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդի հանձնաժողովին՝ արագացնել ԼՂԻՄ-ին առնչվող հարցերի նախապատրաստումը, նրանց այդ մարմնի Նախագահությունում քննելու համար. 3. Ապահովել Ադրբեջանում հայ բնակչության անվտանգությունը. 4. Առաջիկա ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նիստում քննարկել Ղարաբաղի վերաբերյալ հարցերի կատարման ընթացքը. 5. Պայքարել պետական կարգապահության պաշտպանության համար<sup>393</sup>:

Նման համատեքստում «Պրավդայում» կրկին երևաց տխրահրոշակ Գ. Օվչարենկոյի և Ա. Չեռնենկոյի «Ում է դա ձեռնտու» հոդվածը: Նրանում ասված էր ԼՂԻՄ-ում արյան հեղվելու մասին: Հաստատվեց, որ Շուշիից վտարել էին վերջին հայ ընտանիքներին, գաղթականների հոսքը վերջ չուներ, նորից մարդկանցով լեփլեցուն էր Երևանի Թատերական հրապարակը, հանրահավաքներ անողները այժմ ավելի հարձակողական էին տրամադրված<sup>394</sup>: Նկատենք, որ հեղինակները՝ իրենց առերես ճշտապահությամբ հանդերձ, հոդվածը անթաքույց ուղղել էին հայ ժողովրդի դեմ, ինչը համբերությունից հանում էր Միացման, արդարության և իրական ազատության համար պայքարողներին: Այդ օրերին Հայաստանի ՊԱԿ-ի նախագահ Մ. Յուզբաշյանը իր հաղորդմամբ իրազեկ է պահում ՀԿԿ կենտկոմն, որ Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն մտադիր է ստեղծել համազգային խորհուրդ, իսկ մինչ այդ Շարժումը կղեկավարի կոմիտեն<sup>395</sup>:

ՊԱԿ-ի ղեկավարի սեպտեմբերի 30-ին ՀԿԿ ԿԿ ուղարկված հաղորդումից իմանում ենք Ղարաբաղյան շարժման ակտիվիստների ծավալված աշխատանքների մասին: Նրանք թափով գործում էին ձեռնարկություններում՝ քննադատելով հանրապետության ղեկավարության կրավորական կեցվածքը: Մ. Յուզբաշյանը տեղեկացնում էր, թե կոմիտեի եռանդուն անդամները մտադիր էին հան-

<sup>393</sup> Սովետական Հայաստան, թ. 232, 24. 09. 1988:

<sup>394</sup> Правда, 28. 09. 1988.

<sup>395</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 15, թ. 118:

րապետությունում գործադուլները շարունակել մինչև հոկտեմբերի 7-ը<sup>396</sup>: Ըստ ՊԱԿ-ի տվյալների, սեպտեմբերի 28-ի դրությամբ ՀԽՍՀ-ում ռազմական արդյունաբերությանը պատկանող հիմնարկ-գործարաններում առկա 60 հազար աշխատակիցներից 26 հազարը գտնվում էր գործադուլի մեջ<sup>397</sup>: Տասնյակ ձեռնարկությունների գործադուլների հետևանքով բնականաբար տուժվում էր արտադրությունը: ՊԱԿ-ի հոկտեմբերի 2-ին ՀԿԿ կենտկոմ ուղարկած հաղորդագրության մեջ նշված է, որ կոմիտեականները հոկտեմբերի 1-ին և 2-ին տեղի ունեցած հանրահավաքներում կոչեր են հնչեցրել «գործադուլին տալ համազգային բնույթ»<sup>398</sup>:

ՊԱԿ-ի տեղեկանքը, թե կոմիտեականները ձգտում էին գործադուլին տալ համազգային բնույթ, շփոթության մեջ էր գցել Խորհրդային Հայաստանի կուսակցական և պետական ղեկավարությանը: Հանգիստ չէին նաև կոմիտեականները, քանի որ համընդհանուր գործադուլ կազմակերպելու նրանց ձգտումը հաջողության չէր հասնում: Իրականում գործադուլավորների թիվը հասնում էր լոկ հիսուն տոկոսի: Այսպիսով՝ ազգային հարցում բողոքի միջոց լինելուց բացառությամբ, գործադուլը չէր հանգում տեղական իշխանությունների տապալմանը: Հրապարակված թռուցիկներում և հանրահավաքներում հնչեցրած ելույթներում պահանջվում էր հրավիրել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան՝ որոշում ընդունել բանակը դուրս բերել Երևանից, փակել ատոմակայանը և «Նաիրիտ» քիմիական կոմբինատը, իշխանությունից երաշխիք ստանալ գործադուլավորներին և ուսանողներին «հալածանքներից ու հետապնդումներից» զերծ պահելու առնչությամբ<sup>399</sup>:

ՀԿԿ ԿԿ սեպտեմբերյան պլենումի կողմից հափշտակումներին ու պետական սեփականության յուրացումներին վերաբերող խոստովանությունը քննարկվում էր ամեն տեղ: ԽՍՀՄ ՆԳ նախարարության ԲԽՍՍ-ի գլխավոր վարչության հատուկ օպերա-

<sup>396</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 15, թ. 234:

<sup>397</sup> Նույն տեղում, թ. 236:

<sup>398</sup> Նույն տեղում, գ. 16, թ. 7:

<sup>399</sup> Նույն տեղում, թ. 27:

տիվ խումբը հարուցեց մոտ 200 քրեական գործ, ընդ որում խոշոր չափերով պետական սեփականության հափշտակման՝ 57 դեպք, խոշոր չարաշահումների՝ 49, կաշառակերություն՝ 10<sup>400</sup>:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության հովիսյան որոշումից հետո, մանավանդ սեպտեմբեր ամսին, «Ղարաբաղ» կոմիտեն ավելի համարձակ էր գնում առճակատման, անցկացնում չարտոնված հանրահավաքներ, որտեղ հնչում էին ազգային և հասարակական այլ բնույթի պահանջները: Որպես արձագանք, հոկտեմբերի 8-ին Ս. Հարությունյանը հեռուստատեսությամբ ելույթ է ունեցել հանրապետությունում իրավիճակի բարդացման առնչությամբ: Նա առաջարկում էր ակտիվորեն օգտագործել Ա. Վոլսկու Արտակարգ ղեկավարման վարչությունը: Ասում էր, թե բազմաթիվ աշխատավորական կոլեկտիվներ պատրաստական էին ամրապնդել Արցախի հետ Հայկական ԽՍՀ-ի կապերը:

Մեծաթիվ ձեռնարկություններ արդեն լցվել էին այս խնդրի լուծմանը մարզում, հաստատելով տնտեսական ու մշակութային տարաբնույթ կապերը: Հայտարարվեց, թե առաջիկայում ակտիվ օգնություն կտրվի Արցախում էլեկտրատեխնիկական, ռադիոէլեկտրոնային և թեթև արդյունաբերության արտադրություններ ստեղծելու համար: Նախապատրաստական աշխատանքներ էին տարվում մարզի գազաֆիկացման ուղղությամբ: Կենտկոմի ղեկավարը նշեց, որ ՀԽՍՀ-ի մասնակցությամբ ԼՂԻՄ-ում պետք է ստեղծվեն պահածոյի ու պանրի գործարաններ, մսի կոմբինատ, խաղողի վերամշակման գործարան: Արդեն իսկ աշխատանքներ էին տարվում բնակարանային և սոցիալ-մշակութային շինարարության ասպարեզում: Հայաստանի ԲՈՒՀ-երում տեղեր են հատկացվել արցախցի ուսանողների նպատակային ուսուցման համար<sup>401</sup>:

Նախատեսված այդ խնդիրները կարևոր հարցեր էին, անշուշտ, ուստի ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղարը հայցում էր հանրահավաքների դադար, որը իբր թե նպաստելու էր պրակտիկ գործերի ավելի արդյունավետ իրականացմանը: Մինչդեռ հանրահայտ

<sup>400</sup> Սովետական Հայաստան, թ. 237, 30. 09. 1988:

<sup>401</sup> Նույն տեղում, թ. 244, 09. 10. 1988:

էր, որ ԽՍՀՄ-ի կողմից Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը զարգացնելու համար հատկացված 400 մլն ռուբլի տնօրինում էր Բաքվի իշխանությունը: Այդ գումարների ճնշող մասը ծախսվում էր ադրբեջանցիների համար պայմաններ ստեղծելուն, նրանց այնտեղ տեղափոխելու և մարզում ժողովրդագրական պատկերը փոխելու համար: Ուստի արցախցիները հրաժարվել էին այդ հատկացումներից ու հայտարարել, թե իրենց պայքարը տնտեսական չէ, այլ քաղաքական: Այսինքն՝ նրանց հիմնական պահանջը Միացումն էր մայր Հայաստանին: Ս. Հարությունյանը համազգային այդ պայքարը մեկնաբանում էր կենտրոնական իշխանությունների ոճով, ինչը հայ ժողովրդի համար անընդունելի էր<sup>402</sup>:

Իր ելույթում Ս. Հարությունյանը տրտնջում էր, թե հուլիսին ՀԽՍՀ-ում թողարկվել էր 73 մլն ռուբլու պակաս արտադրանք ու չի կատարվել 20 մլն ռուբլու շինմոնտաժային աշխատանք: Սեպտեմբերին չի թողարկվել գրեթե 35 մլն ռուբլու արդյունաբերական արտադրանք, ու Երևանի 220 ընտանիքներ բնակարան չեն ստացել: Սակայն, ապստամբ ժողովուրդը էլ ի՞նչ կարող է անել, երբ նրա ազգային, ժողովրդավարական պահանջները անբարո մերժվում էր իշխանությունների կողմից: Էլ ի՞նչ մեթոդով կարելի էր ճնշում գործադրել այդ պնդաճակատների վրա:

Գործադուլը՝ որպես աշխատավորների պայքարի միջոց, արտերկրում վաղուց ի վեր փորձված ու հզոր ձև է: Սակայն ԽՍՀՄ-ի համար, անշուշտ, դա աննախադեպ ու Խորհրդային Հայաստանում առաջին անգամ լայն զարգացում ստացած երևույթ էր: Հանրապետությունում շատ մտավորականներ ու պաշտոնյաներ դեմ էին արտահայտվում գործադուլին, մտահոգված լինելով, որ այն կարող էր պատժամիջոցների առիթ հանդիսանալ արցախցիների համար: ՀԿԿ ԿԿ ղեկավարությունը կարծում էր, որ եթե «Ղարաբաղ» կոմիտեն ժողովրդին կոչ է անում համազգային գործադուլի, ուրեմն նա հաստատորեն վճռել էր մեկընմիշտ լուծել Արցախի հիմնախնդիրը, իսկ դա հանգում էր նաև իշխանափոխության: Ի՞նչ

---

<sup>402</sup> Սովետական Հայաստան, թ. 244, 09. 10. 1988:

կարելի էր անել համազգային գործադուլը կանխելու և հանրապետությունը ծանր վիճակից դուրս բերելու համար: Միայն մեկ բան՝ համագործակցել ժողովրդական ուժերի հետ:

## 2.2. Իրավիճակը հանրապետությունում 1988 թ. հոկտեմբեր – նոյեմբերին

1988 թ. հոկտեմբեր-նոյեմբերին հանրապետությունում տեղի ունեցած իրադարձություններին՝ հանրահավաքներին, նստացույցներին, փողոցային երթերին, պատգամավորների հետ հանդիպումներին, գործադուլներին ամբողջ մեր հասարակությունը ավելի հախուռն ու նվիրված էր մասնակցում:

Ամիսը սկսվել էր հոկտեմբերի 3-5-ին ԽՍՀՄ ԳԽ Ազգությունների խորհրդի նախագահ Ա. Վոսսի Ստեփանակերտ կատարված այցով: Նրա գլխավորած հանձնաժողովն այնտեղ դիմավորել էին Երևանից ժամանած Լ. Տեր-Պետրոսյանն ու Բ. Արարքյանը: Համատեղ քննարկումների արդյունքում հանձնաժովն բավականին անկողմնակալ տեղեկանք է կազմել և ընդունել Արցախի Ադրբեջանի կազմում մնալու անհնարինությունը<sup>403</sup>: Բացի դրանից, հոկտեմբերի 5-ին ստեղծվում է Գաղթականների գործերի հանրապետական հանձնաժողովը՝ Վլադիմիր Մովսիսյանի նախագահությամբ, իսկ մյուս օրը Ղարաբաղ կոմիտեի առաջնորդ Լ. Տեր-Պետրոսյանը մանրամասն տեղեկացնում է Թատերական հրապարակում հավաքված բազմությանը ԼՂԻՄ-ում տիրող իրադրության մասին:

Նա նշում է, որ Արցախում գործադուլներն ընդգրկել են նաև գյուղական շրջանները, Ստեփանակերտը լի է տանկերով, զրահամեքենաներով և ներքին զորքերի ավտոմատավոր ծառայողներով: Իսկ հոկտեմբերի 8-ին տեղի ունեցած հանրահավաքում ընդգծեց, որ Արցախի ժողովուրդը «վեր է ածվել ազգի և որոշում է իր ազգային խնդիրները», որի համար անհրաժեշտ է «իշխանության գլուխ կանգնած լինեն ժողովրդի ընտրյալները»: Նա առաջարկում է

<sup>403</sup> В. Б. Арутюнян, Генрих Погосян: лидер Арцаха, с. 28.

հասնել նրան, որ Հայաստանում ևս Գերագույն խորհուրդը դառնա «ժողովրդական խորհրդարան, որը պետք է վճռի հայ ժողովրդի խնդիրները»<sup>404</sup>:

Նույն հոկտեմբերի 8-ին ՀԿԿ կենտկոմը անդրադարձել էր հանրապետության կենսական հարցերին: Նրա խորհրդակցությունում նշվեց, որ ինը ամսում պակաս են գործարկվել 122 հազար քառ. մետր բնակարան, 8000 աշակերտական տեղով դպրոց, 1670 տեղով մանկապարտեզ, 390 մահճակալով հիվանդանոց: Վնաս են կրել արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը<sup>405</sup>: Համանման վիճակ ստեղծվել էր նաև Ադրբեջանում. երկու հանրապետություններում հետզհետե ավելի էր խորանում ճգնաժամը: Հոկտեմբերի 11-ին Ստեփանակերտում հանդիպման ժամանակ Ա. Վեգիրովը և Ս. Հարությունյանը ուղիներ էին որոնում երկու հանրապետությունները ծանր վիճակից դուրս բերելու համար:

Սակայն դա նրանց չհաջողվեց: Ընդհակառակը, Ադրբեջանի և Հայաստանի հասարակական կյանքի վրա բացասական ազդեցություն գործեց ԽՍՀՄ Գերագույն դատարանում սկսված Սումգայիթյան վայրագությունների համար մեղավորների դատավարությունը: Հանցագործներին մեղադրում էին ջարդերի, հրկիզումների, վանդալիզմի և սպանություններով ուղեկցված զանգվածային անկարգություններ կազմակերպելու ու դրանց անմիջականորեն մասնակցելու համար: Թե՛ կենտրոնական և թե՛ հանրապետական լրատվամիջոցները քչախոս էին, այնուամենայնիվ, նրանցում պահանջվում էր հանցագործների նկատմամբ արդարացի վճիռ կայացնել:

Նման լարված պայմաններում երիտասարդությունը անտարբեր չէր կարող մնալ իր ազգի առջև ծառայած հարցերի հանդեպ: Եվ արդեն հոկտեմբերի 20-ին ՊԱԿ-ի նախագահ Մ. Յուզբաշյանը ՀԿԿ ԿԿ հաղորդել է բուհերում «Հայ ուսանողների միություն» ստեղծելու մտահղացման մասին՝ այդ առթիվ՝ Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանող Ա. Մովսիսյանը թռուցիկներ էր

<sup>404</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 24, թ. 55:

<sup>405</sup> Սովետական Հայաստան, թ. 245, 11. 10. 1988:

տարածել<sup>406</sup>: Ուսանողների միությունը, ըստ նախաձեռնողների կարծիքի, պետք է ինստիտուտի բոլոր ֆակուլտետներից ու կուրսերից ներկայացուցիչներ ունենար որպեսզի կարողանար բուհի ղեկավար մարմիններում և ընդհանուր կառավարումը տանել ժողովրդավարական սկզբունքով: Նախատեսվում էր ստեղծել նաև Հայ ազգային ճակատ (ՀԱՃ), որը պիտի ունենար ծրագիր ու կանոնադրություն: Ներկայիս «Սահմանադրական խումբը» պատրաստվում է մտնել ՀԱՃ-ի մեջ<sup>407</sup>:

ՊԱԿ-ի նախագահը տեղեկացրել էր, որ հանրապետության շրջաններում ստեղծվում էին «հասարակական շարժման կոմիտեներ, որոնք փոխարինում են լուծարված «Ղարաբաղ» ենթակոմիտեներին»<sup>408</sup>: ՊԱԿ-ի հաղորդումներում տվյալներ կան, նաև այն մասին թե Շարժանը մեծապես աջակցում են ուսանողները: Նրանք կոչ էին անում անտեսել իրենց պարապմունքները, մինչև որ Գերագույն խորհուրդը հրավերի նստաշրջանը: Այդ մասին առանձնապես շեշտվել է հոկտեմբերի 3-ին անցկացրած հանրահավաքում: Երևանի Պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետի ուսանող Հարություն Բերբերյանը հայտարարել է, որ «Հայ ժողովրդի անվտանգությունը մենք պետք է պահանջենք ոչ թե պետությունից, այլ մեզնից: Թափված հայկական արյան համար ղեկավարությունը դեռևս չի տվել բացատրություն: Մեր ազատության համար մենք պարտական ենք ոչ թե ռուս ժողովրդին, այլ հայ... «Զվարթնոց» օդանավակայանում տեղի ունեցածը ցույց է տվել, թե ինչպես է 1920 թ. ռուսական բանակը ազատագրել Հայաստանը»<sup>409</sup>:

Թատերական հրապարակում կոմիտեական Համբարձում Գալստյանը հայտարարեց, որ Գերագույն խորհրդի մասնակի ընտրությունների ժամանակ ընտրողների 78 տոկոսը պաշտպանեց Աշոտ Մանուչարյանի և Խաչիկ Ստամբոլցյանի թեկնածուի-

---

<sup>406</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 16, թ. 110:

<sup>407</sup> Նույն տեղում, թ. 114:

<sup>408</sup> Նույն տեղում, թ. 27:

<sup>409</sup> Նույն տեղում, թ. 28–29:

յունները: Հետևաբար, նրանք ընտրվել են Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր: Խորհրդային երկրի պատմության մեջ նման ժողովրդական ընտրություն առաջին անգամն է տեղի ունեցել: Այդ մասին իրենց ելույթներում հայտարարեցին նաև Ա. Սադոյանը, Ս. Հակոբյանը, Գ. Դանիելյանը և ուրիշներ: Այդ երևույթը պարզ վկայություն էր կոմիտեականների համար, որ ժողովրդավարական ընտրությունների ճանապարհով հնարավոր էր հասնել իշխանության: Ուստի հանրահավաքներում կոչեր էին հնչում պայքարի ժողովրդական ձևը շարունակել հետագայում ևս<sup>410</sup>: ՊԱԿ-ի նախագահը հոկտեմբերի 6-ին, 11-ին, 18-ին ՀԿԿ ԿԿ ուղարկած տեղեկանքները շարադրում էր նույն ոգով:

Ասված է, որ կոմիտեականները հանդես են գալիս գործադուլավորների պաշտպանությամբ: Ռեվելի գործարանից Շարժման եռանդուն մասնակից բանվոր Ա. Ղազարյանը հայտարարեց, որ գործարանը պատկանում է աշխատավորներին և նրանք կարող են լուծել իրենց ձեռնարկության հետ կապված բոլոր հարցերը<sup>411</sup>: Հաղորդում կա նաև այն մասին, որ մի շարք ռեկտորներ ամեն կերպ սատարում են Արցախի շարժման ակտիվիստ ուսանողներին: Պետական համալսարանի դասախոսներ Ֆ. Մելիք-Ադամյանը, Ռ. Տոնոյանը, մեխանիկական ֆակուլտետի կուսկազմակերպության քարտուղար Լ. Սահակյանը, ՀԿԿ անդամներ Վ. Բախշեցյանը, Ա. Հակոբյանը, Ն. Գալստյանը և ուրիշներ անկոտրում պաշտպանում էին ուսանողների դիրքորոշումը: Բուհերի 60 ուսանողներ հոկտեմբերի 5-ին հանդիպել են Պետական համալսարանի իրենց համախոհների հետ ու որոշել կոչ անել շարունակել պարապմունքների բոյկոտը<sup>412</sup>:

Հայաստանի բնակիչների կողքին բավականին ակտիվ էին Երևանում սովորող սփյուռքահայ ուսանողները ևս: Օրինակ՝ համալսարանի ուսանող Գևորգ Յազեճյանը դրա համար հեռացվել է համալսարանից ու արտաքսվել երկրից, ինչի համար համալսա-

---

<sup>410</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 16, թ. 30:

<sup>411</sup> Նույն տեղում, թ. 31:

<sup>412</sup> Նույն տեղում, թ. 32:



րանի Շարժման անդամները առանձին բողոք էին ներկայացրել: Այդ միջոցառմանն առանձնապես գործուն մասնակցություն է բերել համալսարանի կոմերիտկազմակերպության կոմիտեն<sup>413</sup>:

Միացման շարժման կոմիտեականները հատկապես գործուն էին Գերագույն խորհրդի պատգամավորների մասնակի ընտրությունների ժամանակ: Այսպես, Չարենցավանում հոկտեմբերի 15-ին տեղի ունեցած հանրահավաքին մասնակցել է մոտ 15 հազար մարդ, նրանք պաշտպանում էին Խաչիկ Ստամբուլյանի թեկնածությունը: Քանի որ իշխանությունները չէին ցանկանում Խ. Ստամբուլյանի պատգամավոր ընտրվելը, կոմիտեականները հոկտեմբերի 10-ին ցույց են կազմակերպել նաև ՀԿԿ ու Գերագույն խորհրդի առաջ և պահանջել են հարգել Խ. Ստամբուլյանի սահմանադրական իրավունքը: Այդ նույն երեկոյան Թատերական հրապարակում հրավիրված հանրահավաքին մասնակցել է շուրջ 50 հազար մարդ<sup>414</sup>: Նրանք և նստացույցի մասնակիցները պահանջել են ԼՂՀ-ն դուրս բերել Ադրբեջանի կազմից, ապահովել Ադրբեջանում ապրող հայերի անվտանգությունը, Հայկական ԽՍՀ-ից դուրս բերել բանակային ու ներքին զորքերի ստորաբաժանումները: Լևոն Տեր-Պետրոսյանը և մյուս ելույթ ունեցողներն եռանդագին պնդում էին իրենց տեսակետի վրա:

Օրինակ քիչ առաջ՝ հոկտեմբերի 10-ին հրավիրված հանրահավաքում, Լ. Տեր-Պետրոսյանը իր ելույթում նշեց. «Ղարաբաղ» կոմիտեն հասկանում է, որ մեր հասարակությունը չունի «ինքնուրույն, անկախ և դեմոկրատական հանրապետություն»: Իսկ այսպիսի պայմաններում «հնարավոր չէ վճռել ԼՂԽԽ խնդիրը և հայ ժողովրդի կենսահույզ այլ հարցեր: Հանրապետության ապագա Գերագույն խորհրդի 340 պատգամավորները պետք է ընտրվեն ժողովրդից:

Անցած ութ ամսում Ղարաբաղյան շարժումը կրել է որակական տեղաշարժ. նա դարձել է ուժեղ, որը կարող է ճնշում գործադրել և հանրապետական իշխանություններին ստիպել գնալ զիջում-

<sup>413</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 16, թ. 40:

<sup>414</sup> Նույն տեղում, թ. 41:

ների»: Կոմիտեականների առաջնորդը կոչ էր մղում պատրաստ լինել ապագա վճռորոշ պայքարի<sup>415</sup>: Իսկ հոկտեմբերի 14-ի հանրահավաքում նրա ելույթը նվիրված էր վերակառուցման հակառակորդների մերկացմանն ու Ղարաբաղյան շարժմանը: Նա շեշտեց, որ կենտրոնական իշխանության գաղափարախոսական մարմինները վերջերս գտան հայ ժողովրդի նվիրյալ զգացումներն ու արժանապատվությունը վիրավորելու մի ավելի գոեհիկ ու մերկապարանց միջոց:

Պատռելով կենտրոնական իշխանությունների դիմակը, որը զրպարտում էր, թե «Ղարաբաղյան շարժումը խրախուսվում է վերակառուցման հակառակորդների կողմից», Լ. Տեր-Պետրոսյանը բացեիբաց հայտարարեց, թե «մենք գործ ունենք ստալինյան գաղափարախոսության զինանոցի» հետ: Ղարաբաղյան շարժումը ակնհայտորեն ձգտում էին նմանակել ղազախստանյան դեպքերի հետ, իսկ նրանց մեզ մատուցել էին որպես սոցիալական անարդարության, կաշառակերության և անօրինականությունների այլ դրսևորումները ազգային զգացմունքների պոռթկումով կոծկելու ձգտում: Իրականում Ղարաբաղյան շարժումը որևէ կապ չուներ ղազախստանյան իրադարձությունների կամ վերակառուցման հակառակորդների հետ:

Երկրում հռչակված վերակառուցման, հրապարակայնության և ժողովրդավարացման պայմաններում հայ ժողովուրդը կարող էր ավելի վճռականորեն բարձրացնել իր արդար դատը: Շարժումը միանշանակ համաժողովրդական էր: «Ուստի,– շարունակում է Լ. Տեր-Պետրոսյանը,– միանգամայն ծիծաղելի են նրա առաջացումը մի խումբ ծայրահեղականների, արևմտյան գործակալների, սադրիչների, անպատասխանատու անձանց կամ վերակառուցման հակառակորդների ջանքերին վերագրելու մեկը մյուսին հաջորդող և մեկը մյուսից շուտ սննկացող փորձերը»<sup>416</sup>: Ապա հայտարարում է, որ «Կույր պետք է լինել չտեսնելու համար, որ հայ ժողովուրդը պատմական հանգամանքների բերումով հայտնվել է խորհրդային

<sup>415</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 16, թ. 48:

<sup>416</sup> Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 39:

հասարակարգի իսկական վերակառուցման և ժողովրդավարության հաստատման ավանգարդում»: Շեշտում է Հայաստանում սկսված ժողովրդավարական փոփոխությունների մյուս ժողովուրդների համար օրինակ հանդիսանալու հանգամանքը<sup>417</sup>:

Հայաստանի ամբողջ հասարակության հետ միասին 1988 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ավելի էր ակտիվացել «Ղարաբաղ» կոմիտեն: Նրա անդամները հպարտությամբ հայտարարում էին, թե իրենց մասին խոսում էին ոչ միայն ՀԽՍՀ-ում, այլև Խորհրդրային Միության սահմաններից դուրս: Այսպես, Վազգեն Մանուկյանը իրավացիորեն հայտարարեց, որ Ղարաբաղյան շարժման մասին խոսում էին Մերձբալթիկայում և մյուս սոցիալիստական երկրներում<sup>418</sup>: Նվաճումներից բացի, կոմիտեի անդամները հաճախ խոսում էին նաև իրենց թույլ տված սխալների մասին: Օրինակ հանրահավաքներից մեկում նշվել է, որ իրենք Շուշիի հարցում թույլ են տվել մեկ սխալ: Պատերազմի վետերանները դա բացատրում էին այդ կազմակերպության երկու սերունդների միջև գոյություն ունեցած հակասություններով: Վերջինը երևան եկավ երբ հոկտեմբերին հրավիրված հանրահավաքներում կոմիտեականները սխալ են համարել Ազգային ճակատի ակտիվիստների կողմից Իգոր Մուրադյանին Ղարաբաղյան շարժման առաջնորդի պաշտոնում առաջ քաշելու առաջարկը<sup>419</sup>:

Մ. Յուզբաշյանը հոկտեմբերի 18-ին ՀԿԿ կենտկոմ հաղորդել է, որ «Ղարաբաղ» կոմիտեի անդամները համառորեն պայքարում են իշխանությունների դեմ: Չարենցավանի թիվ 194 ընտրական օկրուգում կոմիտեական թեկնածուի հաղթանակը հանդիսանում էր այդ պայքարի արդյունքներից մեկը<sup>420</sup>:

Կազմակերպության մարտիկները Շարժման մեջ էին ներգրավում նաև կանանց: Լ. Տեր-Պետրոսյանը հոկտեմբերի 17-ի հանրահավաքում կանանց կոմիտեին հորդորեց բողոքներ ուղար-

---

<sup>417</sup> Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 40:

<sup>418</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 16, թ. 74:

<sup>419</sup> Նույն տեղում, թ. 75:

<sup>420</sup> Նույն տեղում, թ. 80:

կել իշխանություններին և պաշտպանել հայ կանանց իրավունքները: ՊԱԿ-ի նախագահը հոկտեմբերի 23-ին ՀԿԿ ԿԿ հղած հաղորդագրության մեջ<sup>421</sup> մեկ անգամ ևս պնդում է, որ «Ղարաբաղ» կոմիտեն թափով աշխատանքներ է տանում քաղաքական կուսակցություն ստեղծելու համար: Նույն ուղղությամբ աշխատանքներն էին ընթանում տարբեր ընտրական կազմակերպություններում և աշխատանքային կոլեկտիվներում: Այնտեղ տարածում են թռուցիկներ ու տանում համապատասխան քարոզչություն: Հիշատակվում է նաև, որ Կիրովականի հին գերեզմանոցում հուշակոթող է բացվել Սոււմգայիթի զոհերին նվիրված: Դրա հեղինակն է քանդակագործ Ս. Դանիելյանը իսկ բացմանը ներկա էին եղել մոտ 400 հոգի<sup>422</sup>:

Նոյեմբերի սկզբին ՊԱԿ-ի նոր նախագահ Վ. Բադամյանցը ՀԿԿ ԿԿ հղած «Դաշնակցության դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հարցի նկատմամբ» հաղորդագրության մեջ տեղեկացրել է, որ սեպտեմբերին հանրապետության տարածքում ԽՍՀՄ ՊԱԿ-ի ներկայացուցիչը հանդիպել է ՀՀԴ ղեկավար Գ. Մարուխյանի և բյուրոյի անդամ Գ. Տասնապետյանի հետ: Հանդիպման ժամանակ դաշնակցության ղեկավարները ՊԱԿ-ի ներկայացուցչին վստահեցրել են, որ իրենց կուսակցությունը պաշտպանում է խորհրդային ղեկավարության և ՀԿԿ կենտկոմի քայլերը՝ ԼՂԻՄ-ի խնդրի լուծելու ուղղությամբ: Դաշնակցության ղեկավարները հայտարարել են, որ պաշտպանում են ՀԿԿ ԿԿ սեպտեմբերյան պլենումի որոշումները Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ<sup>423</sup>:

Սա այն քայլերից մեկն էր, որը նպատակ ուներ Հայաստան-Սփյուռք կապը դնել նոր հարթության վրա և ելնելով Ղարաբաղյան շարժման նկատմամբ դաշնակցության և մյուս քաղաքական ուժերի դրսևորված վերաբերմունքից, նախապատրաստել այդ կուսակցությունների վերադարձը հայրենիք: Դա կլիներ վերակառուց-

---

<sup>421</sup> Սա Մ. Յուզբաշյանի վերջին հաղորդագրությունն էր: Հոկտեմբերի 25-ին նրան փոխարինել է Վ. Գ. Բադամյանցը, որը նույն ոճով շարունակել է հաղորդագրություններ ուղարկել ՀԿԿ կենտկոմ:

<sup>422</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 16, թ. 138:

<sup>423</sup> Նույն տեղում, թ. 160:

ման ժամանակաշրջանում ժողովրդավարական քայլերից մեկը, և նման վերաբերմունքը պաշտպանություն է գտել օրինակ, կոմիտեի անդամ Վ. Մանուկյանի կողմից: Այնուամենայնիվ, կազմակերպության ղեկավար Լ. Տեր-Պետրոյանը դեմ էր նման նախաձեռնության: Նա ճիշտ քաղաքական տեսություն ուներ ՀՀԴ-ի քաղաքատենչ լինելու մասին ու հասկանում էր, որ նրա հակախորհրդային միտումներ, անկախության անհաշվենկատ քարոզն ու ՀՀԸ-ի հետ մրցակցությունը էլ ավելի կբարդացնեն ՀԽՍՀ ներքին իրավիճակը<sup>424</sup>: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ ռամկավարների և հնչակյանների հետ միասին դաշնակցության հայրենիք վերադառնալու մասին որոշումը արդարացված քայլ էր:

1988 թ. հոկտեմբերի վերջին և նոյեմբերի սկզբին անցկացրած հանրահավաքներում ելույթներ էին ունենում նաև Մերձբալթյան հանրապետություններից և այլ տեղերից եկած ներկայացուցիչները, որոնք ողջունում էին հայ ժողովրդի պայքարն ու պաշտպանում ղարաբաղյան հիմնախնդիրը: Ելույթ էին ունենում նաև նոր անձնավորություններ՝ Տիգրան Մանսուրյանը, Տիգրան Պասկեիչյանը, Կարեն Յուզբաշյանը, Դավիթ Շահնազարյանը, քուրդ Ալիխան Մամեն, Ավետիք Իշխանյանը, Մանվել Սարգսյանը, Էդուարդ Ամիրյանցը, Վիլեն Մանասարյանը, Մարտին Օգանեսյանը, Նիկոլայ Ժուրավսկին՝ Լենինգրադից, Երջանիկ Աբգարյանն և շատ ուրիշներ<sup>425</sup>: Նրանք բոլորն էլ պաշտպանում էին հայ ժողովրդի ազգային պայքարը:

Իսկ թուրք-ազերիները՝ Մոսկվայի հատկացված 400 մլն ռուբլու հաշվին, Խոջալուում արագ կառուցում էին 42 տուն<sup>426</sup>: Ի պատասխան դրան, ԼՂԻՄ Ասկերանի շրջանի Շոշ գյուղի կոլտնտեսությանը պատկանող Խաչին տափ կոչված տեղամասում նոյեմբերի 9-ից սկսվել էր Երևանի այլումինի գործարանի բանվորների հա-

---

<sup>424</sup> Ավելի մանրամասն՝ Մ. Յ. Чалыян, Освещение арцахского движения в армянской англоязычной прессе США (февраль 1988 – август 1990 гг.), Ер., 2006, с. 239:

<sup>425</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 24, թ. 77–78:

<sup>426</sup> Хроника НКАО, февраль 1988–февраль 1990, Баку, 1990, с. 19–20.

մար հանգստյան տան շինարարությունը: Այդ առթիվ Ադրբեջանի լրատվամիջոցները ոռնոց էին բարձրացրել: Շինարարական աշխատանքները դադարեցվեց, մինչդեռ Խոջալուում, Շուշիում և այլ տեղեր այն շարունակվում էր թափով:

ԽՍՀՄ նախարարների խորհրդի և կրթության պետական կամիտեի որոշումներով զինված, Ադրբեջանի իշխանությունները կատարեցին հաջորդ հակաարցախյան քայլը: Նրանք փակեցին Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը, որը երկարատև ու համառ պայքարի արդյունքում միացվեց Կիրովականի մանկավարժական ինստիտուտին<sup>427</sup>: Բացի դրանից, ԱդրխՍՀ ղեկավարները ԼՂԻՄ տարածքում գտնվող ադրբեջանաբնակ վայրերում արագացնում էին բնակարանաշինությունը, այնտեղ բերում Հայաստանից հեռացած թուրքերին: Նրանց նպատակն էր արագացնել մարզի բնակչության ժողովրդագրական փոփոխությունը՝ ի օգուտ ազերիների: Լավ հասկանալով այդ միտումը, նոյեմբերի 6-ին անցկացրած հանրահավաքում ՀՀՇ առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանը կոչ է անում ամեն կերպ խոչընդոտել Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղում ծավալվող շինարարությանը: Դրա համար հարկավոր էր Ադրբեջանի սկսած ճիգերին «հակադրել մեր կողմից իրագործվող շինարարությունը»<sup>428</sup>: Նման մոտեցման մեջ պարզ ար-

---

<sup>427</sup> ԽՍՀՄ ՄԽ և կրթության կոմիտեի 1988 թ. հոկտեմբերի 4-ի և 18-ի որոշումներով բուիը տեղափոխում էին Կիրովաբադ, Երևան, Գյումրի և Կիրովական: Իրականում նա տեղակայվել է Կիրովականում, իսկ 1989 թ. մարտի 13-ին և 15-ին՝ Հայաստանի ժողովրդական կրթության նախարարության որոշումով ու նրա ղեկավարի հրամանով, ստեղծվեց Կիրովականի Հովհ. Թումանյանի անվան Պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքը: 1989 թ. մարտի 21-ին նրա առաջին, ընտրված պրոռեկտորը դարձավ պ.գ.թ., դոցենտ Ա. Բաղդասարյանը: Տե՛ս Ռ. Հ. Էդոյան, Բարձրագույն կրթության խնդիրներն Արցախում 1988-1992 թթ.,- «Լրաբեր հասարակական գիտությունների», 2009, № 3, էջ 286-288:

<sup>428</sup> ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 10, թ. 38:

տահայտվում էր «Ղարաբաղ» կոմիտեի և հանրապետության իշխանությունների համագործակցությունը:

Լեռնային Ղարաբաղում շինարարություն ծավալելու վերաբերյալ «Ղարաբաղ» կոմիտեի կոչը լայն արձագանք գտավ հանրապետությունով մեկ: Այսպես, մի քանի օրվա ընթացքում կազմվել էր շինանյութերով բեռնված երկու ավտոշարասյուն, որից մեկը բաղկացած էր 60 ավտոմեքենայից, մյուսը՝ 20: Առաջինը մեկնեց Դավիթ Վարդանյանի ղեկավարությամբ՝ Իջևան-Կիրովաբադ-Ստեփանակերտ ճանապարհով, իսկ երկրորդը տանում էր ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանը, այն գնաց Գորիս-Հաղրութ ուղիով: Այնուհետև, նոյեմբերի 20-ին Թատերական հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում Լ. Տեր-Պետրոսյանը հաղորդեց Լեռնային Ղարաբաղ գնացած և շինանյութով բեռնված ավտոշարասյունների դժվարությունների մասին: Նա շեշտեց, որ Արցախի տերը հանդիսանում է հայ ժողովուրդը, Արցախը ընդամիշտ կլինի հայ ժողովրդի հետ:

Ապա տեղեկացնում առաջիկա օրերին սպասվող Գերագույն խորհրդի նստաշրջանի մասին: Այն պահին հրապարակում ներկա 27 պատգամավորները հույս են հայտնել, որ նոյեմբերի 22-ին հրավիրված նստաշրջանում նրանք վճռական կլինեն<sup>429</sup>: Աշոտ Մանուչարյանը հայտարարում է, որ հրապարակում կանայք ստորագրություններ են հավաքում ընդդեմ սումգայիթյան դատավարության և ի օգուտ զորակոչիկները իրենց զինվորական ծառայությունը Հայաստանում անցկացնելուն:

Մամուլում երևում են ըմբոստ և մերկացնող հոդվածներ: Օրինակ. «Սովետական Հայաստան» թերթը նոյեմբերի 5-ին հրապարակել է Լևոն Հախվերդյանի «Ինչքան կարելի է ճիշտը չասել» հոդվածը: Նրա հեղինակը պատմում է, թե ինչպես 1988 թ. գարնանը Մոսկվայում, ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայում Հայաստանի և Ադրբեջանի նույնանուն ինստիտուտների ներկայացուցիչները քննարկել են «Ղարաբաղյան շարժում» թեման: Բանավեճի ժամանակ կեղծիքը խեղդում էր հակառակ կողմին և նա նույնիսկ

<sup>429</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 25, թ. 57:

չէր ցանկանում ընդունել ԼՂԻՄ գոյությունը: Մոսկվա մեկնած Արցախի պատվիրակության մեծ մասին ներս չեն թողել: Զայրացած հեղինակը հարցնում էր. ինչպե՞ս բնորոշել, երբ հազարամյակներ ի վեր իր պատմական հայրենիքում ապրող հայը համարվում է իբր թե անցյալ դարում Արցախ եկած նորեկներ, որոնց օրը ցերեկով կողոպտում են նրանց ներկան ու անցյալը, պատմությունը<sup>430</sup>: Ի՞նչ պետք է անել, երբ մարդիկ չեն հասկանում, որ արցախյան շարժումը վերակառուցման հարազատ ծնունդ էր<sup>431</sup>:

Հանրապետությունում վիճակը բարդանալու կապակցությամբ, նոյեմբերի 18-ին Թատերական հրապարակ են գալիս ՀԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահության նախագահ Հրանտ Ոսկանյանը և ՀԿԿ ԿԿ քարտուղար Գալուստ Գալոյանը: Նրանք իրենց ելույթներում ներկայացնում են առաջիկա Գերագույն խորհրդի նստաշրջանում ընդունման ենթակա որոշումների նախագծերը, որոնք ներգրավել են աշխատավորների արված առաջարկությունները, դիտողությունները և լրացումները: Այդ այցելության ժամանակ պաշտոնյաների կողմից միտքն արտահայտվեց, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծումը հնարավոր է միայն սահմանադրական պահանջներով, հանրապետական ղեկավարության և ժողովրդի համատեղ, միասնական ջանքերով, առանց գործադուլների և այլ կտրուկ միջոցների<sup>432</sup>:

1988 թ. նոյեմբերի 20-ին հրավիրված հանրահավաքին մասնակցում էր շուրջ 300 հազար մարդ: Այս անգամ ողջույնի հեռագիր է ուղարկվում Լատվիայում և Լիտվայում ազգային ճակատների ստեղծման կապակցությամբ և քննադատական խոսք ասվում Մոսկվայի հասցեին, որը բռնաճնշումներ էր իրագործում Բալթյան հանրապետությունների նկատմամբ<sup>433</sup>: Հաղորդվում է, որ Արցախ

---

<sup>430</sup> Այդ կեղծարարություններին տողերիս հեղինակը պատասխանել է «К вопросу об армянстве Арцаха как о «пришельцах» հոդվածով, տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», 1993, № 1.

<sup>431</sup> Սովետական Հայաստան, թ. 264, 05. 11. 1988:

<sup>432</sup> Երեկոյան Երևան, թ. 269, 19. 11. 1988:

<sup>433</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 25, թ. 57:



ուղարկված ավտոշարասյունները հաջողությամբ տեղ են հասել ու վերադարձել: Լ. Տեր-Պետրոսյանը առաջարկում է Գերագույն խորհրդի մոտակա նստաշրջանին հասարակության կողմից մասնակցեն Սոս Սարգսյանը, Մարո Մարգարյանը, Ռաֆայել Ղազարյանը, Վազգեն Մանուկյանը և ինքը: Հրապարակը ողջունում է այդ առաջարկությունը: Բացի դրանից միտք է հնչում այդ օրվա հանրահավաքն անվանել աշխարհիկ ժողով, որը նույնպես ընդունվում է: Ելույթ ունեցողը կոչ է նետում՝ պայքար, պայքար այնքան ժամանակ, քանի դեռ Արցախը չի վերամիավորվել մայր Հայաստանի հետ: Այդ հանրահավաքում արտահայտված բոլոր 29 հոգին պաշտպանում են առաջ քաշված առաջարկությունները:

«Ղարաբաղ» կոմիտեի պահանջները պաշտպանում է նաև սփյուռքահայությունը: Այսպես, սփյուռքահայ գործիչ Հակոբ Մինասյանը երկու ամիս գտնվելով Երևանում և մոտիկից ծանոթանալով «Ղարաբաղ» կոմիտեի գործունեությանը, որը «ջանք չի խնայում, որպեսզի սահմանադրորեն հասնի Արցախի հարցի քաղաքական արդարացի լուծմանը», տեղեկացնում է, թե «սփյուռքահայ լայն զանգվածները ակնդետ հետևում են» կոմիտեի գործունեությանը: Նա ընդգծում է թե որքան կարևոր է «ուսումնասիրել հակառակորդի յուրաքանչյուր քայլը, գիտակցել, թե ինչի է ձգտում նա, դեպի ուր է գնում և կատարել կանխարգելիչ քայլ»<sup>434</sup>:

Հոկտեմբերի 17-ին Կանադայից Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության շրջանային վարչության, Հայ հեղափոխական դաշնակցության Կանադայի կենտրոնական կոմիտեի և Ռամկավար ազատական կուսակցության շրջանային վարչության «Միացյալ հայությանը» վերտառությամբ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հրանտ Ոսկանյանին հղած ուղերձում խրատում էին «Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի գիտակից... զանգվածներին, որ զգուշանան կրքերը ավելի բորբոքելուց և կենտրոնական իշխանությունների ու մյուս հանրապետությունների հետ հարաբերությունները ծայրահեղ կեցվածքով խանգարելուց, դադարեցնեն երկրի կյանքը ու տնտեսությունը անդամալուծող գոր-

<sup>434</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 677, թ. 5–6:

ծաղուկները և դասաղուկները, որպեսզի այդ վիճակից չօգտվեն մեր թշնամիները ու շարունակեն քաղաքական ճամփով հետապնդել Արցախի տագնապի լուծումը հայ քաղաքական դատի ներկա այս հանգրվանին»<sup>435</sup>: Անկասկած՝ սփյուռքի մեր հայրենակիցները մտահոգված էին հայրենիքի ճակատագրով և ամեն ջանք գործադրում նպաստել վիճակի կարգավորմանը, նույնիսկ կոչ էին անում մերժել գործաղուկներն ու հրաժարվել հարևանների հետ հարաբերությունները սրելուց:

Այդ ընթացքին՝ 1988 թ. նոյեմբերին, Բաքվում տեղի ունեցող խառնաժողովներում հայ ժողովրդի հասցեին կեղծիքներ և անամոթ պիտակներ էին հորինում: «Մոլոդյոժ Ադրբեջանա» թերթը նկարագրելով նոյեմբերի 17-ին և 18-ին Բաքվի Վ. Լենինի անվան հրապարակում տեղի ունեցած հավաքույթները, եզրակացնում է, թե հայ-ադրբեջանական հարաբերությունների սրվելու պատճառը իբրև հակավերակառուցողական ուժերն են, որոնք պահանջում են Ադրբեջանից կտրել նրա տարածքի մի մասը:



Գրիշա Հովսեփի Օզանեզով

Հողվածի հեղինակը լաիրշ հայտարարում էր՝ «Ազերիները շատ բան են զիջել հայերին», «ԼՂԻՄ-ի և Հայաստանի հարաբերություններն ադրբեջանցիների հետ դարձել է ավելի անտանելի», «Ադրբեջանցիների բնակարանների հրդեհը ԼՂԻՄ-ում և Հայաստանում մնում է չբացահայտված», «ԼՂԻՄ և Հայաստանի կուսակ-

<sup>435</sup> ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 53, թ. 2-3:

ցական մարմինները շարունակում են ստիպել ազգային-տարած-  
քային կառուցվածքի վերանայում», իսկ կենտրոնական լրատվամի-  
ջոցները առանց մեկնաբանությունների տարածում էին ազերիների  
կեղծիքները: Այնտեղ հաղորդում էին, իբր «տասնյակ հազարավոր  
ադրբեջանցիներ վտարվել են ԼՂԻՄ-ից», թե մարզի տարածքը  
«պատմականորեն պատկանում է Ադրբեջանին», իսկ վերջում  
կրկնում Ա. Վեզիրովի ասածը՝ «Հողը ոչ մի անգամ նվեր չի  
տրվում», այլ «արյամբ են վերցնում»<sup>436</sup>:

Նման հայտարարությունների տրամաբանությանը համապա-  
տասխան, հինգ օր առաջ ձևավորված «Գանձակ» կոմիտեն ի դեմս  
Գ. Օգանեզովի, Խ. Սարգսյանի, Ս. Հակոբյանի, Ն. Մինասյանի,  
Տեր Սահակ Սահակյանի, Զ. Վերոյանի, Կ. Խաչատրյանի, Ա.  
Բալասանյանի, Վ. Ասրյանի, Մ. Եսայանի, Վ. Բայտալովի 1988 թ.  
նոյեմբերի 26-ին հաղորդագրություն է հասցրել «Ուրաբաղ» կոմի-  
տեին: Նրանք հայտնում էին, որ նոյեմբերի 21-ին Գանձակում  
(Կիրովաբաղ) սկսվել է հերթական «սոււմգայիթ»: Նոյեմբերի 25-ին  
վառվել է 545 տուն, սպանվել երկու հոգի, ոչնչացվել է Խ. Աբով-  
յանի և Հ. Բաղրամյանի արձանները, տեղական իշխանություններն  
ու միլիցիան անգործության էին մատնված:

Հայկական թաղամասը գտնվում էր շրջափակման մեջ, խա-  
նութներում մթերքներ չէին վաճառվում, ինքնապաշտպանվելու  
համար էլ միջոցներ բացակայում էին, իսկ հարձակվող երիտա-  
սարդ ավազակները ապահովված էին զենքով, կտրված խողո-  
վակներով ու ամրակներով: Միլիցիայով ուղեկցված, նրանց գոչում  
էին. «Հայեր, դուրս Ադրբեջանից», «Ազատություն Սոււմգայիթի հե-  
րոսներին»: Հայ կանայք, երեխաները, ծերերը կուտակված էին մի  
քանի բնակարաններում, ուժերը խիստ անհավասար էին, հնարա-  
վոր չէր նույնիսկ երեխաներին տեղափոխել հարևան հայկական  
գյուղեր, հայերին ազատել էին աշխատանքից: Դիմողները շտապ  
օգնություն էին խնդրում<sup>437</sup>: Համանման զարհուրելի վիճակ տիրում

<sup>436</sup> Молодежь Азербайджана, 19. 11. 1988.

<sup>437</sup> Տե՛ս Գանձակի մինչև 1988 թ. դեկտեմբերի 10-ը իրականացված  
ինքնապաշտպանության ղեկավարներից մեկի Գրիգորի Օգանեզովի

էր նաև Մինգեչաուրում, Շամախիում, Եվլախում, Աղդամում և այլ բնակավայրերում: Կոռումպացված և ազգայնամոլ դահիճները դարձել էին ավելի սարսափելի ու անկառավարելի:

Շիկացած էր Երևանի Թատերական հրապարակը: Այդ ժամանակ Մոսկվայում շարունակվում էր Սոււմգայիթի հանցագործների դատը, մարդիկ ուզում էին իմանալ, թե ինչ է կատարվում Արցախում, իսկ ընթացող գործադուլները զգալիորեն ազդում էին բնակչության ամենալայն խավերի կենցաղի վրա:

Հանրապետության բնակիչներն եռանդով մասնակցում իսկ սիյուտքը ուշադրությամբ հետևում էր Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին: Ահա այդպիսի պայմաններում նոյեմբերի 22-ին սկսվեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը: Ամբիոն բարձրանալով Երևանը ժամանած Արկադի Վոլսկին հայտարարում է, թե Բաքվում և մյուս քաղաքներում իրավիճակը շատ ծանր է, նման պայմաններում անհմաստ է նստաշրջանը շարունակել: Առաջարկում է այն ընդհատել, գնալ տեղերն ու զբաղվել բնակչության պաշտպանության հարցերով: Նրա այդ առաջարկությունը պաշտպանում են Աշոտ Մանուչարյանը, Սարգիս Մուրադյանը, գեներալ Ա. Ղազարյանը, Սոս Սարգսյանը, Սերո Խանգադյանը և ուրիշներ, հավաստացած լինելով, որ նստաշրջանը կշարունակվի հաջորդ կամ մյուս օրը, երբ վիճակը կկայունանա:

Բոլորն էլ գտնում էին, որ այլևս չպետք է թույլատրվի նոր ջարդեր և ողբերգություններ: Հաջորդ օրը հայտարարվում է համազգային գործադուլ: Նստաշրջանը ընդհատվում է: Քանի որ ներկայացվել է, որ հանրապետությունը գտնվում է պատերազմի շեմին, խոսվում է ազգը միավորելու, մի բռունցք դառնալու և մի ղեկավար մարմին ունենալու մասին: Դրա համար առաջարկվում է ստեղծել հանձնաժողով, որի մեջ պետք է մտնեն ՀԽՍՀ կառավարությունն ու «Ղարաբաղ» կոմիտեն: Մինչ այդ «Ղարաբաղ» կո-

---

հուշերը. Самооборона армян Кировабада в 1988-1989 гг. глазами очевидцев, сост. Г. Оганезов, Г. Харатян, Ер., 2014, ինչպես և տողերիս հեղինակի անձնական արխիվ:

միտեն իր վրա էր վերցրել խառը բնակչությանը բնակավայրերում հայերի պաշտպանությունը:

Ինչ վերաբերում է Ա. Վոլսկուն, ապա նա իր սադրիչ հայտարարությամբ ապակողմնորոշեց բոլորին: Նոյեմբերի 23-ին Թատերական հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում ելույթ են ունեցել 38 հոգի<sup>438</sup>: Նրանք ընդհանուր վիճակը ներկայացնում են չափազանց լարված և իսկապես պատերազմական: Աշոտ Մանուչարյանը հայտարարում է, թե Գերագույն խորհրդի նստաշրջանը այսօր կշարունակի իր աշխատանքները: Նախատեսվել էր նստաշրջանը հրավիրել Օպերայի դահլիճում: Նոյեմբերի 24-ի երեկոյան, հանրահավաքում, Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարում է, թե ՀԿԿ կենտկոմը չի ցանկանում խոսել իր ժողովրդի հետ, Հայաստանը չունի իշխանություն և կառավարություն: Քիչ հետո կորոշենք լուրջ քաղաքական հարցեր:

Պետք է աշխատենք հանգիստ ու մտածված: Մենք այսօր չենք արտահայտի մեր զգացումներն ու հույզերը, մենք ինն ամիս դրանք արտահայտել ենք, իսկ այսօր պետք է աշխատենք: Ապա ելույթ է ունենում Բաբկեն Արարքցյանը, որը պատմում է Կիրովաբադում տեղի ունեցող հարձակումների մասին: Նշում է, որ գեներալներ Պ. Պոլեխը և Ա. Օնիշչենկոն հայտարարել են, թե ուժերը անբավարար են 45 հազար հայերին պաշտպանելու և տարհանելու համար: Առաջարկվում է հանրահավաքի անունից հեռագիր ուղարկել ԽՍՀՄ ներքին գործերի հրամանատար Յու. Շատալինին և պահանջել վերոնշյալ գեներալներից՝ ապահովել հայերին պաշտպանելու և տարհանելու միջոցներով<sup>439</sup>:

Եվ այսպես, Գերագույն խորհրդի նստաշրջանը իր աշխատանքները շարունակում է նոյեմբերի 24-ի երեկոյան Ալ. Սպենդիարյանի անվան Օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի շենքում: Այդ նիստը հրավիրվել էր «Ղարաբաղ» կոմիտեի պահանջով: Դահլիճում ներկա էին 200 հոգի, որոնց շարքերում մտավորականներ և լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Դրանցից պատ-

<sup>438</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 25, թ. 75:

<sup>439</sup> Նույն տեղում, թ. 95:

գամավորներ էին 171-ը<sup>440</sup>, այսինքն՝ Գերագույն խորհրդի պատգամավորների կեսից մեկ հոգով ավելի: Ելույթ են ունեցել 17 հոգի<sup>441</sup>: Ֆադեյ Սարգսյանը առաջարկեց նստաշրջանը հետաձգել 2-3 օրով: Քանի որ պատգամավորները սակավաթիվ էին և ձայների որակյալ մեծամասնությունը չէին կարող հավաքել, ուստի վճռվում է նստաշրջանը դադարեցնել: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 25-ին, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահությունը որոշում է ընդունում նախորդ օրը տեղի ունեցած նիստի մասին, որտեղ ասված է, որ ՀԽՍՀ 11-րդ գումարման Գերագույն խորհրդի նոյեմբերի 24-ին անցկացված նիստը ճանաչվում է որպես անօրինական<sup>442</sup>:

\*  
\* \* \*

1988 թ. նոյեմբերի 24-ին բանակը մտցվեց Երևան և ժամը 24.00-ից քաղաքում հայտարարվեց պարետային ժամ, իսկ հանրապետության 16 շրջաններում, որտեղ բնակվում էին նաև ադրբեջանցիներ, այն մտցվել է դեկտեմբերի 5-ից: Հանրապետության բնակչությունը դրանից խիստ դժգոհ էր և վրդովված, պահանջում էր Հայաստանում վերացնել պարետային ժամը: Հանրապետության աշխատանքային շատ կոլեկտիվներ դատապարտել են խորհրդային իշխանության այդ քայլը և բողոք ուղարկում վերադաս մարմիններ<sup>443</sup>: Դեկտեմբերի 3-ի ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշման հիման վրա դեկտեմբերի 13-ից հանրապետությունում սկսվում է զանգվածային լրատվության միջոցների ժամանակավոր գրաքննություն<sup>444</sup>:

Նման համատեքստում նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 1-ը Մոսկվայում հրավիրվել էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի արտա-

---

<sup>440</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 25, թ. 103:

<sup>441</sup> Նույն տեղում, թ. 103-105:

<sup>442</sup> Երեկոյան Երևան, թ. 274, 26. 11. 1988:

<sup>443</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 651, թ. 72-73:

<sup>444</sup> Նույն տեղում, ց. 87, գ. 16, թ. 243-244:

հերթ նստաշրջանը: Հայաստանը այնտեղ ուղարկեց դերասաններ Խ. Աբրահամյանին ու Սոս Սարգսյանին, սոցիոլոգ Լյուդմիլա Հարությունյանին ու ճարտարապետ Արծվին Գրիգորյանին, կոմպոզիտորներ Է. Միրզոյանին և Է. Հովհաննիսյանին, գրողներ Ս. Խանգաղյանին ու Զորի Բալայանին, նկարիչ Հենրիկ Իգիթյանին և Գ. Խանջանին, «Գարուն» կարի միավորման տնօրեն Գոհար Ենոքյանին, Սոցիալիստական աշխատանքի հերոսներ Մ. Հարությունյանին ու Ս. Նազարյանին, կուսակցական գործիչներ Գ. Գալոյանին, Մ. Մինասբեկյանին ու Լենինականի քաղկոմի քարտուղար Միսակ Մկրտչյանին, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ի-ին:

Ու եթե ԱդրեսԱՀ ներկայացուցիչը պաշտպանություն էր հայցում միութենական մարմիններից, ապա Հայաստանի ԳԽ Նախագահության նախագահ Հ. Ոսկանյանը ընդգծում էր միութենական Սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելու և առանձին վայրերում կառավարման հատուկ ձևերի հաստատման անհրաժեշտությունը<sup>445</sup>: Նստաշրջանի առաջին իսկ օրը մեր պատգամավորները ներկայացրել են պաշտոնական հարցում՝ երկու հանրապետություններում էլ Լեռնային Ղարաբաղի շուրջ իրավիճակի սրման կապակցությամբ: Դեկտեմբերի 1-ին ինքնավար մարզում կոմկուսի և ԽՍՀՄ ԳԽ ներկայացուցիչ Ա. Վոլսկին իրոք զեկուցել էր նրա եզրակացությունների մասին<sup>446</sup>:

Նրա խոստովանությամբ, «տարածաշրջանի տնտեսությունը գտնվում էր ծայր աստիճանի անխնամ վիճակում», և «անհնար է ներել այն անձանց, ովքեր նպաստել են նման իրադրության հաստատմանը»: Հոետորը ընդունում էր «նախ և առաջ ազգային քաղաքականության կոպտագույն խեղաթյուրման» փաստն ու տեղեկացնում, որ ներկա քաղաքական փորձով զինված սերունդները «գրեթե կեղծավորություն են համարում երկու ժողովուրդների բարեկամության մասին բոլոր խոսքերը»: Նա «մեր աշխարհայացքին անարգական, սարսափելի տեսարան» է անվանել Բաքվի

---

<sup>445</sup> Внеочередная 12-я сессия Верховного Совета СССР (11-й созыв) 29 ноября – 1 декабря 1988 г. Стенографический отчет. М., 1988, с. 152-153.

<sup>446</sup> Նույն տեղում, էջ 180-183:

հայատյաց հավաքույթներն ու հավելել, որ Ադրբեջանի հեռուստացույցը «ամենանողկալի ձևով անհամար լուտանքներ ու սպառնալիքներ է հեղեղում հայերի հասցեին»:

Միաժամանակ Ա. Վուսկին ազգային սխալ քաղաքականության մեջ մեղադրում էր երկու հանրապետություններին հավասարապես, թեև Երևանը զուրկ էր ինքնավար մարզի կյանքի վրա ազդելու հնարավորությունից: Կենտկոմի ներկայացուցիչը ազատորեն խոսում էր «չարական կոռումպացված անձանց», նրանց ձերբակալումների և ավելի լայն ճնշումների ցանկալիության մասին: Սակայն ինքնավար մարզի «Հայաստանից հեռացման և արիեստական օտարացման», զինված հարձակումների, ջարդերի և հրդեհումների մեղքը հավասարապես բաշխում էր Բաքվի, Երևանի և Ստեփանակերտի միջև:

Նրա ելույթի արդյունքում նստաշրջանը «2. Հանձնարարել է ԽՍՀՄ ԳԽ Նախագահությանը խորհրդակցություն անցկացրել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզից, Ադրբեջանական ԽՍՀ-ից և Հայկական ԽՍՀ-ից ընտրված պատգամավորների հետ»<sup>447</sup>: Երկու հանրապետությունները պետք է ապահովեին խաղաղ կյանք և անվտանգ աշխատանքը իրենց սահմանների ներսում: Սահմանադրության մեջ էլ ընդունվե՞ծ փոփոխություն, ըստ որի «կառավարման հատուկ ձևերը» կարելի էր իրագործել ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների մարմիններին<sup>448</sup>:

Քանի որ Սահմանադրության փոփոխված հոդվ. 119-ը հնարավորություն էր տալիս ԼՂԻՄ-ը ենթարկել միութենական անմիջական կառավարմանը, նստաշրջանից հետո նրա շահագրգիռ մասնակիցներին հրավիրել էին ԽՄԿԿ կենտկոմը: Մանավանդ, որ 1988 թ. փետրվարից մինչև դեկտեմբերի 1-ը, Արցախին առնչվող որևէ որոշում չէր իրագործվել: Ընդհակառակը, ԼՂԻՄ վիճակն ավելի է բարդացել: Կենտկոմի խորհրդակցության մասնակիցներ Վաչագան Գրիգորյանը, Բորիս Դադամյանը, Հենրիկ Պողոսյանը Լեռնային Ղարաբաղից, ՀՄԽ ՀԳ ԳԽ ղեկավար Հ. Ոսկանյանը, ՀԿԿ

<sup>447</sup> Внеочередная 12-я сессия Верховного Совета СССР, с. 246–247.

<sup>448</sup> Նույն տեղում, էջ 200:



առաջին դեմք Ս. Հարությունյանը, Վ. և Ս. Համբարձումյանները ևս մեկ անգամ նշել էին ԼՂԻՄ-ի հարցում թույլատրված կարևոր սխալները: Նրանցից առաջինը հանդիսացել է 1988 թ. փետրվարի 21-ի ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոյի որոշումը: Դա արձակել է հակախորհրդային, հակասոցիալիստական ուժերի ձեռքն ու թույլատրել Սումգայիթի ջարդը: ՀԽՍՀ պատվիրակությունը անհրաժեշտ էր համարում վերանայել այդ անհաջող որոշումը: Որպես երկրորդ սխալը նշվել է միջազգային հարաբերությունների որոշ հարցերի անպատասխան թողնելը<sup>449</sup>:

Այդ՝ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանի և կենտրոնում անցկացրած հանդիպման մասին բազմաթիվ հաղորդումներ են հրապարակել բոլոր լրատվամիջոցները: Օրինակ. «Իզվեստիան» հաղորդել է, որ ելույթներից և քննարկումներից հետո հանգել են այն եզրակացության, որ անհրաժեշտ է հանդիպումներ ունենալ երկու հանրապետությունների բնակչության հետ և նրանց ներկայացնել Արցախի վիճակը, փոխել ԼՂԻՄ հարցի շուրջ երկու հանրապետությունների մթնոլորտը, այն առողջացնել ու մաքրել այն ամենից, ինչով այս ամիսներին փչացվել է մարդկանց կյանքը: Երկու ժողովուրդներին հարկավոր է նստացնել բանակցությունների սեղանի շուրջ որպեսզի նրանք քննարկեն առկա խնդիրները: Պետք է վերականգնել գործարանների աշխատանքային ռիթմը, ապահովել մարդկանց անվտանգությունը, օգնություն ցույց տալ փախստականներին և տուժածներին և պատասխանատվության ենթարկել մեղավորներին:

Թերթը նշել է, որ խորհրդակցությունում անհրաժեշտ են գտել ընտրել Արցախի հարցի կարգավորման փոխզիջման ուղի: «Իզվեստիայի» լիովին պաշտոնական կարծիքով, երկու հանրապետությունների ներկայացուցիչները կարող եին ստեղծել հանձնաժողով, որը կարճ ժամանակամիջոցում գտներ խնդրի նպատակահարմար լուծումներ՝ չփոխելով ԱդրիսՍՀ կազմի մեջ մտնող ԼՂԻՄ տարածքային պատկանելությունը<sup>450</sup>: Եվ սա եղել է պաշտոնական տեսա-

<sup>449</sup> С. А. Амбарцумян, նշվ. աշխ., էջ 82–83:

<sup>450</sup> Известия, № 339, 04. 12. 1988.

կետի վերջին, ծայր աստիճանի անպատկառ բացթողումը և Արցախի հիմնախնդրից հեռանալու փորձի անամոթ դրսևորում:

Ահա, այսպիսի համատեքստում, դեկտեմբերի 6-ին, տեղի է ունեցել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահության նիստ, որտեղ քննարկվեց «Հանրապետությունում ստեղծված լարված իրավիճակի կարգավորման անհրաժեշտության միջոցառումների մասին»: Ընդունված որոշման մեջ նշված է, որ Արցախի շուրջ ստեղծված բազմամյա ճգնաժամը վերջերս խիստ սրվել է: Հանրապետության մի շարք շրջաններում իրադարձությունները դուրս են եկել հսկողությունից: Անհրաժեշտ պայքար չի մղվում ազգամիջյան անկարգություններ կազմակերպիչների և սադրիչների դեմ: Իսկ ովքե՞ր էին դրանք: Անշուշտ Բաքվից ուղարկած քարոզիչներ, որոնք շրջելով ադրբեջանաբնակ վայրերում, մարդկանց գրգռում էին հայերի դեմ: Գերագույն խորհրդի Նախագահությունում լավատեղյակ էին այդ մասին, սակայն պաշտոնական գրառումներ չէին անում:

Նախագահությունը գտնում էր, որ ստեղծված պայմանները հանրապետության յուրաքանչյուր քաղաքացուց մեծագույն պատասխանատվություն էր պահանջում ժողովրդի ճակատագրի և ապագայի համար: Հետևաբար, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահությունը հանձնարարեց իր բոլոր պատգամավորներին ապրելու պայմաններ ստեղծել Ադրբեջանից եկող հայերի համար ու հակազդել մարդկային զոհերով հղի գործողություններին, անել ամեն ինչը՝ մարդկանց անվտանգ կյանքի ապահովման համար, օգտագործելով մամուլն ու հեռուստացույցը<sup>451</sup>: Անհասցե և հաճախակի տարտամ այս որոշումը դիմազուրկ էր, Հայաստանի իշխանությունների և Միութենական մարմինների ընդունած որոշումների տարրին ու ոգուն հարիր:

Այսպիսով, միանգամայն հստակ է, որ 1988 թ. հոկտեմբեր – նոյեմբեր ամիսներին երկու հանրապետություններում իրավիճակը խիստ սրվել էր: Մոսկվան՝ Հայաստանի և Ադրբեջանի իշխանութ-

---

<sup>451</sup> ՀԱԱ, ֆ. 207, ց. 32, գ. 309, թ. 3–8:

յունների հետ միասին, պատեպատ էին ընկել լարված վիճակը թեթևացնելու համար, որն, այդպես էլ, չհաջողվեց:

\*  
\*   \*  
\*

Հասարակության կյանքում գործող քաղաքական ուժերն ունենում են ծրագիր ու կանոնադրություն: «Ղարաբաղ» կոմիտեն, որպես քաղաքական ուժ, պետք է նույնպես ունենար վերոհիշյալը: Քանի որ այդ երկու կարևոր փաստաթղթերը սովորաբար ընդունվում են կազմակերպության համագումարում կամ ընդհանուր ժողովում և քանի որ Հայոց համազգային շարժման համագումար կամ ընդհանուր ժողով հրավիրելու ժամկետը անհայտ էր, 1988 թ. օգոստոսի 19-ին հրապարակվեց կազմակերպության ծրագրի հիմնական սկզբունքները, որը կազմել էր Վազգեն Մանուկյանը: Հետագայում, 1989 թ. նոյեմբերին հրավիրված ՀՀԸ-ի առաջին համագումարում, ընդունված ծրագրի համար այն հիմք է հանդիսացել: Մինչ ծրագրային սկզբունքները կարգի կրելվեր, այն «Ղարաբաղյան շարժման կոմիտեի» ստորագրությամբ տարածվել էր Թատերական հրապարակում:

Տեքստը համառոտ ներկայացնում է Շարժման պատճառները, նպատակը և ուղղվածությունը: Նաև ասված է, որ Շարժման հենարանը հանդիսանում է ժողովրդի հավաքական ուժը<sup>452</sup>: Ծրագրի ներածական մասում շոշափվում է հայ ժողովրդի ինքնիշխան հանրապետությունների կամավոր միության անդամ լինելու հարցը, որը հիմնված է ազգերի ինքնորոշման սկզբունքի վրա: Դրանից ելնելով՝ «Միության կենտրոնական իշխանությունը պարտավորվում է... պաշտպանել բազմազգ պետության բոլոր ազգերի և հանրապետությունների իրավունքները»: Մինչդեռ ակնհայտ է, որ Արցախի իրավունքները բացահայտորեն ոտնահարվել է 1921 թվականին ընդունված մի անօրեն որոշումով՝ հակառակ արցախցիների կամքին:

---

<sup>452</sup> Տեքստը տե՛ս հեղինակի անձնական արխիվ:

Այն ժամանակ Արցախը հանձնվել է Ադրբեջանին և շուրջ 70 տարի գտնվել է գաղութային վիճակում: Վերջապես, 1988 թ. արցախահայությունը ոտքի ելավ մայր հայրենիքի հետ վերամիավորվելու համար և հակամարտության անդրանիկ իսկ օրվանից ողջ հայությունը պաշտպանում է Միացման շարժումը: Ակնհայտ էր նաև այն, որ Արցախը ի վիճակի չէր իր անկախությունը պահպանել Ադրբեջանն ունենալով որպես հարևան: Այդ ոգորման բովում ձևավորված Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն կանգնելով պայքարի գլուխ, առաջ է մղել «ժողովրդավարական զարթոնքը»: Արթնացած ազգը Արցախից բացի ուներ չլուծված այլ հարցեր ևս, որոնց լուծումը «պայման է ստեղծում առաջխաղացում կատարելու մյուս խնդիրների լուծման ուղղությամբ»:

Այնուհետև ասված է, որ Շարժման ընթացքում առաջ քաշված խնդիրներից յուրաքանչյուրն առնչվում է մեր ժողովրդի գոյատևման հետ: Եվ նրանք բոլորը ունեն «Արցախի վերամիավորումը Հայաստանի հետ» ուղղությունը: Իսկ քանի որ Շարժումը օր օրի ընդլայնվում է, զանգվածային բնույթ ստանում, պետք էր նրան տալ «կազմակերպչական ավելի հստակ ձև»: Ահա թե ինչու Ղարաբաղյան շարժման Հայաստանյան կոմիտեն ձեռնարկեց ստեղծել Հայոց համազգային շարժում կազմակերպությունը՝ պահպանելով Ղարաբաղյան շարժում նախկին անունը:

Որո՞նք են Հայոց համազգային շարժման նպատակները և դրանց իրականացման համար ի՞նչ գործելակերպ է առաջարկվում:

ա) Շարժման գաղափարական սկզբունքները: Այս բաժինն ունի ինը կետ: Նրանք հաղորդում են, որ հայերը՝ քաղաքակիրթ ժողովուրդ լինելով, «կարող են ապրել ազատ ժողովրդավարության պայմաններում, առանց արտաքին ճնշման, ինքնուրույն որոշելով իրենց քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի ձևերը»: Նման վիճակում մարդը կարող է պահպանել «ի ծնե տրված իրավունքները, որոնցից կարևորագույններն են՝ կյանքի ապահովությունը, անձնական ազատությունը և երջանկության ձգտումը»:

Ըստ Շարժման գաղափարական սկզբունքի՝ երկրում պետական գերագույն իշխանությունը պետք է ստեղծվի ժողովրդի կամքով՝ «արտահայտված համաժողովրդական հանրաքվեներով կամ ազատ ընտրություններով ստեղծված ներկայացուցչական խորհրդարանի վճիռներով», և «ժողովրդի կամքի նկատմամբ գործադրված ցանկացած բռնություն միջազգային նորմերով սահմանված նրա ինքնորոշման իրավունքի խախտում է»: Փաստաթղթում շեշտված է, որ ազգի գոյատևման կարևորագույն երաշխիքը հայոց լեզուն է, որը մտածելակերպ է, մշակույթ և քաղաքակրթություն:

Ծրագրային սկզբունքները ընդգծում են. հայ ժողովուրդը իր ազգային նպատակները հետապնդելիս պետք է ապավինի իր ուժերին, հույս չդնի ուրիշի հովանավորության վրա: Կարևոր էր նաև մերժել այլ ժողովուրդների նկատմամբ թշնամանքի ցանկացած քարոզը: Մեր շարժումը ուղղված չէր որևէ ժողովրդի դեմ, այն հռչակում է խաղաղ և համերաշխ համագործակցությունը բոլոր ազգությունների հետ, չտոնահարելով որևէ ժողովրդի իրավունքները:

Ակնհայտ է, որ հարևան Ադրբեջանում աղմուկ-աղաղակ բարձրացնելով արցախյան հիմնախնդրի շուրջ, աշխարհով մեկ թմբկահարում էին, թե հայերը պայքարում են իրենց դեմ, ձգտելով ստեղծել դաշնակցականների երազած «ծովից-ծով» Հայաստանը, Արցախը համարում են իրենցը, թեև նրանք «եկվորներ» են և այլ ճամարտակություններ: Մինչդեռ ՀՀ-ի մեջբերվող փաստաթղթում հստակ ասված է, որ հայ ժողովրդի պայքարը ուղղված չէ թուրք-ազերիների կամ այլ ժողովրդի դեմ, մենք պարզապես պահանջում ենք արդարացիորեն վճռել Արցախի ենթակայության հարցը, որի տեղաբնիկ հայերը, ելնելով երկրի սահմանադրական իրավունքներից ու սկզբունքներից, պահանջում են անօրեն հայտարարել 1921 թ. Անդրերկրկոմի որոշումը և վերամիավորվել Սովետական Հայաստանի հետ:

Սրբազան պատերազմի ժամանակներն անցել են, այն ազգերը, «որոնք իրենց մեջ ապագայի նկատմամբ հավատ, բարոյական և հոգեկան ուժ են պահպանում... հասնում են իրենց իղծերի

իրականացմանը»: Ծրագրի հիմնադրույթներում հնչում է հայ ժողովրդի համերաշխությունը «բոլոր այն շարժումների հետ, որոնք հիմնված են ինքնորոշման, ժողովրդավարության և սոցիալական արդարության սկզբունքների վրա: Մենք մերժում ենք ազգային խտրականության և ազգամոլության բոլոր դրսևորումները»:

բ) Հայոց համազգային շարժման մոտակա նպատակները: Շարժման գլխավոր նպատակը եղել և մնում է Արցախի ու Հայաստանի վերամիավորումը, որի իրականացումը սերտորեն կապված է հայ ժողովրդի մյուս չլուծված կենսական խնդիրների հետ: Որպես մոտակա ծրագիր, հրատապ էր համարվում ընդլայնել հանրապետության ինքնիշխանությունը: Դա նշանակում էր տնտեսական հաշվարկի և ինքնաֆինանսավորման միջոցով ապահովել հանրապետության տնտեսական ինքնուրույնությունը, ԱդրիսՍՀ-ում հայերի անպաշտպան վիճակը կասեցնելու համար վերականգնել հայկական ազգային զորամիավորումներն ու դիվանագիտական կապ հաստատել այն երկրների հետ, որտեղ կան սիյուրքսահայության խոշոր կենտրոններ: Միևնույն ժամանակ ծրագիրը պահանջում էր նպաստել ժողովրդավարության ամրապնդմանը, ընդունել հայոց լեզվի պաշտպանությանը ուղղված օրենսդրական ակտերի համակարգ, հասնել նրան, որ Հայաստանում երեխաները կրթություն ստանան մայրենի լեզվով, վերջ տալ հանրապետության էկոլոգիական ծանր վիճակին, փակել հայկական ատոմակայանը և «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումը<sup>453</sup>:

ՀՀԾ-ի այս փաստաթղթում հանրապետության իշխանություններից պահանջվում էր դիմել Միացյալ ազգերի կազմակերպությանը (ՄԱԿ)՝ 1915 թ. հայերի ցեղասպանության փաստը ճանաչելու պահանջով: Հարց էր դրվում վերամիավորել հայկական

---

<sup>453</sup> Հետագայում Լևոն Տեր-Պետրոսյանը պնդում էր, թե ՀՀԾ-ն որևէ կապ չուներ ատոմակայանի փակման հետ: Մինչդեռ, ինչպես երևում է 1988 թ. օգոստոսի 19-ին տարածված Հայոց համազգային շարժման այս փաստաթղթից և սեպտեմբերին հացադուլի նստած Խաչիկ Ստամբոլցյանի պահանջից, ՀՀԾ-ն լիովին կողմնակից էր նման գործողությանը:

տարածքները, վերանայել անցյալի հայ ազգային շարժումներն ու գործիչներին տրված քաղաքական գնահատականը, մայիսի 28-ը հայտարարել հայոց պետականության վերականգնման համազգային տոն և եռագույն դրոշն ընդունել որպես ազգային խորհրդանիշ: Ընդգծվում էր նաև հայոց եկեղեցու ազատ գործունեության ապահովման կարևորությունն ու Հայաստանի պատմական տեղանունների վերականգնման նպատակահարմար լինելը:

զ) Հայոց համազգային շարժման գործելակերպը: Հայ ժողովուրդը ի սկզբանե ընտրել է պայքարի սահմանադրական ուղին: Դա նշանակում է, որ պետք է լիովին օգտվել սահմանադրությամբ քաղաքացիներին տրված իրավունքներից: Հետ կանչել այն պատգամավորներին, ովքեր չեն կատարի ժողովրդի պահանջը: Ընդունել նոր սահմանադրություն, որը կհամապատասխանի ժողովրդավարության սկզբունքներին: Ազգային խնդիրների լուծմանը հասնելու համար հարկավոր էր համագործակցել այլ ազգերի ու կազմակերպությունների հետ:

դ) Հայոց համազգային շարժման կազմակերպչական ձևերը: Ընդունելով Շարժման սկզբունքները, նպատակները, գործելակերպն ու դառնալով նրա անդամ, յուրաքանչյուր ոք ինքն էր որոշում իր մասնակցության ձևն ու չափը: Շարժման անդամ կարող էր ընդունվել խմբերով, ստեղծել խորհուրդ և կազմել տարածքային կամ ճյուղային մասնագիտական միություններ: Բոլոր հայաբնակ վայրերում կարող էին կազմակերպել ՀՀԾ խմբակներ ու կազմակերպություններ, որոնք պետք է ունենան իրենց խորհուրդները: Ենթադրվում էր նաև առաջիկայում ստեղծել համազգային ղեկավար խորհուրդը: Իսկ մինչև համազգային խորհրդի ձևավորումը կազմակերպության գործունեությունը պետք է ղեկավարեր Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն:

Անկասկած, ՀՀԾ-ի կազմած այս փաստաթուղթը դրական լինելու հետ մեկտեղ, ուներ նաև թերություններ, որոնք շտկվեցին հետագայում, երբ ծրագիրը պետք է հաստատվեր ՀՀԾ առաջին համագումարում: Այս հարցի առնչությամբ անդրադառնանք 1988 թ. հոկտեմբերի 29-ին Սիլվա Կապուտիկյանի «Երեկոյան Երևան»

թերթին տված հարցազրույցին: Լրագրողի տված հարցին բանաստեղծուհին պատասխանում է, թե ինքը ամիսներ առաջ խորհրդրդային մտավորականությանը հասցեագրած իր նամակում ասել է, որ Ղարաբաղյան շարժման բուռն օրերին ստեղծված համանուն կոմիտեները վերակառուցման շրջանում շատ հողովկոլ՝ նոր մտածողության, զանգվածների հասարակական ակտիվության արտահայտությունն էին, ժողովրդավարության նորագույն օրինակներ: Հասկապես այդ կոմիտեների շնորհիվ է, որ արցախյան շարժումը չմարեց և տվեց իր բազում դրական արդյունքները:

### 2.3. «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ձերբակալումը

1988 թ. դեկտեմբերի 7-ի ժամը 11 անց 41 րոպեին աշխարհացունց երկրաշարժը մեծ և ավերիչ հետևանք թողեց Խորհրդային Հայաստանի վրա: Մի քանի րոպե անց ամբողջ աշխարհին իմացավ այդ մասին: Բոլոր տեղերից իրենց ցավակցությունն էին հայտնում և օգնության ձեռք մեկնում ողբերգության մեջ գտվող հայ ժողովրդին: Տարերային աղետն ընդգրկել էր ավելի քան 700 հազար բնակչությամբ տարածք: Դեկտեմբերի 9-10-ին Հայաստանում, իսկ 10-ին ամբողջ Միությունում սուգ հայտարարվեց:

Դեկտեմբերի 8-ին հրապարակվեցին ՀԿԿ կենտկոմի, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և Նախարարների խորհրդի դիմումն ու հայտարարությունը հանրապետության ամբողջ բնակչությանը: Աղետի հետևանքները վերացնելու համար ստեղծվեց կառավարական հանձնաժողով, որը ձգտում էր կազմակերպել փրկարար աշխատանքներն և տուժածներին օգնություն ցույց տալ: Ստեղծվեց նաև ԽՄԿԿ ԿԿ Քաղբյուրոյի հանձնաժողով՝ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Ն. Ի. Ռիժկովի ղեկավարությամբ: Իր այցելությունն ԱՄՆ ընդհատեց ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության նախագահ Մ. Ս. Գորբաչովը՝ դեկտեմբերի 10-ին նա արդեն աղետի գոտում էր:

Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամները երկրաշարժի առաջին իսկ օրվանից փրկարարական աշխատանք-



ներ էին ծավալել: Նրանք դեկտեմբերի 7-ին Գրողների միության շենքում երեք սենյակ էին զբաղեցրել, ստեղծել շտաբ և սահմանել շուրջօրյա հերթապահություն, որտեղից հրահանգներ էին ուղարկում տեղական կոմիտեներին, համագործակցում բազմաթիվ կազմակերպությունների և հիմնարկությունների հետ<sup>454</sup>:

Այդ օրերին կոմիտեականները հանրահավաք, գործադուլ կամ այլ պահանջեր չէին ներկայացնում: Համբարձում Գալստյանը հետագայում՝ 1989 թ. ապրիլի 18-ին, Բուտիրկայի բանտում գրած «Երկրաշարժը և Ղարաբաղյան շարժումը» աշխատանքում նշել է, որ «Ղարաբաղյան շարժումը միառժամանակ ձեռնպահ մնաց Արցախով և մնացած բոլոր այլ հիմնահարցերով» զբաղվելուց: Նա հաղորդում է, որ «դեկտեմբերի 8-ի առավոտյան կոմիտեն դիմել է հանրապետության ղեկավարությանը՝ առաջարկելով նրան տնօրինել շարժման տրամադրության տակ եղած բոլոր ուժերն ու հնարավորությունները, սակայն այս, ինչպես նաև այլ բնույթի հետագա բոլոր դիմումները ղեկավարությունն անպատասխան թողեց»<sup>455</sup>:

Չնայած մերժմանը՝ շտաբում հավաքում էին հագուստ, սննդամթերք, դեղեր և այլ անհրաժեշտ իրեր: Բնակչությունը խմբերով գալիս էր շտաբ՝ տեղեկություններ ստանալու երկրաշարժի գոտուց: Կազմակերպելով նրանց պատրաստակամությունը, կոմիտեականները կազմում էին ջոկատներ, աղետի գոտի ուղարկելով մարդկանց և ավտոմեքենաները: Մինչդեռ հանրապետության մեկ քառորդն ընդգրկած երկրաշարժի գոտում հսկայական աշխատանքներ էին պահանջվում:

1988 թ. դեկտեմբերի 8-ին Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն հանդես եկավ երկու հայտարարությունով: Առաջինը պահանջում էր Երևանում վերացնել պարետային ժամը, որը մտցվել էր նոյեմբերի 25-ին, անհապաղ փակել ատոմակայանը,

---

<sup>454</sup> Կոմիտեականների վերին աստիճանի արդյունավետ աշխատանքը նշվում է. Christoph Zurer, *The Post-Soviet Wars: Ethnic Conflict and Nationhood in the Caucasus*, NY and Lnd., 2007, p. 164:

<sup>455</sup> Համբարձում Գալստյան, *Հողվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ...*, Եր., 2002, էջ 415:

Աղբբեջանից Հայաստան բռնագաղթածների մի մասին տեղավորել Արցախում, իսկ մյուսում՝ դիմելով արտերկրի բոլոր կառավարություններին, հասարակական կազմակերպություններին և բարի կամքի տեր մարդկանց, ովքեր պատրաստ էին նյութական օգնություն ցույց տալ Հայաստանի աղետոյալներին, խնդրվում էր հրաժարվել ԽՍՀՄ Արտաքին առևտրի բանկին տարադրամ փոխանցելուց և դրա փոխարեն առաջարկվում էր Եվրոպայում ու Ամերիկայում ձևավորել օգնություն տնօրինող երկու կոորդինացիոն կենտրոն<sup>456</sup>: Սա հասկանալի էր:

Հիշեցնենք, որ Մ. Գորբաչովի պահվածքը Լենինականն ու Երևանը այցի ժամանակ հեռու էր բարեհաճ լինելուց: Երբ բնակչությունը նրան ուղղեց Արցախին վերաբերող հարցեր, նա դժգոհություն արտահայտեց: Կենտրոնական և Հայաստանի հեռուստատեսության թղթակիցների հետ դեկտեմբերի 11-ին ունեցած հարցազրույցում ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղարը հայտարարեց. «Երեկ Երևանում ինձ հարց տվեցին, թե ինչպիսին կլինեն հարաբերությունները, մենք ինչպես երկխոսություն կհաստատենք ոչ պաշտոնական կազմակերպությունների հետ: Նորից Ղարաբաղի թեման... Եվ առաջին հերթին ասացի՝ կանգ առեք... Այժմ այսպիսի դժբախտություն է, որ ամբողջ երկիրը, ամբողջ աշխարհին է տագնապում նրա համար, ինչ տեղի է ունեցել Հայաստանում, ինչ պատահել է հայ ժողովրդի հետ...»:

Ապա անդրադառնալով Ղարաբաղյան հիմնախնդրին, նշել է. «Այժմ Ղարաբաղի թեման օգտագործում են անազնիվ մարդիկ, քաղաքական դեմագոգները, արկածախնդիրները, ավելին՝ կաշառակեր հանրությունը... Այստեղ ստեղծել են սև բաճկոնավորներ, ... մորուքավորներ՝ թե՛ Աղբբեջանում և թե՛ Հայաստանում: Ճնշում են գործադրում պատգամավորների վրա, ճնշում են գործադրում կառավարության վրա... Ես կարծում եմ, նրանք չեն խուսափի պատասխանատվությունից: Մենք արդեն ձեռնամուխ ենք եղել այդ

---

<sup>456</sup> Մեղադրվում են, Եր., 1989, էջ 53–54, 55:

գործին, այն կհասցնենք մինչև վերջ... Իսկ Ղարաբաղի պրոբլեմը կգրավի իր տեղը, որպիսին այն պետք է լինի»<sup>457</sup>:

Մ. Գորբաչովը իր այդ անպատեհ հայտարարության մեջ չթաքցրեց, որ ճնշումների կենթարկվեն իրական և պետական օղակներից ավելի արդյունավետ աշխատող, այսպես ասած «քաղաքական դեմագոգները, արկածախնդիրները»: Երկրի ղեկավարի նման հայտարարությունը դատարկ ապառնալիք չէր: Դեռ նոյեմբերի 28-ին Երևանում կալանավորել էին «Կոունկ» կոմիտեի նախագահ Արկադի Մանուչարովին: Ու թեև Ստեփանակերտի շինարարական նյութերի կոմբինատը՝ նրա գլխավորությամբ, 1978–1987 թթ. եղել է համամիութենական սոցմրցման հաղթողը, ազատագրական պայքարի մարտիկին մինչև 1990 թ. մայիսի 20-ը տանջեցին Շուշիի և Մոսկվայի բանտերում, բայց այդպես էլ չեն ապացուցել նրա օրինազանց լինելը<sup>458</sup>:

Այնուամենայնիվ, Մ. Գորբաչովի հարցազրույցի օրը՝ նույն դեկտեմբերի 11-ին, հատուկ գոտու շտաբի նոր պարետ նշանակված գեներալ-լեյտենանտ Ա. Մակաշովը զրահամեքենաների և մի քանի հազար սպառազեն զինվորների, դեսանտային զորամիավորումների օգնությամբ Գրոզնեի տանը ցուցադրովի ձերբակալեց Վազգեն Մանուկյանին, Լևոն Տեր-Պետրոսյանին, Բաբկեն Արարքյանին, Սամվել Գևորգյանին և Ալեքսան Հակոբյանին: Այդ նույն օրը ձերբակալվել է 22 մարդ, որոնք ենթարկվել են 30 օրվա վարչական կալանքի: Նրանց ազատությունից էին զրկել իբրև

---

<sup>457</sup> Սովետական Հայաստան, թ. 292, 12. 12. 1988:

<sup>458</sup> Արկադի Մանվելի Մանուչարովը՝ բանտարկյալի կարգավիճակով, 1989 թ. օգոստոսի 27-ին և 1990 թ. մայիսի 20-ին ընտրվել էր Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր: Նրա և «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ազատագրման համար պայքարել են ակադեմիկոս Ա. Սախարովն ու Գ. Ստարովոյտովան, 300 պատգամավորներ պաշտոնական հարցում են հղել ԽՄՍՀ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարին, բողոքի որոշում են ընդունել Եվրախորհրդարանն և Էմնեստի ինտերնեշնլ իրավապաշտպան կազմակերպությունը:

«հատուկ գոտու և պարետային ժամի ռեժիմը խախտելու» համար, բայց թե ե՞րբ, որտե՞ղ և ի՞նչ պայմաններում էր կատարվել այդ հորինված «խախտումը», անհայտ է մնացել: Այդ անօրեն ձերբակալություններից փողոց դուրս եկած բնակչությունը Լենինի և Հոկտեմբերյան անունը կրող պողոտաներում ներքին ծառայության մեքենայացված զորամասերի կողմից ենթարկվեցին դաժան ծեծի: Շարժման առաջատար մասնակիցների դեմ հերյուրում էին անհավաստի «մեղադրանքներ»<sup>459</sup>:



Արկաղի  
Մանուչարով



Հենրիկ  
Պողոսյան



Ժաննա  
Գալստյան



Վաչագան  
Գրիգորյան



Բորիս  
Դադամյան



Սլավիկ  
Առուշանյան



Ռոլես  
Աղաջանյան



Արկաղի  
Կարապետյան

<sup>459</sup> Համբարձում Գալստյան, նշվ. աշխ., էջ 419:

Դրանց տարածելու արհեստում առաջնությունը պատկանում էր «Սովետական Հայաստան» թերթին, որը հայտարարում էր, թե կոմիտեականները և ոմանք «փորձում են համաժողովրդական վշտից քաղաքական կապիտալ ստեղծել», «ձգտում են հանրապետության աշխատավորներին ցույց տալ, որ իրենք և միայն իրենք են գլխավոր դերը խաղում երկրաշարժի հետևանքների վերացման գործում»: Թերթը հավելեց, որ կոմիտեականներն իրենց աշխատանքը հարկ եղած պայմաններում իրականացնելու համար շտաբ են ստեղծել Գորոզների միության շենքում՝ զբաղեցնելով մի ամբողջ երեք սենյակ: Այնուհետև հաղորդվում է, թե իբր Համբարձում Գալստյանը «կոչ է անում չենթարկվել հասարակական կարգ ու կանոնը պահպանող ուժերին», իսկ Աշոտ Մանուչարյանը ասում է՝ «Մենք կստիպենք մեզ վրա կրակել», Վանո Սիրադեղյանն էլ հորդորեց չբանակցել զինվորականների հետ<sup>460</sup>: Այդ վերոնշյալ պնդումները բացահայտ հերյուրանքներ էին:

«Ղարաբաղ» կոմիտեի դեմ սուտ տվյալներ էր հաղորդում ու վարկաբեկում նաև կենտրոնական մամուլը: «Պրավդա», «Իզվեստիա», «Սոցիալիստիչեսկայա ինդուստրիա», «Կրասնայա զվեզդա», «Սովետսկայա կուլտուրա» և այլ համամիութենական թերթեր ու լրատվամիջոցներ կոչ էին անում հեռու մնալ կոմիտեականներից: «Պրավդա»-ի դեկտեմբերի 16-ի համարում նրա թղթակից Մ. Բուժկևիչը «Մարտահրավեր բանականությանը և պատվին» հողվածում հայտարարում էր, թե իբր «Ղարաբաղ» կոմիտեի ղեկավարները «հանդես են գալիս ընդդեմ հանրապետության և միութենական կառավարությունների բոլոր գործողությունների», ձգտում են ցույց տալ, թե «հենց իրենք են կրում հասարակ մարդկանց հոգսերի գլխավոր ծանրությունը»: Նա վրդովվում էր, թե «Ղարաբաղ» «կոմիտեի անդամները ժողովրդի համար «անհանգստացած»՝ լույս են ընծայում ինֆորմացիոն բյուլետեններ, դիմումներ, խնդրագրեր և ուղարկում ՄԱԿ»:

Ահա ինչպես էր թխվում «Ղարաբաղ» կոմիտեի առաջամարտիկների կեղծ պատկերը: Նրանց անվանում էին «ցուցամոլ պա-

<sup>460</sup> Սովետական Հայաստան, թ. 293, 13. 12. 1988:

րագլուխներ, որոնք փորձում են ապակողմնորոշել հասարակական կարծիքը»: Իսկ «Վրեմյա» հեռուստացույցային հաղորդումը գերազանցում էր բոլորին: Դեռևս ազատության մեջ գտնվող Աշոտ Մանուչարյանը հանդես գալով «Ինչպես այդ եղավ» հոդվածով՝ պատասխանել է նրա հերյուրանքներին ու բացատրել, որ երկրաշարժի օրը Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի գրեթե բոլոր անդամները մեկնել են ավերված վայրերը: Վերադառնալուց հետո նույն երեկոյան Գրողների տանը ստեղծել են շտաբ աղետի գոտում շարժման մասնակիցների աշխատանքները համակարգելու համար: Աշոտ Մանուչարյանը նշում է, որ իրենք այդ ժամանակ իրենց պատկերացնում էին կառավարական հանձնաժողովի օգնականներ:

Կապվել են կառավարության հետ և պայմանավորվել իրենց գործողության մասին: Սակայն դեկտեմբերի 8-ի երեկոյան պարզ դարձավ, որ աղետի շրջաններում աշխատանքների կենտրոնացված կազմակերպումը անհնարին էր, թեև հարյուրավոր ձեռնարկություններ իրենց շարայունները տեխնիկայով, մեքենաներով, մարդկանցով ուղարկել են քարուքանդ բնակավայրեր, որտեղ աշխատանքների կազմակերպիչ չկար: Աշոտ Մանուչարյանը նշում է, որ երկրից և աշխարհի բոլոր ծայրամասերից եկած օգնությունը ստեղծված քաոսի պատճառով չէր հասնում այնտեղ, ուր անհրաժեշտ էր: Շատ ղեկավարներ բացարձակ անընդունակ էին ղեկավարել նման վիճակը: Իսկ Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն իր տեղական միավորների միջոցով կազմակերպում էր կամավորական ջոկատներ, ամեն օր դրանց ուղարկում օգնություն ցույց տալու, դուրս բերված բնակիչներին տեղավորում էր Գրողների տանը հերթագրված մարդկանց կացարաններում:

Հարյուրավոր կանայք դեկտեմբերի 10-ին հավաքվել էին Գրողների տան մոտ՝ իրենց հուզող հարցերի պատասխաններն իմանալու: Շրջանի պարետի հետ համաձայնեցնելով՝ Աշոտ Մանուչարյանը ելույթ է ունեցել հավաքվածների առաջ և հարկավոր պարզաբանումներ տվել: Մարդիկ դժվարությամբ էին ցրվում, նրանք տեղեկությունների կարիք ունեին: Ազատ մնացած կոմի-

տեականները Թատերական հրապարակում հավաքված մի քանի հազար մարդկանցից պահանջում են հեռանալ և խուսափել բանակի հետ ընդհարումից: «Ռոսիա» կինոթատրոնի մոտ մարդկանց ճանապարհը փակել են տանկերը: Սակայն բնակչության երթը շարունակվել է և երկաթուղային կամուրջի մոտ նրանց վրա անսպասելիորեն հարձակվեցին զինվորականները: Տեղի է ունեցել ընդհարում: Եվ այդ ամենը բարդել են կոմիտեի գլխին: Դրա համար Ա. Մանուչարյանը արդարացիորեն մեղադրում է հանրապետության ղեկավարությանը:

Ասվել է, որ երկրաշարժի առաջին օրվանից կոմիտեականներն օգնում էին փրկարարական աշխատանքներին. այդ ժամանակ շարժումը որևէ հանրահավաք չի կազմակերպել, դեկտեմբերի 7-ից հետո դարաբաղյան հարցով որևէ պահանջ առաջ չի քաշվել, կոմիտեն երբեք էլ դեմ չի եղել երկրաշարժից տուժածներին երկրի առողջարանները ուղարկելուն: Այն պահի պայմաններում իշխանության որևէ ձգտում չի եղել. դա լիովին հորինվել է: Աշոտ Մանուչարյանը պնդում է, որ ճիշտ ժամանակին՝ աղետալի երկրաշարժի ամենածանր վերքերը ամոքելուց հետո, մեր ժողովուրդը «ոտքի կկանգնի, նորից կդրսևորի իրեն՝ որպես արդարության, մարդասիրության և ազատամտության ճանապարհին ամուր կանգնած մի անպարտելի համախումբ հանրություն»<sup>461</sup>:

Այստեղ կոպիտ սխալ են թույլ տվել ՀԽՍՀ կուսակցական ու պետական իշխանության ղեկավար մարմինները: Ինչո՞ւ չօգտագործվեց կոմիտեականների ուժը, չընդունվեց նրանց առաջարկը և նրանց չընդգրկեցին կառավարական հանձնաժողովում: Նման համագործակցությունը միայն կմեծացներ պաշտոնական ատյանների հեղինակությունը: Իհարկե անհրաժեշտ էր օգտագործել կոմիտեականների բոլոր ուժերն ու հնարավորությունները, այլապես շուրջ

---

<sup>461</sup> Տե՛ս Մեղադրվում են, էջ 70–78: Կոմիտեի հինգ անդամներին ձերբակալելուց հետո նրան երկու շաբաթ ներկայացնում էր Ռաֆայել Ղազարյանը և կորոդինացնում դեռ ազատության մեջ գտնվող հինգ կոմիտեականների և մյուս ակտիվիստների գործունեությունը (Ռաֆայել Ղազարյան, Հաշվետու եմ..., Եր., 2003, էջ 225):

վեց ամիս նրանք մոսկովյան բանտերում չէին գտնվի, հոգեկան այդքան տառապանքներ չէին կրի և պաշտոնական իշխանություններին այլընտրանք չէին դառնա:

Այդ օրերին թե՛ Մ. Գորբաչովին և թե՛ մյուս պաշտոնյաներին ՀԽՍՀ-ից ուղղված հարյուրավոր նամակներ մնում էին անպատասխան<sup>462</sup>: 1989 թ. ամանորին Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն դիմելով հայրենակիցներին, կոչ է անում հավատարիմ մնալ Ազատության հրապարակում տրված երդմանը. Պայքար, պայքար մինչև վերջ: Նաև ասված է՝ «Մենք ինչպես Ավարայրում և Սարդարապատում, այնպես էլ հիմա պետք է միավորվենք ու հաղթահարենք, որովհետև միասնական և նպատակամղված ժողովուրդն անպարտելի է...»<sup>463</sup>:

Կոմիտեականների և շարժման առաջամարտիկների հետապնդումը շարունակվում էր: Թե՛ միութենական և թե՛ հանրապետական դատախազությունների կազմակերպած խմբերը որոնում էին նրանց: Ադրբեջանի մամուլը հաղորդում էր, թե Իգոր Մուրադյանը ձերբակալվել է Կիրովաբադում: Դա բացարձակ սուտ էր: Իգոր Մուրադյանի մայրը 1988 թ. դեկտեմբերի 18-ին ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղարին ուղարկած հեռագրում հաղորդել է, որ իր որդուն կալանավորել են Երևանի իր տանը, դեկտեմբերի 15-ին, ժամը 22-ին և տարել անհայտ ուղղությամբ<sup>464</sup>: Բացի նրանից, 1989 թ. հունվարի 7-ի դրությամբ արդեն ձերբակալվել էին «Կռունկի» ղեկավար Արկադի Մանուչարովը, «Ղարաբաղ» կոմիտեի բոլոր 11 անդամներն ու Խաչիկ Ստամբուլյանը<sup>465</sup>: Կալանավորումները

---

<sup>462</sup> Տե՛ս Հայրենիք, 1989, թ. 7, էջ 40–41:

<sup>463</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 3, գ. 55, թ. 5:

<sup>464</sup> Հայրենիք, թ. 7, էջ 38–39:

<sup>465</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 1, գ. 122, թ. 4–6: 1989 թ. հունվարի 10-ին ԻԼ-76 տրանսպորտային ինքնաթիռով Մոսկվա են տարվում Վանո Սիրադեղյանը, Սամսոն Ղազարյանը, Դավիթ Վարդանյանը, Ռաֆայել Ղազարյանը, Աշոտ Մանուչարյանը, Համբարձում Գալստյանը, Խաչիկ Ստամբուլյանը: Նրանց փակում են Բուտիրկայում (մանրամասն՝ Հ. Գալստյան, Չուղարկված նամակներ, Եր., 2013, էջ 43, 72, 80), իսկ Լևոն Տեր-



կատարվել են առանց որևէ պատճառաբանության և դատախազի սանկցիայի, առանց հարազատներին տեղեկացնելու և նրանց գտնվելու տեղի մասին հայտնելու:

Կատարվում էր քաղաքական պատվեր՝ հայ ժողովրդին նսեմացնելու մի անմիտ քայլ: Այդ գործողության համար հայ պաշտոնյաները կարող էին չտալ իրենց համաձայնությունը: ՀԽՍՀ դատախազ Վ. Նազարյանի 1988 թ. հունվարի 3-ին ստորագրած հրամանի համաձայն, մինչև դեկտեմբեր ամիսը դատախազության տեղական մարմինները որևէ քայլ չեն կատարել «Ղարաբաղ» կոմիտեի գործունեության դեմ, թեև այդ ժամանակահատվածում տեղի են ունեցել բռնությունների, ջարդերի, հրդեհների, սպանությունների դեպքեր, որոնք կարող էին հարմար առիթ հանդիսանալ: Նման հնարավորության հակառակ, վերոնշյալ հրամանով աշխատանքից ազատվել է Աբովյանի շրջանային դատախազ Վ. Վասիլյանը<sup>466</sup>:

Երկրի բարձր պաշտոնյաները, մամուլը, հեռուստատեսությունը շարունակում էին կեղծել և անամոթաբար հայտարարել, թե իբր կոմիտեականներն ու շարժման առաջնորդները հայերին գրգռել են ադրբեջանցիների դեմ, փորձել են իշխանությունը գրավել, նրանց հայտարարում էին հայ ժողովրդի թշնամի, կաշառակեր, կողոպտիչներ, որոնք իբրև թե դիտավորյալ խանգարել են փրկարար աշխատանքները, ցույցեր են կազմակերպել, ծեծել զինվորներին: Կոմիտեականներին մեղադրում էին նաև չթույլատրված հանրահավաքներ կազմակերպելու, փողոցային անկարգություններ, ազգամիջյան թշնամանք հրահրելու մեջ: Հորինվում էր ամեն տեսակի անբարոյականություն և պիտակներ:

Ձերբակալված կոմիտեականների կանայք վերադաս իշխանություններ ուղարկած իրենց բողոքում ժխտելով այդ ամենը՝ շեշտեցին, որ իրենց հարազատները «ձգտել են ընդառաջել Լեռնային Ղարաբաղի բնակչությանը և սահմանադրական, խաղաղ

---

Պետրոսյանին, Բաբկեն Արարքցյանին, Վազգեն Մանուկյանին, Սամվել Գևորգյանին, Ա. Հակոբյանին և Իգոր Մուրադյանին տարել էին մի քիչ շուտ և նետել Մատրոսկայա տիշինա բանտը:

<sup>466</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 2, գ. 19, թ. 1-3:

եղանակով հասնել Հայաստանի ու Ղարաբաղի վերամիավորմանը, նրանք նաև օգնել են Ադրբեջանից բռնագաղթածներին, տեղահանվածներին, ինչպես և երկրաշարժից տուժածներին: Սա է միակ ճշմարտությունը...

Հիմա մեր ամուսինների նկատմամբ պատրաստում են դատական ներկայացում, հաշվեհարդար: Մեզ ծանոթ են մեր երկրում կատարված այդպիսի շատ ներկայացումներ ու հաշվեհարդարներ, որոնց զոհ են դարձել տասնյակ միլիոնավոր անմեղ մարդիկ»<sup>467</sup>:

Ազատագրական շարժման առաջամարտիկների ձերբակալության դեմ իրենց ձայնը բարձրացրին հազարավոր մարդիկ, որոնց շարքերում կարելի է առանձնացնել գրող Սերո Խանզադյանին: Դեկտեմբերի 18-ին գրականության վարպետը իր բողոքն ուղարկեց «Սովետական Հայաստան» թերթի խմբագրությանը: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր լինելով, ինքը համոզված էր, որ իր բողոքը չի հրապարակվի: Ուղերձում Ս. Խանզադյանը խարազանում է թերթի «Դժբախտության ժամ և պատասխանատվության ժամ» խմբագրականը, որտեղ փորձ է արվել վարկաբեկել, մերժել «հայ ժողովրդի համար ոչ պակաս մեծ ցավ՝ Լեոնային Ղարաբաղը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմությունից փրկելու, այդ հանրապետության հայկական շրջաններից ադրբեջանցի շփոթների ձեռքով բռնությամբ իր հող ու տնից վտարված 360 հազար հայերի ողբերգության ցավը»:

Վիպասանը հարցնում է, թե «ինչո՞ւ մոռանալ մի քանի ամիս առաջ մեր ազգի գլխին սրով ու հրով թափված աղետը՝ Սոււմգայիթի, Մինգեչաուրի, Խոջալուի, Կիրովաբադի հարյուրավոր անմեղ հայերի կոտորածը, ...Շուշի քաղաքից հայ մարդկանց վտարումը...»: Ապա անդրադառնալով «Ղարաբաղ» կոմիտեին՝ հերքում է, թե իբր նրանք «փորձում են համաժողովրդական վշտից քաղաքական կապիտալ ստեղծել: Այսպես մտածողները հեռու են ժողովրդական ցավը տեսնելուց: Հարցնում եմ ձեզ՝ որն է այդ «քաղաքական կապիտալը»: Չեք ասում: Դրանից էլ ձեր այս բն-

---

<sup>467</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 1, գ. 122, թ. 4-6:

րոշումը ստահող ու անհիմն լինելով, թշնամական է»: Ս. Խանզադյանը ընդունում է, որ «10 ամիս կրակի մեջ այրվող» կոմիտեականները գերծ չէին սխալներից:

Եվ փոխանակ նման սխալները հստակ ձևակերպելուց, դուք նրանց «գող եք հռչակում, ուրիշի հաշվին ապրող: Ո՛ր է ձեր խիղճը, զինվորներն ի՞նչ իրավունքով են ներխուժում Գրողների տուն, կոմիտեականներն այնտեղ ի՞նչ վատ բան են արել: Կոմիտեականների մասին ձեր տպագրածները երբեք էլ հարիր չէ հայ կոմունիստների օրգանում»<sup>468</sup>: Իսկ վերջում՝ «Երբեք էլ հայ ժողովրդի ազգային, մարդկային արժանապատվությունը այսքան ոտնահարված չի եղել, որքան արվում է այս մեզ համար ողբերգական օրերին»<sup>469</sup>:

Սերո Խանզադյանի նամակի կողքը արխիվներում պահվում են նման հարյուրավոր բողոքներ: Հայրենական պատերազմի և աշխատանքի վետերան, ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ ու Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամ Ռաֆայել Ղազարյանը 1988 թ. դեկտեմբերի 19-ին Ս. Գորբաչովին գրած ծավալուն նամակում նշում է, որ Երևանից նրա թռչելուց առաջ տված հարցազրույցից հայ ժողովուրդը արդարադատության վերջին հույսերի անկում է ապրում: Նա ընդգծել է, որ շարժման առաջամարտիկները իշխանության չեն ձգտել, նրանք կանգնած են եղել բյուրոկրատիային, կաշառակերներին մերկացնելու դիրքերում, իսկ մի շարք ընտրական տեղամասերում կոմիտեի տարած ազնիվ հաղթանակի համար ժողովուրդը նրանց սիրում և հարգում է:

1988 թ. դեկտեմբերի 26-ին հրավիրված Հայաստանի Սովետական հանրագիտարանի աշխատողների ժողովը արձանագրել է, որ Ղարաբաղյան շարժման առաջամարտիկներին հետապնդում են այն դեպքում, երբ բոլորովին վերջերս կոմիտեի ու հանրապետության ղեկավարները բազմիցս համատեղ հանդես են եկել առաջինների կողմից հրավիրված հանրահավաքներում: Նոր իրականաց-

<sup>468</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 1, գ. 122, թ. 3:

<sup>469</sup> Նույն տեղում, թ. 6:

ված ձերբակալումը կարող է բերել բնակչության ըմբոստությունը: Ղարաբաղյան շարժման ղեկավարները իշխանության ձգտող բախտախնդիրներ չեն, այլ հայրենասեր անձինք են: Ժողովուրդը պահանջում է դադարեցնել նրանց նկատմամբ իրագործվող բռնություններն ու պահպանել օրինականությունը<sup>470</sup>:

Ֆիզիկայի ինստիտուտի աշխատակազմի 1989 թ. հունվարի 18-ին անցկացրած կոնֆերանսում մատնացույց է արվել, որ անհասկանալի է, թե ինչու արցախահայության պահանջները բավարարելու համար սկսված Ղարաբաղյան շարժման մասնակիցները ենթարկվում են ձերբակալության: Հայտարարված երեսուն օրյա վարչական ազատազրկումը դարձել է բանտային կալանավորում առանց որևէ մեղադրանք ներկայացնելու: Իսկ լայն հասարակությունը պահվում է անտեղյակ: Ապա նշվում է, որ «Ղարաբաղ» կոմիտեի անդամները հանդիսանում են մտավորականներ ու հայ ժողովրդի լայն շրջանների ներկայացուցիչներ, որոնք արտահայտում են Հայաստանի բնակչության մեծամասնության շահերն ու սպասումները և պաշտպանում ԼՂԻՄ-ի պաշտոնապես ձևակերպված, սահմանադրական պահանջները:

Ողբերգական երկրաշարժի օրերին «Ղարաբաղ» կոմիտեն գտնվել է օգնություն ցույց տվողների առաջին շարքում: Հնարավոր է թույլ տալ առանձին սխալներ: Սակայն «Ղարաբաղ» կոմիտեի նկատմամբ կիրառվող ճնշումները Ֆիզիկայի ինստիտուտը գնահատում է որպես հակաժողովրդական և անբարոյական: Կոնֆերանսը պահանջեց անհապաղ ազատել կոմիտեի անդամներին և շարժման առաջամարտիկներին<sup>471</sup>:

Համանման որոշումներ են ընդունել հանրապետության հարյուրավոր հասարակական կազմակերպություններ և ձեռնարկություններ, ընկերություններ, Երևանի «Հիդրոապարատուրա», «Քարի և սիլիկատների» ԳԱՄ, «Նեյրոն» ԳԱՄ, Հնագիտության և ազգագրության, Արևելագիտության, Լեզվի, Քիմիական ֆիզիկայի, ֆիզիոլոգիայի ինստիտուտները, Գեղագիտական դաստիարակության

---

<sup>470</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 698, թ. 3:

<sup>471</sup> Նույն տեղում, թ. 22-23:

հանրապետական կենտրոնը, էլեկտրատեխնիկական տեխնիկում և այլն: Շատ կազմակերպություններ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունների համար պատգամավորներ են առաջադրում կոմիտեականներին: Դրանցից են ԳԱ Մեխանիկայի, Քիմիկական ֆիզիկայի, Փորձարարական կենսաբանության ինստիտուտները, Բազալտ ԱՄ, «Ագատ» ԳԱՄ և այլն<sup>472</sup>: Սակայն Երևանի քաղկոմի բյուրոն մերժում է այդ բոլոր առաջարկությունները:

«Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալումը ավելի ծանրացրեց իրադրությունը: 1989 թ. ապրիլի 28-29-ին տեղի ունեցած մայրաքաղաքի կուսկոմի պլենումում արտասանած իր ելույթում Երևանի պետական համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Լենդրուշ Խուրշույանը նշել է, որ եթե մտածողներ կան, թե դեկտեմբերին, երբ «ձերբակալվել են «Ղարաբաղ» կոմիտեի անդամները, ընդհանուր վիճակը կարգավորվել է, ապա նրանք սխալվում են... Հանրապետության ղեկավարությունը խորշում է մտավորականությունից»<sup>473</sup>:

Հայաստանի հարյուրավոր կազմակերպություններ և հիմնարկություններ իրենց ժողովներում քննարկում էին բանտարկված կոմիտեականների հարցն և իշխանություններից պահանջում նրանց անհապաղ ազատ արձակել: Այդ նույն ժամանակ Մոսկվան հայտարարում էր, թե չպետք է լինի հաղթող ու պարտվող, իսկ երկու հանրապետությունները իբրև թե հավասարապես մեղավոր են առկա քաղաքական իրադրության համար: Օրինակ, դեկտեմբերին ձերբակալություններն սկսվեցին Հայաստանում, բայց նոյեմբերի վերջից որոշ ծավալներով իրագործվում էին նաև Ադրբեջանում: Ըստ «Դրոշակում» հրապարակված հաղորդմանը՝ նույն ժամանակահատվածում Ադրբեջանում պաշտոնազրկվել և ձերբակալվել է 2500 մարդ<sup>474</sup>:

Մ. Գորբաչովի ասածներից ոգևորվել էին Հայաստանի պաշտոնյաները: ՀԿԿ կենտկոմի առաջին դեմքը դեկտեմբերի 17-ին

---

<sup>472</sup> ՀԱԱ, ֆ. 157, ց. 67, գ. 69:

<sup>473</sup> Նույն տեղում, գ. 66, թ. 10:

<sup>474</sup> Դրոշակ, թ. 22-23, 1. 03. 1989, էջ 24:

հեռուստատեսությամբ նույնպես կշտամբում է կոմիտեին ու վարկաբեկում նրան: Նա հայտարարում է, որ Ղարաբաղի հարցի լուծման պահանջների ներքո կոմիտեականները «պայքար են մղում իշխանության համար» ու պահանջում է «պատասխանատվության կանչել բոլոր նրանց, ովքեր գործում են ժողովրդին հակառակ»<sup>475</sup>: Դեկտեմբերի 19-ին Երևանում տեղի ունեցած մամուլի ասուլիսում կոմիտեականների մասին վիրավորական է արտահայտվել նաև ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Ն. Ռիժկովը<sup>476</sup>:

1989 թ. հունվարի 17-ին ՀԿԿ կենտկոմի պլենումում նա մեղադրել է «Ղարաբաղ» կոմիտեի առաջամարտիկներին, թե իբր նրանք «ճակատագրական դեր են խաղացել ազգամիջյան կրքերը բորբոքելու, ազգային հողի վրա անկարգություններ կազմակերպելու, հայրենի տներից հազարավոր անմեղ քաղաքացիներ արտաքսելու, հանրապետությունում սոցիալ-քաղաքական լարվածություն բորբոքելու գործում»: Ինչպես տեսնում ենք, հզոր ու բազմաթիվ հսկողական մարմինների տեր պետության ղեկավարը նրա ատյանների անգործությունն ու հազարավոր քաղաքացիների բացարձակապես անպաշտպան լինելու մեղքը իրենից ու համապատասխան նախարարներից փոխադրում էր հասարակական այն գործիչների վրա, որոնք ի վիճակի չէին Ադրբեջանի հայ բնակչությանը պաշտպանել Կիրովաբադում, Մինգեչաուրում, Շամխորում սանձարձակ դարցած ելուզակներից:

Շարունակելով պաշտոնական վարքագիծը, 1989 թ. հունվարի 7-ին՝ Երևանի քաղկոմի հաշվետու-ընտրական կոնֆերանսում, իշխանության չքանալու փաստից հուզված Ս. Հարությունյանը մի անգամ ևս կրկնեց կոմիտեին տված իր նկարագիրը. «Այսպես կոչված «Ղարաբաղ» կոմիտեի քաղաքական արկածախնդիրները ...օգտագործում էին ապակողմնորոշումն ու հեղյուրանքը, չհամաձայնվողներին վարկաբեկում էին որպես «ազգի դավաճանների», ճնշում էին գործադրում ղեպուտատների վրա, պիկետներ էին կազմակերպում գործարանների մուտքի մոտ, շրջափակում էին վարչա-

---

<sup>475</sup> Սովետական Հայաստան, թ. 298, 18. 12. 1988:

<sup>476</sup> Նույն տեղում, թ. 302, 22. 12. 1988:

կան շենքերը... Բանը հասել էր նրան, որ պայթուցիկ նյութեր և գենքեր էին պահեստավորում: Իրենց բնակարաններից հեռացնում էին մարդկանց:

Հարկավոր էր պարզորոշ տեսնել Լեոնային Ղարաբաղի խնդրի և «Ղարաբաղ» ինքնակոչ կոմիտեի պարագլուխների սադրիչ խաղերի միջև ընկած անջրպետը...»<sup>477</sup>: Նման խոսքերը, երբեք էլ, արդարացի չեն:

Հասարակության շրջաններում ևս կային անձինք, որոնք վարկաբեկում էին կոմիտեականներին: Օրինակ, Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ամբիոնի վարիչ Կ. Ազատյանը 1989 թ. հունվարի 24-ին ՀԿԿ ԿԿ ուղարկած «Բաց նամակում» լայիր ձևով գրում է, թե «... սադրիչների վրա միայն մատ թափ տալը քիչ է, բռունցք պետք է թափահարել, նրանց ոչ միայն ատամները, գլուխները պետք է ջարդել, որ Ղարաբաղի տեղն էլ մոռանան»<sup>478</sup>: Այդ ապիկարը բռնագաղթած իր հայրենակիցներին հանցավոր անմտությամբ բնորոշում է որպես «հումորի զգացում չունեցող խղճուկ վախկոտներ», որոնք «լուրջ ընդունելով մեր բարեկամների «մահ հայերին» կատակ լոզունգները, տուն-տեղ թողած, ոտաբոբիկ, սարսափահար եկել լցվել են մեր հայրենիքը: Դրանց բոլորին ...պետք է դուրս վռնդել Հայաստանից, թող գնան և իրենց վախկոտության համար պատասխան տան այնտեղ, որտեղ գրանցված են: Մեր քաջարի ղեկավարների իշխանության տակ վախկոտներ չպետք է ապրեն»<sup>479</sup>: Նման կարճատեսության ու լկտիության գնահատականը թողնում ենք ընթերցողին:

Այդ համատեքստում՝ համապատասխան քարոզչության ներքո, 1988 թ. նոյեմբերի 25-ից Երևանում հայտարարվել է պարետային ժամ, իսկ դեկտեմբերի 5-ից այն տարածվել է հանրապետության 16 շրջանների վրա: Հակազդելով դրան, ՀԽՍՀ 28 քաղաքներում ու շրջաններում կայացել են հանրահավաքներ, 8 շրջանում գործը հասավ ընդհարումների: Որպես հասարակական

---

<sup>477</sup> Սովետական Հայաստան, թ. 7, ՕՑ. 01. 1989:

<sup>478</sup> ՀԱԿ-ի ընթացիկ արխիվ, թղթ. 3, թ. 36:

<sup>479</sup> Նույն տեղում, թ. 39:

դժգոհության արդյունք, նախազգուշացվել է 275 անձ, վարչական կալանքի է ենթարկվել 276 ու տուգանվել 17 հոգի, ներքին գործերի մարմիններ է տարվել 5000 մարդ, ազգրավվել է 39 միավոր հրազեն և 27 միավոր սառը զենք: Աղետի օրերին երկրաշարժի գոտին մեկնել են Վ. Մանուկյանը, Հ. Գալստյանը, Ս. Ղազարյանը, Բ. Արարքցյանը<sup>480</sup>, իսկ Երևանի տարբեր վայրերում անցել են հանրահավաքներ, որոնց մասնակցել են մինչև հինգ հազար մարդ: Այս ամենը հաղորդելով՝ ներքին գործերի նախարարությունը որևէ մեղադրանք չի ներկայացրել կոմիտեականներին<sup>481</sup>:

Նշենք, որ 1988 թ. նոյեմբերին «Ղարաբաղ» կոմիտեն ընդլայնել էր իր կազմը՝ հիմնական անդամների շարքը համալրել են Ալբերտ Բաղդասարյանը, Երջանիկ Աբգարյանը, Ավետիք Իշխանյանը, Դավիթ Շահնազարյանը, Արշակ Սադոյանը: Նրանք համարվում էին պահեստային կամ գաղտնի կոմիտեականներ: Այսպես, «Հայք» թերթին տված հարցազրույցում Ալբերտ Բաղդասարյանը նշում է, որ իրենք ջանում էին ձեռքբերել ընկերներին մտցնել 1989 թ. մարտի 26-ին նախատեսված ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների ընտրական ցուցակում, սակայն Մոսկվայից դա չթույլատրվեց:

1989 թ. փետրվարի 23-ին ազատության մեջ գտնվող կոմիտեականները հանդես են եկել հայտարարությամբ ու նշել, որ «իրենց ազգն ու արմատները անվերադարձ կորցրած հանրապետության ղեկավարություն կոչվող պաշտոնամուլների ու կաշառակերների ոհմակը բռնությունների մի նոր ալիք է բարձրացրել... և փորձում է կասեցնել Հայոց համազգային շարժումը...»: Հանրապետության բնակչությանը կոչ է արվում մասնակցել սուսգայիթյան ցեղասպանության տարեդարձի առթիվ կազմակերպվող համազգային հանրահավաքներին ու բոլորին տեղյակ պահել, որ «ՀՀ-ն չի շեղվի Արցախի պահանջատիրությունից և սահմանադրական պահանջներից»<sup>482</sup>:

---

<sup>480</sup> Հ. Գալստյան, Չուղարկված նամակներ, էջ 22:

<sup>481</sup> Սովետական Հայաստան, թ. 8-9, 10. 01. 1989:

<sup>482</sup> ՀԱԿ-ի ընթացիկ արխիվ, թղթ. 3, թ. 50:



Հանրապետության քաղաքացիները շարունակում էին իրենց բողոքը կոմիտեականներին ազատելու համար: Երևանի բնակիչ Ա. Մխիթարյանը դեկտեմբերի 20-ին հարց է ուղղել Գերագույն խորհրդի նախագահ Հ. Ոսկանյանին. «Այդ ի՞նչ խաչակրաց արշավանք եք սկսել «Ղարաբաղ» կոմիտեի դեմ: Արդյոք կա՞ մի այլ մեղադրանք, որ չբարդեք նրա վրա, նրա, որ ազգի խղճի ձայնն է, բողոքի ձայնը, ճշմարտության ձայնը: ...Տանկերով եք ուզում փակել արդարախոս բերանները: ...Այդ ի՞նչ քաղցր բան է եղել աթոռը, այդ ինչպե՞ս եք դողում ձեր այդ աթոռի համար... Դուք տեսաք, որ դժվար է ժողովրդի սիրուն արժանանալը, և ահա հայր Ստալինի մեթոդներին դիմեցիք: Ուրեմն կոտորեք, տանկերի տակ ճզմեք, բանտերը լցրեք ... Կոտորեք, բայց միևնույնն է, չեք հաղթելու: Տասնյակների ետևում հարյուրներ կան կանգնած, հարյուր հազարներ, ամբողջ մի հայ ազգ ...»<sup>483</sup>:

Կամ Սևանի Միկրոսխեմա արտադրական միավորման աշխատակազմը ապրիլի 18-ին Հ. Ոսկանյանին և ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ա. Սուխարևին ուղարկած հեռագրում պնդում է, թե «Ղարաբաղ» կոմիտեն նպաստում է ժողովրդավարության զարգացմանը և արժանացել է ողջ ազգի հարգանքի: Հեղինակները պահանջում են ազատել կոմիտեականներին<sup>484</sup>: Իսկ Լատվիայի երեք հազարանոց հայկական համայնքի կողմից ԽՄԿԿ ԿԿ, Գերագույն խորհուրդ ուղարկած բաց նամակում պնդում են կոմիտեի անդամների կալանքը դադարեցնելու վրա, քանի որ նրանց պաթարը ժողովրդական է և ազգին փրկելու համար<sup>485</sup>:

Չէին վերջանում բնակչության բողոք-նամակները: Բացի դրանից, 1989 թ. գարնանը ստեղծվել է ձերբակալված կոմիտեականների հասարակական պաշտպանության խորհուրդ, որը հայտնի էր «14-ի խորհուրդ» անունով: Այդ ատյանը նպատակադրվել էր կապ պահպանել ձերբակալվածների ընտանիքների հետ, նրանց ցույց տալ բարոյական ու նյութական օգնություն, համակարգել

---

<sup>483</sup> ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 138, թ. 14:

<sup>484</sup> Նույն տեղում, թ. 19:

<sup>485</sup> Նույն տեղում, թ. 20:

հասարակական կազմակերպությունների և ձերնարկություններում ընտրված հասարակական պաշտպանների գործունեությունը: Նման աշխատանքը իրականացնելու և բոլորի ուժերն միավորելու համար հավաքել էին գործին առնչվող փաստաթղթեր, հարցաքննությունների խախտման մասին դիմել հասարակական կարծիքի օգնությանը, համագործակցել նույնանման կազմակերպությունների հետ, կոմիտեի ծառայությունների մասին տեղեկություններ են սփռել և այլն<sup>486</sup>:

«14-ի կոմիտեն» 1989 թ. մայիսին հանդես է եկել «Բաց նամակով»: Նա հիշեցրել է Արցախյան շարժման ղեկավարների անօրինական ձերբակալության մեջ գտնվելու մասին. չէ որ այդ մարդիկ հայտնի շինարար են, գիտնականներ, գրողներ, լրագրողներ, Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավորներ, որոնք ժողովրդի ընտրյալներն են: Նրանց նստեցնել մեղադրյալի աթոռին «նշանակում է նույն աթոռին նստեցնել ողջ հայ մտավորականությանը, ողջ հայ ժողովրդին»<sup>487</sup>:

Հանրապետության քաղաքներում և գյուղերում շարունակվում էին բողոքի ցույցեր: Դեռևս 1988 թ. դեկտեմբերի 19-ին Մատենադարանի մոտ անցկացրած հանրահավաքը դիմել էր ռազմական պարետ գեներալ Ա. Մակաշովին, հանրապետության ներքին գործերի նախարար Հուսիկ Հարությունյանին և ՀԽՍՀ դատախազ Վ. Նազարյանին՝ պահանջել միութենական համապատասխան մարմիններից բանտից ազատել Մատենադարանի աշխատող, բ.գ.դ. Լևոն Տեր-Պետրոսյանին, շեշտելով, որ նա տաղանդավոր գիտնական է և միակ մասնագետը սիրիա-հայկական պատմական և գրականագիտական կապերի<sup>488</sup>: Կալանավորված «Ղարաբաղ» կոմիտեի համար խիստ անհանգստացած էին նաև հանրապետությունում բնակվող եզդիները, որոնց ազգային երրորդ

---

<sup>486</sup> ՀԱԱ, ֆ. 1159, ց. 1, գ. 140, թ. 2:

<sup>487</sup> ՀԱԿ-ի ընթացիկ արխիվ, թղթ. 4, թ. 12:

<sup>488</sup> Նույն տեղում, թղթ. 6, թ. 1:

համագումարը պահանջել է անհապաղ ազատ արձակել ազգային շարժման առաջատարներին<sup>489</sup>:

«Ղարաբաղ» կոմիտեի ջերմ պաշտպան են եղել ակադեմիկոս Ա. Սախարովն ու Գալինա Ստարովոյտովան: Վերջինը 1989 թ. ամանորի առթիվ Համբարձում Գալստյանին հղած հեռագրում նշել է. «Այս ամանորի գիշերը մենք չենք կարող իրար շնորհավորել: Մենք մարել ենք լույսը և ի հիշատակ մեզնից հեռու գտնվողներին, կվշտակցենք նրանց: 1915 թվականից հետո եղե՛լ է ավելի նզովյալ տարի, քան այս: Արիացեք, հայեր, հարազատներս: Ցավում եմ կոմիտեի անդամներին: Այս պահին մենք կանգնած ենք բանտի դռներին...»<sup>490</sup>:

Հետզհետե ավելի էր ընդլայնվում «Ղարաբաղ» կոմիտեի պաշտպանության հարցը: 1989 թ. հունվարին հրապարակվել է նաև Մովսես Գորգիսյանի հեղինակած «Մեղադրվում են» հավաքածուն, որն արժանի պատասխան էր հանրապետության իշխանավորներին: Դրա կողքին մեծ թվով դիմումներ են ուղարկել գլխավոր դատախազ Ա. Սուխարևի անունով, որի կազմողները պահանջել են ազատել կոմիտեականներին: Այդպիսի բողոքներից մեկը գրող, հրապարակախոս Կիմ Բակշին հրապարակել է «Օգոնյուկում»: Նա հայտարարել է. «Ինձ համար անմտություն է, դաժանություն է ներկայացնում «Ղարաբաղ» կոմիտեի ձեռքակալման, առանց դատ ու դատաստանի նրա անդամներին ամիսներով կալանքի տակ պահելու փաստը: Չէ՞ որ ժողովուրդն է նրանց առաջ քաշել: Սա հայ ժողովրդին չճանաչելու, նրա ազգային բնավորությունը չգիտենալու հետևանքն է»<sup>491</sup>:

Բանտարկյալների մասին հոգում էր նաև աշխարհասփյուռ հայությունը: Օրինակ, Փարիզում լույս ընծայվող «Յառաջ» թերթից իմանում ենք, որ «Սոլիտարիթե Ֆրանքո-Արմենյեն» կազմակերպությունը մարտի 7-ին իրականացրել է ասուլիս՝ «Ղարաբաղ Կոմիտեի ձեռքակալութեան ու Հայաստանի քաղաքական կացութեան

---

<sup>489</sup> ՀԱԿ-ի ընթացիկ արխիվ, թղթ. 3, թ. 21:

<sup>490</sup> Նույն տեղում, թ. 6-7:

<sup>491</sup> Տե՛ս Խորհրդային Հայաստան, թ. 237, 07. 10. 1989:

նուիրում»<sup>492</sup>: Թերթը բացատրում էր, թե «Ղարաբաղ Կոմիտեի 11 անդամներուն, ինչպէս նաև անոնց հետ Խ. Ստամբուլցեանի ու Ի. Մուրատեանի արգելափակման անընդունելի պարագաները, կազմակերպիչ միութիւնը մասնակցելու հրավիրեր էր կոմիտեի անդամների ընտանիքների կազմը, պաշտպան փաստաբան նշանակված Տ. Ժաքոպի, Ի. Լորէն, Քաթրին Քէսէճյան, ինչպէս նաև պրոֆեսորներ՝ Ժ. Փ. Մահէ և Հ. Քարթան»<sup>493</sup>:

Պրոֆեսոր Քարթան իր ելոյթում վրդովմունք է հայտնել խորհրդային դեսպանություն ուղարկած նամակը անպատասխան թողնելու կապակցությամբ: Իր հերթին, պրոֆեսոր Մահեն պատմել է իր նախաձեռնած ստորագրահավաքի մասին, որին արձագանքել են Եվրոպայի և ԱՄՆ-ի ավելի քան 60 հայագետներ: Նաև նշել է, որ «Մոնո» թերթի փետրվարի 9-ի համարում բազմաթիվ ստորագրություններով հողված է տպագրվել ի պաշտպանություն կոմիտեականների, կազմակերպվել են բազմաթիվ միտինգներ, ժողովներ, հանդիպումներ և ասուլիսներ<sup>494</sup>:

Հայաստանի Պետական անվտանգության կոմիտեի նախագահ Վ. Բաղամյանցի 1989 թ. փետրվարի 2-ին ՀԿԿ ԿԿ ուղարկած գաղտնի հաղորդագրության մեջ տեղեկացվում է, որ «գործնականորեն սփյուռքի բոլոր ուժերը բացասաբար են ընդունել «Ղարաբաղ» կոմիտեի անդամների 30-օրյա վարչական կալանավորումն ու դրան հաջորդած ներկայացված մեղադրանքը»: Ապա հաղորդվում է, թե Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲՄ) Լուիզ Սիմոնյանի ստորագրությամբ 1988 թ. դեկտեմբերին նամակ է ուղարկել խորհրդային ղեկավարությանը՝ պահանջելով հանդիպում ունենալ ԽՍՀՄ դեսպանի հետ՝ որպեսզի ՀԲՄ-ի ներկայացուցիչները հնարավորություն ունենան բողոք ներկայացնել «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալության դեմ և նախագգուշացնեն,

---

<sup>492</sup> Յառաջ, 09. 03. 1989:

<sup>493</sup> Նույն տեղում:

<sup>494</sup> Նույն տեղում:

թե «ԽՍՀՄ-ում հայկական բնակչությանը ճնշման դեպքում ամբողջ աշխարհում կազմակերպվելու է բողոքի ակցիա»<sup>495</sup>:

Հ. Գալստյանի «Չուղարկված նամակների» բացառությամբ, բավականին աղոտ են Ղարաբաղյան շարժման առաջատարների բանտային առօրյայի վերաբերող հրապարակված նյութերը: Մեր ունեցած տեղեկությունները լույս են ընծայել Ռ. Ղազարյանն ու Հ. Գալստյանը: Բացի դրանից, Ռաֆայել Ղազարյանի կինը՝ Գրիգելյա Ղազարյանը կարողացել է 1989 թ. մայիսի 16-ին Բուտիրյան բանտում մեկժամյա տեսակցություն ունենալ ամուսնու հետ: Հասկանալի է, որ ամուսնու տեսքը շատ վատ էր, ինքը հյուժված ու հողացավերի պատճառով հազիվ էր քայլում: 65-ամյա ռադիոֆիզիկոսին, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Ռաֆայել Ղազարյանին սկզբում նետել էին մարդասպան ռեցիդիվիստների խուցը:

Դրա համար ինքը հացադուլ է հայտարարել ու զգուշացրել, որ եթե իրեն չտեղափոխեն, ինքնասպանություն կգործի: Փետրվարի 20-ին նրան հայտնել են ազատ արձակելու մասին, սակայն Ռ. Ղազարյանը պատասխանել է, որ դուրս չի գա, եթե չազատեն կոմիտեի մյուս անդամներին: Այնուհետև նրան հարցաքննության չեն կանչել: Եվ ինքը կրկին հացադուլ է հայտարարել ու պահանջել իր հանդիպումը եղբոր՝ Վազգենի հետ: Ապրիլի 24-ին գիտնականը սկսել է երրորդ հացադուլը, պահանջելով հարցաքննություն: Նա նամակ է գրել Մ. Գորբաչովին նշելով, որ եթե Ղարաբաղի հարցը չլուծվի, ապա վերակառուցումը կխրվի գլխավոր քարտուղարի կոկորդը: Իսկ ՀԿԿ ղեկավարին գրած նամակում նշել է, թե գոնե մի անգամ պետք է մարդ լինել և զբաղվել երկրաշարժի գոտու վերականգնման հարցերով:

Կոմիտեականների ազատագրկման ժամանակ անդադրում գործում էին նրանց կանայք: Բուռն ու հանդուգն պայքար էր ծավալել «կանանց ջոկատի խմբապետը»՝ Վազգեն Մանուկյանի կինը՝ Վարդուհին: Նա ելույթներ էր ունենում հանրահավաքներում, նամակներ հղում տարբեր աստյաններին, տալիս հարցազրույցներ,

---

<sup>495</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 34, թ. 18:

հանդիպումներ ունենում հասարակական և քաղաքական գործիչների հետ, ստորագրություններ հավաքում: Վարդուհու և նրա բախտակիցներին ամեն կերպ աջակցում էին Թամար Բաբայան-Հաճյանը (Բոստոն), Լյուսի Դանիելյանը և Սալբի Ղազարյանը (Լոս Անջելես) և շատ ու շատ ուրիշներ: Պակաս ակտիվ չէր նաև Ռաֆայել Ղազարյանի կինը՝ Գրիգելյան, որը կարողացավ երկու անչափահաս երեխաների ձեռքերից բռնած՝ հանդիպել հանրապետության գլխավոր դատախազ Վ. Նազարյանի, Հուսիկ Հարությունյանի և Մոսկվայից ժամանած քննչական խմբի ղեկավար, գեներալ Վ. Տիտովի հետ: Հատկանշական է, որ ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամի կին լինելով, տիկին Ղազարյանը հանդիպում էր ամուսնու աշխատակից ակադեմիկոսների հետ, որոնք Մոսկվա և արտասահման հասցեագրած տասնյակ բողոքներ էին ստորագրել<sup>496</sup>:

Բնական է, որ կոմիտեի ճակատագիրը նախ և առաջ կախված էր հանրապետության ընդհանուր քաղաքական վիճակից: Նրա անդամները ազատություն են ստացել ի շնորհիվ ամբողջ հայ ժողովրդի եռանդալից ջանքի և նրա մտավորականության նվիրվածության: Այդ պայքարին շատ է օգնել ակադեմիկոս Ա. Սախարովը: Դրանում հայ ժողովրդին սատարել են ԽՍՀՄ և ողջ աշխարհի ազնիվ մարդիկ<sup>497</sup>:

Եվ Կոմիտեի ազատման նախօրյակին ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղարը 1989 թ. մայիսի 23-ին խոստովանել էր, որ հանրապետությունում տիրող իրադրությունը եղել էր խիստ լարված: Հետևաբար, «հաշվի առնելով մի շարք աշխատավորական կոլեկտիվների, երիտասարդության ներկայացուցիչների և բնակչության այլ խավերի ցանկությունները, նա դիմել է ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ա. Սուխարևին, միջնորդելով մարդասիրական մոտեցում ցուցաբերել «Ղարաբաղ» կոմիտեի անդամների նկատմամբ»<sup>498</sup>: Իսկ հաշվի առնելով Մոսկվայի տրամադրվածությունը, հնարավոր էր հայտա-

---

<sup>496</sup> Ռաֆայել Ղազարյան, նշվ. աշխ., էջ 256:

<sup>497</sup> С. А. Амбарцумян, նշվ. աշխ., էջ 92:

<sup>498</sup> Խորհրդային Հայաստան, թ. 124, 24. 05. 1989:

րարել, որ մոտ օրերին ԽՍՀՄ դատախազությունը կբավարարի Երևանից ստացած կոմկուսի միջնորդությունը:

Մի քանի օր անց մամուլում իսկապես հրապարակվեց մի հաղորդում, թե ԽՍՀՄ Գլխավոր դատախազությունը «Ղարաբաղ» կոմիտեի գործը հանձնել է ՀԽՍՀ Դատախազության վարույթ, որը մայիսի 31-ին որոշում է ընդունել փոխել կասեցման միջոցը «Ղարաբաղ» կոմիտեի անդամների նկատմամբ ու նրանց ազատել կալանքից: Նման որոշում է ընդունվել նաև Իգոր Մուրադյանի նկատմամբ<sup>499</sup>: Այսպես 1989 թ. մայիսի 31-ին Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն ազատվել է կալանքից ու Երևանում ստացել ժողովրդի աներևակայելի ջերմ ընդունելություն: Նրանց ազատությունը հնարավոր դարձավ բոլոր հայերի և աշխարհի առաջադեմ մարդկության պայքարի շնորհիվ:

### **III. Երկրորդ հանրապետության փլուզումը**

#### **3.1. Խորհրդային Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորմանն ուղղված քայլերը**

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի՝ մեր ժողովրդի երկու հատվածների միավորման մասին 1989 թ. դեկտեմբերի 1-ին Հրանտ Ոսկանյանի և Վաչագան Գրիգորյանի ստորագրած համատեղ որոշումը արժանացել է երկու տեսակի գնահատականների: Օրինակ, նույն ամսվա կեսերին գումարված Ստեփանակերտ քաղաքի կուսակցության քաղկոմի պլենումը «գոհունակությամբ խոսելով վերամիավորման հարցի մասին», որոշել է «բոլոր անհրաժեշտ միջոցառումներն իրականացնել Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզի քաղաքական, տնտեսական ու մշակութային կառուցվածքները միասնական պետական-քաղաքական համակարգի մեջ միահյուսելու համար»<sup>500</sup>: Դրա հետ համաձայն լինելով, «Սահմա-

<sup>499</sup> Խորհրդային Հայաստան, թ. 131, 01. 06. 1989:

<sup>500</sup> Նույն տեղում, թ. 292, 19. 12. 1989:

նադրական իրավունք» միությունն (ՍԻՄ) էլ «Արցախի խնդրի լուծման գլխավոր քաղաքական քայլ է համարել «ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1989 թվականի դեկտեմբերի 1-ի որոշումը Արցախի վերաբերյալ»<sup>501</sup>

Սակային սրա նման՝ բազմաթիվ դրական գնահատանքների կողքին, գոյություն ունի և հակառակ տեսակետը, որն արտահայտել է Արցախի պատմության գիտակ, նրա ազատագրման եռանդուն կողմնակից Բագրատ Ուլուբաբյանը: 1990-ի հունվարին Բաքվում կազմակերպված հակահայ ջարդերի<sup>502</sup> ցավը սրտում, նա ափսոսանք է հայտնել, թե 1989 թ. դեկտեմբերի 1-ի «որոշումը եղել է ժամանակավրեպ, անիմաստ և, ամենակարևորը, վնասակար... Որ դա անհեռանկար և անիրականանալի է եղել սկզբնապես, և ընդունողները, հատկապես այն ժամանակվա Գերագույն խորհրդի մեծերը, հանրապետության կուսակցական ու պետական ղեկավարները, ...թող են փչել ժողովրդի աչքին, լավամարդ դարձել՝ իրականում փակուղի մղելով Արցախի հարցը, կատարել ճակատագրական մի քայլ, որն... կործանարար է եղել շարժման և հատկապես Արցախի փրկության համար»<sup>503</sup>:

Բ. Ուլուբաբյանի այդ տեսակետը մեջբերելով ու կիսելով 215-հազարանոց Բաքվի հայության և մասնավորապես հունվարին մնացած վերջին 50 հազար հոգու՝ հզոր ԽՍՀՄ-ի իր տարրական պարտականություններից ուրացած ու նրանց՝ համընդհանուր զինապարտության երկրում բացարձակապես անզեն, անպաշտպան, ջարդարարների անասնական քմահաճությանը թողած վիշտը, գերծ ենք մնում նրա կարծիքին գնահատական տալուց:

Նշենք միայն, որ 1989 թ. դեկտեմբերի 1-ից մինչև հունվարյան վայրագությունը անցել էր մեկուկես ամիս: Նշանակում է՝

---

<sup>501</sup> Իրավունք, թ. 6, Օ1. 08. 1990:

<sup>502</sup> Մանրամասն՝ W. Keller, Did Moscow Incite Pogroms in Baku to Reimpose Authority Over Region? - "The Armenian Reporter," Paramus, New Jersey, 1990, vol. XXIII, № 20, 22. 02., p. 1, համապատասխան մեկնաբանությամբ՝ Մ. Յ. Чалыян, նշվ. աշխ., էջ 91-93:

<sup>503</sup> Բագրատ Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 126-127:



նա չի հանդիսացել հունվարյան ողբերգության անմիջական դրդապատճառը: Ոչ Կիրովաբադի՝ նոյեմբերյան հարձակումներն, ոչ էլ սև հունվարը անմիջական կապ չեն ունեցել դեկտեմբերի 1-ին կայացած մեր որոշման հետ և իրագործվում էին իրենց ուրույն տրամաբանությամբ: Ավելին, ԽՄՍՀ-ն ոչ միայն զորք չի գտել 1990 թ. հունվարի 13-ին 19-ը բզկտվող մարդկանց պաշտպանելու համար, այլև չի էլ զինել Բաքվի հայերին՝ որոնք ոստիկանական «դրուժինաների» տեսքով ու սպաների ղեկավարությամբ կորող էին իրականացնել քաղաքից կազմակերպված տարհանումը:

Կարող էին՝ ինչպես դա հաջողվեց Գանձակի հայությանը: Գիտենք, որ նույն այդ զորքին հրաման են արձակել հունվարի 20-ից հետո՝ երբ Բաքվում հնչել էր անկախության պահանջը: Ուստի հայերին անպաշտպան թողնելը՝ մեծ ուժի տեր պետության նրանց հանդեպ որևէ պարտականության բացակայության հետևանքն էր<sup>504</sup>: Այսպես որ Խորհրդային Միությունը դադարել էր գոյություն ունենալուց ոչ թե 1991 թ., այլ 1990 թ. հունվարի 13-19-ը՝ երբ ստորաբար դավաճանել էր ազգությամբ հայ նրա քաղաքացիներին:

Բացի դրանից՝ տեսական առումով, 1989 թ. դեկտեմբերի 1-ի որոշումը Հայաստանի միակ պատմական իրավական ակտն է, որը սահմանում է ՀՀ-ի և ԼՂՀ-ի փոխհարաբերությունները: Նրանով արցախահայության վրա տարածվել է ՀՀ քաղաքացիության իրավունքները, իրականացվել է երկու տնտեսությունների միաձուլում<sup>505</sup>: Հետագայում այդ փաստաթուղթը ընդգրկվել է 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունված ՀՀ Անկախության մասին հռչակագրում ու դրա միջոցով ամրագրվել է ՀՀ Սահմանադրության

---

<sup>504</sup> Հար և նման գնահատականը Սումգայիթում խորհրդային իշխանության անգործության կապակցությամբ տե՛ս Claire Mouradian, նշվ. աշխ., էջ 17, 30: Կենտրոնում առկա մեծապետական նկատառումների մասին. F. Thom, *Le moment Gorbatchev*, Paris, 1989, p. 163:

<sup>505</sup> Տե՛ս Գ. Գ. Մախմուրյան, Հայրենիքի հետ Արցախի Միացման պատմական նշանակությունը (1988-1990 թթ.): Գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու), Ղարաբաղյան շարժման 30-րդ տարեդարձին նվիրված նյութեր, Ստեփանակերտ, 2018, էջ 448-452:

նախաբանում: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և Արցախի Ազգային խորհրդի համատեղ որոշման ժամանակ Ղարաբաղ անվանումը հասարակության համար դարձել էր սրբություն և հպարտություն: Այդպես էլ պետք է լիներ, քանի որ տասնամյակներ առաջ Ղարաբաղի անջատումը մայր հայրենիքից եղել է անօրինական և մեր ժողովրդի շահերին դեմ ուղղված: Հեղափոխության մուլուցքով տառապող բոլշևիկյան այրերը անկասկած կատարել են հակահայկական ազգային հանցագործություն, որը պետք է ուղղվեր յոթանասուն տարի հետո:

Ժողովրդական պայքարի հենց սկզբից արցախցիների համար հարցը հստակ էր՝ վերամիավորվել մայր Հայաստանի հետ, որը նշանակում էր ընդառաջել «ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ անցնելու հարցի դրական լուծմանը»<sup>506</sup>: Ընդառաջելով այդ որոշմանը, ինչպես նշվել է, 1988 թ. հունիսի 15-ին տեղի ունեցած Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը «ղեկավարվելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի մասին ՍՍՀՄ սահմանադրության 70 հոդվածով, համաձայնություն է տվել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտնելուն»: Այսպիսով՝ թե՛ ԼՂԻՄ-ը և թե՛ Հայաստանի ԽՍՀ-ն համաձայն էին միավորվելու: Դրան, ինչպես նշվել է, կարճ ժամանակահատվածում հաջորդել է ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ 20-րդ գումարման խորհրդի 1988 թ. հուլիսի 12-ին տեղի ունեցած 8-րդ նստաշրջանի Ադրբեջանի ԽՍՀ-ի կազմից դուրս գալու մասին որոշումը<sup>507</sup>:

Մ. Գորբաչովի խոստման համաձայն, 1989 թ. հունվարի 12-ին ստեղծված և Արկադի Վոլսկու գլխավորած Ղարաբաղի հատուկ կառավարման կոմիտեն<sup>508</sup> որպես առաջին քայլը վերացրեց մարզի կուսակցական և խորհրդային իշխանությունները՝ նոր ըն-

---

<sup>506</sup> Խորհրդային Ղարաբաղ, 21. 02. 1988:

<sup>507</sup> Նույն տեղում, 13. 07. 1988:

<sup>508</sup> Այն մտցնելու մասին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության Հռչակագիրը տե՛ս В. Б. Арутюнян, События в Нагорном Карабахе, ч. 1, с. 164-166:

տրություններ անցկացնելու պայմանով: Այսպես, մարզի ԽՄԿԿ ԿԿ-ին անմիջապես ենթարկելու որոշումը ուղեկցվեց հակաժողովրդական ղեկավարման ձևով: Նման վիճակից ԼՂԻՄ-ը դուրս բերեց 1989 թ. օգոստոսի 16-ին անցկացրած արցախահայության լիազոր ներկայացուցիչների համագումարը, որը ի լուր աշխարհին հայտարարեց, թե «Հատուկ կառավարման ձև մտցնելու մասին որոշումը անկենսունակ է գտնվել»: Այն «զրկվել է բնակչության վստահությունից և ի վիճակի չէ կառավարել մարզը»:

Ապա՝ «համագումարը, մինչև կառավարման սահմանադրական ձևի վերականգնումը, արձանագրում է Ազգային խորհրդի՝ մարզային ինքնակառավարման ժողովրդական, ընտրովի մարմին ստեղծելու անհրաժեշտությունը»<sup>509</sup>: Մինչև ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի և կուսակցության մարմնի վերականգնումը, համագումարն ընտրեց Ազգային խորհուրդ ու ժողովրդի անունից նրան օժտեց համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում մարզի կյանքի բոլոր ոլորտների ղեկավարման լիազորություններով<sup>510</sup>: Քանի որ «Ազգային խորհուրդը ժողովրդավարական ինքնակառավարման դեմոկրատական մարմին է՝ ծնված վերակառուցմամբ և ժողովրդական զանգվածների ստեղծագործությամբ», ընթացիկ աշխատանքը ղեկավարելու համար իր կազմից ընտրում է նախագահություն, որի խնդիրներից էր Արցախի հարցի լուծումը<sup>511</sup>:

Մարզի լիազոր ներկայացուցիչների այդ համագումարը խստագույն կերպով մերժում է «Մարզի ներքին գործերին Ադրբեյջանի կառավարության կողմից միջամտություն ցույց տալու յուրաքանչյուր փորձ և ինքնավար մարզի հանդեպ անընդունելի է

---

<sup>509</sup> Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարի նյութերը, էջ 24: Տե՛ս նաև՝ Claire Mouradian, նշվ. աշխ., էջ 27:

<sup>510</sup> Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարի նյութերը, էջ 25:

<sup>511</sup> Նույն տեղում:

համարում թելադրանքի քաղաքականությունը»<sup>512</sup>: Ընդունված հռչակագրում շեշտված է, որ Ազգային խորհուրդը անկախ է իր գործունեության մեջ և նրա որոշումները պարտադիր են Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածքում կատարելու համար: Իսկ «Ինքնավար մարզի գործերին Ադրբեջանական ԽՍՀ-ի միջամտությունը գնահատելու է որպես ագրեսիայի ակտ և այն կստանա համարժեք պատասխան»: Այսպիսով, Արցախում ստեղծվեց մի մարմին, որն իր գործառույթներով հանդիսանում էր մարզի նախկին պետական մարմինների իրավահաջորդը և իր վրա է վերցնում մարզի պետական բոլոր մարմինների իրավունքը: Արցախահայությունը ճանաչեց Ազգային խորհրդի իրավասությունը և պատրաստ էր կատարել նրա բոլոր որոշումները:

Ազգային խորհուրդը կարևոր ներդրում է ունեցել Արցախի և Հայաստանի վերամիավորման գործում: Այդ հարցի լուծումը համարվել է իր հիմնական խնդիրը: Դրա համար խիստ անհրաժեշտ էր նրա ճանաչումը Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից: Ամբողջ հանրապետությունում պահանջում էին ընդունել համապատասխան որոշումն ու 1989 թ. սեպտեմբերի 17-ին՝ ժողովրդի թելադրանքով, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդն որոշեց.

1. Դիմել ԽՍՀՄ ԳԽ-ին՝ սույն թվականի սեպտեմբերին կայանալիք նստաշրջանում ճանաչել ԼՂԻՄ ինքնորոշման իրավունքը, որն արտահայտված է ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի և հուլիսի 12-ի նստաշրջանի որոշումներում:

2. Ճանաչել ԼՂԻՄ-ի բնակչության լիազոր-ներկայացուցիչների համագումարում ընտրված Ազգային խորհուրդը որպես Արցախի բնակչության կամքն ու շահերը ներկայացնող ժողովրդաիրավաբանության մարմին՝ մինչև ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի վերականգնումը<sup>513</sup>:

Այդ որոշումը գոհունակությամբ է ընդունվել Հայաստանում:

---

<sup>512</sup> Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարի նյութերը, էջ 26:

<sup>513</sup> Սովետական Հայաստան, թ. 224, 23. 09. 1989:

1989 թ. աշնանը հանրապետությունում աշխուժացել էին քաղաքական ուժերը: Իր գործունեությամբ աչքի էր ընկնում նույն թվականի գարնանը ստեղծված «Սահմանադրական իրավունք» միությունը: Քաղաքական այդ կազմակերպության պաշտոնական օրգան «Իրավունք» թերթի առաջին համարում, որը լույս է տեսել 1989 թ. օգոստոսին, հրապարակել է ՍԻՄ-ի պաշտոնական տեսակետը արցախյան հիմնախնդրի վերաբերյալ: Հայաստանում ՍԻՄ-ը քաղաքական այն ուժն էր, որն առաջինն ընդունեց «ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի, ազգի միավորման իրավունքի և զավթած տարածքների ազատագրման իրավունքի» կիրառումը Լեռնային Ղարաբաղի պարագայում:

Ընդունելով, որ Հայաստանի հետ «Արցախի միացումը ոչ միայն արցախցիների, այլև ամբողջ հայ ժողովրդի գոյատևման հիմնաքարն է», ՍԻՄ-ը գտնում է, որ Հայաստանի և Արցախի միացմանն ուղղված քայլերը պետք է «կատարել մոտակա ամիսներին, մշակել նրա ատյանների գործունեությունը ՀԽՍՀ գերատեսչությունների ենթակայության տակ, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանի որոշմամբ Արցախը հայտարարել ՀԽՍՀ անքակտելի մաս, դիմել այլ հանրապետությունների, երկրների և միջազգային կազմակերպությունների՝ ճանաչելու այդ փաստը, Արցախում անցկացնել ՀԽՍՀ ԳԽ ընտրություններ»<sup>514</sup>:

ՍԻՄ-ը պատրաստեց որոշ սկզբունքներ պարունակող ԼՂԻՍ-ի պայքարին նվիրված հետևյալ պաշտոնական տեսքերը.

1. Արցախի հարցը ունի իրավական հիմք, ըստ որում ոչ միայն ազգերի ինքնորոշման իրավունքը, այլև՝ շատ ավելի լայն.

2. Արցախի խնդիրը ոչ միայն արցախցիների, այլև ամբողջ հայ ժողովրդի խնդիրն է.

3. ԽՍՀՄ ճգնաժամն անխուսափելի է, և այդ ընթացքում Ադրբեջանը կփորձի հայաթափել Դաշտային ու Լեռնային Արցախը և Ձանգեզուրը<sup>515</sup>:

---

<sup>514</sup> Իրավունք, օգոստոս 1989:

<sup>515</sup> Նույն տեղում, թ. 130, 02. 12. 2014:

Այդ տեսակետը ընդունվել է 1989 թ. օգոստոսի 4-ին անցկացրած ՍԻՄ-ի ընդհանուր ժողովում: Նրան իրագործելու համար ՍԻՄ-ը անց էր կացնում հանրահավաքներ և լրջորեն վիճաբանում ՀՀՇ-ի հետ: Օրինակ, Հրագրանմաշ գործարանի ինժեներ, ՍԻՄ-ի նախագահ Հրանտ Խաչատրյանը 1989 թ. սեպտեմբերի 21-ին Երևանի ժողովրդական պատգամավորների 26 կոմիսարների շրջխորհրդի նստաշրջանում ունեցած իր ելույթում ընդգծել էր, որ ղարաբաղյան շարժումը ուղղված է իր գաղութարարների դեմ: Նման ձևակերպումը լայն արձագանք է գտել Հայաստանում<sup>516</sup>:

1989 թ. սեպտեմբերի 1-ին կայացած ՍԻՄ-ի ընդհանուր ժողովը ընդունեց «Հայտարարագիր Լեռնային Արցախի (Ղարաբաղի) մասին» ծրագրային փաստաթուղթ, որտեղ ասված է. «Գոյություն չունի Հայաստանի կողմից ստորագրված կամ Արցախի ժողովրդի կամքն արտահայտող որևէ փաստաթուղթ՝ Արցախը Ադրբեջանին հանձնելու վերաբերյալ: ...Արցախի տարածքում Ադրբեջանի ռազմական ուժի գործադրումը ՀԽՍՀ կողմից դիտվում է որպես Հայաստանի տարածքի մի մասի օկուպացում» և «Հայաստանը երբևիցե չի հրաժարվել Արցախից՝ որպես իր անբաժան մասից, ...ցանկացած ոտնձգություն Արցախի նկատմամբ ագրեսիա է ՀԽՍՀ հանդեպ»<sup>517</sup>:

Մայր ժողովրդի հետ վերամիավորման վճռականությունը արցախցիների մոտ չէր նվազում, այլ հետզհետե ավելի էր կուռ կեցվածք ստանում: 1989 թ. հոկտեմբերի 19-ին Արցախի Ազգային խորհուրդը դիմել էր ՀԽՍՀ Գերագույն խորհրդին՝ Արցախը վերամիավորել Հայաստանի կազմում: Նախատեսված էր նոյեմբերի 30-ին հրավիրել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան: Գերագույն խորհուրդը ներկայացնող բոլոր քաղաքական ուժերը ներգրավվեցին կարևորագույն այդ հարցը դրականորեն լուծելու համար: Միաժամանակ՝ հոկտեմբերի 20-ին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդում Ազգությունների խորհրդի ազգային քաղաքականության և ազգամիջյան հարաբերությունների մշտական

<sup>516</sup> ՀԱԱ, ֆ. 207, ց. 45, գ. 71, թ. 12-13:

<sup>517</sup> Իրավունք, թ. 130, 02. 12. 2014:

հանձնաժողովի նախագահ Գ. Տարազևիչը հաղորդում տվեց ԼՂԻՄ պրոբլեմի գծով պատգամավորական հանձնախմբի եզրակացությունների մասին:

Հանձնաժողովը մշակել էր առաջարկություններ և հանձնել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին և ԼՂԻՄ-ից ընտրված ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներին: Այնուհետև այդ առաջարկությունները ներկայացվելու են ԽՍՀՄ Գերագույն խորհրդին ու նրանց հիման վրա ընդունվել է նոյեմբերի 28-ի որոշումը՝ «Լեռնային Ղարաբաղի ինքավար մարզում իրադրությունը նորմալացնելու մասին»<sup>518</sup>: Վերջինի մեկնաբանությամբ ԼՂԻՄ-ը թողնվում էր Ադրբեջանական ԽՍՀ կազմում, իսկ Հատուկ կառավարման կոմիտեն վերացվում էր: Փոխարենը ստեղծվում էր Ադրբեջանի հանրապետական կոմիտե, վերականգնվում էր ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների խորհուրդն ու նրա գործադիր կոմիտեն, թելադրվում էր ԼՂԻՄ-ի իրավական ինքնավարության կարգավիճակ բարձրացումը և բոլոր ծագող խնդիրների սահմանադրական լուծումը:

ԼՂԻՄ-ում իրադրության կայունացման միջոցառումները վերահսկելու և դրանց իրականացմանն օգնելու համար կազմավորվում էր միութենական դիտորդ վերահսկիչ հանձնաժողով՝ այն ենթարկելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդին: Արգելվում էր խախտել ժողովրդագրական իրավիճակը, գաղթականների հարցը լուծելու համար ստեղծվում էր ևս մեկ հանձնաժողով, մարզում թողնում էին ներքին զորքերի մեծաքանակ զորաբաժին և այլն<sup>519</sup>: Հայաստանում և Արցախում զայրույթով է մերժվել այդ որոշումը:

1989 թ. նոյեմբերի 30-ին Երևանի Ստեփան Շահումյանի անվան մշակույթի պալատում ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորները հավաքվեցին շարունակելու Գերագույն խորհրդի արտահերթ 10-րդ նստաշրջանը: Քննարկման դրված ութ հարցերի կեսը առնչվում էր Լեռնային Ղարաբաղի հիմանխնդրին: Երբ հա-

---

<sup>518</sup> Խորհրդային Հայաստան, թ. 247, 22. 10. 1989:

<sup>519</sup> Նույն տեղում: 190 հազար բնակիչներին հսկելու համար ինքնավար մարզում տեղադրել էին 30-հազարանոց ներքին զորքը:

յտարարվում է հարցերն օրակարգ մտցնելու մասին, ՀՀԾ-ի ներկայացուցիչ, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Աշոտ Մանուչարյանը հաղորդեց, որ նիստին մասնակցում են Արցախի Ազգային խորհրդի ներկայացուցիչները, ուստի պետք է արձանագրվի, որ «տեղի է ունենում Արցախի Ազգային խորհրդի և Հայաստանի Գերագույն խորհրդի համատեղ նիստը»<sup>520</sup>:

Արցախը Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորման հարցի քննարկումն ընթացել է թեժ վիճաբանությամբ: Մասնակիցների առավելագույն մասը Արցախի Ազգային խորհրդի և Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի համատեղ նիստը համարում է օրինական, իսկ որոշ անձինք՝ ոչ: Պատգամավոր Խաչիկ Ստամբուլցյանը պնդում էր, թե համատեղ նստաշրջանը չի կարող հակասահմանադրական լինել՝ «եթե նստաշրջանը քվեարկում և ընդունում է, այլևս հակասահմանադրական չէ»: Նստաշրջանը օրինավոր լինելու վերաբերյալ իր տեսակետն է պնդել նաև պատգամավոր Լևոն Տեր-Պետրոսյանը: Նա նշեց, որ եթե նիստը տեղի է ունենում համատեղ՝ Արցախի Ազգային խորհրդի հետ միասին, նրան անհնարին է օրինական համարել: Մոսկվան շարունակ ինքն է ոտնահարում երկրի սահմանադրությունը<sup>521</sup>:

Ի վերջո համատեղ նիստը ճանաչվել է օրինական և սկսվել հարցերի քննարկումը: Բոլոր ելույթներից առավել սուր էր Լևոն Տեր-Պետրոսյանի ճառը: Նա խստորեն դատապարտելով երկու օր առաջ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից ընդունված «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում՝ իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին» որոշումը, շեշտեց ընթացող նիստի միանգամայն օրինական լինելու հանգամանքը: Հռետորը առաջարկել է ԽՍՀՄ Սահմանադրությունից հանել բրեժնևյան 6-րդ հոդվածը: Իր հերթին, Արցախի Ազգային խորհրդի նախագահ Վաչագան Գրիգորյանը, պատմելով մարզում նրա ղեկավարած առյանի կազմավորման մասին, քննադատական խոսք է հնչեցրել Արցախում իր գործունեությունն ծավալած Արկադի Վոլսկու հասցե-

<sup>520</sup> Տե՛ս Բագրատ Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 128:

<sup>521</sup> Նույն տեղում:



ին, շեշտելով՝ «Մենք գիտենք, որ Հատուկ կառավարման կոմիտեն՝ Վոլսկու գլխավորությամբ, միայն պետք է ջլատի մարզի ներքին ուժերը և կատարի այն բոլոր հանձնարարությունները, որ ստանում է Մոսկվայից»<sup>522</sup>:

Որոշման նախագիծը պատրաստելու համար ստեղծվեց հատուկ հանձնաժողով: Նրա կազմած փոստաթուղթը 1989 թ. դեկտեմբերի 1-ի երեկոյան նիստի հաստատմանն է ներկայացրել ԳԱ թղթակից անդամ, պատգամավոր Հրաչիկ Սիմոնյանը: Բուռն ծափահարություններով ընդունվել է Արցախի և Խորհրդային Հայաստանի վերամիավորման մասին որոշումը, որը կարևոր նշանակություն ունեցավ մեր ազգային պատմության մեջ: Այն մինչև հիմա չի կորցրել և մշտապես կպահպանի իր նշանակությունը և իրավական ուժը: Ահա այդ պատմական որոշումը.

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի որոշումը Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին

Հիմնվելով ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունքների վրա և արձագանքելով հայ ժողովրդի՝ բռնի ուժով բաժանված երկու հատվածների վերամիավորման օրինական ձգտմանը, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը որոշում են.

1. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ինքնորոշման փաստը՝ հաստատված ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի և հուլիսի 12-ի նստաշրջանների, ինչպես նաև մարզի բնակչության լիազոր ներկայացուցիչների 1989 թվականի օգոստոսի 16-ի համագումարի և Ազգային խորհրդի հոկտեմբերի 19-ի նիստի որոշումներով:

2. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը հռչակում են Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը: Լեռնային Ղարաբաղի

---

<sup>522</sup> Բագրատ Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 130:

բնակչության վրա տարածվում են Հայկական ԽՍՀ քաղաքացիության իրավունքները:

3. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը ստեղծում են համատեղ հանձնաժողով (իր աշխատանքային ապարատով)՝ Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորումն իրագործելու ուղղությամբ գործնական քայլեր մշակելու համար:

4. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը պարտավորվում են ներկայացնել Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության ազգային շահերը:

5. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահությանը, Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին և ԼՂԻՄ Ազգային խորհրդի Նախագահությանը հանձնարարվում է գործադրել սույն որոշումից բխող բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ իրականացնելու համար Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի քաղաքական, տնտեսական և մշակութային կառուցվածքների իրական միաձուլումը միասնական պետական-քաղաքական համակարգում:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ՝ Հ. Ոսկանյան

Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի նախագահ՝ Վ. Գրիգորյան

1 դեկտեմբերի, 1989, Երևան<sup>523</sup>:

Որոշումը հրապարակվելուց հետո Բաքուն իրար է խառնվել: Ադրբեջանի պարագլուխները դեկտեմբերի 6-ին ընդունել են հակահայկական մի կոչ, թե Հայկական ԽՍՀ-ի Գերագույն խորհրդի և Արցախի Ազգային խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 1-ի վճիռը հանդիսանում է ԽՍՀՄ և Ադրբեջանական ԽՍՀ սահմանադրությունների խախտում և «իրավական որևէ ուժ չունեցող»: Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի որոշումը հայ ժողովրդի երկու հատ-

<sup>523</sup> Սովետական Հայաստան, թ. 280, 03. 12. 1989:

վածների միավորումը գնահատեց որպես «ինքնիշխան Ադրբեջանական ԽՍՀ գործերին անթույլատրելի միջամտություն, նրա տարածքի ամբողջականությանը ոտնձգություն, գործողություն, որը չի նպաստում տարածաշրջանում իրավիճակի ամրացմանը, բնականոն հարաբերությունների վերականգնմանը»<sup>524</sup>:

Իսկ հայերի սփյուռքը ցնծությամբ ընդունեց Լեռնային Ղարաբաղի Հայաստանի հետ վերամիավորման փաստը: Մեր հանրապետության վերադաս մարմիններում ստացել են հազարավոր նամակհեռագրեր, որոնց հեղինակներն իրենց գոհունակությունն էին հայտնում պատմական այդ իրադարձության առթիվ: Ամեն տեղ հանրահավաքներ ու ժողովներ էին հրավիրվում ուր ջերմորեն և դրականորեն գնահատում համատեղ որոշումը: Այդ իսկ երևույթը հաստատեց նստաշրջանի աշխատանքները վերլուծող «Խորհրդային Հայաստան» թերթը<sup>525</sup>:

Լեռնային Ղարաբաղի և Խորհրդային Հայաստանի վերամիավորման որոշումն ընդունելուց հետո անհրաժեշտ էր արագ իրագործել հաստատված գործընթացը: Սույն իրադարձություններից մեկ ամիս անց՝ 1990 թ. հունվարի 9-ին, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ նիստում քննարկվել է ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման 1990 թվականի պետական պլանը և բյուջեն: Քննարկումների ժամանակ լսվեց նաև ԼՂԻՄ-ի Պլանտնտեսության գլխավոր վարչության պետ Ս. Սեդրակյանի հաղորդումը: Համատեղ նիստը որոշեց Հայկական ԽՍՀ պետական պլանի և բյուջեի մեջ մտցնել ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական պլանն ու բյուջեն: Հանրապետության Պետպլանին և Ֆինանսների նախարարությանը հանձնարարվեց ԼՂԻՄ-ի Պլանտնտեսության և Ֆինանսների վարչությունների հետ միասին՝ միութենական համապատասխան մարմինների մասնակցությամբ, մշակել ընդունված որոշման իրագործման մեխանիզմը<sup>526</sup>:

---

<sup>524</sup> Бакинский рабочий, 6. 12. 1989.

<sup>525</sup> Խորհրդային Հայաստան, թ. 286, 10. 12. 1989.

<sup>526</sup> Նույն տեղում, թ. 8, 10. 01. 1990.

Աշխատանքներն ընթանում էր թափով: Սակայն հունվարի 13-ին մամուլում հրապարակվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Մ. Գորբաչովի հունվարի 10-ին ստորագրած որոշումը՝ «1989 թվականի դեկտեմբերի 1-ին և 1990 թվականի հունվարի 9-ին Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընդունած ակտերը ԽՍՀՄ Սահմանադրությանը չհամապատասխանելու մասին»<sup>527</sup>: Այդ վավերագրով չեղարկվեց Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշումները վերամիավորման և ընդհանուր պետական պլանի մասին: Նախ, ինքը՝ Մ. Գորբաչովը, 1989 թ. նոյեմբերի 28-ին կատարել է սահմանադրության կոպիտ խախտում՝ ընդունելով «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին» որոշում: Հետո՝ այդ ակտով իրադրությունը ոչ թե նորմալացվեց Լեռնային Ղարաբաղում, այլ, հակառակը, երկրամասը ներքաշվեց պատերազմի մեջ: Եվ այդ ամոթալի խարանը երբեք չի ջնջվի ԽՍՀՄ պետության դեմքից:

1989 թ. դեկտեմբերի 1-ի որոշումից բխում է Լեռնային Ղարաբաղում ՀԽՍՀ Գերագույն խորհրդի մոտակա ընտրություններ անցկացնելու անհրաժեշտությունը: Հետևաբար, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) Արցախում ստեղծեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունների հինգ ընտրատարածք, որոնցից չորսում, բացի Շուշիից, 1990 թ. մայիսի 20-ին տեղի ունեցան ընտրություններ և առաջին անգամ Արցախը ունեցել է Հայաստանի ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորներ: Նրանք էին Սեթ Սարգսյանը, Գևորգ Պետրոսյանը, Համլետ Գրիգորյանը, Էդուարդ Ղուկասյանը, Վահրամ Աթանեսյանը, Սլավիկ Առուշանյանը, Մանֆրեդ Բախշյանը, Ռազմիկ Դանիելյանը, Գրիշա Բաղյանը, Վիգեն Շիրինյանը և Զավեն Իշխանյանը:

Նրանցից բացի, Չարենցավանի 143-րդ ընտրատարածքում պատգամավոր ընտրվեց բանտում գտնվող Արկադի Մանուչարովը, իսկ Կիրովականի 199-րդ ընտրատարածքում՝ Ռոբերտ Քո-

<sup>527</sup> Խորհրդային Հայաստան, թ. 11, 13. 01. 1990.

չարյանը: Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորները ընտրվեցին նաև արցախյան շարժման նվիրյալներ Վլադիմիր Աղաջանյանը, Ռազմիկ Պետրոսյանը և Ռուես Աղաջանյանը: Բոլորը՝ 16 հոգի: Ցավոք, այդ ժամանակ Շահումյանում ու Գետաշենում ընտրություններ չնշանակվեց: Իսկ երբ մշակվում էր Հայաստանի անկախության մասին Հռչակագիրը, նրանում անհրաժեշտաբար ամրագրվել 1989 թ. դեկտեմբերի 1-ի որոշումը՝ որպես Հայաստանի անկախության իրավական հիմքերից մեկը:

Այսպիսով, 1989 թ. դեկտեմբերի 1-ին Լեռնային Ղարաբաղի Խորհրդային Հայաստանին վերամիավորումը իրականացվել է օրենքների սահմաններում ու ԽՍՀՄ իշխանությունների կողմից այն հետագայում կասեցնելուց անկախ:

\*

\* \*

Վերոնշյալ վերնագրի տակ այսուհետև զետեղված նյութերը պատահական չեն: Ստորև ներկայացվող հասարակական-քաղաքական բոլոր կազմակերպությունները սերտ կապ են ունեցել Ղարաբաղյան շարժման հետ և հնարավորինս օժանդակել արցախահայության պայքարին:

1988–1990 թթ. իրադարձությունները շարժեց հասարակությանը: Ասպարեզ եկան բազմաթիվ անձինք, որոնք ձգտում էին քաղաքական կուսակցություն կամ հասարակական կազմակերպություն ստեղծել: Նրանք ծրագրեր էին կազմում, կանոնադրությունների նախագծեր մշակում, ժողովներ հրավիրում ու կողմնակիցներ հավաքում: Մի խոսքով, հանրապետության հասարակական և քաղաքական կյանքում աշխուժություն էր տիրում, որոնց մասնակիցները ընդունակություններով և հայացքներով տարբեր մարդիկ էին, նրանց շարքերում կային և այլախոհներ:

Մեր ազգի առաջ դրած նպատակներին հասնելու համար անհրաժեշտ էր ժողովրդական ուժերի միավորում: Սակայն հասարակական փոփոխությունների և նոր հնարավորությունների հետ

միասին ձևավորվում էին տարբեր ցանկություններ և միտումներ: Նրանցից մի մասը կարող էր օգտագործել Արցախյան շարժումը բոլորովին այլ մտադրություններով: Օրինակ, մամուլի մի հրապարակումից իմանում ենք, որ ներկայումս աշխարհում կան 30 հազար հայկական տարբեր բնույթի կազմակերպություններ: Սակայն ազգապահպան կամ քաղաքական որևէ փոփոխություն իրագործելու համար մեզ պետք է ոչ միայն ունենալ միասնական նպատակ, այլև տարբեր ձգտումների ճիշտ համադրումը՝ գերակայությունների հստակ համակարգը:

Ղարաբաղյան պայքարի նորաստեղծ ուժը՝ «Ղարաբաղ» կոմիտեն, կարգավորված ծրագիր և կանոնադրություն չունեի, սակայն հանրահավաքներում ու ժողովներում նրա անդամների արտահայտված մտքերը մոտալուտ ծրագրի համար հիմք էին հանդիսանում: Նոր ձևավորված քաղաքական այդ ուժի, որն արագ աճում էր, Արցախի պաշտպանության կողքին կարևոր նպատակ էր դարձել իշխող Կոմունիստական կուսակցության բռնատիրության վերացումը: Իսկ ԽՍՀՄ-ի պայմաններում մեծաթիվ հայերի անպաշտպան վիճակը էլ ավելի էր հարկադրում ազատագրական պայքարի օրակարգում ներառել անկախության հռչակումը:

Նկատենք, որ անկախությունը չէր մեծացնում Հայաստանի և Արցախի անվտանգությունը և չէր երաշխավորում բարօրությունը՝ աշխարհում կարիքավոր, հետամնաց շատ պետություններ կան: Սակայն անկախությունը արձակում էր մեր նախաձեռնությունը, տալիս էր ոչ թե երաշխիք, այլ ազատություն ու հնարավորություն:

Մեզ մոտ դեռ 1950–60-ական թվականներից գոյություն ուներ այլախոհություն: Այդ մասին ծավալուն նյութեր են հրապարակվել<sup>528</sup>: Ինչպես հայտնի է, 1968 թ. նոյեմբերին դատապարտվել են «Հայ հայրենակցական միություն» կազմակերպության անդամները: Նույն 1960-ական թթ. կեսերին Հայաստանում գործել է «Ազ-

---

<sup>528</sup> Ա. Վիրաբյան, Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, հասարակական-քաղաքական կյանքը (1945–1957 թթ.), Եր., 2001, Արմենակ Մանուկյան, Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950–1988 թթ., Եր., 2015 և այլն:

գային միացյալ կուսակցությունը», որը էապես ազդել է ՀԽՍՀ-ում գործող գրեթե բոլոր այլախոհների վրա: 1969 թ. ձևավորվել է մի նոր խմբակ՝ «Հայաստանի վերամիավորման միություն» (ՀՎՄ) անունով<sup>529</sup>: Նախկին այլախոհական, 1988 թ. մարտի 25-ից «Ազգային ինքնորոշման միության» հիմնադիր հանդիսացող Պարույր Հայրիկյանի նկատմամբ քրեական գործ է հարուցվել, նա ձերբակալվել և արտաքսվել է Միությունից:

Սակայն ցանկացած այլ՝ համեմատաբար վտիտ և նվազ կարևոր հոսանքի կողքին, Արցախը մայր Հայաստանի հետ վերամիավորվելու խնդիրը եղել է բոլորին միավորող հիմքը, ժամանակի այն հրամայականը, որի ազգային և պատմական կարևորությունը հասկանում էր ամբողջ հասարակությունը՝ անխտիր: Միացման համար պայքարը համախմբեց ողջ հայությանը: Առանց դրա անհնարին էր Արցախի ազատությունը: Ժամանակին գրել ենք. «Արցախյան շարժմանը սատար կանգնել՝ նշանակում է ամուր կապվել ազգային խոր արմատների և մեր ժամանակների աշխարհաքաղաքական իրադարձությունների հետ... Եվ քանի որ Ղարաբաղը միայն հիմնահարց չէ, այլ նաև ճակատագիր ու գոյության խնդիր, ուստի անհրաժեշտ էր հաղթական ավարտին հասցնել հայության գոյապայքարը»<sup>530</sup>: Այսպես որ մեր վերլուծվող տարիներին իրար հետևից ծնվող հասարակական-քաղաքական բոլոր կազմակերպությունների ծրագրերում կարևոր տեղ ունեւր Արցախի հիմնախնդիրը:

Ժողովրդավարության համար շատ կարևոր է քաղաքական և հասարակական ուժերի ազատ գործունեությունը, ինչը նշանակում է հաստատել վստահություն վայելող իշխանություն, չտոնահարել փոքրամասնության իրավունքներն, ունենալ ազատ և արդար ընտրություններ, հավասարություն օրենքի առջև և օրենքի գերակայություն, ազատ և արդար դատարանի առկայություն, իշխանության թևերի տարանջատում և փոխադարձ վերահսկողություն, քաղաքական բազմակարծություն, հանդուրժողականություն: Անկասկած,

<sup>529</sup> Ա. Մանուկյան, նշվ. աշխ., էջ 41, 43, 60, 83:

<sup>530</sup> Հ. Աբրահամյան, Մարտնչող Արցախը 1917–2000, գիրք Գ, էջ 561:

այդ ամենը խթացնում է մարդկային գործոնը: Կարևոր է նաև քաղաքական ընդդիմության առկայությունը, ուշադրությունը հասարակական կարծիքի հանդեպ, հրապարակայնությունը: Չի լինում ժողովրդավարություն առանց ազատության, իսկ ազատությունը առանց ժողովրդավարության վերացվում է քաոսի<sup>531</sup>:

Հայտնի է, որ խորհրդային տարիներին հիմնականում բացակայում էր բազմակուսակցական համակարգը: Այն գործնականում հաստատվել է 1988-1989 թթ.՝ ի դեմս ՀԿԿ-ի և ՀՀՇ-ի: Ինչ վերաբերում է իրավաբանության, ապա մեր քննարկվող համակարգի հիմք է դրվել ավելի ուշ՝ 1991 թ. փետրվարի 26-ին, երբ ընդունվեց «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքը: Հնարավոր է պնդել, թե Հայաստանում բազմակուսակցական համակարգը վերջնականապես հաստատվեց 1995 թ. ընդունված Սահմանադրությամբ: Եվ պատահական չէ, որ մեզ մոտ քաղաքական կուսակցությունների մեծամասնությունը քաղաքական ասպարեզ են իջել 1980-ական թվականների վերջին և 1990-ականների սկզբներին<sup>532</sup>:

\*  
\* \*

Մեր վերլուծվող ժամանակաշրջանում Հայաստանում գործում էր ՀԿԿ (Հայաստանի Կոմունիստական կուսակցություն): Իր պատմության ողջ ընթացքում կրթության, մշակույթի, արդյունաբերության, քաղաքաշինության, ճանապարհների և փոխադրամիջոցների, բժիշկության աննախադեպ զարգացումը միաձուլվեց գյուղի քայքայման, բռնապետությանը հատուկ խիստ հսկողության ու գրաքննության, մեկ ուսմունքի ձանձրալի քարոզի, 1937 թ. զանգվածային սպանությունների ու հետագա աքսորի հետ: Ճիշտ է, մեր

---

<sup>531</sup> Ավելի մանրամասն՝ Հենրիկ Աբրահամյան, Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, Եր., 2002, էջ 7:

<sup>532</sup> Գ. Քեոյան, Հայաստանի Երրորդ հանրապետության կուսակցական համակարգը և քաղաքական կուսակցությունները, Եր., 1996, էջ 15:



հետամնաց երկրամասը վեր էր ածվել սեփական պետական աշխատակազմ ունեցող զարգացած ինքնավարության: Սակայն դրան հասել ենք մեծ զոհաբերություններով և մարդու իրավունքների կոպիտ խախտումներով: Իրականում ՀՄԽՀ բնակչությունը զրրկված էր քաղաքական ու պետական ազատություններից:

1970–80-ական թթ. ՀԿԿ ղեկավարները՝ ոչ ասօրվա չափերով, համենայն դեպս գործում էին կրկնակի հաշվապահության ու վարվելաձևի պայմաններում: Պատահական չէ, որ շարքային կոմունիստներից, սկզբնական կազմակերպություններից սկսած մինչև նրա ղեկավար օղակը, շատերը եռանդով լծվել էին Արցախի պաշտպանության վտանգավոր գործին ու կենտրոնական իշխանությունների վարքից հիասթափված լինելով՝ հրաժարվեցին կուսակցական տոմսերից: Այսպես, Լեռնյախն Ղարաբաղի ԿԿ անդամների 90 տոկոսից ավելին՝ շարժման առաջին իսկ օրերից կանգնած էին ազատագրական պայքարի դիրքերում:

1988 թ. մարտ ամսին 285 սկզբնական կազմակերպության շուրջ 8000 անդամներից 7260-ը ստորագրել էին կուսակցության մարզկոմի արտահերթ պլենում հրավիրելու և մարզը Հայաստանի հետ վերամիավորելու համար ներկայացված պահանջի տակ<sup>533</sup>: Ի դեպ, Հայաստանում կոմունիստների զգալի մասը չէին հրաժարվում իրենց անդամությունից, թեև այդ նույն ժամանակ հազարավոր մարդիկ Թատերական հրապարակում վառում էին իրենց կուսակցական տոմսը:

Ընդհանուր գնահատականը ձևավորելիս պարտական ենք նշել չորս առանձնահատկություն: 1) Արցախյան շարժման մեծ առավելությունն ու նորությունը եղել է նրա զարգացումը պետական մարմինների միջոցով: Իսկ վերջինների կազմը՝ ընդհանուր դրվածքին համաձայն, ՀԿԿ անդամներ էին: 2) Ազատագրական պայքարին մասնակցում էին շարքային կոմունիստները որոնց հետևում էր, այլ ոչ թե առաջնորդում իրենց ղեկավարությունը: 3) Վերջինը գործունակ չէր առանց հասարակության մշտական ճնշման: 4) Ու, վերջապես, մարքսիստական տեսության համաձայն ու կենտրոնի

<sup>533</sup> В. Б. Арутюнян, նշվ. աշխ., մաս I, էջ 76:

հետևողական քաղաքականության շնորհիվ Հայաստանում առաջացել էր հեղափոխական իրավիճակ: Այն է՝ հիմնական հակասությունը ծավալվում էր ոչ թե ղեկավարության և ստորադաս զանգվածի միջև, այլ իշխող՝ կոմունիստական վերնախավի վերին և ստորին շերտերի միջև: Վերին շերտը ներկայացնում էր կենտրոնն ու որոշ չափով հանրապետության կուսակցական ղեկավարները: Իսկ ստորինը մարմնավորում էր ՀԽՍՀ կուսակցական զանգվածն ու որոշ չափ՝ նրանց ղեկավարները:

\*  
\* \*

Կոմունիստական կուսակցության ու «Ղարաբաղ» կոմիտեի կողքին հանրապետությունում գործող ակտիվ քաղաքական ուժերից էր Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՀԴ), որը ունի գործունեության ավելի քան 100 տարվա պատմություն: Մեր ազգային այդ կուսակցությունը մշտապես եղել է հայ ժողովրդի հետ, թեև առաջին Հանրապետության տարիներին ունեցել է Արցախը ռուս բոլշևիկներին հանձնելու դիպված, 1920 թ. թուրք-հայկական պատերուզմում կրած ծանր պարտություն՝ որի, ինչպես և միակողմանի քաղաքականության հետևանքով, Թուրքիային է հանձնել Արևելյան Հայաստանի կեսը: Նորագույն ժամանակաշրջանում՝ արցախյան պայքարի հենց սկզբից, ՀՀԴ զգալի աշխատանք է կատարել սփյուռքում, իսկ 1989 թ. սեպտեմբերի կեսից մինչև 1990 թ. ապրիլի 16-ը՝ նաև հայրենիքում:

Օրինակ, 1988 թ. սեպտեմբերին հայ ավանդական մյուս կուսակցությունների հետ հանդես գալով համատեղ հայտարարությամբ՝ Երևանի ցուցարարներից պահանջում էին դադարեցնել գործադուլներն ու հանրահավաքները: Քաղաքական այդ կուսակցությունները՝ դաշնակցություն, ռամկավարներ և հնչակյաններ համոզված էին, որ Արցախի հարցը կարող է լուծել Մոսկվան, մինչդեռ դրանում սխալվում էին:

Այդ հայտարարության համար Երևանում նրանց մեղադրում էին դավաճանության մեջ: Եվ դա եղել է մի ժամանակաշրջանում, երբ հանրապետության կոմունիստական իշխանությունը արդեն արժեզրկված էր: Դրանից փորձում էր օգտվել ՀՀԴ-ն, նա իրեն համարում էր «միակ հոսանք», որը աշխարհը ցնցած Հայաստանում՝ Ղարաբաղյան շարժման կողքին, իրեն անտեղի գովում էր որպես «ազգային ռազմավարության ընդհանուր սկզբունքներ, եւ ազգային-քաղաքական ուղեգիծ, եւ գաղափարական աշխարհայացք, եւ կազմակերպական փորձառութիւն եւ մանավանդ՝ ազգային-ազատագրական պայքարի հարուստ կենսափորձ» ունեցող իբր միակ տարրը:

Ժողովրդական հզոր ու կազմակերպված շարժումից և Հայրենիքում գործող հմուտ ազգային պետական համակարգից սովորելու փոխարեն, կուսակցությունը գալիս էր ժամանակից ու պայմաններից կտրված դասեր տալու, քանի որ կարծում էր, թե վերոնշյալ հատկություններով առանձնանում է «հայ իրականութեան մէջ գործող բոլոր միա քաղաքական ուժերէն»<sup>534</sup>: Նրա սովորեցնելու այլ ոչ թե սովորելու նկրտումը արտահայտում էր գերազանց քաղաքական մտածողություն դրսևորող Հայերնիքի վրա վերևից նայելու միտումը, կուսակցության համար բնական իշխանատենչությունն ու հնաժողովին հանդիսացել է հիմնական վրիպումներից մեկը:

Այո, Հայաստանը դռներ էր բացում Հայ հեղափոխական դաշնակցության առաջ, որպեսզի նա մնա «մինչև հիմա և կշարունակվի հետագայում ևս»<sup>535</sup>: Այսպես, 1988 թ. օգոստոսի 8-ին Հունաստանում տեղի է ունեցել ՀՀԴ 24-րդ ընդհանուր ժողովը, ուր որոշվեց վերադառնալ «դեպի Երկիր»: 1989 թ. սեպտեմբերին՝ ժամանելով հայրենիք, դաշնակցությունը խիզախորեն մասնակցեց Արցախի ինքնապաշտպանության գործին: Երկու տարի անց, 1990 թվականին, նա բացահայտեց նաև իր կազմակերպչական ներկայությունը: Ի դեպ, Հայրենիք վերադարձած այդ կուսակցությունը

---

<sup>534</sup> Ազդակ, 20. 02. 1998, Բացառիկ, էջ 10:

<sup>535</sup> Նույն տեղում, էջ 7:

սկզբում վարում էր խիստ զգուշավոր քաղաքականություն՝ ձգտելով շարժումը պահել ազգային շրջանակներում:

Նրա գնահատականի համաձայն, Արցախի հարցը արդեն մտավ միջազգային քաղաքական-դիվանագիտական ոլորտը: Հետևաբար ՀԿԿ-ն սկսեց «լեզու գտնել» Ղարաբաղյան շարժման ղեկավարների հետ «և մօտենալ ժողովուրդի պահանջներին»<sup>536</sup>: Այդ ժամանակ դաշնակցությունը «դեպի Երկիր» հասկացության տակ նկատի ուներ զորավիճ լինել «հայրենի հայութեան ձգտումներուն եւ պահանջներուն, շարժումը հեռու պահել վտանգաւոր նախաձեռնութիւններէ, Հայաստանի և Արցախի տնտեսութեան հզօրացում, հայրենի արժանաւոր իշխանութեան ստեղծում, համահայկական զօրակցութիւն Արցախի Դատին»<sup>537</sup>: Հաշվի առնենք, որ «արժանավոր իշխանության» տակ հասկանում էին սեփական ղեկավարությունը, քանի որ կուսակցությունը իր հիմնական մրցակից է անվանել ոչ թե ռամկավարներին, այլ ՀՀԾ-ին:

Միաժամանակ, կապի մեջ լինելով Արցախի ազատագրական պայքարի ղեկավարների հետ, 1989 թ. աշնանից դաշնակցությունը նպաստում էր ինքնավար մարզում հայդուկային ցանցի ստեղծմանը: Այդ գործը տարվում էր ԼՂԻՄ-ի իշխանությունների հետ միասին և անաղմուկ: Այդ տարվա հուլիսին ՀՀԴ-ն հայտարարել ու հաստատել է, որ գտնվում էր Արցախում: Նա գտնում էր, թե «հնչած է ժամը համազգային միակամ պահանջատիրութեան, ոչ մէկ խուսափում արտօնելի է պատմական մոմենթի այդ պատասխանատուութենէն»<sup>538</sup>: Կուսակցությունը հայտարարեց, որ նվիրումով կպայքարի հայության իրավունքների պաշտպանության համար և չի հրաժարվի հետագա պատասխանատվությունից: 1990 թ. ամռանը և աշնանը, երբ Արցախի դրությունը բարդացավ, խորհրդրդային զինված ուժերի գործողությունների պայմաններում, մանավանդ Պոլյանիչկո-Սաֆոնով ռազմական բռնատիրության ժամա-

---

<sup>536</sup> Ազդակ, 20. 02. 1998, Բացառիկ, էջ 9:

<sup>537</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>538</sup> Նույն տեղում, էջ 11:

նակահատվածում, դաշնակցությունը ձգտում էր ամեն կերպ օգնել հերոսաբար մարտնչող արցախահայությանը:

ՀԽՍՀ ՊԱԿ-ի նախագահ Վ. Բաղամյանցը 1988 թ. հոկտեմբերի 27-ին ՀԿԿ ԿԿ ղեկավարին ուղարկած տեղեկանքի մեջ նշել է, որ հանրապետության տարածքում գաղտնի աշխատանքներ են տարվում դաշնակցության ղեկավար այրերի հետ: Նա հաղորդում է, թե ՀՀԴ անդամներ Գ. Մարուխյանը և Գ. Տասնապետյանը վստահեցնում են՝ իրենց կուսակցությունը ամեն ինչ կանի որպեսզի օգնի խորհրդային ղեկավարությանը ԼՂԻՄ-ի հիմնախնդիրը լուծելու համար: Միննույն ժամանակ նրանք հայտարարել են իրենց կազմակերպության ՀԿԿ ԿԿ սեպտեմբերյան պլենումի քաղաքական պլատֆորմը պաշտպանելու մասին ու խոստանում էին ազդել «Ազատություն» ռադիոկայանի վրա հակահայկական գաղափարական սուր հաղորդումներ չտալու համար<sup>539</sup>:

ՊԱԿ-ի նախագահը համոզված էր դաշնակցության ղեկավարների ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ Միացման պահանջը պաշտպանելու մեջ, ու գտնում, որ դա ԽՍՀՄ ներքին գործն է և այդ հարցում ցանկացած ծայրահեղություն ենթակա է դատապարտման: Ապա կարծիք է հայտնում, թե ԽՍՀՄ-ում վերակառուցման հաղթանակը նոր հնարավորություններ է բացում հիմնախնդրի քաղաքական լուծման համար: ՊԱԿ-ի գնահատականից ելնելով, դաշնակցությունը Արցախի հիմնախնդիրը կարևոր է համարում ոչ միայն Հայկական հարցը արդարացիորեն լուծելու տեսակետից, այլև նրա համար, որ այդ համալիր հարցի բաղադրիչ են հանդիսանում 1915 թ. Եղեռնը ճանաչելու սփյուռքահայության պահանջն ու ՀԽՍՀ-ում անկախ պետականության ձևավորումը<sup>540</sup>: Ահա թե ինչ ձգտումներով է ՀՀԴ-ն վերադարձավ Հայրենիք:

---

<sup>539</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 16, թ. 160–161:

<sup>540</sup> Նույն տեղում, թ. 162:

\*  
\* \* \*

Մեր հանրապետությունում վերակառուցման ժամանակ ձևակերպված առաջին քաղաքական կուսակցությունը հանդիսացել է «Սահմանադրական իրավունք միությունը» (ՍԻՄ), որը կազմակերպվել է 1989 թ. ապրիլի սկզբին: Այնուհետև, օգոստոս ամսին, հիմնադրվել է նրա տպագրական օրգան «Իրավունք» թերթը: Միությունն իր առաջ նպատակ է դրել նպաստել Հայաստանում անկախ իրավական, ժողովրդավարական պետության ստեղծմանը, որտեղ «իշխանությունը կպատկանի ազատ ընտրություններով ձևավորված ներկայացուցչական մարմնին, իսկ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները բաժանված կլինեն միմյանցից, ապահովված կլինեն Հայաստանի քաղաքացու իրավունքները, երաշխիքը և բնականոն պայմաններ կստեղծվեն ժողովրդի առջև ծառայած բազմաթիվ խնդիրների լուծման համար»<sup>541</sup>: Այդ հիմնադրույթներից ելնելով հնարավոր է պնդել, որ «Սահմանադրական իրավունք» միությունը ժողովրդավարական սկզբունքներով ստեղծած ազատ կազմակերպություն է: Նա ղեկավարվում է ընտրովի խորհրդի կողմից և իր կազմում ունի մասնագիտացված հանձնաժողովներ:

ՍԻՄ-ը իր ձևավորման առաջին օրերին արտահայտել է սկզբունքային վերաբերմունք համազգային շարժման նկատմամբ: Այդ հարցը քննարկվել է 1989 թ. օգոստոսի 4-ին և 18-ին տեղի ունեցած միության ընդհանուր ժողովներում, ուր ընդունվել է «ՍԻՄ-ի պաշտոնական տեսակետը Արցախի հարցի վերաբերյալ»: Միաժամանակ ժողովները ստեղծել են Արցախի հետ տնտեսական կապերի հանձնախումբ և որոշել ավելի լայն համագործակցել նույն

---

<sup>541</sup> Իրավունք, թ. 1, օգոստոս 1989: Ցավոք, ՍԻՄ նյութերը դեռ չի հանձնվել ՀԱԱ: Բացի այդ, միության ընթացիկ արխիվում կազմակերպության ստեղծման և նրան առնչվող որևէ արձանագրություն կամ այլ փաստաթուղթ չգտանք: Հաղորդվում է, թե իբր այդ ամենը նախկին նախագահ Հրանտ Խաչատրյանն իր հետ է տարել:

թվականի հուլիսի սկզբին Արցախում կազմավորված «Միացում» միության հետ:

ՍԻՄ-ի այդ ընդհանուր ժողովներում ընդգծվել է նաև, որ հայ ժողովրդի պայքարը հիմնված է միջազգային համաձայնագրերով հաստատված հետևյալ իրավունքների վրա՝ ա) ազգերի ազատ ինքնորոշման, բ) ազգերի միավորման և գ) զավթած տարածքների ազատագրման իրավունքի: Միությունը հայտարարեց, որ խորհրդրդային բանակը հայերին զրկում էր ինքնապաշտպանության միջոցներից, Արցախի վերամիավորումը խորհրդային Հայաստանի հետ չի բխում խորհրդային կայսրության շահերից, թեև դա ամբողջ հայ ազգի գոյատևման հիմնաքարն է: Բացի դրանից, ՍԻՄ-ը կանխատեսում էր թե մոտալուտ ժամանակներում ԽՍՀՄ-ում տեղի կունենա քաղաքական ու տնտեսական ճգնաժամ, որի արդյունքում բռնկվելու են ազգային ընդհարումներ և Ադրբեջանը ամեն կերպ ձգտելու է հայաթափել Արցախը, Ջանգեզուրը, Շահումյանի շրջանն ու Գետաշենը:

Այս դրույթներից ելնելով, ՍԻՄ-ը անհրաժեշտ էր համարում

– Արցախի միացմանը ուղղված քայլեր կատարել մոտակա ամիսներին, մինչև ընդհանուր ճգնաժամի սկսվելը:

– Անհապաղ զարգացնել ճանապարհային ցանցը, մասնավորապես կառուցել տրանսարցախյան խճուղի, ընդլայնել օդանավակայանը:

– Կառուցել մթերումներ ապահովող օբյեկտներ՝ ալրաղաց, սառնարաններ և այլն:

– Մշակել ինքնապաշտպանության պլան՝ ներգրավելով Հայաստանի և սփյուռքի ուժերը, ներառել ՀԽՍՀ ՆԳՆ միջոցները:

– Արցախի բոլոր ձեռնարկությունները դնել ՀԽՍՀ գերատեսչությունների ենթակայության տակ:

– ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանի որոշմամբ Արցախը հայտարարել ՀԽՍՀ անքակտելի մաս, դիմել այլ հանրապետությունների, երկրների և միջազգային կազմակերպություն-

ների՝ ճանաչելու այդ փաստը և Արցախում անցկացնել ՀԽՍՀ ԳԽ ընտրություններ<sup>542</sup>:

ՍԻՄ-ի կազմած քաղաքական այս փաստաթուղթը բխում էր հայ ժողովրդի ցանկություններից, թեև դրա իրականացումը դեռ հեռու էր: Սեպտեմբերի 1-ին իրավիրված ՍԻՄ-ի ընդհանուր ժողովում ընդունվեց «Հայտարարագիր Լեռնային Արցախի (Ղարաբաղի) մասին» ծրագրային նոր փաստաթուղթ, որը ՀԽՍՀ Գերագույն խորհուրդ ներկայացվեց որպես որոշման նախագիծ: Միևնույն ժամանակ որոշվեց Արցախի հարցում տեսակետները մերձեցնելու նպատակով հանդիպում կազմակերպել «Ղարաբաղ» կոմիտեի հետ: Այդ հանդիպումը տեղի ունեցավ սեպտեմբերի 12-ին, նրան մասնակցեցին կոմիտեից Դավիթ Վարդանյանը, Սամվել Գևորգյանը, Աշոտ Մանուչարյանը և Սամսոն Ղազարյանը, իսկ ՍԻՄ-ից՝ ամբողջ համակարգող խորհուրդն և միության մի շարք անդամներ: Սակայն երկու կողմերի հայացքների սկզբունքային տարբերությունների պատճառով ընդհանուր պլատֆորմը չմշակվեց<sup>543</sup>:

Երկու շաբաթ անց, սեպտեմբերի 24-ին, ՍԻՄ-ը ուղերձ հղեց Հայոց ազգային նախախորհրդարանին, աշխարհի մի շարք պետությունների խորհրդարաններին, միջազգային և հասարակական կազմակերպություններին, հորդորելով.

ա) պայմաններ ստեղծել Հայաստանում անկախ և ազատ պետականության վերականգնման նպատակով ժողովրդի ազատ կամքի դրսևորման համար և միջոցներ ձեռնարկել ԽՍՀՄ կառավարության՝ հայ ազգի միասնությունն ու տարածքային ամբողջականությունը խախտելու գործողությունների դեմ,

բ) նպաստել Լեռնային Ղարաբաղի փաստական վերամիավորմանը Հայաստանին,

գ) որոնել և ձեռնարկել միջոցներ՝ ԽՍՀՄ տարածքում հայ ազգի ցեղասպանությունը իսպառ կասեցնելու նպատակով,

դ) որոնել ու ձեռնարկել միջոցներ հայ ազգը դեկտեմբերի 7-ի երկրաշարժով, փախստականների առկայությամբ ու Հայկական

---

<sup>542</sup> Իրավունք, թ. 1, օգոստոս 1989:

<sup>543</sup> Նույն տեղում, թ. 2, սեպտեմբեր, 1989:



ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի շրջափակումով պայմանավորված ճգնաժամից դուրս բերելու նպատակով,

ե) որոնել ու ձեռնարկել միջոցներ խնդրո առարկան ՄԱԿ ներկայացնելու, քննարկելու ու նրան արդարացի և շուտափույթ լուծում տալու համար<sup>544</sup>:

1989 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ՍԻՄ-ը ակտիվ գործունեություն է ծավալել Արցախի և Խորհրդային Հայաստանի վերամիավորման ուղղությամբ: Իսկ դեկտեմբերի 1-ի ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ԼՂԻՄ Ազգային խորհրդի միացյալ նիստում ընդունված պատմական որոշումից հետո ՍԻՄ-ը անդադար նպաստում է վերամիավորմանն վերաբերող այդ որոշման կենսագործմանը:

\*  
\* \* \*

1990 թ. հունվարին Հայաստանում հավաքվել է երկու տասնյակից ավելի հասարակական-քաղաքական կազմակերպությունների խորհրդաժողովը ուր որոշվեց միավորել բոլոր հայ կազմակերպությունները ազգային խնդիրների շուրջ և ստեղծել Համահայկական ճակատ: ՍԻՄ-ը եռանդագին մասնակցել էր այդ ճակատի ստեղծմանը, թեև դրա ընթացքը խաթարվեց՝ նախաձեռնող մի շարք կազմակերպությունների հակառակ դիրքեր անցնելու հետևանքով<sup>545</sup>: Այնուհետև ՍԻՄ-ի, ԱԻՄ-ի, «Միացում» ընկերության, Հայոց ազգային բանակի և Հայ կանանց միաբանության անունից 1990 թ. փետրվարի 5-ին հրապարակվեց «Ուղերձ աշխարհի ժողովուրդներին», որն ավարտվեց հետևյալ հայտարարությամբ. «Մեր պայքարը... ուղղված է ազգային պետականության վերականգնմանը և ոչ թե որևէ այլ ժողովրդի դեմ:

Մենք ձգտում ենք իրավիճակի կայունացման և քաղաքական ճանապարհով մեր ազգային խնդիրների իրականացմանը:

---

<sup>544</sup> Իրավունք, թ. 2, սեպտեմբեր, 1989:

<sup>545</sup> Նույն տեղում, թ. 4, ապրիլ 1990:

Մենք դատապարտում ենք ազգային և անկախության պայքարի դեմ գործադրվող ցանկացած բռնություն և պատրաստ ենք հակահարված տալ յուրաքանչյուրին, ով ձեռք կբարձրացնի մեր սրբությունների վրա:

Մենք ողջունում ենք բոլոր նրանց, ովքեր աջակցություն են ցույց տալիս մեզ հանուն ազատ, անկախ և միացյալ Հայաստանի ստեղծմանը»<sup>546</sup>:

Մեկ ամիս ավելի ուշ՝ մարտի 3-ին, Թիֆլիսում կազմակերպվում է Անդրկովկասի հանրապետությունների ոչ պաշտոնական կազմակերպությունների ներկայացուցիչների հանդիպում, որին Հայաստանից մասնակցել են ՍԻՄ-ը և Ազգային ինքնորոշում միավորումը (ԱԻՄ): Ըստ որում առաջինից մասնակցում էին միութան նախագահ Հրանտ Խաչատրյանը և Կարեն Վարդանյանը, իսկ երկրորդից՝ Աշոտ Նազարյանը և Ասպրամ Նժդեհյանը: Այստեղ ընդունվել է ուղերձ աշխարհի ժողովուրդներին, որտեղ շեշտվել է, թե ներկա իրավիճակը պայմանավորված է 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրով ամրագրված Անդրկովկասի տարածքների հակաժողովրդական բաժանումով:

Դրա հետևանքով Հայաստանի պատմական տարածքները բաժանվեցին Ռուսաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի միջև: Ադրբեջանը առ այսօր օգտվում է այդ պայմանագրով տրված Նախիջևանին տնօրինելու հնարավորությունից, իսկ Ռուսաստանի ներկա քաղաքականությունը Անդրկովկասում բխում է նույն պայմանագրի դրույթներից: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 1-ի որոշումով Հայաստանին վերադարձվեց անցյալում Ադրբեջանին բռնակցված Արցախը՝ ԼՂԻՄ, Շահումյանի շրջան և Գետաշենի ենթաշրջան: Այդ որոշումով հայ ժողովուրդը, ելնելով միջազգային իրավունքից, հաստատեց իր ինքնիշխանությունը ազգային տարածքի նշված հատվածում: Նաև ասված է, որ հայ ժողովուրդը ձգտում է վերականգնել ազգային անկախ պետականությունը:

Հանդիպման ժամանակ ադրբեջանական կողմը պահանջեց սատեցնել տարածքային պահանջները, ճանաչել ներկա պետական

<sup>546</sup> Իրավունք, թ. 4, ապրիլ 1990:

սահմանները, ազգային փոքրամասնությունների իրավունքները, Անդրկովկասը հայտարարել միջուկազերծ գոտի, ստեղծել Կովկասի ազգերի և ժողովուրդների քաղաքական համալսարան, իսկ Վրաստանի պատվիրակությունը առաջարկեց սառեցնել բոլոր տարածքային վեճերը և միավորվել կայսրության դեմ պայքարում: Ադրբեջանի պատվիրակությունը նաև պնդեց, թե Արցախը փաստացի և իրավաբանորեն գտնվում էր Ադրբեջանի կազմում և իբր հանդիսանում էր նրա անքակտելի մասը:

Հայկական կողմը, բնականաբար, չընդունեց Համաձայնագրի նախագիծը, պնդելով որ Հայաստանի անկախության ճանապարհը անցնում է վերամիավորված Արցախով և որ իրենք պայքարում են վերականգնել ազգային պետականությունը: Հայերը նաև առաջարկել են ճանաչել վերամիավորված Հայաստանի ներկա կարգավիճակը, պայքարել 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագիրը բեկանելու համար<sup>547</sup>:

Մարտի 3-ի նիստում ՍԻՄ-ի նախագահ Հ. Խաչատրյանը ընթերցեց աշխարհի ժողովուրդներին հասցեագրած Ուղերձը՝ որպես ադրբեջանական կողմի ելույթների պատասխան: Այնտեղ ասված է կենտրոնի սադրիչ լինելու մասին, թեև անհնարին է ամեն ինչ բարդել նրա վրա: Սունգայիթում, Կիրովաբադում, Բաքվում կենտրոնը սադրիչ դեր է խաղացել, սակայն մեծ պատասխանատվություն են կրում ջարդերի անմիջական կատարողները: Կենտրոնը մեղավոր է Զվարթնոցում, Թիֆլիսում, Բաքվում տեղի ունեցածների համար: Հ. Խաչատրյանը շեշտեց, որ անկախությունը ոչ միայն քաղաքական հռչակագիր է, այլ ժողովրդի կողմից իր պատմական տարածքում պետական ինքնիշխանության հաստատում: Ուղերձի վերջում մի անգամ ևս շեշտված է, որ Հայաստանի անկախության ուղին անցնում է վերամիավորված Արցախով<sup>548</sup>:

---

<sup>547</sup> Իրավունք, թ. 4, ապրիլ 1990:

<sup>548</sup> Նույն տեղում: 1990 թ. հուլիսի 21–22-ին Թիֆլիսում տեղի է ունեցել Խորհրդային Միության ազգային-ազատագրական կազմակերպությունների կոնֆերանս, որին մասնակցեցին Վրաստանի, Հայաստանի, Ուկրաինայի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Թաթարստանի և

ՍԻՄ-ը կարևոր մասնակցություն է ունեցել նաև 1990 թ. մայիսի 20-ի ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններում, որտեղ նկատելի հաջողության են հասել ազգային-ազատագրական կազմակերպությունները՝ օրինակ փայլուն հաղթանակ է տարել Հրանտ Խաչատրյանը: Նրա կողքին նույն արդյունք են ստացել Պարույր Հայրիկյանը (ԱԻՄ), Իգոր Մուրադյանը («Միացում»), Մեխակ Գրիգորյանը (Հայաստանի Ազգային Անկախության կուսակցություն-ՀԱԱԿ), Ազատ Արշակյանը (Քրիստոնյա-ժողովրդական կուսակցություն-ՔԺԿ), Աշոտ Նավասարդյանը (Հանրապետական կուսակցություն), իսկ Հայոց համազգային շարժումը նվաճել է մի քանի տասնյակ պատգամավորական մանդատ<sup>549</sup>:

Ընտրություններից հետո՝ 1990 թ. հուլիսին հավաքված ՍԻՄ-ի տարեկան կոնֆերանսում քննարկվել են Արցախի հիմնախնդիրը, իրավիճակը Հայաստանում, ԽՍՀՄ-ում, աշխարհում, սփյուռքում և այլն: Մասնակիցները շեշտել են, որ հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում տիրում էր անիշխանություն, տնտեսությունը կաթվածահար վիճակում էր, իսկ սահմանամերձ շրջաններում, որտեղ խորհրդային զորքը հաստատել էր ահաբեկչական դրություն, ծավալվում էին մարտեր ադրբեջանական զինված ջոկատների դեմ: Այս տեսակետից առավել ուշադրություն էին պահանջում Արցախը, Սյունիքը և հյուսիս-արևելյան շրջանները:

Խորացող ճգնաժամից դուրս գալու ճանապարհը ՍԻՄ-ը տեսնում էր ուժեղ օրենսդիր և գործադիր իշխանություններ ստեղծելու միջոցով հայկական պետական կառուցվածքների զարգաց-

---

Ղրիմի թաթարների ներկայացուցիչները: Այդտեղ բանաձևե են ընդունել Խորհրդային հանրապետությունների ինքնուրույնության մասին, Բանաձև Մերձբալթյան երկրների խորհրդային ռազմագրավման դեմ պայքարին սատարելու մասին և Թբիլիսյան կոչ խորհրդային կայսրության ժողովուրդներին: Մասնակիցները միացել են նաև Գաղութացված երկրներին ու ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին Հռչակագրին (ընդունել է ՄԱԿ-ի Գլխավոր համաժողովը 1960 թ. դեկտեմբերի 14-ին) (նույն տեղում, թ. 7, 27. 09. 1990):

<sup>549</sup> Իրավունք, թ. 6, 01. 08. 1990:

ման մեջ, նպատակամղելով այն անկախ պետականության ստեղծմանը: ՍԻՄ-ը մի անգամ ևս ընդգծեց, որ Ղարաբաղյան շարժումը հիմնված է ճանաչված նորմերի և իրավունքների վրա: Այն է. ազգի ինքնորոշման, նրա վերամիավորման և զավթված տարածքների ազատագրման: ՍԻՄ-ը շեշտում էր, որ իրավական տեսակետից 1921 թվականից Արցախի ընդգրկումը Ադրբեջանի կազմում հանդիսանում է բռնակցման ակտ<sup>550</sup>:

ՍԻՄ-ի կոնֆերանսը դատապարտեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի չեզոք դիրքորոշումը հանրապետության տարածքում արտակարգ դրություն մտցնելու կապակցությամբ և Արցախում ՀԽՍՀ ժողովրդական դեպուտատների ընտրություններին խոչընդոտելու համար: Իսկ Հյուսիսային Արցախում (Շահումյան-Գետաշեն) ընտրատարածքներ չստեղծելու ողջ պատասխանատվությունն ընկնում էր ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վրա: Կոնֆերանսը գտնում էր, որ տնտեսական վերամիավորումը պետք է ավարտվի Արցախի տնտեսական ամբողջացմամբ ՀԽՍՀ տնտեսական համակարգում, ինչը սակայն ընթանում էր դանդաղ և անհրաժեշտ ձևով չէր իրականացվում Հայաստանի կառավարության կողմից, իսկ արտակարգ դրություն մտցնելուց հետո Արցախի գործերը տնօրինում է Կրեմլը՝ իր դրածոների միջոցով: ՍԻՄ-ը գտնում էր, որ հանրապետական իշխանությունների կողմից իրական պաշտպանությունն ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել ազգային պետական զորամիավորումներ<sup>551</sup>:

\*

\* \* \*

1989–1990 թթ. հանրապետությունում քաղաքական գործունեություն է ծավալվել Համահայկական միացյալ ճակատ ստեղծելու համար: Վաղ ձևավորված քաղաքական ուժերից էր Ազգային

---

<sup>550</sup> Իրավունք, թ. 6, 01. 08. 1990:

<sup>551</sup> Նույն տեղում:

ինքնորոշում միավորումը (ԱԻՄ), որի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարն էր Պարույր Հայրիկյանը: Նա նաև Համահայկական միացյալ ճակատի օրգան «Անկախություն» շաբաթաթերթի հիմնադիրն էր, որի առաջին համարը լույս է տեսել դեռևս 1987 թ. հոկտեմբերի 24-ին: Թերթի ճակատին գրված է Եղիշե Չարենցի բառերը՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» և որպես նպատակ է հայտարարվել «Ազգային պետականության վերականգնումը, առաջնահերթ խնդիրը՝ Խորհրդային Հայաստանի անկախացումը հանրաքվեի միջոցով»<sup>552</sup>: «Անկախությունը» խմբագրել է ազատագրական պայքարի մարտիկ՝ Ռաֆայել Համբարձումյանը:

Նրա աշխատանքի շնորհիվ լույս է տեսել և Ազգային միասնության Ուխտի «Ազատ Հայք» պաշտոնաթերթը (1989 թ. մայիսից 1990 թ. հունիս): 1989 թ. նոյեմբերի 25-ին թերթում հրապարակված հայտարարության մեջ նշվել էր, որ Ուխտն ընդունում է ՀՀԴ ծրագիրն ու կանոնադրությունը, իրեն հռչակում է դաշնակցություն կուսակցությանը միավորված և հայտարարում այդ իրողության մասին: Սակայն քանի որ դաշնակցության բյուրոն մերժել էր Ուխտի խնդրանքը, անհրաժեշտություն դարձավ վերականգնել Ուխտն իր «Ազատ Հայք» թերթով, որի 27 համարը տպագրվել էր իբրև Ուխտի պաշտոնաթերթ: Միությունը ընթերցողին է հասցրել նաև «Հայրենիք» ազգային, քաղաքական, հրապարակախոսական եռամսյա հանդեսն, որը խմբագրել է Մովսես Գորգիսյանը:

«Ազատ Հայք» թերթում 1990 թ. ապրիլի 4-25-ի միացյալ համարում զետեղված «Թէ ինչպես Հայաստանում հռչակուեց դաշնակցութիւնը» նյութից իմանում ենք, որ ԱԻՄ-ի շարքերում հաճախակի էր տեղի ունենում վիճաբանություններ: ԱԻՄ-ը և այլ ուժեր ցանկություն ունեին համագործակցել ՀՀԴ-ի հետ, թեև միասնության բացակայությունը այդ հնարավորությունը չէր ընձեռում: Օրինակ, 1990 թ. ապրիլի 18-ին Կույրերի միության մշակույթի տանը տեղի ունեցած ժողովում մեծամասնությունը պաշտպանում են «Ազատ Հայքի» դիրքորոշումը:

<sup>552</sup> Անկախություն, թ. 1, 24. 10. 1987:

1989 թ. սեպտեմբերի վերջին ԱԻՄ-ը պառակտվեց: Խորհրդրդի անդամների փոքրամասնությունը (Գ. Մխիթարյան, Ռ. Համբարձումյան, Մ. Գաբրիելյան) շարունակեցին տպագրել «Անկախություն» թերթը Ազգային ինքնորոշում միավորման անունից: Ուերթ Մեխակ Գաբրիելյանը պնդում էր ստեղծել նոր կազմակերպություն, Ռ. Համբարձումյանը և Գ. Մխիթարյանը այդ առաջարկությունը բնորոշեցին որպես անիմաստ՝ չէ որ գոյություն ուներ 100-ամյա ՀՀԴ կուսակցությունը: Այնուհանդերձ՝ նոր ստեղծվելիք կուսակցության ծրագրի նախագիծը գրում է Ռ. Համբարձումյանը, որն ընթերցում են մոտ 300 հոգի և ներկայացնում իրենց դիտողությունները<sup>553</sup>:

1990 թ. հուլիսի վերջին ԱԻՄ-ը պառակտվում է երկրորդ անգամ: Մինչ այդ, 1989 թ. ապրիլի 24-ին տեղի ունեցած միության անդամների հավաքում հիմնվել էր Ազգային Միասնության Ուխտ (ԱՄՈ) կազմակերպությունը: Այսպիսով, Հայաստանում փաստորեն հիմնադրվում է ՀՀ դաշնակցության նման նոր կուսակցություն, որի ծրագիրը հրապարակվեց «Անկախություն» թերթի 1989 թ. թիվ 17 և «Ազատ Հայք» թիվ 1 համարներում: Այդ ծրագրում օգտագործվել է ՀՀ Դաշնակցության ծրագրից որոշ գաղափարներ: Միությունից հեռանում է Մեխակ Գաբրիելյանը:

Իր հերթին, 1989 թ. հուլիս ամսին ՀՀԴ բյուրոն հանդես է եկել հայտարարությամբ ու ընդգծեց, որ «Հնչած է ժամը Արցախյան շարժման հասունացման»: Արցախը վերամիավորելու պահանջով ոտքի կանգնած ժողովուրդը ամբողջ հայության ազգային-քաղաքական դրոշն է պարզել: ՀՀԴ «ողջունելով համահայկական պայքարի միացյալ ճակատ կազմելու ճիգերը, կը շեշտէ հայ ժողովուրդն ու անոր դատը իբրև մեկ անբաժանելի ամբողջություն տեսնելու, հայրենիքի ու տարագիր հայության բազմությունները իբրև միևնույն դատին պահանջատեր ընդունելու և հայ դատին պայքարը իբրև ամբողջ հայության անկատար տենչերուն խտա-

<sup>553</sup> Ազատ Հայք, թ. 12-15, 04-25. 04. 1989:

ցումը դավանելու հրամայականը: Արցախյան զարթոնքով հայ ժողովուրդը նվաճեց իր պայքարին միությունը»<sup>554</sup>:

ՀՀ Դ Կոչին արձագանքեցին բազմաթիվ քաղաքական և հասարակական կազմակերպություններ: Եվ Ազգային Միասնության Ուխտը ներգրավվում է ՀՀ դաշնակցության գաղափարների տարածմանը: Փարոս գյուղում ընդունվեց նրա Հռչակագիրն, որտեղ նշվեց, թե 1960-ական թվականների ազգային զարթոնքով և 1988 թ. փետրվարին սկսված Հայոց համազգային շարժումով Խորհրդային Հայաստանի ժողովուրդը վճռեց ԽՍՀՄ հայության և սփյուռքի հետ միասին տոնել անկախությունը որպես հայության անքակտելի իրավունքը: Ստեղծած Ազգային Միասնության Ուխտը նպատակ էր դրել միավորել ազատ և անկախ Հայաստանը վերականգնմանը միտված բոլոր ջանքերը: 1990 թ. մայիսի 7-ին Ուխտը կազմում է նախախորհրդարան և առաջարկում ընդունել ազատ, անկախ և Միացյալ Հայաստանի գաղափարը:

Քանի որ այստեղ ևս տարածայնություն կար, Ուխտը ստիպված էր հեռանալ: Նախախորհրդարանը կազմալուծումից փրկեց նրա ժամանակավոր նախագահ Ֆելիքս Սաֆարյանը: Մի քանի ամիս անց, երբ Ուխտի նախագահությունից հեռանում են Հայ Դատը և այլ ուժեր, այն կրկին մտնում է նախախորհրդարան: Այդ ժամանակաշրջանում Ուխտը ձգտում էր քաղաքական կուսակցությունների և այլ կազմակերպությունների մասնակցությամբ ստեղծել հայոց ազգային խորհրդարան: Ազգային Միասնության Ուխտի ներկայացուցիչներ Արցախ Բունիաթյանը, Աբրահամ Հովհաննիսյանը, Ռաֆայել Համբարձումյանը, Ռուբեն Մարտիրոսյանը, Գարեգին Մխիթարյանը, Ռուբեն Մնացականյանը և այլոք նախապատրաստվում էին հոկտեմբերին կայանալիք ընդհանուր ժողովում հստակեցնել ապագա գործունեության ծրագիրը:

Մինչ այդ, 1989 թ. դեկտեմբերի 16-ին, Կույրերի միավորման մշակույթի տանը տեղի ունեցած ՀՀԴ ընդլայնված հավաքը ընտրեց ութ հոգուց բաղկացած ՀՀԴ Երևանի ժամանակավոր կոմիտե: Դրա անդրանիկ նիստում որոշվել էր «Ազատ Հայք» շաբաթա-

<sup>554</sup> Հայաստան, թ. 4, 02. 08. 1989:



թերթը՝ թիվ 27-ից սկսած, ճանաչել որպես ՀՀ դաշնակցության Երևանի կոմիտեի պաշտոնաթերթ: Այդ նիստում հաստատվեց նաև ժամանակավոր կոմիտեի կանոնները<sup>555</sup>:

1990 թ. հունվարի 14-ին Կոյրերի միավորման մշակույթի տանը հավաքվեցին Հայաստանում գործող մի շարք քաղաքական, մշակութային կազմակերպությունների, բանվորական, ստեղծագործական ու այլ միությունների, հեռուստատեսության ներկայացուցիչների, Արցախի «Ամարաս» միության, Նոր Նախիջևանի Չալթըր գյուղի Անի ակումբի, Թիֆլիսի «Կանչ» միության, Ջավախքի հայկական միության գործող անդամներ և անհատ մարդիկ՝ մոտ 40 կազմակերպությունից ավելի քան 300 հոգի: Հասարակության ամենամեծ և ազդեցիկ Հայոց Համազգային Շարժումը՝ արաջին հեթին Արցախի հիմնախնդրով զբաղվելիս, նպատակահարմար չի համարել մասնակցել այդ ժողովին:

Վիրջինը բացեց «Սահմանադրական իրավունք» միության նախագահ Հրանտ Խաչատրյանը: Ելույթ են ունեցել 15 հոգի՝ Հայաստանի գրողների միությունից, Գիտությունների Ակադեմիայից, Երևանի Պետական համալսարանից, Զորավիգ, Վերածնունդ, Ազգային ճակատ, Սահմանադրական իրավունք, Հայոց Ազգային բանակ և այլ կազմակերպություններից: Այդ ժամանակ Ազատության հրապարակում ընթանում էր բազմամարդ հանրահավաք, որտեղ ՀՀՇ-ն հայտարարեց, որ եթե կառավարությունը չզբաղվի Շահումյանի և Գետաշենի հարցով, ապա ինքը կխլի իշխանությունը ու կտնօրինի ազգի ճակատագիրը<sup>556</sup>: Իսկապես որ ամբողջ ժողովրդի վստահությունը վայելող, նրա պայքարի հիմնական բեռը կրող, հասարակության ընդվզման իսկական շարժիչ ուժն ու ոգին՝ Հայոց Համազգային Շարժման այս հայտարարությունը, ինչպես և այլ հանգամանքներ արգելք հանդիսացան քաղաքական բոլորովին այլ նպատակներ հետապնդող և նրա արհեստական նմանակ՝ Համահայկական միացյալ ճակատի ստեղծմանը: Այնուհանդերձ,

---

<sup>555</sup> Ազատ Հայք, թ. 27, 03. 01. 1990:

<sup>556</sup> Նույն տեղում, թ. 29, 17. 01. 1990, էջ 66:

Միացյալ ճակատի խորհրդաժողովը հունվարի 16-ին ընդունեց Հռչակագիր: Ահա այն.

Հայ ժողովրդին պարտադրված պատերազմի և Հայաստանի քաղաքական ու տնտեսական ճգնաժամային իրադրության մեջ, 1990 թ. հունվարի 14–16-ին Հայաստանի և ԽՍՀՄ-ում գործող քաղաքական, հասարակական 34 կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդաժողովը նախաձեռնեց Համահայկական միացյալ ճակատի ստեղծումը՝ նպատակ ունենալով մասնակցել ազգի առջև ծառայած հետևյալ հրատապ խնդիրների լուծմանը.

ա) Համաժողովրդական ինքնապաշտպանության կազմակերպում

բ) Արցախի վերամիավորման ամրապնդում

գ) Աղետի գոտու վերականգնում:

Կոչ ենք անում մայր Հայրենիքի, խորհրդային և արտախորհրդային սփյուռքի ազգային բոլոր ուժերին ներգրավվել Համահայկական միացյալ ճակատ կազմելու գործում:

Ողջունելով ՀԽՍՀ կառավարության կողմից Արտակարգ ժողովի ստեղծման փաստը, Խորհրդաժողովը հույս է հայտնում, որ այն կվերաճի Ազգային պաշտպանության խորհրդի՝ պարտադիր կերպով իր մեջ ներառելով Հայրենիքի և Սփյուռքի քաղաքական ուժերի ներկայացուցիչներին: Այդպիսի մարմինը միայն կարող է արտահայտել բովանդակ հայության կամքը և պետականորեն կազմակերպել Հայաստանի Հանրապետության անհրաժեշտ պաշտպանությունը և ակնկալել աջակցություն:

16 հունվարի 1990 թ., Երևան<sup>557</sup>:

1990 թ. հունվարյան այդ լարված օրերին հայ ժողովրդի ուժերի միավորման և հանրապետության պաշտպանությանը սատար կանգնելու վերաբերյալ նման Հռչակագրի ընդունումը կարևոր արժեք ուներ, քանի որ այդ փաստաթղթով կոչ է արվում կազմակերպել համաժողովրդական ինքնապաշտպանություն: Հռչակագրի ընդունման պահին հանրապետությունում գործող 60 կազմակերպություններից 46-ը միացել էին համահայկական միացյալ

<sup>557</sup> Ազատ Հայք, թ. 29, 17. 01. 1990, էջ 68:

ճակատին, որոնցից 34-ը ստորագրել են Հռչակագիրը<sup>558</sup>: Փետրվարի 13-ին այդ կազմակերպություններից 15-ի ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծվեց պաշտպանության խորհուրդ, իսկ ամսի 19-ին ձևավորվում է աղետի գոտու և Արցախի վերամիավորման հանձնաժողովներ: Այդ նույն օրը հաստատվեց ճակատի քաղաքական բաժինը՝ 13 հոգուց բաղկացած:

Միաժամանակ, փետրվարի 13-15-ին գումարված ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի նստաշրջանում որոշվեց ապօրինի համարել Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի տխրահռչակ որոշումը: Նշենք նաև, որ այդ օրերին ՀՀԿ-ի անդամ Ռաֆայել Ղազարյանը ընտրվեց Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահի առաջին տեղակալ<sup>559</sup>: Փետրվարի 12-ին միացյալ ճակատի ընդունած հայտարարությունում դատապարտվեց Շահումյանում և Գետաշենում ադրբեջանական ու կենտրոնական իշխանությունների համատեղ ուժերով իրագործվող հայաթափությունը և հունվարի 13-19-ը Բաքվում հայերի նկատմամբ կատարված ցեղասպանությունը<sup>560</sup>, իսկ ազգային նախախորհրդարանի հունվարի 14-ի հայտարարության մեջ մերկացվեց Ադրբեջանի ժողճակատի և Մոսկվայի բռնարարքները<sup>561</sup>:

Փետրվարի 23-ին «Ազատ Հայքի» խմբագիր, Համահայկական ճակատի վարչության անդամ Ռ. Համբարձումյանը «Լրաբեր» ծրագրին տված հարցազրույցում ուղղում է մտցնում, որ միացյալ ճակատը կազմակերպություն չէ, այլ հանդիսանում է «տարբեր քաղաքական ուղեգծեր, ծրագրեր և կանոնագրեր ունեցող կազմակերպությունների դաշնություն»: Նա նշում է, որ այդ կազմակերպությունները միավորվել են լուծելու երեք հիմնական խնդիր՝

---

<sup>558</sup> Ազատ Հայք, թ. 33, 28. 02. 1990, էջ 103-104:

<sup>559</sup> Նույն տեղում, թ. 32, 21. 02. 1990, էջ 97:

<sup>560</sup> Նույն տեղում, էջ 97-98:

<sup>561</sup> Նույն տեղում, էջ 99:

«Արցախի վերամիավորման ամրապնդում, ինքնապաշտպանություն եւ աղետի գոտի»<sup>562</sup>:

Ռ. Համբարձումյանը շեշտեց. «Մեր հիմնահարցը Արցախի պաշտպանությունն է, որը դեմոկրատիայի համար ամենամեծ պայքարն է: Որովհետև եթե որևէ կազմակերպություն, կազմակերպությունների միություն կամ պետություն չի ընդունում Արցախի ինքնորոշման իրավունքը, այն չի կարող դեմոկրատիայի անունից խոսել»<sup>563</sup>: Ռ. Համբարձումյանը ընթերցում է նաև փետրվարի 21-ին միացյալ ճակատի ընդունած հայտարարությունը, այն պաշտպանում է այդ օրերին Խորհրդային Միության տարբեր քաղաքներում, այդ թվում և Մոսկվայում, նախատեսված զանգվածային ելույթների, հանրաժողովների և բողոքի ցույցերի անցկացումը:

Ռ. Համբարձումյանը մի անգամ ևս կրկնեց. թեև մեր ժողովուրդը սատարում է Ռուսաստանում ծավալվող իրադարձությունները, այդուհանդերձ, նրա «Հիմնական նպատակը Արցախն է: Մենք պետք է պահենք Արցախը և ինքնապաշտպանվենք: Սա ամենամեծ դեմոկրատիան է»<sup>564</sup>:

«Ազատ Հայքի» թիվ 33-ում հրապարակված Գևորգ Բարսեղյանի «Հայաստանն է Հայ Դատի հետապնդման կենտրոնը» վերտառությամբ հոդվածում հեղինակը նշում է, որ Ղարաբաղյան շարժման երկու տարիների ընթացքում մենք այնքան բան սովորեցինք, ինչ որ չկարողացանք սովորել անցած յոթանասուն տարիներին: Մենք սովորեցինք մտածել ազգովին, գործել ազգովին, ապրել ազգովին: Մենք սովորեցինք չհավատալ ոչ մի խոստումի, ոչ մի եղբայրության խոստովանանքի, ոչ մի դիվանագիտական ժպիտի կամ ժեստի: Մեր վերջնական նպատակը Հայկական հարցի, Հայ Դատի արդարացի լուծումն է: Հայությունը երբեք չի դադարեցրել իր պայքարը Հայրենիքի ազատագրման ու ամբողջացման համար: Արցախյան շարժումը այդ պայքարի շարունակությունն է:

---

<sup>562</sup> Ազատ Հայք, թ. 33, 28. 02. 1990, էջ 103:

<sup>563</sup> Նույն տեղում, էջ 104:

<sup>564</sup> Նույն տեղում, էջ 105:

Չընդունել դա, կնշանակի Արցախյան շարժումը կտրել հայ ժողովրդի հազարամյա պայքարից<sup>565</sup>:

Ստացվեց այնպես, որ այս պայքարում, իր կարծիքն է հայտնում Բարսեղյանը, դաշնակցությունը հանդես է գալիս որպես պահանջատեր, որից հեռու է Արցախի համար կռվող և ամբողջ ժողովուրդը մի բռունցք դարձած ՀՀԾ-ն: Նա նշում է, որ ազգը տնտեսության ու մշակույթի կողքին պետք է ունենա և պաշտպանունակություն: Հենց սրան հարկավոր է ուղղել հայ ժողովրդի անձնուրաց պայքարը<sup>566</sup>:

1990 թ. մարտի 21-ին Թատերական հրապարակում տեղի է ունենում Համահայկական ճակատի անդրանիկ հանրահավաքը, որին մասնակցել է մոտ 80 հազար մարդ: Ելույթ ունեցողներ Հ. Հակոբյանը և Լ. Խուրշուդյանը ներկայացրին հանրապետությունում տիրող իրադրությունը: Համաժողովի մասնակիցները հավանություն են տվել ճակատի առաջարկությանը՝ հետաձգել ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունները<sup>567</sup>: Նշենք, որ այդ պահին հանրապետությունում պայքար էր գնում ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների շուրջ: Միացյալ ճակատը մարտի 30-ին ընդունեց նախընտրական հայտարարություն, որը կազմել էր Ռաֆայել Համբարձումյանը:

Հեղինակն անհրաժեշտ համարեց լրացնել 1988 թ. նոյեմբերի 22-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդում ընդունված օրենքը՝ Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին: Նա առաջարկեց ավելի ընդգրկուն դարձնել ժամանակագրական հատվածն ու ճանաչել 1915–1923 թթ. հայերի ցեղասպանությունը, ապօրինի հայտարարել 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերը, ճանաչել 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի միջազգային դաշնագիրը, որից մեր առաջին Հանրապետությունը պաշտոնապես հրաժարվել էր ամիսներ անց՝ նույն թվականի նոյեմբերի 27-ին: Հռետորը ընդգծեց, որ

---

<sup>565</sup> Ազատ Հայք, թ. 33, 28. 02. 1990, էջ 105–106:

<sup>566</sup> Նույն տեղում, էջ 107:

<sup>567</sup> Նույն տեղում, թ. 36, 21. 03. 1990, էջ 125:

հայ ժողովուրդը պետք է ապավինի իր ուժերին և Հայաստանի Հանրապետության տարածքում որպես միակ պաշտոնական լեզու հարկավոր է ճանաչել հայերենը<sup>568</sup>:

Միացյալ ճակատի նիստերում հաճախակի էր քննարկվում հարցեր, որոնք առնչվում էին ողջ հասարակության կամ ճակատի որևէ կուսակցության հետ: Այդպես, 1990 թ. ապրիլի 16-ին Կույրերի միավորման մշակույթի տանը տեղի ունեցած Ազատ Հայքի ժողովում քննարկվեց Ազատ Հա՛յք, թե՛ Դաշնակցություն հարցը, որին ներկաների 40 հոգու մեծամասնությունը քվեարկեց Ազատ Հայքի օգտին: Այստեղ առաջարկություն կար նաև վերադառնալ Ուխտին: «Ազատ Հայք» թերթը 1989 թ. մայիսից լույս է տեսել որպես Ազգային Միասնության Ուխտի պաշտոնաթերթ, որը 27-րդ համարից դարձել է ՀՀԴ Երևանի կոմիտեի մարմին: Որպես այդպիսին, այն թողարկել է ընդամենը հինգ համար: Քանի որ Ուխտը վերականգնվում էր, ուստի, տրամաբանական է, որ նրա պաշտոնաթերթն էլ պետք է վերականգնվեր: Այսպիսով, հինգ ամիս գործելուց հետո ՀՀԴ Երևանի կոմիտեն լուծարվում է: Երկար չգոյատևեց նաև Ուխտը, որը իր աշխատանք է տարել 1989 թ. նոյեմբերի կեսերից:

\*  
\* \* \*

Գրանցված ու հատկապես տարածուն քաղաքական կուսակցությունն էր Հայոց Համազգային շարժումը (ՀՀՇ): «Ղարաբաղ» կոմիտեն կալանքից ազատ արձակվելուց հետո որոշեց ՀՀՇ-ն գրանցել: 1989 թ. նոյեմբերի 4-5-ին Երևանում հրավիրված ՀՀՇ առաջին համագումարում հաստատվել է շարժման ծրագիրը: Նրանում ասված է. «Դեռևս 1988 թ. օգոստոսին Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն անհրաժեշտ համարեց կազմակերպական ձև տալ համաժողովրդական շարժմանը և ձեռնարկեց Հայոց համազգային շարժում կազմակերպության ստեղծումը»:

---

<sup>568</sup> Ազատ Հայք, թ. 37, 28. 03. 1990, էջ 140:

«Ղարաբաղ» կոմիտեի անդամները բանտից ազատվելուց հետո որոշում են հատուկ ուշադրություն դարձնել նրա պաշտոնական, սահմանադրական ճանապարհին: ՀՀ-ականների նման մոտեցումը պաշտպանություն գտավ ՀՀ Դաշնակցության կողմից, որի պաշտոնաթերթ «Դրօշակի» 1989 թ. հուլիսի 5-ին հրապարակված Գ. Պելեյանի «Հայրենի ժողովրդային շարժումին հետագայ ուղին» վերտառությամբ հոդվածում նշված է, թե «Հայաստանը այն հանրապետությունն է, որի համայնական կուսակցությունը իր կողքին ճանաչեց ՀՀ-ի գոյությունը» և որ ՀՀ-ն «վերադառնալով Արցախյան պահանջատիրության կազմակերպական բնույթ տալու հարցին», այն «փաստորեն իր լրումին կհասցնե շարժումի առաջին ինքնահաստատման հանգրվանը»<sup>569</sup>:

Անցած մեկուկես տարին, շարունակում է պաշտոնաթերթը, ցույց տվեց, որ Ղարաբաղ Կոմիտեն և որոշ անհատներ հաջողությամբ իրականացնում են «ժողովրդային ղեկավարությունը»: Նրանք «փաստեցին, որ կարող են ստանձնել պահանջատիրական ղեկավարությունը»: Պաշտոնաթերթը համոզված էր, որ կոմիտեականների «հանդեպ համազգային զորակցությունը կարելի էրաշխիք մըն էր, որպեսզի անոնք մնային Շարժումին պարագլուխները»: Այդ նշանակում էր, որ կոմիտեի ղեկավարությունը պետք է ցուցաբերեր ճկունություն և չափի զգացում, «գաղափարական անսասան համոզություն, դիմացկունություն և կարևորագույնը՝ կազմակերպական բացառիկ կիրքեր, տաղանդ»: Գ. Պելեյանը հույս էր հայտնում, թե «Շարժման այժմյան ղեկավարությունը կարող է գտնվել պատմական բարձրության վրա»<sup>570</sup>:

Սրանից քիչ առաջ՝ 1989 թ. հունիսի 17-ին, տեղի ունեցած Հայաստանի հասարակական կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչների հիմնադիր ժողովը ընդունեց մի Հռչակագիր, որտեղ նշվում էր Հայոց համազգային շարժում հասարակական միության ստեղծման մասին: Հռչակագրում մասնավորապես ասված է, որ հիմնվելով մարդու ազատության, ազգերի ինքնորոշման,

<sup>569</sup> Դրօշակ, թ. 6, 05. 07. 1989, էջ 6:

<sup>570</sup> Նույն տեղում, էջ 7:

ընկերային արդարության ու ժողովրդավարության համամարդկային սկզբունքների վրա, գիտակցելով, որ հայ ժողովուրդը, ինչպես ամեն ազգ, իր կարողությունները լավագույնս կարող է դրսևորել լիակատար ժողովրդավարության պայմաններում, ինքնուրույն որոշելով իր կենսաձևն և ընդունելով, որ միայն այդ պայմաններում է հնարավոր ապահովել յուրաքանչյուր անհատի կյանքի անվտանգությունը, ազատությունը և երջանկության ձգտումը, ընդունելով, որ պետական գերագույն իշխանության կազմավորումը պետք է արտահայտի ժողովրդի կամքը:

Որ մեր ազգի գոյատևման ու զարգացման կարևորագույն երաշխիքն է հայոց լեզվի պահպանում ու լայն գործադրումը, շեշտելով, որ հայ ժողովրդի շարժումը ուղղված չէ որևէ ազգության կամ կրոնական հանրության դեմ և որ մենք մեր ազգային ծրագիրը իրագործելիս, պետք է ապավինենք սեփական ուժերին միայն, պատրաստ ենք համագործակցել այլազգի բոլոր այն շարժումների հետ, որոնք առաջնորդվում են ինքնորոշման, ժողովրդավարության և ընկերային արդարության սկզբունքներով: «Մեր նպատակի իրագործումը թելադրում է հայ ժողովրդի միաբանությունը վերոհիշյալ սկզբունքների շուրջ: Ուստի Հռչակումը հայտարարում է «Հայոց համազգային շարժում» հասարակական միության ստեղծման մասին, դրանով իսկ կազմակերպական ձև տալով մեկ ու կես տարի ողջ հայության մեջ ընդունված ազգային շարժումին»<sup>571</sup>: Նույն այդ փաստաթղթով ՀՀ-ն հայությանը կոչ է անում անդամագրվել իրենց կազմակերպությանը:

Հռչակագիրը լայն արձագանք գտավ հանրապետությունում և նրա սահմաններից դուրս: «Խորհրդային Հայաստան» թերթի 1989 թ. օգոստոսի 16-ի համարում տպագրված Հ. Բաղդասարյանի «Ազգային ինքնագիտակցություն, ազգային արժանապատվություն» հոդվածում շեշտված է, որ «Ղարաբաղյան շարժումը՝ դա ազգային ինքնագիտակցության պոռթկում է, արդար և արդարացի պահանջի դրսևորում, մի բան, որ շատերը... չեն ուզում հասկանալ»: Նա պաշտպանում էր Խորհրդային Միության ժողովրդական պատգա-

<sup>571</sup> Տե՛ս Դրօշակ, 05. 07. 1989, էջ 11:



մավորների Առաջին համագումարում հայտարարված Հայաստանի պատվիրակության հետևյալ թեզը՝ «Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը... այնքան խորն է թափանցել մարդկային սրտերը, որ անգամ աննախադեպ տարերային աղետը մոռանալ չտվեց այն»<sup>572</sup>: Ապա եզրակացրեց, որ Ղարաբաղի հարցի արդարացի լուծման ճգնույնը տագնապալից է դարձրել մարդկանց կյանքը, համբերությունից հանել նրանց, կրքեր բորբոքել ու հոգեբանական ծայրահեղ լարվածության հասցրել<sup>573</sup>:

Նշենք, որ Ղարաբաղյան հիմնախնդիրը միշտ կարևորագույն տեղ էր զբաղեցրել ՀՀ-ի գործունեության մեջ: 1989 թ. հունիսի 24-ին՝ ՀՀ-ի Հոչակագիրը ընդունելուց յոթ օր հետո, Լևոն Տեր-Պետրոսյանը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում ընթերցեց Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի Հայտարարությունը, որտեղ ասված է, որ «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն խորապես մտահոգված է ընթացիկ նստաշրջանի համադեմոկրատական բնույթով և նրանում հնչած հիմնովին սխալ և անհեռատես քաղաքական ծրագրով, և հայ ժողովրդի իղձերի իրականացման համար ստանձնած պատասխանատվության զգացումով, իր պարտքն է համարում Հայաստանի գերագույն իշխանության ամբիոնից անելու հայտարարություն»:

Ապա նշված է, որ կան մտավորական գործիչներ, որոնք «քարոզում են քաղաքականապես սնանկ ու վտանգավոր այն մտայնությունը, որ Հայաստանը՝ շրջապատված լինելով այլակրոն-թշնամի ազգերով, իր գոյությունը կարող է պահպանել միայն որևէ հզոր պետության հովանավորության շնորհիվ: Այս մտայնությունը մեր ժողովրդին մատնում է բարոյական ստրկության և զրկում նրան քաղաքական պարտնյոր դառնալու հնարավորությունից, որը քաղաքականության մեջ հաջողության հասնելու միակ երաշխիքն է»: Ապա հայտարարեց, թե պանթուրքիզմը այլևս վտանգավոր չէ, որը կոպիտ սխալ էր: Հետո Լ. Տեր-Պետրոսյանը շարունակեց, թե ՀՀ կոմիտեն, որը ավելի քան մեկ տարի է, ինչ ղեկավարում է

<sup>572</sup> Խորհրդային Հայաստան, թ. 195, 16. 08. 1989:

<sup>573</sup> Նույն տեղում:

համաժողովրդական շարժումը, «սկզբից և եթ մերժել է օտար հովանավորի վրա հույս դնելու և պանթուրքիզմը որպես մշտական սպառնալիք դիտելու վնասակար մտայնությունը և հետևողականորեն կենսագործել քաղաքական այն սկզբունքը, որ հայ ժողովուրդն իր ազգային իղձերին հասնելու համար պետք է ապավինի միայն ու միայն սեփական ուժերին...»:

Սակայն մեր հասարակությունը, շարունակում է նա, այսօր բախվել է մի դժվարության: Դա Արցախյան խնդիրը փակուղու առաջ կանգնեցնելն է, որի համար մեղավոր է անվանում «որոշ հայ մտավոր գործիչների»: Նաև նշում, թե ՀՀ-ն դատապարտում է Հայկական հարցը «միջազգային հարաբերությունների էժանագին խաղաքարտ դարձնելու հերթական փորձը և համոզմունք հայտնում, որ մեր ազգային իղձերի իրականացման միակ ուղին երկրի դեմոկրատական գործընթացի անշրջելիության ապահովումն է և հայ ժողովրդի միաբանությունը՝ հիմնված Հայոց Համազգային Շարժման գաղափարական սկզբունքների վրա»:

Շարժումը ամեն օր ստանում էր բազմաթիվ նամակներ, որոնցում շոշափվում էին զանազան հարցեր: Օրինակ. 1989 թ. հուլիսի 27-ին Շահումյանի շրջանի Շահումյան ավանի բնակչության կողմից հայ ժողովրդին, Հայաստանի կառավարությանը և «Ղարաբաղ» կոմիտեին ուղարկած նամակում ասված է. «Սիրելի հայրենակիցներ, Շահումյանի շրջանում ապրող արցախահայության կողմից դիմում ենք Ձեզ՝ սատար եղեք մեր արդար պահանջին, օգնեք մեզ վերականգնելու Արցախի ամբողջությունը, այսօրվա դրությամբ իր պատմական հայրենիքում գոյատևման երաշխիք չունեցող ժողովրդին ցույց տալու, որ նա մենակ չէ, որ մայր հայրենիքը մի միասնական մարմին է, ընդհանուր զգայարաններով և ընդհանուր ցավով»: Այդ դիմումը ժողովրդի խնդրանք էր՝ «չմոռանալ իրեն, հանուն մեր նախնիների սուրբ աճյունների, հանուն մեր մանուկների ապագայի»<sup>574</sup>:

---

<sup>574</sup> ՀԱԱ, ֆ. 207, ց. 3, գ. 55, թ. 12:

1989 թ. օգոստոսին, մի շարք ընտրական օկրուգներում Գերագույն խորհրդի պատգամավորի լրացուցիչ վերընտրությունների ժամանակ առաջ են քաշվել կոմիտեականների թեկնածություններ: Ժողովրդի քվեարկությամբ Երևանում պատգամավոր է ընտրվել Լևոն Տեր-Պետրոսյանը, Աշտարակում՝ Ռաֆայել Ղազարյանը, Կիրովականում՝ Լեռնային Ղարաբաղի «Միացում» ընկերության նախագահ Ռոբերտ Քոչարյանը<sup>575</sup>: Սեպտեմբերի 10-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշումով ճանաչվել է օգոստոսի 27-ին ընտրությունների ժամանակ Չարենցավանում պատգամավոր ընտրված Արկադի Մանուչարովի լիազորությունները<sup>576</sup>:

Սրանից քիչ առաջ՝ սեպտեմբերի 7-ին, Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն հանդես գալով հայտարարությամբ, առաջ է քաշել հետևյալ պահանջները.

1. Հանրապետության Գերագույն խորհրդի Նախագահության հրաժարականը,

2. Սեպտեմբերի 15-ին հրավիրել Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան, որը պետք է հստակ որոշումներ կայացնի.

ա) Արցախի Ազգային խորհուրդը ճանաչելու մասին,

բ) Արցախի շրջափակման վերացման և Ադրբեջանի հայ բնակչության կյանքի անվտանգության ապահովման իրական երաշխիքների պահանջով,

գ) Խորհրդային Հայաստանի և Արցախի հայության ինքնապաշտպանության կազմակերպման մասին,

դ) Առաջարկել հանրապետության տնտեսական, քաղաքական և մշակութային ինքնիշխանության զարգացման, լեզվի և դպրոցի, աղետի գոտու վերականգնման, հայ զինակոչիկների ծառայության վայրի և փախստականների տեղավորման ազգային ծրագիր և այն ներկայացնել համաժողովրդական քննարկման,

ե) նստաշրջանը պետք է հայտարարի, որ ելնելով իրավիճակից, չի դադարեցնում աշխատանքը, այլ հայտարարում է

---

<sup>575</sup> ՀԱԱ, ֆ. 207, ց. 3, գ. 343, թ. 1:

<sup>576</sup> Նույն տեղում, թ. 2-3:

ընդմիջում՝ անհրաժեշտության դեպքում այն շարունակելու նպատակով<sup>577</sup>:

Սեպտեմբերի 16-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նիստերի դահլիճում իր աշխատանք է սկսել Հայկական ԽՍՀ 11-րդ գումարման Գերագույն խորհրդի արտահերթ 10-րդ նստաշրջանը: Այն ճանաչեց ՀՀՇ-ից Լ. Տեր-Պետրոսյանի, Ռ. Քոչարյանի, Ռ. Ղազարյանի և Յու. Ճշմարիտյանի ինչպես նաև Արկադի Մանուչարովի պատգամավորական լիազորությունները<sup>578</sup>: Այսպիսով, Հայաստանի գերագույն օրենսդիրը ճանաչեց Հայոց համազգային շարժումը և այլևս դադարեցրեց նրան հետապնդել<sup>579</sup>: Իսկ կոմիտեականները՝ բանտից ազատվելուց հետո, թափով աշխատում էին ՀՀՇ-ի առաջին համագումարը հրավիրելու, ծրագրի և կանոնադրության նախագծերը նախապատրաստելու ուղղությամբ:

\*  
\*   \*   \*

Նրանց աշխատանքի արդյունքում 1989 թ. նոյեմբերի 4-ին բացվեց Հայոց համազգային շարժման հիմնադիր համագումարը: Այն հրավիրվել է Շահումյանի անվան համագումարների պալատում: Պատվիրակներ էին եկել Մոսկվայից, Լենինգրադից, միութենական հանրապետությունների ժողովրդական ճակատներից, հայաշատ վայրերի մշակութային և բարեգործական կազմակերպություններից, սփյուռքահայ համայնքներից, հանրապետական, խորհրդային և արտասահմանյան մամուլից, հանրապետության շրջաններից և Արցախից: Համագումարի աշխատանքներին մասնակցել են նաև հանրապետության իշխանությունները:

Համագումարում լսվել է երկու հարց. 1. ՀՀՇ ծրագրի և կանոնադրության նախագծերի քննարկում, 2. ՀՀՇ ղեկավար մարմինների ընտրություններ:

---

<sup>577</sup> ՀԱԱ, ֆ. 207, գ. 55, թ. 24:

<sup>578</sup> Երեկոյան Երևան, թ. 216, 18. 09. 1989:

<sup>579</sup> С. Амбарцумян, նշվ. աշխ., էջ 113:

ՀՀԸ խնդիրներին անդրադարձել է Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի ղեկավար Լևոն Տեր-Պետրոսյանը: Նա նշեց, որ շարժման սկզբից տարբեր վայրերում «պաշտոնական իշխանությունների կողքին տարերայնորեն առաջացան բազմազան հասարակական կազմակերպություններ, միություններ և ընկերություններ», և «կարճ ժամանակի ընթացքում ժողովրդական այդ շարժումները երկրի դեմոկրատացման ուղղությամբ արձանագրեցին շատ ավելի նշանակալից նվաճումներ, քան ձեռք էին բերված վերակառուցման շրջանի նախորդ երեք տարիներին»<sup>580</sup>:

Հայաստանում ժողովրդական շարժումը սկիզբ առավ 1988 թ. փետրվարի 20-ին Լեոնային Ղարաբաղի մարզային խորհրդի հայտնի որոշումով ու մի քանի ամիս անց Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն, նկատի ունենալով մեր զանգվածների ահռելի քաղաքական եռանդը, ընդլայնեց Շարժման ծրագիրը, «նրա մեջ ընդգրկելով հայ ժողովրդի առջև ծավալված բոլոր կարևոր խնդիրները, որոնք վերաբերում են հանրապետության սուվերենության ընդլայնմանը, կենսոլորտի բարելավմանը, պատմական անցյալի վերագնահատմանը, հայոց լեզվի և հայկական դպրոցների զարգացմանը, դեմոկրատական ազատությունների ապահովմանը և այլն»:

Ժողովրդավարական այդ նախաձեռնություններն էին.

1. Պատմության մեջ առաջին անգամ Լեոնային Ղարաբաղում և Հայաստանում տեղի ունեցան հարյուր հազարանոց ցույցեր ու հանրահավաքներ.

2. Առաջին անգամ Ղարաբաղում և Հայաստանում կազմակերպվեցին քաղաքական բնույթ կրող տևական համազգային գործադուլներ.

3. Առաջին անգամ Լեոնային Ղարաբաղի մարզային և Հայաստանի Գերագույն խորհուրդները որոշումներ կայացրին ներքևից՝ ժողովրդի կամքով և ոչ վերևից իջեցված հրահանգներով.

---

<sup>580</sup> Լևոն Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 17:

4. Հայաստանյան շարժումը առաջնեկը հանդիսացավ Խորհրդային Միության ընտրական համակարգի բարեփոխման գործում:

Այնուհետև նշվեց, թե Հայաստանի ժողովրդական շարժումը արձանագրել է մի շարք ծրագրային նվաճումներ, չնայած կենտրոնական իշխանությունների կողմից հայ ժողովրդի նկատմամբ տեղի ունեցավ սահմանադրության դրույթների բազմաթիվ խախտումներ: Հաղթահարելով դրանց, մեր հասարակությունը ձեռք բերեց կարևոր արդյունքներ՝ ինքնորոշում, ժողովրդավարական հանրապետություն, միավորված ազգ<sup>581</sup>:

Համագումարում ելույթ ունեցածներ՝ «Միացում» կազմակերպության ղեկավար Ս. Սարգսյանը, «Հայք» թերթի խմբագիր Ս. Գևորգյանը, հեռուստառադիոպետկոմի աշխատակից Ա. Հովհաննիսյանը, «Մաշտոց» միավորման անդամ, ք.գ.դ. Ռ. Իշխանյանը, ՀՀԾ Կիրովականի մասնաճյուղի ներկայացուցիչ Հ. Սարգսյանը, Արթիկի շրջանի «Գթություն» բարեգործական ընկերության նախագահ Պ. Կուրչինյանը, Արարատի թեմի առաջնորդ Տեր-Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանը, արվեստագիտության դոկտոր Հ. Հովհաննիսյանը բարձր գնահատեցին ՀՀԾ գործունեությունը և հույս հայտնեցին, որ մեր հայրենիքի ապագան ավելի լուսավոր կլինի և գոհացուցիչ: Հայ ժողովրդին ողջույնի խոսքեր ուղղեցին նաև Լատվիայի ժողովրդական ճակատի վարչության անդամ Ինտո Յալիտիսը, Հունգարիայի երիտասարդական-դեմոկրատական միության ներկայացուցիչ Տոմաշ Բարտեյը, Ֆրանսիայից «Հող և մշակույթ» միության նախագահ Գեղամ Լևոնյանը, Լենինգրադի ժողովրդական ճակատի ներկայացուցիչ Մարիա Սալյեն:

Համագումարը շարունակվել է նաև հաջորդ օրը՝ 12 հանձնախմբերի նիստերում: Նրանց աշխատանքը բարձր են գնահատել Մոսկվացի հայտնի տնտեսագետ տ.գ.դ. Վիկտոր Շենյիսը, Մշակույթի ֆոնդի Լենինգրադյան բաժանմունքի ներկայացուցիչ Նիկոլայ Ժուրավսկին, Լիտվայի Ազատության լիգայից Գինտարաս Միկշունասը, Լոս-Անջելեսից տնտեսագետ Արտաշես Բաղդասարյանը,

<sup>581</sup> Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 48–53:

Լատվիայի Ժողովրդական ճակատի «Ատմոդա» պաշտոնաթերթի տեսահավելվածի խմբագիր Մարիս Մեդինիսը: Վիկտոր Շեյնիսը ասել է. «Ես չափազանց ուրախ եմ, որ ինձ հնարավորություն ընձեռնվեց մասնկացել ՀՀ-ի հիմնադիր համագումարին և ինձ համար հաճելի է տեսնել հայ ժողովրդի ազգային վերածննդի այս սքանչելի պահը... Այսօր ես համարձակություն ունեմ բարձրաձայն ասելու, որ «Ղարաբաղ» կոմիտեի անդամները հայ ժողովրդի լույսն են, և խնդրում եմ բարձրագույն նախադասություն չհամարել... Այս համագումարը մեծ իրադարձություն է, քանզի այստեղ ծնվում է նոր հայ ազգային կազմակերպություն»<sup>582</sup>:

«Միացում» ընկերությունից Սերժ Սարգսյանը նշել է. «Գաղտնիք չէ, որ Արցախով է սկսված հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը և գաղտնիք չէ, որ այս շարժումն էլ այդ արդար պայքարի սուրբ ծնունդն է: Անչափ ուրախալի է, որ համագումարին մասնակցում են մեր ազգային կուսակցությունների ներկայացուցիչները: Համագումարը չէր կարող շրջանցել Արցախի խնդիրը, որովհետև Արցախը այսօր համայն հայության ցավն է ու հոգսը: Կարծում եմ, որ մենք ուժ կգտնենք բռունցքվելու և կկարողանանք արժանի լինել մեր հերոսական ու մեծ ժողովրդին»<sup>583</sup>: Իսկ սփյուռքից Հակոբ Էսմերյանը շեշտեց, որ չափազանց բարդ խնդիրներ են դրված թե՛ Հայաստանի և թե՛ սփյուռքի առաջ:

Պետք է մեկն ունենանք, որ կարողանա համախմբել մեր ուժերը: ՀՀ-ն այդ կարողությունը կարճես թե ունի<sup>584</sup>: ՀՀ-ական Գեղամ Գևորգյանը ՀՀ համագումարը բնորոշել է պատմական իրադարձություն հենց թեկուզ այն պատճառով, որ նպատակ ունի ճշտել այն ուղիներն, որոնցով պիտի ընթանա ողջ ժողովուրդը: Արցախի շարժումով ծնվեց Հայոց համազգային շարժումը, մեր ազգային վերածնունդը... Պիտի հուսանք, որ այս շարժումը կկա-

---

<sup>582</sup> Երեկոյան Երևան, թ. 256, 06. 11. 1989:

<sup>583</sup> Նույն տեղում:

<sup>584</sup> Նույն տեղում:

րողանա աչալուրջ կերպով զորավիզ լինել մեր կարևոր խնդիրների լուծմանը...<sup>585</sup>:

Հայաստանի ԳԱ թղթակից անդամ Հրաչիկ Սիմոնյանը ընդգծեց, որ 1920 թ. ի վեր Հայաստանում նման երևույթ տեղի չի ունեցել: ՀՀԸ-ի ծրագրի և կանոնադրության պահանջների մեծ մասն ընդունելի են: Հետո լրացրեց, որ պետք է խստիվ տարբերել իսլամիզմը, թուրքիզմն ու պանթուրքիզմը<sup>586</sup>:

Ինչպես արդեն նշվել է, ՀՀԸ-ի ծրագրի սկզբունքները հրապարակվել էր 1988 թ. օգոստոսի 19-ին: Այն, անկասկած, զերծ չէր թերություններից: Այնուհանդերձ, այդ փաստաթղթում շարադրված են ՀՀԸ-ի գաղափարական սկզբունքները, մոտակա նպատակները, ընդգրկված են հայ ժողովրդի ճակատագրի հետ առնչվող հիմնահարցերը: Ծրագրի նախագծում թվարկված ՀՀԸ-ի գաղափարական սկզբունքներն են.

1. Ունենալով իր անկախ պետականությունը, ապրելով առանց արտաքին ճնշման, ժողովրդավարության պայմաններում, ազգն ինքնուրույն պետք է որոշի իր քաղաքական, տնտեսական, հասարակական ու մշակութային կյանքի ձևերը:

2. Իրական ժողովրդավարական կարևորագույն երաշխիքներն են խոսքի, մամուլի, խղճի ազատությունը, բազմակուսակցականությունը, սեփականության ձևերի բազմազանությունը, ազատ ձեռներեցության առկայությունը, աշխատավորների ազատ արհմիությունների գործունեության հնարավորությունը:

3. Առանց հայոց լեզվի հայ ազգը դատապարտված է կործանման:

4. Հավատի կորուստը խարխլում է ազգի բարոյական հենքն ու անխուսափելիորեն տանում բարոյազրկման:

5. Հայ ժողովուրդը պետք է ապավինի իր ուժերին:

6. Ազգը ունի մշտական ազգային շահեր:

7. Ժողովուրդը իր հաջողությունները կամ անհաջողությունները չպետք է մշտապես դրսում որոնի:

---

<sup>585</sup> Երեկոյան Երևան, թ. 256, 06. 11. 1989:

<sup>586</sup> Նույն տեղում, թ. 273, 28. 11. 1989:



8. Շարժումը չի ուղղված որևէ ժողովրդի դեմ:

9. ՀՀՇ-ն համերաշխ է բոլոր այն շարժումների հետ, որոնք հիմնվում են ինքնորոշման, ժողովրդավարության և սոցիալական արդարության սկզբունքների վրա, մերժում է ազգային խտրակա-նությունը և ազգայնամոլության բոլոր դրսևորումները<sup>587</sup>:

ՀՀՇ-ի ծրագրում առաջ է քաշված նաև մոտակա խնդիր-ները. Արցախի վերամիավորումը Հայաստանի հետ, ԽՍՀՄ-ի հետ նոր պայմանագրի կնքում, նոր սահմանադրության մշակում, պայքար իրավական ազատությունների համար, անցում նոր տնտեսա-կան քաղաքականության, հասնել տնտեսական ինքնուրույնության, հայոց լեզվի պարտադիր գործունեություն, աղետի գոտու վերա-կանգնում, հայ եկեղեցու ազատ գործունեության ապահովում, նյութապես և հոգեպես օգնել փախստականներին, նոր քաղաք-ների և քաղաքատիպ ավանների ստեղծում, բնության պահպան-ման համար պայքարի կազմակերպում, հասնել հայոց ցեղասպա-նության միջազգային ճանաճմանը, Հայաստանից զավթված տա-րածքների վերադարձ, անօրինական ճանաչել 1921 թ. ռուս-թուրք-ական պայմանագրերը, ապօրինի դատապարտված հայ գործիչ-ների արդարացում, Սումգայիթի ցեղասպանությանը տալ քաղա-քական գնահատական, հայ բանտարկյալներին Հայաստանում պահելու հարցի լուծում, Հայաստանի պատմական տեղանունների վերականգնում և այլն<sup>588</sup>:

Համագումարում հաստատված կանոնադրության համաձայն ՀՀՇ-ն ճանաչվում է որպես հասարակական-քաղաքական կազմա-կերպություն, որի գործունեության նպատակն էր ծառայել հայ ժո-ղովրդի ազգային շահերին, Շարժման գաղափարական սկզբունք-ների հիման վրա ապահովել Հայաստանի և հայ ազգային, քաղա-քական, տնտեսական և հոգևոր հզորացմանը: ՀՀՇ-ն գործում է ժողովրդավարական և սահմանադրական եղանակներով և իր գոր-ծունեության մեջ բացառում է բռնության, ատելության և ազգային

---

<sup>587</sup> Հայոց համազգային շարժում, ծրագիր, կանոնադրություն, Եր., 1990, էջ 4–6:

<sup>588</sup> Նույն տեղում:

խտրականության ամեն մի դրսևորում: Նա գործուն կերպով մասնակցում է պետական և հասարակական մարմինների բոլոր կարգի ընտրություններին, նպատակ ունենալով, որ դրանցում կարտահայտվի ժողովրդի իրավական կամքը: Շարժման ծրագրում առաջադրված խնդիրների լուծման համար ՀՀ-ն օգտագործում է պայքարի այդպիսի ձևեր, ինչպիսիք են հանրաքվեները, ցույցերը, գործադուլները և այլն<sup>589</sup>:

Նոյեմբերի 5-6-ին շարունակելով իր աշխատանքը, համագումարը քննարկել և ընդունել է ՀՀ-ի ծրագիր ու կանոնադրություն: Ընտրվեց նրա ՀՀ վարչությունը՝ 36 հոգուց բաղկացած, և 105 անդամ ունեցող խորհուրդ<sup>590</sup>: Այսպիսով, ՀՀ բարձրագույն ժողովում առաջ քաշված խնդիրները եղել են ժողովրդավարական և հայ ժողովրդի շահերից բխած:

\*  
\* \*

Այդ տարիներին ձևավորվել են նաև այլ կազմակերպություններ, որոնք նույնպես սերտ կապ ունեին Ղարաբաղյան շարժման հետ: Դրանք էին Հանրապետական կուսակցությունը (նախագահ՝ Աշոտ Նավասարդյան), Ազգային ինքնորոշում միավորումը (նախագահ՝ Աշոտ Նազարյան), Քրիստոնեա-դեմոկրատական միավորումը (նախագահ՝ Ազատ Արշակյան), Ազգային դեմոկրատական միությունը, որոնց գրանցումը կատարվել է հետագայում: 1988-1990 թթ. ձևավորվել են «Արցախ» հայրենակցական միությունը, «Հայկաշեն», «Իջևան» բարեգործական կազմակերպությունները, «Մաշտոց», «Մայրության» ֆոնդերը, Երևանյան ակումբը, Լենինականի ազգային ճակատը, Հայոց ազգային բանակումը, Հայ կանանց միաբանությունը, Նարեկ միավորումը, Պատերազմի և աշխատանքի վետերանների գորավիզ միությունը, «Հուշամատյանը», Կանաչների միությունը, Հայաստանի աշխատավոր-

<sup>589</sup> Հայք, թ.1, նոյոմբեր, 1989:

<sup>590</sup> Նույն տեղում, և ՀԱԿ-ի ընթացիկ արխիվ, թղթ. 1, թ. 2-3:

րական կոլեկտիվների խորհուրդների միավորումը, Համահայկական միացյալ ճակատը, Հայաստանի գիտնականների միությունը, Հայաստանի կանանց կազմակերպությունների համակարգող խորհուրդն և այլ ընկերություններ: Նրանք բոլորն էլ այս կամ այլ կերպ նպաստում էին հանրապետության կյանքի առաջընթացին:

Դեռևս 1987 թ. դեկտեմբերի 24-ին Խորհրդային Միության Փիլիսոփայական ընկերության Հայկական բաժանմունքի, Հայաստանի Կոմերիտմիության ԿԿ-ի և Սևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի որոշմամբ Սևան քաղաքում հիմնադրվել է Փիլիսոփայական մտքի կենտրոնը: Այն նպատակ ուներ խթանել հանրապետության երիտասարդության հասարակական-քաղաքական ակտիվությունը՝ փիլիսոփայությամբ հետաքրքրվող երիտասարդների համատեղ հետազոտություններ կազմակերպելու ճանապարհով: Կենտրոնը կայացնելու գործում կարևոր դեր է ունեցել ակադեմիկոս Գևորգ Բրուտյանը, իսկ նրա իմաստասիրության կաճառի պատվավոր խորհրդականն էր ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը<sup>591</sup>:

Միաժամանակ սկսել էին միավորվել աշխատանքային կոլեկտիվների խորհուրդները: Համանման գործունեության կազմակերպման և Արցախյան հիմնախնդրի հետ կապված մեծ աշխատանք է կատարել ԳԱ Ֆիզիկայի ինստիտուտը, որի տիտղոսով վրդովունքով լի տասնյակ նամակներ, արձանագրություններ, պահանջներ, որոշումներ, առաջարկություններ են պահվում Երևանում՝ Ազգային արխիվում: 1989 թ. հոկտեմբերի սկզբին Ֆիզիկայի ինստիտուտի դահլիճում տեղի է ունեցել Հայաստանի աշխատավորական կոլեկտիվների խորհուրդների (ԱԿԽ) լիազոր ներկայացուցիչների առաջին հիմնադիր համագումարը, որին մասնակցել են 30-ից ավելի ձեռնարկությունների պատվիրակներ: Նրանք ներկայացնում էին շուրջ 60 հազար բանվոր-ծառայողների: Համագումարն ընդունեց Հռչակագիր՝ Հայաստանի ԱԿԽ-ների միավորում ստեղծելու վերաբերյալ:

---

<sup>591</sup> Հայրենիքի ձայն, թ. 35, 30. 08. 1989:

Ֆիզիկայի ինստիտուտի գիտաշխատող Ս. Շահազիզյանը, Ժողովնտեսության ինստիտուտի դասախոս Լ. Ղազարյանը, «Ռելե» գործարանի տնտեսագետ Կ. Ստեփանյանը, Պետպլանի Հաշվողական կենտրոնի տնօրենի տեղակալ Ս. Բաբայանը, Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի փորձառական արտադրամասի բաժնի պետ Ռ. Հակոբյանը, Երևանի Ավտոմոբիլային գործարանի ԱԿԽ նախագահ Լ. Միրզոյանը և ուրիշներ իրենց ելույթներում շեշտել են, որ պետք է նպաստել պետական ձեռնարկությունների մասին օրենքով աշխատավորական կոլեկտիվներին տրված իրավունքների կատարմանը և անցել ղեկավարման վարչահրամայական ձևերից տնտեսական պայմանագրային հարաբերություններին: Ընտրվեց համակարգող խորհուրդ՝ Ռոբերտ Հակոբյանի նախագահությամբ, և հինգ հոգուց բաղկացած համանախագահություն: Արցախի խնդիրը քննարկելիս, մասնակիցները հարց են բարձրացրել Ա. Մանուչարովին բանտից ազատելու վերաբերյալ<sup>592</sup>:

\*

\* \*

Հայ հասարակական և քաղաքական ուժերը այս կամ այն չափով նպաստում էին հանրապետության կյանքի առաջընթացին: Այդ հարցում ստեղծագործական կազմակերպությունների շարքում յուրահատուկ տեղ ունեւ Հայաստանի գրողների միությունը: Միության շատ անդամներ՝ Սերո Խանզադյանը, Սիլվա Կապուտիկյանը, Զորի Բալայանը, Գևորգ Էմինը, Լեոնիդ Հուրունցը, Մարո Մարգարյանը, Պերճ Զեյթունցյանը, Արմեն Հովհաննիսյանը և այլոք, իրենց հրապարակած հոդվածներում կամ հանրահավաքներում ու ժողովներում ունեցած ելույթներում պաշտպանում էին վերակառուցման, ազատագրական պայքարի, Արցախի միավորման, ժողովրդավարության զարգացման գաղափարները:

---

<sup>592</sup> Երեկոյան Երևան, թ. 230, 04. 10. 1989:

Գրողների միության անունից տասնյակ բողոք-նամակներ են ուղարկվել տարբեր հասցեներով, որոնցում պահանջվել է արդարացիորեն լուծել հայ ժողովրդի պահանջները: Առանձնապես սուր էին Սերո Խանզադյանի, Սիլվա Կապուտիկյանի, Ջորի Բալայանի դիմումները: Գրողների ուղերձներում շարադրված են ոչ միայն իրենց անձնական, այլև հասարակական հնչեղություն ունեցող, առանձնապես արցախյան հիմնախնդրի, էկոլոգիայի, մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ տեսակետները: Նրանք հանրահավաքներում, համագումարներում, տարբեր բնույթի ժողովներում ունեցած ելույթներում քարը քարի վրա չէին թողնում Ադրբեջանի պնդումներից:

Սիլվա Կապուտիկյանը 1988 թ. ապրիլի 5-ին Ս. Ս. Ավերինցեվին, Վ. Վ. Իվանովին, Վ. Ա. Կավերինին, Մ. Ա. Ուլյանովին, գիտության, մշակույթի և մամուլի բոլոր ազնիվ գործիչներին ուղարկած Բաց նամակում իր վրդովմունք է արտահայտել կենտրոնական մամուլի և հեռուստատեսության կողմից Արցախում և ՀԽՍՀ-ում ծավալված իրադարձությունների խեղաթյուրված լուսաբանման կապակցությամբ: Նա հնարավոր էր համարում մտավորականների և ազնիվ լրագրողների օգնությամբ դուրս գալ ստեղծված փակուղային վիճակից: 1921 թվականից առ այսօր, գրում է նա, անարդարություն է իրագործվում արցախահայության նկատմամբ: Եվ սա արվում է այն նպատակով, որպեսզի նրանք հարկադրաբար թողնեն իրենց բնօրրանը և արտագաղթեն: Հենց այս կացությունն է ոտքի հանեց Արցախի հայերին: Ամոթալի կլիներ, եթե չարձագանքեինք մեզնից օգնություն խնդրողներին: Արցախի հայ բնակչությանը երբեք էլ չի գոհացնում Մ. Գորբաչովի և Ն. Ռիժկովի ստորագրած որոշումը:

Ուստի մենք բոլորս շարունակում ենք համառել իրենց՝ Ադրբեջանից ազատվելու պահանջի մեջ: Դարերով ոչ մեկին չհնազանդված, քաջ ու համախմբված, երկրին 4 մարշալներ, 20 Խորհրդային Միության հերոսներ, Հայրենական պատերազմի ռազմաճակատի 44 հազար ռազմիկներ տված արցախցիները չեն հրապուրվում անհույս և անհեռանկար որոշումով: Նրանց դեմ սումգա-

յիթյան ջարդեր կազմակերպելով երբեք էլ հնարավոր չէ ծնկի բերել մի այդպիսի արիասիրտ ժողովրդի: Վիկտոր Հյուգոյի «Հույն տղան» բանաստեղծության «թուրքերն անցան այստեղից՝ ամենուր մահ ու ավեր» տողը լրացուցիչ բացատրության կարիք չի զգում: Հայ նվիրյալ ու ազգացավ բանաստեղծուհին իր խոսքն ավարտել է հետևյալ տողերով. փետրվարի 25-ին մեկ միլիոնի, իսկ ամսի 27-ին 700 հազար մարդ հավաքած «ցույցերը և աշխարհի բոլոր ծայրերում գտնվող հայերի համազգային արձագանքները համարում ենք մեր բազմադարյան պատմության աստղային ժամերից մեկը, համարում ենք ժողովրդական ոգու հաղթանակ, այդ ոգու միասնության հաղթանակ: Այդ հաղթանակը մեզ կօգնի ապրել, հուսալ, արարել: Ժողովուրդն ինքն է շահել ապրելու իրավունքը...»<sup>593</sup>:

1988 թ. սեպտեմբերի 19-ին Հայաստանի գրողների միության արտակարգ ժողովը քննարկելով ԼՂԻՄ-ում և Հայաստանում ծայրահեղ լարվածության հասած վիճակը, որը հետևանք է կենտրոնական իշխանությունների անբավարար միջոցառումների և Ադրբեջանի կառավարող շրջանների սադրանքներով լի միջամտությունների, որոշում է.

1. Դիմել ՀԽՍՀ Գերագույն խորհրդին. հրավիրել արտակարգ նստաշրջան հետևյալ օրակարգով. Դիմել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ ճանաչելու Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ինքնորոշման իրավունքը, և անհապաղ դուրս բերել մարզը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից:

2. Դիմել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին, ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին և ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյին՝ կտրուկ միջոցառումներ ձեռնարկել՝ ապահովելու Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի և Ադրբեջանական ԽՍՀ-ում ապրող հայ բնակչության ազատ և անվտանգ ապրելու սահմանադրական իրավունքը:

3. Պահանջել ԽՍՀՄ Գերագույն դատախազությունից՝ վերջ տալ Սումգայիթի ոճրագործության հետաքննության քաշքշուկին և

---

<sup>593</sup> Ս. Կապուտիկյան, Էջեր փակ գգրոցներից, Եր., 1997, էջ 301–321:

բացահայտել ու դատապարտել ցեղասպանության ակտի իսկական մեղավորներին<sup>594</sup>:

Եվ այդ, և էլ նման հարյուրավոր որոշումներ մնացին թղթի վրա, ընթացք չստացան հանրապետության իշխանավորների անգորության և Մոսկվայի բացահայտ անտարբերության պատճառով:

1989 թ. հունվարի 4-ին Սերո Խանզադյանի նախագահությամբ տեղի ունեցած ՀԳՄ ընդհանուր ժողովը դիմելով Հայկոմկուսի ԿԿ ղեկավար Ս. Հարությունյանին, Գերագույն խորհրդի Նախագահության նախագահ Հ. Ոսկանյանին և Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանին, նշել է, որ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ռիժկովը հայ մտավորականների հետ ունեցած հանդիպման ժամանակ շեշտել է, թե ադրբեջանաբնակ հայերի իրենց տներ վերադառնալը պետք է լինի միայն կամավոր սկզբունքով: Սակայն ամեն օր Գրողների միություն են գալիս Ադրբեջանից բռնի տեղահանված ու ՀԽՍՀ զանազան վայրերում տեղավորված փախստականներ: Նրանք հայտնում են, որ հիմա էլ տեղացի հայ ղեկավարներն են նրանց հարկադրում վերադառնալ նախկին բնակավայրերը ու խնդրում են օգնել Հայաստանում մշտապես մնալու:

Մենք լավ ենք հասկանում ադրբեջանական կառավարողների քաղաքականությունը՝ ամեն գնով Հայաստան վերադարձնել ադրբեջանցիներին՝ ապահովելու համար իրենց ժողովրդագրական հաշվարկները: Նրանք լավ գիտեն, որ Ադրբեջանից արտաքսված հայերը երբեք չեն վերադառնա, նորից վտանգի չեն ենթարկի իրենց կյանքն ու արժանապատվությունը: Հայ գրողների կազմակերպությունը բողոք է հայտնում ՀԽՍՀ ղեկավարության հաշտվողական, ոչ սկզբունքային, հակասահմանադրական, մարդու իրավունքներն անտեսող վարվելակերպի դեմ և սպասում է ձեր անհապաղ վճռական գործողությանը՝ այդ հակահայկական քայլերի

---

<sup>594</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 678, թ. 113–114:

դեմն առնելու և փախստականների տեղավորման գործը պետական հիմքերի վրա դնելու համար<sup>595</sup>:

Բավականին անհանգիստ է անցել 1990 թ. փետրվարի 1-ին հրավիրված ՀԳՄ պլենումը: Սերո Խանգաղյանի հայտարարությամբ, հայ գրողները հավաքվել են «ազգի ճակատագիրը որոշելու համար»: Պլենումում նախագահում էր Հրաչյա Հովհաննիսյանը և միության անդամ 360 գրողից ներկա էին 150-ը: Միջոցառմանը մասնակցում էին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդի նախագահի տեղակալ Բորիս Ալեյնիկովը, «Լիտերատուրնայա գազետա» թերթի, «Դրուժբա նարոդով» հանդեսի լրագրողներ: Ելույթների համար ռեգլամենտ չի սահմանվել և Հրաչյա Հովհաննիսյանը հիշեցրեց ներկաներին, թե ինչպես «երկու տարի առաջ Հայաստանի գրողների միությունը ընդհանուր կամքով հղեց առաջին մի ծավալուն հեռագիրը վիթխարի, բազմազգ երկրի ղեկավարին, իր հոչակած վերակառուցման ոգով, հաշվի առնելով Լեոնային Արցախի բնիկ և մեծամասնություն կազմող բնակչության՝ հայերի բաղձանքը՝ միավորվելու մայր հայրենիքին: Շուտով այդ բաղձանքը ձևավորվեց մարզի խորհրդային իշխանությունների և մարզի կուսակցական մարմինների քաղաքական ակտի, նրանց խաղաղ, արդարացի որոշումներում»<sup>596</sup>:

Բանաստեղծը նշեց, որ տասնամյակներ շարունակ ստալինյան, խրուչչովյան, բրեժնևյան իշխանությունների օրօք բոլորը սպասում էին, որ վախով, շշուկով, երբեմն նաև բացահայտ հոչակը կեղծիքը վերջապես կհասկացվի, իսկ նրա դեմ ընդվզած ճշմարտությունը վերջապես կընդունվի մեր նոր դեմոկրատական պետության վերին մարմինների կողմից: Սակայն հայերի խաղաղ որոշումները, շարունակեց նա, զարմանալի շփոթում, ապա գայրոյթ և ճնշման միտումներ առաջացրեցին վերին աստիճաններում, և այդ որոշումների վրա գրեթե անմիջապես հեղվեց մեր անմեղ հայրենակիցների արյունը: «Սկսվեց արցախյան շարժման դաժան ողիսականը, շարժումը վերածվեց ազգային հեղափոխության:

---

<sup>595</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 706, թ. 2:

<sup>596</sup> Նույն տեղում, ֆ. 1431, ց. 6, գ. 16, թ. 4:



Համազգային այդ հեղափոխության երկարամյա ժամանակաշրջանում անթիվ հեռագրերը, նամակները, կոչերը, դիմումները, բազմամարդ միտինգների, բազմաթիվ ժողովների բանաձևերը, անձնական և կոլեկտիվ հանդիպումների հորձանքը դեմ առավ համամիութենական վարչաքաղաքական միջնաբերդին: Արցախի մարզային խորհրդի, ՀԽՍՀ պաշտոնական ձեռնարկումներն անգամ, աշխարհի մտավորական կազմակերպությունների դիմումներն անգամ անկարող եղան սասանելու մեր երկրի ղեկավարության բռնած դիրքը հավասարազորություն ստեղծելու երկու անհարիր կողմերի միջև»<sup>597</sup>: Հ. Հովհաննիսյանը հիշեցրեց, որ Արցախի հայ բնակչությունը չի ցանկանում դուրս գալ խորհրդային ընտանիքից, այլ փափագում է լինել ընդամենը 5 կիլոմետր նրանից արհեստականորեն անջատված հայրենիքում<sup>598</sup>:

Ապա իրենց խոսք են ասել Սերո Խանզադյանը, Գևորգ Էմինը, Ռուբեն Հովսեփյանը, Արամ Գրիգորյանը, Ֆելիքս Մելոյանը, Վարդգես Պետրոսյանը, Մարո Մարգարյանը, Գալուստ Գալոյանը և ուրիշներ: Բոլոր ելույթներում էլ հնչում էր սուր քննադատություն անցյալի և ներկայի անօրենությունների դեմ և ընդունվում Արցախյան հիմնախնդրի արդար լուծման, հանրապետության կյանքը ավելի ժողովրդավարական դարձնելու և համանման բազմաթիվ հարցեր դրականորեն լուծելու վերաբերյալ որոշում:

Պլենումում ելույթ ունեցավ նաև ԼՂԻՄ Գրողների միության քարտուղար Վարդան Հակոբյանը: Նա պատմեց, որ այդ օրը, երբ գալիս էր հայրենի գյուղից, Հայկաշեն, Գայ, Վերին Խաթալու գյուղերում հաստատված էին պահակակետեր, որտեղ հերթապահում են երիտասարդները: Նրանք հսկում են, որ թուրքերը հանկարծակի չհարձակվեն հայկական բնակավայրերի վրա: Երիտասարդությունը կանգնած է ամբողջ Արցախում: Արցախցի բանաստեղծը նշում է, որ ղարաբաղցիները դաժան փուլ են ապրում և ոչ մեկի հետ որևէ հույս չեն կապում: Նա վստահեցնում էր, որ աշխարհում չկա որևէ հողակտոր, ոչ մի ուրիշ երկրամաս, որ մեզ համար

<sup>597</sup> ՀԱԱ, ֆ. 1431, ց. 6, գ. 16, թ. 4:

<sup>598</sup> Նույն տեղում, թ. 5:

փոխարինի Արցախին: Մենք ոչ մի կերպ, ինչ էլ որ լինի, տանկերի ուժով գան, չգիտեմ ռազմական ինչ ուժով էլ գան, դա հնարավոր բան չէ, մեզ չեն կարող սպանել, որովհետև մենք երբեք չենք ուզում մեռնել, մենք պիտի ապրենք, Արցախը մերը պիտի լինի, Արցախը մերն է և մերն է լինելու...Դուք վստահ եղեք, որ ինչ էլ լինի, Արցախը մնալու է որպես Արցախ և հնարավոր չէ նա պարտվի: Արցախում ժողովուրդը՝ կին, երեխա, մայր, բոլորը պինդ են կանգնած: Այնպես որ հաղթանակը մերը կլինի<sup>599</sup>:

Հետագայում ևս ՀԳՄ կանգնած էր ամուր հիմքի վրա և հնարավորին բոլոր պարագաներում հանդես է եկել ժողովրդավարական դիրքերից:

\*  
\* \* \*

Հետազոտվող տարիներին նշանակալի դեր է ունեցել «Արցախ» հայրենակցական միությունը, որն այդ ժամանակ ունեցել է ավելի քան 10 հազար անդամ<sup>600</sup>: Նրա մեջ միավորվել էին Երևանում և մոտակա բնակավայրերում ապրող ծնունդով գրեթե բոլոր արցախցիները: 1988 թ. նոյեմբերի 4-ին Ճարտարապետների տանը տեղի ունեցած միության առաջին համագումարում նախագահում էր Սպառոդական կոոպերացիայի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Ալբերտ Հովհաննիսյանը, ով նվիրված էր Արցախի ազգային-ազատագրական պայքարին: Համագումարի համանախագահն է եղել փ.գ.դ. Ա. Մանասյանը: Միությունը մեծ աշխատանք է տարել հայրենակիցների ուժերը կենտրոնացնելու և հայրենի Արցախի պաշտպանությանը ծառայելու համար: Ամենից առաջ հայրենի

---

<sup>599</sup> ՀԱԱ, ֆ. 1431, ց. 6, գ. 16, թ. 68–72:

<sup>600</sup> Տե՛ս Արցախ հայրենակցական միության պատմությանն է նվիրված տողերիս հեղինակի «Երբ հայրենիքը վտանգի մեջ է», Երևան, 1997 և «Մարտ՝ կրակագծի մատուցներում», Եր., 2008 ուսումնասիրությունները:

երկրամասին ցույց էր տրվում նյութական, պաշտպանական և բարոյական օգնությունը, անդամները նպաստում էին մարզի վերաբնակեցմանը, սատարում բռնագաղթականներին և կազմակերպում կոոպերատիվներ:

1989 թ. գարնանը հրավիրված միության երկրորդ համաժողովում նախագահ ընտրված Ա. Մանասյանը՝ կազմակերպության ամբողջ անձնակազմով, ամեն կերպ նպաստում էին գյուղական համայնքների արագ ձևավորմանը, օգնում նրանց կապերի հաստատման՝ Արցախի իրենց ծննդավայրերի հետ, և գործադիր մարմնին կից կազմակերպում կանանց խորհուրդ, որը նրանց բոլոր գործերով օժանդակում էր արցախցի կանանց<sup>601</sup>: Միության կատարած աշխատանքներում ուրույն ներդրում է ունեցել նրա առաջին քարտուղար Լարիսա Ալավերդյանը, որը հաճախակի էր մեկնում Արցախ, այնտեղ կազմակերպում կոոպերատիվներ, հանդես գալիս զրույցներով ու դասախոսություններով:

Այդ տարիներին «Արցախ» հայրենակցական միությունը 40 մլն ռուբլու զենք, պաշտպանության այլ միջոցներ է ուղարկել Արցախ, ֆինանսական աջակցություն է ցույց տվել տասնյակ կազմակերպությունների, վիրավորների, զոհվածների ընտանիքների, մշակույթի օջախների և ներկայացուցիչների, կարիքավորների, տարիքավորների, բռնագաղթականների, կազմակերպել է 60 կամավորական ջոկատ, որոնցից 15-ը մեկնել է Արցախի պաշտպանության համար մարտնչելու Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու և Հադրութի շրջաններում:

Երևանաբնակ շատ գիտնականներ ընդգրկվել էին միության վարչությունում և հանձնաժողովներում, մեծ ներդրում են ունեցել նրա աշխատանքներում: Այսպես, գիտությունների դոկտորներ, ԳԱԱ ապագա թղթակից անդամ Սևակ Արզումանյանը, հետազայում ակադեմիկոսներ Լենսեր Աղալովյանը, Սերգեյ Աբրահամյանը, Յուրի Սուվարյանը, ինչպես և Բագրատ Ուլուբաբյանը, Սերգեյ Մելքումյանը, գիտությունների թեկնածուներ (այժմ դոկտոր) Հրանտ

---

<sup>601</sup> Հ. Աբրահամյան, Մարտ՝ կրակագծի մատուցներում, Եր., 2008, էջ 36–37:

Աբրահամյանը, Աբիկ Սամվելյանը, Ռոմա Դալլաքյանը, նաև Ջորի Բալայանը, Յուրի Հովհաննիսյանը, Հրանտ Ամիրյանը, Իյա Միքայելյանը, Աղավնի Դանիելյանը, Շահեն Մկրտչյանը, պահեստային գեներալ Միքայել Մուրադյանը, Սեդրակ Նանագույանը, Յաշար Դադասյանը, Սլավիկ Մուքանյանը, Արկադի Ասրյանը, Դերենիկ Պետրոսյանը, Լևոն Հայրապետյանը, Էդիկ Գրիգորյանը և տասնյակ նվիրյալներ չէին խնայում իրենց ժամանակն ու հնարավորություններն հայրենի Արցախի պաշտպանությանը և Հայկական ԽՍՀ հասարակական-քաղաքական կյանքին ծառայելուն:

Այստեղ պետք է նաև խոսենք մի երիտասարդի մասին, որը իրեն չխնայեց հայրենի Արցախին ազատության համար ու շատերի համար օրինակ դարձավ: Սա փայլուն գիտնական Սևակ Արզումանյանի որդի Արտակ Արզումանյանն է: Նա՝ ավարտելով Երևանի Պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, 1981 թ. ի վեր աշխատում էր Հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեում, որտեղ բազմաթիվ և արժեքավոր հաղորդումներ ստեղծեց Ղրիմի ու Ղարաբաղի հուշարձանների մասին: Արտակը հաճախակի էր լինում հայրենի Արցախում, իր ծննդավայր Սեյդիշենում (այժմ՝ Խաչեն): Ինքը լավ գիտեր, որ իր հայրենի երկրամասում չէին դիտում ու լսում հայրենիքից արձակվող հեռուստատեսային ու ռադիոհաղորդումները: Բողոքում էր այդ առթիվ, բայց ապարդյուն: 1988 թ. մարտին, երբ ԽՍՀՄ-ն 400 մլն ռուբլի տրամադրեց մարզի տնտեսության զարգացման համար, հարց բարձրացավ Հայաստանի հեռուստառադիոհաղորդումները տեսանելի և լսելի դարձնել այստեղ:

Լուրը ստանալուն պես, ողջ աշխարհով սփռված ավելի քան մեկ միլիոն արցախցիների դեմքին ուրախություն քանդակվեց: Եվ Արտակ Արզումանյանը մեծ եռանդով մասնակցեց այս աշխատանքին: Արդեն նույն թվականի գարնանը՝ Ստեփանակերտից բացի, Շուշիում, Հադրութում և Մարտունիում Հայաստանի կողմից երեք վերհեռարձակող կայանների տեղադրման շնորհիվ ՀԽՍՀ-ից թողարկվող հեռուստատեսության առաջին ծրագիրը ընդունվում էր ԼՂԻՄ գրեթե բոլոր շրջաններում, որից օգտվում էին բնակչության

ավելի քան 80 տոկոսը: Իսկ քիչ ավելի ուշ մեր հերոսի երկու ֆիլմերը՝ «Վանի ճանապարհը՝ Բերդաձոր» (նվիրված է Բերդաձորի պաշտպանության հրամանատար Անդրանիկ Հարությունյանին) և «Ճանապարհը բաց է» (նվիրված է Շուշիի ազատագրմանը) վավերացրել են այդ իրադարձությունների մասնակցի և ականատեսի խոսքի ճշմարտությունը:

1990 թ. Ա. Արզումանյանը ստեղծեց «3-րդ ալիք» ծրագիրը, իսկ 1988–1990 թթ. մեծ ներդրում է ունենում Արցախի ռադիոյի և հեռուստատեսության կայացման գործում: 1992 թ. նրա աշխատանքը բարձր է գնահատվել և Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով հետմահու պարգևատրվել Արիության մեդալով (հ. 1372): Այդ թվականի օգոստոսի 28-ի վշտալի օրը Արտակ Արզումանյանը և Անդրանիկ Հարությունյանը զոհվեցին մարտական հանձնարարությունից վերադառնալիս: Ինչպես գրեց Վահագն Դավթյանը. «Ես գլուխ եմ խոնարհում Անդրանիկի և Արտակի ծնողների, հարազատների, բարեկամների, զինակիցների մեծ ու անավարտ վշտի առջև»: Արտակի մահը մեծ ցավ էր «Արցախ» հայրենակցականի համար:

\*  
\* \* \*

1988 թ. սեպտեմբերին «Ղարաբաղ» կոմիտեի անդամների աջակցությամբ հիմնադրվում է Հայոց բարեգործական միությունը (ՀԳԲՄ) («Գթություն»), որի նախագահ է ընտրվում Խաչիկ Ստամբուլյանը: Հարցազրույցներից մեկում նա նշել է, որ միության նպատակն էր օժանդակել մեր ժողովրդի մտավոր և բարոյական աճին, նպաստել հայ արվեստի և արհեստների վերականգնմանն ու զարգացմանը, առաջադեմ ուսանողների համար սահմանել կրթաթոշակ, ինչպես նաև պարգևներ հայ արվեստը լավագույնս քարոզելու համար, անկախ տվյալ անձի ազգությունից: Նաև ծառայել բոլոր այն մարդկանց, ովքեր ունեն խնամքի կարիք և ի վիճակի չեն հոգալու իրենց ամենօրյա հոգսերը: Օգնել բազմազավակ ընտա-

նիքներին: Նույն թվականի հոկտեմբերի 8-ին ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի հ. 519 որոշումով հավանություն է տրվել միության կանոնադրությանը<sup>602</sup>: Ընդհանրապես, պայքարի ամբողջ ժամանակաշրջանում մեծ է եղել «Գթության» դերը՝ արցախահայությանը ցույց տված օգնության առումով:

\*  
\*   \*

Մեր կարծիքով, շարադրվածից պարզ է դառնում, որ 1988–1990 թթ. Հանրապետության կյանքում բավականին աշխատանք են կատարել հասարակական և քաղաքական կազմակերպությունները, որոնց գործունեությունը նպաստեց մեր հանրային կյանքում ժողովրդավարության հարցը և բազմաթիվ կենսական այլ խնդիրներ դրականորեն լուծելու համար: Առանձնապես մեծ է եղել արցախահայությանը ցույց տրված նրանց բազմաբնույթ օգնությունը:

\*  
\*   \*

Խիստ նպատակահարմար է նաև անդրադառնալ Ադրբեջանի կողմից Հայաստանի և Արցախի շրջափակման հարցին: Չէ որ 1989 թ. հուլիսի 10-ին Ստեփանակերտի կուսակցական ու պետական առաջնորդներ Վ. Աթաջանյանն ու Մ. Միրզոյանը հեռագրում էին Կրեմլ՝ ինքնավար մարզի բոլոր ճանապարհների շրջափակված լինելու մասին: Նրանք բողոքում էին ներքին զորքերի անգործության դեմ, թեև հայերը՝ առիթ տրամադրելու դեպքում, պատժվում էին ամենախիստ ձևերով<sup>603</sup>: Այդ շրջափակումը իրականացվում էր նախորդ թվականի մայիսից, իսկ ԼՂԻՄի ու ՀԽՍՀ լիակատար մեկուսացումը հաստատվեց 1989-ի օգոստոսից: Իրակա-

---

<sup>602</sup> Երեկոյան Երևան, թ. 230, 22. 09. 1988:

<sup>603</sup> В. Б. Арутюнян, События в Нагорном Карабахе, Хроника, отв. ред. К. С. Худавердян, ч. II, с. 92.

նում, միութենական կարգավիճակ ունեցող հանրապետությունն և ինքնավար միավորը ամբողջությամբ մեկուսացվել են մնացած երկրից՝ կենտրոնական կուսակցական ու խորհրդային մարմինների թողտվության պայմաններում:

Ահա թե ինչու օգոստոսի 11-ին նույն Ստեփանակերտում «Միացում» կոմիտեի հրավիրված հանրահավաքի ժամանակ Բ. Դադամյանը պահանջեց անհապաղ վերջ տալ այդ խայտառակությանը: Այնուհետև այն վերացնելու պահանջը օգոստոսի 30-ին ամրացրեց ՀԽՍՀ ԳԱ գիտնականների և ստեղծագործական միությունների անդամների ժողովը՝ Ակադեմիայի նախագահ Վ. Համբարձումյանի և ակադամիկոս-քարտուղար Դ. Սեդրակյանի ստորագրություններով: Սեպտեմբերի 7-ին իր հայտարարություն է հրապարակել ՀՀԾ-ն, իսկ հաջորդ օրը վերոնշյալ ժողովի Հռչակագիրը հավանություն է ստացել Սերժ Սարգսյանի գլխավորած ու Ստեփանակերտում անցկացրած նոր հանրահավաքի կողմից:

Երևանում էլ, 1989 թ. սեպտեմբերի 11-ին Թատերական հրապարակում կենտրոնացած հանրահավաքը Մոսկվայից պահանջեց վերջ տալ ամոթալի շրջափակմանը: Երևանի Պետական համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ պ.գ.դ. Լ. Խուրշուդյանը այդ օրը արտասանած ելույթում հիշեցնում էր, որ արդեն մեկ ամիս է ինչ ողջ բնակչությունը պահանջում է հրավիրել Գերագույն խորհրդի նստաշրջան ու քննարկել Արցախի հարցը: Ինդիքն այն է, որ մեր հանրապետության ղեկավարությունը պետք է գնա առջևից, այլ ոչ թե քարշ գա ժողովրդի պոչից: Եվ ստացվել էր այնպես, որ եթե երեկ հայտարարվում էր, որ ԼՂԻՄ-ը և Հայաստանը գտնվում են չհայտարարված պատերազմական վիճակում, ապա այսօր այն իրականություն է:

1920 թ. ստեղծած հակահայկական քաղաքականությունը նույնությամբ շարունակվում էր: Ո՞վ կմտածեր, թե Մոսկվան չի կարողանա լուծել Արցախի հարցը: Այնպիսի վիճակ ստեղծվեց, որ յուրաքանչյուր պահի Ադրբեջանի ուժերը կարող են ներխուժել Արցախ: Իսկ ո՞վ պետք է պաշտպանի երկրամասը: Բանը հասել էր նրան, որ Արցախի նորաստեղծ Ազգային խորհուրդը դիմում է

ՄԱԿ-ին: Հայաստանի իշխանությունները խիստ դանդաղում են պատասխանել Ազգային խորհրդի կոչին: Ստացվում էր այնպես, որ պաշտոնապես Արցախի պաշտպանությունը ստանձնում էր 70 հոգուց բաղկացած Արցախի մտավորականների միությունը<sup>604</sup>:

Հանրահավաքում ընթերցվեց «Ղարաբաղ» կոմիտեի սեպտեմբերի 7-ին կազմած հայտարարությունը, որը պահանջում էր հանրապետության Գերագույն խորհրդի Նախագահության և կառավարության հրաժարականը, այնուհետև սեպտեմբերի 15-ին հրավիրել Գերագույն խորհրդի արտակարգ նստաշրջան ու ճանաչել Արցախի Ազգային խորհուրդը, անհապաղ վերացնել շրջափակումը և ապահովել հայերի անվտանգությունը ադրբեջանական տարածքում, կազմակերպել Խորհրդային Հայաստանի և Արցախի ինքնապաշտպանությունը: Այն ավարտվում է հետևյալ կոչով. «Հայ ժողովուրդը թույլ չի տա ոտնատակ տալ իր իրավունքը, որտեղից էլ այն բխի»<sup>605</sup>:

Երկու օր անց, սեպտեմբերի 13-ին ԱԻՄ-ը նույնպես իր կոչով դիմեց հայ ժողովրդին: Նա սուր քննադատության ենթարկեց կենտրոնական իշխանությանը ու պահանջեց ամենասեղմ ժամկետում ստեղծել «ազգային կառավարություն՝ իր խորհրդարանով», «սատար կանգնել Արցախին՝ խափանելով բռնապետության ծրագրերը»<sup>606</sup>: Նմանաբնույթ հայտարարությունները հնչեցրին քաղաքական և հասարակական բազմաթիվ ուժերը:

Արձագանքելով հասարակության հզոր պահանջներին, 1989 թ. սեպտեմբերի 12-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահությունը դիմումներ հղեց համամիութենական և ադրբեջանական ԳԽ նախագահությունների հասցեին: Նրանց զգուշացրեցին այդ մեկուսացումից բխող անկանխատեսելի հետևանքների վտանգի մասին: Խորհրդային Հայաստանն՝ երկրաշարժի գոտիով հանդերձ, և Արցախը չէին հասնում շինանյութը կամ սննդամթերը, վա-

---

<sup>604</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 39ա, թ. 118:

<sup>605</sup> Նույն տեղում, թ. 133:

<sup>606</sup> Նույն տեղում, ֆ. 1679, ց. 1, գ. 1, թ. 31:



ռելիքը կամ դեղորայքը<sup>607</sup>: Ուստի մեր օրենսդիրը պահանջում էր ապահովել ազգաբնակչության անվտանգությունն ու ամենակարճ ժամանակում վերացնել շրջափակումը: Եվ չորս օր ավելի ուշ՝ սեպտեմբերի 16-ին ՀԽՍՀ ԳԽ արտահերթ նստաշրջանը դիմել է ԽՍՀՄ ԳԽ-ին, հայտարարելով, թե Խորհրդային Հայաստանում, Արցախում և ամբողջ տարածքում ստեղծված պայթուցավտանգ պայմաններում մենք՝ Հայկական ԽՍՀ բարձրագույն օրենսդիր մարմնի պատգամավորներս, մեր պարտքն ենք համարում արտահայտել ժողովրդի կամքն ու հանդես գալ դիմումով:

Նրանք տեղեկացնում են, որ «ԼՂԻՄ-ի և նրա շուրջ տիրող իրավիճակը վերջին ժամանակներս հասել է արտակարգ սրման, տեղի է ունեում Ադրբեջանի և Հայաստանի լարվածության աննախադեպ էսկալացում, ժողովուրդները հայտնվել են անկանխատեսելի առճակատման եզրին: Նման իրադրությունը ստեղծվել է իրապես գոյություն ունեցող պրոբլեմները օբյեկտիվորեն չվերլուծելու, պատմական, սոցիալական, մշակութային, տնտեսական և էթնիկական հարցերի շուրջը կարծիքներ չփոխանակելու, երկու հարևան ժողովուրդների հարաբերությունների կարգավորման ուղիներ չորոնելու հետևանքով: Կատարվում են անթույլատրելի, ամեն մի քաղաքակիրթ հասարակությանը, առավել ևս խորհրդային հասարակությանը խորթ այնպիսի գործողություններ, ինչպիսիք են՝ մի հանրապետության կողմից երկրի մյուս հանրապետությունների ու տարածաշրջանների էկոնոմիկայի շրջափակումը, ժողովրդական տնտեսության կենսական նշանակության ճյուղերի՝ ավտոտրանսպորտի ու երկաթուղային փոխադրամիջոցների գործունեության, օդային հաղորդակցության խափանումը, իրավակարգի զանգվածային խախտումները, ըստ ազգային հատկանիշի ԽՍՀՄ քաղաքացիների վրա բռնության գործադրման ակտերը»:

Այնուհետև շեշտված է, թե ԼՂԻՄ-ը գտնվում էր բացարձակ շրջափակման մեջ, մարզում սպառվել էին հումքն և վառելիքը, զգացվում էր պարենի, նյութատեխնիկական միջոցների խիստ պակաս: Իսկ օգոստոսից ի վեր շրջափակման մեջ գտնվող

<sup>607</sup> Правда, 25. 09. 1989.

Հայկական հանրապետությունը, որը տարել է ծանր երկրաշարժ, գտնվում էր ծանրագույն պայմաններում: Իրավական մարմիններին հարկավոր էր ցուցում տալ պաշտպանել Արցախի իրավունքներն ու կյանքը: Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը հայ ժողովրդի անունից պատրաստակամություն է հայտնում համակողմանիորեն մասնակցելու ԼՂԻՄ-ի խնդրի արդարացի լուծմանը<sup>608</sup>:

Հաջորդ իսկ օրը՝ ամսի 17-ին, մեր օրենսդիրը որոշում ընդունեց, որտեղ մեղադրական խոսք հնչեց այն մասին, թե ինչպես է կոպտորեն խախտվում ԽՍՀՄ Սահմանադրության հողվածներն ու գործնական քայլեր չեն ձեռնարկվում դրանք պաշտպանելու համար: Որոշման մեջ ասված է. «Վճռականորեն դատապարտել Ադրբեջանական ԽՍՀ-ի կողմից Հայկական ԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի շրջափակման կազմակերպումը», ընդգծելով որ դա քաղաքական նպատակներ հետապնդող ակտ է «ԼՂԻՄ-ի պրոբլեմի արդարացի լուծումը ուժի օգնությամբ խանգարելու համար»:

Որոշումը պահանջում էր ռազմական դրության մեջ հայտարարել երկաթգիծն և խճուղայի ճանապարհները՝ ապահովելով Հայկական ԽՍՀՄ և ԼՂԻՄ եկող տրանսպորտի ազատ ու անվտանգ երթևեկությունը, հրավիրել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ համագումար՝ շրջափակումը վերացնելու նպատակով արտակարգ միջոցառումներ ընդունելու համար: Փաստաթղթում առաջարկվեց հարց բարձրացնել ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի առջև խոշոր ծավալի բեռներ Հայաստան փոխադրելու նպատակով քաղաքացիական և ռազմափոխադրական ավիացիան ներգրավելու մասին: Շրջափակման հետևանքով առաջացած պարենային և նյութական մյուս ֆոնդերն ու կորուստները համալրելու համար, հարկավոր էին արտակարգ միջոցներ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի կողմից:

Դա հնարավորություն կընձեռեր տուժածներին հասցնել նրանց հատկացված 31 հազար վագոն-տնակները և մյուս ապրանքները: Բացի դրանից, որոշումը հարց էր հարուցել Ադր-

---

<sup>608</sup> ՀԱԱ, ֆ. 1679, ց. 1, գ. 1, թ. 15–19:

բեջանի տարածքով անցնող բեռների կրած վնասը Ադրբեջանի ԽՍՀ-ի բյուջեից փոխհատուցելու մասին, դիմել ԽՍՀ Գլխավոր դատախազին՝ պահանջելով խիստ պատասխանատվության ենթարկել Հայկական ԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի շրջափակման կազմակերպիչներին և իրականացնողներին, ճանապարհներին սանձարձակ արարքներ կատարողներին<sup>609</sup>:

Կենտրոնը անուշադրության մատնեց Հայկական հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող այս խնդիրը: Հայաստան եկող բեռների 85 տոկոսը գալիս էր Ադրբեջանի տարածքով: Կար նաև Վրաստանի վրայով գործող երկաթուղին, սակայն նրա միջոցով բեռների քիչ մասն էր գալիս: Շրջափակման հետևանքով Հայաստանը լիովին չեզոքացվել էր Ադրբեջանի կողմից: Ամենօրյա սպառման համար չէր հերիքում նույնիսկ հացը: Կարևորագույն մատակարարումը իրականացվում էր օդով: Դադարեցվել էր նաև ավիաչվերթները Բաքվով: Այնտեղով Հայաստան էր հասնում դատարկ, փչացած, թալանված գնացքներ, թալանված տնակներ, ցեմենտը ջրով լցված, շինանյութերը թալանված: Դադարեցվել էր աղետի գոտու վերականգնման աշխատանքները: Շատ մանսագետներ ստիպված էին հեռանալ Հայաստանից<sup>610</sup>:

Ուստի 1989 թ. սեպտեմբերի 19-ին Հայկոմկուսի ղեկավարը ԽՄԿԿ կենտկոմի պլենումում բարձրաձայնեց, որ արդեն մեկ տարուց ավելի էր, ինչ ԼՂԻՄ-ը գտնվում էր տնտեսական մեկուսացման պայմաններում, ինչը ամոթալի երևույթ է Խորհրդային Միության համար: Ինքնավար մարզում վառելիքն անգամ չէր բավարարում շտապ օգնության մեքենաների կարիքը<sup>611</sup>: Ս. Հարությունյանը շեշտեց, որ Արցախի հարցը երկու հանրապետությունների տարածքային վեճի առարկա չէ: Հայկական ԽՍՀ կուսակցական առաջնորդը խոսեց նաև Ղարաբաղի տնտեսական ծանր վիճակի մասին ու հայտնեց, թե Ադրբեջանի ԽՍՀ Գերագույն խորհրդի վերջին

---

<sup>609</sup> ՀԱԱ, ֆ. 207, ց. 32, գ. 317, թ. 5-7: Տե՛ս նաև Խորհրդային Հայաստան, թ. 224, 23. 03. 1989:

<sup>610</sup> С. Амбарцумян, նշվ. աշխ., էջ 113:

<sup>611</sup> Սովետական Հայաստան, թ. 221, 20. 09. 1989:

նստաշրջանում կոռուպցիոն իշխանության պարագլուխները պահանջել են խստացնել ԼՂԻՄ-ի և Հայաստանի այդ հանցավոր միջոցը, որը միջազգային իրավունքի տեսակետից դիտվում է որպես պատերազմական գործողություն:

Ինչ վերաբերում է Ադրկոմկուսի ԿԿ առաջին քարտուղար Ա. Վեզիրովին, ապա նա պլենումում լռության մատնեց այս խնդիրը: Կարծես վերջինը տեղյակ չէր շրջափակումից և ոչ էլ Ադրբեջանում հայ բնակչության նկատմամբ իրագործվող բռնություններից<sup>612</sup>:

Ի՞նչ պիտի արվեր այդ վիճակից դուրս գալու համար - ամեն հնարավորը: Հայ ժողովրդի պատվիրակները՝ Հենրիկ Պողոսյանը, Զ. Բալայանը, Բ. Դադամյանը, Վ. Գաբրիելյանը, Վ. Գրիգորյանը, Հ. Իգիթյանը, Լ. Ալավերդյանը, Գոհար Ենոքյանը, Մ. Մինասբեկյանը, Ս. Խանգադյանը, Ս. Համբարձումյանը, Հ. Ոսկանյանը, Ս. Հարությունյանը շրջափակմանը մանրամասն անդրադարձան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 2-րդ նստաշրջանում՝ առաջին իսկ օրը հրավիրելով բոլորի ուշադրությունը տարածքում իրավիճակի սրման ու Հայաստանի և ԼՂԻՄ-ի շրջափակման վերացման հարցին: Բացի դրանից, հայկական կողմը Մ. Գորբաչովին առաջարկեց շրջափակումը դարձնել ԽՍՀՄ ԳԽ երկրորդ համագումարի օրակարգի հարց: Սակայն այդ առաջարկի կողմ քվեարկեցին 578 պատգամավոր, դեմ՝ 1318, ձեռնպահ՝ 96<sup>613</sup>: Կենտրոնի համար նման արդյունք կազմակերպելը խայտառակություն էր: Եվ ամոթ էր երկիրը իմանար, թե ինչպես է մեկ՝ Արդբեջանի հանրապետությունը, շրջափակման ենթարկել մեկ այլ հանրապետության:

Այնինչ, «Մոսկովսկիե նովոստի» թերթը 1989 թ. հոկտեմբերի 1-ին հրապարակած Ավետ Դեմուրյանի և Անդրեյ Պոլինկովի «Շրջափակում: Հայաստանը այս օրերին» հոդվածում պատմում են, թե ինչպես Երևանում ստիպված են մթերքները բերել օդով: Ըստ էության՝ Հայաստանը կտրված էր Միությունից: Կոռումպացված Ադրբեջանի նպատակն էր հայ ժողովրդին ստիպել հրաժարվել Արցախի ազատագրման գործից և ԼՂԻՄ բնակչությանը պաշտ-

<sup>612</sup> Бакинский рабочий, № 217, 17. 09. 1989 и № 218, 19. 09. 1989:

<sup>613</sup> С. Амбарцумян, նշվ. աշխ., էջ 119:

պանելուց: Ընդհանուր տրամադրությունը կոտրելու նպատակով, 1989 թ. հոկտեմբերի 10-ին Ստեփանակերտում մի ողբերգություն կազմակերպեցին Սվերդլովսկի հրշեջտեխնիկական ուսումնարանի սովորողները, որոնք Շուշիից գնում էին Կիրովաբադի օդանավակայան՝ մշտական տեղավորման վայր մեկնելու համար:

Ձայնային ազդանշաններով ուղեկցվող ավտոշարասյունը գլխավորում էր փոխգնդապետ Վ. Շիրովը: Քաղաքի՝ աղմուկի վրա դուրս եկաց բնակիչներն ընկել էին սովորողների և սպաների կրակի տակ: Վիրավորվել են տասնյակից ավել անմեղ անձինք, որոնցից մեկը՝ չորս երեխայի հայր, քանդակագործ 39-ամյա Սպարտակ Հակոբյանը, մահացավ: Այդ վայրագությանն ի պատասխան ամբողջ Ստեփանակերտը ըմբոստացել էր<sup>614</sup>:

Իսկ Մոսկվան՝ անտեսելով հայերի ահազանգն ու վրդովմունքը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թ. հոկտեմբերի 10-12-ին կայացած նստաշրջանում առաջ է քաշել մի անդեմ ու պարտականություններից զուրկ որոշման նախագիծ: Այն առաջարկում էր ի գիտություն ընդունել հայերի ելույթներն ու երկու հանրապետություններից՝ հավասարապես, «ևս մեկ անգամ պահանջել բոլոր անհրաժեշտ միջոցառումների իրականացում»: Բողոքելով նման վերաբերմունքի դեմ, ՀԽՍՀ և ԼՂԻՄ-ի պատգամավորները քեցին նիստերի դահլիճը: Այդ նույն քայլին նրանք ստիպված էին դիմել նաև նստաշրջանի վերջին օրը՝ նոյեմբերի 28-ին:

Նրանց պայքարելու ժամանակ լրատվամիջոցները հաղորդում էին, որ Երևանում շտապ օգնության մեքենային օրական տրվում էր 15 լիտր բենզին: Բժիշկները ստիպված էին տեղերը մեկնել միայն ամենածանր հիվանդի դեպքում, հաճախ էլ ստիպված էին հեռախոսով ցուցմունքներ տալ հիվանդներին: Հանրապետությունում ժամեր հետո թթխմոր չպիտի լիներ, չէր լինելու նաև հաց, լրագրական թուղթ: Պարզապես պահեստները դատարկ էին:

---

<sup>614</sup> Խորհրդային Ղարաբաղ, 14. 10. 1989, Հայրենիքի ձայն, թ. 42, 18. 10. 1989: Այդ սադրանքը նախօրոք ծրագրավորեց հատուկ շրջանի պարետ, տխրահոջակ գեներալ Վ. Սաֆոնովը: Հայկական ԽՍՀ-ում անմիջապես արձագանքեցին այս դավադիր հարձակմանը:

Գլխավոր դատախազ Վլադիմիր Նազարյանը բողոքում էր, որ հանրապետությունը կենտրոնում իրավական անձ չունի և չի կարող բողոքներ ներկայացնել: Օդանավակայանում կուտակվել էին մեծ թվով փախստականներ:

Արցախ սննդամթերք էր հասցվում օդով, զինվորականների օգնությամբ: Մթերք տեղափոխող մեքենաները ենթարկվում էին հրետանակոծության: Ադրբեջանի ժողովրդական ճակատը շրջափակել էր նաև օդային ճանապարհը: Սու Սարգսյանը՝ հանդես գալով հայտարարությամբ, պահանջում էր դատի տալ շրջափակումը կազմակերպիչներին: Այնինչ, Բաքվից մեկնած գնացքներն անհայտանում էին ճանապարհին: Ադրբեջանի իշխանությունները ժխտում էր շրջափակումը: Նրանք հաղորդումներ էին հրապարակում, թե պատրաստվում էին լուծարել ԼՂԻՄ-ը և ով չի բավարարված նրանց ձեռնարկումներից, կարող է հեռանալ հանրապետությունից, նրանց տեղը կուղարկեն թուրք տնազուրկ մարդկանց:

«Մոսկովսկիե նովոստի» թերթում 1989 թ. հոկտեմբերի 22-ի համարի մեկ էջը ամբողջովին նվիրելով Հյաստանի շրջափակման հարցին, թղթակից Լեոնիդ Միլոսլավսկին պատմում է, թե Բաքվից մինչև Մեղրի 400 կմ է: Բաքվից գնալով այդ ճանապարհով, նա տեսել էր շատ գնացքներ թալանված ու ջարդված, որոնք մնացել էին ճանապարհին և տեղ չէին հասել: Վառելիքի հարցում Հայաստանը շարունակում էր մնալ լարված վիճակում: Ստացվող ապրանքները գնում էին աղետի գոտի: Խանութներում մակարոնի, բրնձի, շաքարավազի և այլ մթերքների հերթեր էին: Հոկտեմբերի 17-ի դրությամբ 600-ի փոխարեն տեղ էր հասել 500 վագոն մթերք և հազիվ 1000 ցիստեռն վառելիք<sup>615</sup>:

Եվ նման սուսկալի պայմաններում ԽՍՀՄ ԳԽ Նախագահությունը հոկտեմբերի 20-ին, այնուհետև ամբողջ Խորհուրդը՝ նոյեմբերի 28-ին կայացած իր վերջի նիստում, որոշում էին ընդունում ԼՂԻՄ-ը թողնել Ադրբեջանի կազմում: Այդ որոշումների նախագծե-

---

<sup>615</sup> Московские новости, № 43, 22. 10. 1989.

րին բոլոր հայ պատգամավորները դեմ էին, սակայն անհնարին էր փոխել իշխող մտածելակերպը: Անինչ, այդ որոշումները վատթարագույնն էին: Արցախից պատգամավոր Բորիս Դադամյանը լրագրողի հետ ունեցած հարցազրույցում ասեց, թե Գորբաչովը սիրում էր փաստաթուղթ ձևակերպել, որ ոչ լինի հաղթող, ոչ էլ պարտվող: Լավ, թող մարզը չտրվի Հայաստանին, այլ վերափոխվի միութենական ենթակայության միավորի, միայն չստորադասվի կոռումպացված Ադրբեջանին<sup>616</sup>:

Իսկ դաժան շրջափակումը հետզհետե սաստկանում էր:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը 1990 թ. փետրվարի 13-ին անդրադառնալով շրջափակման հարցին, նշեց, որ այդ աղետը մեծագույն վնաս է հասցրել հանրապետության տնտեսությանը և հասարակական կյանքին: 1989 թ. չորրորդ եռամսյակում շրջափակման հետևանքով Ադրբեջանի երկաթուղով Հայաստան չի մտել 57.984 վագոն: Ընթացիկ տարվա հունվարին Հայաստանի համար նախատեսված 713 գնացքից եկել է ընդամենը 473-ը: Հանրապետության վնասները միայն 1989 թ. երրորդ եռամսյակում կազմել են համապատասխանաբար 229 միլիոն և 1.387 միլիարդ ռուբլի: Առանձնապես վիճակը ծանր էր երկրաշարժի գոտում: Ադրբեջանից բռնագաղթած 240 հազար հայեր Հայաստանում անօթեվան էին: Փախստականների հոսքը Ադրբեջանից չէր դադարում: ՀԽՍՀ ԳԽ վերոհիշյալ նստաշրջանը այդ առթիվ որոշել է.

1. Առաջարկել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ վճռականորեն դատապարտել Ադրբեջանական ԽՍՀ-ի կողմից Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի շրջափակման կազմակերպումը և դրան տալ սկզբունքային քաղաքական գնահատական: Արտակարգ միջոցներ ձեռնարկել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի շրջափակումը վերացնելու վերաբերյալ ընդունված սեփական որոշումների անհապաղ կատարումը ապահովելու համար:

2. ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդ առաջարկություն մտցնել շրջափակման հետևանքով Հայկական ԽՍՀ-ի տնտեսությանը

---

<sup>616</sup> Московские новости, № 44, 26. 10. 1989:

հասցված վնասը Ադրբեջանական ԽՍՀ-ի բյուջեից փոխհատուցելու համար:

3. Դիմել ԽՍՀՄ գլխավոր դատախազին Հայկական ԽՍՀ-ի շրջափակումը կազմակերպող և իրականացնող անձանց խիստ պատասխանատվության ենթարկելու պահանջով<sup>617</sup>:

Սակայն այդ որոշումը ևս արժանացավ նախորդների բախտին՝ հիմնականում կենտրոնական իշխանությունների հանցավոր մեղքով:

\*  
\* \* \*

Հավելենք, որ դեռևս 1988 թ. սեպտեմբերի 28-ին Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի մեծ դահլիճում հրավիրված գիտնականների և ստեղծագործական մտավորականության ժողովը Մ. Գորբաչովին ուղարած հեռագրում ահազանգում էր. «Յոթ ամիս շարունակվող բարոյական տեռորը, մամուլի և հեռուստատեսության միջոցով ամբողջ երկրով մեկ հրահրվող հակահայկական հիստերիան, Ադրբեջանի հանդեպ ցուցաբերվող բացահայտ կողմնապահությունը, անհասկանալի մեղմությունը Սումգայիթի ոճրագործների հանդեպ, այս ամենը մեր ժողովրդին, որն իր դարավոր դիմադրական կարողությունը հավաքած՝ երկար ժամանակ դիմակայում էր զրպարտությունների պղտոր հեղեղին, այժմ զգել է ստրեսային վիճակի մեջ, երիտասարդներին մղել հացադուլների, շաբաթներ տևող նստացույցերի, իրենց մահապարտ հայտարարելու, զրահամեքենաների անիվների մոտ օրերով պառկած մնալու հուսահատ քայլերի...»<sup>618</sup>:

Ժողովականները առաջարկում էին «միջոցներ որոնել լիցքաթափելու լարվածության գերագույն աստիճանի հասած հայ ժողովրդին, արագացնել Արցախի պրոբլեմի վերջնական լուծումը, որը ներկա արտակարգ պայմաններում պետք է լինի՝ հանել Լեռնային

<sup>617</sup> Սովետական Հայաստան, թ. 40, 17. 02. 1990:

<sup>618</sup> Երեկոյան Երևան, թ. 254, 29. 10. 1988:



Ղարաբաղի հնքնավար Մարզը Ադրբեջանի վարչական ենթակայությունից և ժամանակավորապես հանձնել միութենական իշխանությունների իրավասությանը»<sup>619</sup>:

Սրանից քիչ առաջ՝ նույն ամսի 9-10-ը, Գ. Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի է ունեցել հայ մտավորականության առաջին համագումարը, որին մասնակցեց ավելի քան 1000 պատգամավոր՝ Հայկական ԽՍՀ-ից, Արցախից, ներքին սփյուռքից: Համագումարում քննարկվեց տարածաշրջանում ստեղծված արտակարգ սուր իրավիճակի՝ Ադրբեջանի կողմից Հայաստանի, ԼՂԻՄ-ի, Գետաշենի ենթաշրջանի և Շահումյանի շրջանի շրջափակումն ու Բաքվում գտնվող հայերին սպառնացող նոր եղեռնագործության վտանգը: Ժողովի մասնակիցները ընդունեցին հռչակագիր որտեղ խոսվում է Արցախի խնդրի մասին<sup>620</sup>:

### 3.2. Հանրապետության քաղաքական առօրյան (1990 թ. հունվար-օգոստոս)

1990 թ. Բաքվի հունվարյան ցեղասպանությունը ծանր ազդեցություն ունեցավ Խորհրդային Հայաստանի և Արցախի հասարակական-քաղաքական կյանքի վրա: Թուրքերի մոլեգնած վայրագություններից մի կերպ ազատված տասնյակ հազարավոր նոր բռնագաղթածներ հասան Հայաստան՝ ամեն ինչից զրկված, ծեծված, ջարդված, շատերը կիսամերկ ու ողբերգական վիճակում, իսկ Ադրբեջանի մայրաքաղաքի փոխարեն ռազմական դրություն մտցվել էր Լեռնային Ղարաբաղում, ինչը միջոց էր մարզում ստեղծած Ադրբեջանի կազմկոմիտեի արյունոտ ճանկերը ազատ արձակելու համար: Ասենք նաև, որ 1990 թ. հունվարի 17-18-ին Արարատի շրջանի Երասխավանում բռնկված զինված բախումը ավելի է սրել հայ-ադրբեջանական հակամարտությունը, որը հետևանք էր Մոսկվայում մոզոնած հակահայ նոր որոշումների:

<sup>619</sup> Երեկոյան Երևան, թ. 254, 29. 10. 1988:

<sup>620</sup> Նույն տեղում, թ. 221, 12. 09. 1988:

Այսպես, 1990 թ. հունվարի 15-ին հրապարակվեց Գորբաչովի ստորագրած ԽՍՀՄ ԳԽ նախագահության հրամանագիրը: Նրանով արտակարգ դրություն մտցվեց «Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզում, Գորիսի շրջանում, ինչպես նաև ԽՍՀՄ պետական սահմանի երկայնքով Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքում եղած սահմանամերձ գոտում, ինչպես և ԼՂԻՄ-ին հարող շրջաններում: Նաև արգելվում էր «հակասող բոլոր գործողությունները» ու «հայտարարվում էր պարետային ժամ...»<sup>621</sup>: Ո՞րն էր այդ հրամանագրի նպատակը: Արցախահայությանը պաշտպանել վայրագների՞ց: Ամենավին: Որպես ապացույց բերենք վերջին երկու տարվա իրադարձությունները:

1990 թ. փետրվարի 13-ին Ստ. Շահումյանի անվան պալատում իր աշխատանքները սկսեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 11-րդ նստաշրջանը, որտեղ բազմիցս խոսվեց նաև Ղարաբաղի հիմնախընդրի մասին: Այդ ժամանակ հանրապետությունում գտնվող փախստականների թիվը հասնում էր 235 հազարի և նրանք որոշակի ազդեցություն էին գործում հասարակական կյանքի և բարոյահոգեբանական ամբողջ մթնոլորտի վրա: Մինչ այդ ԳԽ-ն քանիցս դիմել էր համամիութենական իշխանություններին՝ աջակցություն խնդրելով, սակայն ոչ մի դրական հետևանք<sup>622</sup>:

Մինչ այդ Հայաստանում զգալի աշխատանք է կատարվել փախստականների կենսական կարիքների՝ նրանց գրանցման, աշխատանքի տեղավորման, բնակարանների փոխանակման, դրամական օգնության և այլ հարցերի լուծման ուղղությամբ: Ձեռնարկված միջոցառումների հետևանքով արդեն տեղավորվել էր 109 հազար փախստական և 90 հազար աշխատունակներից 45 հազարը աշխատում էր: Փախստականներին տրվել է 60 մլն ռուբլու օգնություն: Նրանցից 30 հազարը ստանում էր թոշակ: 800 հա հող է հատկացվել անհատական բնակարաններ կառուցելու համար: Այդ նպատակով տրվել էր 10 մլն ռուբլի արտահերթ երկարատև վարկ:

---

<sup>621</sup> Սովետական Հայաստան, թ. 14, 17. 01. 1990:

<sup>622</sup> Նույն տեղում, թ. 37, 14. 02. 1990:

Ութ հազար ընտանիք ընդգրկվել էր կոոպերատիվ բնակարանային շինարարության համակարգում: Նոր բռնագաղթածներից յուրաքանչյուրին տրվել է 100-ական ռուբլի օգնություն և 200-ական ռուբլու արժողությամբ հագուստեղեն: Առանձնացվել է 23 հազար տեղով կացարաններ<sup>623</sup>: ՀԽՍՀ ԳԽ փետրվարի 13-ին ընդունած որոշման մեջ դատապարտվել էր Բաքվում կազմակերպված հայերի ջարդը, այն որակվել հայերի ցեղասպանության շարունակություն և առաջարկվել «խիստ պատասխանատվության ենթարկել 1990 թվականի հունվարին Բաքվում և Ադրբեջանական ԽՍՀ մյուս շրջաններում տեղի ունեցած ոճրագործությունների կազմակերպիչներին և իրականացնողներին»<sup>624</sup>:

Սակայն փախստականների վերջին բեկորների ներգաղթը անդադար էր: 1990 թ. փետրվարի տվյալներով Հայաստանում այդ անձանց թիվը հասել էր 240 հազարի<sup>625</sup>, իսկ Ադրբեջանից հեռացած բոլոր հայերի թիվը՝ 350 հազարի, որից 110 հազարը տեղափոխվել էին աշխարհի այլ երկրներ: Փաստենք, որ Ադրբեջանը, առանց Արցախի, լրիվ հայաթափվել էր այդ հանրապետության պարագլուխների և կոռումպացված հանցագործների քաղաքականության հետևանքով:

Հայ ժողովուրդը մարտնչում էր Բաքվում տեղի ունեցած գեհեների դեմ: 1990 թ. հունվարի 15-ին Հայկական ԽՍՀ Գիտությունների Ակադեմիայի նախագահությունը հետևյալ բանաձև է ուղարկել Խորհրդային Միության և արտերկրի ականավոր մասնագետներին. «Հայաստանի Գիտությունների Ակադեմիան դիմում է աշխարհի բոլոր գիտնականներին՝ կոչ անելով բողոքի ձայն բարձրացնել Ադրբեջանական ԽՍՀ-ում հայ բնակչությանը բարբարոսական բնաջնջման դեմ: Սումգայիթի անպատիժ ցեղասպանությունից հետո գազանությունների նոր ալիքը իր գազաթնա-

---

<sup>623</sup> Սովետական Հայաստան, թ. 37, 14. 02. 1990:

<sup>624</sup> Նույն տեղում, թ. 39, 16. 02. 1990:

<sup>625</sup> Տեղեկագիր, թ. 3, 1990, էջ 25–27:

կետին հասավ 1990 թվականի հունվարի 14-ին Բաքվում հայերի զանգվածային սպանություններով»<sup>626</sup>:

Այդ կոչը լայն արձագանք գտավ խորհրդային և արտասահմանյան գիտաշխատողների շրջանում: Հայկական ԽՍՀ Գիտությունների Ակադեմիայի նախագահության հասցեով ստացվել են արտերկրյա բազմաթիվ հետազոտական կենտրոններից և միութենական հանրապետությունների Գիտությունների Ակադեմիաներից ուղարկած հեռագրեր, որոնցում ցատումով դատապարտվում են չարագործությունները աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի՝ հայերի հանդեպ, որը իր ուրույն ավանդ ունի համաշխարհային քաղաքակրթության մեջ:

1990 թ. հունվարի 18-ին ԱՄՆ սենատորներ Պիտ Վիլսոնը, Պոլ Սայմոնը, Լարրի Պրեստոնը, Ջոն Քերրին, Կլեյբորն Պելին դիմելով Մ. Գորբաչովին, գրեցին. «Խորապես անհանգստացած ենք վերջին վեց օրվա ընթացքում Բաքվում տեղի ունեցող սպանությունների, բռնությունների և հայ ազգաբնակչության ունեցվածքի հափշտակությունների առթիվ: 60 սպանվածների և 197 վիրավորվածների մեծ մասը հայեր են... Արյունալի դեպքերը խորհրդային զինվորները բնորոշում են որպես քաղաքացիական պատերազմ»<sup>627</sup>: Նամակի հեղինակները խնդրում էին բոլոր ուժերը ներդնել այդ ամենին վերջ տալու համար: Դադարեցնել նաև Հայաստանի շրջափակմանը և ողբերգությունն այնպես լուծել, որ «մարդիկ Արցախում ազատորեն կարողանան ընտրել իրենց քաղաքական ու մշակութային ճակատագիրը»<sup>628</sup>:

Ելնելով պահի ծանրագույն պայմաններից, 1990 թ. հունվարի 13-ին ՀԿԿ կենտկոմը, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը, Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհուրդը հանրապետությունում ձևավորում են կառավարական օպերատիվ շտաբ: Նրա կազմի մեջ ընդգրկվել էին նաև հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ամեն օր

---

<sup>626</sup> Սովետական Հայաստան, թ. 14, 17. 01. 1990:

<sup>627</sup> Հայք, թ. 2, 28. 01. 1990:

<sup>628</sup> Նույն տեղում:

տեղի էր ունենում օպերատիվ շտաբի հավաք, որտեղ քննարկվում էր ընթացիկ իրադարձություններն ու տրվում գնահատական: Օրինակ. հունվարի 18-ին հրավիրված նիստում անդրադառնալով փախստականների հարցին, պարզվեց, որ նոր եկած մարդկանց զգալի մասը հրաժարվում էին ոչ միայն տնավորվել Սևանի ավազանի գյուղերում նրանց համար հատկացված բնակարաններում, այլև Արարատյան դաշտավայրի գյուղերում հաստատվելուց: Այդ հանգամանքը լուրջ դժվարություններ հարուցեց, քանի որ դեռևս լուծված չէր ավելի վաղ եկած 98 հազար փախստականների տեղավորման հարցը:

Այդ օրերին Հայկոմկուսի ԿԿ-ն, Հայաստանի Գերագույն խորհուրդի նախագահությունը և Մինիստրների խորհուրդը ստեղծել են նաև արտակարգ իրադրության խորհուրդը՝ Ս. Հարությունյանի գլխավորությամբ, որին առընթեր գործում էր օպերատիվ շտաբը: Արտակարգ իրադրության հանրապետության խորհրդի նպատակն էր «ռեգիոնում ստեղծված իրադրության կապակցությամբ լարվածության ծավալման կանխումը, իրադրությունը կայունացնելու [համար] ժողովրդական տնտեսության և կենսագործունեության օբյեկտների բնականոն գործունեության ապահովումը, հանրապետությունում հասարակական կարգուկանոնի պահպանման ջանքերի համաձայնեցումը»<sup>629</sup>:

Հունվարի 14-16-ին հայ ժողովրդին պարտադրված Երասխավանի թեժ մարտերի օրերին Հայաստանում գործող քաղաքական ու հասարակական 34 կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդաժողովը որոշեց մասնակցել հետևյալ հրատապ խնդիրների լուծմանը.

ա) Համաժողովրդական ինքնապաշտպանության կազմակերպման,

բ) Արցախի վերամիավորման ամրապնդման,

գ) Աղետի գոտու վերականգնման:

Հունվարի 16-ին ընդունված Հռչակագրով կազմակերպությունները դիմեցին Մայր Հայրենիքի, խորհրդային և արտերկրյա

<sup>629</sup> Սովետական Հայաստան, թ. 18, 21. 01. 1990:

սփյուռքի բոլոր ուժերին ներգրավել Համահայկական միացյալ ճակատի ձևավորմանը: Ընդունելով ՀԽՍՀ կառավարության կից օպերատիվ շտաբ ստեղծելու անհրաժեշտությունը, խորհրդաժողովը հույս է հայտնել, որ այն կվերաճի Ազգային պաշտպանության խորհրդի՝ պարտադիր կերպով իր մեջ ներառելով հայրենիքի և սփյուռքի քաղաքական ուժերը: Խորհրդաժողովը համոզված էր, որ այդպիսի՝ պետական մարմինը միայն, կարող էր հաջողությամբ իրագործել Հայաստանի Հանրապետության անհրաժեշտ պաշտպանությունը, արտահայտել բովանդակ հայության կամքն ու ակնկալել միջազգային աջակցություն<sup>630</sup>:

Արմենպրեսի հաղորդումից իմանում ենք, որ 1990 թ. հունվարի 19-ին տեղի ունեցած Արտակարգ իրադրության հանրապետական խորհրդի նիստում նրա մասնակիցները ունկնդրել են ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Վ. Մովսիսյանի, Պետանվտանգության կոմիտեի նախագահ Վ. Բադամյանցի, ներքին գործերի նախարար Հ. Հարությունյանի, Երևանի կայազորի պետ, գեներալ-մայոր Ն. Դիշչևի հաղորդումները: Լսվել է նաև փախստականների հետ կապված Մինիստրների խորհրդի նախագահ Վ. Մարգարյանցի հաղորդումը կառավարության կողմից ցույց տրվող օգնության մասին: Իսկ հունվարի 20-ին գումարված նիստում քննարկվել է հանրապետությունում վիճակը կայունացնելու և սադրանքների չենթարկվելու խնդիրը: Նաև հաղորդում է հնչել Ադրբեջանամերձ շրջաններում տիրող կացության մասին, ըստ որում հատկապես վտանգավոր գնահատվեց Արարատի շրջանի Երասխավանի, Ազիզբեկովի շրջանի Խնձորուտ, Սիսիանի շրջանի Շաղաթ, Նոյեմբերյանի շրջանի Ոսկեպար բնակավայրերում առկա իրադրությունը: Որոշվեց այդ գյուղերն ուղղել խորհրդային բանակի ստորաբաժանումներ:

Այսպիսով՝ Արտակարգ իրադրության հանրապետական խորհրդում հետևողաբար քննարկվում էին հանրապետության կյանքին առնչվող կենսական հարցեր և ընդունվում գործնական որոշումներ: Վերոնշյալ խորհրդից բացի, ՀԽՍՀ-ին առընչվող հույժ

<sup>630</sup> ՀԱԱ, ֆ. 1679, ց. 1, գ. 6, թ. 1:

անհրաժեշտ հարցեր էին քննարկվում նաև բարձրադիր մարմիններում: Այդ օրերին մեր հանրապետության Դատախազության կոլեգիան վերլուծելով Հայկական և Ադրբեջանական ԽՍՀ-ներում ծավալվող իրադարձությունները, բողոք է ներկայացրել ԽՍՀՄ Գլխավոր դատախազ Ա. Սուխարևին:

Օրինակ. 1990 թ. հունվարի 21-ին «7 օր» ծրագրի հաղորդման ժամանակ կենտրոնական հեռատեսության լրատվության գլխավոր խմբագիր է. Սագալովը, վկայակոչելով ՏԱՍՍ-ի պընդումը, հայտարարեց, թե Հայաստանում «ծայրահեղական տարրերը չեն դադարեցնում սպառնալիքները զինծառայողների հասցեին, պահանջելով հեռանալ Հայաստանի սահմաններից»: Այդ կեղծիքը արդարացի վրդովմունք էր առաջացրել ՀԽՍՀ-ում տեղաբաշխված խորհրդային բանակի, ներքին գործերի ծառայողների, նրանց հրամանատարության և ամբողջությամբ վերցրած հայ հասարակության մեջ: Նման հաղորդումները միահամուռ գնահատվում էին որպես սադրիչ, որոնց նպատակը ժողովրդի ու բանակի միջև սեպ խրելն էր: Հունվարի 22-ին համանման աղավաղում էր տեղի ունեցել նաև «Իզվեստիյա» թերթում<sup>631</sup>:

Հանրապետական խորհրդի հունվարի 24-ի նիստում անդրադարձ եղավ Արցախում և հարակից շրջաններում մտցված արտակարգ դրության և այն գնահատվեց բացասական: Հաջորդ՝ հունվարի 25-ի նիստում հաղորդվել է, որ այդ օրը «Յակ-40» ինքնաթիռն և ուղղաթիռները 14 ուղերթ են կատարել դեպի Ստեփանակերտ, Գետաշեն, Հադրութ և Մարտակերտ: Կրկին լսվել են գաղթականներին վերաբերող հարցեր<sup>632</sup>: Հունվարի 27-ի նիստում նշվեց, որ հանրապետությունում միջոցների կամավոր հանգանակություն է կատարվում Բաքվից փախստականներին ու զինծառայողների ընտանիքներին նպաստ մատուցելու համար: Որոշվեց կազմակերպել շաբաթօրյակներ ու դրանցից եկած օգուտները հատկացնել այդ նպատակին: Հաղորդվեց նաև, որ Ստեփանակերտի հետ հեռախոսակապը վերականգնվեց, միջոցներ էին ձեռ-

<sup>631</sup> Տե՛ս խորհրդային Հայաստան, թ. 20, 24. 01. 1990:

<sup>632</sup> Նույն տեղում, թ. 22, 26. 01. 1990:

նարկվում Մեղրիի շրջանով հաղորդակցությունը վերականգնելու համար, սակայն ազերի ծայրահեղականները շարունակում էին երկաթուղու շրջափակումը<sup>633</sup>:

1990 թ. հունվարին սկիզբ առած իրադարձությունները շարունակություն ունեցան թե՛ Հայկական ԽՍՀ-ում, և թե՛ Արցախում: Այդ ժամանակ Ստեփանակերտում և մարզի շրջկենտրոններում ասես կյանքը կանգ էր առել: Հունվարի 29-ից չէին աշխատում մարզկենտրոնի արդյունաբերական և շինարարական ձեռնարկությունները, տրանսպորտը, բնակչության սպասարկման և մշակութալուսավորական ոլորտները: Գործում էին միայն բուժսպասարկման հիմնարկներ ու պարենային խանութները: Այդ ամենը պատասխան էր Ստեփանակերտ ժամանած Ադրբեջանի կազմկոմիտեին, որի կազմում ԼՂԻՄ-ից մեկ անդամ էլ չկար: Այդ կոմիտեն ղեկավարում էր Ադրբեջանի կոմկուսի երկրորդ քարտուղար Վ. Պոլյանիչկոն, որը մինչ այդ իր հակաժողովրդական դեմքը ցուցադրել էր Աֆղանստանում, ուր գլխավորում էր խորհրդային բանակի քաղաքական գործունեությունը:

Մեզ մոտ՝ Արցախում, նրա աջ ձեռքն էր հանդիսանում գեներալ Սաֆոնովը: Արցախահայությունը լիովին մերժում էր Վ. Պոլյանիչկոյին: Ի դեպ, կոմիտեի գործունեության ժամանակաշրջանը արցախահայության ազատագրական պայքարի ամենադաժան, ամենաձանր ժամանակներից էր: Այդ հատվածում կիրառվեց «Կուցո» («Օղակ») հանցավոր ռազմական գործողությունը:

Իրադրությունը Հայկական հանրապետությունում էլ ավելի բարդացավ, երբ հունվարի 28-ին Երևանում ռազմական տեխնիկայի առգրավման գործողության ընթացքում զոհվեց «Աստրո» արտադրական միավորման բանվոր Է. Մարկոսյանը:

Ողջ հանրապետությունում բողոքի ցույցեր էին ծավալվել: ՀԽՍՀ Դատախազության կողմից հարուցվել էր քրեական գործ և կատարվում էր նախաքննություն: Միևնույն ժամանակ կազմվում էր պատգամավորական հանձնաժողով հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ, որին հանձնարարվեց ուսումնասիրել

<sup>633</sup> Խորհրդային Հայաստան, թ. 23, 28. 01. 1990:



կատարվածի հանգամանքները և արդյունքների մասին զեկուցել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը: Տեղի ունեցող հանրահավաքներում մերկացվում էր այդ արարքն ու պահանջվում պատժել դրա կազմակերպիչներին<sup>634</sup>:

Բազմաթիվ գիտնականներ, գրողներ, մշակույթի այլ գործիչներ ելույթներ են ունենում Բաքվում տեղի ունեցած վանդալիզմի դեմ և անօրեն գնահատում Արցախում ռազմական դրություն մտցնելը: Հունվարի 28-ին «Հայք» թերթում Լևոն Տեր-Պետրոսյանը հանդես գալով «Մոսկվան այլընտրանք չունի» վերտառությամբ հոդվածով, մերկացրեց հունվարի 13-ին Բաքվում սկիզբ արած հայ ժողովրդի դեմ սարսափելի ոճրագործությունը: Նա Ադրբեջանի մայրաքաղաքում տեղի ունեցած զանգվածային ջարդերը բնորոշում է ցեղասպանություն, որի ընթացքում տեղի են ունեցել «տների հրկիզումներ, հիսունից ավելին մարդկային զոհեր, հարյուրավոր վիրավորներ, հազարավոր փախստականներ»:

Պարզապես՝ «Ադրբեջանական ղեկավարության և կենտրոնական իշխանության մեղսակցությամբ կրկնվեց սումգայիթյան եղեռնագործությունը...»: Բաքուն «հրոսակների կատաղի հարձակումների թիրախ դարձրեց» նաև «Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայկական գյուղերը»: Հեղինակը մերկացրեց կենտրոնական իշխանությունների բռնած հակահայ քաղաքականությունը ու դատապարտում այն<sup>635</sup>:

Աշխարհի շատ տեղերից շարունակ պատասխաններ էին առաքում 1990 թ. հունվարի 15-ին ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի նախագահության դիմումին, որոնցում խստորեն դատապարտվում էր Բաքվում հայության նկատմամբ իրագործված եղեռնը: Մասնավորապես, ԱՄՆ-ի Կոննելյան համալսարանից Մ. Գորբաչովին ուղղված հեռագրում ասված է. «Ինդրում ենք հաշվի առնել հայերի պատմական ավանդն ու թույլ չտալ, որ ողբերգություն կատարվի հայ ժողովրդի հետ: Լեռնային Ղարաբաղը կարոտ է

<sup>634</sup> Խորհրդային Հայաստան, թ. 26, 01. 02. 1990:

<sup>635</sup> Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 69:

քաղաքական լուծման, և Դուք պետք է գործեք առավել հաստատակամորեն»<sup>636</sup>:

Ֆրանսիայի համալսարանների, հետազոտական կենտրոնների անվանի գիտնականները անչափ մտահոգված լինելով Ադրբեջանում և մասնավորապես Բաքվում տեղի ունեցած հայկական ջարդերով և այն վտանգով, որ սպառնում էր արցախահայությանը, ուղերձ են հղել Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ֆրանսուա Միտտերանին՝ նրան խնդրելով սատար կանգնել արցախցիներին: Այդ ուղերձում մասնավորապես ասված է. «Անհրաժեշտ է ահազանգել ու դիմել Միավորված ազգերի կազմակերպությանը և նրա Անվտանգության խորհրդին, խնդրելով նրանց աջակցել այս տարածաշրջանի հայ բնակչությանը, որը գտնվում է նոր ցեղասպանության շեմին: Խնդրում ենք օդային կամուրջ հաստատել նյութական միջոցներով օգնելու, փրկելու հայ ազգաբնակչությանը, որը զոհ է դառնում Ադրբեջանի շրջափակմանը»:

Այդ դիմումը ստորագրել են Նոբելյան մրցանակի դափնեկիր Ֆրանսուա ժակոբը և գիտական խոշորագույն կենտրոնների, տարբեր միավորումների ղեկավարներ, համալսարանների ռեկտորներ, թվով 80 մարդ<sup>637</sup>: Միևնույն ժամանակ Ֆրանսիայի Ակադեմիայի նախագահ Ժան Օբուենի ստորագրությամբ ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիային ուղղված հեռագրում ասված է. «Ստացանք Ձեր հեռագիրը: Մենք չափազանց հուզված և մտահոգված ենք այն դեպքերից, որոնց մասին դուք հայտնում եք: Ձեզ ծանոթ են մեր զգացմունքներն ու համակրանքը, և մենք ձեզ ջերմորեն մաղթում ենք իրավիճակի շուտափույթ ու լիակատար բարելավում»: Հուզիչ էին նաև Բելգիայի Թագավորական ակադեմիայի, Շվեդիայի Թագավորական ակադեմիայի գլխավոր քարտու-

---

<sup>636</sup> Երեկոյան Երևան, թ. 45, 24. 02. 1990: 1990 թ. հունվարին Կիրովաբադի խորհրդային և կուսակցական ղեկավարների պահանջով ծերանոցից հանում են 12 ծեր ու հաշմանդամ հայերի, տանում Լենինի արձանից ոչ հեռու բոլորին մորթում: Մ'ոսկվան այդ փաստն անուշադրության է մատնում (Երեկոյան Երևան, թ. 48, 04. 05. 1990):

<sup>637</sup> Սովետական Հայաստան, թ. 28, 03. 02. 1990:

ղար Կառլ Օլոֆ Յակոբսոնի, Ավստրիայի, Վրաստանի, Բալթյան հանրապետությունների և Մոլդովայի Գիտությունների ակադեմիաների կազմած հեռագրերը<sup>638</sup>:

Միաժամանակ, 1990 թ. փետրվարի սկզբին Խորհրդային Հայաստանից 20 ժողովրդական պատգամավորներ դիմում են հղել իրենց կուլեգաներին՝ ԽՍՀՄ պատգամավորների միջտարածքային խմբին, որում անդրադառնալով հունվարի 28-ին Մոսկվայում հրավիրված խորհրդային և օտարերկրյա լրագրողների համար կազմակերպված մամուլի ասուլիսին, քննադատվել է նրա «Անդրկովկասյան խնդիրներն» ամփոփագիրը: Այդ տխրահոշակ փաստաթղթում Ադրբեջանում իրականացված արյունահեղ հանցագործությունները և ցեղասպանությունը նույնացվել էին Հայկական ԽՍՀ-ում և ԼՂԻՄ-ում տեղի ունեցած ազգամիջյան ընդհարումների հետ: Ու էլ ավելի զայրացուցիչ, ասուլիսում պնդել էին, թե իբր Ադրբեջանի Ազգային ճակատը գործել էր ժողովրդավար ձևով:

Այնինչ, հայ ժողովրդի ընտրած պատգամավորները հիշեցնում էին պաշտոնակիցներին՝ չէ որ Բաքվում ջարդերին վերջ տալու համար դուք ասում էիք, թե զորքերը շուտ պետք էր մտցնել այնտեղ: Դուք՝ դեպուտատներդ, կարո՞ղ էիք կառավարությունից պահանջել միջոցառումներ ձեռնարկել, թե՞ սպասում էիք մինչև վերջին հային մորթեին: Վեզիդովը մինչև վերջին օրը գործել է ազգային ճակատի հետ համերաշխ: Ո՞րն էր ազգային ճակատի ժողովրդավարությունը, ավերիչ ուժն և լկտի ազգամոլություն լինելուց բացի: Իզուր եք երկրի և աշխարհի հասարակությանը մոլորության մեջ գցում և Ադրբեջանի ժողովրդական ճակատում ինչ-որ «ժողովրդավարություն» որոնում<sup>639</sup>:

Մեր ինքնության դեմ իրագործվող կենտրոնի և Ադրբեջանի քաղաքականությունը մերկացնող հայտարարությամբ փետրվարի 1-ին հանդես է եկել նաև «Ազգային ինքնորոշում» միավորումը, որը Կրեմլի ազգամիջյան հակասություններ ու թշնամանք բորբոքելու և հայկական ջարդեր դրդելու վարվելակերպը շեշտելով, նշեց հայ

<sup>638</sup> Սովետական Հայաստան, թ. 28, 03. 02. 1990:

<sup>639</sup> Նույն տեղում, թ. 29, 04. 02. 1990:

ժողովուրդի իր ճակատագիրը ինքնուրույն տնօրինելու իրավունքը<sup>640</sup>: Նույն թվականի փետրվարի 5-ին «Միացում» ընկերությունը, ԱԻՄ-ը, ՍԻՄ-ը, Հայոց ազգային բանական ու Հայ կանանց միությունը ուղղերձ են հղել աշխարհի ժողովուրդներին: Նրանք դեմ գնալով Մոսկվայի վարքագծին, ողջ աշխարհին տեղեկացնում էին, որ կենտրոնի անդրկովկասյան քաղաքականությունը հիմնվում էր այն դրույթի վրա, թե իբր այստեղ ապրող բոլոր ազգերը բնակվում են իրենց ազգային տարածքում:

Դա լիովին կեղծ է և հրահրիչ: Ուղերձում հայտարարվել է, որ «հայ ժողովրդի պայքարը ազգային-ազատագրական է և ուղղված է ազգային պետականության վերականգնմանը և ոչ թե որևէ այլ ժողովրդի դեմ, հայ ժողովուրդը ձգտում է քաղաքական ճանապարհով իրականացնել ազգային խնդիրները և դատապարտում է ազատության և անկախության պայքարի դեմ գործադրվող ցանկացած բռնություն և պատրաստ ենք հակահարված տալ յուրաքանչյուրին, ով ձեռք կբարձրացնի մեր սրբությունների վրա»<sup>641</sup>:

Նույն խնդրին անդրադարձել էր նաև ՀԿԿ կենտկոմի ղեկավարը փետրվարի 6-ին տեղի ունեցած ԽՄԿԿ կենտկոմի պլենումում ունեցած իր ելույթում: Ս. Հարությունյանը ընդգծե՞ծ, որ ԼԴԻՄ-ի հարցը տարածքային վեճ չէ: Այդ հարցը առաջադրել է Լեռնային Ղարաբաղի բնակչությունը, և դրա էությունը ժողովրդի ինքնորոշումն է: ՀԿԿ առաջին դեմքը նշել է, որ լուրջ սխալ էր եղել, երբ չնկատեցինք, որ վերակառուցման ճանապարհը ինչպես խոր ակոս խոջընդոտեց Սումգայիթի ջարդը: Որպես դրա հետևանքը մեր կյանք մուտք գործեց մի աննախադեպ երևույթ՝ գաղթականներ խաղաղ ժամանակներում: 300 հազարից ավելի հայեր ստիպված եղան հեռանալ Ադրբեյջանից և 157 հազար ադրբեյջանցիներ՝ Հայաստանից<sup>642</sup>:

Պլենումից մեկ շաբաթ հետո՝ փետրվարի 13-15-ին, Ս. Շահումյանի անվան համագումարների պալատում հրավիրվեց ՀԽՍՀ

<sup>640</sup> ՀԱԱ, ֆ. 1679, ց. 1, գ. 6, թ. 3:

<sup>641</sup> Նույն տեղում, գ. 5, թ. 4:

<sup>642</sup> Խորհրդային Հայաստան, թ. 32, 08. 02. 1990:

ԳԽ 11-րդ նստաշրջանը: Ժողովրդի ընտրյալները մի անգամ ևս անդրադարձան Ղարաբաղի հիմնախնդրին, որը բխում էր սահմանադրական պահանջից: Անցած 20 ամսում ՀԽՍՀ ԳԽ Նախագահությունը բազմիցս վերլուծեց այդ հարցը և համապատասխան պահանջներ ներկայացրել Մոսկվա: Սակայն կենտրոնական ատյանները մեկ անգամ չանդրադարձավ դրան<sup>643</sup>: Հայաստանի Գերագույն խորհուրդը մերկացնելով 1990 թ. հունվարին Բաքվում հայության դեմ Ադրբեջանի իշխանությունների և Ազգային ճակատի ազգայնամոլների իրագործած վայրագությունները, որոշել է.

«Պահանջել ԽՍՀՄ Գերագույն խորհրդից դատապարտել Ադրբեջանում հայերի ցեղասպանությունը, ստեղծել պատգամավորական հանձնաժողով այդ հարցը հանգամանորեն ուսումնասիրելու համար, բացառել նման երևույթների կրկնությունը, հանցագործներին խիստ պատասխանատվության ենթարկել, պահանջել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երրորդ նստաշրջանում քննարկել Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզում տիրող իրավիճակը»<sup>644</sup>: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նույն նստաշրջանում ընդունված մեկ այլ որոշման մեջ, խոսելով ՀԽՍՀ շրջափակման մասին, պահանջվել էր միջոցառումներ ձեռնարկել այն վերացնելու համար<sup>645</sup>:

Նկատենք, որ 1990 թ. առաջին կեսին հանրապետության Գերագույն խորհրդի որոշումների համաձայն մեզ մոտ տեղի են ունեցել վարչական որոշ փոփոխություններ: Օրինակ հունվարի 30-ի որոշումով Արարատի, Էջմիածնի, Իջևանի, Նոյեմբերյանի և Վայքի շրջաններում ստեղծվել էին ընտրական նոր տեղամասեր<sup>646</sup>: Ապրիլի 5-ին վճռվեց վարչական փոփոխություններ կատարել Նոյեմբերյանի, Աբովյանի և Սիսիանի շրջաններում<sup>647</sup>: Ապրիլի 11-

---

<sup>643</sup> Խորհրդային Հայաստան, թ. 37, 14. 02. 1990:

<sup>644</sup> Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհրդի (ՀԽՍՀ ԳԽ), Տեղեկագիր, 1990, թ. 3, էջ 28:

<sup>645</sup> Նույն տեղում, էջ 28–30:

<sup>646</sup> ՀԱԱ, ֆ. 207, ց. 66, գ. 1, թ. 18:

<sup>647</sup> Նույն տեղում, թ. 105:

ին քաղաքային 22 խորհուրդ վերափոխվեց 37 շրջանային խորհուրդների<sup>648</sup>: Մայիսի 3-ի որոշումով թույլատրվեց խորհրդային բանակի զորամասերից հարկադրաբար հեռացած հայ զինծառայողների հետագա ծառայությունը անցկացնել ՀԽՍՀ տարածքում<sup>649</sup>: Մայիսի 7-ի վճիռով Իջևան քաղաքը դասվեց որպես ՀԽՍՀ շրջանային ենթակայության քաղաք<sup>650</sup>:

Այդ նույն օրը վարչական փոփոխություններ կատարվեցին Ապարանի շրջանում<sup>651</sup>, մայիսի 29-ի որոշումով վարչական փոփոխություններ են կատարվել Գորիսի, Եղեգնաձորի, Կրասնոսելսկի, Ղուկասյանի, Մեղրու և Վայքի շրջաններում<sup>652</sup>: Այդ բոլոր փոփոխությունները կապվում էին հանրապետությունը պաշտպանելու անհրաժեշտության հետ:

1990 թ. մարտի 5-ին Մ. Գորբաչովը վավերացրեց մի որոշում՝ Ադրբեջանական ԽՍՀ-ում և Հայկական ԽՍՀ-ում իրավիճակը նորմալացնելու միջոցառումների մասին: Երկրի առաջին դեմքը խոստովանեց, որ նախկինում ընդունված բոլոր որոշումներն ու միջոցառումները դրական արդյունք չեն տվել: Սակայն, փոխանակ դատապարտեր Բաքվում իրագործած ցեղասպանությունը, նա հայտարարեց, թե այդ մասին ավելի հստակ խոսվելու է ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավորների 3-րդ արտահերթ համագումարում: Կարծում ենք, նրա նախաձեռնությունները իրականությունից կտրրված էին: Նա դարձյալ երկու հանրապետությունները կապում էր իրար և ոչ մի տարբերություն չէր ընդունում: Այդ ժամանակ բարձրագույն օրենսդիր մարմնի ղեկավարը հակված էր իրեն տեսնել միայն ԽՍՀՄ նախագահի պաշտոնում: Ուստի այդ միջոցառմանը հաստատվում է նախագահի պաշտոնը և մարտի 15-ին ԽՍՀՄ

---

<sup>648</sup> ՀԱԱ, ֆ. 207, ց. 66, գ. 1, թ. 111-113:

<sup>649</sup> Նույն տեղում, թ. 144:

<sup>650</sup> Նույն տեղում, թ. 150:

<sup>651</sup> Նույն տեղում, թ. 152:

<sup>652</sup> Նույն տեղում, թ. 156-173:

ժողովրդական պատգամավորների արտահերթ համագումարում ընտրվում է ԽՍՀՄ առաջին և վերջին նախագահ<sup>653</sup>:

Այդ միջոցին Արտակարգ իրադրության հանրապետական խորհրդի օպերատիվ շտաբը տեղեկացավ, որ Գետաշենի ենթաշրջանից Ազատ գյուղը ուժով բռնազավթել են: Ստեղծվեց մի հատուկ խումբ՝ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, գեներալ-մայոր Մ. Սուրկովի, ՀԿԿ կուսակցության վերահսկողության հանձնաժողովի նախագահ Հ. Օհանյանի, ՀՀՇ-ի վարչության անդամներ Բ. Արարքցյանի, Վ. Մանուկյանի և Պետագրոարդի ներկայացուցիչ Գ. Աթանեսյանի կազմով: Նրանք փետրվարի 5-ին մեկնում են Գետաշենի ենթաշրջան և հանդիպում Ազատ, Կամո ու Գետաշեն գյուղերի բնակիչների հետ: Պարզվեց, որ Խանլարի շրջանի ղեկավարությունը և Ադրբեջանի ժողովրդական ճակատի ներկայացուցիչները այդ գյուղերի բնակիչներին առաջարկել են վաճառել իրենց տներն ու բնակվելու համար տեղափոխվել այլ շրջաններ: Կային նաև պարենային և անվտանգության խնդիրներ: Անհրաժեշտ գտնվեց Գետաշենի հետ օդային, իսկ Շահումյանի շրջանի հետ խճուղային կապ հատատել<sup>654</sup>:

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը համապատասխան դիմում հղեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը՝ Ազատ և Կամո գյուղերի բնիկ հայ ազգաբնակչությանը մի քանի օրում իրենց նախնիների հողը լքելու հարցի առնչությամբ: Դիմումը կատարվում էր այդ գյուղերի հայ բնակչությանը ֆիզիկական ոչնչացման սպառնալիքի պայմաններում, այն էլ ԽՍՀՄ ներքին գործերի ստորաբաժանումների բռնի ճնշման ներքո: Նման հանցավոր արարքը դատապարտեց ՀԽՍՀ ղեկավարությունը: Իսկ ԽՍՀՄ ՆԳՄ գեներալ-գնդապետ Յու. Շատալինը մարտի 8-ին կեղծ խոստումներ էր տալիս: Նրա տված խոսքից հաջորդ իսկ օրը Կամո գյուղը բնակեցվել է թուրքերով: Կենտրոնը, անկասկած, լավատեղյակ էր, որ տեղի էր ունենում Գետաշենի ենթաշրջանի

<sup>653</sup> Խորհրդային Հայաստան, թ. 62, 17. 03. 1990:

<sup>654</sup> Երեկոյան Երևան, թ. 30, 07. 07. 1990:

հայ բնակչության բռնի վտարում, այն էլ խորհրդային ռազմական ուժերի աջակցությամբ<sup>655</sup>:

Գորբաչովյան անխոհեմ և խաբեբայական քաղաքականությունը լուրջ հարված էր Անդրկովկասում իրավիճակը բարդացնելու ուղղությամբ: Ահա այդպիսի պայմաններում անցկացվում էր ՀԽՍՀ Գերագույն խորհրդի հերթական ընտրությունները: Այն հաջողությամբ տանելու համար հարկավոր էր լուրջ ուշադրություն դարձնել ԼՂԻՄ-ի հիմնախնդիրն և ազգամիջյան հարաբերություններին, հոգատարություն ցուցաբերել գաղթականների նկատմամբ, բնակչության պարենային պահանջներին, բնակարանային հարցի լուծմանը, բնապահպանական խնդիրն և երկրի տնտեսությանը:

Հայկումկուսը առաջ քաշելով այդ պահանջները, հույս է հայտնում, որ «կլինենք նորացված ֆեդերացիայի կազմում և կամրապլնդենք հանրապետության սուվերենությունը»<sup>656</sup>: Փոխանակ միջոցառումներ ձեռնարկելու մեր հանրապետությունը տնտեսական և քաղաքական ճգնաժամից դուրս բերելու միտմամբ, ՀԿԿ-ն ու Գերագույն խորհուրդը հույսեր էին կապում կենտրոնական մարմինների հետ, որը վաղուց արդարացված չէր:

Արտացոլելով ընդհանուր ճգնաժամային պատկերը, 1990 թ. ապրիլի 6-ին գումարված ՀԿԿ կենտկոմի պլենումը բավարարեց Ս. Հարությունյանի դիմումը և ազատեց նրան կուսակցական բարձրագույն պաշտոնից: Այժմ այն զբաղեցնում էր նորընտիր Վլադիմիր Մովսիսյանը<sup>657</sup>, մի անձնավորություն, որը երկար տարիներ ցուցաբերել էր հայրենիքին իր նվիրվածությունը: Վ. Մովսիսյանը իր ելույթում նշեց, որ հանրապետության առաջ դրված են լուրջ խնդիրներ: Այնինչ, Արցախի հիմնախնդիրը մտցվել էր փակուղի: Երկու հանրապետությունների միջև հարաբերությունները ծայր աստիճանի սրվել է և ահավոր նյարդային վիճակ է ստեղծվել սահմանամերձ շրջաններում: Նա պաշտոնապես հայտարարեց, որ մենք պաշտպանել ու կպաշտպանենք Արցախի հայության իրավունքը: Արցա-

<sup>655</sup> Երեկոյան Երևան, թ. 56, 12. 03. 1990:

<sup>656</sup> Խորհրդային Հայաստան, թ. 77, 03. 04. 1990:

<sup>657</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 84, գ. 23, թ. 3-26:



խի հարցը պետք է լուծվի սահմանադրորեն, քաղաքակիրթ մակարդակով, մարդու իրավունքների հարգման միջազգային օրենքների համապատասխան<sup>658</sup>:

Իմիջայիլոց, թերթի այդ համարում հրապարակվեց «Խորհրդրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Օրենքը ԽՍՀՄ-ի կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին», որի տակ ստորագրել է երկրի նախագահը: Այն բաղկացած է 20 հոդվածից և օրենքի երրորդ հոդվածում ասված է. «Իր կազմում ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր և ինքնավար օկրուգներ ունեցող միութենական հանրապետությունում հանրաքվեն անցկացվում է յուրաքանչյուր ինքնավար կազմավորման համար առանձին: Ինքնավար հանրապետությունների և ինքնավար կազմավորումների ժողովուրդներին է վերապահված ինքնուրույն լուծելու ԽՍՀ Միության կազմում կամ դուրս եկող միութենական հանրապետության կազմում մնալու հարցի լուծման, ինչպես նաև իր պետական իրավական կարգավիճակի հարցի առաջադրման իրավունքը»: Ինչպես տեսնում ենք, օրենքը լայն հնարավորություն էր բացում Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ղարաբաղի առաջ՝ ինքնուրույն որոշելու իրենց հետագա ճակատագիրը:

1990 թ. «Օգոստոս» հանդեսի թ. 14-ում լույս է տեսել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Ա. Վորոբյովի «Կարկախոսների ժամանակն անցնում է» խորագրով հոդվածը, որտեղ հեղինակը անդրադառնալով Հայաստանում և Ադրբեջանում ծավալվող իրադարձություններին, շեշտեց, թե «մահաքուն քնից պետք է արթնանա ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհուրդը... Ադրբեջանում կազմակերպված կոտորածի ժամանակ քնած էր, հենց նա էլ պետք է պահանջի այն մարդկանցից, ովքեր պատասխանատու են ազգային անվտանգության համար: Միայն թե եկեք առանց հիմարացնելու. պետք չէ մեղադրել անանուն հայերի, որ իբր նրանք

---

<sup>658</sup> Խորհրդային Հայաստան, թ. 82, 08. 04. 1990:

են իրենց կոտորել, կամ իրենք են դուրս նետվել պատուհաններից, իրենք են շրջափակել երկաթուղին:

Պետք չէ նորից ձեռքեր տարածել, թե իբր մի քիչ ուշացել եք»: Հետո ավելեցնում է. «Քանի դեռ մենք զայրանում ենք, Հայաստանը գտնվում է իսկական պաշարման մեջ. դադարեցված է երկրաշարժից փլուզված տների շինարարությունը. վառելիք չկա, վատ է սննդի հարցը...»<sup>659</sup>: Հեղինակը պահանջում էր կենտրոնական իշխանություններից իրենց վրա վերցնել բոլոր ազգությունների քաղաքացիների պաշտպանությունը, այլ ոչ թե տարբեր պատրվակով խափել հասարակությանը և աչք փակել անընդունելի անցքերի վրա:

Ապրիլի 21-ին «Խորհրդային Հայաստանը» տպագրել է 22 հայ մտավորականների հայտարարությունը, որն առնչվում էր մեր ժողովրդի համախմբման, Արցախի հիմնախնդրի արդար լուծման, աղետի գոտում վճռական բեկում մտցնելու, գործարարության զարգացման, միակուսակցության մերժման, բանիմաց և գործույժ Գերագույն խորհուրդ ունենալու հարցերի հետ: Հայտարարության հեղինակները առաջարկում էին ամենամոտ ժամանակներում հրավիրել հանրապետության պաշտոնական և ոչ պաշտոնական կազմակերպությունների ու իշխանության ներկայացուցիչների ժողով՝ ազգային համաձայնության գալու և ընդհանուր ծրագիր մշակելու համար: Ընդգծված է, որ հայրենիքը պատկանում է համայն հայությանը ուստի մենք բոլորս պետք է նպաստենք նրա խնդիրների լուծմանը<sup>660</sup>:

Սակայն հայտարարության հեղինակների նախաձեռնությունը հավանություն չի ստացել ՀՀԾ-ի կողմից: Արձագանքելով դրան, Համազգային շարժման նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը մայիսի 6-ին հանդես է եկել «Պատվերը կատարված է. սպասենք ջրանշաններին» խորագրով հոդվածով: Նա վերապահում արեց, որ «մտավորականների համաստեղծության մոտեցումը համընկել է Հայաստանի կոմկուսի կենտկոմի... առաջին քարտուղարի տեսա-

<sup>659</sup> Огонёк, 1990, № 14, с. 23–24.

<sup>660</sup> Խորհրդային Հայաստան, թ. 92, 21. 04. 1990:

կետին»։ Հիշեցրեց, որ մտավորականների շարադրված հիմնադրույթները նախօրոք հնչել էին «կենտկոմի ակտիվի ժողովում» առաջին քարտուղար Վ. Մովսիսյանի ճառում։

Լևոն Տեր-Պետրոսյանը պնդեց, որ Ազգային համաձայնության խորհուրդ ստեղծելու պատվերը իջեցրել էր ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղարն, իսկ «անվանի մտավորականները բարեխիղճ կերպով կատարել են իրենց հասարակական դերը»<sup>661</sup>։ Հետո նա մեղադրեց, թե այդ «անվանի մտավորականները» երկու տարի շարունակ զբաղված էին շարժման ղեկավարների «գործողությունները դատապարտելով, ժողովներ, համագումարներ հրավիրելով, տասնյակ կազմակերպություններ, ճակատներ ստեղծելով, ազգային ծրագրեր մշակելով փրկության ղեկատուներ առաջարկելով՝ մոռացած այն պարզ ճշմարտությունը, որ քաղաքականության մեջ անհեթեթություն է, երբ մարդկանց մի խումբ ծրագրեր է մշակում, իսկ մի այլ խումբ՝ իրականացնում դրանք»<sup>662</sup>։ Այսինքն, նրանք ոչ թե միավորում էին այլ պառակտում հասարակությանն ու ձգտում էին փոխարինել նրա արդեն իսկ ձևավորված ու բոլորի վստահությունը վայելող ղեկավարներին։

Այնուամենայնիվ, Հայոց ազգային շարժման առաջին դեմքը ընդունեց, որ «ազգային համաձայնության գալու ծրագիրը» տվյալ պահին ներկայացնելն անիմաստ չէր, քանի որ մտավորականների վկայությամբ՝ «իշխանության մարմինները գտնվում են յուրահատուկ կաթվածահար վիճակում, բյուրոկրատական ապարատն առաջնորդվում է ավելի շատ հասարակության մեջ իր զբաղեցրած տեղը փրկելու, քան հանրապետության առջև կանգնած անհետաձգելի խնդիրները լուծելու մտահոգությամբ»<sup>663</sup>։ Լևոն Տեր-Պետրոսյանի գնահատումով՝ մտավորականների բուն նպատակը կայանում էր կաթվածահար իշխանությանը փրկելուն մեջ։ Սա է հիմնական պատճառը, թե ինչու են նրանք կոչ անում «շահագրգիռ վերաբերմունք ցույց տալ ընտրարշավին, մերժել իրենց արատավորած

---

<sup>661</sup> Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 87-88։

<sup>662</sup> Նույն տեղում, նշվ. աշխ., էջ 89։

<sup>663</sup> Նույն տեղում, էջ 90։

պաշտոնյաների, զանազան պատեհապաշտ մարդկանց, անպատասխանատու արկածախնդրության հակված, դեմոկրատիայի անունից խոսող, բայց դեմոկրատիան ոտնահարող գործիչների թեկնածությունները»:

Հեղինակը համոզված էր՝ «ազգային համաձայնության» իսկական ծրագիր կարող էր ստեղծվել Հայաստանի և Սփյուռքի իրական քաղաքական ուժերի համագործակցությամբ միայն: Եվ ժողովրդի «ճիշտ կողմնորոշման դեպքում այդպիսի համաձայնության իրավական հիմք կարող է լինել իսկապես ազգային ժողովրդավարական խորհրդարանի ստեղծումը»<sup>664</sup>:

Լևոն Տեր-Պետրոսյանի այս գնահատականների մեջ կան ինչպես բավականին ճշմարիտ բնորոշումներ, այնպես էլ ակնհայտ սխալները: Այսինքն՝ որևէ ծրագիր ստեղծելու համար բոլորովին էլ պետք չէ բազում անձանց համահեղինակությունը: Սրա համար բավական է մեկ, բայց լավատեղյակ ու ստեղծագործ հոգի: Եվ նրա լուծումների որակը ստուգվում է նման ծրագիր ընդունող և այն կատարելու պատրաստ մարդկանց քանակությամբ: Շատ ու շատ գեղեցիկ տեքստեր քաղաքական փաստաթուղթ չեն դառնում, քանի որ չունեն հասարակական աջակցություն և ի վիճակի չեն մարմնավորվել զանգվածային, հաճախակի վտանգավոր գործերում: Այդպես որ, ընդունելով ազգային համաձայնության ծրագրի որոշակի արժեքը, ՀՀԾ-ի ղեկավարը չգնաց նրա մարտավարության ճանապարհով ու չի գտել նրան ենթարկվելու անհրաժեշտությունը: Արդյո՞ք նա ճիշտ էր եղել թե ոչ, թող դատի ընթերցողը:

\*

\* \*

Մեր ներկայացվող ժամանակահատվածում հանրապետությունը կանգնած էր Գերագույն խորհրդի ընտրությունների շեմին: Նրա սահմաններում գործող, ինչպես և Արցախի ինքնավար մարզի քաղաքական և պետական մարմինների ուշադրությունն ուղղված

<sup>664</sup> Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 91:

էր դրան: ԽՍՀՄ ՆԳ նախարար Վ. Բակատինը Հայկոմկուսի ԿԿ առաջին դեմք Վ. Մովսիսյանին ապրիլի 24-ին ուղարկած գրության մեջ հիշեցրեց, որ հունվարի 10-11-ին տեղի ունեցած ՀԽՍՀ Գերագույն և Արցախի Ազգային խորհրդի համատեղ նստաշրջանում քննարկվեց ընտրություններ անցկացնելու հարցը: Ելնելով նրա արդյունքներից, ՀԽՍՀ-ի կենտրոնական ընտրական հանձնաժողովը հանրապետության ընտրամասերին կցել է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի տարածքը:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը մարտի 3-ի որոշումով Հայկական ԽՍՀ ժողովրդական պատգամավորների ընտրության հարցում մեր կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեությունը ճանաչել է որպես ապօրինի: ԽՍՀՄ ներքին գործերի նախարարությունը նույնպես դիմել է Հայկական ԽՍՀ ղեկավարությանն ու խնդրել բեկանել հունվարի 11-ի որոշումը: Պարոն Բակատինը մի անգամ ևս դիմեց Վ. Մովսիսյանին կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը բեկանելու խնդրանքով: Հակառակ դեպքում ՆԳ նախարարությունը չէր կարող լիովին երաշխավորել տարածքում քաղաքացիների իրավունքներն ու անվտանգությունն ու կատարել ԽՍՀՄ ԳԽ 1990 թ. մարտի 5-ի որոշումը<sup>665</sup>:

Ապրիլի 25-ին Հայկոմկուսը պատասխանեց Վ. Բակատինին, որ Հայաստանում իրադրությունները զարգանում են ՀԽՍՀ Սահմանադրության պահանջներին համապատասխան: Ի նկատի ունենալով Հայկական ԽՍՀ-ի դարավոր ազգային, մշակութային և տնտեսական միասնությունը Արցախի ինքնավար մարզի ժողովրդի հետ, տարօրինակ որևէ բան տեղի չի ունենում, երբ միևնույն ժողովուրդը որոշել է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի իր հայրենակիցների ներկայացուցչությունը լինի Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդում:

Ընտրամասերը կազմելու հարցը ԼՂԻՄ-ի բացարձակ ներքին գործ է հանդիսանում: Այդպես որ ՆԳ նախարարի նախազուշացումը՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի մարտի 5-ի հրամանի կա-

<sup>665</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 44, թ. 23:

տարման անհնարինության մասին, մեր կողմից անընդունելի է<sup>666</sup>: Այսպիսով՝ հարցը պարզ էր. Արցախը Հայաստան է, այնտեղ ևս պետք է տեղի ունենա Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունները: Եվ իրոք, մարզում կազմակերպվել էր 12 ընտրամաս:

Հունվարից սկսած, հանրապետությունում թափ էր առնում նախընտրական քարոզչությունը: Ստեղծված 259 ընտրամասերում ամենասուր պայքարը ծավալվեց Հայկունկուսի և Հայոց համագգային շարժման միջև: Աղբբեջանի իշխանությունների կողմից Լեռնային Ղարաբաղում ճնշումն ուժեղացվել էր, որպեսզի բնակչությանը անհնարին լինի մասնակցել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններին: Մինչդեռ արցախահայությունը արհամարհում էր բռնություններն ու ստեղծած դժվարությունները: Թեկուզ այն, որ ընտրությունների օրը հարյուրավոր նվիրյալներ, քվեատուփը գըրկած, Ստեփանակերտում շենքից շենք էին գնում, շքամուտքերում հանդիպում ընտրողներին, որոնք մեծ եռանդով էին կատարում իրենց քաղաքացիական պարտքը: Նման հայրենանվեր աշխատանքներ տարվում էին նաև շրջկենտրոններում:

Միաժամանակ 1990 թ. ապրիլ-մայիսին ընտրողները հարյուրավոր բողոք-նամակներ և հեռագրեր էին ուղարկում Մոսկվա և Երևան ու պահանջում վերջ տալ նրանց նկատմամբ իրագործվող բռնություններին: Օրինակ. ապրիլի վերջին ԼՂԻՄ նախկին կուսակցական, պետական ու հասարակական կազմակերպությունների ղեկավարների ստորագրությամբ ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովին, ԽՍԿԿ կենտկոմ, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ, ՀԱՄԿԽ, ՀԱՄԼԿԵՄ կենտկոմ, Միութենական հանրապետությունների կոմկուսների կենտկոմներ, ԽՍՀՄ ՆԳ նախարարություն, հասարակական բազմաթիվ կազմակերպություններ ուղարկված Դիմումի մեջ խոսվում էր վերջին երեք ամիսներում արտակարգ դրության պայմաններում Արցախում տիրող ծանր վիճակի մասին: Երկրամասը դարձել էր երկրորդ Աֆղանստան, որտեղ մեծապետական ազգայնամոլությունը բարձրացվել է պետական մակարդակի և իրագործ-

---

<sup>666</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 44, թ. 21-22:

վում էր ցանկացած ապօրինություն: Արցախահայությունը պահանջում էր վերջ տալ այդ ամենին<sup>667</sup>:

1990 թ. մարտից ՀԽՍՀ ԳԽ ժողովրդական պատգամավորների ընտրությունների համար առաջ էին քաշվում թեկնածուներ: Եռանդուն գործում էին Հայոց համազգային շարժումը, Հայկոմկուսն ու մյուս քաղաքական ուժերը: Հայկոմկուսի ԿԿ-ն դիմելով ամբողջ հասարակությանը, հայտարարում էր, թե հանրապետության իշխանությունները բացառիկ ուշադրություն են դարձնում ազգամիջյան հարաբերություններին ու ԼՂԻՄ հիմնահարցին, ուստի նրանք իրագործում են նորացման և վերածնման ազգային ծրագիրը: Շեշտվում էր, որ Հայկոմկուսը համամիտ է բնապահպանական հարցերը լուծելու պահանջին, և, որ նա առավելագույն ջանքեր կգործադրի, որպեսզի հանրապետությունում զարգացում ստանա սոցիալ-տնտեսական կյանքը: Իբրև կուսակցությունը հենվում էր հայ ժողովրդին ծառայելու սկզբունքի վրա<sup>668</sup>: Սակայն հասարակությունը քիչ հավատ ուներ այդ խոստումների հանդեպ: Ցանկության դեպքում էլ ՀԿԿ-ն աջակցություն չէր ստանում նրա վերադասից: Հետևաբար՝ այն գտնվում էր աննախանձելի և նույնիսկ դատապարտյալի վիճակում:

Նախընտրական փուլում տեղի էր ունենում ուժերի համախըմբում և զորացում, հետզհետե մեծանում էր միասին գործելու ցանկությունը: Այսպես, 1990 թ. ապրիլի 13-ին ստեղծվեց Հայկական ԽՍՀ ձեռնարկությունների և կազմակերպությունների գործարար համագործակցության «Հայաստան» ասոցիացիան: Նրա գումարված կոնֆերանսում հաստատվեց այդ միախմբության ծրագիրն ու կանոնադրությունը: Նրա գլխավոր տնօրեն է ընտրվել Էդվարդ Կիրակոսյանը, իսկ ասոցիացիայի վարչության նախագահ՝ «Սևան» գիտաարտադրական միավորման տնօրեն Գրիգոր Կարապետյանը<sup>669</sup>: Միախմբության հիմնադրմանը մասնակցել են հանրապետության բոլոր առաջատար գիտական ու արտադրական

<sup>667</sup> Խորհրդային Հայաստան, թ. 98, 29. 04. 1990:

<sup>668</sup> Երեկոյան Երևան, թ. 75, 03. 04. 1990:

<sup>669</sup> Նույն տեղում, թ. 86, 16. 04. 1990:

հիմնարկների ներկայացուցիչները: Նրա ծրագրում նշված է, որ ժողովրդական տնտեսության զարգացման արդի փուլում անհրաժեշտ է որոնել և կիրառել նոր, ավելի ժողովրդավար միջոցներ ՀԽՍՀ տնտեսության մեջ փոխշահավետ գործարար համագործակցությունն ընդլայնելու համար: Ասոցիացիայի ծրագրում զետեղվել են քաղաքական խնդիրներ ևս:

Գարնան կարևոր իրադարձություններից էր այն, որ 1990 թ. ապրիլի 24-ին լրանում էր հայոց ցեղասպանության 75 տարին: Այդ առթիվ Գիտությունների Ակադեմիայում գումարվեց միջազգային անդրանիկ գիտաժողովը: Մասնագետների և քաղաքական փորձագետների այդ մեծ հավաքի նախաձեռնողն ու նրա կազմկոմիտեի գիտական քարտուղար է եղել ԳԱ Պատմության ինստիտուտի աշխատակից, այժմ պ.գ.դ. Գայանե Մախմուրյանը: Միջոցառումը ներածական խոսքով բացեց կազմկոմիտեի նախագահ, ՀԽՍՀ ԳԱ նախագահ Վ. Համբարձումյանը: Քաղաքական ծանր պայմաններում նա հիշեցրեց ողջ աշխարհից եկած թեմայի առաջատար մասնագետներին, որ թուրք բարբարոսների կողմից այդ կանխամտածված ոճրագործության նպատակն է եղել ոչնչացնել հայ ժողովրդին: Սակայն մեր ազգն ապրեց ու զարգացավ<sup>670</sup>: Եղեռնի օրը ավանդական, հսկա ուխտագնացություն եղավ Ծիծեռնակաբերդ:

Այդ օրը ցավակցական հեռագիր է ուղարկել նաև ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը: Հայոց ցեղասպանության օրը սգո միտինգ է եղել Ստեփանակերտում, որի մասնակիցներից Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչյա Բեգլարյանը, Սոկրատ Խանյանը, Ռոնա Բալայանը, Համլետ Գրիգորյանը և այլոք ապրիլի 26-ին ձերբակալվել են և ենթարկվել տուժի<sup>671</sup>: Իսկ Ադրբեջանը բացեիբաց անցել էր բիրտ գործողությունների: ՀԽՍՀ ԳԽ Նախագահությունը դիմելով ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովին, պահանջում էր ԼՂԻՄ-ում վերացնել արտակարգ դրությունը, վերականգնել մարզի խորհրդային իշխանությունները, չեղյալ հայտարարել 1990 թ. ապրիլի 21-ի Ադրբեջանական ԽՍՀ ԼՂԻՄ-ում վարչական փոփոխություններ կատարելու

<sup>670</sup> Երեկոյան Երևան, թ. 88, 18. 04. 1990:

<sup>671</sup> Նույն տեղում, թ. 96, 28. 04. 1990:



մասին հակասահմանադրական որոշումը, բացել Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճեպուղին: Շեշտված է, որ Մեծ Եղեռնի զոհերի հիշատակը հարգելու համար Ստեփանակերտում տեղի ունեցած ձերբակալություններն ու տուգանքներն ապօրինի է և դատապարտելի: Մեր Գերագույն խորհուրդը տեղեկացնում էր, որ սույն պահանջները չկատարելու պատասխանատվությունը կրնկնի կենտրոնական իշխանությունների և անձամբ ԽՍՀՄ նախագահի վրա<sup>672</sup>:

1990 թ. մայիսի 5-ին տեղի ունեցած Հայկոմկուսի ԿԿ պլենումում<sup>673</sup> կուսակցության առաջին քարտուղարն ընդգծեց, որ հանրապետությունում գործում էր մի քանի տասնյակ ոչ պաշտոնական կազմակերպություններ, որոնց ծրագրերի և սկզբունքների գնահատականով կոմկուսը դեռևս հրապարակայնորեն հանդես չի եկել: Նա խոստովանեց, որ մարդիկ հոգնել են բազմաթիվ հայտարարություններից ու խոստումներից: Անդրադառնալով մեր հասարակական կյանքում կանանց ունեցած դերին, նշեց, որ 32 կին կանգնած են Հայկոմկուսի գաղափարական ակունքներում: Այնուհետև Լենինականի ներկայացուցիչ Տ. Սարգսյանը հավելեց, որ հարկավոր է ճշտել ՀԿԿ-ի հարաբերությունները մյուս քաղաքական ուժերի հետ, իսկ Իջևանի պատվիրակ Ջեմա Անանյանը հայտարարեց, թե նրանց կուսակցության հեղինակությունը տատանվում է<sup>674</sup>: Պլենումը անդրադարձավ նաև մայիսի 4-ին Երևանում տեղի ունեցած իրադարձությանը: Ինչպես գիտենք, ժամը 15-ին քաղկոմի բակը մտավ երկու ավտոմեքենա՝ հարյուրից ավելի զինված մարդկանցով, ու շրջապատել քաղկոմի շենքը:

Նրանք «Հայաստանի անկախության բանակի», «Հայաստանի հանրապետական կուսակցության» և «Հայաստանի ազգային բանակի» ներկայացուցիչներն էին, որոնք պահանջեցին ազատել շենքը: Մոտավորապես ժամը 17-ին նրանցից չորսին ընդունել է Վ.

---

<sup>672</sup> Երեկոյան Երևան, թ. 100, 05. 05. 1990:

<sup>673</sup> Երկու օր առաջ, մայիսի 3-ին, ՀԽՍՀ ԳԽ նախագահ Հ. Ոսկանյանը ստորագրել է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի որոշումը՝ Հայկական ԽՍՀ նախագահի պաշտոնը հիմնադրելու մասին:

<sup>674</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 84, գ. 25, թ. 12-23:

Մովսիսյանը և ցուցարար զինյալները հեռացան: Այդ միջադեպի կապակցությամբ որոշվեց Գերագույն խորհրդին առաջարկել հարց դնել՝ Հայաստանից և Արցախից «բանակը լրացնող ուժերը» դուրս բերելու մասին: Միևնույն ժամանակ առաջարկություն մտցվեց Գերագույն խորհրդի ընտրությունները տեղափոխել դեկտեմբեր ամիս, սակայն այդ գաղափարը մերժվեց: Կոմկուսի պլենումը ձգտում էր բոլոր հարցերը վճռել խաղաղ՝ քաղաքական ճանապարհով: Նա դեմ էր արտահայտվում հանրապետությունում հասարակական քաղաքական 60 կազմակերպությունների բազմությանը<sup>675</sup>: Իրականում, պաշտոնապես ղեկավար ուժի տիտղոսը կրող Հայկոմկուսը գտնվում էր հոգևարքի եզրին:

1990 թ. մայիսյան այդ օրերին քաղաքական և հասարակական բոլոր ուժերը կանգնած էին Գերագույն խորհրդի ընտրությունների շեմին: Ի թիվս շատերի, հասարակությանն ու հատկապես երիտասարդությանը իրենց կոչն են ուղղել Հայրենական մեծ պատերազմի վետերանները<sup>676</sup>: Իսկ ամսի 18-ին Թատերական հրապարակում անցկացվեց հերթական հանրահավաքը, որտեղ ելույթ ունեցած Լևոն Տեր-Պետրոսյանն ու նրա բազմաթիվ համախոհները կոչ արեցին խորհրդարանի կազմում ընտրել լավագույն, ազգային պայքարին անձնվեր մարդկանց: Ասվեց, որ հանրապետության իշխանությունները 70 տարի սպասարկել են օտար շահեր, հնարավորություն չունենալով ներկայացնել ու լուծել իրենց ազգային խնդիրները: Մոսկվան էլ հատուցում էր նրան հավատարիմ անհատներին մեր ամբողջ ժողովրդի հաշվին: Նման մարդիկ պետությունից չէին գողանում, սակայն նրանց բարեկեցությունը ստեղծվում էր սեփական ժողովրդի հաշվին, ահա թե ինչու մեր հասարակությունը չպետք է հանդուրժի, որ այդ տեսակի պաշտոնյաները շարունակեն մնալ մեր Խորհրդարանում: Ժողովուրդը գնում է ընտրելու արժանի պատգամավորներին<sup>677</sup>:

---

<sup>675</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 84, գ. 25, թ. 47, 48, 55:

<sup>676</sup> Երեկոյան Երևան, թ. 108, 17. 05. 1990:

<sup>677</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 49, թ. 58:

Հանրահավաքում հռետորները կոչ էին անում մասնակիցներին իրենց ձայնը տալ Հայոց համազգային շարժման թեկնածուների օգտին: Պատգամավորության թեկնածու Վաչե Հարությունյանը հայտարարեց, թե իր տեղը զիջում է Շահումյանի շրջանից Վլադիմիր Աղաջանյանին, քանի որ այնտեղ բնակվող հայերը պետք է ներկայացուցիչ ունենան Հայաստանի Գերագույն խորհրդում<sup>678</sup>: Այդ հանրահավաքում Վարդան Զուռնաչյանը և Ասքանազ Գալստյանը առաջարկեցին ընտրությունների օրը, ժամը 7-ից շրջապատել ընտրական տեղամասերն և ընտրական հանձնաժողովների ու հասարակության ներկայացուցիչների հետ միասին թույլ չտալ պետական մարմիններին ու կոմկուսին դիմել խարդավանքների:

Ընտրությունների հաջորդ օրը՝ մայիսի 21-ին, Թատերական հրապարակում կայացած հանրահավաքում, ելույթ ունեցողները ողջունեցին ընտրված առաջին ժողովրդական խորհրդարանը և հույս հայտնեցին, որ նա ժողովրդին դուրս կբերի առկա ճգնաժամից: Չնայած բնակիչների մոտ 40 տոկոսը չէր մասնակցել ընտրություններին, ակնհայտ էր, որ անվանակարգ, անձեռնմխելի պաշտոնյաների դասը լիովին տապալվեց: Կոմկուսը կորցրեց նրա իշխող դիրքն ու խորհրդարանում հիմնականում ընտրվել էին ազգի գոյատևության հարցերի մասին հոգացող քաղաքացիներ:

Հանրահավաքում հայտարարվեց, որ Արցախի 11 ընտրական տեղամասերից տասում հաղթել են ազգին նվիրված մարտիկներ, իսկ մեկում կանցկացվի նոր ընտրություններ: Նաև ասվեց, որ Հայաստանում գտնվող 230 հազար փախստականներ անմաս են մնացել այդ կարևոր անցքերին<sup>679</sup>: Միաժամանակ առաջարկվեց, որ ի նշան անհամաձայնության կենտրոնից թելադրվող քաղաքականությանը կոմերիտականները հանձնեն իրենց անդամատուները: Գաղափար հնչեց, որ մայիսի 27-ին Սարդարապատում կազմակերպվի տոնախմբություն, իսկ ամսի 28-ին ժամը 14-ին Թատե-

---

<sup>678</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 49, թ. 59:

<sup>679</sup> Նույն տեղում:

րական հրապարակում ցույցերթ սկսվի՝ որպես Հայկական պետականության վերականգնման օրվա հատուկ միջոցառում<sup>680</sup>:

ՀԽՍՀ ժողովրդական պատգամավորների ընտրությունների կենտրոնական հանձնաժողովը հաղորդեց, որ 259 ընտրամասերից ստացած 219-ի տվյալներին համաձայն ընտրությունները կայացել է 150 տեղամասերում, որից 29-ը Երևան քաղաքում իսկ 69 օկրուգում ընտրությունները չեն կայացել<sup>681</sup>: Բոլոր գրանցված ընտրողների թիվը կազմել է 2.137.210 հոգի, իսկ քվեարկությանը մասնակցեց 1.286.464 մարդ, այսինքն՝ ընդհանուր թվի 60.19 տոկոսը: Միասին վերցրած՝ քվեարկվել են 1307 թեկնածու: Ընդ որում, հինգ տեղամասերում քվեաթերթիկների մեջ մտցված էր մեկական թեկնածու, 36-ում՝ երկուսական, 215-ում՝ երեք և ավելին: Ընտրությունները կայացել են 259 ընտրական տեղամասերում, իսկ պատգամավորները արդեն ընտրվել են՝ 99-ում: Քանի որ 82 ընտրամասերում հաղթող չկար, այնտեղ նախատեսվել է կրկնակի ընտրություններն անցկացնել հունիսի 3-ին:

Այսպիսով, Հայաստանում խորհրդային ժամանակաշրջանում առաջին անգամ անց է կացվել բարձրագույն իշխանության ժողովրդական ընտրություններ: Նույն ոգով են ընթացել նաև հունիսի 3-ին և հուլիսի 15-ին տեղի ունեցած կրկնակի ընտրությունները, որոնց արդյունքում ձևավորվեց Հայկական ԽՍ հանրապետության օրենսդիր մարմինը՝ նրա Գերագույն խորհուրդը:

\*

\* \*

Այդ՝ պատմական մեծ ու դրական նշանակություն ունեցող իրադարձություններին զուգահեռ, 1990 թ. մայիսի վերջին հայ ժողովուրդն ապրեց նոր ողբերգություն: Մայիսի 27-ին Երևանում կատարված դեպքերի հետևանքով խլվեց 23 մարդու կյանք: Ովքե՞ր էին այդ ողբերգության կազմակերպիչներ և ի՞նչ նպատակ էին

<sup>680</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 49, թ. 63:

<sup>681</sup> Սովետական Հայաստան, թ. 114, 22. 05. 1990:

հետապնդում: Ակնհայտ է, որ մեր նկարագրած ժամանակահատվածում Մոսկվայի կենտրոնական իշխանություններն ամեն տեսակ ճնշում էին գործադրում Հայաստանի վրա և սպառնում նրան: ԽՍՀՄ ՆԳ նախարարի տեղակալ Յու. Շատալինը մայիսի 11-ին Հայկոմկուսի ԿԿ ուղարկած գրության մեջ հաղորդել էր, թե հայադրբեջանական սահմաններում զետեղված ներքին գործերի 1293 զինվորները մինչև հունիսի 15-ը հետ կքաշվեն թիկունք<sup>682</sup>, իսկ ՆԳ նախարարի պաշտոնակատար Վ. Երինը մայիսի 22-ին Հայկոմկուսի ԿԿ ուղարկած նամակում պահանջեց հավաքել մինչև այդ հափշտակված զենքերը, ռազմական հանդերձանքը, պայթուցիկ նյութերն և այլն միջոցներ<sup>683</sup>:

Բանը հասել էր նրան, որ «Կրասնայա զվեզդա» թերթի «Սին օտեչեստվա» հավելվածի 1990 թ. մայիսի 18-ի համարում ոմն Յու. Յանչիկովան Հայաստանում զենքի հափշտակումը, ինքնապաշտպանական ջոկատների ստեղծումն ու ընդհանուր վիճակը «անկայունացնելու» համար մեղադրում էր Հայկոմկուսի ԿԿ ղեկավարը Վ. Մովսիսյանին: Ի պատասխան կենտկոմի քարտուղար Գ. Գալոյանը հունիսի 6-ին բողոք-նամակ է ուղարկել ԽՍՀՄ ՆԳ նախարար Վ. Բակատինին և հերքել այսպիսի անօրեն մեղադրանքը<sup>684</sup>:

1990 թ. մայիսի 22-23-ին Հ. Ոսկանյանը, Վ. Մովսիսյանը, Վ. Մարգարյանը կանչվեցին Մոսկվա, որտեղից ծանր տպավորությամբ են վերադարձել: Երկու օր հետո Երևանի ավանդական վարում՝ այլևս Ազատության հրապարակում կայացած հանրահավաքում, խստորեն դատապարտվում է զորքի սանձազերծած վայրագությունները Ստեփանակերտում և կոչ է արվում պատրաստ լինել դիմագրավելու 1937 թ. նմանվող բռնությունների նոր փորձերը:

Միաժամանակ Հայկոմկուսի ԿԿ-ն ձգտում էր ազդել ընտրողների վրա, որպեսզի չքվեարկեն Հայոց համազգային շարժման անդամների օգտին: Դեռևս մայիսի 18-ին Կոմկուսի բյուրոն տրրտնջում էր, թե ծայրահեղական տրամադրություններ ունեցողները

---

<sup>682</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 44, թ. 38, 48-50:

<sup>683</sup> Նույն տեղում:

<sup>684</sup> Նույն տեղում, թ. 51-52:

ձգտում են ապակայունացնել հասարակական կյանքն ու սրել հակասությունները խորհրդային բանակի և բնակչության միջև: Այսպես, հարձակումներ են եղել տանկային զորամասի վրա, իսկ երկաթգծի կայարանից Արարատի շրջան էր փախցվել հինգ տանկ: Բյուրոն կոչ էր անում չկրկնել նման անցանկալի գործողություններ<sup>685</sup>: Մեր՝ «Մարտնչող Արցախը» գրքում արդեն նշվել է, որ այդ ծանր օրերին՝ մայիսի 26-ին, Երևան են ժամանել ԽՍՀՄ ՆԳ նախարարի տեղակալ Շիրովը, ներքին զորքերի հրամանատար Շատալինը, ԽՍՀՄ ՊԱԿ-ից՝ Լուկինը և այլոք: Նրանք զգուշացրել էին, որ ահազանգ են ստացել, թե մայիսի 27-28-ին Երևանում տեղի են ունենալու զանգվածային անկարգություններ: Հետագա իրադարձությունները ցույց են տվել, որ այդ նախազգուշացումը ամրապնդվել էր համապատասխան անցքերով:

Եվ իրոք, ինչպես հաղորդել են ՆԳՆ-ը և դատախազական մարմինները, մայիսի 27-ին, առավոտյան ժամը 8:50-ին, շուրջ 15 մարդուց բաղկացած քաղաքացիական զինված անձանց մի խումբ հարձակվեց ներքին զորքերի պահակախմբի վրա, որը Երևան-Ղափան գնացքը ուղեկցելուց հետո գտնվում էր Երևանի երկաթուղային կայարանի զինձառայողների սպասասրահում: Ուղեկցումը կազմակերպվել էր ՀՍԽՀ կառավարության խնդրանքով, ուղևորների անվտանգությունը ապահովելու նպատակով: Պահակախմբի 11 զինձառայողներից 10-ը վիրավորվել է և ստացված վերքերից մահացել է պահակախմբի պետը՝ ներքին զորքերի սպա: Այդ հաղորդման մեջ նաև նշված է, որ նույն օրը՝ ժամը 16-ին, զինված քաղաքացիական անձինք շրջափակեցին ԽՍՀՄ ՆԳՄ ներքին զորքերի՝ Նուբարաշեն ավանի շրջանում գտնվող ստորաբաժանումը, ինչպես նաև դեպի ավանը տանող հիմնական ճանապարհը: Մոտավորապես ժամը 17-ին գնդակոծվել են զորակայանն ու զինձառայողների շարասյունը<sup>686</sup>:

---

<sup>685</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 104, թ. 2:

<sup>686</sup> Երեկոյան Երևան, թ. 118, 29. 05. 1990:

Այդ նույն օրը խոշոր զինվորական ավտոշարասյուն Կարմիրից և Իջևանից շարժվել էր դեպի Երևան և Հոկտեմբերյան: Միայն Հայոց համազգային շարժման ներկայացուցիչների և գեներալ Շատալինի միջև ձեռք բերած պայմանավորվածության շնորհիվ ավտոշարասյունները դադար են առնում Երևանի մատույցներում, Սևանի խճուղում: Թեև մայրաղաքաղաքում գնդակոծությունները շարունակվել են մայիսի 28-ին և 29-ի գիշերը: Անկասկած, մեր ներկայացվող սրումը բժախնդիր կազմակերպված և ծրագրված սադրիչ գործողություն էր, որը պատասխան էր հանրապետության Գերագույն խորհրդի ընտրություններում ժողովրդավարական ուժերի հասած հաջողություններին:

Մինչդեռ, միայն Երևանի երկաթուղային կայարանում բռնկված միջադեպից զոհվել են վեց քաղաքացի: «Հայք» թերթում մայիսի 30-ին տպագրած, «Մոսկվայի ոճրագործ սադրանքը» խորագիր ունեցող հոդվածում Լևոն Տեր-Պետրոսյանը պատմում է, որ այնտեղ «տեղի ունեցած բախումից անմիջապես հետո կայարանը շրջապատվում է զրահապատ մեքենաներով և ներքին զորքերի հոծ շղթայով: Աշխարհագրորի և հասարակական-քաղաքական կազմակերպությունների ակտիվիստների ջանքերի և քաղաքացիների զգոնության շնորհիվ հաջողվում է միջադեպը տեղայնացնել և զսպել կրքերը»<sup>687</sup>: Լևոն Տեր-Պետրոսյանի հաղորդումից իմանում ենք, որ կայարանամերձ հրապարակից հեռանալուց հետո զինվորականները, ստեղծելով լարվածության նոր օջախ, շրջապատել են Էրեբունի թաղամասի հիվանդանոցի դիահերձարանը, ուր տեղափոխվել էին զոհվածների մարմինները:

Իբրև զորքի համախմբումը խոչընդոտելու նպատակով զինված երիտասարդների մի խումբ փորձել էր փակել Սովետաշեն (Նուբարաշեն) - Երևան խճուղին: Զրահապատ մեքենաները ճեղքեցին շրջափակումն ու թափանցելով Էրեբունի թաղամաս, անկանոն կրակ բացեցին բնակելի շենքերի վրա, ինչի հետևանքով զոհվեց 17 և վիրավորվեց շուրջ 40 քաղաքացի: Զոհվել է նաև մեկ սպա: Հայոց համազգային շարժման ղեկավարների և աշխարհագրորի մի

<sup>687</sup> Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 93:

շարք հրամանատարների ներդրած ջանքերի գնով հաջողվել է դադարեցնել փոխհրաձգությունն ու խուսափել ավելի մեծ արյունահեղությունից<sup>688</sup>:

Մայիսի 29-ին սուգ է հայտարարվել հանրապետությունում: Մինչ այդ, մայիսի 27-ի ուշ երեկոյան Հայկոմկուսի ղեկավարը հեռուստատեսությամբ դիմեց բնակչությանը: Նա խնդրեց գիտակցել ժողովրդին սպառնացող իրական վտանգը: Վ. Մովսիսյանը հայտարարեց, որ մեր ժողովրդավարական ուժերը անհանդուրժողական են դարձել միմյանց հանդեպ, ինչն էլ հղի է ծանր հետևանքներով: Հանրապետությունում գոյացել էր նաև իշխանության ճգնաժամը, անգործունեության են մատնվել գործադիր և իրավապահ շատ մարմինները, խիստ քննադատվում էր կոմկուսը: Սակայն, նկատեց առաջին քարտուղարը, շատ հարցեր՝ ներառյալ Արցախի խնդիրը, մեզանից լուծում են պահանջում<sup>689</sup>:

Այդպես որ մայիսի 23–28-ին կենտրոնական և տեղական ուժերի հանցավոր համագործակցությամբ ժողովրդի դեմ իրագործվեց հրեշավոր մի ոճրագործություն, նրա արդյունքում զոհվեց 23 և վիրավորվեցին շուրջ 60 անձինք: Այդ արյունոտ միջադեպի և համաժողովրդական մարմինների վերաբերմունքի արդյունքում բոլորը համոզման էին գալիս, որ հայ ժողովուրդը պարտավոր էր վիժեցնել կայսրապաշտ նման ծրագրերն և ազգային իշխանության հաստատմամբ դնել անկախ պետականության հիմքերը<sup>690</sup>: Այսպիսով՝ 1990 թ. հունվար-մայիսին հանրապետությունում ծավալվող քաղաքական զարգացումները հազեցած էր բազմաթիվ իրադարձություններով, որը եզրափակվեց խորհրդային իշխանության սադրանք հանդիսացող մայիսի 27-ի ողբերգությամբ:

---

<sup>688</sup> Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 93:

<sup>689</sup> Երեկոյան Երևան, թ. 119, 30. 05. 1990:

<sup>690</sup> Նույն տեղում, թ. 118, 29. 05. 1990:



\*  
\*   \*  
\*

1990 թ. ամառը՝ հունիսի 9-ին, Հայաստանի գրողների, թատերական գործիչների և կինոաշխատողների ստեղծագործական միությունները դիմելով ռուս հասարակության լայն շերտերին կոչ էին անում միջոցառումներ ձեռնարկել ադրբեջանական շարունակվող վանդալիզմի դեմ: Հայ մտավորականները զարմանք էին արտահայտում Միության կենտրոնական իշխանությունների և ռուս հասարակության բռնած դիրքից: Էլ ի՞նչ Միության, ի՞նչ բարեկամության և համերաշխության մասին կարող է խոսք լինել, երբ սրախոխող են արվում քո ժողովրդի զավակները, թալանվում է և շրջափակման ճիրանների մեջ խեղդվում հայրենի երկիրը:

Այդպես որ, երբ հուլիսի 2-ին Կրեմլի համագումարների պալատում իր աշխատանքներն էր սկսել ԽՄԿԿ 28-րդ համագումարը, նրա նախօրյակին Հայկումկուսի ԿԿ պլենումը դիմեց ու բողոքեց թե՛ ԼՂԻՄ-ում և թե՛ ՀԽՍՀ-ում իրադրությանը կտրուկ սրվելու դեմ: Արդեն երկուս ու կես տարի շրջանառության մեջ է գտնվում Լեռնային Ղարաբաղի խնդիրը: Տարածաշրջանում վիճակը աննախադեպ աստիճանի վատթարացել էր, մանավանդ 1989 թ. նոյեմբերի 28-ի որոշումից հետո: Երկրի ղեկավարության դիրքորոշումը՝ ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի արձակումն ու պարբերաբար շրջափակումը մեծ վնասներ էին հասցնում երկրաշարժից հետո կիսով չափ կաթվածային վիճակում գտնվող հանրապետությանը:

ՀԿԿ կենտկոմը ԽՄԿԿ 28-րդ համագումարից պահանջում էր կայունացնել տարածաշրջանի իրադրությունը, վերականգնել ԼՂԻՄ-ի խորհրդային իշխանության մարմինների և կուսակցական կազմակերպությունների ամբողջ գործունեությունը, արձակել Ադրբեջանի Գերագույն խորհրդի ստեղծած ապօրինի կազմկոմիտեն, չեղյալ հայտարարել Բաքվի իրադարձությունների կապակցությամբ ԼՂԻՄ-ում մտցված արտակարգ դրությունը, զորքերը դուրս բերել ԼՂԻՄ-ից, դրանք տեղավորել Արցախի և Ադրբեջանի միջև առկա

սահմանի երկայնքով ու բանակցություններ անցկացնել երկու հանրապետությունների միջև<sup>691</sup>:

Որպես յուրովի պատասխան, ԽՄԿԿ կենտկոմի հաշվետուության մեջ ակնարկ անգամ չկար Արցախի մասին: Հուլիսի 6-ին գումարված նիստում իր ունեցած ելույթում Հայկոմկուսի ղեկավար Վ. Մովսիսյանը ընդգծել էր Արցախի վերաբերյալ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումների լրիվ անտեսված լինելու փաստը: Մարզի խորհրդային և կուսակցական մարմինների վերականգնման, մարզի ինքնավարության կարգավիճակի բարձրացման փոխարեն ամեն ինչ արվում էր ինքնավարությունը վերացնելու, անդրենածին հայ բնակչությանը իր բնօրրանից վտարելու համար: Խորհրդային իշխանությունը փոխարինվում էր զինվորական բռնակալությամբ: Եվ դա իրադրության կանոնավորման տեղ էր հրամցվում: Բեռլինում քանդեցին պատը, իսկ մեզ մոտ նման մի պատ բարձրանում է... Վ. Մովսիսյանը պահանջում էր չեղյալ հայտարարել 1921 թ. անիրավազոր միջազգային պայմանագրերն ու որոշումները, նրանց գումարելով նախ և առաջ ԽՄԿԿ Քաղբյուրոյի 1988 թ. փետրվարի 21-ի չհիմնավորված որոշումը<sup>692</sup>:

Իրականում, ԽՄԿԿ 28-րդ համագումարը հայ ժողովրդի համար արդեն դարձել էր ձևական ու ծավալվող քաղաքական անցքերի վրա դրական որևէ այդեցություն չունեցող միջոցառում: Այնուամենայնիվ հայ ժողովուրդը, նրա հասարակական ու քաղաքական ուժերը որոշակի հույսը կապում էին ընդարձակ երկրի պետական ատյանի՝ նրա առաջիկայում հրավիրվող Գերագույն խորհրդի նստաշրջանի հետ, որից ակնկալում էին ազդեցիկ, պատմական նշանակություն ունեցող որոշումներ:

Նման լուծումների բացակայության պայմաններում 1990 թ. հուլիսի 10-ին Հայաստանում գումարվեց Համազգային շարժման կոչով ձևավորված 40 ինքնապաշտպանական ջոկատների 2000 ներկայացուցիչների հանրապետական հավաքը: Ընդունված Հռչակագրում մարտիկները հայտարարեցին Հայկական ԽՍՀ սահման-

---

<sup>691</sup> Խորհրդային Հանրապետություն, թ. 147, 03. 07. 1990:

<sup>692</sup> Նույն տեղում, թ. 153, 08. 07. 1990:

ներն և Արցախը պաշտպանելու նրանց նպատակը: Խոսք ընթացավ ազգային անկախության ու միասնական պետական բանակի մասին: Փաստաթղթում ամրացվեց բոլոր ջոկատների ՀԽՍՀ ԳԽ Պաշտպանության խորհրդին ենթարկվելու պարտականությունը: Այնուհետև, հուլիսի 20-ին, Երևանի Շահումյանի անվան մշակույթի տանը իր աշխատանքները սկսեց Հայաստանի Գերագույն խորհրդի 12-րդ գումարման առաջին նստաշրջանը: 260 ընտրական տեղամասերից<sup>693</sup> քվե են ստացել 195 պատգամավոր: Առաջին նիստին մասնակցել են նրանցից 175-ը և այն վարում էր կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Ռ. Ամիրյանը<sup>694</sup>:

Վազգեն Ա կաթողիկոսը հանդես գալով՝ հաղորդեց Մայրաթոռի օրհնությունն ու ողջույնը: Նա շեշտեց, որ վերջին 1700 տարիների ընթացքում 130 կաթողիկոսներից միայն իրեն է բախտ վիճակվել ներկա լինել նման միջոցառմանը. «Երբ մեր ժողովուրդը և մեր հայրենիքը գտնվում են նոր ճանապարհներ որոնելու կացության մեջ»: Նա ողջունեց ներկաներին ջերմ ոգևորությամբ, հայրական հոգատարությամբ, մեծ «սիրով, գնահատանքով, քաջալերանքով և հարգանքով:

Դուք ընտրված եք ժողովրդի ազատ կամքով և հետևաբար արժանավորապես ներկայացնում եք համայն մեր ազգը... Ամենայն Հայոց հայրապետը ազատություն է մաղթում ժողովրդի ընտրյալներին: Մեր ազգի առջև... այս տառապալի պահերին կանգնած է երկու ճանապարհ: Ընտրեք այն ճանապարհը, որը կտանի դեպի

---

<sup>693</sup> Ավելի ճիշտ, ընտրություններին մասնակցեց 259 տեղամաս, իսկ Շուշիի տեղամասում ազերիները գործընթացից անմասն մնացին:

<sup>694</sup> Ընտրություններում քվեարկվել են 1307 պատգամավորության թեկնածու, մեկ տեղի համար միջին հաշվով հինգ հոգի: Խորհրդային պատմության մեջ սա աննախադեպ երևույթ էր: Ընտրությունները տեղի չէին ունեցել 77 տեղամասերում: Գերագույն խորհրդում կանայք ունեին ընդամենը հինգ տեղ: Նշենք, որ բարձրագույն օրենսդրի անցյալի և հետագայի բոլոր ընտրությունների մեջ սա միակն է, որն ընթացել է արդար, առանց խախտումների կամ խաբեբայության:

իրագործումը մեր ժողովրդի արդար իղձերի, դեպի լուսավոր ասպագա»<sup>695</sup>:

Գերագույն խորհրդի աշխատանքներին մասնակցող բոլոր ուժերից ամենահզորը Հայոց համազգային շարժումն էր, որը իր կողմն է նվաճել բնակիչների վիթխարի մեծամասնությանը: Մյուս քաղաքական ուժը դա Հայաստանի կոմունիստական կուսակցությունն էր: Այն 70 տարի շարունակ անառարկելիորեն կատարելով Մոսկվայի հրամանները, հայ ժողովրդին կանգնեցրել էր ծանրագույն ճգնաժամի առջև: Ուստի Հայկոմկուսի ԿԿ-ն հուսահատ ճիգեր էր գործադրում որպեսզի փրկի իր կոտրված անունը: Այսպես, հուլիսի 23-ին ընդունվում է կազմակերպության «Նախահամագումարյան հիմնադրույթները», որտեղ շրջադարձ է կատարվում դեպի ժողովրդավարություն: Այդ փաստաթղթում կոմկուսը պաշտպանում է Արցախը մայր Հայաստանի հետ վերամիավորելու ողջ ազգի պահանջը, մերկացնում Սունգայիթում, Բաքվում, Կիրովաբադում և Ադրբեջանի այլ քաղաքներում կատարված հայերի ցեղասպանությունն ու հարյուրհազարավոր հայերի վտարումը իրենց պատմական հողում շեն օջախներից:

Հայկոմկուսի ԿԿ-ն հայտարարում էր ժողովրդավարական հասարակություն ստեղծելու նրա նպատակի մասին: Ի տարբերություն դառը ներկային՝ այն պետք է ունենար քաղաքացիների սոցիալական պաշտպանվածություն, աշխատանքի երաշխավորված իրավունք, ազգի քանակային աճն ու մտավոր զարգացում, ինքնիշխանություն ու ժողովրդական խորհուրդների կառավարում, ազգերի և մարդու իրավունքների պաշտպանություն, խղճի ազատություն և այլն: Առաջ էր քաշվում հայոց լեզվի պետական կարգավիճակի ապահովումը: Հայկոմկուսը նաև հայտարարում էր, թե կայայքարի 1915 թ. ցեղասպանության միջազգային ճանաչման և ազգային այլ հարցերի համար<sup>696</sup>: Նրանց վերամբարձ խոստումներին հակառակ, 1990 թ. հուլիսի 25-ին ԽՍՀՄ նախագահ Մ.

---

<sup>695</sup> Խորհրդային Հայաստան, թ. 166, 22. 07. 1990:

<sup>696</sup> Նույն տեղում, թ. 192, 10. 08. 1990:

Գորբաչովը հրաման է ստորագրել միության տարածքում ստեղծած ռազմական խմբավորումները վերացնելու մասին:

Ընդհանուր առմամբ, Գերագույն խորհրդի նիստերն ընթանում էին թեժ ու շահագրգիռ վիճաբանություններով: Նրա քննարկումների հիմնական խնդիրներից էին Գերագույն խորհրդի նախագահի ընտրությունը և Հռչակագրի ընդունումը: Նախագահի թեկնածուներ Լևոն Տեր-Պետրոսյանը և Վլադիմիր Մովսիսյանը առաջ քաշեցին իրենց ծրագրերը: Երկուսի ելույթներն էլ միտված էին պատգամավորների աջակցությունը ստանալուն: Ծավալուն վիճաբանությունից հետո 1990 թ. օգոստոսի 4-ին Հայոց համազգային շարժման առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանը 4-րդ փուլում ստացել էր 140 ձայն, իսկ նրա հակառակորդը՝ 76: Այս հաղթանակով հայ ժողովուրդը ջախջախիչ հարված հասցրեց հանրապետությունում դեռևս պաշտոնապես իշխող կոմունիստական վարչակարգին: Վերջապես քաղաքականությունից հեռանում էին խորհրդային կայսերապաշտ ուժերն ու լայն ճանապարհ էր բացվում հայ ժողովրդի հետագա ճակատագիրը կերտելու համար: Օգոստոսի 7-ին ծավալուն հայտարարությամբ հանդես գալով Լևոն Տեր-Պետրոսյանը շարադրեց մեր շարժման քաղաքական ու պետական հետագա գործունեության ծրագիրը<sup>697</sup>:

Անդրադառնալով Մ. Գորբաչովի զինված խմբավորումներին վերաբերող կարգադրությանը, օգոստոսի 10-ին Լևոն Տեր-Պետրոսյանը դիմեց ԽՍՀՄ նահագահին՝ որպեսզի հանրապետությունում կասեցվի այդ հրամանագրի իրագործումը: Կենտրոնում դավանած մոտեցման համաձայն, նրա ուղերձը մերժվել էր: Այնուհետև օգոստոսի 14-ին Համազգային շարժման կարկառուն մասնակից և ինքնապաշտպանության վառ կողմնակից Վազգեն Մանուկյանը նշանակվեց կառավարության վարչապետ, իսկ Արա Սահակյանը՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի քարտուղար: Նրանց նշանակում-

---

<sup>697</sup> Ավելի մանրամասն տե՛ս Է. Մինասյան, Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Եր., 2014 և Է. Պողոսյան, Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2000 թթ.), Եր., 2007:

ներին հաջորդող «Հոչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթղթի ընդունումը հեշտ չի ընթացել:

Քաղաքական ուժերը ներկայացրել էին Հոչակագրի բազմաթիվ տարբերակներ: Անկախության հոչակագիրը կամ նախնական անվանումով՝ «Հայաստանի քաղաքական կարգավիճակի մասին»<sup>698</sup> փաստաթուղթը կազմելու համար, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի օգոստոսի 4-ի որոշմամբ պատգամավորներից ստեղծվեց 15 հոգանոց հանձնաժողով<sup>699</sup>: Օգոստոսի 6-ի որոշումով ձևավորվեց նաև ընդունվելիք հոչակագրից բխող սահմանադրական փոփոխություններով զբաղվող հատուկ աշխատանքային հանձնաժողովը<sup>700</sup>: Օգոստոսի 10-ին Գերագույն խորհուրդ էր ներկայացվել 5 տարբերակ:

Հանձնաժողովի նախաձեռնությամբ այդ կարևորագույն վավերագրի կազմանը ներգրավվել են նաև մեր հասարակագիտության լավագույն մասնագետներ՝ իրավաբաններ, քաղաքագետներ, պատմաբաններ: Հոչակագրի բոլոր տարբերակները քննարկվել են հանձնաժողովում և դրանց թիվը շուտով հասել է մեկ տասնյակի: Տարբերակներ էին ներկայացրել ՀԿԿ կենտկոմը, «Սահմանադրական իրավունք» միության խորհուրդը, Հայաստանի հանրապետական կուսակցությունը և այլն: Ներկայացված հանդիսավոր մասը գրեթե միշտ ուներ նույն բովանդակությունը, բոլոր նախագծերում էլ շեշտվեց, որ փաստաթուղթը հիմք է դնելու նոր իրավական-ժողովրդական պետականության:

Նախագծերը պարունակում էին նաև էական տարբերություններ: Դրանք մասնավորապես վերաբերում էին պետական ինքնիշխանության չափերին, ազգային զինուժի կայացմանը, Հայաստանում արտերկրյա ռազմական ուժերի ներկայությանը և այլ հարցերի: Բոլոր նախագծերը բաժանվում էին երկու տեսակի՝ հուզական հիմքի վրա կազմված և գիտական-իրավագիտական նկատելի մա-

---

<sup>698</sup> Խորհրդային Հայաստան, 9. 10. 1990:

<sup>699</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի Տեղեկագիր, 1990, թ. 15:

<sup>700</sup> Խորհրդային Հայաստան, 09. 08. 1990:

կարդակով: Նախագծերից մեկում մասնավորապես նշված էր, որ նորանկախ Հայաստանը հանդիսանում է բացառապես Հայաստանի առաջին հանրապետության քաղաքական ավանդույթների շարունակողը<sup>701</sup>: Այնուհանդերձ, ստիպված ենք արձանագրել, որ անկախության պարագայում անգամ մեր ժողովրդի լիաթոք անկախությունը և մանավանդ ֆիզիկական անվտանգությունը ապահովված չէ՝ ինչպես անցյալում, այպես էլ ներկայումս:

Հայաստանի լիակատար քաղաքական ինքնորոշումը հիմնականում պաշտպանում էր ԳԽ-ի արմատական ժողովրդական թևը՝ իշխանության համար պայքարում արդեն իսկ լուրջ հաղթանակներ տարած Հայոց համազգային շարժման գլխավորությամբ: Հայաստանի լիիրավ անկախացման անհրաժեշտությունը այդ ուժերի սկզբունքային դիրքորոշումն էր: Նրանք հրաժարվում էին ամենաչընչին զիջում անել կենտրոնին ինքնիշխանության հարցում: Եվ սա հասկանալի է՝ անկախությունը ամենից առաջ Արցախյան հարցում բողոքի, անհամաձայնության և ազատ գործելու անհրաժեշտության դրսևորում է եղել: Ահա թե ինչու ՀՍԽՀ օրենսդրի և Արցախի Ազգային խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 1-ի համատեղ որոշումը՝ վերամիավորման մասին, ներգրավվել է Հռչակագրի հանդիսավոր մասում որպես նրա անկախության հիմք:

1990 թ. օգոստոսի 7-ի դրությամբ Գերագույն խորհրդի հռչակագիրը կազմող հանձնաժողովը, առանձնացնելով որոշ դեպքերում միմյանց հակասող ութ տարբերակներ, «ամբողջացրեց և Գերագույն խորհրդի քննարկմանը ներկայացրեց հռչակագրի երեք նոր նախագիծ»<sup>702</sup>: Դրանց հիման վրա էլ հետագայում ձևավորվեց հռչակագրի ընդունված, հայ ժողովրդի համար դարակազմիկ տեքստը: Քիչ ավելի ուշ՝ օգոստոսի 20-ին, հանձնաժողովը Խորհրդին ներկայացրեց ամփոփիչ միասնական տարբերակը: Քննարկման ժամանակ տեսակետները նորից բախվեցին: Վերջին օրը վերնագրի վերաբերյալ հինգ տարբերակ է քննարկվել: Ի վերջո քվեարկության դրվեց և 159 ձայնով անցավ «Հռչակագիր Հայաստանի

<sup>701</sup> Խորհրդային Հայաստան, 09. 08. 1990:

<sup>702</sup> Նույն տեղում:

տանի անկախության մասին» ձևակերպումը: Դրանով ամբողջականացավ կարևորագույն փաստաթուղթը: Նրա առաջին կետին համաձայն Հայաստանի Հանրապետություն ձևակերպումը ամրացվեց որպես մեր պետության պաշտոնական անվանում:

1990 թ. օգոստոսի 23-ի նիստում Հոչակագրի օգտին քվեարկեցին 183 ժողովրդական պատգամավոր, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 2: Այսպիսով, 1990 թ. օգոստոսի 23-ին Երևանի ժամանակով 14 անց 03 թույլին Գերագույն խորհուրդն իրականացրեց պատմական կարևոր քայլ՝ ազգային պետականության կորստից 70 տարի անց հռչակելով Հայաստանի անկախությունը<sup>703</sup>: Այդ անդրանիկ քայլը ճանապարհի հարթեց անցումային փուլին, որն ավարտվեց 1991 թ. սեպտեմբերի 21-ի հաղթական հանրաքվեով ու նույն թվականի սեպտեմբերի 23-ին Գերագույն խորհրդում անկախության պաշտոնական հայտարարությամբ:

Իսկ այժմ 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունված Հոչակագրում տրվել են ապագա Սահմանադրության սկզբունքները, ՀԽՍՀ-ն վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն, այն ինքնիշխան պետություն է՝ օժտված լիիրավ անկախությամբ: ՀՀ տարածքում գործում են միայն հանրապետության Սահմանադրությունը և օրենքները: Այստեղ ապահովվում է բոլոր քաղաքացիների իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելիությունից ու դավանանքից: Հանրապետությունը իր տարածքում ապահովում է խոսքի, մամուլի, խղճի ազատություն, բազմակուսակցություն, իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացում: Դրա հետ միասին հանրապետությունը ապահովում է հայերենի, որպես պետական լեզվի գործառույթությունը<sup>704</sup>: Հոչակագիրը հիմք է ծառայել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ու Հանրապետության նոր օրենսդրության մշակման համար:

---

<sup>703</sup> ՀՀ Գերագույն խորհրդի Տեղեկագիր, թ. 16, 31. 08. 1990:

<sup>704</sup> Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990–1995 թթ.), Երևան, 1995, էջ 9–10:



Այդ կարևորագույն պետական փաստաթղթի ընդունումը բարձր է գնահատվել թե՛ հանրապետության մամուլի և թե՛ առանձին քաղաքական գործիչների կողմից: Օրինակ «Էտրիորդային Հայաստանը» գրել է. «Այս հռչակագիրը, իրոք, պատմական քաղաքական մեծ նշանակություն ունեցող փաստաթուղթ է: Եվ որքան էլ տարբեր կողմերից մեր ընդդիմախոսները կոչ էին անում լարված իրադրության պայմաններում դադարեցնել նստաշրջանի աշխատանքը, զբաղվել կոնկրետ գործերով, պատգամավորները գիտակցելով իրենց պատմական առաքելությունը, այս ծայրագույն սուր բանավեճերի պայմաններում կարողացան ընդունել այսպիսի լուրջ մի փաստաթուղթ»<sup>705</sup>:

Այո, Հռչակագիրը «արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքն» ու «գիտակցելով իր պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջև համայն հայության իղձերի իրականացման և պատմական արդարության վերականգնման գործում», աշխարհին ավետեց «անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը»<sup>706</sup>: Նրա բացառիկ պատմական նշանակությունը կայանում է նաև նրանում, որ խնդիր դրվեց ստեղծել ժողովրդական, իրավական հասարակարգ: Փաստաթղթում պարզված է հանրապետության կյանքում ազգային գերակա շահերով ընթացող քաղաքական ինքնիշխանությունը, որի հիմքում սահմանված է հանրապետության ժողովրդավարական ավանդույթների պահպանումն ու զարգացումը, հայոց ցեղասպանության հարցի միջազգայնացումն ու դատապարտումը, Հայաստանի հետ Արցախի վերամիավորումը:

2015–2017 թթ.

---

<sup>705</sup> Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990–1995 թթ.), էջ 9:

<sup>706</sup> Նույն տեղում:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Խորհրդային կայսրապետությունը նահանջում էր: ԽՄԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովն ավելի շատ մտահոգված էր իր փառասիրության, քան երկիրը ճգնաժամից դուրս բերելու հարցով: Վերակառուցման գործընթացը հարուցեց վերնախավի սուր ընդդիմություն, իսկ նրա հակազդեցությունը ստեղծեց բազմաթիվ ծանր հարցեր ու էլ ավելի վտանգեց նաև Լեոնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորումը: Իշխանության հարկադրական մոտեցումների, հանգուցալուծման ձգձգումների և կիսամիջոցներ կիրառելու հետևանքով ազգային հակասությունները սաստկացան ամբողջ Միությունում: Խորհրդային Հայաստանում 1987 թվականից սկսած աշխուժանում է հասարակական-քաղաքական ամբողջ ոլորտը: Իսկ 1988 թ. փետրվարի 20-ից սկսած, երբ ինքնավար Լեոնային Ղարաբաղի Մարզային խորհուրդը որոշում ընդունեց դուրս գալ Ադրբեջանի կազմից և վերամիավորվել մայր Հայաստանի հետ, Ազգային շարժումը նշանավոր գործոն է դարձել համահայկական հասարակական կյանքում: 1988 թ. փետրվարի 20-ի որոշումը ջերմ ու չթուլացող աջակցություն գտավ աշխարհասփյուռ հայության շրջանում: Այդ փաստաթուղթը խիստ զարմացրեց ԽՍՀՄ վերին պաշտոնյաներին, քանի որ խորհրդային ժամանակաշրջանում նման որոշումներ ընդունելը իշխանության ամենաբարձր օղակների առանձնաշնորհն էր:

Լեոնային Ղարաբաղի մարզային խորհրդի այդ նախաձեռնությանը վճռականությամբ սատարեց Խորհրդային Հայաստանի ողջ բնակչությունը: Մտավորականությունը «Ղարաբաղ» կոմիտեն լրացրեց իր լավագույն ներկայացուցիչներով, որոնք գլխավորեցին համազգային շարժումը: Ի պատասխան դրան՝ Ադրբեջանի իշխանությունները Սումգայիթում կազմակերպեց ցեղասպանություն, որին զոհ գնացին բազմաթիվ հայեր և իրենց քաղաքից հեռացան 18 հազար հայ: Կենտրոնական իշխանության հանցավոր անփութության արդյունքում ամբողջ Ադրբեջանում մոլեգնում էր հակահայ

գործողություններ և այդ խորհրդային հանրապետությունում բնակվող 500 հազար հայերից 360 հազարը ենթարկվեց բռնազաղթի:

Մոսկվան փորձում էր Արցախի (Ղարաբաղի) հիմնախնդիրը լուծել «ժողովուրդների բարեկամության» և «ինտերնացիոնալիզմի» քողի տակ: Այդ առթիվ 1988 թ. հուլիսի 18-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ընդունած որոշումը ժողովուրդին խաբելու միջոց էր միայն, ուստի այն լիովին մերժվեց մեր հասարակության կողմից: Այդ ժամանակ հանրապետությունում ձևավորված Հայոց համազգային շարժումը հաջողությամբ ղեկավարում էր լայն զանգածային պայքարը, համագործակցելով պաշտոնական իշխանությունների հետ: Համատեղ աշխատանքի նման ձևը խստագույն փորձության դիմացավ 1988 թ. դեկտեմբերի 7-ին երկիրը ցնցած աղետալի երկրաշարժի պայմաններում: Բազմաթիվ պետություններից հասնող մեծածավալ օգնությունը անհապաղ և ավելի արդյունավետ կազմակերպելու, ինչպես և դրա թալանին դիմակայելու փորձերի համար «Ղարաբաղ» կոմիտեի անդամները ձերբակալվեցին ու նետվեցին Մոսկվայի բանտերը: Կենտրոնական իշխանությունների այդ քայլը վրդովվել էր ողջ աշխարհը:

Ձախողվել էր նաև 1989 թ. հունվարի 12 – նոյեմբերի 28-ին Ա. Վոլսկու գլխավորած Ղարաբաղի Հատուկ կառավարման կոմիտեն: Այդ ժամանակահատվածում՝ 1989 թ. օգոստոսից ի վեր Հայաստանը Արցախի հետ միասին գտնվում էր լիակատար շրջափակման մեջ, ինչի դեմ նրանց ժողովրդական պատգամավորները ապարդյուն մարտնչում էին նույն թվականի սեպտեմբեր – նոյեմբեր ամիսներին գումարված ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում: Դժգոհ լինելով հատուկ կառավարման ձևի էությունից, 1989 թ. օգոստոսի 16-ին ինքնավարությունում կազմակերպվեց ԼՂԻՄ ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումար, որտեղ ընտրեցին Ազգային խորհուրդ: Այդ մարմնին իրավունք է վերապահվում ղեկավարել Արցախի կյանքի բոլոր ոլորտներն, իսկ ինքը՝ մարզը, հայտարարվել էր միութենական ենթակայության միավոր:

Այնուհետև 1989 թ. դեկտեմբերի 1-ին հրավիրված Հայկական ԽՍՀ-ի Գերագույն խորհրդի և ԼՂԻՄ Ազգային խորհրդի համատեղ նիստը որոշում ընդունեց Խորհրդային Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորվելու մասին: Հայ ժողովրդի պատմության համար նշանավոր այդ փաստաթուղթը, մարմնավորեց նրա պայքարի և միասնության մեծ հաղթանակը և որպես հիմք որակվեց հաջորդ՝ 1990 թ. օգոստոսի 23-ի թվակիր Հայաստանի անկախության մասին Հռչակագրի հանդիսավոր մասում:

1990 թ. բոլոր անցքերը վկայում էին Խորհրդային Միության խորացող քայքայման մասին: Այդ ժամանակաշրջանում հանրապետությունում ծնվեցին բազմաթիվ հասարակական-քաղաքական կազմակերպություններ: Ողջ հասարակության վիթխարի ջանքերով և այդ կազմակերպությունների եռանդուն մասնակցությամբ ժողովրդավարական ուժերը հաղթանակ տարան 1990 թ. մայիսի 20-ին և հունիսի 3-ին կայացած Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններում: Այդ հաղթանակի արդյունքում ասպարեզից հեռացավ կոմունիստական բռնատիրությունը և 1990 թ. օգոստոսի 4-ին Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց Հայոց համազգային շարժման ղեկավար Լևոն Տեր-Պետրոսյանը: 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունվեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», այս փաստաթուղթը պատմական մեծ նշանակություն ունի մեր ժողովրդի բազմադարյա կյանքի համար: Այն կարևոր փուլանիշ դարձավ քաղաքապես լիիրավ Հայաստանի Հանրապետությունը ստեղծելու ճանապարհին, որի անկախությունը պաշտոնապես ամբողջական տեսք ստացավ 1991 թ. սեպտեմբերի 21-ին և 23-ին:

## ОБЗОР

Советская империя отступала. Генеральный секретарь ЦК КПСС М. Горбачев был больше занят своими амбициями, чем выводом страны из кризиса. Процесс перестройки вызвал резкое противодействие в верхах, что создавало много проблем, опасно усугубляя и проблему Нагорного Карабаха. Вследствие авторитарных подходов, проволочек в ее решении и полумер национальные противоречия обострились во всему Советскому Союзу. Начиная с 1987 года, общественная и политическая жизнь в Советской Армении активизировалась. А с 20 февраля 1988 года, когда областной совет Нагорно-Карабахской автономной области принял решение выйти из состава Азербайджана и воссоединиться с Арменией, Общенациональное движение стало выдающимся фактором в общественной жизни армян по всему миру. И решение от 20 февраля 1988 г. получило их повсеместную, горячую и действенную поддержку. Чиновники СССР руководящего звена были ошеломлены этим беспрецедентным документом, так как принятие таких решений в советское время было исключительной прерогативой самых верхних эшелонов власти.

Решительно поддержав инициативу Областного Совета Нагорного Карабаха, население Советской Армении выдвинуло лучших представителей своей интеллигенции в комитет "Карабах," возглавивший Общенациональное движение. В ответ на это азербайджанские власти организовали геноцид в Сумгаите, многие армяне были убиты, а 18.000 армян оставили свой город. Вследствие преступной халатности центральной власти антиармянские действия распространились во всему Азербайджану, в результате чего 360.000 из 500.000-ного армянского населения этой советской республики подверглось депортации.

Москва пыталась решить проблему Арцаха (Карабаха) в контексте "братства народов" и "интернационализма." Постановление Президиума Верховного Совета СССР от 18 июля 1988 года

было средством обмана народа, поэтому оно было отвергнуто нашей республикой. Армянское общенациональное движение успешно руководило общественной борьбой, сотрудничая с официальными властями. Этот метод встретил жесточайшую проверку в дни после катастрофического землетрясения от 7 декабря 1988 г. В силу немедленного приема и более эффективного распоряжения широкомасштабной помощью, поступавшей со всего уголков земного шара, а также попыток противостоять ее разграблению, члены комитета "Карабах" были арестованы и отправлены в московские тюрьмы. Подобный шаг центральных властей шокировал весь мир.

Созданный ими Комитет особого управления Карабахом под руководством А. Вольского, действовавший с 12 января по 28 ноября 1989 г., тоже потерпел неудачу. В этот период, с августа 1989 г. Армения вместе с Арцахом оказались в состоянии полной блокады, против которой их народные депутаты безуспешно боролись в сентябре-ноябре того же года на сессии Верховного совета СССР. Недовольные характером особого управления, жители автономии созвали 16 августа 1989 г. Съезд полномочных представителей населения НКАО и выбрали Национальный совет. Данный орган получил право руководить всеми сферами жизнедеятельности Арцаха, который назвали территорией союзного подчинения.

Затем совместное заседание Верховного Совета Армянской ССР и Национального Совета НКАО от 1 декабря 1989 г. приняло решение о воссоединении Советской Армении и Нагорного Карабаха. Этот выдающийся документ в истории армянского народа, воплотивший огромную победу его борьбы и единства, вошел в качестве основы в преамбулу последующей Декларации о независимости Армении от 23 августа 1990 г.

Весь ход событий 1990 года в целом знаменовал собой все углубляющуюся дезинтеграцию Советского Союза. В указанное время в республике возникли многочисленные общественно-политические организации. Мощными усилиями всего общества и при

активном участии этих организаций демократические силы победили 20 мая и 3 июня 1990 г. на выборах в Верховный Совет Армянской ССР. В результате этой победы коммунистическая диктатура прекратила свое существование, и 4 августа 1990 г. руководитель Армянского общенационального движения Левон Тер-Петросян был выбран председателем Верховного Совета. 23 августа 1990 г. была принята "Декларация о независимости Армении," имеющая большое историческое значение в многовековой жизни нашего народа. Она стала важной вехой на пути к политически полной Республике Армения, независимость которой была окончательно оформлена 21 и 23 сентября 1991 г.

## SUMMARY

Soviet Empire withdrew. General Secretary of its Communist Party M. Gorbachev was preoccupied with his ambitions much more than with taking the country out from crisis. The process of Perestroika prompted blunt counteraction of the upper strata that created a lot of problems, including the issue of the Mountainous Karabakh. Owing to authoritarian methods, protractions and half measures in regard to the latter, national contradictions sharpened all around the USSR. The social-political life in the Soviet Armenia became more active since 1987. And the All-national movement become a remarkable factor of the pan-Armenian social life since February 20, 1988, when the Oblast Council of the Mountainous Karabakh Autonomous Oblast made a decision to separate from Azerbaijan and reunite Armenia. This decision excited an eager and effective support of the whole Armenian nation all over the world. Upper section of the USSR officials was astonished by this unprecedented document, since making such a decision was the strict prerogative of the very top stratum of the political powers.

Population of the Soviet Armenia resolutely welcomed the decision of the Oblast Council of Mountainous Karabakh and delegated its best intellectuals into the "Karabakh" Committee, who become the leader of the All-national movement. In its reaction, the authorities of Azerbaijan organized genocide in Sumgait where many people were killed and 18.000 Armenians left their city. And as a result of the criminal negligence manifested by central power, the anti-Armenian actions burst all over Azerbaijan. The whole Armenian population there was 500.000, 360.000 of them were deported.

Moscow tried to solve the problem of Artsakh (Karabakh) in the context of the "friendship of nations" and "internationalism." The decision of the Presidium of the USSR Supreme Council dated July 18, 1988, had been made to deceive people, that's why our Republic rejected it. The Armenian All-national Movement successfully guided



the social struggle in cooperation with official authorities. Such an approach passed the severest test of the disastrous earthquake which struck us on December 7, 1988. By virtue of immediate receiving and more effective management of the enormous relief, sent from all around the world, as well as of attempts to resist its plunder the members of Karabakh Committee were arrested and put in Moscow jails. Such a lunge of the central authorities shocked the world.

Their new formation, called a Special Committee of Governing Karabakh, ruled by A. Volski on January 12 – November 28, 1989, failed, too. Within this time, since August of 1989, Armenia together with Artsakh turned out to be in the complete siege, which its people's deputies fought against without success at the session of the USSR Supreme Council in September – November of the same year. Dwellers of the autonomy were discontented with essence of special governing, so on August 16, 1989, they convened the Congress of plenipotentiary representatives of the MKAO population and elected the National Council. This representative body obtained a right to rule all spheres of the Artsakh life. And the latter designated itself as a territory of the all-Union, federative subordination.

Afterwards on December 1, 1989, the joint session of the Armenian SSR Supreme Council and the National Council of MKAO made a decision to integrate Soviet Armenia with Mountainous Karabakh. This remarkable document in the history of Armenian nation has personified the tremendous victory of its struggle and unity; it has been taken as a basis in the Preamble of the next Declaration on Independence of Armenia, dated August 23, 1990.

All events of 1990 testified to further disintegration of the Soviet Union. At this time many public and political organizations were created in the republic. Thanks to remarkable efforts of the whole society and with the active participation of these organizations, democratic forces gained the victory in Armenian SSR Supreme Council elections on May 20, and June 3, 1990. As a result of this victory Communist dictatorship ceased to exist and on August 4, 1990,

the leader of the Armenian All-national Movement Levon Ter-Petrosyan was elected the Chairman of Supreme Council. “Declaration on Independence of Armenia,” adopted on 23<sup>rd</sup> of August, 1990, is of great historical significance for the centuries-long life of our nation. It became an important mile-stone on the road to politically authorized Republic of Armenia, which independence was completely arranged on September 21 and 23, 1991.

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ԱԳՆ – Արտաքին գործերի նախարարություն
- ԱԴՄ – Ազգային դեմոկրատական միություն
- ԱԻ – Ազգային ինքնորոշում
- ԱԻՄ – Ազգային ինքնորոշում միավորում
- ԱԽ – Ազգային խորհուրդ
- ԱՃ – Ազգային ճակատ
- ԱՄԿ – Ազգային միացյալ կուսակցություն
- ԱՄՈւ – Ազգային միասնության ուխտ
- ԳԱ – Գիտությունների ակադեմիա
- ԳԱՄ – Գիտաարտադրական միավորում
- ԳԽ – Գերագույն խորհուրդ
- ԵԿՄ – Երկրապահ կամավորական միություն
- ԼՂԻՄ – Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ
- ԼՂՀ – Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
- ԽՄԿԿ – Խորհրդային Միության Կոմունիստական Կուսակցություն
- ԽՍՀՄ – Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
- ԿԿ, Կենտկոմ – Կենտրոնական կոմիտե
- ԿՄ – Կանաչների միություն
- ՀԱԱ – Հայաստանի ազգային արխիվ
- ՀԱԱԿ – Հայաստանի ազգային անկախության կուսակցություն
- ՀԱԲ – Հայոց ազգային բանակ
- ՀԱԿ – Հայոց ազգային կոնգրես
- ՀԱԿԽ – Համամիութենական արհմիությունների կենտրոնական խորհուրդ
- ՀԱԿԽՄ – Հայաստանի աշխատավորական կոլեկտիվների խորհուրդների միավորում
- ՀԱՃ – Հայ ազգային ճակատ
- ՀԱՄԼԿԵՄ – Համամիութենական լեհիստան կոմունիստական երիտասարդական միություն

- ՀԲՄ – Հայոց բարեգործական միություն
- ՀԳՄ – Հայաստանի Գրողների միություն
- ՀԴԿ – Հայոց դեմոկրատական կուսակցություն
- ՀԿՄ – Հայ կանանց միություն
- ՀԿԿ – Հայաստանի կոմունիստական կուսակցություն
- ՀԿԿ – Հատուկ կառավարման կոմիտե
- ՀԿ – Հանրապետական կուսակցություն
- ՀՀ ԳԱԱ – Հայաստանի Հանրապետության Գիտությունների  
ազգային ակադեմիա
- ՀՀԴ – Հայ հեղափոխական Դաշնակցություն
- ՀՀԽ – Հայաստանի հանրապետական խորհուրդ
- ՀՀՇ – Հայոց համազգային շարժում
- ՀՃՄ – Հայաստանի Ճարտարապետների միություն
- ՀՄՃ – Համահայկական միացյալ ճակատ
- ՀՎՄ – Հայաստանի վերամիավորված միություն
- ՀՔՊԿ – Հայ քաղաքանտարկյալների պաշտպանության կոմիտե
- ՄԱԿ – Միավորված ազգերի կազմակերպություն
- ՆԳՄ – Ներքին գործերի մինիստրություն
- ՊԱԿ – Պետական անվտանգության կոմիտե
- ՊԿ – Պաշտպանության կոմիտե
- ՊԱՎԶ – Պատերազմի, աշխատանքի վետերանների զորավիզ  
միություն
- ՍԴՀԿ – Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցություն
- ՍԻՄ – Սահմանադրական իրավունքի միություն
- ՔԺԿ – Քրիստոնեա-ժողովրդական կուսակցություն

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### Արխիվային նյութեր

Հայաստանի Ազգային արխիվ, Երևան, Ֆ. 1 ՀԿԿ կենտրոն, ց. 81, գ. 3, 31, ց. 82, գ. 1, 5, 21, ց. 83, գ. 6, 50, 84, ց. 84, գ. 23, 25, 27, 116, ց. 87, գ. 9, 11, 12, 13, 14, 15, 16, 18, 19, 20, 21, 22, 25, 34, 35, 37, 39<sup>ա</sup>, 44, 49, 87, ց. 127, գ. 355, 553, 554, 564, 599, 650, 651, 656, 658, 661, 662, 663, 672, 670, 673, 674, 676, 677, 678, 698, 706, 722, 760, 794, 812, 818:

Ֆ. 2, ԼՂՀ Պետական արխիվ, Հատուկ կառավարման կոմիտե, ց. 1, գ. 3:

Ֆ. 16 ՀԿԿ Ղափանի շրջկոմ, ց. 38, գ. 17, 21:

Ֆ. 157 Երևանի քաղկոմ, ց. 67, գ. 49, 52, 64, 66, 69:

Ֆ. 207 Ազգային խորհուրդ, ց. 32, գ. 309, 317, 343, 651, ց. 44, գ. 46, 53, 138, ց. 45, գ. 71 ց. 66, գ. 1:

Ֆ. 488 Կոմերիտմիության ֆոնդ, ց. 57, գ. 76, 77:

Ֆ. 1159 Սումգայիթի իրադարձությունների վերաբերյալ, ց. 1, գ. 1, 9, 39, 43, 61, 63, 121, 122, 140, 161, ց. 2, գ. 15, 19, ց. 3, գ. 55, 139, 143, ց. 6, գ. 21, 25, ց. 11, գ. 15, ց. 57, գ. 13:

Ֆ. 1431 Հայաստանի գրողների միություն, ց. 6, գ. 16:

Ֆ. 1678 Հայոց համազգային շարժում, ց. 1, գ. 1, 2, 10, 13:

Ֆ. 1679 Ազգային ինքնորոշում միավորում, ց. 1, գ. 1, 5, 6:

Ֆ. Հայոց ազգային կոնգրես, ընթացիկ արխիվ, թղթապանակ թ. 1, 3, 4, 6:

### Տպագիր սկզբնաղբյուրներ

Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990–1995 թթ.), Երևան, 1995:

Հայկական ՍՍՀ վարչատերիտորիալ բաժանումը, Եր., 1988:

Հայոց համազգային շարժում, ծրագիր, կանոնադրություն, Եր., 1990:

Հայության կոչերն ու դիմումները ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար 1988–1989, Եր., 2014:

Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ. Հ. Աբրահամյան, Կ. Խաչատրյան, Եր., 2011:

ՄՄԿԿ 28-րդ համագումարի նյութերը, Եր., 1990:

Սովետական Միության Կոմունիստական Կուսակցության 27-րդ համագումարի նյութերը, Եր., 1986:

Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրություն (Հիմնական օրենք), Եր., 1977:

Арутюнян В. Б., События в Нагорном Карабахе. Хроника, ч. I-VI, февраль 1988 – май 1997, отв. ред. К. С. Худавердян, Ереван, 1990-1997.

Внеочередная 12-я сессия Верховного Совета СССР (11-й созыв) 29 ноября – 1 декабря 1988 г. Стенографический отчет, М., 1988.

Глазами независимых наблюдателей. Нагорный Карабах и вокруг него... Сборник материалов, Ер., 1990.

Итоги всесоюзной переписи населения 1989 г. Нагорно-Карабахской автономной области, таблица 2с, Москва, 1989.

Комитет карабахского движения Армении. Пройденный путь, Ер., 1988.

Комитет карабахского движения Армении, к событиям в аэропорту “Звартноц,” 4-5 июля, Ер., 1988.

Нагорный Карабах в 1918–1923 гг., Сборник документов и материалов, ред. В. Микаелян, Ер., 1992.

О событиях в Нагорно-Карабахской Автономной Области и вокруг нее (Краткий исторический очерк), Киев, 1988.

О положении в Армении и Арцахе (Нагорном Карабахе). Материалы депутатских слушаний в Ленсовете, Ленинград, 1990.

Правда о Нагорном Карабахе, Степанакерт, 1989.

Первый съезд народных депутатов СССР. 25 мая – 9 июня 1989 г. Стенографический отчет, том II, М., 1989.

Самооборона армян Кировабада в 1988-1989 гг. глазами очевидцев. Сост. Григорий Оганезов, Грануш Харатян, Ер., 2014.

Содружество независимых государств: десять лет спустя, Минск, 2001.

Сумгаит... Геноцид... Гласность? Сост. Г. Б. Улубабян, С. Т. Золян, А. А. Аршакян, Ер., 1989.

Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев, книга первая, Сост. и ред. С. Шахмурадян, Ер., 1989.

Хроника НКАО, февраль 1988-февраль 1990, Баку, 1990.

### Պարբերական մամուլ

Ազատ Հայք, Երևան, 1990-1991:

Ազդակ, Բեյրութ, Բացառիկ, 20 փետրվարի 1998:

Անկախություն, Եր., 1989:

Ավանգարդ, Եր., 1988-1990:

Արցախ, Ստեփանակերտ, 1989-1991:

Բանբեր Հայաստանի արխիվների, Եր., 1989-1991:

Գոյապայքար, Եր., 1988:

Դրօշակ, Աթենք-Երևան, 1986-1991:

Երեկոյան Երևան, Եր., 1987-1990:

Երկիր, Եր., 1992:

Երկրապահ, Եր., 1998-2008:

Իրավունք, Եր., 1989-1991:

Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 1985-2009:

Կանթեղ, Եր., 2015:

Կուսակցական խոսք, Եր., 1988-1992:

Հայաստան, Եր., 1989-1990:

Հայկական բանակ, Եր., 1995-2010:

Հայոց աշխարհ, Եր., 1996-2004:

Հայրենիք, Եր., 1988-1989:

Հայրենիքի ծայն, Եր., 1987-1992:

Հայք, Եր., 1989-1992:

Ղափան, Ղափան, 1986-1988:  
Միաբանություն, Եր., 1989:  
Սովետական Հայաստան, Եր., 1985-1992:  
Վերածնված Հայաստան, Եր., 1989:  
Տեղեկագիր ՀԽՍՀ, Եր., 1989:

Аврора, Ленинград, 1988.  
Аргументы и факты, Москва, 1987-1991.  
Бакинский рабочий, Баку, 1988-1990.  
Голос Армении, Ереван, 1998, 2007.  
Зеркало, М., 2000-2005.  
Известия, М., 1987-1991.  
Известия Академии наук Азербайджанской ССР, серия Исто-  
рия, философия и право, Баку, 1989.  
Коммунист, Ер., 1987-1990.  
Комсомольская правда, М., 1988-1990.  
Красная звезда, М., 1988.  
Литературная газета, М., 1988-1990.  
Мецамор, Ер., 1994-2009.  
Молодежь Азербайджана, Баку, 1988-1990.  
Московские новости, М., 1988-1990.  
Огонек, М., 1988-1990.  
Правда, М., 1988-1990.  
Советская культура, М., 1989-1989.  
Социалистическая индустрия, М., 1988-1989.  
  
The Armenian Reporter, Paramus, New Jersey, 1990.  
Armenian Review, Watertown, Mass., 1990.  
Asbarez, Los Angeles, 2008.  
Civilnet, Եր., 2018:



## Գրականություն

- Աբազյան Աշխեն, Կանաչ, կարմիր որոտներ, Երևան, 1999:
- Աբրահամյան Հենրիկ, Խորհրդային և հետխորհրդային հասարակությունը 1945-2001 թթ., Եր., 2011:
- ն. ի., Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, Եր., 2009:
- Աբրահամյան Հ. Մ., ՍՄԿԿ XXVII համագումար. Կուսակցության արագացման կուրսը և աշխատավորության ստեղծագործական ակտիվությունը, Եր., 1998:
- Աբրահամյան Հրանտ, Երբ հայրենիքը վտանգի մեջ է, Եր., 1997:
- ն. ի., Ճակատագրին ընդառաջ, Եր., 2001:
- ն. ի., Մարտ կրակագծի մատուցներում, Եր., 2008:
- ն. ի., Մարտնչող Արցախը, գիրք Բ-Գ, Եր., 2005, 2007:
- ն. ի., Բալայան Վահրամ, Լեռնային Ղարաբաղ, Եր., 2009:
- Ազիզբեկյան Ռ. Լ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, Եր., 1992:
- Բաղդասարյան Դենարիկ, Դիմակայություն, Եր., 2007:
- Բաղդասարյան Հրանտ, Ասք արցախյան պատերազմի Հաղորդի ուղղության հերոսամարտերի մասին, Եր., 2015:
- Բաղդյան Վարդգես, Տեսադաշտ. 1988-1994 (Ղարաբաղյան ազատամարտ), Ստեփանակերտ, 2011:
- Գալստյան Համբարձում, Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ, Եր., 2002:
- ն. ի., Չուղարկված նամակներ, Եր., 2013:
- Գեվորգյան Ռուբեն, Դատապարտված դափնիներ, Եր., 1995:
- Գեվորգյան Ռուդիկ, Հավաքական ուժ, Եր., 2005:
- Գորբաչով Մ. Ս., Վերակառուցումը և նոր մտածողությունը մեր երկրի և ամբողջ աշխարհի համար, Եր., 1988:
- Գրիգորյան Գր. Մ., Ղարաբաղյան օրագիր (1988-1992), Եր., 2005:
- Դանիելյան Կոմիտաս, Արցախը չսանձած նժույգ, Եր., 2001:
- Դեմիրճյան Ռիմա, Հիշատակ, Եր., 2003:
- դե Վաալ Թոմաս, Սև այգի, Եր., 2014:

Երեմյան Ա. Տ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի (VII դարի Հայաստանի աշխարհագրության), Եր., 1963:

Էդոյան Ռ. Հ., Բարձրագույն կրթության խնդիրներն Արցախում 1988-1992 թթ., «Լրաբեր հասարակական գիտությունների», 2009, № 3, էջ 285-289:

Թորոսյան Տիգրան, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Եր., 2006:

Լիպարիտյան Ժիրայր, Պետականության մարտահրավերը: Հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր, Եր., 1999:

Խաչատրյան Հենրիկ, Ղազարյան Գարեգին, Մարգարյան Սիրվարդ, Հաղթանակներն՝ ինչպես եղել են. Ազդականչ 44, Եր., 2008:

Խոջաբեկյան Վ. Ե., Արցախը փորձության ժամին, Եր., 1996:

Կաթիկներ մեծ ծովից: Կ. Դեմիրճյանը երախտապարտ ժամանակակիցների հուշերում, Եր., 2002:

Կապուտիկյան Սիվա, Էջեր փակ գրոցներից, Եր., 1997:

Կարապետյան Սամվել, Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանի բռնակցված շրջաններում. Եր., 1999:

Կրիվոպուսկով Վիկտոր, Խռովահույզ Ղարաբաղ, Եր., 2008:

Հարությունյան Գ., Կարեն Դեմիրճյան, Հիշատակի խոսք, Եր., 2006:

Հարությունյան Մ. Ա., Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Եր., 2000:

Հարությունյան Սենոր, Ղարաբաղյան պատերազմ, Եր., 2001:

Հարությունյան Սուրեն, Անցյալի ու ներկայի մասին, Եր., 2011:

Հովսեփյան Սմբատ, ՀՀՇ-ն և հայ ժողովրդի մեծ ողբերգությունը, Եր., 2002:

Ղազարյան Ռաֆայել, Հաշվետու եմ... , Եր., 2003:

Մախմուրյան Գ. Գ., Հայրենիքի հետ Արցախի Միացման պատմական նշանակությունը (1988-1990 թթ.): Գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու), Ղարաբաղյան շարժման 30-րդ տարեդարձին նվիրված նյութեր, Ստեփանակերտ, 2018:

Մանուկյան Արմենակ, Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988 թթ., Եր., 2015:

Մանուկյան Մանուկ, Երկրաշարժ, Եր., 1989:

Մանուկյան Վազգեն, Հայկական երազանքը գոյատևման փակուղում: Եզրույթների և հոդվածների ժողովածու, Եր., 2002:

Մինասյան Էդիկ, Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Եր., 2014:

ն. ի., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), Եր., 1990:

Միրզոյան Ռենալ, Հեռուստապատում (Տարեգրություն), Եր., 2012:

Մոսեսովա Ի., Հովնանյան Ա., Բաքվի ջարդերը, Եր., 1992:

Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր., 2007:

Պետրոսյան Աշոտ, Արթուր Մկրտչյան, Եր., 2004:

Պողոսյան Էդուարդ, Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2000 թթ.), Եր., 2007:

Սահակյան Ռուբեն, Գիրք վշտի և հպարտության, Եր., 1995:

Սարգսյան Աշոտ, Հայաստանի նորագույն պատմության ուրացումն ու կեղծումը (1988-1998 թթ.), Եր., 2015:

Սարգսյան Դավիթ, Կայծ ցեղի ոգուց, Եր., 2002:

Սարգսյան Սերժ, Հայկական բանակ, Եր., 2002:

Սարգսյան Ֆադեյ, Կյանքի դասերը (հուշեր), Եր., 2000:

Սարգսյան Կտրիճ, Պատմություն և գրականություն, Եր., 1991:

Ստուպիշին Վլադիմիր, Իմ առաքելությունը Հայաստանում, 1992-1994, Ռուսաստանի առաջին դեսպանի հուշերը, Եր., 2005:

Վարդումյան Հովիկ, Կին ազատամարտիկներ, Եր., 2003:

ն. ի., Շուշիի ազատագրումը, Եր., 2007:

Վիրաբյան Ամատուն, Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, հասարակական քաղաքական կյանքը (1945-1957 թթ.), Եր., 2001:

Տեր-Պետրոսյան Լևոն, Ընտրանի. Ելույթներ, Հոդվածներ, Հարցազրույցներ, Եր., 2006:

Ոլուբաբյան Բագրատ, Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Եր., 1994:

ն. ի., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Եր., 1997:

ն. ի., Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության (V-VII դդ.), Եր., 1981:

ն. ի., Խաչենի իշխանությունը X–XVI դարերում, Եր., 1975:  
Քեոյան Գարիկ, Հայաստանի երկրորդ հանրապետության կուսակցական համակարգը և քաղաքական կուսակցությունները, Եր., 1996:  
Օհանյան Սեյրան, XXI դարի բանակը, Եր., 2007:  
ն. ի., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Եր., 2013:  
Օհանջանյան Փաշա, Ղարաբաղի ազատագրական պատերազմը, Եր., 2000:  
Օսկանյան Վարդան, Անավարտ տասնամյակ. ելույթների ընտրանի, Եր., 2009:

Абрамян Г. Б., К вопросу об армянстве Арцаха как о «пришельцах», «Вестник общественных наук», Ереван, 1993, № 1, с. 9–22.

Авакян Г., Нагорный Карабах, Ответ фальсификаторам, Ер., 1991.

Амбарцумян С. А., Три года на пределе любви и смерти, 3-е изд., Ер., 2005.

Андрей Сахаров о Нагорном Карабахе, Ер., 1996.

Арутюнян В. Б., Генрих Погосян: лидер Арцаха 1988, Эчмиадзин, 2000.

Бабанов Игорь, Воеводский Константин, Карабахский кризис, Санкт-Петербург, 1993.

Барсегян Хикар, Истина дороже... К проблеме Нагорного Карабаха-Арцаха, Ер., 1992.

Григорян Владимир, Армения 1988-1989, Ер., 1999.

Жирохов М. А., Семена распада: войны и конфликты на территории бывшего СССР, СПб., 2012.

Золян Сурен, Нагорный Карабах: проблемы и конфликты, Ер., 2001.

Кочарли Т., К истории Карабахского вопроса (вымыслы и действительность), Баку, 2009.

Махмуриян Г. Г., Шуши 1919-1920 гг. в документах Госдепартамента США и Национального архива Армении. Աղբյուրային պե-

տական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեոնային Ղարաբաղի դեմ, Շուշի, 2010:

Мелик-Шахназаров А. А., Нагорный Карабах, Факты против лжи, Москва, 2009.

Мосесова Ирина М., Армяне Баку: бытие и исход. Документы. Свидетельства очевидцев. Газетные и журнальные публикации. Факты и комментарии к ним, Ер., 1998.

Нуйкин Андрей, Боль моя Карабах, Ер., 2009.

Саркисян Манвел, Нагорный Карабах: война и политика (1990-1993 гг.), Ер., 2010.

Товмасын Александр, Армения, анабиоз. Публицистика, проза, стихи (1991-2013), Ер., 2013.

Чальян М. Э., Освещение арцахского движения в армянской англоязычной прессе США (февраль 1988 – август 1990 гг.), Ер., 2006.

Chorbajian L., Donabedian P., Mutafian C., The Caucasian Knot: The History & Geopolitics of Nagorno-Karabagh, Lnd., 1994.

Croissant M. P., The Armenia–Azerbaijan Conflict: Causes and Implications, Westport CT, 1998.

De Waal T., Black Garden: Armenia and Azerbaijan Through Peace and War, NY, 2003.

Gill G., The Collapse of a Single-Party System: The Disintegration of the Communist Party of the Soviet Union, Cambridge-NY, 1994.

Kagarlitsky B., Farewell Perestroika: A Soviet Chronicle, Lnd. and NY, 1990.

Karapetian Samvel, Armenian Cultural Monuments in the Region of Karabakh, Yerevan, 2001.

Kaufman Stuart J., Modern Hatreds: The Symbolic Politics of Ethnic War, Ithaca and Lnd., 2001.

Keller W., Did Moscow Incite Pogroms in Baku to Reimpose Authority Over Region? «The Armenian Reporter», Paramus, New Jersey, 1990, vol. XXIII, № 20.

King Joseph Harrison, *The (Un)making of Soviet Kirovabad: Pogroms and the End of the “Friendship of Peoples” in Azerbaijan*, Thesis for the degree of Master of Arts, Budapest, Central European University, Department of History, 2015.

Krikorian R. O., Masih J. R., *Armenia: at the Crossroads*, Lnd. and NY, 1999.

Malkasian M., *Gha-ra-bagh!: The Emergence of the National Democratic Movement in Armenia*, Detroit, 1996.

Mouradian Claire, *The Mountainous Karabagh Question: Inter-Ethnic Conflict or Decolonization Crisis? – “Armenian Review”*, Watertown, Mass., 1990, vol. 43, № 2–3, pp. 1–34.

Sakwa Richard, *Gorbachev and His Reforms, 1985-1990*, NY, 1990.

Suny R. G., *Looking Toward Ararat: Armenia in Modern History*, Bloomington-Indianapolis, 1993.

Thom F., *Le moment Gorbachev*, Paris, 1989.

Zurer Christoph, *The Post-Soviet Wars: Ethnic Conflict and Nationhood in the Caucasus*, NY and Lnd., 2007.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընթերցողին .....	5
I. Հայաստանը սատարում է արցախահայությանը	
1.1. 1988 թ. փետրվարի 20-ի ԼՂԻՄ մարզխորհրդի որոշման արձագանքները Հայաստանում: Համաժողովրդական շարժման ծավալումը .....	6
1.2. Սումգայիթյան ցեղասպանությունը և ժողովրդական պայքարի նոր վերելքը .....	47
1.3. Ադրբեջանի հայության բռնագաղթը և դրա հետևանքները .....	77
II. Հայ ժողովրդի ջանքերը ԼՂԻՄ-ի հիմնահարցը խաղաղ ճանապարհով հանգուցալուծելու ուղղությամբ	
2.1. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության 1988 թ. հուլիսի 18-ի որոշման արձագանքները Հայաստանում .....	165
2.2. Իրավիճակը հանրապետությունում 1988 թ. հոկտեմբեր-նոյեմբերին .....	197
2.3. «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ձերբակալումը .....	224
III. Երկրորդ հանրապետության փլուզումը	
3.1. Խորհրդային Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորմանն ուղղված քայլերը .....	247
3.2. Հանրապետության քաղաքական առօրյան (1990 թ. հունվար–օգոստոս) .....	321
Ամփոփում .....	362
Հապավումներ .....	371
Մատենագիտություն .....	373
Պատկերներ .....	23, 51, 107, 154, 210, 228

**Հրանտ Բարսեղի Աբրահամյան**

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ  
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ  
(1988-1990 թթ.)**

---

**Грант Барсегович Абрамян**

**СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ  
ОБЩЕНАЦИОНАЛЬНОЙ БОРЬБЫ  
(1988-1990 гг.)**

---

**SOVIET ARMENIA DURING THE YEARS  
OF THE NATION-WIDE STRUGGLE (1988-1990)**

**by Hrant Barsegh Abrahamyan**

Կազմի ձևավորումը՝ Արմենուիի Մարանգոզյանի  
Համակարգչային ձևավորումը՝ Ա. Մարանգոզյանի  
Սրբագրիչ՝ Նարինե Դավթյան  
Տպագրիչ՝ Լևոն Մուրադյան

Ստորագրված է տպագրության 6. 04. 2019 թ.:

Հանձնվել է տպագրության 30. 03. 2019 թ.: Չափսը 60x84<sup>1/16</sup>:  
Թուղթը՝ օֆսեթ № 1: Ծավալը 24 մամուլ: Տպաքանակը 300 օրինակ:

**Գինը՝ պայմանագրային:**

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА  
INSTITUTE OF HISTORY OF NAS RA**

---

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4  
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4  
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan  
<http://www.academhistory.am>